նորին. և թեպետ ի ձեռն տէրութեանն Ռուսաց կասեցաւ
վճարել՝ զոր եդեալն էր ի մեր իւրում, բայց կամեցաւ
ձեռն ի գործ արկանել լաւ հաւնարեցաւ յառաջագոյն զի-
տութիւնն և զմիտս կառավարողացն գործոց և փոր-
ձել, և ապա ի պայքարս մտանել ընդ Դաւթի, ուստի և զբո-
ւեաց զգեղ իմն ի կառավարողէն՝ խնդրելով զպատասխանի
նորան ի ծանկանեն պատրիարքէ՝ զոր ասիցէ։

Digitized by Google

„ վ. հետապահս յորդելի եղբօրդ իմոյ, տեառնեղ Ծովհ-
„ հաննէս արքեպիսկոպոսի պետրոսեան քաղաքի մեծիդ Գօլսոյ, շնորհաշուք
„ և մեծահաւատ բարեմիտ իշխանաց, ամիրայիցդ, արդարա-
„ վաստակ էանաքիցդ, և արիաջան արհեստաւորացդ, և առ հա-
„ սարակ օրհնեալ ժողովրդականացդ մեծին Գօլսոյ, զայս ինչ
„ յաշատաճախոյս կողմանէ յայտարարութիւն։

„ Սահմալի է ինձ ձայն փրկչին՝ որ ասէ. վայ այնմիկ, որ
„ առիցէ զլոյսն խաւար, և զխաւարն լոյս, զդառն քաղցր, և
„ զքաղցր դառն։

„ Զիարդ ուրեմն ամենաբուն բարին զլոյս բանականու-
„ թեան առօրինեաց՝ ի մարդն, որ ոչ զդայ զբարին, և ոչ
„ խորհի՝ ի չարէն։

„ Զի անբանք միմիայն՝ երեւակայութեամբ զգալով ընդ-
„ որս ունին ընդհանալ, ոչ թիւրեն զճանապարհ իւրեանց,
„ քանզի՝ ի մշնաշորթ գիշերի եւս ճանաչեն զելս շաւղաց
„ իւրեանց, ՚ի յօտարէ և յանծանօթէ խորշին, և զայնս՝ որոց
„ գիտեն զդ բարիս, թողլով զբնականն իւրեանց զդժնեղու-
„ թիւն, ընդ ոսիւք նոցին թաւալին, որպէս առ այս գան-
„ գատէ տէր, ըստ Եսայեայ, թէ ծանեաւ եզն զտուցիչ իւր,
„ և էշ զմսուր տեառն իւրոյ, և Իսրայէլ զիս ոչ ծանեաւ, և
„ ժողովուրդն իմ զիս ՚ի միտ ոչ էառ։

„ Զարհիծր Պօղիպ, և տես, թէ զիարդ ՚ի թուլութենէ
„ և ՚ի զանցառութենէ ապզին մերոյ քահանեցան հիմունք հա-
„ ւատոյ մերոյ, դարձան օրէնք և կրօնք մեր ՚ի տեսարանս
„ թէատրօնից, և ճշմարտութեանն ճրագ լուսաւորչադաւան
„ կրօնից մերոց՝ ՚ի ներքոյ գրուանի թագուցաւ, և քանակա-
„ նութիւն մաղթելիացն սեռի ազատաղեալ ոչ զդայ բնաւ ըզ-
„ ցաւ։ Ընդ եօք զի՞նչ է պատճառն այսց ամենից խանգար-
„ ման, եթէ ոչ՝ բարձումն սիրոյ և համաձայնութեան։

„ Զրկեցաք ՚ի թագաւորութենէ ոմն տատասփեալ մերազ-
„ նեայք, և միաբանութիւն մեզ է հոգեւորապէս, եթէ ու-
„ նիմք բարձրագոյ աթոռ ՚ի քրիստոսէ հիմնեցեալ, աթոռ
„ առաքել լուսաւորչին՝ որով պարծիմք ՚ի մէջ ամենայն ազ-
„ գաց, այժմ նոյն պարծանքն մեր եղև մեզ նախատինք ՚ի
„ մէջ ամենայն աշխարհի, եթէ՝ նոյն բռնութեանցն զօրու-

Digitized by Google

» քիւնք բարձաւ, քան լիցի, այլ միք միջին պատերազմ ըզ
» լուսաւոր աւուրն այն՝ առն աւազակաց։

« Ա՛մէն իմացաք՝ ի միրոյ անձինս ոմն Գողթեղ ըստեալ, զի
» որ երկրին զբնակութեանն բուռն հարեալ, ի մի շուրջ և
» ի մի հոգի գտեալ՝ զգաչիսն կոտրէր, զտհակալ աւուրց լու-
» սաւորչին՝ ընտրութեանն թոյլ ազգին լինել. այժմ օգտա-
» կանն հնազանդի, որ պատասխանաց զբօղ հարցինն անա-
» յասի։

« Ո՛չ է տասանակեան դանիել, ոչ ասպա քէն ի Գողիաթ էր։
» ոյր կալեալ զնա բազմապատիկ յաւուրհան պատերազմաց,
» ոչ ապա քէն ընտրութիւն ընդ հանուր ազգին էր, և խոց-
» հուրդ տիւնհոդոմին ար քեպիսկոպոսաց, և բոլոր միաբա-
» նեցին՝ ի պատրիարքութենէ հանել զնա, և հրաւիրել ի
» ծայրագոյն պատրիարքութիւն ամենայն Հայոց՝ յետ վախ-
» ճանի լուսահոգւոյն հայրապետին Ղուկասու։

« Դիւցազ քէ յայնժամ Թովմէի արքեպիսկոպոսին յաւա-
» չանալով, իբրու օրինաւոր աւագապետութիւնս առնէր, թէ
» ես եմ հնագոյն արքեպիսկոպոս, և մինուանդ հաճոյ գըտ-
» եալ յայնս բարեբիշատակ կայսերին Գողոմի, որ կատարէր
» զաղերս նորա լինիլ հայրապետ Հայոց. և ողորմելին Դանիէ
» էլ ի յաքսորս մնասանեցաւ ի գուբն առիւծուց։

« Բայց տեսէք զկոհականութիւնն Թովմեփային։

« Որ ոչ յառաջ մատուցաւ՝ լսատ ոգւոյ գիտէր վաղուընջի
» զշնորհատական հանճարեղութիւն ձեր, տպատէր ձերդ ինդ-
» հաւորութեանն, զորս ստացեալ աստ ի Մոսկով՝ ապա գիմ
» եաց ի աւրդ Ճիմուն։

« Տեսէք այժմ, որ ասրեղայ մեր՝ վատանելով զկայս հան-
» գուցեալ Թովմեփին իբրու ընդհանրական գլուխ, խրոմէ յա-
» ռաջացոյց. մինչ աւուրքն վերք և տատապարտուց խայտա-
» ռակութիւնք ողբալի դանիելին չէք ծնա բաւական, որ
» կրկին հրաւիրանօք բոլոր եպիսկոպոսաց և միաբանից՝ և
» ընտրութեան ընդհանուր ազգին՝ հաստ չարժիլ ի յԷջմ-
» ձին, հասուցանել միոչ ցգայաղիտ, և անդէն նոր ի նորոց
» ընկերս ի վերայ վիրաց դնելով՝ հաստ խայտառակել ի մէջ
» աշխարհի։

„Ողորմեալ կայր առ Քո ամէն Գալիլեացի զանազան ազգացն և բազմաց առ հաստատակ ապրելոյ տեղեաց, զոր ինքն ետ նոցա, և ամենայն զգուշութեամբ զնոսին ի չար ախտացայնէն, ինչ ըստ հաստատ մերձ ընդ ատեաւ գրելոյն ի քեզ լուսաւորչէ, զի ինքն լինի եռանդագործ, և զամենայն կայսերական ամենազանն վասանէ հաղորդասիրաց, և զամէն ևս բռնաճիճուկն վայելել, ոչ իշխեալ երանել ի թեթևութեան մեր երկուեալ ենք ի վերայ սրբոյ գեղարդեանն՝ և մեռանիմք՝ քան ի Դանիելէ զոչ ոք ճանաչել, որպէս և չորքան՝ ձին՝ երկու եղկոյ եղկոյ և երկու վարդապետք առաքեալ ենք հրաւիրակք նմա, զի երթայք։

„Բայց զպատիս քեզմէ, որք դուք ևս՝ ի նախնականն բարի գաշնաւորութենէ չեզեալք, հաւանեսջիք մեզ ասել ապօրինաւորին այնմիկ՝ ճիշդսն առեալ նմա։

„Լուարուք, լուարուք, նա՛ իցէ վախճանորդն Քրիստոսի, որ զինքն ետ երկուեղի եղեալ ի վերայ մահապարտ ընդ այլ երեսելի արգելափակութեան, հրաւիրեաց զՊանիէլն, և ապա՛ ի նոյն ատեան ի չարտոնել գնալոյ, ի ձեռն անպատմելի կաշառուց գնոխ և սաստիկ ահացուցանելով զգաստակոչեալն, զօծումն ընկալեալ գինուորք։

„Բռնութեամբ բռնադատեալ՝ ոչ իմն հոգի չնորհաց, այլ իմն հոգի դիւական հանգեալ՝ ի վերայ նորա, որ յայնմ օրէն զինչ ինչ ցաւոց՝ ի գլխոյն սպասաւինեալ՝ գազանաթեաց և գեշաստակն սրբոյ սեղանոյն հալէ՝ և անխնայութեամբ վասնէ ատա և անդ վասն միոյ անուան կռապաշտական, և գանիս ահացուցանէ զամենայն որպէս քաղաքացոյս։

„Ջրնկեալ Գողգոթայի հինգ տանի նահատակ ծովհամենեան սրբազան եպիսկոպոսն՝ որ գերեալ ի վերայ գեղարդեանն Քրիստոսի գինուցան իւր գնեալ, և յայնմ միջոցի գնորին կատարեալ իմաստնի մեսրոպ սեպհականի յայնոսն տուրք, գայնպիսի հայտարար արդեն տայ ի կապանս, ազգանէ ի բանտ, և հարկանէ զաղօթեան։ Լուսաւորն հոգւոց մերոց Գրիգոր զպահատուխիւն չարչարանացն նորին՝ երբեմն անդադար առ գաղափարութիւն չարչարանացն նորին՝ երբեմն անդադար բարեխոս այլոց տայ վճարել։

„Բազէք զինքեաս ընդհանրական գիրքն ի „ձեռս գլուխ, և Ի. հանգոյն, թէ զինչ գրէ վասն այսպիսեաց „ապօրինաւորաց յառաջ մատչելոց ի մեզ քում ամենայն հայրա„պետութեան, որ եթէ գինա՝ և թէ զընդունօղս նորին ընդ„հատիլ արդեօք հայրապետացն սուրհանէ։

„Ո՛հ, ահ անզգայութեան մերոյ, զի ի միոյ քահանայի նող„վից երկնչիմք, և փութանք ի կապանաց արձակումն բննդրել։

„Իսկ յայնքանեաց արբաղանից արքեպիսկոպոսաց՝ որք „հոգեւոր արբով խօսէին՝ ոչ զգամք բնաւ։

„Տեսէք ոմն Գօգաեցիք, որ ի սոյն վիճակիս եղեալ հայկա„զունքն գիտելով զձերդ երկիցս ընտրութիւնն, և մանաւանդ „զեկեղեցասէր հաւանանչութիւն ձեր, որ ոչ ընդունիք զայն„պիսի օտարածինն, այլ ի վերայ ճշմարտութեան զնահ յանձն „առնուք, վայելոյ պատիւ և յարգանս տալով ձեզ՝ գրեցին „վասն ամենայն միաբանիցն բազմակնիք մնհասար՝ առ ամե„նազամ կայսրն, թէ նա չէ ընտրութեամբ ազգին յառաջաց„եալ, այլ այսպիսի չարահնար աւերողի արարմունք։

„Ընդ որս եհաս ի Գայսարիսէ աղերս ի Դանիելէն առ „ականջս ամենազգում մեծի կայսերն մերոյ, զոր լուեալ սդաց „մեծաւ ցաւակցութեամբ, և խոկոյն գրեաց թուանալով դէսպա„նին յեղեալ զՓեբեման Դաւիթն, և վասն Դանիելին հաս„տատել, և բարձրագոյն հրամանն եւս առ Երեւանու խանն „թէ զինչ վասն է քեզ ընդ հոգեւորական գործս խառնիլ, „և ընդ օրինաւոր հայրապետութիւն Դանիելին ներհակիլ, „որ սպրդն զնա կալեալ։

„Ահա զայս համբաւն գրեալ էր առաջ Յովհաննէսի առ „եղբարսն իւր, առ աղա Մինասն և առ աղա Յովակիմն, զո„րոյ օրհնական ընդ գրոցս վստահի։

„Ամենազգում կայսրն եւս մեծաշուք հանդիսիւ եմուտ ի „քաղաքս, և ի ԹԲ. աւուր սոյն ամսոյ՝ օծաւ աշխարհակոսմբ „հանդիսիւ, որ ի ժամ օծմանն մեք եւս անդ ներկայացեալ „էաք ի Մօգոան, որ է հռչակաւոր վանք, և կացեալ էաք ի „շաբաթ արքեպիսկոպոսացն Ռուսաց, որ բնաւ յոչինչ ժամա„նակս յազգէ մերմէ արքեպիսկոպոս չէր պատահեալ այս„պիսւոյ քաղքենացեալ ութեան։

Digitized by Google

„ Թէպէտ անկարելի էր և իմն պատահելն անդ՝ 'ի մէջ
„ Սօքօմին, բայց տէր օրհնեացէ զծնունդս նորին գերազան-
„ ցութեան՝ աղա Ցովհաննէսին, և եղբարց իւր վերհազնեալ
„ աղա Մխեանին, և աղա Ցովակիմին որ գոլով վատեալ 'ի մեր
„ մեր և բոլոր ազգիս՝ այնքան հետեւողութիւնս արարին, զի
„ առ հասարակ մեծամեծացն Ռուսաց թէ հոգեւորականաց
„ և թէ մարմնաւորականաց նախ ծանօթս արարին զինէնջ, և
„ ապա 'ի Սօքօմն մուծին։

„ Յիրաւի յիրաւի՝ 'ի կողմանէ ազգին այնքան չատագով
„ եմ, որ թողեալ զանգիտական անձանցն զհոգս, տքնին վասն
„ պայծառութեան ազգին։

„ Եւ իմս այս հետեւողութիւն՝ ոչ թէ մի միայն վասն ան-
„ ձին իմոյ առնեմ, այլ կամիմ մինչ դեսպատիլ ընչոյս՝ բոլոր ազ-
„ գին զօգուտն խորհիլ, և կարեկից գտանել։ Եւ յետ քանի
„ աւուրցս՝ ունի կայսրն հրովարտակս հանել, որ ազգին հա-
„ նանեալն դանիէլն է, և նա պարտի լինել կաթողիկոս, և
„ այժմ այս կողմանցս վիճակք մինչ լսեն զինադադարութիւնս
„ ձեր ապօրինաւորին այնմիկ, հիանան և զարմանան։

„ Բայց գիտեմ ես, զի դուք պատճառս առ բերէք, թէ որ-
„ պէն յայնժամ 'ի ժամանակս Ցովսեփային՝ յահէ դեսպանին ա-
„ րարիք, նոյնպէս և այժմ երկիւղ նորին եղ ձեզ առնել զայս։

„ Բարւոք ասէք, բայց այժմ ըստ փիլիսոփայից՝ 'ի բառ-
„ նալ պատճառին, բարձցի և պատճառելին. տամ ահա բար-
„ ձումն պատճառի ձերոյ, որ ամենողորմած կայսրն լսեր ըղձի
„ ազգին արար՝ զայս խնամ և զողորմութիւն իւր, հաստատե-
„ լով զհայրապետութիւն դանիէլին։

„ Եւ 'ի ձէնջ այժմ սպասեմ մահտարական դրութեան՝ ըղ-
„ ճնարիտ դիտաւորութիւն ձեր ծանուցանելով ինձ օր մի
„ յառաջ, որ այսուհետեւ 'ի կամն ազգին յառաջասցի տէրու-
„ թիւն հայրապետութեանն։ Գիտեմ հաւաստեաւ, զի 'ի բարի
„ խորհրդոց չունիք շեղիլ, մի արասցէ տէր. եթէ գուք եւս
„ ցանկայք ընդ ոտս միոյ աբեղայի թաւալիլ, յայնժամ եա ան-
„ պարտ և ապատ գտանելով հանդերձ ոյն վիճակաւս իմով,
„ ոչ զլծուն իմ ճանչելոց և ոչ զչօծեալն այն, և ոչ ընդ
„ այսքանեաց սրբազան ժողովոյն ընդվիզ ներքոյ մնալ։

Digitized by Google

„ Թէպէտ ժամանակ ՚ի ժամանակ բազում մանկարգութիւնք
„ հղեալ են, բայց ոչ այսպիսի, որ ՚ի ժամ չօծմանն Քրիստո-
„ սական զինուորք և բռնաւորք ՚ի վերայ եպիսկոպոսաց
„ կանգնեալ հանդէպ սրբոց տաճարին, սրովք՝ սրճօք՝ և այլ
„ ահացնեցուցական գործեօք աստ տալով՝ այնպէս տան օծանել։

„ Իմ սիրելիք, եթէ դուք ՚ի վերայ երկիցս հաւանեալ
„ բնաւրութեանն ձերոյ հաստատուն կայք, նախ քնձ ծանու-
„ ցէք զդիտաւորութիւնն ձեր, թէ մեք ակամայ բռնադա-
„ հալ հաճեցաք։

„ Իսկ որովհետեւ ամենողորմ կայսրն բարեհաճեալ է քո-
„ ղուլ ՚ի կնոյն ազգիս, ըստ նախնական ձիսի մեր և օրինի
„ ընտրել զօրինաւոր հայրապետ, ահա մեր երկիցս ընտրեալն
„ Դանիէլն է, արդ և թէ ձեօք և թէ պարսից բռնակալու-
„ թեամբ զապօրինաւորդ այդ ապտակեցէք, և զԴանիէլն
„ մուծէք ՚ի ներքս։ իսկ եթէ երկիւղ իցէ ՚ի կողմանէ Պար-
„ սից, դրեցէք Դանիէլին գնալ յիւչ քէլիսա, և անդ օծա-
„ նիլ։ Գիտեմ Աստուած, որ ես հանդերձ վիճակաւս իմով՝ ոչ
„ թէ ՚ի յօգուտ և ՚ի նպաստ Դանիէլին առնեմ զայս, այլ թէ
„ վասն հաւատոյ թեան նախնական բարի ծիսի և կրօնի մեր
„ րոց, զի մի՛ իսպառ ոնհայր լիցի. իմ պատասխանութիւնս
„ այսչափ, և ձերդ բարեաց նախանձախնդիր լինելն դուք
„ գիտէք։

„ Եւ սակս երկու պատճառի ասեմ Դանիէլին ՚ի յիւչ քի-
„ լիսա օծանիլ, նախ՝ որ նա ինքն չօծեալն միոյն ինասցէ, և
„ հետեւեալքն իւր չկարասցեն մնանել ՚ի Տէրութիւնս Օս-
„ մանցւոց, և կամայ ակամայ ճարակտուր լեալ հերքեսցեն
„ զնա անտի։ Եւ երկրորդ, զի յայսպիսի չարաչոք ժամանա-
„ կի ոչ բարւոք վարկանիմ Դանիէլին ՚ի սուրբ աթոռն լինիլ,
„ և անդ մնալ, որովհետեւ յերկիւղէ պարսից զնաս մեծամեծ
„ հարկապահանջութեանց յառաջանալոց է, որոց աղագաւ ես
„ վաղուընջն ունիմ գրեալ նախնեաւտ դիտմամբ թէ ՚ի սուրբ
„ Աթոռն, և թէ առ Դանիէլ արքեպիսկոպոսն, մինչ յայդր ՚ի
„ պատրիարքութեան էր, զոր դուք եւս ընծերցեալ էք զայն
„ դիր, և ընդ այն հաւանութիւն տուեալ։

„ Զկաթողիկոսն այն՝ զդիւանապետ Գրիգորն չեպիսկոպոս

„ արարեալ՝ առաքեալ էր ի կողմանն յայն ընդ-էմ գնացող
„ ժողովրդոցն Ռուսաստանու, որք քանիցս մեհեանատեղին գը-
„ րաբեասիք գրեալ էին մի առաքել, բայց նա չանդրադառնալ
„ առաքեալ էր բնաւ ոչինչ անուսումով կամացս հաստատուիլ
„ թեանն, որոյ ի հունգարէն ի Մօսկուա, թէ զմեզանէ անառա-
„ գանս և անվախառութիւնս կրեալ է ի ժողովրդոց, ընդ դրչաւ
„ երբեմնակոր ոչ լինի, և կամ թէ զինչ ինչ հաստատութիւն եւս
„ կրնայ է այսուհետեւ։

„ Եւ կողմանցս ազգ Հայկազունեաց զչարաչնաշխարհութիւն
„ նորին հաստատականալով յունէն ամենողորմ հոգեպէն, հրաման
„ դրեաց արգիլեալ մեզ ի սահմանի Ռուսաց, մինչեւ ըստ
„ արժանւոյն իւր զվրէժս ընկալցի։

„ Որ ահա զժողովրդոց մեհեանատեղին օրհնական, և ի թիֆ-
„ լիզու չորս եպիսկոպոսաց առ նա գրեցեալն, և առ կուսա-
„ կալ հաւատ Ֆէտրիչ տեօրինոն, զնացուն օրհնական և զայլոցն
„ եւս՝ ահա ընդ գրոցս առաքեցի, զորս ունիք տեսանել, թէ
„ զինչ ինչ անց ք անցեալ եմն։

„ Տէր օրհնեսցէ զվայելուչութիւն նորին, ամենայն ինչ ի
„ կամս ազգին եթող և գոհ լերուք ի սմանէ հետեւ, մեծ չնորհ
„ եւս վերատեսիլ ի վերայ նուաստիս, զորմէ յիշեն պատմիչն
„ է անվայել։

„ Եթէ զայս առաջարկէք, թէ ժամանակ ի ժամանակ
„ այսպիսի գործառնութիւնք են եղեալ, որպէս եղիայզար
„ Ամխափեցւոյն, փութառնի և այլոցն, մինչեւ և յայնժամ բազ-
„ ուք են արարեալ, զորս խոյատաւակէ Մի-քայէլ Ջամչեանն։

„ Ոչ ապաքէն ազգին թոյլատուութեամբն և ընդ նորոգ
„ նոյն արգելան ժողովին միաբով՝ ոչ երբէք բանտարգ զայն
„ ի յանցաջողութենէ։

„ Եթէ հաստատութեան արգոյ ախտացոյն ցանկայք, չունիք
„ այլ եւս արգելման ատթիս, հետեւեցէք ճշմարտութեան,
„ որ յաստագային ազատ մնացուք յայսպիսի յանկարգութենոյ,
„ և խաչատ ի մէջ այլազգեաց մի լիցուք առակ նշաւակի։

„ Ես հաստատուն գիտեմ, և ստուգ այս ժողովրդոցն եւս
„ պատասխանեալ եմ, թէ նոցա կամօք չէ, այլ յիրեկից
„ գերապանին առնեն։

Digitized by Google

„Ահա տալտհոմուխիւն սիրոյ ձեր՝ որ ամենայնիւ ծայրէն „ընտ ընդի և փափաքանաց ձերոց պատրաստեաց, որ և ցան„կալով բարերչանիւթեան պատուական պատրիարք յորգելի „եղբօրդ իմոյ, և վանայ արհիսկոպոս իշխան սահրադեան և ժո„ղովրդոց՝ մեամբ Աստուածազնեայ առաքելոյ, և մինչեւ ցայսոր „ձեզ ի վերայ ճշմարտութեան հաստատուն ձեացոյց, ասե„ցախոնարհն եփրեմ արքեպիսկոպոս յոյժ Հայոց իւսպան„տոնու „։

Յամի տեառն 1801 եւ ի սեպտեմբեր 19.
Ի յարքայանիստ քաղաքս Մոսկով։

(1801) Ա.յս թուղթ եփրեմայ արհի եպիսկոպոսի տարած՝ եւ ի կոստանդնուպոլիս էարի հաշխեն ի լսելիս ժողովրդեան, յերեսաչրջանց գմխոս բաղմաց, և վտանգաց զեռաս ի հաստատուն պահպանութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի, մինչեւ և կողմնակալքն Դանիէլի քահանայութիւն և վանահայրութիւն քաղեալ ի նոցանէ, յայտնեան յոյս ոչ սակաւ չափ ունել և զուն գործել նուաճեցուցանել զկողմն Դանիէլի, և ի ձեռն բազում և մեծամեծ ընծայից և կաշառուց աղերս աղաչանաց մատուցեալ առ մեծամեծս տէրութեանն, յանկարծ իշուցին զձով հանեալս պատրիարք յաթոռոյ իւրմէ, և յաքսորս վտարեցին զնա ի քաղաքն Եւդոկիա, յամսեանն հոկտեմբեր 29, և սկըսան ի խորհուրդ մտանել վասն ընտրութեան պատրիարքի և ինդրել զայնպիսի պատրիարք, զի զկողմն Դանիէլի զօրացուսցէ, և զհակառակորդս նորին զամենայն ընդ ոտիւք իւրովք նուաճեսցէ։

Եւ յետ բազմաց ժողովոց գումարեցան վերջապէս և ի միում աւուր ի պասալը կոչեցեալ փուան հացագործի ի շուկայն, և անդ առ աջմակերեսս դքսանի լինել եւսեւիոպոսունս, յետ բազում հարցաքննութեանց չառաջոմութեամբ եղբօր որդի սէր զեղոս քահանայի՝ առաքելոյն և մինչքինին կացուցանել զպատրիարքութիւն զկողմնակալս Դանիէլի պատուիրեցին սրբոյ էջմիածնի, որ զերծելոյն ի կողմնանա եւդոկեայ։

Եւ ձանուցեալ զնոսա նորին ի գուռն տաքսանի՝ հանին հրամանն ասելով զնոսա, և հրամայեալ տատապարտ առնել

Digitized by Google

զքաղաքացիութիւն վաստկեալ գրոսի, ազգին գնաց ի կոստանդնուպոլիս, և ստացաւ ի դուռն ազգանուն պատուոյ, զոր եցոյց նաև եւ պատրիարքական իշխանութեան, և մեծաւ հանդիսիւ գարձոյց էջն ի պատրիարքարանն յամի տեառն 1801 ի դեկտեմբեր 19։

Եւ յետ առաքելական պաշակերտին Քրիստոսի զԹէոդոս եպիսկոպոս՝ որ գնացեալ էր ի նուիրակութիւնն ի Լուսիճիա, եւտուն բերել ի կոստանդնուպոլիս, և արարին վէքիլ Դրիզդոյ պատրիարքին։

(1801) Ի սմին ամի Թորոս կաթողիկոս Սսոյ՝ որ օծեալն էր ի կոստանդնուպոլիս յաւուրս Ջաքարիայ պատրիարքի, սպասնական յօշատեալ անգամ անգամ ի խոզան օղլու կոչեցեալ յայլայդի իշխանէ տեղւոյն սպասալարն Սսոյ ի վերայ կամիջոյ գեւղն, զոր յաղորդէ եղբօր որդի նոցուն Եպրահոս ազգերակոպաս Ցանցի՝ այր առաքինասլաւդ և ազգասիրօն՝ երիտասարդ քսան և չորս ամեայ՝ փութահեղ դիմօք և գեղեցիկ տեսլեամբ, և յետ միոյ ամի գնացեալ յերուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն, փառաւորի մեծաւ պատուով, եւ գառնայ յամիոս իւր։

ԳԼՈՒԽ Թ.

Ցաղագս օծման Դանիէլի ի կաթողիկոսութիւն, եւ ժողովոյն Գայազիտու։

(1802) ԳԻԴՈՒ պատրիարք՝ որ յաջորդեացն Յովհաննու յայրմ խռովութեան ժամանեալի, զոլով անհնարին ի հնամի Դաւթի, և սերտ բարեկամ և չասուզուլ Դանիէլի, և ինքն լսեալ բարեաց զոլով անխոհեմ և անվարժ, և չգիտելով զկնճռածաւոր բարս և զսովորական ընթացս կոստանդնուպոլսեցւոց, սկսաւ անվախճանաբար ձեռն ի գործ արկանել և յաղթահարել պիտոյիապահս Դաւթի. և վոխանակ ոսկւոյ և քաղցրու-

Digitized by Google

բնութեան հանճարեղոյ և արուեստից գիտակերպուրդն՝ սիրատ քառնագործ ուշադրանաց և ստրատնագիտից վարիչ ընդ նոսա։

Եւ ձեռնտուտ բնութեամբ կոչնեալ կատարեալ իւրոց ծանուցմամբ՝ ի գուռն ապրանքի էաւտ գիմելոյ ասկ Ալեքսանդրիա բնակելի, և ի ձեռն ներքինի վարդապետի՝ որ ասչակերտեան էր գանիելի, առաքեցաւ առ նա ի գայազիտ։

Գրեաց և առ վիսարիանն առաքն Լիմիտանի, և դասէր ի Դասթէն՝ եթե առանձ զօձմանն գիրքն առ գանիել. գրեաց և առ կոմոդիկոսն Ազրեանդրայ, և առ երեսելի առաջնորդս և եպիսկոպոսունս բազմաց քաղաքաց երթալ ժողովիլ ի Գայազիա, և օծանիլ գիանիել կոմոդիկոս ամենայն Հայոց։

Եւ էրեւ այս այսպէս եղեւ, և օր քան զօր ըզօրացաւ կոչումն գանիելեան, ժողովեցան ի Գայազիա բազմութիւնք եպիսկոպոսաց և վարդապետաց, և բազ օրինի և կանոնի եկեղեցական քննութիւն արուզեալ առանց կեզծեաց, գտին զիաւիթ ապրատուր՝ մեղաւոր՝ և բռնաւոր՝ և անարժան կալ թոդիկոսութեան, և գիանիել անաւեղ և անպարտ և արժանաւոր օծմանն ընտրեին, և վճռահաստատ առաքելութեամբ ամենեցունն օծին գիանիել կոմոդիկոս ամենայն Հայոց ի նոյն վանսն նռէ Գելիսա կոչեցեալ, յամի տեառն 1802 ի մայիս 28։

Եւ ըզքննութիւնն և զվճիռս պետհոգութեան գրեցին ի նեստոնդնուպոլիս օրինակ զայս։

ԳՆՆԱԻԹԻՒՆ ԱՐԱՋԱՆ ԱԻԻՆՀՈՒՍԻՆ

ԹԱՆ Ա.

« Ար էիցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ » ես ի մէջ նոցա, ասաց Քրիստոս առ մեզ. վասնորոյ և ի » ժամանակիս յայսմիկ մինչ ձեռնարկեաց ամենապարն խանդ » զարթել զեկեղեցի սուրբ, յանուն Քրիստոսի Տեառն » մերոյ ժողովեցաք քաղաքութիւնք եպիսկոպոսաց՝ վարդապետ » ատաց՝ քահանայիցն՝ և այլ ժառանգաւորաց՝ յիշեալ վանս գո » չիցեալ առաքեալն . . . և ասաց ի մէջ ս. քահանայապետաց առաջա » րեալ ասաւած

Digitized by Google

» թիս կառուցելոյ ... առաջի սրբոյ Աթոռոյն վիպասա-
» թեամբն Աստուծոյ և սրբոյ Աւետարանի նորա՝ ուղիղ ակ-
» նարկութեամբ ՚ի հանդէս մատուցեալ քննեցաք զդատաս-
» տան Դաւթի Թիֆլիզեցւոյ՝ որ անձնընծայ եղեալ առաւանե-
» ցաւ կաթողիկոս Հայոց՝ յամի 1804 ՚ի 20 ապրիլի, յորմէ և
» այսր ոչ տեսանէ երբէք եկեղեցիս Հայոց զերծեալ խաղաղու-
» թեան, զորս վայելէր առատապէս յերեսին և յետանդ։

« Եւ ՚ի զննին եղեալ համեմատութեամբ աւետարանական
» բանից և առաքելական և մարդարէական պրոց՝ ծանեաք
» զնա ամենեւին խոտորեալ ՚ի շաւղաց կենարար վարդապե-
» տութեան նորին, և հետախոյզ քննութեամբ կանոնաց հարցն
» սրբոց առաջնոց՝ և բարւոք վերահասութեամբ քանի քանի
» բազմօրինակ բազմակնիք դրութեանց քահանայակարգ մի-
» աբանութեան սրբոյ ածոցն Լիմմածնի՝ զտաք զնա խափա-
» պէս ընդ դատապարտութեամբ եկեղեցւոյ, և ապօրինաւոր
» օծութիւն նորա։

« Եւ զի մի ընդ համառօտն ընթացեալ, ՚ի տարակուսի
» թողուցումք զմիտս այնոցիկ, որք դարձ տեղեկութեան պա-
» րագայից՝ միայն պարզ մտօք ընկալեալ զնա զառաջինն որ-
» պէս կաթողիկոս վաւերական օծութեամբ, զայլմակղեցին
» վանն զատաստանի տուրբ սիւնհոդոսիս մերոյ, արժան հա-
» մարեցաք առաջի առնել դրով և ստորագրութեամբ մերով։

« Որպէս զի լաւ վերծանութեամբ իրացն հանգամանայ՝
» սրբազան խիղճ մտաց ամենայն հատարակութեան հեռաւո-
» րաց և մերձաւորաց աղէտիս մերոյ, և մնասցէ այնպէս վանն
» հաստատութեան տուրբ եկեղեցւոյ ՚ի յիշատակ անջնջելի
» յապագայ ժամանակի»։

Կանոնք վանն ընտրութեան կաթողիկոսի։

ԲԱՆ Բ.

« Առ ՚ի սկզբան անդ խնդրեցաք զկանոնս վանն ընտրու-
» թեան՝ կաթողիկոսի, և զտաք ՚ի գլուխս գրոցն օծութեան
» կաթողիկոսի այսպէս. « Յորժամ հանդերձեալ լինին բարձ-
» րացուցանել զոք ՚ի տեառն կաթողիկոսութեան տանս Հայոց,

Digitized by Google

„բոլոր ժողովուրդք Հայկազեան ազինս հանդերձ ամենայն
„ժառանգաւորօք և երկոտասան եպիսկոպոսօք ժողովեալ
„՝ի մի, ընտրեացին նախ զերիս, և ապա քննութեամբ ամե-
„նայն ժողովոյն որոշեալ զմինն յերիցն՝ վկայեալ յամենայն
„գործս բարիս և՝ի վարս առաքինիս սուրբս և անարատս,
„լի գիտութեամբ և խնամոտութեամբ։

„Եւ մի՛ լիցի՝ի հաւատս թիւր, ՝ի բարս ժանտ, ՝ի վարս
„անուղիղ, և՝ի բանս անհաստատ, մանաւանդ՝ զի մի՛ լիցի
„անձնընծայ և ընտրեալ արծաթով՝ի ձեռն կաշառաց յայլազ-
„գի իշխանաց, զի պիղծ է այնպիսին առաջի Աստուծոյ, և
„բանադրեալ է իսկ։

„Այլ և զտաք յընդհանրական գիրս ներսիսի Շնորհա-
„ւոյն, գլուխ Գ. երես 44. ուր ընդ երկար գրէ վասն դաւթի
„եպիսկոպոսի ուրումն, որ այնպէս յաշաղանօք՝ բռնութեամբ՝
„՝ի ձեռն կաշառաց՝ ընկալեալ է զօծումն հայրապետական՝ի
„գլուխ իւր, այլ բազմութիւն եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝
„հարց վանականաց՝ և միանձանց՝ աւելի քան երկու հազար
„և հինգ հարիւր անձանց, ընդ որս են և սուրբն Ներսէս Շնո-
„րհալին, և եղբայրն իւր սուրբն Գրիգորիս, ժողովեալ՝ի
„Սեաւ լեառն, և մեծաւ սիւնհոդոսին դատապարտեալ զնա,
„նզովեալ և հերքեալ են յեկեղեցւոյ Քրիստոսի.... գրեալ
„են զկանոնս զայս թէ „Որք ոչ ընտրութեամբ Աստուծոյ և
„Աստուածայնոց արանց՝ այլ ինքնաշարժ ախտիւք՝ և բռնա-
„կալաց աշխարհի հրամանօք զանձինս իւրեանց բարձրացու-
„ցանեն յաստիճան սրբազան քահանայապետութեան, ոչ մի-
„այն քահանայապետութեան չեն արժանիք, այլ և ոչ քրիս-
„տոնէական հաւատոյ, ոչ սրբոյ պատարագի յիշատակութեան՝
„և ոչ օրհնութիւն թափման անգամ„։

Ձեռս դպրոցիկ՝ի մէջ բերէ գիրս վիպասանիցն սրբոյ Էջմիածնի։

ԲԱՆ Գ.

Յորս մի առ մի պատմէ զանարժան գործս դաւթի, և զբողոքս եպիսկոպոսաց գնմանէ, և յետ այնորիկ դնէ զիմաստասիրութիւն սիւնհոդոսին զայս օրինակ։

Digitized by Google

ԲԱՆ Դ.

« Տեսաք և ընթերցաք և ղայլ ՝բազում գրութիւնս որոց
» ամենեցուն հասարմատութեամբ դատաք զԴաւիթին ամենահիմ
» հակառակ հաղոյն կանոնաց, և անընդունելի ընտրութիւն և
» օծութիւն նորա, որովք՝ եթէ օծեալ և եթէ չօծեալ՝ մի և
» նոյն է, և ըստ հարցին օրինաց դատապարտէ օծութիւն նորա
» զինքն և զընդունօղսն իւր, ըստ որում և գրեալ է, թէ
« Աւրժահի են մահու, ոչ միայն որք զչարն գործեն, այլ և որ
» կամակից լինին գործողացն, ուստի խոտեցաք զնա ըստ բանի
» մարգարէին, թէ « խոտեացին այնօրիկ, որք ընտրեալ են աբ-
» ծամիտ » ... և հարաք զնա ՝ի վէմն Քրիստոս, և դատա-
» պարտեցաք զնա ինքն զԴաւիթ և զամենայն համախոհս նո-
» րա, դատապարտութեամբն եկեղեցւոյ, մինչեւ զղջացեալ
» ապաշխարեացեն, և դիմեալ յառս օրինաւոր սրբազանին՝
» գտցեն զաստուածութիւն ինքեանց ։

Եւ յետ այսորիկ կարգէ զբազմանկնիք մահասարս միաբա-
նիցն և երեւելի առաջնորդաց այլոց քաղաքաց վասն խնդրե-
լոյ զԴանիէլ ՝ի կաթողիկոսութիւն Լչմիածնի, նաեւ զնոյն ինքն
իսկ զվկայութիւն Դաւթի վասն արժանաւոր կոչմանն Դանի-
ելի, և եղեալ զսոսա՝ պատմէ զընտրհալոյս օծումն տեառն
Դանիելի՝ ասելով այսպէս ։

ԲԱՆ Ե.

« Ապա և մեք համաձայնեալ նոցին ընտրութեանց՝ ընտ-
» րեցաք և մանաւանդ ընկալաք զայրժանապէս ընտրեալն ՝ի
» բազմաց՝ զտէր Դանիէլ արքեպիսկոպոսն, որ ՝ի
» քսան և հինգերորդ աւուր սուրբ Խաչին՝ հեզմանեք սրբա-
» լոյս միւռոնին յարժանաւոր գահակալ նորա՝ օծաք զնա օծ-
» մամբ սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ կաթողիկոս և քահանայա-
» պետ ամենայն Հայոց, և ծայրագոյն պատրիարք սրբոյ Էջմի-
» ածնի. զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ քանզ եր-
» կար ամս ... ։

« Ապա յայսմհետէ որ օք բերանով և գրով խրատ ետ-

Digitized by Google

» ամենայն ընդ ձեռն ելանել՝ ներկոհակ դատաստանի յանդուն ձեռնա-
» ծայ ժողովելոցս, ծանուցանել զայնպիսին ընտ առաքելոյն՝ վար-
» դապետս ստուերանման՝ մուծանուղ հերձուածոց յտգիս և յե-
» կեղեցիս անդր . . . :

» Եւ եթէ ոք առակարկեսցէ, թէ օծեալ էր Գասպէրն, և
» ’ի վերոյ այնր չէր պատուս զայդ օծանելոյ :

» Զպատասխանի սորուն յառաջագոյն լուծ զրեալ է պատա-
» ճան առաքեալն, թէ « Ոչ, որ զանձն ընծայեցուցանէ, նա է
» ընտրեալ, այլ զոր տէրն ընծայեցուցանէ » :

» Ընդ որոյ և ժառանգ երկու հաւատոյ հինգ հազիւ հայրցն
» (յառաջագոյն ընտրեալքն) զվիս Գասպէր ապօրինաւորութեամբ
» օծեալն յայնմ ժամանակի՝ ’ի մնայնակցութենէ քրիստոնէու-
» թեան եւս հատանել . . . :

» Եւ եթէ ոք զոռգին ապատասխանեսցէ, թէ օրինաւոր սըր-
» բազանն օծաւ արտաքոյ սրբոյ Էջմիածնի, կարէ՛ք հատու լի-
» նիլ, թէ և յառաջագոյն բազումք պատաքոյ սրբոյ Էջմիածնի
» օծեալ են օրինաւորութեամբ՝ ընդ հանդերձեալ կաթողիկոս
» ամենայն Հայոց, որպէս և ’ի վերջնումդ ժամանակիս տէր
» եպարտպետ Ներսէսդ՝ օծաւ ’ի կաստանդնուպոլիս ’ի Միջա-
» գետս, և ձեռնադրեալ պետիսկոպոսունս, և առաքեալն ’ի
» սուրբ աթոռն զինի ժամանակաց . . . :

» Զայս եւս արժան համարեմք ծանուցանել օրհնեալ ազգիս
» մերում, թէ ’ի վերջագրեալ Գասպէր պատճանէ ձեռնադ-
» րեալ եպիսկոպատուհանքն, և ’ի նոցանէ ձեռնադրեալ քահա-
» նայք և այլ ամենայն աստիճանաւորք՝ անընդունելիք են ե-
» կեղեցւոյ և բոլոր ազգիս մերում . . . մինչեւ զգիաստին, և
» դիմեացն առ ոտս հոգելնոռեր կայսերական և ազգասիրասէր
» տեառն Գանիէլի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց,
» և ընկալցին զնորումն և զիրողութիւնն :

» Եւ ոչեր որ կոչեալ և արդ ապատացեալ, և վճռաւորս ազատ
» զընտրեալն Քրիստոսի՝ զոչեր Գանիէլ սրբազանն կաթո-
» ղիկոսն ամենայն Հայոց, պայծառացուցէ զգաւազանն Լու-
» սաւորչեան սորա, և ազատեցէ զսա պարծանք ազգիս, և
» սիւն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և զձեզ զամենեսեան
» ընդ հովանեաւ սորա զգիտասատակել բարէր հովուութեան

» տասնելով ի վայրկեան զպատարագ և ի չուրս հանդատանեան, պատ-
» հեցայք անվտարձ կենաց և անապական ժառանգութեանց՝ առնելոյն
» բարօրութեամբ և անապատում ուրախութեամբ, ամէն։

« Ողջ լերուք, և հնարիք տեառն Աստուծոյ քոյդ հոգւոյդ
» ձերում »։

Ապա դնեն զստորագրութիւն անուանցն սիւնհոդոսին, ոյս-
պէս շարադրելով։

1 Կարապետ կաթողիկոս Աղթամարայ։
2 Գէորգ եպիսկոպոս Դաթէոս առաքելոյ տառակնոջդ։
3 Յովհաննէս եպիսկոպոս վիրաբան Աշտ. սրբոյ կաթողիկոսի։
4 Գրիգոր եպիսկոպոս՝ Բասենոյ։
5 Մարտիրոս եպիսկոպոս՝ միաբան սրբոյ Էջմիածնի։
6 Յովհաննէս եպիսկոպոս՝ երկրաւոյան առաքելոյ առակնոջդ։
7 Ներսէս եպիսկոպոս՝ տէրն Աղբրիկոյ։
8 Գրիգոր եպիսկոպոս՝ առաքնոջդ Բասենոյ։
9 Թէոդոպոս եպիսկոպոս՝ առաքնոջդ Խոսրովիդոց։
10 Գրիգոր եպիսկոպոս՝ առաքնոջդ Սիւնեաց տեղոյ։
11 Աբրահամ եպիսկոպոս՝ տէրն Քահկոյ։
12 Կարապետ եպիսկոպոս։
13 Մանուէլ եպիսկոպոս վաղդի հօր վանիցդ։
14 Աբրահամ եպիսկոպոս Դերջանոյ։
15 Առհակ վարդապետ Իշ քրիստոյ։
16 Աւետիս վարդապետ Ժամբրհնող։
17 Գալուստ վարդապետ Լուսաւորչի։
18 Յարութիւն վարդապետ։
19 Մկրտիչ վարդապետ։
20 Գէորգ վարդապետ։
21 Յակոբ վարդապետ միաբ։
22 Գաբրիէլ վարդապետ Թովմայ առաքելոյ։
23 Յովհէփ վարդապետ Ցամբերու։
24 Եղիա վարդապետ Վաղարշակերտի։
25 Եղիա վարդապետ Բասենոյ։
26 Յարութիւն վարդապետ Ցամբերու։

Digitized by Google

27 Վ. ապրան վարդապետ տալիս կոթայ՝ Ս. Գանձեվի առաքինոյ ։
28 Եղոյա վարդապետս բնիկ վիրաբան տուր ի Չվիանձեկ, և հարազատս զաւակ հոգևընտիր վերհատուիս մերոյ ։
29 Թաչատուր վարդապետս Բագնեցւոյ ։
30 Կարապետ վարդապետ Գանձակցոյ առաքեալ ։
31 Ադաքել վարդապետս ։
32 Մարտիրոս վարդապետս՝ միաբանն Մշոյ սրբոյ կարապետի ։

« Եւ այլ վարդապետք և քահանայք հոլովք, զոլովք զանց
» ապարտաք առ՝ ի չտեսոյ ձանձրոյնի ընթերցողացդ, որոց հա-
» միակամութեանն դրեցաւ և կնքեցաւ, ի թուին Հայոց ՌՄԾԱ.
» ի մայիսի 28, յերեք խորան կոչեցեալ առուր վանս, որ ի
» Բազրեւանդ գաւառ ։

Այս ամենայն դրութիւնք՝ ընդ որս և քահանայապետա-
կան կոնդակ առաւն Գանձեվի Տօրտասակ կաթողիկոսին՝ ե-
կեալ ի կուսանդնուպոլիս ի ձեռն գրոց որ հրամայեցին
պոսի առաչնորդին Ներսեսեայ, և ընթերցեալ յամենայն ե-
կեղեցիս ի լուր ամենեցուն, և մի առ մի բացայայտեալ զգրա-
բառս բանս անհասկանալիս ուսումիկ ժողովրդեանն, ուրախա-
ցան մեծապէս Գանձեցիքն, և ծախ գնծային հարեալ՝ սոճ
ուրախութեան սկսան գոչել ի տուն տիրանց, երգիծա-
նելով և զհիւս կողմն Դաւթի, որ էրերու յանցաւոյս մահու
չափ մեղայ սկսանէին հայիլ ի խնարհ տրտմալից սրտիւք և
խոժոռեալ դիմօք ։

Իսկ գրեցոր պատրիարք ժողով արարեալ ի պատրիարք-
քարանի եկեղեցւոյ, ընթերցաւ դարձեալ ի լուր ամենեցուն
զգրութիւնս սիւնհոդոսին, և զկոնդակ տեառն Գանձեվի կա-
թողիկոսին, և բազում բանս դուրութեան խօսեցեալ զԳանձեվէ՝
լինդրեաց ի ժողովոյն գրել ստորագրութեամբ ամենեցուն
զթուղթ չնորհատուրութեան ծծման տեառն Գանձեվի՝ ի դի-
մաց հառնորէն լրութեան կոստանդնուպօլսոյ՝ առ նա
ինքն Գանձեվէ, զոր և յառաջագոյն գրեալ և պատրաստեալ էր
նա ինքն գրիգոր պատրիարք, և ի ժողովին յայնմիկ եւս ստո-
րագրեալ ամենեցուն, որոց օրինակն է այս ։

Digitized by Google

« Ելատուծ՝ արդարակէ՛ և ազգասիրասէր՝ արքայ
« նախայոյզ վհատութեան տեառն մերոյ, որդիական խանարհու-
« թեամբ մատուցանեմք հանդերձ շնորհակալութեամբ այսոցիկ, մեք՝
« կայսերապարծ մայրաքաղաքիս պատրիարք, եպիսկոպոսք,
« վարդապետք, ատենադիրքն, և քահանայք ամենասիրելք
« իշխանապետք, միաբեմեայք, իշխանք, բազում ազուեստա-
« զարք, և էնտաֆիք, և հաստիցն քրիստոսանուէրն հաւատոյ
« հաւրքս, միասի քեզ ընդ երկար ամօք ՚ի շնորհաբերին մեր։

« Քանզի զգուամ վերին առնելագործութեանդ սպասուիւն հզօ-
« րութեան ազգացիս եղեալ յաջութիւն. վասնորոյ սպրդեալ
« տառապեալս, բարեկարգեալ զվիճակն ծնողիդ վարանաթող
« և յաջողակ նախկին լուսաստուած մերոյ՝ երկնաւիկ հայրդն սքա-
« նոյ, և աւետարեր նահանգի օրհնութեան՝ և տէրբ ախանհո-
« գոսին ձեր կանոնական մահտեսագրութիւն հնչեայ առ քեզ
« զկս մեր զվճռահանդէս օծմանդ ազգանշանդաշ եզանակ, և
« հետաւոտեալ ժամանակաւ եղեւ քահանայապետականն անդ-
« րանիկ օրհնութեանդ կոնդակ առ հաստատութիւն մեր,
« որպէս զանձրեւ ՚ի վերոյ սիրոյ, և որպէս զՅուր բարեհամ
« առ ծարաւեալս ։

« Որպես եղեալ վարանումն աւուրցն անցելոց, և քան զա-
« զամ ցասոյ արարիչ մերոյ՝ մխիթարութիւնն երկնաւոր ազար-
« գեաւդ՝ զոր երեղ առաքել հոգին առ ամենածայլ պէսպէս մեզ
« առ ՚ի սիրել յանգամն քո ՚ի մեզ, մեծասքես ոտիս ա-
« րար զմեզ ։

« Վասն որոյ նախասիրես շնորհաւորութիւնք զարթուցանեն օծու-
« քո հոգեձիր, և խնդրութիւնք յաստուածապետական բարեգոր-
« ծութենեն հարուստ առաք վայելել քեզ ընտրաստածափոխան
« քահանայապետութիւնդ, և հովանաւորել ընտրաստածահա-
« ճոյ ազգիդ օժանդակութիւն ՚ի վերոյ աջոյդ երկնեցուդ ։

« Եւ երկրորդ շնորհակալ եմք մեծասքես, որ սրբասքան
« օծութեանդ աւետեօք և յաստիպէս օրհնութեանդ կան-
« դակաւ՝ զոր շնորհեալ էիր առաքեալդ ՚ի ձեռն Պետրոսեան
« առաքելոց խոհեմաստաս Գրիգոր ապրեպիսկոպոսին, զոր
« ճաշակեցեր զարդասիրեալ սիրտս մեր, և օրհնակէզ փա-
« ռաստութեամբ բազձալացուցեր զքեզ առաստածն մեր հղիա-

Digitized by Google

» գիտաց, որ արդարք է և զտուղդութիւնն առնուլնե երկնից ՝ներա ։
« Որ ես կոնդակագիրս մեռանելարատար ազգիեպիսկոպոսն ՝ի
» յաստանէ սրբոյ եկեղեցւոյ ընդ երջեցուլ բազում բազմայայ-
» տութեամբ, և լեզուով եւս ճառելոլ երկից ՝ի միում միջ ա-
» մենեցուն ։
« Յայնժամ լցան բերանք և սիրտք մեր խնդութեամբ, և
» լեզուք մեր ցնծութեամբ, զանս այնորիկ երջորդապէս որ-
» դիական սիրով յօժարեցաք վաստահանալ ՝ի խնդիրս յայս
» յաստուկ, զի աստուածապէս ներուքն չնորհեացես ղղջացեալ
» անգիտութեամբ յանցաւորացն քոց, և նոյն օրհնութեան
» չնորհին մասնակից և հաղորդ առնել զհամայն ազգս մեր,
» առաքելով պարտաշահաւոր նուիրակս աստուածազործ սըր-
» բալոյս միւռոնիս, և չնորհաբաշխողիս օրհնութեան կոնդակաս ։
« Որպէս զի նոքօք ախոռեալ ծաւալեսցի լմանալի լոյս
» աստուածային չնորհաց առ ամենայն հաւատացեալ մերազ-
» նեայքս իբրեւ զլոյս արեգական, որք տեսեալ ընկալցին
» զհայրապետութիւն խնամն ձեր, և զոհանալով փառաւորեսցեն
» ընդ մեզ զամենասուրբ երջորդութիւնն զՀայր և զՈրդի և
» զսուրբ Հոգին, որում միշտ գեղեցամած երկրպագութիւն և
» փառք յաւիտեանս ամէն » ։

1 Գրիգոր պատրիարք Կոստանդնուպօլսոյ ։
2 Յակոբ եպիսկոպոս առաքինորդ Թրակիոյ ։
3 Պետրոս եպիսկոպոս միաբան սուրբ Երուսաղէմի ։
4 Գէորգ եպիսկոպոս վէքիլ պատրիարքարանի ։
5 Յակոբ եպիսկոպոս վէքիլ սրբոյ Երուսաղէմի ։
6 Կարապետ եպիսկոպոս միաբան պատրիարքարանի ։
7 Յարութիւն վարդապետ վէքիլ սրբոյ Էջմիածնի ։
8 Մկրտիչ վարդապետ միաբան սրբոյ Կարապետի ։
9 Մկրտիչ վարդապետ վանցի միաբան սրբոյ Կարապետի ։
10 Գրիգոր վարդապետ միաբան պատրիարքարանի ։
11 Մանուէլ վարդապետ միաբան պատրիարքարանի ։
12 Սիմէօն վարդապետ միաբան պատրիարքարանի ։
13 Մկրտիչ վարդապետ միաբան պատրիարքարանի ։
14 Մեսրովբ վարդապետ միաբան պատրիարքարանի ։

Digitized by Google

Եօթն պրկող եկեղեցեացն առաջ երկոտանք, և ամենաս-
կալք, և միութիվելիք, և եկեղեցասանք, և վարժապետք, ա-
միրայք, իշխանապետք, իշխանք և բոլոր ընտանեկից դուխա-
նաւորք, որոց հանճարանութեամբն պրծեցաւ և կենդեցաւ հա-
մահաճական մեհեարս այս։

ԳԼՈՒԽ Ժ.

Ցառաջս գործոց Գրիգորի պատրիարքի, եւ ազատականաց նորին եւ Դանիելի, եւ վերադաձնալոյ Յովհաննու կրկին անգամ յաթոռ պատրիարքութեան կաստանդնուպօլսոյ։

(1802) Առաքեալ Գրիգորի պատրիարքի զայս թուղթ ընորհաւորութեան առ Դանիել կաթողիկոս՝ ի յիւչ քիլիսա, և ընդ ամենայն տեղիս ղկոնդակ և զհրամանագիրս, զի ըզ Դանիել կաթողիկոս յիշատակեսցեն՝ ի պատարագին, և մի երբէք զդաւիթ, և այսպէս երկու կաթողիկոսք երեւեցան՝ ի մի և՝ ի նոյն ժամանակի՝ և՝ ի վերայ մի և նոյն աթոռոյ և ազգի, միոյն՝ Դանիել օրինաւոր կաթողիկոս օծեալն՝ ի յիւչ քիլիսա, և միւսոյն՝ Դաւիթ բռնաւոր կաթողիկոս ապօրինաւորն կոչեցեալ, և երկպառակութիւն մի և նոյն ազգի յերկուց կողմանց սկսաւ ճարակիլ օր քան զօր, և հրդեհել աւերել զգեղեցիկ շէնս և զբնակութիւնս ողորմելի ազգիս։

Եւ Գրիգոր պատրիարք՝ վոխանակ խոհեմութեամբ և քաղցրութեամբ ամոքելոյ զսիրտս ժողովրդեան երկուց կողմանց, և հայրաբար խրատելոյ և հանդարտելոյ զաղմուկ խռովութեանն, ըստ անխոհեմ բաթուց իւրոց և սա՝ ի միւսմէ կողմանէ նաեւ և ձէթ արկանէր՝ ի հուրն բորբոքեալ, առաւելուլ և տարածանել զխռովութիւնն ցնասիչ օգտի հասարակութեանն։

Քանզի՝ սկսաւ բռնաբար խոչտանգել զԴաւիթեանս, և

Digitized by Google

զիմեցուցին նմա բանից նախատակ եղելոյն անցանելոյ և զպատճառսն զնոսա ի քաղաքս և յայլ գիւղս և ի տես աստուածայնութիւնս իւր, որպէս և ի վերայ նստելոյ ի քարոզչի եւթանց ի վեց եկեղեցւոցն պատմութիւնն՝ ի վեց ազգեսս գրեալ ի մեզ, պատուիրանաց զանուն նոցա, զի վասնի տասանց ազգութեանցն հաւատալոյ, և զիւս վասնի ըստ տասնկոտեան բաժանելոյ, զի ասէ «Ձկեսուք կոչեցաւ Դաւիթ, այսինքն թաս, ի զի Թաւն նշանակէ մեպտեան, և իմն՝ դշուն» որով և Դաւիթն աստուածայնի մնալոյ շուն, եւայլն։

Արդ այսպիսի պրուցարանութիւնք թէ ոչ քան անհեթեթ են բնորդոց հոհմական մարդ՝ Թող թէ՝ պատրիարք և կաթողիկոս, և թէ զիմեցուցանել ի ն, և զպակուց անունն Դաւիթ բառգել տասնկական նշանակութեամբ։

Բայց զայս ոչ բաւական արար, զի ոչ մի միայն ի բարկութիւնն և ի պատմութիւնն շարժեաց զԴաւիթեան կոզմն, կամ զայնոսիկ՝ որոց անուանքն էին Դաւիթ, այլ նաեւ վրդովեաց և սպառնալեաց զիսուս բառիսոց և գպիտակութեցոյց նաեւ զԴանիել, եանս եւս առ հասարակ, յաւելն նոցա և ի հարցանել զիմեանս, ուրեմն և Դաւիթ Ղաւուածահպոն ինչ ճաղատ, և այլ եւս առաքն Դաւիթ անուանակոչեալք։

Ուստի սկսան գաղտնի խորհուրդ առնել կոզմնակալքն Դաւիթի, և ի ձեռն կաշառաց յանկուցեալ զմեծաւեծս տէրութեանն, յետ մեռանան ամենայ պատրիարքութեան նոցա իմքուեալ գԲրիգոր ի պատրիարքութիւնն, վտարեցին զնա ի քաղիզեդն, յաւուր երեքշաբթի ի հոկտեմբեր 11 յամի տեառն 1802, և վերապարձուցին զերստին զՅովհաննէս պատրիարք յետդոկիոյ քաղաքէ՝ ուր աքսորեալն էր։

Եւ ի յայսմ միջոցի նստաւ տեղապահ պատրիարքի՝ Անդրէաս եպիսկոպոս աշակերտահիցն Յովհաննու, որ գոլով ի կոզմն Դաւթի՝ սկսաւ հալածել և որոնել զԱնիելեանս, և զորս միանգամ գտանէր, մատնէր ի գան և ի բանտ, և զամանս յաքսորս և ի թխի նաւատեղեաց։

Իսկ Յովհաննէս պատրիարք վերապարձեալ յետդոկիոյ՝ զբեցաւ զկապն պատրիարքական իշխանութեան, ի գեկ-

Digitized by Google

պանիկը 8, և հրամայեցաց յիշատակել ի պատարագի զանուն դասէին կաթուղիկոսի, և փոխանականն արար զԴանիելեանս առ հատարակ, և ի տանէն առնուլ ճանապարհ վերադառնալոյ աշխարհն Գանձակայ ընդ ին քեան զհնգհազար Դանիելի կաթուղիկոսութեան, խոյս տալ ի ձեռաց նոցա։

Այլ ծովհանէս ոչ չատացեալ այսու ամենայնիւ, նաեւ զերկպատակութիւնն կաթուղիկոսաց բառնալ կամելով, երկան հրովարտակ ի տէրութենէն զխոտորեալսն առաքել յաքսորս, ուստի զԴրիգոր պատրիարք բարձեալ ի Գանձակոյ՝ և ըզ Դանիէլ կաթուղիկոս ի պայազիտէ՝ առաքեաց յաքսորս յիչմիածին, մնացեալ զեռսին ի ձեռն Դաւթի, և զԳէորգ եպիսկոպոս վէքիլն պատրիարքարանի՝ զառաչինն առաքել ի Նոր Իրականութիւն յԱղբիւրիանոպոլիս, անտի և զնա առաքեաց յաքսորս յիչմիածին։

Եւ զկարապետ եպիսկոպոս զառաչնորդն սուրբ Դանիելի վանից ղեւաստիոյ՝ զոր Գրիգոր պատրիարք բերեալ էր ի կոստանդնուպոլիս, զնա եւս առաքեաց ի տեղի իւր։

(1802) Իսկ Դաւիթ՝ ոմերիմ թշնամին Դանիելի, իբրեւ եհաւաստեալ իւր մնասնեալ ի ձեռն իւր, զուարճացաւ անպատմելի խնդութեամբ, և ըստ անողորմ և անգութ բռնաւորութեան իւրոյ սկսաւ ժուռանել զնոսա ի բանտ, և չարչարել դաժան տանջանօք։

Սովաւնահ արար զԳէորգ եպիսկոպոս անդ ի բանտին, և զպաստուականն ծծրուս տեառն Դանիելի գերծեալ յեւս բազում չարչարանացն՝ առաքեաց յաքսորս ի Մարտակլա քաղաք հրամանաւ Շահին Պարսից. և ոչ չատացեալ այսու՝ գուն գործ ածեաց ի ձեռն կաշառաց հրովարտակ առնուլ ի Շահէն վասն կարճելոյ զԴանիէլ ի կենաց։

Այլ երբեմն զնաց հրովարտակին ի խանն Մարտակլա քաղաքին՝ ուր աքսորեալն էր Դանիէլ, ընթերցեալ զնա խանին՝ առաքեաց զղահիմն՝ զի սպանցէն զնա, և դահճացն ընթացեալ՝ երբեմն կամէին մնռանել ի ներքս առ Դանիէլ, տեսանէին առաչի նորա զերկուս առիւծս պաշտօնատարս նմա, և զղջէին հարկանել զառնան յերես՝ և պատմեին խանին, և նորա ոչ հաւատացեալ՝ անձամբ ինքն երթեալ առ նա ի տուգել

պատասխանեին նոցա, և ինքն եւս տեսանել այնպիսւոյ դանիէլեան տեսլեան և պարգեւել գնոսին, և կոչէ զնա բարձր ձայնիւ ասելով, մի այլ Աստուածոյ Դանիէլ հրամայեսցի տուրս տալ իս, զի յայսմանէ արար Աստուած զանմեղութիւնն քո առաջի ամենից:

Եւ Դանիէլ երկար ատեան ’ի տեղիսկին՝ եկ և չոգաւ յոտն թագաւորին, որ առեալ զնա բազում պատուով և մեծարանօք, յղեաց ’ի տուն ուրումն իշխանաւորի Հայոց, կալ ձեռն անդ անդորր և խաղաղ կենօք, ուր գնացեալ մնաց անդ պաղիտից և ճգնութեամբ պատրաստեալ՝ ողբալով զմերկութիւնն արդեաւ աթոռոյն Լուսաւորչի, և պիղծութիւն մերազանցեցն:

Իսկ գրքոյդ պատգիտիդ մնաց անդ ’ի բանտին Լուսաւորչի՝ ոչ տեսեալ երբէք զերեսս Դանիէլի, որպէս և ինքն ոչխտեալ էր իսկ Աստուծոյ:

(1803) Ի սմին ամի հրամանաւ սերովբէական Գաբրիէլեան պատարիտգ ’ի հիմնեալ պիղծ անդանդանոցն Նաստոն դնտպօլսոյ, չինեալ ’ի նմին և զնաւտու մի յանուն սրբոյն Գաբրիէլ Աստուածապատն աւետարանչին, որ յետ ժամանակաց երեք թղթաթափին երկրպագի, և յետ ամսոց հինգ ձերն էարկ ’ի շինութիւն սուրբ Գէորգ երկրպագուացն Աստիսթիոս, զորոյ առաքեալ պշինութիւնն յասնեցանն յոլիս 2, էած վաստաւոր հանդիսիւ աղօթս մնաստուցանելով վասն կենաց ազգային:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ցաղագս պատերազմին Պարսից եւ Ռուսաց, եւ դարձին Դանիէլի յաքսորանացն, եւ նստելոյ յաթոռ կաթողիկոսութեան յԷջմիածին:

(1804) Այն ինչ Դանիէլ էր ’ի պայազիտ, և չեւ եւս օծեալ էր կաթողիկոս Հայոց, բացաւ պատերազմն ’ի մէջ Ռուսաց և Պարսից, և տեւեաց շամս երկուս, յորում յաղթող

հանդիսութեան սէրն ընդ Դաւթի, և ետուն զարմանալեաց զբաղումս քաղաքացն գործոց, եւս և զիշխանացին, և զարհուրեան և զերկիւղն քաղաքացն, և զանհնարելին առնուլ առաւարգնաց հաւատոյն ի վերայ նոցա։

Եւ ի յայսմ միջոցի խուովութեան ժամանակին գանեին կաթողիկոս և գրիգոր արատրիարք զքաղուեալ յիշխանացին, ձնստնեալ կային ի ձեռս Դաւթի, և էին ի քաղաքի բերդին Երեւանի քաղաքին։

Իսկ Շահն իբրեւ եւեթս գաղետալի տագնապ տէրութեան իւրոց, որ մեծ էր ի կործանիլ, և անճարապահել զայլ իմն հնար յաղթահարման լինելոյ ինուսաց, փութացաւ դեսպանս առաքել առ տէրութիւնն ինուսաց, յամենայնի ընդունելով զդարձման և զդաշնադրութիւնս նորին, և առ յաճախ հաստուցանել նմա զպայմանեալ դրամսն զրամոցն և զամենայն ծախս պատերազմին, և յաղագս այսր վինդ եւս խնդրէր զբառանել միջնորդս և բազմախօսս առաքել առ հիւսս, առնապարանոց Դաւթի, և հաճեցոյց զմեծամեծս գործոց, զի զհանձնել և զիրիգոր պատգամեցէ զեռազանութեամբ առ ինուսս, սրպէս թէ լուռ ամենայնի ընդունելի էցին աղաչանք և խնդրուածք սոցին առաքելի տէրութեանն ինուսաց։

Ուստի և եղեւ հրամանն, և ածին յատեանն զիանիել և զդրիգոր առաքելի Շահին գործոց, և հրամայեաց Շահն, և առեք ցնոսա, ահա օր և ահա ժամ, զի յայտնի արասջիք զհաստատութիւնս ձեր և զսէր՝ զոր ունիք առ թագաւորութիւնս իմ, և ես ձեզ հաստուցից փոխարէն հաւատարմութեան ձերոյ զբարիսն՝ որք վայելին խնամս առատապարգեւ թագաւորութեան։

Ապա՝ այսօր եւս ձեզ իշխանութիւն և պատիւ դեսպանութեան ի կոզմանէ իմմէ դնալ առ տէրութիւնն ինուսաց, և խաղաղեցուցանել զվրդով պատերազմիս, և օր սահմանել, զի յերկուց կողմանց մեծամեծ նախարարք և երեսփոխանք ի մի եկեալ, վճարեսցեն և կնքեսցեն զբանս և զդաշնադրութիւնս միոր։

Լուեալ զայս Գանիէլի՝ պատուհասանի եղեւ և ասէ ցնա, ես ուսմ՚ զխոհեմ և ճանապհեմ զմեծամեծս ինուսաց, զի բանք և

[illegible] զնոցա, և [illegible]
[illegible] զնոցա. ոչ կարեմ առնել ես զայդ, զայդ
ոք ի ձառայից քոց առաքեցես, որ ծանօթ և սիրելի իցէ
քոյոց նոցա։

Զայրացաւ Շահն՝ երբեմն լուաւ զայս ի Թանխրիլ, և [illegible]
[illegible] յաջորդս վիճանակի
յաջորդս վտարել զնա ի Մարաղա քաղաք, և կարճել զկեանս
նորա, բայց նախանձնամուխ[illegible]ն ասուածոյ պահեաց զնա կեն-
դանի և անվնաս ի ձեռն ազանչելեաց իւրոց, զոր ի վեր
անդր յիշեցաք։

Բայց Գրիգոր պատրիարք առնակալ զայս աքսորանս Դանիէլի, և վասնզով վերծանել ի ձեռաց պարսից, և ըստ ոմ-
տադէտ լինելոյ իւրոյ չտեսանել զերեսս Դաւթի առաջնոյն իւ-
րոյ, [illegible] Շահին, և յանձն էառ գնալ դեսպան-
նութեամբ ի կուժին Ռուսաց, և հաճեցուցանել զմիտս տգէտ
թագաւորի նորին և ամենայն մեծամեծաց։

Եւ այսու երգանակաւ երթալ ի բանտէն երեւանու՝ գնաց
ի Ջուղիսա քաղաք, և անդ վանեաց զիմիկնուազհս իւր Պար-
սիկս՝ զորս հոգեառել էր Շահն գնալ ընդ Գրիգորի և օգնական
լինել նմա ի բանս և ի խորհուրդս, և անդ եկաց մինաց մին-
չեւ ցվախճան կենաց իւրոց։

(1804) Իսկ երբեմն այլով երգանակաւ վճարեցաւ գործ այս
առերազմին, և յերկուց կողմանց երեսփոխանք եկին ի միասին
գրել և հիմք դնել դաշինք[illegible]ն տէրութեանցն, յայն-
ժամ եվրեմ ասկի երախտապարտ առաքնորդն Ռուսաստանու ի
ձեռն Հայ ազգի մեծամեծ ի[illegible]նայ իւրոց՝ մնասցեայ աղերս
առ կայսերն և առ խորհրդականս տէրութեանն, զի ի վճիռս
գաշնագրութեանն յետ[illegible]ցուն և զայս, զի թարձցէ Շահն զդ
Դաւթի [illegible]ն յիշխանութեայ, և զդանիէլ հայրապետ կաթո-
ղիկոսն ազգին կարգեցցէ և դիցէ յաթոռ իւր։

Եւ զայս այսպէս կարգեալ և պայմանեալ և մերինեալ ի
միմեանց, երբեմն երեսփոխանք զդաշինագրութեանն
գնացին, և ցուցին Շահին իւրեանց, ընկալաւ զամենայն զրը-
[illegible], և զրեալ հրովարտակ առ խանն Երեւանու, զի զդա-

Digitized by Google

նիել կաթողիկոս յետս կոչեալ յաքսորականացն ի Բախտալա քա-
ղաքէ՝ նստուցանէ զնա յաթոռ իւր, և զիաւիթ ածօրինաւորն
մատանեացէ՛ ի ձեռն Դանիէլին՝ առնել նմա զինչ և կամեցաւն։

Եկեալ հրովարտակ Շահին առ խանն Ղարաբաղու, փութա-
նակի կատարեաց զհրամայեալն ի տէրութենէն, և բերեալ
զԴանիէլ մեծաւ պատուով յաքսորականացն՝ բազմեցոյց զնա ի
սեռնակի իւրում՝ յանդիման աչաց իւրոց, և զիաւիթ բերեալ
յիչմիածնէ հրամայեաց կացուցանել զնա առաջի իւր, և յետ
բազմօք նախատեալոյ զնա և հայհոյելոյ՝ հրամայեաց մերկացու-
ցանել զնա, առեալ՝ ի նմանէ զքօղ կաթողիկոսութեանն՝ և
զվերարկուն՝ և զմատանին՝ և զգաւազանն, զդեցուցեալ զնա
առ Դանիէլ, հրամայեաց զԴանիէլ հեծուցանել յերիվար զար-
դարեալ և շքեղ, և զԻաւիթ բռնոտն և բացաւ զվախճ ընթ-
ացուցանել յառաջոյ երիվարին մինչեւ ցիչմիածին։

(1804) Այլ ընդ այս ոչ հաւանեալ անկիւնակալ տեառն
Դանիէլի, և աղաչանօք իւրովք հաճեցուցեալ զկամս խանին,
ետ և զնա նստուցանել յերիվար, և ի միասին գնալ երկոցու-
քեան և հանդիսապատիւ շքեղութեամբ մինչեւ յաթոռն տուր.
և հասեալ յիչմիածին բազմեցաւ Ինքն ի գահ կաթողիկո-
սութեան իւրոյ կանոնքն Աստուծոյ և ընտրութեամբ ազգին,
և վանն Դաւթին հրամայեաց յաստուկ սենեակ զպատարել և
պատրաստել, և առօրինեալ նմա զկերակուրս և զպատասխուս,
մերկի ընդ մերկի յայց եղանէր նմին, և մեկնիմարէր սիրով, ըստ
առաքելական բարեխառնութեանն չարեաց ամենայնի՝ զոր ըն-
կալաւ յանգուրժն բռնութենէն և ի ձեռաց նորին։ Իբրեւ
այսպէս հաստատեցաւ Դանիէլ ի կաթողիկոսութիւն իւր ըստ
ընտրութեան ազգին և ըստ խնդրելոյ ամենայն միաբանից,
յետ սիոյ սակ գրելոյն միաբանք զգիր մահաբարութեաց հանձ-
նագրութեամբ ամենեցուն ի Կոստանդնուպոլիս առ Յովհան-
նէս պատրիարք և առ իշխանաւորս ազգին, և առաքեցին
զգիրն ի ձեռն դայլակեր կոչեցեալ Յովհաննու եպիսկոպոսին։

(1805) Որ բերեալ զգիրն՝ մատոյց ի ձեռն Յովհաննու պատ-
րիարքին, և նորա ժողով արարեալ ի պատրիարքարանի յե-
կեղեցւոջն՝ հաւանութեամբ ամենեցուն ընկալան և հաստա-
տեցին զԴանիէլ ի կաթողիկոսութիւն բոլոր ազգին, և ծա-

Digitized by Google

նուագեալ ազգութեն դրանի՝ առին զԿրոմվելտոնական խշխանութեան նորա, և առաքեցին առ Գամիեէլ կաթողիկոս ՚ի ձեռն Պատուական վարդապետին Կոստանդնուպօլեցւոյ։

Որոյ ելեալ և գնացեալ ՚ի Շապհն գաւառահիսարն, ուր էր յոյժ ժամ առաջնորդ երիմիա վարդապետն Կոստանդնուպօլեցի, և զնա եւս առեալ ընդ իւր ՚ի խնդրոյ իշխանաւորացն ձանձ տեղւոյն, յոտարկաւորեցաւ ՚ի սուրբ Էջմիածին, և մնաստուցեալ առաջի տեառն Գամիեէլի կաթողիկոսութեան իւրոյ յայրքունեի դրանէ Կոստանդնուպօլսոյ, ուրախացաւ Գամիեէլ և բոլոր միաբանութիւն սուրբ ուխտին, զի այսու երկպառակութիւն և խռովութիւն ազգին բարձաւ ՚ի միջոյ, և օգր և հեզագոյնութիւն տարածեցաւ յամենեսին։

Ուստի և ՚ի չնորհս այսր ընդունելութեան ձեռնադրեաց Գամիեէլ կաթողիկոս զՊատուականաւուր և զերեմիա վարդապետն եպիսկոպոս, և դրեալ զկանոնակ օրհնութեան իւրոյ առաքեաց ՚ի ձեռն նոցին ՚ի Կոստանդնուպօլիս։

Որ իբրեւ եկին և ընթերցաւ ՚ի լուր ամենեցուն յեկեղեցիս Կոստանդնուպօլսի, եղեւ ուրախութիւն մեծ ամենեցուն, և յայնմ օրէ սկսան յիշատակել ՚ի պատարագի զԳամիեէլ կաթողիկոս ամենայն Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս գալոյ Անգլիացւոց պատերազմական նաւուք ՚ի Կոստանդնուպօլիս, եւ բազմադիմի խռովութեանցն, որք եղեն ՚ի Կոստանդնուպօլիս։

(1806) Ի սմին ժամանակի բացաւ պատերազմն մեծ ՚ի մէջ Պաղխացւոց և Ռուսաց, և ամենայն Եւրոպա խռովեցաւ իբրեւ ծով ահեղ ծածկեալ յահէ և յերկիւղէ Նապոլէօն պօնապարթի կոչեցեալ ազգաւքն Գաղղիացւոց։

Digitized by Google

Եւ Յուլիան Սէլիմ արքայն Օսմանեանց յարուցաւ ՚ի վրէժն պծնաբուրթին՝ ուխտ եւ դաշն հաստատեցուով ընդ նմա, բազմ կաւի նորուն լինել բարեկամ, եւ Քրիստոնէից Քհնամի։

Իսկ Ալեքսիոսիք՝ որք էին ՚ի կողմն Ռուսաց, սկսան յորդորել եւ հաճոյացել զՄեծամեծս տէրութեանն Ցանկաց, զի թոզեսցէ զՊծնաբուրթ՝ յարուցանէն ՚ի կողմն Ռուսաց։

Եւ Թէպէտ մեծամեծք տէրութեանն հաճոյեցան եւ կամէին բարեկամանալ ընդ Ռուսս, բայց չէզրեւ հնար հաճոյել գՅուլիան Սէլիմ, զի յամենայնի մուտիրիմ ոգւով եւ հաւատուրիմ սիրով կապեալ էր ընդ Պծնաբուրթին։

Վասն որոյ հաւատուրիքն Քրիստոսի մեռուսան պատերազմական հնարիւք յանկարծակի երեսս ընդ նեղուցն Մէջերկրական ծովուն յաւուր յիշատակութեան Յոյնքանոս մարգարէին ՚ի վեցերորդ 8, յամի տեառն 1807, եւ երկն յանգիմանեն քաղաքին կոստանդնուպօլսոյ առաջի Հէյրէլի կղզոյն, եւ պատրաստեցան ՚ի պատերազմ։

Եւ այս գաղտնի խորհրդով մեծամեծաց տէրութեանն էր առ ՚ի տհաճուցանել գՅուլիան Սէլիմ արքայ, զի հաճեացի ականայ կամօք յարիլ եւ միաբանիլ ընդ Ռուսս։

Որ Թէպէտ երկեաւ յոյժ յերկիւղ մեծ, եւ հրամայեն երեսն վաղվաղակի նորոգել զծովահայեաց կողմանս պարսպաց քաղաքին, եւ ամրացուցանել զնոսա Քրիստոնօքօք եւ ռմբագործօք, եւ կանգնել պատնէշս առաջի դրանց քաղաքին։

Եւ հրամայն արար իւրազանչիւր ազգաց գնալ ժողովիլ ՚ի պաշտօն եւ ՚ի գործ բերդաշինութեան, վասն որոյ եւ հարկ եղեւ ՅովՀաննու Պատրիարքի հանդերձ հասարակ ժողովրդեամբ գնալ ՚ի պալատն արքային, եւ ինքն առաջակայ լինելով ժողովրդեանն՝ սկսաւ հոգ կրել ՚ի թիւիւնս իւր, եւ կիր՝ եւ որ ինչ պիտոյք էին ՚ի գործ շինութեան։

Տեսեալ զայս Սուլթան Սէլիմ արքայ, եւ հարցեալ՝ թէ ո՞վ ոք լցէ նա, եւ իմացեալ՝ հրամայէ զգեցուցանել նմա զսամոյր մուշտակ արքայապարգեւս, եւ նստուցանել զնա յաթոռ, զի ինքն մի՛ աշխատ եզիցի, այլ ժողովուրդ իւր փոխանակ իւր։

Ա.րդ՝ Թէպէտ մեծ եւ ծանր էր գործ շինութեանն, եւ Թերեւս անպիտան առաջի մեծապօրհնաւորհութեանց

Digitized by Google

Իսկ իշխան Մատաթեան վիշապ զխնդալ տանիս ընդունի Սուլթան Սելիմ ազգային սիրելութեան, վերադարձեալ ի տունս իւրեանս, և հոգատարեալ զգեստուն զորաստանին՝ յարմարեալ իրիկ զատուած ի վերայ զորաստանացոյց տարեգրին, և զորավարացեալ առաքեալ՝ զնոցա միաբանեալ գնդակապ ի նոսա զանեցին, ընդհարացան ի նոսա, և ընկերացեալ զիշխանին Մատաթեան յամենայն՝ ոգի ի տեղի հարուն զերդացոյց զիշխանին Մատհոյ յամենայն թագաւորութեանն ի յամսեանն 30, 1808, և ի հինգշաբթի առաջ ՌՄԻԳ ի ճեմարտիլ ամսեան ։

Եւ ի նոյն առաջ առաքեալ և ինքն զվերոյգրեալ քաղաքացիսն՝ եկեն հանդիպեալ ի գետն Եզերգեզ ասին. և նոյնպես ի տեղի իւր, և ամենայն յայնմ օրէ անուսի կողոպտութենէ և ի տուր առաջին ժողովրդեան ընկերչերի զօրացին՝ զչարժառիթ անձինս առաքեալ քաղաքացիսն ։

Եւ բերել և զանկիսեցիսիս բազում ի գոտեպատեր հոգեպօրիս, և արար հոգոյս ընծիրիս քաղաքացիսս ի վերադարձ յոյնէն, և այսու ահագնիւ տարաք զանձնայն եկեղեցիսիս և զգուշութեամբ գոտեպատեր հոգեպօրիս ։

(1808) Եւ յայսմ միջոցի եկն և Մանուկ ալէյ երեսփոխն իշխանին Յոհաննէսի՝ որ սիրելի էր յոյժ Մատաթեան վիշապի, և մեծաւոր վստահ զբ տարաձեցաւ ի նմանէ ի նոյեմբերի ամսեան ։

Այլ յետ չորից ամսոց գազանին խարհրդով և բերկրութեամբ Մատաթեան երկնչեցաւ շնչին յոյներուն՝ ի գիշերի միում, որ օր էր երեքշաբթի նոյեմբերի 2, և չէ ինչ զանուն հոգոյս ։ Յարուցան յոյս եկեղեցիսիս զգուշեալ, և բազմաբերեան եկեալ հրոյ հանցին զգուն հոգոյն ։

Զայս իշխան Մատաթեան վիշապին, խոյս առեալ թագուհոյ ընդ Ռուսիա, որ էր շինուած քաղաքին, և ի նմանս էին տասիսան զբ սպառ ։

Եւ ի հուր մատուցեալ զանասիսս զիշխանին՝ տասիսան յօդս զինուածն տասնոցին, և զգոյս սիրանդ տասն տանդ ի զօրացս ապատասխանի՝ ի հուր սիրեալ գնացան զանդ ի ինքն խարհրդեան հոգոյն՝ որ լցեալ էր զգեստանապարին ողջոյն ։

Digitized by Google

Եւ զինք երից աւուրց գտեալ եկեղեցիք զդի նորին, և կապարեալ տան քոյր տանն՝ անապատանոց քահանային զնա ի յիւր ինքեան ընդունելոյ տեղին։

Ի սմին գիշերի խոյս եւս ի վոստանդնուպօլսոյ Մանուկ սուրբ հայրն, և ունկնիսա զերծեալ զանձն վախճանելոյ ի Ռուսաստան։

Իսկ Սուրբն Մահմուտ տեղապահ եղեալ՝ զի մի ընկեսցի յոմանս երբեմն, խելագանայ արարք գիշերային զերազոյր իւր զՄուրբան Մուստաֆա՝ և մնաց հինգն միայն ժառանգ թագաւորութեան։

Ձհատ աւուրց հինգ սպրկին եկեղեցիք և գՀաւերնոցան, զոր չհնարեալ էր Սուրբն Ազիմ ապրեալ ի լեգէոն չիթիլիկի և ի քրիստոնէութիւն։

Եւ յետ երկին աւուրց հանդուրեցաւ խռովութիւնն, և բացան գրունք քաղաքին նոստանդնուպօլսոյ, որ զաւուրս երկին փակեալ մնացին։

Եւ ի մէջ խռովութեան աւուրցս այսոցիկ չերթեւ ինաս երթիք և ոչ մեկ ուրիք ի Գրիստոնեից, բայց ի Տանկաց բազումք կոտորեան գրեթէ երեսուն հոգիք։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թողեալ զանուանել զՍուլթան Մուրատ զհայր Մահմուտի ի յերուսաղէմ, եւ յորոգեալ պատի Նոյին ընդ Հայս։

Ընդ այս ժամանակ նստէր եպարքոս փիլոր Եուսուֆ փաշա՝ կուշեցեալ՝ այր ժանտ և ագահ. ամս մնասուցին զոյնք զբազմութիւնն կաշառակ և զբնծայս մեծապինս, և որսացին զնա ի կողմն խրիմայ։

Եւ հաս ի չնորհս նորա զբնութեամբ ատ ատրճայ զինուորք նորա՝ յասելն, երթ կայ վանք մի կուշեցեալ Մարեագուսի (այսինքն

է՝ սուրբ Յակոբ) ՚ի յերուսաղէմ, և այս վանք դարով յառաջ
չին ժամանակս սեպհականեն ստացուած Յունաց ազգին, յոր
ժամանակաց Հայք ՚ի ձեռն կաշառուց գրաւեալ էին զնա, և
մինչեւ ցարդ մնացեալ է ՚ի ձեռս Հայոց։

Արդ այժմ Յունք աղերսեն և աղաչեն ազգովին զարդա-
րադաստ կամն ձեր, զի հանեալ զնա ՚ի ձեռաց Հայոց՝ Յունաց
հեսցես ազգին Յունաց զսեպհականեն ստացուած իւրեանց, որք
և վասն այսր գործոյ քանի ոսկւոյ պաշտօն լինիցին տալ քան-
զանձարանին։

Ընդունելով զայս արքայ՝ ոչ իսկ և իսկ հրամայեաց տալոյ
հանել ՚ի ձեռաց Հայոց զվանքն, հանդերձեալ ատելիս ճշմար-
տեալ դիրան, և Հայք ընդհակառակ երդին այսմ ՚ի ձեռն մե-
ծամեծացն արքային, և դիտացին զչար խորհուրդս անիրա-
ւութեան նոցա, բայց դիտեալով, զի եպարքոսն մեծ է ՚ի կողմն
նոցա, լռեցին սակաւիկ ապատիճեալ յոգնակատարիլն Յու-
տուծոյ, և հանդերձելով հրամանաց արքային ՚ի չինչ ինչ
հրամանս ծագիցի։

Վասն զի յուսուրն յայնոսիկ լուցեալ էր պատերազմին
մեծ ընդդէմ Պատայից, և հանդերձեալ էր եպարքոսն ելանել
զբանակն արքային և դնալ ՚ի պատերազմ։

Եւ իբրեւ յետ չորից ամսոց եկն եպարքոսն մեծ, և
նստաւ փոխանորդ նորին Շապհոր Ակմեան փաշա, զսա փութա-
ցան Հայք առնուլ ՚ի կողմն իւրեանց, և հաճեցուցեալ զկամս
նորին, խորհրդով և հաւանութեամբ նորին եռուն առ արքայ
գիր աղերսանաց յետս ուղղեալս յապրիլ 23. ՚ի գնալն ՚ի
մղկիլն Հէքամ օղլու Ալի փաշա հասեալ փոչեցեալ, յորում
յայտ արարեալ էին Հայք զանիրաւ պահանջումն ազգին Յու-
նաց, և զլինելն այն վանուցն սեպհական ստացուած Հայոց
ազգին՝ յաւուրց անտի ամիրապետութեանն Էօմէրի խալի-
ֆայի, և յետ նորուն եռանդուզ կոչեցեալ Մուլթան Սէլիմի,
գրով և կնքով նոցին տուեալ ազգին Հայոց։

Ընդունելով արքայի զայս ամենայն, եմուղ ՚ի կախ գնու-
և զկէս երկուց ազգացս, և կամէր այլ ուսանել բարիոք պե-
շումեամբ տուգել և տեղեկանալ ճշմարտութեան իրացն
եղելոց։

Digitized by Google

Յայնժամ ժողով սրարեալ Յովհաննէս պատրիարքի դիշխանաւորս ամենայն և զդլխաւոր մնձինս յամենայն ազգս, և 'ի ձեռն սահմանի Տաճ Աւագքել 'ամիրայի իշխանին յորդորեաց և զմեծամեծս կաթոլիկաց միաբանել ընդ իւրեանս յայս հոգեւոր գործ ազդասիրութեան։

Եւ յաւուր շաբաթու 'ի յունիս 24, 1811, արար Յովհաննէս պատրիարք ժողով մեծ 'ի պատրիարքարանին հաւանութեամբ իշխանաւորաց Հայոց, և հրաւիրեաց անդ զմեծամեծս կաթոլիկաց, զՅովհաննէս Չելէպի Տիւզեան, զՄծնիս Մինասեան Թունկըրեան, զՄնոօն աղան Գըլճեան, և զայլս, և 'ի նմին ժողովի արար առնաբանութիւն իմն գեղեցիկ, յորում յորդոր 'ի վէմ էարկ ազգովին պաշտպան լինելոյ սրբոյն Յակոբայ վանիցն, և յաղթականն լինելոյ ազգին Յունաց։

Եւ այնչափ խրախուսեաց զնոսա յայս հոգեւոր գործ ազգասիրութեան, մինչեւ 'ի կարեկցութիւն և 'ի յորդ չարժել զնոսա զամենեսեան, և փոյթեռանդն ոգւով վառիլ 'ի պաշտպանութիւն սուրբ ուխտին։

Եւ այսու հոգեւոր սիրով վառեցան և կազմեցան պատրաստեցան իշխանաւորքն աստուածասէրք, և ամենեքեան քաջ աստիճանի և կարի իւրեանց սկսան նպաստասիրաբար լինել բանիւ և արդեամբք, և յօժարութեանել զմեծամեծս տէրութեանն 'ի լուր աղաչանաց և դաւթի Հայկազուն ազգին։

Եւ որովհետեւ Յովհաննէս չէլէպի Տիւզեան սիրելի էր յոյժ պալատականացն սրբոյն, 'ի ձեռն նոցին ծանուցին սրբոյն զՅովհաննէս պատրիարքութիւն իրացն եղելոյ, և աղդարարութեամբ նոցին Թուրն երկրորդ անգամ զգիր աղերսանաց յաւուր ուրբաթու 'ի յունիս 23 'ի գնալն սրբոյն 'ի մղկիթն Փահմուտիէ կոչեցեալ 'ի Ամիրազան նաւահանգստին իւսկիւտարու։ և զայս գիր աղերսանաց ետ Աստուածատուր եպիսկոպոսին, և գօղոս վարդապետ վէ քին սրբոյ Երուսաղէմի, գօղոս եպիսկոպոս ծերունի առաքինդն գրուսայու, և վարդան վարդապետ Մշեցի՝ հանդերձ քահանայիւք և ժողովրդովք բազմատարած և բազում գլխով, զոր տեսեալ սրբոյն և չարժեալ 'ի գութ և 'ի սէր ազգիս Հայոց, հրամայեաց անաչառ քննութեամբ դատաստանն առնել Հայոց և Յունաց 'ի դուռն գեն-

Digitized by Google

պետին մեծի՝ որ կոչի Շէյխիսլամ էֆէնտի, և պատուոյ կապգեցան հրամանաւ տղոյսի՝ Ջևդրի պատճ Ապտուլլահ Շէյխիսլամին։

Գաղիասկէրն Թուռքիոյ՝ Խզրէթ պէյ։
Գաղիասկէրն Ասիոյ՝ Մէհմէտ Թահիր պէյ։
Գաղիմնագամ Շտաբին Ահմէտ փաշա։
Նազիր իւ Էշրեֆ Սայիտ էֆէնտի։
Ցէրվա էմինի Ազգանի զպտճ Մէհմէտ Բաշիա։
Ըէիս էֆէնտի Մուստաֆա։
Զաւուշ պաշի Իսրահիմ։
Պէկլէկճի Ահմէտ Աֆիֆ։
Ամճան Սէլիա Մուհամմէտ։

Իակ յաղդէ մերմէ գտան անդ՝ ի գաւին։

Պօղոս վարդապետ վէքիլն երուսաղէմի։
Դիմէտիոս վարդապետ միաբան սրբոյ երուսաղէմի։
Սարգսիկէր քէհիւտասի Ազնաւուրեան կպտպետ։
Մահտեսի Յովհաննէս երկանեան։
Զաքարեան Գրիգոր։
Փափազեան Ճանիկ։
Գրիճեան Ամոն։
Վարդապետ սարգսիկի Խաչատուր։
Շնորհքեան Մանուէլ։

Եւ յաղդէն Յունաց գտան անդ՝ ի գաւին։

Եարսանա մետրապոլիտ Թեսաղոնիկեցւոց։
Աթանասիոս մետրապոլիտն Նիկոմիդացւոց։
Աթանասիոս փոխանորդն պատրիարքին երուսաղէմի։
Կեսարիոս դանճապետն պատրիարքին երուսաղէմի։
Տիմիթրաքի, և Լամպիկ, և Եօրկի, և Խրիսթօ, և Անաստաս, և Աղեքսի, և Թօդորոս, և փանայօտ, մեծամեծքն Յունաց։

Իակ մինչ ակնդրն հղեալ խօսեցեալ՝ ի դատաստանին, ևհան պօղոս վարդապետ զկնքեալ Ահանամէ՝ այն է հրամանագիր մեծի Ամիրապետին Հապաբացւոց՝ Լօմէրի Խաղիֆայի, որ յառնուլ իւր գերուսաղէմ, տուեալ էր հրովարտակաւ իւրով զվանքն սուրբ Յակոբայ՝ Հայոց ազգին, ևհան և զկնքագիր հրամանատակ Եամուդ Ասլխան Ակելմ աղդային, որ՝ ի հնգե-

տոհմէն Գրիգորեան գայթ և հիմնարկեալ Ցամհայոց ՀՀԳ, ի քան և հինգ երկոտ, առ որ ամենեք ունայ նոցա՝ երկեալ և առեալ պնդ բռնաւորեմ, և կոչեալ առաջին երէց պետութեան Հայոց, և պետութեան Յունաց, և ընդհանրական հրամանագիրս Օսմանեան յանձնեալ մեծ, և ինքն իսկ ձեռամբ իւրով գրեալ և չորհեալ էր Հայոց գաւառ Քասաբ վանքն երուսաղէմի։

Եւ ի գրին յայնմիկ մանրամասնաբար որոշեալ էր գրհատուածոց Հայոց և Յունաց, ղանդհանալոնս և գզաւեալս, և գայնս՝ ընդ որս հաւասհատասար մեռ և եղ ի երիսուց ազգացն Հայոց և Յունաց։

Աւդ՝ գայս ամենայն ընդհանրական դատաստանին, և անաչառ քննեմբ ածելն թագաւորեալ և հաստատուեալ մի առ մի գաւառնայն առիչնն, և վկայութեամբ այլոց ազգաց հաւատացեալ և ապացուցեալ, ի չգրուզգ գումարման վճռեցին դատաստ ամենեքին, և գտուղիղ պատմութիւն գատաստանին և գվճիռս ժողովոյն գրեցին առ արքայ։ Որ ընդունեալ և տեղեկացեալ զամենայնի՝ հրամայեաց արքունի հրովարտակ գրել և ինքեալ ինքեալ արքայի, և տալ ի ձեռս երկուց ազգացն Հայոց և Յունաց, յորում յայտնի պոչէ գաւառ քակոտեալ վանքն լինել միայն Հայոց, և բացատրել և զայլ ուխտատեղիս, ընդ որս ունի Հայն բաժին իւրացուցանելոյ, և պատարագ առնելոյ, որպիսի է սուրբ Ծննդեան Քրիստոսի, յոր միշտ ցայն ժամ չէր կարող Հայն պատարագ մատուցանել, իսկ այժմ հանապազորդ պատարագեն անդ Հայ քահանայք։ Նմանե սուրբ Գեթրեհեմեան Քրիստոսի, և բեթանեան Քրիստոսի, և սուրբ Գերեզմանեան Աստուածամօրն, որք են երկուց ազգացն անխտիր։

Զայս ամենայն գրեալ արքունի հրովարտակաւ, եւս մեծագոյր արքայն գաւառն քակոտ ազգիս Հայոց, և երդմամբ յանուն Մահմէտի և բանադրանօք նորին կնքեալ զդիրն չը լինել յայսմհետե վէճ այսպիսի, և կամ միաբանութիւն ինչ, և այսպէս դադարեցաւ խռովութիւն մեծ, և եղեւ ուրախութիւն անպատում համօրէն լատինաց ազգիս։

Քաւութ յայսոսիկ դէպ եղեւ բարի ինամ արքային երկեալ ի գբօսանս յօրիագիւղ ի ելատեղն քօշդ կուշեցեալ տեղին,

Digitized by Google

և պատահմամբ ընդ առաջ եկեալ նմին մանկունք զգեղեցիկն Օրբիտագլուխ երկու հարկս տանն Թոռոսի, որոց խակ և խակ շահաստղեղք գետս ոտս դասս; բազկատարածեալ հնչյունիւք սկզբան ողբալ զաստուածս վասն կիներաց տէրութեան՝ քաղցր նուագելով ուղիւթեամբ տաղից և ազանաւորութեան:

Տեսեալ զայս արքային, և խմացեալ, թէ յապրել Հայոց են ոտքայքն, անդէն ի ձեռն նախարարի ուրումն մեծի Ալի պէյ կոչեցեալոյ պարգեւս բազխեաց առնելոցն, իւրազգանչիւրումն ձիս մի ոսկի, որոց ընկալեալ խոնարհութեամբ և երկրպագեալ արքային՝ դնացին յիւրաքանչիւր տեղիս:

Անդ էի ընդ նոսին և ես այն պատմութեանս պրիչ, որ յայնմ ժամանակի կատարեալ էի ի խորհրդատրիչն մանկանց դպրոցին, և ընկալեալ յայնմ աւուր զոմն ոսկիս ի ձեռանէ նոցին խոկ նախարարին, յօժարեցայ պրել զայս ի կարգի պատմութեանս՝ ծողով յիշատակ առ յաւարտ:

Ի սմին ժամանակի չինեցաւ նորոգ և երեսաքցին խաչըմ վանիցն յանուն սրբոյն Յակոբայ ի Ծիրնայ հայրապետական, զորոց գիտնալ օժտութեանն կատարեաց երեսիս եպիսկոպոս կուսանազնուազնեցի հրամանաւ Յովհաննու պատրիարքի յամի տեառն 1810 ի սեպտեմբերի 29:

ԳԼՈՒԽ ԺԻ.

Քաղաքս վախճանի տեառն Դանիէլի կաթողիկոսի, եւ յաջորդելոյ նմին, եւ յատակս քանի միաբանութենանն ընդ Հռոմէականս Հայ կոչեցեալ ժողովրդեանն:

(1809) Ի սմին ժամանակի գալուստ գործեցաւ պատուարելոյն ի մէջ պարսից և ի-ուսաց, և գանիել կաթողիկոս կոչեցաւ հրամանաւ Շահին պարսից ի քաղաքն երեւան հանդերձ երկոտասան արհի եպիսկոպոսօք, և եղան ի բանտի բերդին, դի մի յարեսցին ի կողմն ի-ուսաց, և թիւնաժուք և օգնականք գոանէին նոցա:

Digitized by Google

Եւ յայսմ միջոցի բանտարգելութեան հիւանդացաւ Դանիէլ կաթողիկոս, և գրեաց յիշխանին, և խնդրեաց զբժշկական գիրս Ալխիմաբոյ բժշկին, զի թերեւս դարման և դեղ գտանիցէ ՚ի նմանէ։

Եւ որովհետեւ այն գիրք էին պահեալք յարկեղս Դաւթի, եկին քանիք հինչ եպիսկոպոսք և վարդապետք առ Դաւիթ, և պահանջեցին ՚ի նմանէ տալ հինքեանց զգիրքն զայն։ Եւ Դաւիթ ոչ գիտեցով, թէ Դանիէլ խնդրէ զգիրքն, ասաց նոցա, թէ չէք իմ տեսեալ զգիրն զայն, և չէ առ իս։

Զայս լուեալ նոցա, զայրացան անհնարին բարկութեամբ, և որովհետեւ ունէին ընդ նմա ոխ ատելութեան, սկսան ածել, թէ ահա ժամանակ, զի առցուք զվրէժս ՚ի թշնամւոյն մերմէ։

Եւ զի Դանիէլ կաթողիկոս չէր անդ, որ ոչ թոյլ տայր առնել, զնոր կամէինն, ուստի խուռն ընթացեալք ՚ի ներքս ՚ի սենեակ նորին, ոմանք բրօք և ոմանք քարամբք և փայտիւք, գան հարին չարաչար, և մերկացուցեալ զնա գերծեցին զմօթաւս նորին, և եդին ՚ի քանտի։

Եւ յարկեղէ գրոց նորին կուզեալք գտին զգիրան բժշկական, և առաքեցին յերուսաղէմ առ Դանիէլ կաթողիկոս, պատմելով նմա զանցս՝ որ անցին ընդ Դաւիթ. և լսեցին զայս տեսուն Դանիէլի, հառաչեաց ՚ի խորոց սրտէ, և յոգւոյ եհան, և սպառ ՚ի յուշ եկեալ սկսաւ լալ և արտասուել, զի ինքն առիթ եղեւ գանապատ լինելոյ Դաւթին վասն լինդրելոյ ընդ գիրն զայն։ Եւ դառնացաւ ոգի նորա ՚ի յանձն նորա, և սիրտ ցաւոցն առաւել եւս զայրացաւ, և այնպէս յետ չորեք տասան աւուրց հիւանդութեան նորա հանգեաւ ՚ի Քրիստոս տէր Դանիէլ կաթողիկոս, կացեալ ՚ի հայրապետութեան զամս վեց և կէս։

Բայց որովհետեւ անդ ՚ի բանտին բերդին երեւանու վախճանեցաւ, կատարեցին եպիսկոպոսունք զօծումն և զկարգ թաղման նորա, և պատատեալ զորովայն նորա, մաքրեցին և զմռսեցին զնիւթովինն, և եդին ՚ի տապանակի մեռեալ բեհեզօք և շուրջառովք, և պահեցին զդուշութեամբ և պատուով։

Digitized by Google

Իսկ յետ չորից ամանոց իբրեւ դադարեցաւ պատերազմն, և եղեւ հրամայեն գնալ ՚ի տեղիս իւրեանց, եւ՚ին եպիսկոպոսունք, և բարձեալք զտապանակն մեծաւ փառօք և պատուով, բերին Էջմիածին, և եդին ՚ի դիւրս հանգստեան կաթողիկոսաց։

Եւ յայնմ միջոցի եփրեմ արհի եպիսկոպոս առաքեցաւ Ռուսաստանու՝ ըստ ընտրութեան և խնդրոյ միաբանից սրբոյ Էջմիածնին՝ և հրամանաւ մեծի կայսերն Ռուսաց, եւ՚ին հանդիսիւ ՚ի սուրբ Էջմիածին, և օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց, յամի տեառն 1809 ՚ի դեկտեմբեր 26, և առաքեաց յառաջնորդութիւն փոխանակ իւր զԳայլակեր կոչեցեալ Բովհաննէս արք եպիսկոպոսան, և զԴաւիթ հանեալ ՚ի բանտէն՝ պահեաց պատուով և յարգութեամբ ուռճիկս կարգեալ նմա, և սենեակ շքեղ և զարդարուն տալով նմա մինչեւ ցվախճան նորին։

(1810) Թէպէտ յառաջին ժամանակս ոմանք ՚ի մերոց պատրիարքաց և իշխանաց՝ փոյթ տարեալ են զՀռոմէականս Հայ կոչեցեալ ժողովուրդս մուծանել յեկեղեցիս մեր բուռն իշխանութեամբ, և գանիւ և պատիւ ահացուցանել զնոսա, բառնալ կամելով ՚ի միջոյ զերկպառակութիւն ազգիս, բայց այնու առաւել եւս զայրացուցեալ էին զխռովութիւն ազգիս վիրօք զվէրսն բժշկել կամելով։

Ապա՝ ոչ սաստկագոյն գանիցն յաճախութիւնք, ոչ շրջաբայեալին բանտարգելութիւնք, ոչ պատիժք աքսորանաց ՚ի դժնդակ վայրս, ոչ բազմապատիկ տուգանք տուժից, և ոչ այլ ինչ դառնագին պատուհասք կարացին գործել ինչ օգուտ ազգիս, քան եթէ տուգանաց և ընաստու եղեն մեզ պատճառք, և համարձակութեան առիթ նոցին իսկ հատուածելոց, և սիրոյ օրինաց մերժումն։

Իսկ յայսմ ժամանակի մինչդեռ բռնաւորութիւն ազգին Բունաց և զրկողութիւն՝ որ յալագս երուսաղէմի, ակներեւ ցուցաւ, և ազգ մեր ողջոյն ՚ի խոր խոցեցան, և մեծամեծք և փոքունք ՚ի խորհուրդ մտեալ բազմօրեայ քննութեամբ, զնս իրացն խնդրէին գտանել։

Բազումք՝ որ թշնամիք էին միմեանց, և առեցողք, մո-

Digitized by Google

ռացան զոյն ամենայն, և միաբանեցան ՚ի սոյն։ Ուստի և բազմօք անտեսութեամբ և խոհական խորհրդով ՚ի վայհաննու պատարիզքի՝ զոր ՚ի վեր անդր յիշեցաք, իշխանապետք մեր առհասարակ յամենայնի խորհրդակից իւրեանց առնէին և զերեւելի և զմեծանուն իշխանս Հռովմէական հայոց, և եղբայրական սիրով արգահատէին զմիմեանս, չանալ ճգնիլ այմենայն յօժարութեամբ ՚ի պաթծանս ազգիս, և զերծուցանել զազգն մեր յարհամարհանաց անտի և ՚ի մեծաբանութեանց ՚ի նոսին։

Զերեւէին երբէք ՚ի նոսին ցոյցք ատելութեան կամ հաստատածմանն, այլ մանաւանդ ՚ի մի սիրտ և ՚ի մի հոգի համազգաբար փութային կամակար աշխատասիրութեամբ, և յերկուց կողմանց մի քան զմի առաւելեալ հայրենասէր բարոյիւք, յամենայն ատենի գտանէին ՚ի միասին ընդ մերոց իշխանաւորաց, և դեգերէին անձանձիր յօժարութեամբ ՚ի դրունս արքունեաց։

Եւ այսու օրինակաւ օր քան զօր առաւելեալք ներքին հոգեւոր սիրով, զրոյցս ստէպ ՚ի մէջ արկանէին բառնալոյ խաղաղ զկրճիմն հակառակութեան ՚ի միջոյ։

Այն ինչ օգնականութեամբ Տեառն յաջողեցան իրքն սրբոյ երուսաղէմի, ուրախամիտ եղեալ մեծարու իշխանք մեր՝ ասացին նոցա յայտ առնել գրով զայնոսիկ բանսն, զորոց լինին վիճաբանութիւնք։

Եւ նոցա գումարեալ զկարգաւորս և զիշխանս իւրեանց, և ՚ի քանի մի տեղիս ժողով արարեալ, նշանակեցին ՚ի Թղմի, և եւտուն իշխանաց մերոց, և էր խնդիր նոցին հնգեքին այսոքիկ։

Նախ՝ Թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս և զերկուս կամս և զերկուս ներգործութիւնս։

Երկրորդ՝ Թէ ամենասուրբ Հոգին Աստուած է ՚ի հօրէ և յորդւոյ։

Երրորդ՝ Թէ հոգիք սրբոցն փառաւորեալք են այժմ, և մեղաւորք՝ դատապարտեալք։

Չորրորդ՝ Թէ Պետրոս է գլուխ առաքելոց, և զնոյն գերխաւորութիւն ունին յաջորդք նորա։

Digitized by Google

Հինգերորդ՝ թէ վերջին օծումն է խորհուրդ եղիցուց, հաստատեալ ի սրբազան առաքելոյն Յակոբոսէ։

Յաւելին յայսմանէ և վկայութիւնս ի գրոց սրբոց Հարց և վարդապետաց մերոց, յայտ առնելով՝ եթէ և դուք ընդունիք զայսոսիկ, ամենայն ողջմտութեամբ, հաշտեալ միաբանիմք և մեք ընդ ազգիս մերոյ, ընդունելով զամենայն ծէսս և զդաւանութիւնս և զարարողութիւնս, և ճանաչելով և ընդունելով մեզ գլուխ և առաջնորդ զյաջորդ սրբոյն Գրիգորի հօրն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։

Իսկ իշխանաւորք ազգիս հրաւիրեալ էին յառաջագոյն վասն սմին իրի զՄարտիրոս եպիսկոպոս առաջնորդն զՄիւռնոյ, և ժողով արարեալ հնդից ի տաճարի Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի որ ի Կոստանդնուպոլիս, յորում ներկայ գտան ըռվհաննէս պատրիարք Կոստանդնուպոլսի, Ներսէս համ եպիսկոպոս նուիրակն սրբոյ Էջմիածնի, Մարտիրոս եպիսկոպոս առաջնորդն Ջմիւռնոյ՝ հանդերձ Յոհաննէս վարդապետիւ, Պօղոս արք եպիսկոպոս առաջնորդն Պրուսայու՝ հանդերձ երկու աշակերտօք, Երեմիա եպիսկոպոս առաջնորդն Եդեսիոյ, Պօղոս վարդապետ վէքիլն սրբոյ Երուսաղէմի, վարդան եպիսկոպոս վէքիլն Մշու սրբոյ կարապետի, և յիշխանաւորաց երեք անձինք գիտնականք՝ մինհտեսի Ղուկաքել արքունի վաւօղապետն, Զաքարէան Գրիգոր, և Սահակեան Գրիգոր։

Եւ ի վերոյապետսոյ՝ տէր Մեսրուվ քահանայն, Գէորգ դպիր պալատական, Գրիգոր փէշտմալճեան, և Խաչատուր, և Յարութիւն, և այլ անձինք տասն և ութ։

Եւ կնքեալ զայսոսիկ գլուխս խնդրոյ՝ պատասխանի ետուն ոչ միայնոյժար բանից իւրեանց, այլ ի գրոց սրբոց Հարց և վարդապետաց մերոց, հիմն ամենայնի եգեալ զհանգանամին նիկիական, և ի բացատրութիւն նոցին՝ զհոգեշունչ բանս սրբոց Հարց։

Այս վարդապետութիւն բնութեանցն Քրիստոսի՝ որ էր ինդիր առաջին, վկայութեամբ սուրբ Աստուածոյին և Աթանասի և Կիւրղի՝ ցուցին ողջմիտ լինել խոստովանութիւն միոյ բնութեան մարմնացելոյ՝ ընդդէմ Եւտոքեայ չարաժանողի, և

միաւորութիւն երկուց բնութեանց անբաժանելի ի մի անձն ընդ-դէմ Եւտիքեայ չփոթողի, ճշդելով զայս խնդիր ընդարձակ և անբաւարիւր վարդապետութեամբ Շնորհալւոյն՝ և գրիգոր կաթողիկոսի՝ և Լամբրոնացւոյն։

Ա. երկրորդն՝ թէ Հոգին սուրբ է ի Հօրէ և յՈրդւոյ, պատասխանի եւտն ի բանից Քրիստոսի և սրբոց Հարցն՝ և Ա-թանասի՝ և Եփրեմի՝ և այլոց հարց, և ցուցին. թէ Հայր է յանձնէ, Որդի ի Հօրէ, և Հոգին սուրբ ի նոցունց էութենէ, որպէս վարդապետեայ և ուսոյց Հայրն հաւատոյ Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ։

Ա. երրորդն՝ թէ սուրբք ի փառս են, և մեղաւորք յանապարգութեան և ի դատապարտութեան, պատասխանի եւտն ի բանից սուրբ Լուսաւորչին՝ և Շարաւիկոյին՝ և Լամբրոնացւոյն՝ և այլոց հարց. և ցուցին թէ հոգիք սրբոց ի փառս են յեւսոմէ, իսկ անձինք մեղաւորք ի պատիժ դատապարտութեան յուսահատութեամբ։

Ա. չորրորդն՝ թէ պետրոս գլխաւոր է Աքսաքեալն, և յաղթողք նորին ի հայրապետս, պատասխանի եւտն ի բանի աւետարանչաց՝ և սրբոց Լուսաւորչին՝ և Յարութեան Շնորհալւոյն, և ցուցին ամենայն առաքելոց ունել բացարձակ իշխանութիւն նոյնպէս և յաղթողաց նոցին ի վերայ յաւտուկ ազգի իւրեանց, բաւ այնմ, թէ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի։

Ուստի անկախ գոլով ի միմեանց ամենայն յաղթողք առաքելոց՝ զնոյն իշխանութիւն և պատիւ ունին, զոր ունէին նախնիք իւրեանց սուրբ առաքեալքն, ըստ սահմանադրութեան սուրբ Ժողովոյն Նիկիոյ և Կոստանդնուպօլսոյ։

Ա. հինգերորդն՝ որ էր օծումն վերջին, ապատասխանի եւտն, թէ վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ, վասն որոյ ըստ սրբազան առաքելոյն Յակոբայ՝ եթէ ոք ի մէնջ հիւանդանայցէ, կոչեսցէ զերիցուսն եկեղեցւոյ, և առնեսցէ ի վերայ նոցա աղօթս։

Բայց օծանելն խղոյ զհիւանդս՝ չէ ի գործածութեան, և չէ հարկաւոր յոյժ, որպէս գրէ մեծն Խոսրով ի գիրս մեկնութեան ժամագրքի։

Digitized by Google

Մինչ զայսոսիկ պատասխանիս գրեցին Հայք և ետուն հատուածեալ կողմանն, նոցա դարձեալ ժողովք արարեալ վարդապետօք և իշխանօք, գրեցին և պահանջեցին ՚ի Հայոց նախ՝ չյիշել ՚ի պատարագի զանուանս Յովհաննու Աղոտնեցւոյ՝ և Գրիգորի և Մովսիսի Տաթեւացեաց, պատճառելով, զի նորա մուտք են այն անաւանք։

Եւ երկրորդ՝ բառնալ ՚ի շարականոցէ և ՚ի ձեռնադրութեան գրոցն զնզովն Լեւոնի և ժողովոյն Քաղկեդոնի, պատճառելով և հաստատելով, թէ այն քանք նզովից ոչ են շարադարձեալք ՚ի նախնի սրբոց հարց մերոց, այլ ՚ի յետին ժամանակս յանզգոյշ և ՚ի խուովասէր անձանց ոմանց։

Եւ զայս երկոսին խնդիրս գրեալ նոցա ետուն իշխանաց Հայոց, և նոցա դումարեալ հանդերձ ամենեքումբք, մինչ ամենեքին ցուցանէին զհաճութիւն և զհաւանութիւն, և առաւել եւս Յովհաննէս պատրիարքն և վարժապետք վերոյիշեալք, բայց ոմանց անընդունելի եղեւ այս բան։

Ամանաւանդ Երեմիա Խալիկոպոսն և Զաքարիա վարդապետ ոմն՝ որոց ՚ի լսելն զայս՝ ընդոստուցեալք ՚ի տեղեաց իւրեանց, աղաղակ բարձին ՚ի ժողովին ասելով. “ Թէ անկարելի է սոքին և անընդունելի է մեզ, զի զոր ինչ գտեալ եմք ՚ի նախնեաց մերոց, օչ կարեմք վերափոխել կամ յաւելուլ և կամ նուազեցուցանել։

Եւ առ այս համամիտ գտան և ոմանք ՚ի քահանայից և յիշխանաց, անգէտ գոլով հնութեան և նորութեան, և եկեղեցական պատմութեանց և ժողովոց սահմանադրութեանց։

Եւ ծագեցաւ ՚ի մէջ ազգին չփոթութիւն մեծ, և տարաձայնութիւն, ոմանց ասելով թէ՝ մոլորական իրք են, և պարտին բառնալ, և ոմանց պնդել ընդհակառակն, թէ սուրբք են և պաշտելիք, և այսպէս օր ՚ի յօր յաճախեաց չփոթութիւնն ՚ի մէջ ժողովրդեանն, զոր տեսեալ Յովհաննու պատրիարքի, լսոհական խորհրդով մտածելով զապագայ չարիսն՝ որոց մարթ էր ծագիլ ՚ի խուովայոյզ անձանց ժամանակին, դարձոյց զբանն, և հրամայեաց ըստ առաջին կարգացն ընթանալ իւրաքանչիւր ումեք զհանապարհս իւրեանց։

Բայց այսու ամենայնիւ արգել հրամանաւ իւրով չընթեռ-

Digitized by Google

նուէր զերթիս հետամուտ տունս ՈՎ ՀՐԱՇԱԼԻ շարականին ՚ի տօ-
նի սուրբ հայրապետացդ, և պաստիկս ինձոց անկատար այն հո-
գեւոր եռանդն և գործ միաբանութեան ազդիս, այլում ժա-
մանակի թողեալ ըստ կամացն Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԺԵ·

Յաղագս հրաժարելոյ Յովհաննու ՚ի պատրիարքութենէ, եւ յաջոր-
դելոյ Աբրահամ պատրիարքի։

(1813) Յետ այսր ամենայնի հիւանդացաւ Յովհաննէս պատրիարք անբժշկելի ախտիւ փայծեղնացաւութեան՝ նեղեալ ՚ի բազմադիմի հոգւոց և աշխատութեանց աղդին։

Եւ մինչ յոյս առողջութեան ոչ ՚գտաս, և ախտ ցաւոցն օր քան զօր զօրացաւ, մինչեւ չկարել յոտին կալ և պատարագել, վասն որոյ և իշխանք և մեծամեծք աղդիս ժողով արարեալ, խորհեցան զայլ ոք դնել յաթոռ պատրիարքութեան, և զնա հանգուցանել ՚ի վանս սուրբ երուսաղէմայ, որ ՚ի Խրիստոսօլիս։

Ուստի և ՚ի միում աւուր ժողովեալ ամենեցուն ՚ի պատրիարքարանի, յայտնեցին նմա զխորհուրդս իւրեանց, խոստանալով երդմամբ յանուն Աստուծոյ, զի պահեսցեն զնա յանդորրու՝ հոդ տանելով զամենայն պիտոյից նորին մինչեւ ցվախճան նորին։

Լուեալ զայս ամենայն Յովհաննէս պատրիարք, և յօժարակամ հաճեալ ընդ խնդիր նոցա, ասէ ցնոսա. "Ընտրեցէք ձեզ զոմն առաքնորդ և պատրիարք, և ես ՚ի պատրաստի եմ հրաժարիլ յաթոռոյս։"

Եւ նոքա ասեն միաբերան, թէ "Ոչ վայելէ մեզ ընտրել զպատրիարք, այլ այդ անտեսութիւն ձերումդ խոհականութեան անկ է։"

Digitized by Google

Զայսու ժամանակաւ Աբրահամ եպիսկոպոս Գղեհան՝ նուէրս առաքն էջմիածնի ; հրճուեալ զամս ոմն ՚ի նուէրսկութիւն, և ապա եկեալ ՚ի կոստանդնուպոլիս նստէր յեկեղեցւոջ առաքն Աստուածածնի, և ծովհաննէս պատրիարք սէր ցուցեալ նմա, առաքեր յեկեղեցիս յաւուրս տօնախմբութեանց նոցին իբրեւ իւր իսկ փոխանորդ ։

Եւ սա՝ զի ունէր ինչս առ իւր ժողովեալ ՚ի նուիրակութենէ, վատնեաց զնոսա տալով աստ և անդ՝ և նուքօք որսաց զբաղումս յիշխանաւորաց ազգիս ՚ի կողմն իւր ։

Գիտեալով զայս ամենայն ծովհաննէս պատրիարք, ընտրեաց ՚ի ժողովի իշխանաց զԱբրահամ նուիրակ ՚ի պատրիարքութիւն, որոց ՚ի լսելն զայս՝ միակամ հաւանութեամբ հաճեցան և խնդրեցին ՚ի ծովհաննէս պատրիարքէ՝ տալ թուղթ հրաժարական, և առաքել ՚ի դուռն արքունի ։

Եւ ծովհաննէս պատրիարք կոչեալ զդպրապէտ պատրիարքարանին, եւտ դրել ՚ի լեզու ոտճկաց զդիրն, և առաքեաց ՚ի ձեռն փոխանորդին խորոյ Յահակայ վարդապետին ՚ի դուռն եպարքոսի, և եպարքոսն առաքեաց առ թագաւորն ։

Զայն թուղթ յայտ առնէր ծովհաննէս պատրիարք, թէ ինքն կամակար մտօք հրաժարի ՚ի պատրիարքութենէ վասն տկարութեան անձին, և խնդրէր, զի տացի այն պատիւ Աբրահամ վարդապետի ։

Ալ թագաւորն՝ որ խնամոտութեամբ առնէր զամենայն, կասկածեալ, թէ գուցէ ակամայ ինչ եղեւ այն և կամ դաւաճանութեամբ այլոց, յղեաց ՚ի պատրիարքարանն զաբբա Հաւասաւթիսն հարցանել, թէ ճշմարտիւ կամիցի ծովհաննէս հրաժարել ՚ի պատրիարքութենէ, և թէ իւր եղեւ դրել առ թագաւորն հրաժարական ։

Եւ երբեմն ատուգեաց զամենայն, յղեաց պատգամ նոր եպարքոսն կոչել զԱբրահամ վարդապետ ՚ի դուռն իւր, և ըզդեցուցանել նմա զվերարկու պատրիարքական պատուոյ, և նա վաղվաղակի կատարեաց զհրամանն ՚ի մայիս 5 յամի տեառն 1813, և հանդիսիւ դարձոյց զնա ՚ի պատրիարքարանն ։

Ի հաստանել նորա անդր՝ երկեան ընդ առաջ նորա մեծամեծք հայոց, և ընկալեալ զնա մեծաշուք պատուով, ածին ՚ի նիզակ

առ Յովհաննէս պատրիարք, զորոյ հանգուցեալոց զայլ Աբրահամ պատրիարք, զոր և սիրով ընկալեալ Յովհաննես պատրիարքի՝ օրհնեաց զնա, և հանեալ զմետաքսեայ ծիրանի փիլոնն պատրիարքական յանձնէ իւրմէ՝ էարկ ի վերայ նորա, ծոյնպէս և զպատուական յակինթի մատանին հանեալ ի ձեռաց իւրոց՝ եդ ի մատն նորա, և զգաւազան իւր փղոսկրեայ՝ արծաթապատ և ոսկեզօծ՝ մատոյց ի ձեռս նորա. և յերրորդում աւուր յանձն արարեալ նմա զամենայն ինչ, և տուեալ նմա զողջոյնն հրաժարական, ելեալ նստաւ յերիվար զարդարուն և շքեղ։

Ընդ առաջ նորա բազմութիւնք քահանայից և իշխանաց, և յետուստ նորա ամբոխ հասարակ ժողովրդեան, էջ ի նահանգիստան ի Գումգափու։ Անդ զկայ առեալ Յովհաննու պատրիարքի՝ ասաց նոցա բանս միսիթարութեան, և օրհնեալ զնոսա եհուա ի նաւ, և էանց ի Քրիստուպօլիս, և հանգեաւ ի վանս սուրբ Երուսաղէմի՝ որ անդ, կացեալ ի պատրիարքութեան զամս 14։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ցաղագս գործոց Աբրահամ պատրիարքի եւ աքսորանաց նորին, եւ յաղորդելոյ Պօղոսի եպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ։

(1813) Զամբաւ պատրիարքութեանն Աբրահամու՝ գըրեալ և ազդ արարեալ ի սուրբ էջմիածին, առաքեաց եփրեմ կաթողիկոս զՅովհաննէս արհի եպիսկոպոսն Հարբեցի առնուլ յԱբրահամ պատրիարքէ զհաշիւ նուիրակութեանն, և դառնալ յէջմիածին. և մինչդեռ լուաւ Աբրահամ պատրիարք զգալուստ նորին, առաքապարեաց և վաղվաղակի սուրհանդակս առաքեաց առ նա, և գրեաց. զի դարձցի յէջմիածին, և մի եկեսցէ ի Կաստանդնուպօլիս, և ինքն խոստանայր ի թղթին

Digitized by Google

զդ ուխարհակալ ինչն և զհաշիւ նուիրակութեանն իւրոյ՝ ամբողջ հասուցանել յաթոռն սուրբ։

Այլ նորա արհամարհեալ զդիւր և զխոստումն նորա, և յուսացեալ ի բազում զօրութեան ամենայաղթ կայսերութեանն Ռուսաց, ընդ որոյ պաշտպանութեամբ էր նա ինքն Ցովհաննէս եպիսկոպոս, եկն ի Կոստանդնուպօլիս։ և անց եալ ընդ Բերա՝ այն է գիւղօղլու, գնաց ի տուն մեծի թարգմանի դեսպանին Ռուսաց՝ որ կոչիւր միւսիւ Բիզանի, առ որ ունէր և զդիւր յանձնարարութեան ի մեծէ կուսակալէն վերստանու, և անդ նստաւ, և ի ձեռն նորին աղդ արար Աբրահամ պատրիարքի՝ զի զհաշիւ նուիրակութեանն ամբողջ հասուսցէ ի ձեռս իւր, ապա թէ ոչ՝ ի ձեռն դեսպանին աղդառնեմք ի դուռն արքունի, և արքունի հրամանաւ պահանջեմք և առնումք՝ որչափ և կամիմք։

Լուեալ զայս Աբրահամ պատրիարք՝ սարար ժողով իշխանաց, և ի նմին ժողովի յայտ արար, որոց ինչ տուեալ էր ի դանձուց նուիրակութեան իւրոյ, և խորհուրդ խորհեալ, զի միաս մեծ երեւէր ինքեանց, եթէ դեսպանն աղդ արասցէ ի դուռն արքունի, վասն որոյ ակամայ կամօք հատուցին զամենայն՝ զոր ինչ առեալ էին յԱբրահամ պատրիարքէ, և ժողովեալ զդանձն և զհաշիւ նուիրակութեանն, տարան երեք ոսկանք յիշխանաց առ նա ինքն Ցովհաննէս եպիսկոպոս ի տուն թարգմանին, և յորդորեալ զնա աղաչանօք և ընծայիւք, և հաճեցուցեալ զմիտս նորին առաքեցին ի սուրբ Էջմիածին։

(1814) Իսկ Աբրահամ պատրիարք յետ միոյ ամի պատրիարքութեան իւրոյ՝ փոխեաց զընութիւնն իւր, և որ յառաջն ձեւանայր այր բարեկեցիկ և հեզահոգի և առատաձեռն, յետոյ եղեւ այր ժլատ և ագահ և բարկացող, և սկսաւ հակառակութիւն և երկպառակութիւն սերմանել ի մէջ ազդին, կեղքել զժողովուրդն, և յանիրաւի յափշտակել և պահանջել ի նոցանէ զոսկի և զարծաթ։ Եւ որովհետեւ գտեալ էր և ինքն ի ժամանակս Ցովհաննու պատրիարքի ի ժողովի միաբանութեանն Հայոց ընդ Հռովմէական Հայոց, և տեղեակ էր ամենայն անցից և վիճաբանութեանց եղելոց ընդ նոսա, այժմ կամեցեալ երեւեցուցանել զինքն հաճոյ յաչս նոցա՝ յուսալով

առնուլ ՚ի նոցանէ զինչս բազումս, և կիզծապատիր հնարիւք հրաւիրէր զմեծաւռիծ իշխանն նոցին ՚ի պատրիարքարանն, և խօսակցեալ ընդ նմսին քաղցրութեամբ և սիրով՝ պատիւ և ընդունելութիւն յուցանէր նոցին առաւել քան զարժանն։ Եւ ամին իրիւ կոչեալ առ ինքն զթէշտիմալճեան Գրիգոր գիտնական վարժապետն Օրմանեցւոյ՝ խօսեցաւ ընդ նմա գաղտնի, և հրամայեաց, զի գտցէ զհին ձեռագիր Շարական մի, և բաղդատեսցէ զնա ընդ տպագրելոյն, և բարձցէ ՚ի նմանէ զբիս յետամուտ առնս ՈՎ. ՀՐԱՇԱԼԻ չարականին, և տացէ տալ պագրիչ Աբասեան Պօղոսին՝ տպել զՇարականն ըստ այնմ ձևի։

Յանձն առեալ վարժապետին զայս տարժանելի գործ աշխատութեան՝ հրամանաւ նորին և ՚ի սէր ազգին, որոնեաց աստ և անդ և եգիտ զընտիր ձեռագիր Շաբաթական մի՝ գրեալ ՚ի վերայ մագաղաթի «ի թուին Հայոց ՉԾԱ։ ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ արքային, ՚ի խորհիլն կոչեցեալ անապատին, ՚ի ձեռն թովմայի Սեւակրի». և զայս Շարական եգիտ առ արքունի վարդապետ մահտեսի Տաճատ Առաքել գրասէր իշխանին, և առեալ ՚ի նմանէ աշխատ եղեւ զամիսս վեց զսկիս և զգիշեր՝ (ընդ որում և ես ոչ սակաւ վաստակեցայ ՚ի բազդատութիւն ընթերցուածոյն և գրութեան նորին, որ յայնմ ժամանակի պաթապէի յուսման առ ոտս նորին)։

Եւ առաւրեաւ զարթեալ գրութիւն նորին՝ եհաս Աբրահամ Պօղոսի ծերունւոյն տպագրել զնա հրամանաւ պատրիարքին։

Եւ նորա գնացեալ առ Աբրահամ պատրիարք, և սուտ եալ ՚ի նմանէ զհաճութիւն և զտուչութիւն հրամանի նորին, և ձեռն ՚ի գործ արկեալ յանկ եհան և կատարեաց զտպագրութիւն նորին, և սկսաւ վաճառել և տարածել զնոսոգ տպագրեալն։

Այլ երբեմն տարածեցաւ այս աստ և անդ, ոմանք ՚ի տգէտ քահանայից և յիշխանաց սկսան չփոթութիւնս արկանել ՚ի լսելիս ամենայն ժողովրդեան, որպէս թէ բանք չնորհալւոյն բարձեալ լցեն ՚ի Շարականոցին, և եկեալ առ Աբրահամ պատրիարք, հարցանէին զնա և յաւելին, թէ ընդէր փոփոխութիւնս և պակասութիւնս եմոյծ ՚ի բանս Շարականոցին։

Digitized by Google

Եւ որովհետեւ երեւելի էր յայն աւուրսն Աշնաւուրեան կարապետ գլխաւորն հաստավաճառաց, և նա էր մին ի դատախազիցն այսր երի, որք եկեալ էին առ Աբրահամ պատրիարքն, ի լսելն զայս Աբրահամու՝ որպէս թէ ամենևին չէիցէ լուեալ զայս սրբազրութիւն Շարականին, ասէ ցնոսա. զի՞նչ ասէք ինձ յարդի իշխանք, իմ չէ լուեալ զայդ երբէք, և ոչ գիտացեալ։

Եւ իսկոյն կոչեալ զվէքիլ իւր առաջի նոցա, սպառնացաւ նմա, զի փութմանակի կոչեսցէ զտպագրիչն, և հարցցէ և տեղեկասցի ի նմանէ, թէ ո՞վ եւս նմա առնել զայս, և նորա կոչեալ զնա ի պատրիարքարանն, ասէ ցնա, դու որո՞յ հրամնաւ փոփոխեցեր և բարձեր ի Շարականոցէն զայն երիս տունեան։

Եւ նա ասէ ցնա, հրամանն պատրիարքին և սրբազրութեամբ Գրիգորի վարժապետին։

Ընդ այս պատասխանի նորուն զայրացեալ վէքիլ վարդապետին, հրամայեաց, զի մի՛ ումեք վաճառեսցէ ի նորոգ սրբելոցն, և կոչեալ զԳրիգոր վարժապետն ի պատրիարքարանն, եղ ի դիպահոլ, զի առաքեսցէ զնա յաքսոյս։

Այլ նա փութանակի գրեալ զգիր աղերսանաց առ Տիւզեան Գրիգոր չէլէպի, ազդ արար նմա զանմեղութիւն իւր և զանիրաւ բռնատարգելութիւն։

Եւ նորա կոչեալ առ ինքն զԱշնաւուրեան կարապետ և զնմահտեսի Յովհաննէս երկանեան զիչխանան Հայոց, խօսեցաւ ընդ նոսա, զի ազատեսցեն զԳրիգոր վարժապետ յարգելանաց բռնտէն, ապա թէ ոչ՝ ինքն կարէ ազատել ի ձեռն մեծամեծացն արքայի։

Եւ նոցա լուեալ զայս, և գիտելով՝ զի կարող է առնել, զոր կամի նա, իչին ի պատրիարքարանն, և խօսեցեալք ընդ Աբրահամ պատրիարքի՝ Թոյլ եւտուն Գրիգոր վարժապետի գընել անվնաս ի տեղի իւր։

Եւ յետ ոչ բազում աւուրց տպագրիչ Պօղոս ծերունին ըստքսաւ վաճառել զՇարականն զայնոսիկ, որք մինչեւ ցայսօր գտանին աստ և անդ, բայց վասն այսր ոչ սակաւ աւելութիւն և խեթ անկաւ ընդ Տիւզեան իչխանացն և ընդ Աբրահամ պատրիարք, ուստի և գազանի խորհրդակցութիւնս արարեալ։

Digitized by Google

ընդ ոմանց իշխանաց Հայոց, առաքեցին ՚ի սուրբ Էջմիածին զՊօղոս վարդապետ վէքիլն արքոյ Երուսաղէմի. զի ընկալեալ զօծումն ընդհի եպիսկոպոսութեան դարձ արասցէ ՚ի կոստանդնուպօլիս, խորհուրդ եդեալ ընդ նմա կացուցանել զնա պատրիարք Հայոց։

(1814) Եւ Պօղոս վարդապետ ՚ի կոստանդնուպօլսոյ, և հանդերձ վկայական թղթով իշխանաց իւրոց կուսակցաց, յորում էր և կնիք ծովհաննու պատրիարքին, որ նստէր յայնժամ ՚ի յիւսկիւտար, գնաց ՚ի սուրբ Էջմիածին, և առեալ զօրքա զան կարգ եպիսկոպոսութեանն դարձ արար անդրէն ՚ի կոստանդնուպօլիս։

Յառաջ յայսմհիկ Աբրահամ պատրիարք հակառակ երթեցաւ միաբանից սրբոյ Երուսաղէմի, որք էին ՚ի կոստանդնուպօլիս, զոմանս աքսորեաց, և զոմանս արգել ՚ի քահանայութենէ և ՚ի պատարագելոյ, արգել և զԳրիգոր վարդապետ զոմն ՚ի քահանայութենէ՝ լոկ աշխարհական կարդացեալ զնա, և նորա գնացեալ անկաւ յոտս ծովհաննու պատրիարքի. զի միջնորդեաց վասն իւր առ Աբրահամ պատրիարք, և հաճեցուսցէ զնա տալ հրաման ընդհանուր պատարագելոյ։

Ստուգեալ ծովհաննու պատրիարքի զանմեղութիւն նորա, կոչեաց առ ինքն զիշխան ոմն Պեղճեան ծարութիւն կոչեցեալ, որ երեւելին էր ՚ի դրան Տիւզեանց և գործակալ նոցին. և յորժ-ամէնց զնա գնալ անձամբ տանէին առ Աբրահամ պատրիարք, և առնուլ ՚ի նմանէ զհրաման և զթոյլտուութիւն վասն պատարագելոյ Գրիգորի վարդապետին։

Եւ նորա գնացեալ աղաչեաց և բազմօք թախանձեաց զԱբրահամ պատրիարք, զի ներեսցէ յանցանաց Գրիգորի վարդապետին. իսկ Աբրահամ պատրիարք յետ քանիցս անգամ ասելոյ, թէ անկարելի է այդմ աղաչանաց լինել ընդունելի, ասաց ՚ի վերջոյ և զայս, թէ ո՞ իցես դու, որ այդպիսի վստահութեամբ յանդգնեցար յայդ աղաչանս, ՚ի բաց գնա յինէն դեռսպան հերձուածողաց։

Զայս լուեալ ծարութիւն Պեղճեան, և խոժոռ լինի հայեցուածք պատասխանի՝ տուեալ նմա, ասէ. դու զդեռսպանութիւն իմ ասաս ՚ի կոստանդնուպօլիս ծանեար և պատմեցեր,

Digitized by Google

և ես յորեւելս զքոյդ ինքնակալ թագաւորութիւն քարոզե-
ցից. և զայս ասացեալ ել արտաքս։

Եւ գնացեալ առ Գրիգոր Զէլէպի Տիւզեան, պատմեաց
նմա զամենայն, զոր լինչ լուաւն յԱբրահամ պատրիարքէ. և
նա գաղտնի խորհրդակցութեամբ ընդ ոմանց իշխանաց Հայոց
բան եդեալ, հաստատեցին իջուցանել զԱբրահամ յաթոռոյ,
և նստուցանել պատրիարք զՓօղոս եպիսկոպոս փոխանորդն
սրբոյ Երուսաղէմի, որպէս և յառաջ քան զամ մի գնոյն խոր-
հուրդ խորհեալ էին։

(1814) Ձայս միջոցի չինեցաւ նորոգ և սուրբ եկեղեցին
Քաղկեդոնի սուրբ թագաւոր կոչեցեալ, և առաջակայ գոտան
յօժմանն նորա Յովհաննէս նախկին պատրիարք, Աբրահամ
պատրիարք, կարապետ եպիսկոպոս Ծերունի, Աստուածա-
տուր եպիսկոպոս, Փօղոս եպիսկոպոս՝ փոխանորդն սրբոյ Երու-
սաղէմի, Յակոբոս և Մատթէոս վարդապետք՝ աշակերտք Յով-
հաննու պատրիարքի, Յովակիմ վարդապետ՝ աշակերտ Աբրա-
համ պատրիարքի, Փօղոս վարդապետ Մշեցի, Գրիգոր վար-
դապետ Նարեկայ, և բազմութիւնք քահանայից, և դպրաց,
և մեծաւ հանդիսիւ օծին զսուրբ եկեղեցին յամսեանն յու-
լիսի 4, յամի տեառն 1814։

Այս հանդիսաւոր օծումն եկեղեցւոյն Քաղկեդոնի՝ գլուխ-
ևաց զսիրուս Ժողովրդոյն Բերայի (այն է Պէյօղլու) նորո-
գել և զեկեղեցին իւրեանց, որ 'ի քաղում ամաց հետէ հրա-
կէզ լեալ, աւեր և անշէն Ձնացեալ էր։

Եւ Ժողով արարեալ նոցին, բազմութեամբ եկին առ Աբ-
րահամ պատրիարք, և աղաչեցին զնա, զի հրամայն առցէ
յարքունուստ նորոգել զեկեղեցի իւրեանց։

Եւ նա փոխանակ քաղցրութեամբ հաճոյելոյ և ամոքելոյ
զսիրտս նոցա, խրոխտ սպառնալեօք վանեաց զնոսա յառա-
ջոյ իւրմէ, ասելով, թերէք այսր առ իս զՀաջար քահանայ ոսկւոյ,
զի հրամայն առից նորոգել զեկեղեցի ձեր։

Ընդ որ ցասուցեալ Ժողովրդոյն անհնարին տրտմու-
թեամբ, բողոք բարձին 'ի դրունս մեծամեծացն Հայոց, զի
զթասցին յինքեանս և յեկեղեցի իւրեանց, և զտցեն զճանա-
պարհ նորոգութեան եկեղեցւոյն։

Digitized by Google

Այս աղմուկ և խռովութիւն ժողովրդոյն բերայի՝ եղեւ կողմնակի ինն պատճառ ազգասիրական Աբրահամ պատրիարքին, զի իբրեւ լուան զայս Գրիգոր Չելէպի Տիւզեան և խորհրդակից իւր, ՚ի չեռն ունելոց խորագէտ և խորհրդապահ ծանօթից իւրեանց սկսան դրգռել և յորդորել զբնակիչս բերայի, զի միաբան ժողովեսցին յաւուր ուրբաթու տալ առարքայ զգիր աղերսանաց վասն հրամանատարութեան և նորոգութեան եկեղեցւոյն իւրեանց։

Եւ ինքեանք եռուն գրել զգիր ՚ի դիմաց հասարակին լրութեան ազգիս, թէ պատրիարք մեր չունի զխոհականութիւն և զբարեխոհ կառավարութիւն չահելոյ զազգն, և թէ յանիրաւի բռնանայ և կեղեքէ զժողովուրդն յափշտակութեամբ ընչից և զրկողութեամբ իրաւանց. ուստի խնդրեմք ՚ի մեծաղօր տէրութենէ ձերմէ, զի բարձցես ՚ի միջոյ մերմէ զայրս զայս անիրաւ և յափշտակող, և դիցես մեզ պատրիարք զայլ ոք իրաւասէր, խոհական, և շահեցող։

Զայս գիր միայն ինքեանք գիտէին, որք եռուն գրել, իսկ հաւաքեալ ժողովուրդն այնպէս գիտէին, որպէս թէ վասն նորոգութեան եկեղեցւոյն Բերայի տան առ արքայ զգիր աղերսանաց։

Եւ այսպէս միահամուռ բազմութեամբ քահանայից և ժողովրդոց եռուն առ արքայ զգիրն լալագին պաղատանօք ՚ի մէկ[illegible] թօփհանէի, և ինքն Գրիգոր Չելէպի Տիւզեան ՚ի չեռն մեծագին ընծայից յանկոյց զսիրտս պալատականացն արքայի զթալ յազգն և ՚ի ժողովուրդն, և զերծուցանել զնոսա յանիրաւ բռնութենէ Աբրահամ պատրիարքի։

Ընթերցեալ արքայի զգիրն, և լուեալ ՚ի պալատականաց իւրոց զկեղծեալ բողոք և զպաղատանս ժողովրդոցն, հրամայեաց վոխանորդի իւրում մեծի եպարքոսին, իջուցանել զԱբրահամ պատրիարք յաթոռոյն, և դնել զայլ ոք ըստ ընտրութեան ազգին Հայոց։

Իմացեալ զայս իշխանաց Հայոց, յորոց բազումք էին ՚ի կողմն Աբրահամ պատրիարքի, ժողովեցան ՚ի պատրիարքարանն, և համահաճութեամբ ժողովոյ իւրեանց գնացին ՚ի դուռն եպարքոսին, և աղաչեցին ՚ի դիմաց լրութեան ազ-

Digitized by Google

գէս, [illegible]ով հաստատել զնոյն ինքն զԱբրահամ ՚ի պատրիարքութիւն ինքեանց. բայց ոչ լուաւ նոցա եպարգոսն, մի՝ զի հրամայն արքային այնպէս էր հրամայեալ, և դժուարին երեւէր յեռս կոչել զհրամանն, և երկրորդ՝ զի ՚ի ձեռն կաշառաց և ինքն եպարգոսն էր ցաստուցեալ առ Աբրահամ պատրիարք։

Վասն որոյ և յաւուր երեքշաբաթի ՚ի նոյեմբեր 29 առաքեաց եպարգոսն զհրամանագիր արքայի ՚ի պատրիարքարանն, և ընկեցեալ զԱբրահամ յաթոռոյն, առաքեաց զնա ՚ի Զատիգիւղ, յորմէ ապա գնաց յաւանջորդութիւն Մարզուան քաղաքին։

Եւ յեռս երկուց աւուրց ժողով մեծ եղեւ ՚ի պատրիարքարանն, յորում ներկայ գտան Գրիգոր և Սարգիս չէլէպիք Տիւզեան, և հարցուփորձ արարեալ ընդ միմեանս՝ ընտրեցին զՊօղոս եպիսկոպոս վոխանորդն Սրբոյ Երուսաղէմի, և ծանուցեալ վասն նորին ՚ի դուռն արքունի, յաւուր հինգշաբաթի ՚ի դեկտեմբեր երեք 1815 կոչեաց եպարգոսն առաջի իւր զՊօղոս եպիսկոպոս, և խօսեցեալ ընդ նմա, հրամանաւ արքայի զգեցոյց նմա զվերարկու պատրիարքական պատուոյ, և մեծաւ հանդիսիւ յղեաց զնա ՚ի պատրիարքարանն։

Որոյ եկեալ պատրիարքական պատուոյն, կանգնեցաւ ՚ի բեմի Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի, և արար զեղեցիկ ատենաբանութիւն իմն, անարժան համարելով զընտրութիւն անձին իւրոյ, և ապաստան լինելով ՚ի կոչումն Աստուածոյ, և ՚ի վերջոյ յարեալ զմաղթանս և զօրհնութիւն իւր առ Աստուած, կնքեաց զճառ իւր գոհաբանական նուագօք։

(1817) Յետ երկուց ամաց երջանիկ վախճան ընկալաւ Յովհաննէս պատրիարքն կոստանդնուպօլսոյ, և թաղեցաւ ՚ի դերեզմանատունն խասկիւտարու։

(1818) Վախճանեցաւ և յետ ամաց հինգ և ՚ի Էդոդոս պատրիարքն Երուսաղէմի՝ կացեալ ՚ի պատրիարքութեան զամս 25, և եդաւ յաթոռ նորին Գաբրիէլ եպիսկոպոս ՚ի միաբանութենէն սրբոյ Երուսաղէմի։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաջորդս կոչելոյ Գօդոսի պատրիարքին գՀռոմէական Հայս ՚ի սէր միաբանութեան։

Ի սմին ժամանակի ժողովուրդ Հռոմէական Հայոց հաստատակամութիւն գտեալ ՚ի կողմանէ Հայոց, և առաւել եւս՝ պի ՚ի բազում քաղաքս ծառայողք եպարքոսաց և ոստիկանաց ՚ի Հռոմէական Հայոց անտի գտանէին, և ըստ հաճոյից իւրեանց հանդիպելով և որսալով զեպարքոսս, ՚ի ձեռն նոցին նեղէին և չարչարէին զհայկազուն ժողովուրդս, որք գտանէին ՚ի քաղաքն յայնոսիկ, համարձակ չըլլեցուցանէին զկարգաւորս իւրեանց, և զպարզամիտ ժողովուրդս մեր հանէին ՚ի հնազանդութենէ սեպհական հովուի իւրեանց, և նախատելով և արհամարհելով զազգ և զեկեղեցի մեր՝ գոմ անուանէին և ախոռ ձիոց, և զեկեղեցականս մեր կոչէին խաբեբայս՝ և ստահաց՝ հերձուածողս՝ և հերետիկոսս, որովք զբազմաց որդիս յորդորելով և համոզելով որոշէին ՚ի ծնողաց իւրեանց, զեղբայրս յեղբօրէ բաժանելով, և զկին յառնէ իւրմէ օտարացուցանելով, և զորս միանգամ որսային, խրատէին խնդառ հեռանալ ՚ի հաղորդութենէն եկեղեցւոյն Հայոց, իբրեւ անթողի մեղս ինն համարելով։

Զայս ամենայն առնէին ազգի ազգի չողոքոպութեամբ՝ ոմանց դրամս տալով, և ոմանց ձեռնտուութեամբ իւիք օգնելով, և բազմաց զլայն և ընդարձակ ճանապարհ ցուցանելով ՚ի լրումն մարմնոյ հեշտութեանց։

Եւ յորժամ որսային զոք ՚ի կողմն իւրեանց, ոմն ցնծութեան և ուրախութեան կատարէին ՚ի միջի իւրեանց, ասելով, թէ զհոգի մի ազատեցաք ՚ի դժոխոց, որպէս թէ յառաջագոյն անհաւատ ոմն էր այն։

Եւ զայս ոչ միայն առ աշխարհականս, այլեւ առ եկեղեցականս առնէին, տեղի և տուն ապստամբաց եղեալ, վասն զի՝ ոմանք ՚ի մերոց տգէտ քահանայից և վարդապետաց՝ յան-

Digitized by Google

դիմանեալք վասն անկարգ գնացից իւրեանց, վազվզակի գիշերագնաց փախչէին ՚ի մէնջ ՚ի կողմն նոցա, և ազատ գոլով ՚ի հրամանաց մեծաւորաց, և ուխտազանց եղեալք ՚ի կրօնաւորական կարգաց իւրեանց, բնակէին ՚ի տունս նոցա, և անդ բացեալ զանդուռն բերանս իւրեանց՝ բիւր բանբասանօք չարախօսէին զազգիս մերմէ ասելով, թէ Հայք այսպէս առնեն, այնպէս առնեն, հերձուածող և հերետիկոս են, վասն որոյ փախեաք և որոշեցաք ՚ի նոցանէ առ փրկութիւն հոգւոց մերոց, եւայլն։

Եւ իբրեւ այս այսպէս լինէր ՚ի բազում տեղիս, սկսան ՚ի բազում քաղաքաց աղաղակք և բոլոքանաց գրութիւնք հասանիլ մի զկնի միոյ առ Պօղոս պատրիարք, աղաղակելով և աղերսելով, զի գոցէ զՆնար իմն այսմ անբժշկելի ախտիս, որ օր քան զօր ունի զայրանալ և ճարակիլ յամենայն անդամս եկեղեցւոյ մերոյ, և յապականութիւն ճահու հասուցանել ըզ բոլոր մարմին ազգիս։

Ընթերցեալ զայս ամենայն գրութիւնս Պօղոսի պատրիարքին, և ոչ կարացեալ լուել և տոկալ անբմբռերելի խոցուածոյս, վասն որոյ ՚ի նոյեմբեր 9 յամի տեառն 1816 սկիզբն առեալ՝ խորհուրդ արարի ընդ իշխանապետս ազգի մերում, և ապա ՚ի 23 աւուր նոյեմբերի հրաւիրեաց ՚ի պատրիարքարանն զերեւելիս միւս կողմանն, որք էին Տիւզեան Գրիգոր Զէլէպին, Աբիկեան Պօղոս, կարնեցի Աստուածատուրեան Մատթէոս, Տալուտեան Մնասն, և Թրնկրեան Յովսէփ։

Եւ յորդորելով զսոսա քաղցրութեամբ և սիրով, սկիզբն արար հարցանել, թէ զի՞նչ է պատճառն այսր բաժանման և ընտրութ, ո՞չ ապաքէն մի՛ և նոյն ազգ եմք, միոյ սուրբ եկեղեցւոյ ծնունդք, զմի և նոյն սուրբ հարս՝ հեղինակ ուղղափառ հաւատոյս մերոյ ունիմք զսուրբ Լուսաւորիչն և զսուրբ Ներսէս Շնորհալին, և ահա դրեանք նոցին ցճահախապատումն և ընդհանրականն՝ զըրհանապազ պաշտին յեկեղեցւոջ մերում, և զոր ինչ ընկալաք յերից սուրբ ժողովոց և ՚ի սուրբ հարց մերոց, զնոյն անխախտ պահեալ եմք հաւատովք և արարողութեամբք։

Այդ ընդ՞ի կարգաւորք ձեր ջանայք թիւրել զազգս մեր,

Digitized by Google

ասելոյ զանոնք և բամբասել յեկեղեցւոյ մերմէ, և այսր ա-
մենայնի խուովութեան և չարեաց ճգնին լինել պատճառ։

Սա ոչ պատասխանեաց եւս նոքին և ասեն, թէ մեք եւս
ընդունիմք զառաքելսն և զներսէս Շնորհալին, և ա-
մենայն բանք նորին ուղղափառութիւն են։

Յայնժամ ասէ Պօղոս պատրիարք, թէ այդ իսկ են սքան-
չելիք, զի թէ մեք և թէ դուք, միաբան ընդունիմք զառաքե-
հարս, և այսու ամենայնիւ վիճիմք ընդ իրեարս, ուստի և-
կայք քննութիւք, թէ նախ քան զբաժանիլն ձեր ի մէնջ
զի՞նչ դաւանութիւն ունէր առաքելական եկեղեցին մեր, և այժմ
զի՞նչ դաւանի, եթէ զնոր ինչ մուծեալ եմք ի հաւատս
մեր, ցուցէք և վկայեցէք, և մեք դիտասցուք և ուղիղացուք
զմեզ. ապա թէ ոչ՝ զի՛ է, զի այսաչափ չարիք և զրպարտու-
թիւնք յառաջ գան ի ձերոյ կաթողիկոսութեաց, և զիարդ կա-
րասցուք լռել։

Յետ այս ամենայն բանիւ՝ սպասմանադրեցին ի ժողովին,
զի գրեսցին յամենայն քաղաքս, զի սիրով և խաղաղութեամբ
վարեսցին հառմէականն հայք ընդ հայոց, մինչեւ ասա լինք-
եանք տացին զպատասխանի։

Բայց առաւել եւս յանձնեցին խուովութեան առիթք և
պզտիկ պզտիկ զրպարտութիւնք և ձեռաք, մինչեւ և զեկեղե-
ցիս մեր փութացին դրաւել և յանիշտակել ի Գալատիա և ի
Տրոասիզան, և այս ամենեցուն գրութիւնք հպատնէին առ Պօղոս
պատրիարք։

Ապա ի 23 աւուր մայիսի կրկին կոչեալ Պօղոս պատրի-
արք զերեւելի իշխանս նոյնն, որք էին գերապնիւ Գրիգոր
Չէլէպին Տիւզեան, կարնեցի Մատթէոս, Խրլճեան Ընտօն, և
Թրնակըլեան Յակոբ։

Եւ ի ժողովին եղոյց նոցա զպատգամաւորացն Թուղթն, և
ընթերցան զաղետալի գործն և զմահաւորի ձեռաս, որք լի-
նէին ի Հռովմէական հայոց ի քաղաքս բազումս։

Որոց ընթերցեալ իրաւունս եւս պատրիարքին, բայց
խնդրեցին երկայ խորհիլ, և տալ նմա զպատշաճ պատաս-
խանին։

Գնաց Պօղոս պատրիարք ի գիւղն Ղուրուչէշմէ ի պատ-

Digitized by Google

ըհաթ-քարտանն, և ՚ի 15 աւուր յունիսի կոչեաց զմեծաշխատ իշխանան, և ասէ ցնոսա, զի պատրաստեսջիք և դայցեն տալ ինքեան պատասխանի, և նոքա խնդրեցին հատնել և տալ զմիջոց վաթսնաւն աւուր, որպէս զի խորհեսցին ընդ իւրեարս, և լրումն տացեն պատասխանւոյ հարցուածոց պատրիարքին։

Ձետ վաթսուն աւուրցն կրկին հրաւիրեաց պատրիարքն զնոսա յառաջնումն աւուր հոկտեմբերի, և եկին միայն Գրիգոր Չէչէլին Ցիւրեան, և կարնեցի Մատթէոս աղային, և մնային ընկերաց իւրեանց, բայց նոքա ոչ եկին, վասնորոյ և նոքա տրտնջելով գնացանէ, խնդրեցին ՚ի պատրիարքէն յառաջ ևս ակայ ուրբաթի ժողովս առնել, և ՚ի նոյն աւուրն զոր ինչ արժանն է՝ խօսիլ և տալ պատասխանի։

Իսկ Գօղոս պատրիարք կամեցեալ յայտ առնել զայս ամենայն ազգի մերում, արար ժողով մեծ ՚ի 17 հոկտեմբերի, կոչեաց զքահանայս և զիշխանս և զդպրախաւսր անձինս յամենայն արհեստս, և յայտ արարեալ նոցա զամենայն, որ ինչ մինչեւ ցայն էին խօսակցութիւնք, էառ բացարձակ հաւանութիւն ՚ի ժողովոյն տնօրինել զամենայն ըստ իւրումն խոհեմութեան և օրհնեալ գնաստ արձակեաց զամենեսեան։

Ապա յաւուրն հրամանագրով իւրով կոչեաց ՚ի հոկտեմբեր 23 գերդաստ կողմանց իշխանաւորս ՚ի պատրիարքարանն Ղուրուչէշմէի, և ՚ի նմին առնի արար զայս առնաքանութիւն։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Ցաղագս առնանաքանութեան Գօղոսի պատրիարքին, եւ կանոնական կոնդակի նորին։

(1817) «ՀՈԳԻՆ սուրբ որ է աղբիւր սիրոյ և խաղաղութեան, »տացէ մեզ խորհիլ գՀաճոյս իւր, և ձեզ լսել և ՚ի գործ դնել, որպէս զի բարձցի առեղծութիւն և խռովութիւն ՚ի պայծառութիւն ազգիս լրութեան։

Digitized by Google

„Մեծ ուրախութիւն է ինձ այսօր, զի տեսանեմ զսիրտ „մեր ամենեցուն վառեալ բարի նախանձու ուղղափառու„թեան հաւատոյ և սիրոյ խաղաղութեան։

„Բայց միանգամայն եւս տրտմութիւն մեծ է ինձ այսօր, „զի ընդ ձեր բնաւ դառն սաստանայական որոմն ի մէջ ազգիս „արմատացեալ, որովհետեւ հարազատ մի ազգ և մի արիւն եմք, „միոյ մեր սուրբ եկեղեցւոյ զաւակունք՝ միով կարգաւ լու„սաւորչական վարդապետութեան զարգացեալք։

„Ողբամ զանձն իմ, զի վասն մեղաց իմոց տեսանեմ զազգս „իմ բաժանեալս ի միմեանց, և թշնամութեան աչօք հայե„ցուղս առ միմեանս։

„Խնդամ, զի թերեւս բարձցի ի միջոյ վէմն գայթակղու„թեան, և հաստատեսցի գլուխ անկեան բաժանեալ որմոցս „միացուցեալ սուրբ Լուսաւորիչ հայրն մեր։

„Ջի՞նչ արդեօք կարծէք զարամեանս ազգ և զսուրբ ե„կեղեցի Հայոց, միթէ փոքր և արհամարհ գտաւ ի մէջ աշ„խարհի, ո՛չ երբէք, քանզի առ ազգս մեր և առ սուրբ եկե„ղեցիս Հայոց լինամք և վառքն Աստուծոյ ի վեր է քան զբա„զում ազգս, մինչեւ գոչել մեր զմարգարէականն թան, թէ „մեծ արար տէր զառնել իւր ընդ մեզ։

„Ջի մինչ մեք էաք ի խաւարի և ի ստուերս մահու կը„ռնապաշտութեան, ծագեաց առ մեզ գլոյս ողորմութեան և „արդարութեան, քանզի յարոյց Աստուած զառաքին քահա„նայապետն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն, և ի ձեռն „նորին կանգնեցաւ խորան վկայութեան, տաճար վառացն „Աստուծոյ, այս է՝ մայր ամենայն մեր կաթուղիկէն սուրբ Էջ„միածնի ի դաշտն Արարատեան, յոր միածին Որդին Աստու„ծոյ խչեալ ոսկի ուռամբ հզօր ձեռն՝ ձեւացոյց լուսով ի „զարծանս ազգիս, և անխախտ պահեալ է մինչեւ ցայսօր, „և պահէ մինչեւ ի կատարած աշխարհի. առ որ յարմարի և „միւս բան մարգարէին, թէ ոչ այսպէս արար ամենայն ազ„գաց տէր։

„Ապա զի՞նչ պակաս ունիս քան զայլ քրիստոնեայս, միթէ „լեզու ո՛չ ունիս սեպհական հնչմամբ հարատեւացեալ։

„Գիր ո՛չ ունիս աստուածահրաշ տեսլեամբ պարգեւեալ,

Digitized by Google

» գիրք ոչ ունիս պատուհասնել հանգամանաբար և ոչիւ պիտ
» գիտասիրութիւնք սիրեցեալ, ամենայն ոչ ունիս հոգեւոր ի
» խանութիւնք հետաքննեալ, կամ ոգեղիտ և պատրաստեալ ոչ
» ունիս երկրագիտական ուսմունք զարդ արուեստ, գիմակիր քաղ
» զանազան հոգիս և վայրագ սպառս քո, որ ի ձեռնարկանես
» ծնեալ են գքեզ, գնացեալ ի քո անապատի յորիկ յաստղ հարս,
» վասն ի՞նչ առնայի գրեալ գհետագալից սերդանս հօր քոյ, իբր ա
» ւելորդ գործ ես առ գրասէրս այլոց։

» Վ ասն այսր հաշուեալ և ընչեալ են միտք հարցին սիրոյ՝
» որ նախ քան գմիզ, և գմիծամիծ տատապանս կրեալ են
» վասն սուրբ եկեղեցւոյ պայծառութեան և ազգիս խաղա
» ղութեան, նոյն ի տառանգ կայ և սիրս առաջի։

» Ա ւգտս քաղցր է ինձ գմնդ ճաշակել, քան զազգս իմ յայս
» պիսի դառն աղէտ տեսանել, և ի՛ պղծել կարծրացեալ հոտիւքդ
» ։

» Ա՛ա՝ պատասխանի է ինձ գայտոսիկ ազգ ելն՝ գոր
» երբէք լուար, վասն է ինձ, և երբէք խօսեալ, ոչինչ առաւելու
» թիւն, քան զայս ոչ ունի ասելոյ, զի ոչ ունի հանդերձ մեղ
» ոյ, հանապազ հնչէ յականջս իմ ահագնալուր ձայն առա
» ւաձգին, թէ որդի մնդրոյ՝ դէտ կացցի գքեզ առնել
» յարարելի։

» Ա՛ռ երբէք վասն այսր գնացութեանդ ինչ գիշատս կրծոյիս յազ
» գէն, և այն իսկ ուրախութիւն է ինձ, քան զայլ ամենայն
» ի՛ դատապարտութենէ, ազատ գտանիմ ի յատ խոնարհական
» դատապարտութենէն, որպէս և առ Պաւղոս նոյն մարգա
» րէիւն և գթիւն բանն, առգ թէ դու յատաջադոյն պատուիրէ
» ցեր, և նոքա ոչ լուան ցեղս, դու զանձն քո ազատեցեր, և
» արդեան իւրեանց ինքեանք եղեալին պատասխանի։

» Ա՛ս այս միւս երես յայտնի օրինակ իմն, միով հոմէ ոչ
» խաղք յերիս ճեղքեալ միանչ գմիմեանս կապարեն, գիմնչ
» պատառ է հոմէ ինն առնել, արդեօք միանչի և ի բազմու տա
» դիտել, երբէ ի միջ հօտին մտեալ ի խաղաղութիւն հասցնել։

» Ա՛յս օրինակ այժմ և իմ առաջի կայ. ոչխարդ իմ են
» յոյժ խոտեալ և ազմկեալ, թէեւ չանաւասիկ խղճացոյ իմոց
» առ ոտն կոխեալսն գիս, սակայն և այն գատ ի ինձ յայտ
» գիսի ճղունս մեռանիլ, գի ոչ առ հանդերձատ մեղանիդ հրա

» վիճակեցաւ յայսմ իշխանութիւն պատուիրատրելոյ, և ՚ի վերայ
» ազգիս քահանայ ՚ի վիճակս և ՚ի տառապանս որոշեալ եմ զանձն իմ,
» և չիք առ այժմ քան զայս հարկաւոր, զի այս ամսոյ օր ըստ
» օրէ զօրացուցեալ հարուածի յազգի մերում, մինչեւ անկայս մեռանել
» և ՚ի հալածականութենէ բժշկիլ։

» Եւ չիք քան զայս դարձեալ դժուարին, զի կարի քաջ
» արհեստագէտ է, և յամենայն տեղիս ոստս արձակեալ, և որ
» առաւել զարմանալի և անհերքելի մեքենայ չարին է, զի
» զայս սիճճ և զայս երկպառակութիւն հաստատուն՝ խրա-
» քանչիւր ոք հաւատալի Աստուծոյ հաճոյական պաշտօն ընծայել։

» Եւ այս յերեսի, կարի քաջ պարտական է իւրաքանչիւր
» քրիստոնէայ միմեանց ՚ի մահ մատնանչել և պահել զուղղափառ-
» հաւատն, քանզի հաւատքն է դլուխ հոգւոյն, և ուղղա-
» փառութիւնն է կենդանութիւն նորին, և որպէս անդամք
» մարմնոյ ՚ի դլխոյն առնուն զկենդանութիւն, և ՚ի վշտանալ
» և ՚ի բառնիլ դլխոյն՝ վշտացեալ և բարձեալ լինի և կենդա-
» նութիւն մարմնոյն, ուստի և անդամք մարմնոյն պարտաւոր
» են պահպանել զդլուխն և օգնել առողջութեան նորին։

» Այսպէս և իւրաքանչիւր մարդ ամենայն կարեօք՝ դոյ-
» ութ՝ և առաջնածոլքն պարտական է եւս և ամենայն ան-
» սասքն հոգւոյ և մարմնոյ՝ պահպանել զդլուխ հոգւոյն, այ-
» սինքն զհաւատս քրիստոնէական, և զկենդանութիւն նորին
» զուղղափառութիւն, և թէ հնար է զմարմինն եւս փոխանա-
» կել, զի հոգին կենցէ, ըստ որում հոգի առաւել է քան զմ-
» մարմին։

» Բայց սակայն առ այժմ յայտնի ոչ է այնպէս՝ զոր կար-
» ծէքն, նա աւանիկ՝ ևկ, երկոքումբք աչօք քննեա և տես,
» զի Հայաստանեայց սուրբ եկեղեցի առողջ ունի զդլուխ հոգ-
» ւոյն զուղղափառութիւն հաւատոյն, զոր ՚ի սուրբ Լուսաւո-
» չէն է ընկալեալ, և ՚ի սահմանի նախկին երից սուրբ ժողովոցն
» հաստատեալ կայ, և ոչ խիթք պակասեալ ՚ի հարկաւորացն
» առ կենդանութիւն հոգւոյ. ապա թողեալ ձեր զճշմարտու-
» թիւնն, և ոչ զխոհելով զձեր ուղղափառութիւն, զճշմարտու-
» թիւն և զուղղափառութիւն լանդրէք, ՚ի լանդիր աստուած-
» պետութեան եղեալ՝ յայտնաւած առեցութիւնն ժամանէք։

Digitized by Google

« Ապա քեզ թողեալ զայս ամենայն, զորս ոչ միայն այժմ, » այլեւ ՚ի սկզբանէ վերատեսչութեանս մինչեւ ցայժմ բազ- » միցս խօսեալ եմք, եւ այժմ վերստին զնոյն հարցանեմք եւ ոչ » դադարիմք ՚ի խնդրելոյ զայս, թէ զինչ կարծիք ունիք » զուղղափառութենէ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս, բաց » յայսմանէ, առ այժմ չունիմք զայլ ինչ ասել ձեզ, եւ խընդ- » րել ՚ի ձէնջ, եւ յորժամ այս հարցմանս տայք զպատասխա- » նին, յայնժամ ըստ կարգի յառաջասցի բանս՝ մինչ ՚ի նպա- » տակ խաղաղութեան ազգիս, առ որ պարտական եմք հոգ- » ւով եւ մարմնով ճգնիլ, մինչեւ ՚ի ձեռս բերցուք, զոր միայն » խնդրէ Աստուած յամենայն անձնէ, ըստ այնմ, չիք հնար ընդ- » Աստուծոյ առնել զխաղաղութիւն, մինչչեւ առ եղբարս զնոյն » ուղեալ իցեմք »:

« Եւ որովհետեւ ցանկայիք ՚ի միասին դալ ընդ դլխա- » ւորս մեր, եւ այնպէս զպատասխանին տալ, ահա այս է այն » աւետեան, այս է ժամանակն, յայսմ հանդիսի հրամայեցէք, » ամենեցուն յայտնի ծանուցէք զմիտս ձեր, զոր ինչ համա- » րումն ունիք վասն սուրբ եկեղեցւոյս Հայոց »:

Յայս վերջայուցեալ զբանս իւր պատրիարքն, լռեաց: Յայնժամ երեւելի իշխանք միւս կողմանն միաբան աղաղակե- ցին, թէ մեք եւս ճանաչեմք եւ ընդունիմք ընդհանուր աղ- գիս Հայոց զառաջին քահանայապետն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն եւ զսուրբ Ներսէս Շնորհալին, սոցին ուղղափա- ռութեանն հետեւիմք, ուստի՝ ՚ի միջի բերցուք զդիւտնական անձինս երկուց կողմանց, զի անաչառ սիրով քննեսցեն եւ ծա- նուսցեն զուղղափառութիւն սուրբ եկեղեցւոյս համաձայնու- թեամբ սուրբ գրոց հարց մերոց, որոց ամենեքեանքս համա- ձայնեալ հնազանդիմք պատգամաց նոցին:

Եւ առ այս երբ քանի օր միջոց խնդրեցին, որպէս զի իւ- րաքանչիւր կողմանք զարժանաւոր անձինս որոշեալ՝ ՚ի պայ- մանեալ օրն անպատճառ ՚ի միասին դայցեն, եւ ըստ այսց գրոց եւ բանից քննեալ եւ ստուգեալ արասցեն զարժանն, եւ այսպէս սիրով վճարեալ այս ժողով՝ արձակեցաւ ՚ի խաղաղութիւն:

Ապա յերրորդում աւուր հրաւիրեաց պատրիարքն զարք եպիսկոպոսունս՝ զվարդապետս՝ եւ զքահանայս՝ եւ զդիւտնական

Digitized by Google

անձինս 'ի մեր կողմանէ, և միաբան խորհրդով որոշեաց ըղ պատշաճաւոր անձինս խօսել ընդ դիտնականս այնր կողմանց, որոց կարգ և սահման եղ բան պայմանի ժողովոյն կանոնական կոնդակաւ իւրով, և ետ ինքեր նոցա և առաքեցին, զի ըստ պիմ պայմանի խօսեցեալ կատարեսցեն զանձնայն ինչ։

Եւ այս խնդիր օրինակ կանոնական կոնդակին պատրիարքին։

« Յիսուսի Քրիստոսի Տառայ տէր Պօղոս արք եպիսկոպոս, »և չնորհիւ սուրբ Հոգւոյն վերատեսուչ և պատրիարք մեծի »Այրարատեան քաղաքիս Դուստանդնուպօլսոյ, յորմէ սիրով և աստ »ուածային օրհնութեամբ Տաներուք ակրեւիք մեր 'ի տէր, զի »հովանաւորութեան պաշտօնիս պարտաւորութիւն ստիպէ »հոգ տանիլ պայծառ հաստատութեան Հայաստանեայց տուրք »եկեղեցւոյ, սիրոյն Քրիստոսի 'ի խաղաղութեան պահելով։

« Եւ քանզի յառաջ քան զառնելս մեր 'ի Տամասկոս »նախկին արքայէն պատրիարքաց, և յառնելս պատրիարքու »թեան մերում, 'ի բազում քաղաքաց հասանէին յանկանխ »մեր բողոք և աղաղակք անլուելիք, իբր զի հասնղպային »հարաւային միոյ ուրբ աւազանի Տնունդ, և միոյ հօր »սուրբ Լուսաւորչի Ժողովուրդ, ոմանք այլ ընդ այլով տա »ճամբ հաճարին զեկեղեցիս Հայաստանեայց հեռացեալ 'ի »Լուսաւորչական հաւատոյ յուղղափառութենէ, ուծտի և 'ի »դատապարտութիւն անձանց 'ի չարիս իրերաց յառաջացեալ »դժնդին անհնարին հակառակութիւնք, անհաշտ խռովու »թիւնք, ազգի ազգի ընտաք և տուգանք, (և թէ մարթի ե »ասել) աստուածընդդէմ հայհոյութիւնք, ատանց և եկեղեց »եաց աւերութիւնք, մինչեւ անոգորմ մահ եղբարք եղբարց »պատճառեցին։

« Վասնորոյ և մեք ամենախնամ հայրութեամբ մերով 'ի »չատագովութիւն ուղղափառութեան Լուսաւորչակրօն հա »ւատոյս մերոյ և առ 'ի բժշկել և բառնալ զայս ազգակորոյս »ժանտախտս, խորհեցաք և խօսեցաք ընդ երեւելի մեծա »րս անձինս 'ի մայրաքաղաքիս Դստանդնուպօլսի, և սիրով »հարցումն արարաք, թէ առ ինչ պատճառ այս ամենայն չա

Digitized by Google

» րիք լինին, զինչ երկբայութիւն կամ կարծիք զլուսաւոր-
» չաւանդ հաւատոյս մերոյ ունին, զոր մինչեւ ցայսօր ան-
» խախտ պահեալ է և պահէ սուրբ եկեղեցիս Հայոց, և զայս
» բան իբր միոյ տարւոյ միջոցաւ հարցեալ, զբանաւոր պա-
» տասխանի ինչ ոչ ընկալաք։

» Ապա ՚ի Ղուրուչէշմէ ՚ի պատրիարքարանի մերում ՚ի
» հոկտեմբեր 23, ժողովեալ առհասարակ զդեղյարդի իշխանաս
» և զերեւելի անձինս երկուց կողմանց, և ՚ի նոյն հանդիսի վե-
» րստին առաջարկեցաք զնոյն հարցումն մեր։

» Իսկ միւս կողմի յարգի երեւելիքն յայլ ինն գարձուց-
» եալ զբանն, խնդրեցին ՚ի մէնջ զնոր ինն խնդիրք այսպիսի,
» թէ յերկուց կողմանց խաղաղասէր խոհեմագոյն գիտունք ՚ի
» միասին նստեալ ՚ի ներկայութեան դեղյարդի իշխանաց, ա-
» ռաջի արասցեն զսուրբ լուսաւորչի ուսուցեալ զուղղափառ-
» հաւատս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, և առ այս ամե-
» նայն ժողովն հաճեալ միաբերան խոստովանեցան, թէ զսուրբ
» լուսաւորչին մերոյ ուսուցեալ զհաւատս խնդրեմք, զոր ինչ
» սուրբ լուսաւորիչ և սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետք
» մեր գրեալ են, ամենեցունցս ընդունելի են, ամենեքեանքս
» այնպէս հաւատամք, ՚ի սուրբ լուսաւորչէ բնաւին ոչ շեղիմք,
» զի սոցին միջնորդութեամբ ընկալաք զուղիղ հաւատս։

» Ուստի և մեք սիրով ընկալաք զայս խնդիր բոլոր ժողո-
» վոյս, վասնորոյ և յատկացուցաք առ այս գործ զայսոսիկ
» զանձինս։

» Արդ երուսաղէմի նուիրակ ծերունազարդ Մարկոս արք
» եպիսկոպոսն, մեր որդի կարապետ եպիսկոպոսն, Պետրոս
» վարդապետն, ամծոռակալ տէր Մեսրովբն խումխաքուի, ա-
» թոռակալ տէր Բարթողիմէոսն Իսկիւտարու, թագուոր
» վարժապետն պատրիարքարանի, և նօտարք են Ղալաթիոյ
» տէր Ջաքարիան, և պատրիարքարանի տէրացու Գրիգորն։

» Ընդ լինիցին միայն բացայայտիչք լուսաւորչական հա-
» ւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս ընդունելի գրովք,
» և ոչ ունին իշխանութիւն բնաւին զտնօրէնութիւնն և զտրն-
» տեսութիւն իմն առնելոյ։

» Որոց պատրիարքական իշխանութեամբ մերով հրամանն

Digitized by Google

» տուաք, զի յայտնեսցեն զսուրբ Լուսաւորչին մերոյ աւան-
» դեալ զքրիստոնէական հաւատս զՀարկաւորս փրկութեան
» հոգւոց, զոր անկորուստ և անխախտելի պահեալ ունի սուրբ
» եկեղեցիս Հայոց մինչեւ ցայսօր, սակայն որպէս 'ի մէջ այն
» ժողովոյն պայման եղաք, այնպէս պատուիրեմք գիտել, թէ
» ինչ կերպ պարտ է խօսիլ, և զր գրովք ունին յայտնել։

« Կերպ և եղանակ խօսելոյ նախապէս հարկիւ պատուի-
» րեմք համայն ժողովելոց՝ մեծաւ խոհեմութեամբ զգու-
» շութիւն ունիլ ընդ առաքելական խրատուն, մի բանա-
» կռիւ լինել, և մի խռովեցուցանել զմիմեանս, այլ առանց
» երդիծանութեան ճշմարտութեամբ քաղցր և աստուածային
» սիրով խօսել, և յայտնել զճշմարտութիւն ուղղափառու-
» թեան մերս սուրբ եկեղեցւոյ, զի և անուանն Աստուծոյ
» փառաւորութեան և աղդիս չինութեան լինիցի պատճառ,
» ըստ պայմանին սահմանելոյ 'ի ժողովին, և չունիմք քնաւին
» հրաման անցանել անդր քան զայս սահման։

« Գիրք բացայայտիչք ուղղափառ հաւատոյ Հայոց սուրբ
» եկեղեցւոյ՝ բացի յԱստուածաշունչ գրոց են յատկապէս
» այնք, որք արքայական հայրապետաց մերոց սահմանադրու-
» թեամբ հանապազօր պաշտին յամենայն սուրբ եկեղեցիս
» Հայոց, որովք խոստովանիմք զուղղափառ հաւատս մեր ա-
» ռաքելական և մարգարէական բանիւք հաստատեալ, և են այ-
» սոքիկ, Յամագիրքն, Շարականն, Խորհրդատետրն, Ճաշոցն,
» և Մաշտոցն, ընդ որս և գիրք սուրբ Լուսաւորչին և ընդ-
» հանրականն արքոյն Ներսէսի Շնորհալւոյ, յայսոսիկ գրեանս
» լուսաւոր մեօք հաւաքեալ գանձին բանք ուղղափառ վար-
» դապետաց եկեղեցւոյ մերոյ հարկաւորքն 'ի փրկութիւն
» հոգւոց, և բաց 'ի սոցանէ չունիմք հրաման զայլ գիրք բե-
» րել, քանզի սոքա են հիմունք ուղղափառութեան Հայաս-
» տանեայց սուրբ եկեղեցւոյ։

« Այս գրոց բանք ընդունելի են ըստ մուտոյ հեղինակին
» դիւրիմաց մեօք՝ նոյն բառիւք՝ ոչ առաւել և ոչ պակաս։

« Դիւրիմաց մեօք այն է, զոր բանն ըստ ինքեան առաջին
» իմացմամբն ցուցանէ, կամ որպէս բաղում սուրբ հարք ի-
» մացեալ յառաջ բերեն 'ի գիրս իւրեանց, հարկ է և մեզ

Digitized by Google

„ այնպէս ճանաչել զստոյգն, ուստի զմիմեանս և զերազանց քան
„ նոցին պարտաւորիմք ստուգել վկայութեամբ սուրբ հարցն
„ մերոց, որք վասն այնր պարզապէս գրեցին, և մի այժմ նո-
„ րոգ մեկնութիւն տալով բռնաբարել։

„ Եթէ բաւ իք, այսինքն մի և մի լիցի գիտնական ոճիւ
„ աւելի բաւ ինչ իրք ի յայտնութիւն մուծանել, այլ նոցին
„ բարբառով զնոցայն խօսիմք։

„ Ահա է ժողովէն պայմանն, և այնքան է մեր այժմ աստ
„ հրամանն։

„ Ողջ լերուք, և հոգին ճշմարտութեան առաջնորդեսցէ
„ ձեզ ամենայն ճշմարտութեամբ „։

Ցամի տեառն 1817, ի նոյեմբեր 22
ի պատրիարքարան ամենայն Հայոց։

Արդ՝ ի կատարիլ պայմանադրեալ քան աւուրց՝ զոր նո՛քա
խնդրեցին, ըստ սեպհական սովորութեան իւրեանց յանհոգս
կային, ոչինչ քան և լուր պատրաստութեան իւրեանց ճանու-
ցանէին մերոյս կողմանն։

Իսկ պատրիարքն ի ձեռն Ագնաւուրեան կարապետ ամի-
րային ազդ արար նոցա, թէ ահա անցին պայմանեալ աւուրքն,
հրամայեսցեն ի կատարումն գործոյ, զոր ի մեծահանդէս
ժողովին գաչնադրեալ ուխտիւ յանձն առին։

Բայց նո՛քա վերստին խնդրեցին ի պատրիարքէն, զի թէ
հնար է, գրով յայտնեսցէն զմիտս իւրեանց, ի ձեռն թղթոյ
խօսակցեսցին։

Ընդ այս բնաւին ոչ հաճեցեալ պատրիարքին, գրեաց առ
նոսա, թէ կամք իցեն ձեզ, միութեամբ գալ օր մի յաւուրջ՝ ի
կատարումն գործոյս, բայց գրութեամբ խօսակից լինելոյ չա-
նիմ հրամանն, զի ոչ կամիմ զվիճաբանութիւն, վասն զի անվիճ
վիճաբանութեան գիրք մինչ ցայժմ ոչինչ զօրեցին բառնալ
զերկպառակութիւնն ազգիս, մի խօսեսցի գրիչ ի ձեռին, այլ
լեզու ի բերանի յանդիման ամենեցուն, զի և զայս պահանջէ
քան հաւատոյ համարձակ խօսիլ և յայտնել ունկնդրաց զճա-
նաչողութիւն սրտի և մտաց։

Ընթերցեալ իշխանաց նոցին զգրութիւնն պատրիարքին, և

Digitized by Google

յորդորանաց և սպառնալեաց չեղեն քաւական առաքել զկայսր զուարս իւրեանց՝ ի պատրիարքարանն առ՝ ի յայտնել զուզամասութիւն հաւատոյ իւրեանց, զոր պահանջէին՝ ի մէնէ, ուզակի եկեալ առ իշխանապետս մեք՝ ի չուկայն՝ ի սենեակ նոցին, ակամին զանց առանց ամբաստանել զկարգաւորութիւնս ասելով, թէ նոքա բնաւին ոչ կամին զալ և երեւիլ առաջի ձեր, և երես առ երես խօսիլ՝ սէր հաստատել նոցա զսուժանն, ուստի զոր ինչ կամի պատրիարքն առ մեզ, ասացանէ, պատգաստ եմք առնել՝ ի բանտս, ՝ի դանս, և յայլ զինչ և իցէ պատիժս տալոյ, եւայլն։

Զայս լուեալ պատրիարքին, և զայցելութիւն յոյժ ընդ առ համարհուտիւն և զանգատութիւն նոցին, գրեաց առ ամենայն արհեստաւորս յերկուց կողմանց միանգամայն ժողովիլ՝ ի պատրիարքարանն, և այս վերջին ժողով եղեւ՝ ի դեկտեմբեր 12, ուր զումարեալքն էին աւելի քան զհիսուն թուով՝ ի նոցանէ յիւրաքանչիւր արհեստէ, և սկսաւ յառնաբանութեան իւրում խօսիլ պատգամական բարբառով առ՝ ի զիւրաւ խմանալ նոցին, և պատմեալ զամենայն, որ ինչ մինչեւ ցայն վայր անցեալ բառնք և կոմունք և հրաւէրք սիրոյ, սկսաւ ապա զանազատանօք խօսիլ զապստամբութենէ նոցին, և խնդրել՝ ի ժողովոյն զպատասխանի։

Զոր լուեալ նոցա՝ որք էին՝ ի ժողովին՝ ի կոմմանէ նոցին, սկսան աղաղակել միաբան և ասել. էրաւունս ունիս հայր սուրբ, զոր ինչ կամիս առնել ընդ նոսա, զի դու յօգուտ ազգիս վաստակար մինչեւ ցարդ տքնիլ և աշխատիլ, և նոքա եղծանել և խոչընդոտս լինել քեզ վաստակեցան և վաստակին, և բազում՝ ի նոցանէ սկսան արտասուել առաջի պատգիարքին, զոր տեսեալ մեծայնոց՝ դասակից եղեն ընդ նոսա, և պատրիարքն օրհնեալ զնոսա, արձակեաց զամենեսեան խաղաղութեամբ՝ ի տեղիս իւրեանց։

Իսկ նոցա դնեցեալք, և իւրաքանչիւր ազգեալ ուրախութեամբ առանձինն ժողով արարեալք՝ ի սեզիս եւթանց, պատմին միառ մի զամենայն զոր լուանն՝ ի պատրիարքէն, և յորդորելով զմիմեանս՝ ժողովին աւելի քան զերեք հարիւր հոգիս՝ ի թերայ յերկրորդութեան եկեղեցւոյն Լատինացւոց, և կոչեն անդ զգ

կարգաւորն իւրեանց, զի խօսեցցին և հնդիցեն ցնոսա, թէ ձեր փախուստ տան ՚ի դնալոյ և վասն ՚ի խօսելոյ ընդ դիտնական վարդապետացն Հայոց։

Բայց ՚ի սադրելոյ կարգաւորացն սպասաւորք և քահանայք եկեղեցւոյն արտաքս վանեն զնոսա բռնութեամբ և գան ՚ի, ասելով, թէ այս եկեղեցի է լատինաց, և չէ ձեզ տեղի գումարելոյ և խորհուրդ առնելոյ։

Եւ նոքա պատասխանի տան աղաղակելով, և ասեն, թէ յորժամ նուէրս պահանջէք ՚ի մէնջ, եկեղեցին ձեր է ասէք, և ՚ի պահանջել հարկին խորհուրդ առնելոյ՝ արտաքս վանէք զմեզ յեկեղեցւոյ, զի՞նչ այս քրիստոնէութիւն, դիմախիզ հովութիւն, և զի՞նչ անիրաւ զրկողութիւն է զոր առնէք ընդ մեզ։

Եւ քանզի բազմութիւն ժողովրդեան մնայ արտաքս եկեղեցւոյն, և անձրեւն նեղէր զնոսա առ ժամն, անճարայնեալ նոցա գնան ՚ի տուն պարոն Ներսիսեան դրագրին Տիւզեանց, և ՚ի սրահ տանն դումարեալք տան բերել անդր զկարգաւորս իւրեանց քառասնիւ չափ, և սկսան ժողովն աղաղակել և ասել. «Ո՞չ ապաքէն դուք էք, որք ըսր ամենայն նախատինս ծանուցանէք դնելով ՚ի վերայ ազգին Հայոց, պահարակէիք զնոսա, և հերձուածողս և հերետիկոսս ճանաչել զնոսա հրամայէիք մեզ, և ահա կոչէ զձեզ ազգն ոչ իշխանութեամբ և բարկութեամբ, այլ սիրով և հանդարտութեամբ, ընդէր ոչ երթայք ապացուցանել, զի յայտնի արասչիք զճշմարտութիւնն, ոչ ապաքէն և պաշտամանց ձերոց պայման զայս պահանջէ, զի և մեզ կացցէ ձեր առաքի, չէ պարտ ձեզ խուսափիլ, այլ զնահ յանձն առնուլ վասն հաւատոյն Քրիստոսի։

Ապրդ՝ ահա չիք մեզ և ոչ երկիւղ ինչ, այլ սէրն Քրիստոսի կոչէ զձեզ, ընդէր զանգիտէք, մեք աշխարհական մարդիկ եմք, և որդւոց և ընտանեաց տէր, և ոչ կարեմք ՚ի պատճառս ձեր անկանիլ ՚ի վորձութիւնս և ՚ի տուգանս, զայս և որ տցին նման են բանք, խօսին ժողովուրդք ընդդէմ կարգաւորաց իւրեանց, և անհնարին սրտմտութեամբ երանեն և գնան ՚ի տունս իւրեանց։

Իսկ նոցա ոխացեալ ընդ այս սատանայական քինու, և վրէժս առնուլ կամեցեալ ՚ի Հայոց, ՚ի ձեռն չարագործս և

Digitized by Google

քառ արանց Թիկնապահից իւրեանց Լատին քահանայից, ամ
բաստան լինին զազգէս մերմէ առ վոխանորդն Խաթուտան
փաշային, որպէս թէ ժողով արարեալ Հայոց կոխեցին զեկե
ղեցին Լատինացւոց, և առաջադրեալ են նաեւ կոխել զպա
լատ գեսպանին յայսմ գիշերի։

Եւ նորա հաւատացեալ, բազմութեամբ զորաց իւրոց գայ
՚ի նմին գիշերի, և յանկարծուստ մնանէ ՚ի սրտի երբորգու
թեան եկեղեցին մեր ՚ի Բերա, որպէս թէ անգ գումարեալ
իցեն Հայք։

Եւ ոչ ըզք գտեալ, այսր անդր հարցուփորձ առնէ, և
քննէ, զի սուտ են բանք նոցին քոլորովին, և զուր զրպար
տութիւն, դառնայ ՚ի տեղի իւր զպյրացեալ։

Լուեալ զայս խարդախութիւն նոցին պատրիարքին, և ժո
ղով արարեալ ընդ իշխանաց ազգիս, վճռեցին լռել առ ժամն,
և չխօսել ինչ, այլում ժամանակի թողեալ զկարեւոր զպյս
գործ սիրոյ և միաբանութեան, և մնաց այսպէս անկատար,
որ ամենեցուն փափաքելին էր տեսանել մարմնոյ ազօք զկա
տարումն այսր աստուածահաճոյ փափաքանաց և գործակ
նութեան։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Քաղաքս գործոց Պօղոսի պատրիարքին.

Օրէն էր ՚ի կոստանդնուպօլիս, զի ՚ի վախճանիլ ծխա
տէր քահանային միում, ժողովուրդք նորին գրաւէին յիրա
ւունս պատրիարքին, որ վաճառէր զնոսա այլում քահանայի,
և պարտիք այն վախճանեալ քահանային մնային ՚ի վերայ ուղ
ղոց և ընտանեաց նորին, որք անպատմելի խեղճութեամբ
տառապէին ՚ի ներքոյ այնց պարտուց անհնարին տառապանաց։

Ի խօսել վասն այսր Պօղոսի պատրիարքին ընդ Մարտիրոս
քահանայի ուրուք առաք ինչ յառաջ քան զնաստիլ իւր յաթոռ

պատրիարքութեան, խոստանայով ձեռագրով իւրով, զի եթէ ՅԷր յաջողեսցի լինել ինքեան պատրիարք, բարձցի զայս ա- նիրաւ սովորութիւն ի հոստանդնուպօլսոյ, այնպէս զի ժողո- վուրդք վախճանեալ քահանային վաճառեցին ի մէջ քահա- նայից, և դրամքն տացին որդւոց և ընտանեաց վախճանելոյն, որով և նոքին մի լիցին ողորմելիք և տառապեալք ի ներքոյ ծանր պատուհասի։

Զայս ձեռագիր փօղոսի առեալ տէր Մարտիրոս քահա- նայ, հռչակեաց յամենայն եկեղեցիս, որք ուրախացեալք ան- պատմելի խնդութեամբ սկսան գովաբանել զՓօղոս եպիսկո- պոս, և պարտաւել զՅԱբրահամ պատրիարք պէսպէս ձեղաղ- բութեամբ վարուց և բամբուց։

Եւ մինչ յաջողեաց Աբրահամու ընկերիկ լինիլ յաջո- ղոյն, և փօղոսի ընտրիլ պատրիարք, ի նմին ժողովի ուր իշ- խանապետք սպգին հաւաքեալ ընտրել կամէին պատրիարք զմի ոք յեպիսկոպոսաց, քահանայք միաբերան աղաղակեցին առ- նովքն, թէ զՓօղոս եպիսկոպոսն կնդրիանուպօլսեցի զիու- խանորդն սրբոյ Երուսաղէմի խնդրեմք մեզ լինել պատրիարք, զի է այր շահեցող և խոհական և իրաւասէր։

Զոր լուեալ որոց ժողովեալքն էին յայն աւուրն, որք և ինքեանք ի նոյն միտս էին, դիւրաւ յաջողեցաւ նոցա ընտ- րել զնա աւանց երկպառակութեան, և կնքեցին ամենեքին ընդունիլ զնա պատրիարք։

(1819) Ամ յետ ելոյ անտի պատրիարքութեան նորա, իբրեւ վախճանեցաւ քահանայ ոմն ի պալատ տէր Գէորգ ա- նունն, և ժողովուրդք նորին գրաւեցան ի պատրիարքէն ըստ առաջնոյ սովորութեանն, եկեալ տէր Մարտիրոս քահանայ անդամբ առաքին առ Փօղոս պատրիարք, յիշեցոյց նմա զուխտ իւր և զձեռագիրն, որ ոչ կատարեաց զխոստումն իւր, զոր ուխտեաց ձեռագրով իւրով։

Լուեալ զայս Փօղոսի պատրիարքին, և պատասխանի տուեալ նմա, ասէ, զոր ինչ ասէր և դուն յառաջնոց պատ- րիարքաց, ոչ կարեմ փոփոխել, եթէ իրաւացի և եթէ անի- րաւ։ Ձեր հաստութիւն, որոց սահմանեալք են զայս սովորու- թիւնս։

Digitized by Google

Ա. յս բան տարածեալ ՚ի մէջ քահանայից, զղջացին ամենքին, որք աղաղակեցին և խնդրեցին զընտրութիւն նորա, և սկսան թշնամանել նմա և պարսաւել, և ունէք ՚ի նոցանէ անխոհեմութեամբ ձեռն ՚ի դործ արկեալ, եւտուն առ արքայ զդիր աղերսանաց, յորում գրեալն էին, թէ Պօղոս պատրիարք մեր և Ազնաւուրեան կարապետ գլխաւորն հատուածաց՝ երկոքին այսոքիկ կեղծքեամբ զմեզ և զժողովուրդս մեր, զերծո՛ զմեզ տէր արքայ՝ ՚ի բռնակալութենէ սոցին։

Ընթերցեալ արքայն զայս գիր, յանձն արար մեծի եպարքոսին ստուգել յայգէն զայս մեղապարտութիւն նոցին։

Եւ հրամանաւ նորին եղեւ ժողով մեծ ՚ի պատրիարքարանին, և յայնմ ժողովի զլացաւ Պօղոս պատրիարք զձեռագիր իւր, զոր տուեալ էր յառաջ քան զնատիլ իւր յաթոռ պատրիարքութեան, և զեղեցիկ ատենախօսութեամբ իւրով որսաց զամենեսեան ՚ի կողմն իւր։

Յայնժամ ժողով իչխանաց միաբան հաւանութեամբ վճռեցին մեղապարտ լինել քահանայիցն, և ծանուցեալ ՚ի դուռն արքունի, աքսորեցին զտէր Զաքարիա Պէյօղլուի, զտէր Վրդանէս Թումխաբուի, զտէր Ստեփան Սամալեիոյ, զտէր Գաղտասար և զտէր Մկրտիչ քահանայան Պալատու, և զմնացեալ չհամախոհս նոցին արգելին ՚ի քահանայագործութենէն զաւուրս երեսուն, զի ապաչխարեսցեն։

Բայց յետ ամսոց հինչ դարձան ամենեքին ՚ի տեղիս իւրեանց, և մնաց այն առաջին սովորութիւն յաւուրս պատրիարքին Պօղոսի, և ոչ փոխեցաւ ինչ։

Ի սմին ամի առաջնորդն Թրակիոյ Ծերունի Բակոբ եպիսկոպոսն վախճանեցաւ իբրեւ հարիւր և քսան ամաց, և եդաւ ՚ի տեղի նորին Առաքել վարդապետ վէքիլն պատրիարքարանի, իսկ վէքիլ պատրիարքին եղեւ Բակոբ եպիսկոպոսն Ադչէհիրցի ՚ի միաբանութենէն սրբոյ Երուսաղէմի, որ յետ ժամանակաց խառնեցաւ յաղանդս Լուտերականաց, և եղեւ գօնսօլ Անգլիացւոց յԱկաղոն քաղաքի։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Ի·

Յաղագս ապստամբութեան Ուլնեցւոյ Հայազգեաց, եւ մահամերձ վտանգի տեառն Կիրակոսի կաթողիկոսին Աղոյ։

(1819) ՉԱՅՍՈՒ ժամանակաւ Ուլնեցիք՝ որք են ազգաւ Հայ, և քաջավարժք ՚ի մրցմունս արիական պատերազմաց, կորովիք, և կիրթք յաշտանակել ՚ի ձի, և ՚ի ձգել դէպ ուղիղ ՚ի նպատակն զհրացանս և զաւտրճանակս։

Սոքա ՚ի վաղ ժամանակաց հետէ սովորեալք յապստամբութիւն, ՚ի սմին ամի բողոքովին ՚ի բաց քերեցին յանձանց իւրեանց զհպատակութիւն արքային, և զարքունի հարկն՝ որ պարտ էր նոցա ամ յամէ հաւուցանել արքային ընդ ամենայն զվաթսուն հազար դահեկան ըստ վաղեմի սովորութեան, որ և բաղդատելով ըստ այժմեան սովորական հարկին, ոչինչ իմն է։

Իակ նոքա սիրելով զապստամբութիւն և զինքնագլուխ հասարակապետութիւն իւրեանց, և յիշելով զվաղեմի թագաւորական ազատութիւն իւրեանց, մանաւանդ զի և գաւառ սոցին լինելով տեղի անառիկ և դժուարամուտելի, ընդ ափսայ նեղ և անձուկ ճանապարհս՝ քարաժայռ լերանց սեպացելոց յամենայն կուսէ, և ՚ի գագաթ լերանցն գաշտ ընդարձակ և բաղմաբերդուն արգասաւոք ցորենով և դարուով և այլոց պիտանեաց, ապաստանեալք սոքա յանառիկ դիրս երկրի իւրեանց, և ՚ի քաջավարժ կորովութիւն անձանց իւրեանց, վստահացան բնաւին ի ինքն զօրութեամբ, և սկսան չտալ արքայի յայնմհետէ զսովորական հարկ իւրեաց։

Յառաջ քան զամն ութ, տէր Կիրակոս կաթողիկոս Սսոյ՝ առեալ հրաման յարքունի դրանէ, նորոգեաց զկաթողիկոսարանն իւր և զմեծ եկեղեցին յանուն սրբոյն Յովհաննայ, այն է՝ իմաստութիւն որդին Աստուծոյ, և քակեալ զհին չէնն, կանգնեաց նորոգ ՚ի հիմանց, և զշրջապատ նորին բարձր պարսպաւ ամրացուցեալ, սքանչելարուեստ յօրինեաց ըստ նմանութեան սրբոյ Էջմիածնի։

Digitized by Google

Զայս գործ նորոգութեան կամօք Լիկոստրանին և եկեղեցւոյն առիթի գտեալ մեծանուն քաղաքին Բերիոյ, զրեաց սմ բաստանութիւն առ ազգայս, թէ կամօղիկոսն Սայ մնաքերէ, և ահա այս ութ ամ է, զի պատուական չինութեան վանից կառուցանէ զամրոց մեծ 'ի Սիս, աշտարակս անմատչելիս և բազում բարձրաբերձս 'ի նմա հաստատեալ, և զհայկազունն բնակիչս Զէյթունոյ քաղաքի՝ որք անդստին թեւին ածեն ընդ դէմ արքային, զնացեալ միաբանեալ ընդ իւր, և զհամարձակիս իւր՝ որ 'ի Կիլիկիա, յինքն յառնկուցեալ հանդերձեալ է վտանգել, և եթէ ոչ վաղվաղակի կարճեացի 'ի կենաց, աչխատ առնէ զմեզ պատուիրապնեալ ։

Ընդունելոցեալ զայս ազգայն, գրեաց հրովարտակ առ բազմաչխարհիկ քաղաքի, փութանակի ունել զկամօղիկոսն Սայ հնարիւք իմն, և անհրաժեշտ մահուամբ բառնալ զնա 'ի կենաց, և զաթոռն սուրբ հինն յարեւմտից արկանել իբրեւ ամբոց ապստամբաց, և զքաղաքն Զէյթունն ամենայն բնակչօքն հանդերձ մնանել 'ի սուր և 'ի գերութիւն ։

Զայս ամենայն ոչ գիտելով երբէք երանելի կամօղիկոսն տէր Գրիգորիս, այն ինչ 'ի պէտս նպաստից չրջէր անկասկած յայնոսիկ կողմանս, ազգ առեալ բազմչխին, առաքեաց սպաս սաւորս, և կոչեալ առ ինքն, ծանոյց նմա զհրամանն արքունի ։

Լուեալ զայս երանելոյն, յոգւոց ահան, արտասուեաց, և միանձնութեամբ պրոի իւրոյ և հաւատոյ վկայութեամբ արժանահաւատ ապանց՝ եցոյց զիւրն անմեղութիւն, մի՝ զի ոչ աշտարակ անմատչելի և ոչ բազումս բարձրաբերձս չինեալ էր, այլ միայն զհնոյս իւր և զեկեղեցին նորոգեալ, և այն հրամարտակաւ արքայի ։

Եւ երկարէր՝ զի չէ երբէք համամիտ և միախորհուրդ ընդ Զէյթունցւոց, այլ հաւատարիմ հարկատու ծառայ արքային՝ իւրով իսկ համօրէն վիճակաւն ։

Եւ այսպէս քաջալեր բանիւք սպասչանայց և միշտ զգուշութեամբ բազմեռանդից տուեալ նմա 'ի ծածուկ զամենայն՝ զոր ունէր առ ինքն զինուի և զարծաթի, և զհանդերձս պատուականս, և զայլ եւս բազում արծաթի, զոր շտապ տագնապաւ 'ի հաւատացելոց չնակչաց քաղաքին ժողովեաց, հազիւ հազ

կատաց հանճել ինեա, զի գրեացէ վասն այսր ՚ի գուռն արքունի զանաւորութիւնէ խրմէ, և մինչեւ ՚ի գարձ պատասխանւոյ նո֊ ցին սպասեացէ, և եթէ չլիցէ հրաման յարքունուստ վասն ա֊ զատութեան խրոյ, յայնժամ սպանցէ զինքն չարաչար։

Եւ յայսմ միջոցի ժամ դառնալ երանելոյն, ծանոյց գրով առ իշխանաւորս սպրիա ՚ի կոստանդնուպոլիս, զի դարման լինի աղետից գտանել մարդիանոսին, ոչ վասն անձին խրոյ ա֊ զատութեան, զոր յաժարէր զոհել ընդ քաջ հովուին պատ֊ կերի վասն փոքու հօտին, որոց պարգեւեալն էր առաւել ՚ի յԱստուծոյ, այլ մանաւանդ վասն արքոյ աթոռոյն՝ որ հան֊ դերձեալ էր կործանիլ իսպառ, և վասն բիւրաւոր բազմու֊ թեան հաւատացելոց, որք մատնելոց էին ՚ի կերտակութ սրոյ։

Փութանակի հասեալ մնհաշունչ լրոյ ասպաժոյժ աղետից ՚ի կոստանդնուպոլիս, հանդերձ գրովք երանելոյն, ապշու֊ թիւն կալաւ զիշխանաւորս տգղիս, և բարեջան փութով գօ֊ ղոսի պատրիարքին՝ զերազանակ հնարից ազատութեան նորին և բազմութեան հաւատացելոց ՚ի խնդիր եղեն գտանել։

Ատ էր առեանել զգթութիւնն Աստուծոյ և զառաջ մար֊ դասիրութիւն նորա, զի որ ոչ ննջէ պահապանն Իսրայելի Քրիս֊ տոսիս, գթութեամբ հայեցաւ ՚ի մեացուածս ժողովրդե֊ ւան իւրոյ, և զերծոյց զնոսա ՚ի մահարեր վտանգէն։

Զի ինքն իսկ Գրիգոր Զէլէպի Տիւզեան եղեալ ՚ի ժողովոյ պատրիարքարանին յորում խորհեցան ամենեքին երթալ առ մի մի ՚ի նախարարացն արքայի, գնաց և ինքն ՚ի պալատն արք֊ քայի, և բազմօք ապացուցութեամբ վկայեալ զանաւորու֊ թիւն հայոցողիսին և զառաջ ամբաստանութենէ թշնամեաց, զիջոյց զբարկութիւն արքայի, սոյնպէս և այլք ոմանք յիշխա֊ նաւորաց ազգիս, քաղցրացուցին զսիրտ աւազակապետին արք֊ քային, ինքեանք ազգովին երաշխաւոր լինելով վասն անաո֊ ղութեան նորին հանդերձ պատրիարքին Գօղոսիւ։

Ուստի և հրամայնաւ արքայի առաքեցաւ հրովարտակ յարքունի դրանէ ՚ի Գերմանիկէ քաղաք, և ածին զեպիսկոպոսն ՚ի կոստանդնուպոլիս, և տարեալ առ Բէլիզ եպիսկոպոսն և առ վոհանաւորդն եպատրոնին՝ և առ այլ մեծամեծս, հարցին քըն֊ նութիւն զայդր առաքելոյն, զորմէ լուեալն էին, և ծանուցեալ՝ և

Digitized by Google

ստուգեաց զանմեղութիւն նորին առաքելոյն առ պատրիարքարանն կալ ՚ի Քեալ առ ժամանակ մի՝ յուսադրելով զնա աղաչել ՚ի վտանգէս, և առնուլ զհրովարտակ ներողութեան, և դառնալ անդրէն ՚ի կիլիկիա։

Յետ աւուրց լինչ կոչեալ վերստին ՚ի դուռն արքունի, հրամանաւ արքայի յորդորեցին զկաթողիկոսն աւազորեարն արքային, զի ինքն սա յամէ հատուսցէ տէրութեանն զհարկն ջէլիթունցւոց յիսուն հազար դահեկան, և ինքն ժողովեսցէ և առցէ ՚ի նոցանէ։

Եւ պատասխանի կաթողիկոսն և ասէ, նոքա արք ապըստամբք են և ոչ հնազանդին, ոչ տէրութեան հրամանի ձերոյ և ոչ իմում անարգութեան, ոչ կարեմ զայդ առնել, և ոչ վասն նոցա հատուցանել ինչ։

Յայնժամ ասեն աւազորեարն, մեք հաճեացուք զարքայ, և քան հազար դահեկան սա յամէ հասոյ վասն նոցա զվարձս հարկի նոցա։

Ասէ կաթողիկոսն, և ոչ մի դրամ վասն այնց ապստամբաց յանձն առնում տալ արքայի, ես զիմ և զիմոյ վիճակի հպատակաց քոց՝ սա յամէ հատուցանեմ տէրութեան ձերում ընդ պահանջեալ հարկն արքայի, որպէս և հատուցեալ եմ մինչեւ ցայսօր, և վասն նոցա և ոչ մի փող կարեմ հատուցանել։

Լուեալ զայս ամենայն մեծամեծացն աթաբայի՝ և իրաւացի կշռեալ զբանս նորին, գրեցին առ արքայ զամենայն, և ընկալեալ յարքայէ զհրաման, եւտուն հրովարտակ ներողութեան, զի դարձցի անձնաս յաթոռ իւր։

Յայնժամ եղեւ ուրախութիւն մեծ ազգիս, և կամեցան, զի ժամանակ մինչ մնասցէ երանելին առաջ ՚ի կոստանդնուպոլիս, և յամենայն եկեղեցիս պատարագեսցէ և օրհնեսցէ, և ապա գնասցէ յաթոռ իւր, և վասն այսր արգելին զնա ՚ի գնալոյ, և մնաց առաջ ՚ի կոստանդնուպոլիս։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ծաղադա կործանման տանն Տիւզեանց, եւ բանի մի հաբանութեան հայոց ընդ Հռովմէական Հայս։

(1819) Ի ամին ամի յամենեքեան օգոստոսի 29 չարաչաստ և աղետալի գիպուած պատահեաց մեզ։

Գանդի հայրենասէր ազնուականքն Տիւզեան՝ որք ՚ի նախնեաց ՚ի յաջորդս տոհմի իւրեանց հրովարտակաւ մեծազօր թագաւորացն Օսմանեան՝ սեպհականեալ էին զարքունի վաղեմի գործակալութիւն, այժմ ՚ի դրացանէ Հալէպ էֆէնտի անուն ոմն երիտ թշնամւոյ քրիստոնէից, իբրեւ բազկագումար դրամոյ պատրաստեալ և անհաւատարիմս ՚ի գանձն արքային՝ եղան ՚ի բանտի ՚ի տալ ղհաշիւ։

Երեւելի իշխանք ազգիս ոչ միայն անհաւատութեամբ գինեցան ՚ի պաշտպանութիւն պանծալի տանն այնորիկ՝ կալով առ տէր թութեանն երաշխաւոր պարտուց նոցա, զորս դիւրաւ կարէին վճարել, եթէ ելանէին ՚ի բանտէ ազնուասերտունդ պայազատքն։

Վ աստուոյ նախատարք թագաւորին գնացին ՚ի տունս նոցա և ամենայն մերձաւորաց նոցին, և գինչս և զսառայուածս նոցա եւտուն յաճուրդ հանել վաճառել, և զպարտիս նոցա ընուլ ՚ի գանձն արքունի։

Եւ ահա տեսին ՚ի տունս ամենեցուն նոցա յատուկ օձնեակս զարտասրագտմատոյց խորանի, որ դէմ ընդդէմ ներհակ է կրծոյից ցաճկաց, և մահատպատ կացուցանէ իբրեւ զհայհոյիչս զանի իւրեանց՝ որ առանց հրամանի եկեղեցիս կառուցանէք։

Վ աստուոյ զզգեստս զպատարագի և զպատակերս և զայլ սնօթիս սրբութեան՝ զորս գտին անդ, զամենեսին առաքեցին առ պատրիարքն մեր, որք էին եօթն բեռինս։

Եւ պատուիրեցին իբրեւ ՚ի գին նոցա հատուցել ՚ի հռովմէական հայ ժողովրդոց հազար քսակի դահեկանս, և տալ ՚ի փողերանոցն արքունի, և նա արար։

Digitized by Google

Եւ ՚ի հակառակ կերպ ՚ի յաւուր տոնախմբութեան հօրանա-
սուն երկու աշակերտացն Քրիստոսի, երեք եղբարքն բարե-
յիշատակք Գրիգոր, և Սարգիս՝ գլխաւորեցան առաջի մեծի
դրան արքունի պալատին, և միւս եղբայրն Մինաս և հօր-
եղբօրորդի նոցա Մկրտիչ, կախեցան ՚ի պատուհանէ ծովե-
զերեայ յարկի իւրեանց յԵնիգիւղ։

Ղեքաց ազգն համօրէն ընդ մահ պայազատացս, այլ ՚ի գան-
տիլլի ՚ի տան Մնատունի Տաւուտեան ինչոյա կազմէին թրնկըր-
եան Յակոբ և Յակէփ, Գրիգոր և այլ հարազատ
որդիք Գոլճեան քահանայից ընդ մահ պաշտպանաց Աբբայ-
եան ուխտին։

Իսկ մնացեալ երեքին եղբարք նոցա կարապետ և Յակոբ
և Գօրգս՝ աքսորեցան ՚ի կեսարիա, և Ալեքսանեան Յովհան-
նէս քեռայրն Տիւզեանց և երեք եղբարք նորա ՚ի Նիկոմէ։
Զամչեան Յովսէփ ՚ի Մխոիլլի կղզին, Մարիանէ կին Հօրեղ-
բօր Տիւզեանց՝ հանգերձ որդւովք իւրովք ՚ի Յոանքէոյ, Ազնա-
ւուրեան երեք եղբարք յԻլիմեա, և Փիւշիւկ Յովհաննէս ՚ի
Հռոդոս, Թընկըրեան Յարութիւն և Ամանաս ՚ի կիպրոս, և
հայր Ստեփանոս վարդապետն՝ որ գտաւ ՚ի նմին գիշերի ՚ի
տանն Տիւզեանց, աքսորեցաւ յԻլիմեա։

Բացաւ պատրուակն գաղտնի, և ակն յայտնի ծանուցաւ
տէրութեանն, թէ անձնիւր Հռովմէական հայք ունին ՚ի
տունս իւրեանց զեկեղեցիս, և չեն ընդ Հայս միաբան։

Ուստի սաստիկ հրաման առաքեաց առ պատրիարքն մեր
բառնալ զայս բաժանումն, զի մի է մեզ ասէ ծանօթ ազգն ող-
ջոյն, և զոր անհնազանդ գտանին ինքեան՝ ծանուցանել ՚ի
դուռն։

Ածդ արքունի ճարտարապետ Գրիգոր աղա, և Պէզճեան
Յարութիւն աղա, որ առաջնորդութեամբ Գրիգոր աղային յա-
ջորդեաց գտղի Տիւզեանց ՚ի փողերանոցն, ոսքա անզուգա-
կան սիրելիք էին միմեանց, և միախորհուրդ և միասիրտ գը-
տան յայս գործ եւս։

Քանչ խելամուտ էին անցից և մտաց երկուց կողմանց և
գիտէին, թէ քանակուսութիւն հովուաց և առաջնորդաց է,
որ զպարզամիտ գառինս միակ հօտին Քրիստոսի ՚ի միմեանց

հաղորդակցութիւնէ խորշեցուցանէ. վասն որոյ միայն կալան ազգասէր բարոյիւք և երկիւղած սրտիւք յեկեղեցւոյն Քրիստոսի վերկպատակութիւնն բառնալ։

Եւ նախ Թախանձէին զպատրիարքն մեծի մայրաքաղաքին՝ զՊօղոս արքեպիսկոպոսն քաջախորհուրդ, զի հովուական ցպողիս յուշիկ ի բաց խրատուցեալոյն զհետ ընթացից, մեղմաձայն սուրեցէ, ի շրթունս բարբառեցի, սրինգ հարկանիցէ, դարձուցանել զնոսա ի հօտ խաչանց իւրոց։

Արդարեւ Ռոբովամ արքայ խստապարանոց դուաւ առ ժողովուրդն ի հնումն, և զի՞նչ օգուտ գործեաց թագաւորութեան իւրոյ և հաստարակութեան։

Եւ որ ի նորումս գաւազան երկաթի առին ի ձեռին, և փայլատակեցան կայծակնացայտ բարկութեամբ ի վերայ ժողովրդոց, արդեօք ամբողջութեան հայրենի ազգիս նպաստաւմնոյց գոլան, ոչ բնաւ, զի ոչ միայն զգրուեալսն խոպանավարատեցին, այլեւ զժողովեալսն մոլորեցուցին։

Արդ վերոյիշեալ արքունի ճարտարապետ Գրիգոր աղա և Յարութիւն աղա Պէզճեան իշխանքս հայրենասէրք, խորհրդակից ինքեանց գտին և զձանիկ աղա հատավաճառ եպարգոսին, և զՀաճի Յովհաննէս, և զՅարութիւն աղա, և զզ Յակոբ աղա Մանանեան, այլեւ սաւոկութեամբ բանից ըսպառնացան Աշնաւուրեան Կարապետ աղային՝ որ էր հատավաճառաց վերակացու և համախոհ պատրիարքին, զի անխարդախ լիցի ի բանս, և ի գլխաւորել զազգային միաբանութիւնս ամենայն հաւատարմութեամբ տնօրինեսցէ։

Ի սոյն միտս և ի խորհուրդ բազումք ի բարեսիրաց ազգիս վառեալ էին բարենախանձ փութով։

Եւ որք ի նոյն առ անդիտութեան աստղութեամբ բերէին, սիրայորդոր յօժարութեամբ կամակից եղեն և նոքա։ վասն որոյ յամենեսեան ի նոսա պտուղ հոգւոյն, սէր խնդութիւն և խաղաղութիւն թագաւորէր, և արգասիք չարեաց մնահաբերին՝ աստղութիւն և թշնամանք այլովքն հանդերձ տեղի եռաւն։

Բայց եռ դարձայց ի կանխագիտոյց տեղեկութիւն զսաթուցեալոյն ի մէնջ վարդապետաց բաժանմանէ ի կարգս և ի

Digitized by Google

կրօնս ։ զոր կարեւորագոյն են յարաձիկայ պատմութիւնս հեղինակալ իմացուին ։

Առաջին երեւելիքն են Գոլէհեանք , որք ունին գաղթած ի Հռոմէ որ ի կէտս Լատինաց Գոթիա անուանեն , որք գնացեալք մանկունք ոսանք հայկազունք , ուսանին զերգ ի վեղայ գիտելիս ինչ բարբառոյն Հայոց և Հռոմէացւոց , և ձեռնադրեալ կուսակրօն քահանայ՝ ապաստան հրամանի քարոզութեան , և գնան աստ և այլուր , և սոքա անուանին Տէր ։

Երկրորդն են Դրեսթէանք , որոյ թիւն է այժմ ի վիճնա , և առաջնորդ նորին էր Ծատուր անուն ոմն , որ յաղագս խռովայոյզ բարուց իւրոց բաժանեցաւ ի խաղաղապէր միաբանութենէ Մխիթարեան , և գնացեալ ի Հռոմ , եղեւ եպիսկոպոս ի վերայ վիճակին Էջմիածնի , և ունի աստ զոմանս ի միաբանից իւրոց , որք վարդապետ անուանին ։

Եօթողն են Իւրանեանքն , զանգի անդ բնակին Ճնաստանս , ուր նստի ոմն Կաթողիկոս անուանեալ , և կրօնիւ հինգով և կամոգիկիւք անուան իւրոյ՝ ապա թէ նմանեալ ի վիճակս իւրոց որք են Բերթա , և Եղոկիա , եւայն ։

Եւ սա ունի աթոռ միաբանս , որ Հայր անուանին , և ծրագնաւոր անուանեալ պարծին ։

Երդ այս երեք միաբանութիւնքս մեծանց հանգերձ գործով , և ի խռովասիրութեան մի քան զմի աչառութիւնքն , առ հասարակ Գոլէհեանք անուանին աստուածոց ։

Ողք յազգէս Հայոց ջոխք են , և յոգտաւէտ զգոյնքն ի վերայ ազգիս ։

Տգէտ են կարեւոր ուսանելոց , այլ պարծին խոչ պարծանս միտ հեռեւորագոյն իւրեանց վիճակ աստուածաբանք ։

Այս են ուսուցմունք նոցա , թէ Հոգի հերետիկոս են և հերձուածող , ոչ հնազանդ են պապին , ուստի արտաքոյ են ի փրկութենէ հոգւոց ։

Եւ այսպիսի քանիք զպահանջեցեալ զեւխիկս մեր հեռուստեն յազգիս միաբանեալ ։

Վասն զոյց երեւելի և գաղտնի ժողովոցն ճեծաց եալ են , որոց մեծ մասն գաղտուածք են ։

Աղոց Գոլէհեան կարգաւորեալ գոյ ի նմանի տեղ ի քերա

Digitized by Google

ոմն հայկազուն եպիսկոպոս, զոր Հայ բարբառով Գերապայծառ կոչեն, և Լատին բառիս վիքար, այն է վէքիլ կամ փոխանորդ, և ձեռնադրէ քահանայս ի տան իւրում՝ առեալ հաւանութիւն ի Լատին եպիսկոպոսէն որ էՊերեսփոխան հայ բազմութին Հռոմայ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս Ջատագովութեան Աբբայեան հարց զհակեղեցւոյն Հայոց։

(1819) Ի և այլ միւս կարգ անուանեալ Մխիթարեան միաբանութիւն քաջածանօթ բոլոր Եւրոպիոյ, որք ունին ի վենետիկ վանս մեծանուն և երեւելի, բարեկարգ և բարեկրօն։

Եւ նորին միաբանք ոչ պահաս քան զՀարիւր, որք Հայր անուանին և զանազան գիտութեամբ պերճացեալ են, լեզուագետք և բարեհանճարք, որք ի պայծառութիւն հայրենի աղգին անդադար աշխատասիրեն թարգմանութեամբ մատենից, և ինքնահիւս հեղինակութեամբ և տպագրութեամբ բազմապատիկ գրեանց։

Որք նախանձախնդիր էին հնաւանդ սովորութեանց և ողջամիտ ասացուածոց նախնի սրբոց հարց Հայաստանեայց եկեղեցւոյ, և որոց օտարազգին գտանին ի լուսահետ շաւղաց նոցա՝ բանիւ և գրով հակառակէին, որպէս յայտ է՝ որոց բարեբեր մտօք արձակին յընթերցանութիւն տպագրեալ մատենից նոցա։

Եւս առաւել՝ երբէք հանդիպեալ էցեն վահանին հաւատոյ, (որոյ հեռուստօտեան միայն գտանի առ մեօք՝ հնարիւք գէշճեան ցարութիւն աղային անցեալ ի ձեռս մեր ամօք ինչ յառաջ) որ առաւել տեղեկագոյն կացուցանէ զբարեսէր վերծանողս Աբբայեան հարց գովնելի մտաց։

Գտանէին ի մայրաքաղաքին իբրեւ քսան վարդապետք ի

նենգամիտ վարդապետին՝ ոչ միայն արգել կարգաւորաց երբ թալ, այլ և անհնարին սպառնացաւ եպիսկոպոսին, զի յետս կոչեսցէ զառաջին հաւանութիւն իւր։

Իսկ եպիսկոպոսն անճարացեալ չկարաց զդէմ ունել, քանզի գիտէր, թէ յանձինս նոցա բազմեալ է գահն առաքելական, և սուրբ ժողով հրաւարակեաղն. և թէ ոչ 'ի հաճոյս նոցա ազաւաղեսցէ զիրաւունս բանից, տեղաւարարսի թափին 'ի վերայ իւր նեռք բանից և սէգ մոռանալեաց 'ի հռովմայ։

Աստի զոր վճռեաց ըստ իրաւանց 'ի ժողովս, առանձինն 'ի չնորհաւոս սոցա ունայնացոյց։

Այս բնաբոյս սովորոյթ աստուածաբանից և եպիսկոպոսաց հռովմայեցւոց է, որ զողջմտութիւն հաւատացելոց խանգարէ, զհանդարտութիւն ազգաց ալէկոծէ, զկարծիս հերետիկոսաց արծարծանէ։

Քանզի գործունեայ ճշմարտութեան անուանին, բայց մբռտահաճոյ մարդեղութեամբ 'ի կողմն կործանին զրպարտչաց և չարախօսաց, քան իրաւասիրաց և բարեխօսաց։ Ողորկան ընթացք իւրեանց թէ և ճշմարտութեան երեւեսցին 'ի դէպ, այլ 'ի ճշմարտութենէ են տարագէպ։

Բայց արդարակորով Աբբայեանք՝ հայեցեալք 'ի սիրալիր հրաւէր ազգին, և երկուցեալ 'ի ճնասու է ժողովրդոց իւրեանց յայտնապէս ասացին։

Վասն եմք յառաջին հրամանն եպիսկոպոսին և իւրոյ ժողովոյն, որ ըստ իրաւացի վճռոյ հրամայեաց մեզ դնալ. և զի չէք յստուկ արգելք 'ի հռովմայ վասն երթալոյ, ուստի ունիմք վճիռ հաստատուն 'ի ձեռին գնալոյ և խօսելոյ ընդ հայս հրամանատ եպիսկոպոսին, և վկայութեամբ այոչափ վարդապետաց լատինացւոց, որք ոչ կարեն յուրասաս գալ։

Աստի ոչ ունկն մատուցանեմք վերջնումն արգելմանց՝ զոր 'ի սադրելոյ գոլեճեանց արար, որ վտանգաւոր եւս է ժողովրդոց մերոց. և զայս ասացեալ դնացին նոքա յԵկեղիսաբու։

(1820) Յառաջ քան զամիսս ինչ երեւ նորոգութիւն եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի 'ի խումխաբու, որոյ օծութեանն հանդէս եղեւ մեծաշուք հանդիսիւ, քանզի զհարաւային կողմն այն է՝ զեկեղեցին վանանց էօծ տէր Եփրաիմ կաթողի-

Digitized by Google

կան Սոց, զմիմեան եկեղեցին Պօղոս պատրիարք, զհիւսիսա-
յին կողմն կաշեցեալ պաղչէ ժամ էօծ Ղատուածատուր եպիս-
կոպոս, և զդաւիթ եկեղեցւոյն Դիոնեսիոս եպիսկոպոս, յա-
ռաջներորդ ժամէ զիշերոյն սկսեալ մինչեւ ցչորրորդ ժամ
յաջորդ աւուրն, ՚ի փետրվար 25, յամի տեառն 1820։

ԳԼՈՒԽ ԻԶ

Ցաղագս աքսորանաց եւ փախստեան Գալիճեան վարդապետին, եւ
գալստեան նոր Մեծ Պատրիարքին հարց եւ խոհելոյ նոցա ընդ վարժա-
պետս մեզ վասն խնդրոց կրից։

(1820) Ա՚ԱՀԱՒ վարդապետ զոր ՚ի վեր անդր յիշատա-
կեցաք, տունէր Թուղմ ՚ի պատրիարքէն հնդօրեայ ազատու-
թիան, չընդհատ ժողովել զկարգաւորսն։ Վասն որոյ առեալ զնո-
սա երեր յԵՆիխասիուն ՚ի 23 յունուարի։

Եւ ոչք եկինն, էին Հ. Գրիգոր Գալպակրանեան, Հ. Թա-
դէոս Ալիքեան, Հ. Գերմէն Ալբայեան, Նաեւ Հ. Պօղոս
բժիշկ։ Ծուղի անկան ընդ նոսա տէր Սահակ և տէր ա-
թիւն Գրեհասեանք, այլ ՚ի ճանապարհին խոյս տուեալ ՚ի վա-
խուստ գաղձան, քանզի յետս կոչեցան ՚ի Գալիճեանց։

Արդ մինչ այսոքիկ այսպէս լինէին, եկին ՚ի դրանէ հրա-
ման առ պատրիարքն զտանել զմեզ քահանայս տանն Ծիւղ-
եան և մերձաւորաց նոցա, զի աքսորեսցին։

Եւ պատրիարքն փութացեալ շտապաւ զիշխանս այնու կոզ-
ման, զի զմ և իցէ մեզ քահանայս չիւրեանցմէնոց գտեալ
տացեն։

Եւ նոքա փութացեալ, խաբէութեամբ հրաւիրեցին ՚ի
տունս իւրեանց զքահանայսն՝ որպէս թէ վասն խոստովանու-
թեան ինչ եթէ կոչումն նոցին։ այլ զիշերայն ազդ արարեալ
ժամկոչացն հայոց հանին ՚ի տանէն, և իստուն ՚ի ձեռս նոցա,
և առաքեցին ՚ի պատրիարքարանն, և ինքն ամենայն նոցա

այսքիկ։ Ընտան եւ ախոյեան վիքար խուբանց, Քայիշքուշաք ճգնաւոր կոչեցեալն, Պօղոս վարդապետ Գաղատացի Մարուշ կոչեցեալն, Պետրոս վարդապետ, և Յովհաննէս վարդապետ, ընդ սոսա գոսա և հայր Դաւիթ խոհեմաբարոյ վարդապետն Աբբայեան, հինգն Գոլճեանք, և մին այս Աբբայեան, և սա կամովին յօժարեցաւ երթալ, ասելով, եթէ չէ լցեալ թիւս աքսորելոյն, ես կամաւ դնամ, զիս առաքեսջիք։ Ընտ միայն յԱբբայեանց Հ. Սրապիոն, և ոչ եկն ընդ նոսա։

Գանգէ ընտանիք Տիւզեանց յանձնեալ եղեն պատրիարքին յօթե հնգելոյ" գոսունս նոցա։

Ընդ նոսա էին և արու սպասաւորք, և Հ. Ստեփանոս, որ գոսաւ յայնժամ ի սան նոցա։

Եւ զամենայն զնոսա եւս պատրիարքն Հանդէպ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն ի սան միւսմ, և զդուշանայր պահապանօք։

Եւ զհայր Ստեփանոս առանձինն ի միւսմ խցի պահէր իբրեւ ի բանտի։

Յաւուրսն յայնոսիկ Հ. Սրապիոն երթալ գայ առ պատրիարքսքանն, և տա ժամն ոչ գոսանի անդ վէքիլն, և բազմի ի յաթոռոյն։ Հարցանեն ցնա վարդապետքն, և ասեն, դու ոմ ես և վասն էր եկիր այսր։

Եւ նա պատասխանէ, վարդապետ եմ ես ի վանաց սրբոյն Ղազարու Հ. Սրապիոն անուն, և եկի առ խնդրել հրամանս երթալ յայցելութիւն կարդակից եղբօր իմոյ Հ. Ստեփանոսի։

Յայնժամ ոմն ի վարդապետացն՝ որոյ անուն էր Պօղոս վարդապետ Գաղատացի, և էր տեղապահ փոխանորդի պատրիարքին, և ունէր թիւնամութիւն մեծ անդստին ի մանկութենէ իւրմէ ի Գաղատիա ի վերայ Հռովմէական հայոց, հանէ ցնա արտաքոյ սենեկին, և ինքն դնացեալ ի ներքս ելանէ առ Պօղոս պատրիարքն և ասէ, եթէ ի Հռովմէական հայոց կարգաւոր ոմն եկեալ յանդիմանէ զմեզ անվայել բանիւք և ասէ, թէ դուք լինէիք ուղղափառ և բարեկրօն, զոչղղափառ վարդապետան ոչ տայիք ըմբռնել և ի բանտի արգելուլ, բայց զի անմահան էք յուղղափառութենէ, առանց խղճի առնէք զոր ինչ և կամիք։

Digitized by Google

Եւ պատրիարքն լուեալ զայս, հրամայէ դնել զնա ի բանտի, մինչեւ եկեսցէ փոխանորդ իւր, և քննեսցէ զայն։

Եւ Դաղատացին տեսեալ, թէ անպատիժ ունի զերծանիլ ի ձեռաց իւրոց, զայրանայ առաւել եւս, և ածեալ առաջի վէքիլարանի՝ տայ սկսել ղառս նորա յաղախան, և հարկանեն նմա բիրս իբրեւ եօթանասուն։

Իսկ նա ինքն եղկելին յետոյ ի գանակոծ ոտիցն կանգնեալ ի վերայ՝ հարցանէ զիրաւունս բանից, թէ զի՞նչ էին իմ յանցանքս։

Իսկ Դաղատացին որ անօրէնութեամբ գործեացն զայն, և բերան իսկ բանալ ոչ ետ նմա, և տարեալ արկին ի բանտ։

Բայց կարնեցի Յակոբ աղա՝ որ ծանօթացեալ էր ի կալրին Հ. Սրապիոնի, և ի բազում իրս մանաւանդ ի չինութեան դպրոցի գործակցեալ նմա, և սիրէր զնա ոչ սակաւ, իբրեւ զայս ամենայն լսէ, փութացեալ գայ առ պատրիարքն, և աղաչեալ հանէ զնա ի բանտէ, և պատրիարքն առաքէ յաքսորս զԴաղատացին զայն ի հայրենիս իւր ի Դաղատիա։

Ադդ սա զի գանակոծ հարուածով վշտացեալ էր ի վերայ վարդապետացդ մերոց, այժմ ոչ ընդ միաբանս իւր միաբանեցաւ գալ առ մեզ, այլ եկաց մնաց յեկեղեցիս Լատինացւոց։

Սահակ վարդապետ երթայ ի սկզբան փետրվարի առ Ստեփանոս եպիսկոպոսն Ադդէրեան, որ երբեմն և վիքար էր, և յայնժամ թագուցեալ կայր, և ի մտի եդեալ էր գաղտնաւարկել ի Թրեստ, ասէ ցնա, ընդէ՞ր ոչ գաս ընդ մեզ, յորոց կասկածիս, մինչ ամենայն իշխանք Հայոց պաշտպան կան մեզ։

Որում պատասխանէ Ստեփանոս եպիսկոպոս թէ և ես ոչ սակաւ քան զձեզ ցանկացող եմ միաբանութեան ազգիս, բայց երկնչիմ ի գոլեցւոց աստի ինքնին ելանել և գալ։ Բայց եթէ իշխանք Հայոց կանխեալ խնդրեսցեն զիս ի մերայնոց, և ստքա ստիպեսցեն զիս գնալ, յայնժամ փութացեալ գամ։

Սահակ վարդապետ զայս քան ծանոյց Հ. Մեսրովպայ, և նա հաճեցոյց զիշխանս մեր, և ետ խնդրել յիշխանաց այնու կողման, զի առաքեսցեն զՍտեփանոս եպիսկոպոսն։

Եւ նոքա պատուիրեցին նմա գնալ, բայց ոչ երբէք՝ կուսակից լինել և միտել ի կողմն Հայոց և Ադբայեանց։

Digitized by Google

Եւ նորա գնացեալ՝ զբռնադատութիւն իշխանաց իւրոց՝ եպիսկոպոսին Լատինաց յայտ արար, և էառ ՚ի նմանէ հաւաստութիւն լռելեայն։

Սահակ վարդապետ և այլ ոմանք յիշխանաց առեալ բերին զնա յԵչմիածին։

(1820) Արդ յայսմ միջոցի՝ յաւուրս պահոց, զօրականքն եչմիչէրի ձայնեալք՝ զոր միանգամ տեսանէին ՚ի հայոց ձուկն դնել կամ ուտել, կալեալ զնա տանէին ՚ի պատրիարքարանն, և վճիռ պատրիարքին ակամայ տայր զօրականին դահեկան մի խոժոռեալ դիմօք, և ղայրն յանդիմանէր վասն յայտնի զձուկն ուտելոյն, և արձակէր ՚ի բաց։

Եւ զայս բաղմարդիւն չհասվաճառ լիմն արարին իւրեանց, զօրականքն, որք զհետ լինէին գտանել զի՛ և իցէ հայ աղգաւ, որ ուտիցէ և գնեսցէ ՚ի շուկայս զկերակուրս անուտելիս մեզ յաւուր պահոց։

Ալ Պօղոս պատրիարք որ քաջախորհուրդ հեռատեսութեամբ իւրով դիտէր և մտածէր զվախճան ամենայն իրաց, կոչեաց առ ինքն զՅարութիւն աղա Պէշճեան և խորհեալ ընդ նմա, կոչեցին զՅարութիւն Շամպէօրէկեան, որ ունէր երկու մուտ ՚ի դուռն զօրապետին, և ոսկերիչ նորին էր, ՚ի ձեռն նորին ազդ արարին եչմիչէրի աղասի զօրապետին զի հրամայեսցէ ամենայն զօրականաց՝ յայնմ հետէ կալնուլ և ոչ զոք վասն այնպիսի իրաց։

(1820) Ցամսեանն յունվարի խորհրդով իշխանաց մերոց պատրիարքն կոչէր մի առ մի ՚ի Հռովմէական Հայ ժողովրդոց գերեւելի իշխանս և զմիջակայնն արհեստաւորս, և առաջարկէր նոցա զբան միութեան։

Եւ զի ահ սաստիկ պաշարեալ էր զնոսա, բաղումք դասլին ՚ի հաւանութիւն, և ստորագրեին պայմանագրին, որ ունէր օրինակ զայս։

«Ի սրբոյն Դրիգորէ Լուսաւորչէ մերմէ սկսեալ մինչեւ
» ցարդ, զոր ինչ ընդունի Հայաստանեայց ուղղափառ սուրբ
» եկեղեցին, ընդունիմ և ես, և զոր ինչ մերժէ, մերժեմ և ես.
» ՚ի հաստատութիւն գայր ողջմիտ դաւանութեանս յօժարա-
» կամ կամօք կնքեցի և ստորագրեցի ես (այս անուն) եւայլն»

Digitized by Google

Բայց և բազումք դժկամեակ գտեալ առ ոմն՝ ոչ հաճէին ստորագրել։

Հայր Մեսրովպ՝ այր մեծախորհուրդ և բազմահանճար առ շահելոյ զերկաքանչիւր կողմանս՝ հաւանեցոյց զիշխանս մեր, զի լուսաւորչեան հանդանակին անպատում և անյապաղ դրեացն ՚ի թղթի, և նմին ստորագրեցէք հաստարակութիւնն։

Եւ յայնժամ առանց ինչ դիմադարձ բանից դային և ստորագրէին ամենեքեան։

Ի նոյն աւուրս ՚ի միում գիշերի ժողովեցան իշխանք մեր առ Հ. Մեսրովպ վարդապետ, և նա զամենայն խնդիրս՝ յորոց վերայ լինէին վէճքն՝ մի ըստ միոջէ յայտ արար։

Անդ էր և փեշտըմալճեան Տիրացու Գրիգոր մեծանուն վարժապետն, և հաճութեամբ ժողովոյն գրիչ ՚ի ձեռին ունէր նակէր ՚ի թղթի, և միաձայնութեամբ զբանս հարց ընդհանուր եկեղեցւոյ՝ ընտրէին և բերէին ՚ի վկայութիւն առաջարկութեանց իւրեանց։

Եւ ընդ առաւօտն Գրիգոր խալֆա, հաճի Զէլէպի, ձանիկ աղա, Մանանեան Թոկոթ աղա, և Աղնաւուրեան կարապետ, առին զթուղթն զայն, և դնացին ՚ի պատրիարքարանն, տային ընդ ինքեանս և զԳրիգոր վարժապետն, զի թէ վասն բանից թղթոյն դէպ ինչ լինիցի, խօսեցցի։

Մտեալ իշխանաց առ պատրիարքն, պատմեն նմա զխորհուրդ իւրեանց, յետոյ յերեւան հանեն և զթուղթն, զոր ՚ի գիշերին գրեալ էին։

Ուր երբեւ յաղագս բոլոմանն Հոգւոյն սրբոյ և յՈրդւոյ բանք եղեն, ասէ պատրիարքն, է՞ ոք ՚ի հարց մերոց սրբոց այդպէս գրեալ կամ բացատրեալ. ես ընդունիմ և ասեմ, թէ Հոգին սուրբ հոսի ՚ի Հօրէ և յՈրդւոյ, կամ առնու ՚ի Հօրէ և յՈրդւոյ, որպէս և հարքն մեր ասացեալ են, բայց ոչ ընդունիմ, թէ Հոգին սուրբ բղխի ՚ի Հօրէ և յՈրդւոյ, զի բղխումն նշանակէ զծագումն յառաջին սկզբնէ, և յայնժամ լինին յերկրորդութեան երկու սկզբունք։ Նա զի և լաւն ինք Հոգին Քրիստոս ասեն, որ նշանակէ, Հոգին յառաջագոյն կամ հոսի կամ առնու, և ոչ թէ բղխի։

Digitized by Google

Ասած եթէ Լաւինք բղխի ոչ ասեն, զմեզ ընդդէմ ստիպեն բղխի ասել։

Ապա որպէս ասացեալ են սուրբ հարք Հայաստանեայց եկեղեցւոյ, զնոյն ասեմ և ես ըստ նոցին բառից, որպէս ասացեալ է և Շնորհալի սուրբ հայրն մեր, թէ 'ի հօրէ բղխութիւն Հոգւոյդ ոչ քննեցան, և հոսման յիմարութիւն ոչ պատմեցան։

Զայս այսչափ ընդունիմ և ասեմ, և այլովք բառիւք ոչ կարեմ բացատրել, և չունիմ հրաման առաջի բղխի բառին դնել զբառն և յիմարութիւն. զի հաւատամ ես, թէ Հոգին սուրբ բղխի 'ի հօրէ և առնու յիմարութիւն ըստ սուրբ Շնորհալւոյն որպէս ասէ, բղխութիւն հօր անքննաբար, առող յիմարութիւն անճառաբար. զայս գիտեմ ես, և զայս հրամայեմ դրել. աւելի ինչ բացատրել արժան չէ։

Զայս հրահանգ առեալ նոցա, առաքեցին զվարժապետն յեղնիխափու առ Հ. Մեսրովբ պատմել նմա զհրաման պատրիարքին, զի այնու եղանակաւ լրացուսցեն զխօսս իւրեանց, և մի' ընդունայն վէճք լինիցին։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս խօսելոյ Աբգարեան հարց ընդ վարժապետացս մերոց վասն մասանցն հաւատոյ, զորոց էին խնդիրք։

(1820) Այր յառաջ քան զայս ամենայն հրամանաւ արքունի բերեալ էր 'ի կոստանդնուպոլիս՝ սրբազան հայրապետ տանն կիլիկիոյ կիրակոս կաթողիկոս, որ և յամբաստանութեանց բդեշխին Բերիոյ իրաւացի քննութեամբ ղերծեալ, առեալ էր ներողութեան հրովարտակ դառնալ 'ի սուրբ աթոռն իւր։ Բայց իշխանք մեր ղբազում ժամանակս պահեցին աստ։

Digitized by Google

Մի՝ զի յամենայն եկեղեցիս մայրաքաղաքիս պատարագեսցէ, և նպաստ ինչ հաւաքեսցէ ՚ի ժողովրդոց, և միւս՝ զի ՚ի գործ ցանկալի միաբանութեանս գտանիցի և մի ոք վհատիցի կաթողիկոս։

Ա.րդ սա ինքն աղնուասերումնդ և աղնուաբարոյ գոլով, ոչ սակաւ օգուտս գործեաց համազգային միաբանութեանս։

Քանզի զնւր տնկակից ճշմարտասիրութեանն ղհանդերձ գօտեպինդ զգեցեալ՝ ուղիղ խորհրդով ողջ և անարատ նահատակեր ՚ի բանս ճշմարտասիրաց, և զիմագրաւ հանդիսացայրը, որոց ղարտուղի խուսափէին ՚ի ճշմարտութենէն։

Ա.րդ որովհետեւ հարկ եղեւ ընտրել զքանի մի գիտնականն անձինս ՚ի մերայնոց, զի խօսեցին ընդ Ա.բբայեան վարդապետս ՚ի վերայ այնց խորհրդոց, յորոց վերայ լինէին մինչեւ ցայժմ տարապարտ վէճք և հակառակութիւնք։

Եւ ընտրեաց Պօղոս պատրիարք զտէր Մեսրովպ գիտնական քահանայն խուսիսափուի, և զտէր Բարթողիմէոս իւսկիւտարու, և զՓազուր վարժապետ ոմն, որ թէպէտ ծանօթ էր տրամաբանութեան, բայց ոչ այնչափ Աստուածաբանութեան, և խոովեալ կրիւք խօսէր։

Էին յայնժամ յԵջնիխաւու Հ. Ստեփանոս եպիսկոպոսն Ա.ւդէրեան՝ գերապայծառ կոչեցեալ, և յԱ.բբայեանց Հ. Մեսրովպ վարդապետ Ա.ղաչըրաղեան, Հ. Սերովբէ վարդապետ ՃեվահիրճեանՀ. Գրիգոր վարդապետ Գապարաճեան, Հ. Թադէոս վարդապետ Ասկէրեան, Հ. Թովմայ վարդապետ Մագսէթեան, Սահակ վարդապետ և Պօղոս վարդապետ։

Իննեքին սոքա էին ՚ի ծովհայեաց տան եօնուզեան ցովհաննէս աղայի, ՚ի սոցանէ ընտրեցան խօսել ընդ Հայս, Հ. Մեսրովպ Ա.ղաչըրաղեան, Հ. Թովմայ Մ.աքսէթեան, և Հ. Սերովբէ ՃեվահիրճեանՀ. Գրիգոր վարդապետ Գապարաճեան, Հ. Թադէոս վարդապետ Ասկէրեան, Հ. Թովմայ վարդապետ Մագսէթեան, Սահակ վարդապետ և Պօղոս վարդապետ։

Իննեքին սոքա էին ՚ի ծովհայեաց տան եօնուզեան ցովհաննէս աղայի, ՚ի սոցանէ ընտրեցան խօսել ընդ Հայս, Հ. Մեսրովպ Ա.ղաչըրաղեան, Հ. Թովմայ Մ.աքսէթեան, և Հ. Սերովբէ ՃեվահիրճեանՀ. Գրիգոր վարդապետ Գապարաճեան, Հ. Թադէոս վարդապետ Ասկէրեան, Հ. Թովմայ վարդապետ Մագսէթեան, Սահակ վարդապետ և Պօղոս վարդապետ։

Digitized by Google

բեմն, դի երկու կողմանք հակառակէին ՚ի վերայ միոյ բառի, մինն ասդէր, թէ զայս բառ պարտ է բառնալ և փոփոխել, և միւսն հաստատէր ուղիղ և իրաւացի գոլ, և ոչ փոփոխել, և երկաքանչիւր կողմանք մնային ՚ի վերայ մի և նոյն բառի վիճաբանք, և ոչ մին կամէր միւսոյն զիջանել։

Յայսպիսի բանս տեսեալ Ստեփանոսի եպիսկոպոսին զերկաքանչիւր կողմանն դյամառեալ կարծէս, հրամայեր լռել, և ինքն գրիչ ՚ի ձեռին առեալ, տնօրինէր ըստ սիտելոյ խընդրոյն այնպիսի բառս, որ ընդունելի լինէր երկաքանչիւր կողմանն, բայց առաւել Հայոյ, դի Աբբայեան հարք ոչ կարէին հակառակիլ ենթադրութեան Ստեփանոսի եպիսկոպոսին, որովհետեւ ՚ի դիմաց Հռովմէական եկեղեցւոյ գլխաւոր էր նոցա կարգեալ, և եթէ աթոռն Հռովմայ խոժոռէր և դժոմբներ ընդ սահմանադրութիւնս Աբբայեան հարց, թէ վասն ՚ի՞ր պայնպիսի բառ եդեալ են, կամ ոչ եդեալ, առձեռն պատրաստ ունէին Աբբայեան հարք զայս բան, թէ մեք զի՞նչ ապրացուք, դի Ստեփանոս եպիսկոպոսն ՚ի միջի մերում էր, և նա այսպէս տնօրինէր, և թէպետ մեք բազմօք պնդէաք ընդդէմ Հայոյ, բայց նա այնպէս կամեցաւ և լռեցոյց զմեզ, և իւրով խոկ գրութեամբ խափանեաց զվէճ մեր։

Եւ զայս այսպէս ասացին յետոյ Աբբայեան հարք առ աթոռն Հռովմայ, որպէս ունիս տեսանել ՚ի կարգի պատմութեանս։

Ա. րդ վէճք սոցին էին ՚ի վերայ հնդեցունց խընդրոցս այսոցիկ, նախ թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս և զերկուս կամս, և զերկուս ներգործութիւնս։

Երկրորդ՝ թէ Հոգին սուրբ բղխի ՚ի Հօրէ և յՈրդւոյ։

Երրորդ՝ թէ հոգիք զղջացեալ և խոստովանեալ մեղաւորացդ դնան ՚ի կայանս քաւարանին, և անդ գտանեն զներումն ընդհօք սուրբ պատարագին և դնան յարքայութիւն։

Չորրորդ՝ թէ Պետրոս է դլուխ առաքելոց, և զնոյն դրլխաւորութիւն ունին յաջորդք նորա ՚ի յաջորդս առաքելոց։

Հինգերորդ՝ թէ վերջին օծումն է խորհուրդ սուրբ եկեղեցւոյ, և պարտ է առնել զայն ՚ի ծանր մահամերձ հիւանդս։

՚ի վերայ հնգից խընդրոցս այսոցիկ եղեն բազմաքննին վէճք

իբրեւ զաճիկս երիս, զի յոթնօրէից սրբոյ Յովհաննէս ակսեալ տեւեաց վէճն մինչեւ ցաւագ չորեքշաբաթի օր սուրբ Զատկին։

Եւ թէպէտ երկաքանչիւր կողմանք ուղղափառապէս լինէին զոյս ամենայնմ մասունս հաւատոյ, բայց ոչ դիտեցին զմիտս և զճանաչումն իրերաց, զմիմեանս հերետիկոս և հերձուածող դատէին անդիտութեամբ, զոր օրինակ Հայն մի բնութիւն ասէր, և Հռովմէական Հայն երկու բնութիւն, երկոքին եւս ուղղափառութիւն են, եթէ ուղղափառ միօք ասիցին, և երկոքին եւս չարափառութիւն են, եթէ մոլորական միօք ասիցին։

Զի Հայն ասէ մի բնութիւն փոխանակ մի անձնաւորութեան, որ է ուղղափառութիւն, և Հռովմէական Հայն ասէ երկու բնութիւն, փոխանակ Աստուածութեան և մարդկութեան Քրիստոսի, որ է ուղղափառութիւն։

Սոյնպէս է տեսանել և՛ի միւս խնդիրս, յորոց վերայ լինէին մինչեւ ցարդ տարապարտ վէճք և հակառակութիւնք, զի զիրն ամբողջապէս երկոքին կողմանք եւս ողջմտութեամբ ընդունէին, բայց՝ ի վերայ բառի և ձայնի հակառակ ոգւով վիճէին և կռուէին ոչ դիտելով զմիտս իրերաց։

Ահա այս երեք պատճառ բազմաց հակառակութեան և հերձուածողաց կորստեան՝ ի սկզբանէ մինչեւ ցայժմ, որով միոյ սուրբ աւազանի ծնունդք, միոյ հօր սուրբ Լուսաւորչի հարազատ զաւակունք, ազգակիցք և արիւնակիցք անդադանէին և արհամարհէին զիրերարս, զմիմեանս հերձուածող կոչելն իբրեւ զարդարութիւն դիտէին, և արքայութեան ժառանգութեան պատճառս համարէին, որով դժոխութիւն եղբարց, անհաւանութիւն ծնողաց և զաւակաց, բաժանումն և աւերումն տանց, և այլ անթիւ չարիք։

Ա՛ռ որս ճարտար բժիշկք նախնի պատրիարքունք բազմասիսի հնարս հոգացին՝ ի դարմանս վիրացս, և մինչեւ ցայժմ չեղեւ բոլորովին բժշկութիւն, այլ օր ըստ օրէ ճարակ եալ՝ մահառիթ խոցուածովք կսկծեցուցանէին զհոգիս ազգասիրաց։

Բայց յայսմ ժամանակի իղձ սիրոյ և փափաքանաց ազգասէր անձանց՝ որ մինչեւ ցայս վայր աղեկիզեալ բորբոքեր տե-

Digitized by Google

ամենել զկատարումն պատուիրանին Քրիստոսի, մինչդեռ յա-
ղագս արքունի հրամանաւ դեղերիլ ի գործ սիրոյ և մի-
աբանութեան, վաւերացան և պատրաստեցան ի գլուխ տանել
զայս հոգեւոր սրաչոյն աստուածային սիրոյ, ուստի և դա-
միտս երիս տքնեցան և վաստակեցան յամենայն երեկոյս ժո-
ղովիլ ի յեկեղիսաբու, և զդիչերն ողջոյն ունկնդիր լինել վի-
ճաբանութեանց և խնդրոց երկոցունց կողմանց, և յորդորիչին
զերկոսին կողմանս չխօսել կրիւք և ոգւով հակառակութեան,
այլ աստուածային սիրով և քաղցր կենակցութեամբ լրումն
տալ բանից և գործոյ իւրեանց։

Եւ այսպէս յետ եռամսեայ բանախօսութեանց և ժողո-
վոյ հաճութեամբ և հաւանութեամբ երկոցունց կողմանց՝
դրեցին զսահմանադրութիւն ժողովոյն իւրեանց, և միաբան
խոստովանութեամբ ստորագրեցին ամենեքին, և ընդ առա-
ւօտն իշխանապետքն աստուածասէրք տարան զսահմանադրու-
թիւնն առ պատրիարքն, և նա մի առ մի քննեալ զամենայն,
հաւանեցաւ, և ինքն եւս ժողով արարեալ եպիսկոպոսաց,
յորս էր և աստուածընտիր կաթողիկոսն Սսոյ տէր Ներսէս,
և վարդապետաց, և քահանայից, և ամենայն երեւելի անձանց
արուեստաւորաց, և ի ժողովին յայնմիկ արարեալ աստենա-
բանութիւն լիմն սքանչելի, ընթերցաւ ի լուր ամենեցուն զը-
սահմանադրութիւնն զայն, և մի առ մի բացայայտեալ՝ կնիք-
պահանջեաց ի նոցանէ յամենեցունց։

Անդ էր տեսանել զայն անպատմելի ուրախութիւն սրտի
ժողովելոցն ամենեցուն, և զքաղցր արտասուս վախճելի
սիրոյ և խաղաղութեան, որ վաւերալք աստուածային սիրով
յօժարեցան և ստորագրեցին ամենեքին կնքելով զսահմանա-
դրութիւնն, և խնդրեցին, զի ուղեցին այն ի յիշատակ յաւեր-
ժական սիրոյ, և մնասցէ հաստատուն ի մէջ աղգիս, որ և
յետոյ միաբան խորհրդով իշխանապետացն աղգիս տալեցաւ և
կոչեցաւ ՀՐԱՒԷՂ ՍԻՒՈՆ, և յառաջն և ի վերջն կնքեցաւ կնքով
պօղոսի պատրիարքին, և այնպէս տարածեցաւ ընդ ամենայն
աշխարհ։

Անդ զօրինակ սահմանադրութեան այնորիկ բարիոք վերա-
կայ դնել աստանօր, զի որոց ոչն ինչն տեսանելք զսահմանին

Digitized by Google

Հրաւէր սիրոյ, ընթերցիչին աստանօր, և ծանիցեն թէ ոչ նո֊ րոգ եմուտ ՚ի մեզ ուղղափառութիւնն, այլ զոր ՚ի սկզբանէ ունէաք և անխափան պաշտեաք յեկեղեցիս մեր, նոյն իսկ է այն, զոր և անփոփոխ ունիմք և պահեմք խոպտու։

ԳԼՈՒԽ ԻԵ·

Սուրբ եւ ուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն։

« Տէրն մեր Քիստոս Քրիստոս է Աստուած ճշմարիտ և » մարդ ճշմարիտ, նոյն ինքն որդի մարդոյ և որդի Աստուծոյ, » համապատ չօր ըստ Աստուածութեան, և համապատ մեզ ըստ » մարդկութեան։ (Ընդհանրական 118)։

« Ըստ սահմանք ընդդէմ Նեստորի՝ մի բնութիւն փոխա֊ » նակ մի անձնաւորութեան։ Սահմանք ընդդէմ Եւտիքի՝ եր֊ » կու բնութիւն անբաժանելի ՚ի մի Քրիստոս, ըստ մտաց սուրբ » հարցն և ժողովոյ։

« Քանզի՝ ոչ ըստ Նեստորի ՚ի յերկուս բնութիւնս և յեր֊ » կուս դէմս բաժանեմք զմին Քրիստոս, և ոչ ըստ Եւտիքեայ » և համախոհիցն նորին ՚ի մի բնութիւն ժողովեմք շփոթմամբ » և այլայլութեամբ։

« Այլ ունիմք ասել զերկու բնութիւնն ըստ մեծին Գրի֊ » գորի Աստուածաբանի՝ առ Կղոդիոս Թղթին գրեալ ընդ֊ » դէմ Ապողինարի՝ և որոց ըստ նմա, եթէ՝ բնութիւնք եր֊ » կուք։ Յաւելու ասել և զպատճառն՝ քանզի Աստուած և » մարդ . . . և այլուր ասէ, եթէ կրկին էր, յայտ է թէ՝ բը֊ » նութեամբ և ոչ անձնաւորութեամբ։

« Իսկ զմի բնութեանն եղանակ՝ զոր ասեմք մեք, մի ոք » յայլ դէմս կարծիցէ, բայց . . . զոր ուսաք ՚ի յողջափառ » վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ ՚ի սրբոյն Կիւրղէ Ա֊

Digitized by Google

„ղէքսանդրացւոյ, որ ընդդէմ Նեստորի, որպէս և գրէ յա-
„ռաջին թղթին՝ որ առ Ընկունդոս, եթէ խոստովանիմք մի
„բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին,
„փոխանակ մի անձնաւորութեան։

„Այնպէս և կրկին լինել կամաց և ներդործութեանց՝ ի
„միաւորութեան անդ՝ անհակառակս միմեանց, երբեմն Աստ-
„ուածայինն՝ յորժամ զԱստուածութեանն կամէր յուցանել զգո-
„րութիւն, և երբեմն մարդկայինն՝ յորժամ զմարդկութեանն
„կամէր յայտնել զխնարհութիւն„։ (Ընդհանրական 119)։

„Հաւատամք և ներդործութեանցն նոյնպէս լինել Աստ-
„ուածայնոցն և մարդկայնոցն՝ ի միաւորութեան անդ... միոյ
„անձնաւորութեան զերկոսին զայսոսիկ խոստովանիմք, եր-
„բեմն որպէս զԱստուած՝ զԱստուածայինս ներդործելով, և
„երբեմն որպէս զմարդ՝ զմարդկայինս։

„Իսկ զՀոգին սուրբ խոստովանիմք Հօր և Որդւոյ, քանզի
„ըստ սրբոյ Լուսաւորչին Հայր յանձնէ, Որդի՝ ի Հօրէ, Հոգին
„սուրբ՝ ի նոցունց և՝ ի նոսին„։ (Ադաթանգեղոս 397)։

Վասնորոյ ասեմք ըստ Շնորհալւոյն այսպէս, „Թէ Հոգին
„սուրբ բղխի՝ ի Հօրէ և առնու յՈրդւոյ, բղխումն Հօր ան-
„քննաբար, առ Որդւոյ անճառաբար„։ (Շարական կէ.)։

„Եւ թէ՝ ի Հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցան, և Հոս-
„ման յՈրդւոյ առումն ոչ պատմեցան։

„Եւ ըստ Շարականին, Աղբիւր կենայ և փրկութեան
„մերոյ՝ Հոգի Հօր և Որդւոյ„։ (Շարական ԺԵ.)։

Իսկ հատուցումն անչատելոյ Հոգւոյ՝ ի հրաժարիլ նո-
ցա յաշխարհէ, ըստ ուսուցանելոյ սրբոյն Դիւդորի Լուսա-
ւորչին այսպէս. „Որք սուրբքն են, ի Քրիստոս մերձ լինին,
„զի ուր են եմ (ասէ) անդ և պաշտօնեայն իմ եղիցի„։
(Ծոմհ. ԺԲ. 26)։

„Դարձեալ, իբրև երկրաւոր կեանքս ի ձեռն մահուան
„ի գլուխ ելանեն, Հոգին յուզարկի առ Աստուած, որ ետն
„զնա, և մարմինն դառնայ ի հող, յորմէ ստեղծաւ յարարչէն։

„Եւ սուրբ և արդար Հոգւոյն ընդ յառաջ դան հրեշ-
„տակք և սրբոցն Հոգիք, և տանին առաջի Աստուծոյ՝ սաղ-
„մոսիւք և օրհնութեամբ և երգօք Հոգեւորօք, գովեն զա-

Digitized by Google

„ մինաչդեռ փառն Տէրութեան, ամենատեսլը երկրպագութեանն,
„ և գոհանան վերափառուց բարութենէն, որ փափաք յերկրա-
„ ւորացս յերկնաւորսն, յանարգութենէս ՚ի պատիւ, ՚ի շնոր-
„ հիւրեալն և զկոչեցեալն յիւր արքայութիւն և ՚ի փառսն „։
(Յաճախապատում 152)։

„ Եւ յայլուր ասէ, իսկ որ ՚ի սուրբ սէրն Քրիստոս հաս-
„ տատեալ են, որք զանձինս իւրեանց եդուն ՚ի մահ . . . ապ-
„ րեալք լինին . . .։

„ Եւ բացցին դրունք կենաց բարերարութեանն չնորհօք
„ հոգւոյն սրբոյ վերջին կայանեցն, ուր ժողովք սրբոցն են
„ հանգուցեալք „. (Յաճախ. 171)։

Իակ յաղագս ներելի մեղաց ննջեցելոց՝ և թողեալ մահու չափ մեղաց զապաշխարանն ոչ վճարողաց ասա՝ աղօթս առ-
նեմք ասելով. „ Աւրա արժանի ողորմութեան և քաւութեան
„ և թողութեան մեզաց „։

Եւ վերագոչեմք յեկեղեցիս, „ Ող թողութեանց ես տուող
„ Աստուած, թող զմեղս մեր ննջեցելոց „։ (Շարական ձծէ.)

„ Եւ հանգի ՚ի խորանի քումմէ յոր քայական ՚ի հանգստեան „։

Եւ դարձեալ Շարական „ Ահեղ խորհուրդ քահանային „։

Վանորոյ և մաղթէ քահանայն ՚ի սուրբ պատարագին ասելով. „ Ցիշեա տէր և ողորմեա, և զմա ՚ի հոգիս հանգու-
„ ցելոց, հանգի զնոսա և լուսաւորեա ընդ սուրբս քո յար քա-
„ յութեանդ երկնից „։

Քանզի այսպէս ուսոյց սուրբ Լուսաւորիչն մեր յասելն, „ Իակ զհաւատացեալոց մեղուցելոց և խոստովանողաց և ապաշ-
„ խարողաց և հաղորդելոց փրկական խորհրդոյն՝ և հրաժարե-
„ լոց յաշխարհէ, և նոցա կատարեսցին յիշատակք Քրիստոսի
„ պատարագաւն՝ և աղօթիւք և զմովք տնանկաց՝ այլ և բա-
„ րի գործովք, զի վերջնոցն բարեգործութեամբք հանգուց-
„ եալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անվախճանից „։
(Յաճախ. 160)։

Վանորոյ և տեղին՝ յորում կան այսպիսի ննջեցեալ հո-
գիք, որ կարօտ են օժանդակութեան եկեղեցւոյ, կոչի ՚ի մեզ կայան, զոր այլք կոչեն քաւարան կամ մաքրարան։

Իակ զանգղղ մեղաւորս և զամբարիշտսն և զանհաւատսն՝

Digitized by Google

գիտեմք լինել արդէն իսկ անարդեալս և դատապարտեալս ի գեհենի, ուստի ասեմք քանիւ սուրբ Լուսաւորչին. «Ալ »կայանք են նոցա, որք արհամարհեցին զօրէնս նորա, և ծա»ռայեցին դժնդակ ցանկութեանց ախտին և պէս պէս չար»եաց, որ ժառանգելոց են զարտաքին խաւարն, խաւար է »աստ արտաքին չար, որոց խաւարեալ են միտք և զգայու»թիւնք, և օտարացեալ են ի կենաց անտի... և են անդ »ի հուր գեհենի, ուր լալ է աչաց, և կրճելատամանց»։ (Յաճախ 253)։

Իսկ սուրբ առաքեալն Պետրոս է գլուխ առաքելոց սրբոց, և վեմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց, որպէս երդեմք. «Որ գերազոյն ընտրելոց առաքելոցն դաստուց անուանեցեր »լինել զերանելին Պետրոս, գլուխ սուրբ հաւատոյ, հիմն ե»կեղեցւոյ»։ (Շարական ծԹ.)։

Եւ սուրբ Լուսաւորչին մեր ասէ. «Քրիստոսագունդ և խան»չակիր առաքելոցն, որոց գլխաւորն Պետրոս»։ (Ագաթ. 30)։

«Եւ թէ՝ արար զնա վէմ հաստատութեան ամենայն եկե»ղեցեաց»։ (Ագաթ. 198)։

Եւ որպէս իւրաքանչիւր առաքեալք ունին ի Քրիստոսէ զիշխանութիւն առաքելական, նոյնպէս և ամենայն աթոռք՝ որք ունին զօրինաւոր յաջորդութիւն առաքելոց, Աստուածային իրաւամբք ունին զամենայն իշխանութիւն և զիւրաւսիրութիւնս առաքելոց ըստ իւրեանց կարգի և սահմանի, որպէս ուսուցանեն սուրբ գիրք, և սահմանդրութիւնք սրբոց հարց և ժողովոց, ըստ այնմ. «Լուսոցէք նոցա պահել զամե»նայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ »եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»։ (Մատթ. ԻՀ. 20)։

Եւ խորհուրդք սուրբ եկեղեցւոյ եօթն են, յորոց մինն է վերջին օծումն, զոր պարտ է մատուցանել ծանր հիւանդաց՝ օծմամբ իւղոյ ձիթոյ օրհնելոյ ի քահանայէ, ըստ պատուիրելոյ մեծին Յակոբայ խնամատարին ի ԺԱ. կանոնի ժողովի անդ՝ ուր ասէ, «Արժան է զհիւանդացն ձեթ՝ քահանային »օրհնել ըստ իւրումաղօթիցն որպէս և առաքեալն Յակոբոս »պատուիրէ ասելով, եթէ հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցէ

» զերիցունս եկեղեցւոյն, և արտասցեն ՚ի վերայ նորա աղօթս,
» օծցեն իւղով յանուն Տեառն, և աղօթքն հաւատովք փրկե-
» կեսցեն զաչխատեալն, և յարուսցէ զնա տէր, և եթէ մեղս
» ինչ իցէ գործեալ, թողցի նմա »: (Յակոբոս ե. 14):

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս խնդրոց Աբգարեան Հարց, եւ ընդունելութեան նոցին:

(1820) ԱՅՐ՝ այս սահմանադրութիւն և խոստովանողական դաւանութիւն հաւատոյ մասանց յերկուց կողմանց միաբան հաւանութեամբ ստորագրեալ, բացայայտ ծանուցաւ ՚ի լսել ի-մեննայն ժողովրդեան, որով և ոչ սակաւ եղեւ առիթ ցնծութեան և ուրախութեան ամենեցուն՝ տեսանելով զկատարումն վիճաբանութեանց ՚ի վերայ առաջարկեալ խնդրոցն, որում փափաքէին ամենեքեան:

Բայց յետ այսր յաւելին հարք Աբգարեանք զերիս այլ եւս զինդիրս յարարողութեանց սակի, և ասէին. Թէ պարտ է զսոսա եւս ուղղել, զի բողոքովին չահեցին միտք ժողովրդոց իւրեանց, և մի՛ նեղեսցէ զնոսա խիղճ մտաց իւրեանց ՚ի դալ յեկեղեցիս Հայոց, որովհետեւ այնպէս էին նոքա ուսեալք և գիտացեալք, թէ այն երեքին արարողութիւնք՝ զորս առնեն Հայք, հերետիկոսական ինչ իցեն, և էին այսոքիկ. նախ՝ ոչ երգել զնզովն Լեւոնի և ժողովոյն Քաղկեդոնի յեկեղեցական պաշտամունս մեր ՚ի շարականէ և ՚ի ձեռնադրութեան դրոց բառնալով:

Երկրորդ՝ ոչ յիշել ՚ի Պատարագի զանուանս Յովհաննու Որոտնեցւոյն՝ և Գրիգորի և Մովսէսի Տաթեւացեաց:

Երրորդ՝ ընդունիլ զամենայն ուղղափառական և սուրբ ժողովս սրբազան Հարց, զորս արարեալ են ՚ի պէտս դարս ՚ի Ջաղխումն աղանդոց բազմադիմի հերետիկոսաց:

Digitized by Google

Ա. յս երեքին խնդիրք՝ թէպէտ օրինաւոր և օգտակար էին յոյժ բացայայտութեան և ուղղափառութեան եկեղեցւոյն Հայոց, այլ պօղոս պատրիարք ոչ իշխեաց զայս փոփոխութիւնս առնել ինքնիշխան հրամանաւ իւրով պատճառելով, թէ սոքա հնացեալք և արմատացեալք են՝ ի յազգիս, և եթէ փոփոխեացուք զսոսա, դուցէ դայլակղութիւն և խռովութիւն ծագիցի՝ ի մէջ հասարակութեան ազգիս, զի հասարակութիւնն տգէտ է և անծանօթ եկեղեցական սահմանադրութեանց և պատմական գրոց, և մինչեւ ցայս վայր այսպէս է ուսեալ և լուեալ, արդ ոչ կարեմ՝ ասէ փոփոխութիւնս ինչ առնել՝ ի պաշտամունս մեր ես ինքնին միայն հրամանաւ իմով և կամեցողութեամբ։

Ա. յսմ՝ թէպէտ բազմօք չանացին իշխանք մեր լինել ընդունելի և՝ ի գործ դնել, այլ ոչ կարացին հաճեցուցանել զպօղոս պատրիարք, զի ասէր. եթէ ընկեցէք զիս՝ ի պատրիարքական աթոռոյս, և զայլ ոք կարգեցէք, և նա կատարեսցէ զինադրուածս սրտի ձերոյ։

Ի լսելն զայս իշխանապետայ մերոց՝ սկան վերստին սուգ պղնուլ և տրտմիլ, զի ոչ յաջողեցաւ նոցա տեսանել զկատարումն Աստուածային պատուիրանին՝ այսինքն հոգեւոր սիրոյ և միաբանութեան ազգիս, և զօր ամենայն չանային և խնդրէին յԱստուծոյ ցուցանել և առաջնորդել նոցա զօգուտն և զպիտանին, որ հաճոյ լեցէ բարերար կամաց իւրոց։

Էր՝ ի սմին ժամանակի՝ ի կոստանդնուպօլիս՝ ի մէջ աւազորոյն արքունի՝ նախարար ոմն Հալէթ էֆէնտի կոչեցեալ, այր նեղսամիտ և խռովայոյզ և չարադրդիռ, բայց ըստ դաւանութեան և չար դիպուածոց ժամանակին՝ այնքան սիրելի էր յայնս արքայի, մինչեւ կոչիլ երկրորդ արքայի, և ամենայն ինչ խորհրդով և դիտութեամբ և. հրամանաւ նորին պարտ էին հասանել՝ ի լսելիս արքայի, և՝ ի գործ դնել ըստ կամաց նորին։ Եւ սա էր սկզբնահիմն և նախնական պատճառ կործանման երեւելի տանն Տիւզեանց, և. ամենայն չարեաց՝ որք եղեն՝ ի ժամանակին յայնմիկ։

Արդ սա վեց ամօք յառաջ գնացեալ դեսպանութեանն պատուով՝ ի Գաղղիա՝ ի փարիզ, նստի անդ զամս երկուս, և

Digitized by Google

ոչ դիտելով զԴաղղիերէն լեզուն, ստիպի դառնել ինքեան զԹարգման զոմն և զուսուցիչ, զի՝ ինամանէ ստացի վոքր՝ ի չատէ ղհմտութիւն Գաղղիական լեզուին։

Անդ դտանի՝ ի ժամանակին յայնմիկ Հ. Մեսրովպ վարդապետն Ղազչրպաղեան, որ այժմ դէկաւորն էր Ազբայեան Հարց եկելոց առ մեզ, և ինդրանօք նորին դնայ առ նա, և լինի նմա Թարգման և ուսուցիչ, ցորչափ նատի նա՝ ի փարիզ։

Եւ յայսմանէ ծանօթութիւն ունելով առ նա, այժմ մինչ իչխանապետք մեր յուսահատեալք՝ ոչ կարէին դտանել զեկս հնարից հաճեցուցանելոյ զՊօղոս պատրիարքն վասն խնդրոցն այնոցիկ, զնաւս ածեալ Հ. Մեսրովպ զծանօթութիւն իւր առ Հալէթ էֆէնտի, դնայ առ նա՝ ի դիչերի միում, և դըտեալ ընդունելութիւն և պատիւ՝ ի նմանէ, խօսակցի ընդ նմա բազմօք վասն գործոյն միաբանութեանն, և վասն խնդրոցն այնոցիկ, որք խոչնդոտան լինին՝ ի գլուխ հանելոյ զիրս միաբանութեանն, խնդրէ՝ ի նմանէ հրամանաւ արքայի բռնադատել զպատրիարքն կամիլ ականիլ յընդունելութիւն խնդրոցն այնոցիկ։

Ընկալեալ Հալէթ էֆէնտի զխնդիր նորուն, և՝ ի յաջորդ աւուրն խօսակցեալ ընդ արքային և հաճեցուցեալ զարքայ, արքունի հրովարտակ անդառնալի հրամանաւ դայ առ պատրիարքն բառնալ զնդովն Լևոնի և Ժողովոյն Քալկեդոնի, եւս և զանուանս Յովհաննու Ոսկեբերանց, և Գրիգորի և Մովսիսի Տաթեւացեաց, և՝ ի գործ դնել զվերջին օծմանն խորհուրդն՝ ի պէտս ծանր հիւանդաց, զի այսքիկ (ասէ՝ ի հրովարտակին) չեն հաւատոց ձերոց հակառակք, այլ ընդունելիք և պաշտելիք։

Եւ այս հրովարտակ եկն յաւուր մեծի չորեքշաբաթի աւուրց Զատկին, զոր ընթերցեալ պատրիարքին, իսկոյն աղդարար և կոչեաց զիչխանաւորս զամենեսին՝ ի պատրիարքարանն, և համահաճութեամբ ժողովոյն դրեաց առ ամենայն եկեղեցիս յաստուկ դրով ղհրամանն աստիկ՝ չյիշատակել՝ ի պատարագի զանուանս Յովհաննու Ոսկեբերանց և Գրիգորի և Մովսիսի Տաթեւացեաց, և այս բարձումն անուանց նոցին՝ սկիզբն եղեւ՝ ի ցերեկեան պատարագէ աւադ հինգշաբաթի

Digitized by Google

աւուրն Զատկին ի վախճան 29 յամի Տեառն 1820, և յայնմ հետէ ձեռագ այն անխափան յաջորդեալ երկրագործեալ գոյատեւեցաւ, և ի յաջորդ ամին բարձաւ և յօրացուցին, որ ստորագրի ի գոյանդնուպոլիս։

Եւ ինչպէս մերոյ ընդ մերոյ եղեւ յիշատակութիւն անուանց նոցին յոճանս ի յեկեղեցեացդ, այլ զատուիկ ազգաբանացդ բղեհոմին վերջացուցին ասելով տանելոյ զքահանայս և սարկաւագունս զամենեսին։

Եւ եղեւ յաւուրսն աւուր ուրբաթու յետ տուրբ Զատկին, արար պօղոս պատրիարք ժողով իշխանապետաց ազգիս, և ի ժողովին յայտնի արար առնելոյ զանուն իմն ազանյելի, և հաճեցոյց զամենեսին գնելոցին խորհրդով չքնդունել յանուանէ ժողովին գաղկեդոնի և զմիածն լեւոն, զի անուն առէ խրատուեցաւ ազգիս հաստատակութեանն, որովհետեւ չեն սովորական այնու անուամբ ընդունել ժողով սրբազան հարց. ուստի առանց տալոյ զանունն լաւ է ընդունիլ զիրն, և այնու ընդունիլ զամենայն ժողովս սրբազան հարց եկեղեցւոյ։

Եւ հաւանեալք ամենեցուն ընդ այս, գրեցան ի վերջոյ սահմանադրութեանն՝ այն երեք գրեալ խնդիրք ացտէս։

« Ա. ի բառնալ զդատաւորութիւն և զերկպատառութիւն
» ազգիս՝ արժան համարեցաք, նախ ոչ երդել զինքեան լեւո-
» նի և ժողովին գաղկեդոնի յեկեղեցեական ազատասիրեան մերմ,
» ի շարականէ և ի ձեռնադրութեան գրոցն բառնալով։

« Երկրորդ՝ ոչ յիշել ի պատարագի զանուանս Ծովհաննու
» Որոտնեցւոյն՝ և Գրիգորի և Մովսիսի ցաքիւաւորաց։

« Երրորդ՝ որ և իցէ բան՝ որ վասն հաստատ ազատութեան
» եաղ յամենայն ժողովս և ի տուրբ հարս, եթէ դացին հա-
» մաձայն երից տուրբ ժողովոցն՝ զոր ասեմք, որք են, առաջ-
» ին ժողովն Նիկիոյ երեք հարիւր տասն և ութ տուրբ հայ-
» րապետաց։ Առաջին ժողովն Կոստանդնուպոլսի հարիւր յի-
» սուն հայրապետաց։ Առաջին ժողովն Եփեսոսի երիս հար-
» իւր հայրապետաց, միշտ ընդունելիք են, և նոցին ուղղա-
» փառութեանն երդակցիմք։

« Զորրորդ՝ առ ի անխափան պահել միշտ զամենայն վերոյ-

Digitized by Google

„Ձգեալս մի ըստ միոջէ՝ ընդ վարդապետութեան սուրբ եկե-
„ղեցւոյ մերոյ՝ արքային Դրիդատի Լուսաւորչին, և արքայն ընդ
„սիսի Շնորհալւոյն, և զայլ ամենայն վարդապետութիւնս նո-
„ցին ամբողջ և անպակաս խոստովանիմք, և այնպէս ճանա-
„չեմք և ընդունիմք՝ մեք ամենեքին՝ ի միոյ սուրբ աւազանէ
„ծնեալ Լուսաւորչական հայրապետք „:

Այս ամենայն բան՝ վասն սիրոյ և խաղաղութեան կարգ-
եալ սահմանեցաւ խորհրդով և հաւանութեամբ հանային ազ-
գիս եկեղեցականաց՝ որ ի Կոստանդնուպոլիս, և յոգնախուռն
սիրայորդոր ուխնհոգոսիւ իրաւունս դատեալ վճռեցաւ, յորս
գումարեալ էին այսոքիկ՝ աստուածարեալ կիրակոս արքազան
կամիոդիկոս տանն Կիլիկիոյ, Պօղոս պատրիարքն Կոստանդնու-
պօլսոյ, արքեպիսկոպոսք և գործակալք սրեգերական սուրբ
աթոռոց՝ Երուսաղէմի, Եւս և այլ եպիսկոպոսք, վարդապետք, բոլոր եկեղեցւոց քահանայք, իշխանապետք
և իշխանք, մելիքելիլք և գանձապետք, եկեղեցականք, և
ամենայն ազգասուորոյց դլխաւորք:

Այսոքիկ ամենեքին միաբան հաճութեամբ ընկալեալ
իւրաքանչիւրոք ստորագրութեամբ կնքեցին զարձանագրու-
թիւնն, (այն է՝ այսր ամենայնի՝ հաստատութեան մնհսէրն)
որոյ խնդն է՝ ի պահեստի՝ ի պատրիարքարանին, և օրինակ-
եալ անտի՝ եղաւ եւս՝ ի կրկին դպրութեան՝ ի դիւանի պատ-
թիարքարանին և՝ ի գրքատուն աղգիս մերոյ դպրապետին:

Եւ այն իսկ նոյն օրինակ ըստ ամենայնի զգուշութեամբ
տպեցաւ, և իւրաքանչիւր տպագրելոցն՝ ի ճակատն պատրիար-
քական կնքով կնքեցաւ՝ ի նշան հարազատ նոյնութեան ընդ
իսկ գաղափարին, և անուանն եգաւ ՀՐԱՒԷՐ ՍԻՐՈՑ, և սիրեցաւ
քանզ ամենայն մեղիս՝ ի գիտութիւն և գործադրութիւն աղ-
գիս, և՝ ի յայտարարութիւն ուղղափառութեան Հայաստան-
եայց սրբոյ եկեղեցւոյս, զոր յամենևրանեալ սուրբ Լուսաւոր-
չէ մերմէ՝ և՝ ի նորին չառաւելոյց սրբազան հարցն մերոց
վարդապետութեանց ուսանելոյ պահեմք անխախտ:

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԻԷ.

Յաղագս գալոյ Աբգարեան վարդապետին յեկեղեցին մեր, եւ հաս-
տատելոյ ընդ մեզ ի հոգեւոր պաշտամունսն։

(1820) Տեսին հարք Աբգարեան, թէ պատուականութիւնք ժողովին ի հայոց ի վճռար առաջադրեալ ընդդէմ Թէոդորեանց) խորհուրդ կալեալ յինքեանս հաստատուցին, զի թէ հրաւիրեսցին, ապ եկեսցեն յեկեղեցիս մեր, և պատասխանեսցի սպա ցին, թէ ոչ մերով ինչ վճարի միաբանութիւնս եղեալ քով վարդապետաք, և ժողովրդավք սակաւուք, մինչ առելի կան քան զվեցետուն կազգաւորս և զերծին հազարս տունս աշխար հականաց, նախ զնոսա բերել վոյժ կալչիք, մեր պատրաստ եմք, և ի դասատուն նոցին գործք անխուսափ։

Աղդ ի լրանալ ատորագրութեանն ազդին, առին ի չանաք մեր զայն քաղմանկնիք թուղթ, և տարեալ ցուցին նախարար պան արքունեն, թէ ահա մեծամեծք և փոքունք ազդիս հաս եալ ստորագրեցին այսմ, և չունիմք յայնմ հետէ խոչ և խոչ խափանարար նոցա առ մեզ գալոտեան։

Կոչեաց Հալեբ էֆենտի զհայրս Մեսրոպիկ, և երկոյն ընդ զիուղին՝ առելով, ունիք բաց ի սոցանէ այլ ինչ խնդիր, պատասխանեաց Հ. Մեսրոպիկ, թէ ոչ։

Զոր երբեմն յայտ արար արքային, եղ հրամանն՝ դալ յեկե ղեցիս մեր վարդապետացն այնոցիկ։

Տեսին հարք Աբգարեանք, թէ այլ եւս ոչ կարեն խափանել գնմարտութեամբ գինչ կանոն մեր, և շարժմանէին ստիպող բեր նագբօսք, յանձն առին գալ։

Բայց խնդրեցին, զի յառաւօտուն առնուր գալոտեան իւր եանց՝ լիցի ձեռնադրութիւն, և հրապարակաւ բարձցի նը զովք Լեւոնի հայրապետին և ընդհանուր ժողովոյն գազգի դոնի։

Վասն որոյ ի 1820, ի 18 ապրիլի յաւուր միաշաբաթիոյ, յերբորդում կիւրակէի Զատկին, յաւերժավառն յիշատակաց

Digitized by Google

արժանաւոր հանդէս յարդարութեան մեծաւայելուչ հանդերձ ձանձք ի խումիաւոր ի նորաշէն պաղչէ ժամն որ է ի հիւսիսակողմն տեղւոյ Աստուածածնի մերոյ եկեղեցւոյն։

Բազմաժողով և յոգնապատմեալ էր յայս եկեղեցի՝ հաւատքումն միաբանեալ բազմութեան Հայոց և Ազթամեանց։

Ցայնմ գիշերին էին յեկեղիափուն ի ծովեզերեայ տուն Աշնաւուրեան կարապետ աղայի, յԱբթամեան կրօնաւորաց Հ. Մեսրոպեան, Հ. Թոմասեան, Հ. Թադէոս, Հ. Գրիգոր, Հ. Սերովբէ, (զի Հ. Գաբրիէլ Աշնաւուրեան աւուրք ինչ յառաջ նաւարկեալ էր ի Վենետիկ)։

Եւ ի կատարեցնուսոլեան քահանայապետէ Մահակ և Պօղոս վարդապետք։

Եւ ընդ առաւօտն վաղքաչ ածին ի պատրիարքարանն, և խոնարհչութեամբ պղծեցան վեղար և փիլոն ըստ սովորութեան Հայոց վարդապետութեան։

Մինչ դշարարեցին Հարցին երգէին, ընդ առաջ անկեալ նոցա վէքիլն և տէր Մեսրոպեան, և Գրիգոր Հարտաւրեան, և Աշնաւուրեան կարապետ, մուծին յեկեղեցին, ուր ի վերայ աթոռոյն խորոյ բազմեալ էր պատրիարքն գտաղան ի ձեռին ունելով, և ի դասի անդ կանգնեցան։

Ցերեւելի ժողովրդոց նոցա՝ լռեին անդ Մաթթոս աղա և Նազարէթ աղա, նուռս բազումք ի հանապարհաց։

Եւ ճօնուզեան պարան ծովհանեէս մին ի նոցանց հազարդեցաւ յայն օր մարմնոյ և արեան փրկչին։

Իակ ի Հայոց երեւելեաց բազումք էին, և ժողովուրդք անթիւ, բայց բազմածանօթքն էին Գրիգոր Հարտաւրապետ, Երկանեան Հաճի Յովհաննէս, Ճանիկ աղա, Պէշճեան Յարութիւն աղա, Կարնեցի Յակոբ աղա, և Աշնաւուրեան կարապետ։ Ի հանդիսին պատրիարքն առնելագանեաց զեղեցիկ վարդապետութեամբ, և ի նմին առաւօտուն կատարեաց զպատարագ կոչումն երկուց սարկաւագաց, և ոչ ընթերցաւ զնգնէն. և յետոյ պատարագեաց ինքն, և զնաւա ձեռնադրեաց ի կուսակրօն քահանայ, և անուն նոցա եդ Թադէոս և Բարթողիմէոս։

Եւ Հ. Սերովբէ ընթերցաւ զԱետարանն Հանդանակին։

Digitized by Google

Ձեւս սրճակիան եկեղեցոյն էլին ամենայն իշխանք մեր առ պատրիարքն, և զամենայն վերդապետան տարան առ նա, ուր շուռ էլին տեսուրեցան զինք պատրիարքին, և սիրալիր բանիւք խօսեցան։

Եւ պատրիարքն սկսաւ բացատրել և ասել, թէ ոչ նոր ի նորոյ յուղղափառութիւն եկաք կամ յայլ կրօնս շրջեցաք, նոյն է ըղձ յաւուրց անտի սրբոյ Լուսաւորչին ունեաք ի վիճակին, բայց ծուխ տեղւոյն զպարագայհայեցաց տեսութիւն մնաց պղտորեալ էր, և ամենեածուխ բոց նախանձու խառնաւառեալ էր զսիրտ բարեպաշտ, վասն որոյ զինչպէս դիշերամարտ մղէաք առ միմեանս, զսիրելիս մեր վիրաւորեաք՝ թշնամիս կարծելով, որ և օրինակօք ինչ ասէ ի գէմս ածից։

Եղբարք երկու հարազատաք և սիրելիք, վայրապար կռուեալ ընդ միմեանս, դժուարեցան, և օդնական ինքեանց առնին զբաժանումն տարադէպ, մինն յարեւելս ճեպեաց, և միւսն յարեւմուտս գարձոյց զերեսս իւր։

Երկոքին իսկ ի միասս եկին յետոյ՝ և ատրջացան, բայց ոչ դարմանն ասանիլ կարացին, զի գտանել զմիմեանս անհնարքն էր։

Հասակ ուրեմն հանդիպեալ վերջ ոմն ի ծանօթից, հարցանէ զպատճառս երթալոյ նոցա յերկիր հեռաւոր, և լսելեւ հասու լինի՝ և յօժարամիտ տեսանէ ի հաչտութիւն, առեալ զնա՝ ածէ առ միւս եղբայրն, և զառաջինն հաստատէ ի նոսա սէր հարազատի։

Ա յս օրինակ ասէ մկատիկ ճգնրիտ կատարեցաւ և առ մեօք։

Անդ էր տեսանել զայլ իմն հանդէս մեծապահանդէս հարսանեացս, քաղցր և հոգեմորոզ զուարճութեան մատակարար, իշխանք խրախամիտս բերկրեին որպէս փեսաւէրս հրաշացեալ ընդ այս միաբանութիւն համագգային։

Ձեւս բազում բանից ստիպեաց պատրիարքն, զի զՀայրս Աբբայեան առ իւր պահեացէ, քանզի յատուկ սենեակս պատրաստեալ եմ ասէ։ Ա յլ իշխանք մեր ոչ թողին անդ մնալ, այլ առին իւրաքանչիւր ի նոցանէ զվարդապետան։

Հանճ չելէպի, զէ. Մեսրոպ։

Ճանիկ աղա, զէ. Թովմաս և զէ. Թադէոս։

Digitized by Google

Գրիգոր Տաթեւացի, զՀ. Գրիգոր և Պօղոս վարդապետ։

Յարութիւն աղա, զՀ. Սերովբէ, և Յակոբ աղա, զՄահակ վարդապետ, և տարան ի տունս իւրեանց և պահէին և պատուամեծար յարգանօք առնէին ընդունելութիւնս։

Ինքեանք զամենայն զգեստս նոցա արարին, նաեւ զվերարար և զվիլոն։

Ի հանդիպակաց կիւրակէին, որ էր տօն երեւման սուրբ խաչին, պատրիարքն և ամենայն հարք Աբբայեան դնացին ի Ղուրուչշմէ յեկեղեցին։

Եւ յետոյ հրաւիրեցան ի տուն Հաճի Չէլէպի Յովհաննէս ամիրային։

Ի 12 յունիսի, քանզի տօն էր Գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, պատրիարքն էր յեկեղեցին Վաղարշիւ, յորում աւուր Հ. Գրիգոր մատոյց անդ զսուրբ պատարագն։

Ի միւսում աւուր ի միաշաբաթիսն Հ. Սերովբէ մատոյց զպատարագ ի Ղուրուչշմէ յեկեղեցին մեծաշուք հանդիսիւ։

Անդ էին Մաթեոս աղա և Նազարէթ աղա, և բազումք ի մերոց իշխանաց, և անդ աստենաբանեաց Հ. Սերովբէ զնաւսիրոյ, և յետ արձակման եկեղեցւոյն՝ հրաւիրեցան ի հայկերոյթ յայգի Հաճի Չէլէպիին։

Եւ ի 20 յունիսի, ի տօն Գիւտի տփոյ սուրբ Աստուածածնի, հրաւիրեցան հարք Աբբայեան յեկեղեցին՝ որ ի Նոր գիւղն ի նեղուցն Կոստանդնուպօլսոյ, անդ էին և Աստուածատուր և Երեմիա և Դիոնեսիոս եպիսկոպոսունք։

Եւ յետոյ տարաւ զամենեսեան զնոսա Մաթեոս աղա ի թաղսիա ի մեծաշէն զուարճալի ծովեզերեայ ամարանոց իւր, և զաւուրս երիս արար ընդունելութիւն անդանօր։

Գնացին և ի Սամաթիա ի սուրբ Գէորգ եկեղեցին, և ի Պալատ ի սուրբ Հրեշտակապետ եկեղեցին, և մատուցին պատարագս։

Կոչեցան և ի Խասգիւղ, ուր Հ. Սերովբէ ետ զքարոզն, և Հ. Սերովբէ նուիրեաց զընծայն խորհրդական, և ի տունս աղա Պօղոսի Մարգարեան, և կէսկէսեան Պօղոս աղայի հրաւիրեցան ի կոչունս։

Digitized by Google

Այլ մեծ էր խրախճան խնճոյիցն՝ որ եղեւ ի տան Քաքա-քեհեա Աբրահամ աղային, և ընդունելութիւնն բազմահարկի։

Յաւուրս յայսոսիկ Պօղոս պատրիարք հանդիսաճաւութեամբ իշխանապետաց ազգին՝ դրեալ զայս ամենայն անցս պատմա-բանօրէն, և ստորագրութեամբ ամենեցուն կնքեալ, առաք-եաց ի սուրբ Էջմիածին առ սրբազան կաթուղիկոսն ի Ճեռն վեհքիլ Յակոբոս վարդապետին, յորում խնդրէին ի վեհա-պետէն զհաճութիւն և զհաւանութիւն յաղագս այնր ամե-նայնի, որք եղեն աստ ի կոստանդնուպոլիս։ Եւ զդրաքեր վեհքիլ Յակոբոս վարդապետն խնդրէին Ճեռնադրել եպիսկո-պոս, և օրհնառաք կոնդակաւ իւրով առաքել ի կոստան-դնուպոլիս։

Եւ իբրեւ այս այսպէս լինէր, և սէր և խաղաղութիւն յամենեսին տարածանէր, և ժողովուրդք մի զմիոյ կնիք թե-ւակոխէին ի գալ յեկեղեցիս Հայոց, և եղբայրական սիրով ողջագուրէին զմիմեանս, կարդաւորք Գոլճեհանք՝ որոց գլե-խաւորքն էին Նուրիճանն Քուշիանթին, Ռուքճին, Աբիստա-կէս, վարպետ Գէորգ, Աղանակել եւայլն։

Սոքա առհասարակ սատանայական նախանձու ըմբռնեալք, յանդգնեցան մաքառիլ ընդդէմ ճշմարտութեան, և ապաս-տանեալք յօգնականութիւն իշխանին դիւաց՝ ելին մաքառ պա-տերազմի դնել ընդ մեզ՝ և որոց ընդ մեզ։

Եւ կերպարանափոխք եղեալք, գաղտագնաց գողուղի շրջէին գիշերային ի պալատս դեսպանաց, և աղերսանօք թա-խանձէին հասանիլ ինքեանց յօգնականութիւն։

Եւ ի վերջոյ յորդորանօք և համոզանօք յանվուցեալ ըղ սիրտ եպիսկոպոսին Լատինացւոց, որ կոչիւր վենկենտիոս քօռէսի, հանին խաբէութեամբ զթուղթ իմն բանագրանաց, որպէս թէ ի Հռոմայ իցէ եկեալ, և այն ցանկական բաւիւ, և եւտուն ընծեռնուլ յեկեղեցիս Լատինացւոց յաւուր կիւ-րակէի, և էր խնամած գրոյն, թէ հինգ կարդաւորք յԱբգայեան ուխտէն՝ Հ. Մեսրովբ, Հ. Գրիգոր, Հ. Սերովբէ, Հ. Թով-մաս, Հ. Թադէոս, և երկուք եւս ի կոստանդնուպոլիս քա-հանայացելոց՝ Յահակ վարդապետ, և Պօղոս վարդապետ, եօթնեքին սոքա սիրեալք զմարմնական հեշտութիւն և ըզ

Digitized by Google

վուռս աշխարհիս, ի խոհանոցին զուղղափառս հաւատոց Հայոց մեծաց ընդ մոլար ազանդոց Հայոց հերետիկոսաց, և եղեն անհաւատք, կարդատեացք, և Աստուածատրացք։

Վասն որոյ քահանայապետական իշխանութեամբ մերով բանադրեցաք զնոսա, և հրամայեմք ամենեցուն ուղղափառաց չհաղորդիլ ընդ նոսա ՚ի հոգեւորս։

Ասյսմ ոչ կարասցեալ հանդուրժել Աբգարեան հարց, զբանցին ընդդէմ այնր անուխանգստաւսաստ և սուտ գրոցն պատասխանի լի խնամատարեամբ և խոհական խորհրդով ՚ի զգուշութիւն վերծանողաց, զի մի հաւատասցեն այնմ խաբէականն գրոյն, և առձեռն պատրաստ ունիցեն զպատասխանիս տալ ընդդէմ այնց խաբեբայ և ստասաց կարգաւորացն։

Հ. Թովմաս պերճացեալն յուսմունս Աստուածաբանութեան գրեաց զիւր զպատասխանին յաշխարհաբառ լեզու և հանձնաւօտ, գրեաց և Գրիգոր մեծիմաստ վարժապետն մեր ըստ ոճոյ նորին յաշխարհաբառ լեզու։

Գրեաց և Հ. Սերովբէ վարդապետ ձեվահիրճեան գ.յայտարարութիւն իմն ըստ խնամոյից նոցին ՚ի բարբառ Տաճկաց, զի բարւոք հասկացցին անմիտ գաղատացիք, որք չեն տեղեակք Հայկական բարբառոյս։

Զայդին օրինակս թէպէտ չէր արժան կարգել ՚ի պատմութեանս յայսմիկ, այլ զի մի անդիշատակք ձեռնացին հոգեւոր վաստակք և ոքնութիւնք ազգատէր հարցս այսոցիկ, և մի անցանիցէ ժամանակաց խաղաղ անյայտ եղիցին յաշխարհէ, վասնորոյ եղաք աւանիկ զգրութիւնս զայնոսիկ, որպէս զի ընթերցողք աճեսնեն զիւանացեն և ծանիցեն, թէ քանի՛ քանի՛ սուտ զրպարտութիւնք յառաջին և բազում ՚ի վերայ մեր յամբաստանելոցն յայնցանէ, և թէ որպիսի սուտ վճիռք և սկզբունք հնարեալ էցեն ՚ի նոցունց ՚ի հաստատութիւն խաբէական բանից իւրեանց։

Զայս ամենայն՝ և զայլ եւս գրասցուս խնամոտս կարեն քաղել ընթերցողք ՚ի գրոցս յայացանէ, որք զգուշութեամբ և մուսուութեամբ վերծանեն և չանգան հաստատ լինել իրացն ճշմարտեան և ստուգութեան։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԻԸ.

Թուղթ Հ. Թովմայ վարդապետին՝ ընդդէմ Վենկենտիոսի Գօռէսի եպիսկոպոսին Լատինացւոց։

ՉՈՒՏՍ մէկ թուղթ մի անցաւ, որ ունէր այս օրինակաւ վերնագիր. «Ի մենք ղևնկենտիոս Գօռէսեան շնորհօքն » Ճստուծոյ և առաքելական սրբոյ գահին՝ սուք եպիսկոպոս » Սարդիոյ, և ի պատրիարքութեան կոստանդնուպօլսոյ առ » առաքելական վոխանորդ » որ էրրեւ թէ կը դրէր ուղղափառ Հայկազունն եկեղեցականաց և ժողովրդոց։

Այս դիրս կարդացի և շատ զարմացայ, թէ ի՞նչպէս աստանկ մէկ մեծ արհեստաւոր Լատին եպիսկոպոս մը, ու առաքելական վոխանորդ մը՝ կարող ըլլայ աստանկ մէկ աղօյաւոյթեան անուով մը ախտանալ, և դինքը ծաղր ընելու արժանի գործ մը գործել, եւտեւ առջեւ չի մտմտալով, ու եկեղեցական կարգի կանոնքի բոլորովին անծանօթ ըլլայ, ու մէկ Հայ ազգի մը մէջ ծաղր ու ծանակ ըլլայ, և իսմաստոց առջեւը բոլորովին էրեսն յարգն ու պատիւը կորնցընէ, և ամենեւին ոգէտ երեւնալ յանձն առնու, և հակառակասիրութեան հոգի մը բանեցընէ արտաքոյ էրեսն պաշտօնին և վիճակին։

Ինչու որ՝ էրեսն պաշտօնը և վիճակը եկեղեցական աստիճան եպիսկոպոսութեան է, ի՞նչպէս կրնայ ըլլալ, որ էրեսն պաշտօնը չարաչար գործածէ, և էրեսն առաջնորդական վիճակին մէջ չարաչար ախտի և գայթակղութեան առիթ ըլլայ չհանգստով ըրածը, և չը գիտնալով էրեսն գլխաւոր պարտքը, որն որ Պօղոս առաքեալը էր աշակերտին Տիմոթէոսի կը գրէ, զերծիցուէ զչարախօսութիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ երկու և երեք վկայիւք։

Բայց գուցէ այս վկայութեան դէմ ըսուի, թէ նայելով երկու և երեք, ահա այսչափ բազմութիւն քահանայից, որ եկեղեցիներուն մէջ գոցուեր ձնացեր են, ու դուրս չեն ելլեր, ու կը վկայեն, թէ՝ գէշ և աղտոտ գործքեր ըրին տէյր Վահրիկեան հարք Մխիթարեանք։

Digitized by Google

Վասն զի այսչափ քանքարութիւն ժողովրդեան արք և կա-
նայք խառնարը կը տանին կոր իրենց, քահանայք ալ անոնցմէ
ընդունին, եպիսկոպոսին խառնարը կուտան, ու ինչ վկայեն կոր (նա-
հատ աղջնատան չահատ մը)· այլազգիներուն մէհքէմէին մէջ
պիտի ընդունելի չէ, ոչ միայն, որ ուղղափառ քրիստոնէից կար-
գի կանոնի մէջ, և այն հռովմէական անունով պարծողներու։

Բայց առ ալ չէ, եպիսկոպոսը աղեկ գիտէ, որ ժողովուրդը
պահանած քահանայովմէ դրդուեր է ու խռովեր է. չէ թէ ժո-
ղովուրդը զքահանանելը, այլ քահանանելը զժողովուրդը
կաւրեն կոր, ու առանց խղճմտանքի բարեկեն չար, չարին գարի
կըտեն կոր ստուերամբ, իրենց խղճը չարաչար՝ի գործ դնելով։

Ինչպէս վարձու ալ եպիսկոպոսը այնպէս տարբեն պէտք
հասկցաւ, ու հինգ հարիւրի չափ աշխարհականաց մէջ՝ Ա-
թանաս աղային տունը եղեալ ժողովքին մէջ առ քահանանե-
րուն եղեսին գէմ վկայեց ըսելով, «Թէ սա քահանաները
» տանեքդորս անգամ է որ խաբեցին զիս, և զիս խայտառակ
» ըրին ժառվրդեան առջին, ու սա ալ տասներհինգ անգամն
» է, որ իրենց ստուերամբը կը խռովեն կոր ժողովուրդը, ես
» սառն չեմ ճանչնար»։ իսկ հիմա ի՞նչ գտրսնեք, որ այսպէս
շուտով մոռցաւ իր ըսածը, ու անունց սուտ վկայութեանը ըս-
ղոտիին հաւատաց, ու սասկ անարժան իր մեծութեանը ա-
նարգանաց թուղթ գրեց, ու ժողովրդեան մէջ տարածեց,
որ մեկզմեկ անցնին։

Ա՛րդեօք որո՞ւ հաճոյ ըլլար տէյի, Աստուծո՞յ թէ մարդոյ,
յայտ է թէ՝ այս գործքով Աստուծոյ անկարելի է հաճոյ ըլ-
լալ, որովհետև սա հոգին չէ Քրիստոսի, այլ Երկրաւոր՝ չընչ-
չաւոր՝ և գիւական է, հոգի է զրգռեալ՝ի կրից, և մթագո-
նեալ նախանձու, որ չէ կրնալով ուղիղ գատաստան ընել՝ յա-
ռնէն հոգւոյ կը չարժի։

Իսկ սա անկարելի բան կերևնայ, թէ այս թուղթը ե-
պիսկոպոսին գործքը ըլլայ, ու թէ իմ ճանչցած եպիսկոպոսն
է նէ, այս չարը չի կրնար իրեն բարեպաշտութեանը դէմ ընե-
լով, յաւիտենական աղտ մը չահախնդրութեան յանձն առ-
նէր, ու գրչէն տակ իյնար, որ յետ ժամանակաց իր անունը
չարաչար ստերութեան կրքով չարժելոց՝ ու ազգին բարե-

Digitized by Google

քը չուզեցաց, ու ազգը աւրողներուն կարգը դատապարտուի։

Վասն զի՝ անձին շահախնդիր մարդը՝ միայն իրեն բարիքը կը մտածէ, եւ ուրիշ ոչ ոքի, չի նայիր, անոր հաճար մեկ սխալի, ու եւ ուրիշ եկողներէն կանարգուի, ու գրոց մէջ նախատանքով կը յիշուի։

Իսկ այն մարդը՝ որ հասարակաց բարիքը իրեն անձին շահախնդրութենէն վեր կը դնէ, կը հոգնի, ու կը նեղի, ու կաշխատի, ու խելքով չարժելով ֆրսանմը խայտիլ չընկեր, իբրեւ դիտուն նաւապետ մը՝ որ աղէկ կառավարելով նաւը, տալղանները կը պահէ, տալղանները նաւին ներքեւ կառնու, ու հովուն բռնութեանը գէմ գրէթ չերթար, ու ծովուն մէջ քարեբուն ժայռերուն ու վտանգաւոր կէչ իտներուն աղէկ տեղեկութիւն ունենալով, նաւը այնպէս կուղղէ, որ անվնաս նաւահանգիստը հասցընէ։

Իրաւ որ՝ գինքն ալ կը փրկէ, և այնչափ ճամբորդներու կեանքերուն ալ փրկութեան պատճառ կըլլայ։

Ուսոփ՝ թէ որ սա թուղթը եպիսկոպոսին ըլլալու ըլլար նէ, խոհեմ ու անձին շահը չի փնտռող առաջնորդ տէյի հետ բաւ չէր ունենար։

Այս ըսելու էր թէ՝ կելիշի կիւզել բան մըն է, կընէ, խօսք մըն նէ, կըսէ, խոովութիւն մըն է, կը հանէ, քրիստոնեայ ազգ մը մեկզմեկ կը ձգէ. եա ան է՝ որ կը վաստկի, ու իրեն իրաւունքին տակէն դուրս չի հաներ, եա ան է՝ որ բազորովին ձեռքէ կը հանէ, ու այսպիսի բօլիթիքայով իրեն աղէկ չընէ ալ նէ՝ ուրիշ ազգի գէշ կրնայ ընել եա։

Բայց եպիսկոպոսի մը վրայ այսպէս գահավէժական դատաստան չեմ կրնար ընել, և այսպիսի անարգական թուղթ մը անոր յարգելի անձին չեմ կրնար ընծայել, վասն զի նախատելը՝ գրպարտելը՝ ամբաստանելը շատ դիւրին բան է, բայց հաստատելը՝ խիստ դժուարին է։

Հապա ինչ պիտի ըլլայ աս անլրաւ հէմ ծաղու արժանի թուղթը, «Յանուն վենկինտիոսի Քօռէսեան առաքելական փոխանորդի» կամաչեմ ըսելու, թէ այսպիսի բաներ աս քանի մը տարի է, որ պազիքահանանները իրենց մեկ դէխուսը աբհետ մը ստացան, սովորութիւն ըրին, տուտ ու վուտ խօսքով ու

Digitized by Google

թղթերով ժողովուրդը գայթակղեցնել, ու մեկզմեկ ձգել, ինչպես երբեմն ալ Լիդդա կարահնալը ըրաւ ու վճռատիպի վանքին տպարանը գոցելու համար՝ հռովմայէն վանքը գրեց՝ թէ չէ միայն սուրբ ժողովքը կարգիլէ, այլ և սուրբ աթոռը։

Բայց յետ ժամանակաց յայտնի եղաւ իւր ստութիւնը, և ամենքը գիտցան, թէ Ս. աթոռը՝ սա բանին ամենևին խապար չունի եղեր, որուն համար ալ իր իշխանութենէն փոխուեցաւ։

Դարձեալ՝ որչափ որ հռովմայէն թուղթ և վճիռ եկաւ, թէ գրոյ համար, թէ Մխիթարեանց միաբանից ուղղափառութեան համար նէ՝ ասոնք չի հրատարակեցին, այլ եպիսկոպոսին խափանել տուին, ու ժողովրդեան ալ ասոր հակառակը ստութեամբ չաւ ըրին, և ասոնց նման որչափ բան բանեցան ու կը բանին կոր մինչեւ հիմա՝ ստութիւնը իրենց գլխաւոր սիլահ ընելով, ասոր պէս ալ աս սուտն ալ յանուն եպիսկոպոսին դուրս հանեցին ժողովուրդը խռովելու համար։

Զիրէ աղէկ գիտեն որ՝ իրենց թշնամութիւնը յայտնի ըլլալով, ժողովուրդը իրենց սովորական ստութիւնը մոռիկ չըներ տէյի, եպիսկոպոսին անունովը դուրս հանեցին այս թուղթը, լի հակառակ իրաւանց և արդարութեան խօսքերով։

Էն առաջ կակի աղօթք ընել՝ և Աստուծոյ օգնութիւնը խնդրել, որ այս մեծ փորձանքէն ազատին, բայց չեմ գիտեր թէ այս փորձանքները ինչով դադրեցան, Աբբացիները մասլահաթի մէջ մնալով, թէ հեռու կենալով, յայտ է թէ՝ եէ նիւանութ երթալով, բուն Հայոց ազգը յորդորելով այս ալէկոծութիւնը թէսգին ըրին, ինչպէս՝ որ յայտնի է ամենուն։

« Երկրորդ՝ կըսէ թէ՝ անզգոյշ ղաւակները տահա չի որ » սացած՝ և ձեռք չի բերած, եօթն անարժան քահանաներուն » անկումը տեսեր են տրտմութեամբ »։

Սոսկացաւ երկինքը, թէ կարելի է մի եղեր մարդուս չարութիւնը մինչեւ աս աստիճանը հասնի, որ աս մեծ ղրպարտութեամբ ժողովուրդը գայթակղեցնէ, աս քահանաները փնչ չարութիւն և ջնաս ըրին, ահա ըրածնին յայտնի է, էզ մը մարդ վտանգէ ազատելու պատճառ եղան, գաղկեդոնի ժողովոյն և Լեւոնի պապին և անոր տօնելին համար եղած նզովքը շարաչկանէն և ձեռնադրութեան գրքերէն վերցուցին։

Digitized by Google

Սուրբ Շնորհալի հայրապետէն եւս՝ ինչ նորամուտ անուն կար նէ, թէ՝ ի ժամագրքէն և թէ՝ ի Տօնացուցէն հանել տուին: Ի սուրբ Լուսաւորչէ անտի ունեցած հաւատոյ ճշմարտութիւնը՝ գրով և բանիւ հրատարակել տուին, և սիրով միացան:

Ահա ասոնք անարժան քահանաներուն գործքը աս է, աճապարանքով հերետիկոս և ուրացող են եղեր: Հապա ինչպէս կը համարձակի իր մեթ ու մասխարա թղթովը՝ մեկ ուղղափառ ազգի եղբարքը՝ մեկզմեկէ քակել աս սատանայական նախանձով, որ առաքելական նախանձ կանուանէ:

Ահա հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը յայտնի է, ինչպէս ստութիւն և խաբէութիւն և ուրացութիւն ըսել կը համարձակի, և ան քահանաները ստասաց, խաբեբայ և ուրացող կանուանէ, աղէկ գիտէ ու խղճի մռօք կը վկայէ. բայց անիրաւ դատաւոր ըլլալուն համար, չարաչար դատաստան կընէ՝ ով որ է նէատ թղթին չհնազանդը: Ըն դատաւորն՝ որ Աւետարանին քսածին կէօրէ, յԱստուածոյ չի վախնար, ի մարդկանէ չամչեր, կրնայ ամեն թիւրլիւ չարութիւն գործել:

Այս քսածները բաւական չի համարելով, վերջը այս զրպարտութիւնն ալ կընէ, իբրեւ թէ քսած ըլլան ան անարժան քահանաները, թէ «Հռովմէական սուրբ աթոռին գիտութեամբը աս միաբանութիւնը ըրինք», բայց Հռովմ խապար չունի եղեր, և լմնացածին պէս ալ՝ դրինք սիտի անարգէ եղեր, և թէ՝ եպիսկոպոսն ալ Հռովմայի աթոռին վոխանորդը ըլլալով, սա թղթովը ամենայն հաւատոյգելոց կը հրամայէ կոր, որ զանոնք չի ճանչնան, ու անոնցմէ պիւսպիւթիւն փախչին, որ Հռովմէական սուրբ հաւատքը թէրք ըրին, ու ճշմարիտ ուրացողք եղան խաբեբայք և մոլորեցուցիչք:

Ահա այսպէս կը հրամայեմք և կը պատուիրեմք ամենեցուն կրսէ կոր, և մանաւորապէս մեր միսիոնարներուն՝ և հոգւոց հոգ ունեցողներուն:

Տես, թէ որ աստիճան յանդգնութիւն է, որ աստիճան անիրաւ դատաւորի գործ, ուղղափառութիւն և ճշմարտութիւն կը փնտռէ, ու փնտռեվնիքէն, ինքն բոլորովին կուրանայ, կոյր զկուրայն կը ղեկի ըրածը թողածը չի գիտեր:

Digitized by Google

Ա՞ս է մի եղեր միսիօնարութիւնը, ան է մի եղեր հոգւոց հոգ ունենալը։ Միսիօնարութիւնը եղեր է հիմա՝ գայթակղութիւն ձգել, եղբայր եղբօրէ գատել, ընկեր ընկերի թշնամի ընել։

Աւդեօք ո՞ր իրաւամբք, ո՞ր խղճի մտօք կը համարձակին հերետիկոս և հերձուածող կանչել զազգն Հայոց, որ մինչեւ հիմա ինչ ամբաստանութիւն և զրպարտութիւն եղեր եր նէ իրեն վրայ հաւատոյ մասանց կողմանէ, իր յայտարարական թղթովը հրատարակեց իրեն ուղղափառական միտքը։

Ի՞նչպէս կը կանչէ հերետիկոս և ուրացող ան քահանաները, որ իրեն ուղղափառ ազգին եկեղեցին են գացեր, ու մէկտեղ հաղորդութիւն ըրեր են։

Ըսո՛վ իրաւամբք կըսէ թէ Հռովմէական ուղղափառ հաւատքը թէրք ըրին, ահա մենք ուղղափառ եկեղեցին մէկ գիտենք, սուրբ և ընդհանուր առաքելական եկեղեցւոյն հաւատքը ՚ի սկզբանէ անտի ունիմք, և թէրք չենք կարեր ընել մինչեւ ՚ի մահ։ Հռովմէական աթոռէն հրաման չի կայ եղեր, ի՞նչ բանի միաբանութիւն ընել հրաման չիկայ։

Միաբանութիւն ի՞նչ ըսել է, գիտես մի, օտար ազգ մը օտար ազգի մը հետ ծէս փոխելով հաղորդակցի նէ՝ միաբանութիւն կըսուի, միեւնոյն ազգը իր մէջի փէյտահ եղած ՚սոսկալութեան առիթը վերցընելով սիրով միանայ նէ, հաշտութիւն կըսուի, հաշտութեւոս հրաման պէ՞տք է մի, ո՞ր սուրբ գրոց խօսքը, ո՞ր ընդհանուր ժողովքին վճիռն է, որ պարտաւորէ ընդ մեզօք զքրիստոնեայս, թէ մի՛ հաշտիր եղբօրդ հետ, մինչեւ որ հրաման չըլլայ Հռովմայէն։

Միթէ Հռովմայու հակառակ է բարի խաղաղութիւնը, որ հրաման չունենայ կամ արգիլէ։

Ի՞նչ աճայիպ վարդապետութիւնք են, և ո՞ր Աստուածաբան սորուեցուցեր է, թէ ուղղափառ եղբարք առանց հրամանի ընդ միմեանս սիրով չեն կրնար հաղորդակցիլ։

Ո՞ր ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

Գրեցաւ ՚ի մայիսի 3, 1820։

Թոխմայ վարդապետ Մաքսէթեան
՚ի միաբանութենէ Մխիթարեան։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ի ԳՐԻԳՈՐ ՎԱՐԺԱՊԵՏԷ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

Ուղղափառ հաւատք և ողջամիտ վարդապետութիւն հայոց եկեղեցւոյն՝ որ ի սուրբ Լուսաւորչէն մինչեւ ցայսօր հաստատուն ունիմք, յայտնի կը քարոզի մեր ամեն եկեղեցական գրեանց մէջը, և կրնայ գիտնալ ամեն քրիստոնեայ, ինչ ազգ ըլլայ՝ թող ըլլայ եթէ ուզէ իմանալ։

Իակ թէ ինչ պատճառաւ՝ չեմ գիտեր, այժմեան վենկենտիոս Քօռէսի Լատինաց արքեպիսկոպոսը՝ որ Ստամպօլու պատրիարքութեան վիքար անուն ունի, մտքին և մարմնոյն աչքերը բոլորովին խփեր է՝ որ այս ճշմարտութիւնը չի տեսնայ, և հոգւոյն ականջը գլխովին գոցեր է՝ որ հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը չի լսէ, քանի մը միւֆսիտ գոլէճցի ֆռանկացեալ կարգաւորներու խօսքով՝ հայոց եկեղեցին հերձուածող և հերետիկոս է տէյի դիր կը հանէ, և Ա. բբայեան վարդապետները հայոց հետը սիրով միացան տէյի, ուրացող կը կոչէ։

Ինչո՞ւ Եսայի մարգարէին ձայնը չի լսեր, որ կը գոչէ. վա՛յ այնոցիկ, որք ասիցեն զլոյսն խաւար՝ և զխաւարն լոյս, որք դնիցեն զքաղցրն դառն՝ և զդառն քաղցր։

Եւ Քրիստոսի Բրիստոսի մտիկ չընէր, որ կը վճռէ, թէ՝ Որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լինի ատենի, և որ ասիցէ ցեղբայր իւր մորթոս, պարտաւոր լինի գեհենի հրոյն։

Եւ չիւնքի առաջին քահանայապետ սուրբ և ընդհանրական եկեղեցւոյ՝ և ճշմարիտ դատաւոր ամենայնի՝ Քիստոս Քրիստոս է, ապա պէտք է ամենայն քահանայապետաց՝ որ եկեղեցւոյ դատաւոր ենք տէյի կը պարծինն, Քիստոսի Քրիստոսի ընդհանրական դատաստանը մտքերնին բերեն, և իրենք ալ անոր կէօրէ դատեն։

Ահա Քիստոս Քրիստոս դատաստանին օրը՝ երբ անզեղչ մեղաւորները պիտի դատապարտէ, անոնց չարութիւնը և

Digitized by Google

կոմս Ապշ, որ ինչպէս եկեղեցին Ռօշոս պատրիարք, գնհ. սիսա-
ւին կոչեցեալ Գաղէ ժամ էօծ Ղատուածատուր եպիս-
կոպոս, և զգաւիթ եկեղեցւոյն՝ Ովհաննէս եպիսկոպոս, յա-
ւարտ եղեալ ժամ գիշերոյն սկսեալ մինչեւ ծագորդ ժամ
յաջորդ աւուրն, ի վեցտասան 25, յամի տեառն 1820։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս աքսորանաց եւ փախստեան Գալիճեան վարդապետին, եւ գործակցին նմա Պետրոսեան հարց եւ խօսելոյ նոցա ընդ վարժապետն մեր վասն խնդրոց ինչ։

(1820) Սակայն վարդապետ՝ զոր ի վեր անդր յիշատա-
կեցաք, ոչնչեր իմանալի ի պատրիարքէն հնգօրեայ ազատու-
թեան, շրջել ժողովել զկարգաւորսն։ Վասն որոյ առեալ զնո-
սա երեր յԵՆԻԽԱՐԻՆ ի 23 յունուարի։

Եւ ոչք եկինն։ էին Հ. Գրիգոր Գալպարաճեան, Հ. Թա-
դէոս Ալիքեան, Հ. Բենուամբ Աբրահամեանք, նաեւ Հ. Պօղոս
բժիշկ։ Ըստ իմն անկան ընդ նոսա տէր Ապահակ և տէր աղու-
թիւն Գրեհաեանք, այլ ի ճանապարհին խոյս տուեալ՝ վա-
խուստ գարձան, քանզի յետս կոչեցան ի Գոլճեանց։

Արդ մինչ այսոքիկ այսպէս լինէին, եկն ի դրանէ հրա-
ման առ պատրիարքն գտանել զվերջ քահանայս տանն Ծիւղ-
եան և մերձաւորաց նոցա, զի աքսորեսցին։

Եւ պատրիարքն վտիտացեալ շտապաւ զկիշխանս այնու կոչ-
ւանն, զի զո՞ւ և իցէ վերջ քահանայս ժուռեանցայնոց գտեալ
տացին։

Եւ նոքա վտիտացեալ, խապտուիճեամբ հրաւիրեցին ի
տունս Խոճանց զքահանայսն՝ որպէս թէ վասն խոստովանու-
թեան ինչ իցէ կոչումն նոցին։ Ապ գիշերայն ապ տարուել
ժամկոչաց Հայոց՝ հանին ի տանէն, և եատեն ի ճեռս նոցա,
և առաքեցին ի պատրիարքարանն, և էին ամենայն նոցա

այսօրիկ։ Ընտան եւ ընկերակցիս վիքար Տ. Բարձրեցոյ, Գայիէնեանց ճգնաւոր կոչեցեալն, Պօղոս վարդապետ Գաղատացի Մարուշ կոչեցեալն, Պետրոս վարդապետ, եւ Յովհաննէս վարդապետ, ընդ սոսա գոտւոյ եւ հայր Դաւիթ խոհեմափայլ վարդապետն Ալբեայեան, հինգն Գոլճեանք, եւ մին այս Ալբայեան, եւ սա կամովին յօժարեցաւ երթալ, առելով, եթէ չէ լսեալ թիւս աքսորելոյն, ես կամաւ դնամ, դիս առաքեսջիք։ Ասաց միայն յԱլբայեանց Հ. Սրապիոն, եւ ոչ եկն ընդ նոսա։

Գանգի ընտանիք Տիւզեանց յանձնեալ երեն պատրիարքին յօթէ կնքելոյ՝ զոսոնս նոցա։

Ընդ նոսա էին եւ արուս սպասաւորք, եւ Հ. Մտեփանոս, որ գոսաւ յայնժամ՝ ի տան նոցա։

Եւ զամենայն զնոսա եւս պատրիարքն Հանդէպ ուղղ Ազատուածածնի եկեղեցւոյն՝ ի սան մնուա, եւ զգուշանայր պահպանօք։

Եւ զհայր Մտեփանոսն առանձինն՝ ի միւս խցի պահէր իբրեւ՝ ի բանտի։

Յաւուրն յայնոսիկ Հ. Սրապիոն երեալ գայ առ պատրիարքարքարանն, եւ առ ժամն ոչ գոսանի անդ վէքիլն, եւ բազմի՝ ի յաթոռոյն։ Հարցանեն զնա վարդապետքն, եւ ասեն, դու ով ես և վասն էր եկեր այսր։

Եւ նա պատասխանէ, վարդապետ եմ ես՝ ի վանուց սրբոյն Ղազարու Հ. Սրապիոն անուն, և եկի առ խնդրել հրամանն երթալ յայցելութիւն կարդակից եղբօր իմոյ Հ. Մտեփանոսի։

Յայնժամ՝ ոմն՝ ի վարդապետացն՝ որոյ անուն էր Պօղոս վարդապետ Գաղատացի, և էր տեղապահ փոխանորդի պատրիարքին, և ունէր թշնամութիւն մեծ անդուստին՝ ի մանկութենէ իւրմէ՝ ի Գաղատիա՝ ի վերայ Հռովմէական հայոց, հանէ զնա արտաքոյ սենեկին, և ինքն դնացեալ՝ ի ներքս ելանէ առ Պօղոս պատրիարքն և ասէ, եթէ՝ ի Հռովմէական հայոց կարդատուր ոմն եկեալ յանդիմանէ զմեզ անվայել բանիւք և ասէ, թէ դուք լինիք ուղղափառ և բարեկրօն, զուղղափառ վարդապետան ոչ տայիք ըմբռնել և՝ ի բանտի արդելուլ, բայց զի անմահան էք յուղղափառութենէ, առանց խղճի առնէք զոր ինչ և կամիք։

Digitized by Google

Եւ պատրիարքն լուեալ զայս, հրամայեցէ դնել զնա ՚ի բանտ, մինչեւ եկեսցէ փոխանորդ իւր, և քննեսցէ զայն։

Եւ Դաղատացին տեսեալ, թէ անպատիժ ունի զերծանիլ ՚ի ձեռաց իւրոց, զայրանայ առաւել եւս, և ածեալ առաջի վէքիլարանի՝ տայ պնդել զտաս նորա յաղախան, և հարկանեն նմա բիրս իբրեւ եօթանասուն։

Իսկ նա ինքն եղկելին յետոյ ՚ի գանակոծ ուիքին կանգնեալ ՚ի վերայ՝ հարցանէ զիրաւունս բանից, թէ զի՞նչ էին իմ յանցանք։

Իսկ Դաղատացին որ անօրէնութեամբ գործեացն զայն, և բերան իսկ բանալ ոչ ետ նմա, և տարեալ արկին ՚ի բանտ։

Բայց կարնեցի Յակոբ ազա՝ որ ծանօթացեալ էր ՚ի կաղբին Հ. Սրապիոնի, և ՚ի բազում իրս մանաւանդ ՚ի չինութեան դպրոցի գործակցեալ նմա, և սիրէր զնա ոչ սակաւ, իբրեւ զայս ամենայն լսէ, փութացեալ գայ առ պատրիարքն, և աղաչեալ հանէ զնա ՚ի բանտէ, և պատրիարքն առաքէ յաքսորս զԴաղատացին զայն ՚ի հայրենիս իւր ՚ի Դաղատիա։

Արդ սա զի գանակոծ հարուածով վշտացեալ էր ՚ի վերայ վարդապետաց մերոց, այժմ ոչ ընդ միաբանս իւր միաբանեցաւ դալ առ մեզ, այլ եկաց մնայ յեկեղեցիս Լատինացւոց։

Սահակ վարդապետ երթայ ՚ի սկզբան փետրվարի առ Ստեփանոս եպիսկոպոսն Աւդէրեան, որ երբեմն և վիքար էր, և յայնժամ թագուցեալ կայր, և ՚ի մտի եդեալ էր դաղտնաւարկել ՚ի Թրեստ, ասէ ցնա, ընդէ՞ր ոչ դաս ընդ մեզ, յորոց կասկածիս, մինչ ամենայն իշխանք Հայոց պաշտպան կան մեզ։

Որում պատասխանէ Ստեփանոս եպիսկոպոս թէ և ես ոչ սակաւ քան զձեզ ցանկացող եմ միաբանութեան ազգիս, բայց երկնչիմ ՚ի գոլեճցւոց ասուի ինքնին ելանել և գալ։ Բայց եթէ իշխանք Հայոց կանխեալ խնդրեսցեն զիս ՚ի մերայնոց, և ստքա ստիպեսցեն զիս գնալ, յայնժամ փութացեալ գամ։

Սահակ վարդապետ զայս բան ծանոյց Հ. Մեսրովպայ, և նա հաճեցոյց զիշխանս մեր, և ետ խնդրել յիշխանաց այնու կողմանն, զի առաքեսցեն զՍտեփանոս եպիսկոպոսն։

Եւ նոքա պատուիրեցին նմա գնալ, բայց ոչ երբեք՛ կուսակից լինել և միտել ՚ի կողմն Հայոց և Ղրբայեանց։

Digitized by Google

Եւ նորա գնացեալ՝ զբռնադատութիւն իշխանաց իւրոց՝ եպիսկոպոսին Լատինաց յայտ արար, և էառ 'ի նմանէ հաւաստութիւն լռելեայն։

Սահակ վարդապետ և այլ ոմանք յիշխանաց առեալ բերին զնա յԵՆԻՒԽաքուն։

(1820) Ա.րդ յայսմ միջոցի՝ յաւուրս պահոց, զօրականքն ԵՆԻՒՉերի ձայնեալք՝ զոր միանգամ տեսանէին 'ի Հայոց ձուկն դնել կամ ուտել, կալեալ զնա տանէին 'ի պատրիարքարանն, և վէքիլ պատրիարքին ակամայ տային զօրականին դահեկան մի խոժոռեալ դիմօք, և զայրն յանդիմանէր վասն յայտնի գործոյն ուտելոյն, և արձակէր 'ի բաց։

Եւ զայս բաղմարդիւն չհասանգաւ իմն արարին իւրեանց, զօրականքն, որք զհետ լինէին դտանել զի և իցէ Հայ աղգաւ, որ ուտիցէ և դնեացէ 'ի շուկայս զկերակուրս անուտելիս մեզ յաւուր պահոց։

Ա.յլ Պօղոս պատրիարք որ քաղխորհուրդ հեռատեսութեամբ իւրով դիտէր և մտածէր զվախճան ամենայն իրաց, կոչեաց առ ինքն զՅարութիւն աղա Պէզճեան և խորհեալ ընդ նմա, կոչեցին զՅարութիւն Շամպէօղէկեան, որ ունէր երկու մուտ 'ի դուռն զօրապետին, և ոսկերիչ նորին էր, 'ի ձեռն նորին ազգ արարին ԵՆԻՒՉերի աղասի զօրապետին զի հրամայեսցէ ամենայն զօրականաց՝ յայնմ հետէ կալնուլ և ոչ զոք վասն այնպիսի իրաց։

(1820) Յամենայն յունվարի խորհրդով իշխանաց մերոց պատրիարքն կոչեր մի առ մի 'ի Հռոմէական Հայ ժողովրդոց զերեւելի իշխանս և զմիջակայինն արհեստաւորս, և առաջարկէր նոցա զբան միութեան։

Եւ զի ահ սաստիկ պաշարեալ էր զնոսա, բաղումք դալին 'ի հաւանութիւն, և ստորագրէին պայմանագրին, որ ունէր օրինակ զայս։

„ Ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մերմէ սկսեալ մինչեւ
„ ցարդ, զոր ինչ ընդունի Հայաստանեայց ուղղափառ սուրբ
„ եկեղեցին, ընդունիմ և ես, և զոր ինչ մերժէ, մերժեմ և ես.
„ 'ի հաստատութիւն կայր ողջմիտ դաւանութեանս յօժարա-
„ կամ կամօք կնքեցի և ստորագրեցի ես (այս անուն) եւայլն „

Digitized by Google

Բայց և բազում դժկամակ գտեալ առ այն՝ ոչ հաճէին առարգրել։

Հայր Մեսրովպ՝ այր մեծախորհուրդ և բազմահանճար առ շահելոյ զերկաքանչիւր կողմանս՝ հատանեցոյց զիշխանս մեր, զի լուսաւորչեան հանդանակն անպակաս և անյապաղ ուաճ դրեսցի ՚ի թղթի, և նմին առարգրեսցէ հասարակութիւնն։

Եւ յայնժամ առանց ինչ դիմադարձ բանից դայլն և ըստ առարգրէին ամենեքեան։

Ի նոյն աւուրս ՚ի միում գիշերի ժողովեցան իշխանք մեր առ Հ. Մեսրովպ վարդապետ, և նա զամենայն խնդիրս՝ յորոց վերայ լինէին վէճքն՝ մի ըստ միոջէ յայտ արար։

Անդ էր և փեշտըմալճեան Տիրացու Գրիգոր մեծանուն վարժապետն, և հաճութեամբ ժողովոյն գրիչ ՚ի ձեռին նշանակէր ՚ի թղթի, և միաձայնութեամբ զբանս հարց ընդհանուր եկեղեցւոյ՝ ընտրէին և բերէին ՚ի վկայութիւն առաջարկութեանց իւրեանց։

Եւ ընդ առաւօտն Գրիգոր խալֆա, հաճի Զէլէպի, ձանիկ աղա, Մանանեան Յակոբ աղա, և Աղնաւուրեան կարապետ, առին զթուղթն զայն, և դնացին ՚ի պատրիարքարանն, տան ընդ ինքեանս և զԳրիգոր վարժապետն, զի թէ վասն բանից թղթոյն դէպ ինչ լինիցի, խօսեցցի։

Մտեալ իշխանաց առ պատրիարքն, պատմեն նմա զխորհուրդ իւրեանց, յետոյ յերեսս հանեն և զթուղթն, զոր ՚ի գիշերին գրեալ էին։

Ուր երբեք յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ և յՈրդւոյ բանք եղեն, ասէ պատրիարքն, Է՞ ոք ՚ի հարց մերոց սրբոց այդպէս գրեալ կամ բացատրեալ։ ես ընդունիմ և ասեմ, թէ Հոգին սուրբ հոսի ՚ի Հօրէ և յՈրդւոյ, կամ առնու ՚ի Հօրէ և յՈրդւոյ, որպէս և Հարքն մեր ասացեալ են, բայց ոչ ընդունիմ, թէ Հոգին սուրբ բղխի ՚ի Հօրէ և յՈրդւոյ, զի բղխումն նշանակէ ղծագումն յառաջին սկզբնէ, և յայնժամ լինին յերկորդութեան երկու սկզբունք։ Նա զի և լատինք Հոգին բուխ ասեն, որ նշանակէ, Հոգին յառաջագայի կամ հոսի կամ առնու, և ոչ թէ բղխի։

Digitized by Google

Ռաստի եթէ լաւոյնք բղխի ոչ ասեն, զմեզ ընդէ՞ր ստիպեն բղխի ասել։

Ալա որպէս ասացեալ են սուրբ հարք Հայաստանեայց եկեղեցւոյ, ընդոյն ասեմ և ես ըստ նոցին բառիւ, որպէս ասացեալ է և Շնորհալի սուրբ հայրն մեր, թէ՝ ի հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցան, և հոսման յիւրդւոյ առումն ոչ պատմեցան։

Զայս այսչափ ընդունիմ և ասեմ, և այլովք բառիւք ոչ կարեմ բացատրել, և չունիմ հրաման առաջի բղխի բառին դնել զբառն և յիւրդւոյ. զի հաւատամ ես, թէ Հոգին սուրբ բղխի՝ ի հօրէ և առնու յիւրդւոյ ըստ սուրբ Շնորհալւոյն որպէս ասէ, բղխումն հօր անքննաբար, առողջ յիւրդւոյ անճառաբար. զայս դիտեմ ես, և զայս հրամայեմ դրել. աւելի ինչ բացատրել արժան չէ։

Զայս հրահանգ առեալ նոցա, առաքեցին զվարժապետն յԵՆԻխափու առ Հ. Մեսրովբ պատմել նմա զհրաման պատրիարքին, զի այնու եղանակաւ լրացուսցեն զխօսս խրեանց, և մի՛ ընդունայն վէճք լինիցին։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս խօսելոյ Աբբայեան հարց ընդ վարժապետաց մերոց վասն մասանցին հաւատոյ, զորոց էին խնդիրք։

(1820) Այր յառաջ քան զայս ամենայն հրամանաւ արքունի բերեալ էր՝ ի կոստանդնուպոլիս՝ սրբազան հայրապետս տանն կիլիկիոյ կիրակոս կաթողիկոս, որ և յամբաստանութեանց բդեշխին բերիոյ իրաւացի քննութեամբ զերծեալ, առեալ էր ներոզութեան հրովարտակ դառնալ՝ ի սուրբ աթոռն իւր։ Բայց իշխանք մեր զբազում ժամանակս պահեցին աստ։

Digitized by Google

Մի՝ զի յամենայն եկեղեցիս մայրաքաղաքիս պատարագեսցէ, և նպաստ լինի հաւաքեսցէ ՚ի ժողովրդոց, և միւս՝ զի ՚ի գործ ցանկալի միաբանութեանն գտանիցի և մի ոք վճռափառ կաթողիկոս։

Այդ սա ինքն աղնուասերունդ և աղնուաբարոյ գոլով, ոչ սակաւ օգուտս գործեաց համազգային միաբանութեանն։

Քանզի զիւր տնկակից ճշմարտասիրութեանն զհանդերձ դօտեպինդ զգեցեալ՝ ուղիղ խորհրդով ոգի և անարատ նահատակէր ՚ի բանս ճշմարտասիրաց, և դիմագրաւ հանդիսացեալ, որոց զարտուղի խուսափէին ՚ի ճշմարտութենէն։

Այդ որովհետեւ հարկ եղեւ ընտրել զքանի մի դիտանական անձինս ՚ի մերայնոց, զի խօսեսցին ընդ Աբբայեան վարդապետս ՚ի վերայ այնց խորհրդոց, յորոց վերայ լինէին մինչեւ ցայժմ տարապարտ վէճք և հակառակութիւնք։

Եւ ընտրեաց Պօղոս պատրիարք զտէր Մեսրովբ դիտանական քահանայն խումխափուի, և զտէր Բարթողիմէոս իւսկիւտարու, և զՅովագուր վարժապետ ոմն, որ թէպէտ ծանօթ էր տրամաբանութեան, բայց ոչ այնչափ Աստուածաբանութեան, և խոովեալ կրիւք խօսէր։

Էին յայնժամ յԵրենիխափու Հ. Ստեփաննոս եպիսկոպոսն Ադէրեան՝ գերապայծառ կոչեցեալ, և յԱբբայեանց Հ. Մեսրոպ վարդապետ Աղաչըրաղեան, Հ. Սերովբէ վարդապետ Ճէվահիրճեան, Հ. Բերովբէ վարդապետ Պղնաւուրեան, Հ. Գրիգոր վարդապետ Գապալաճեան, Հ. Թադէոս վարդապետ Ասկերեան, Հ. Թովմայ վարդապետ Մագսէթեան, Սահակ վարդապետ և Պօղոս վարդապետ։

Իններքին սոքա էին ՚ի ծովահայեաց տան Եօնուզեան ըովհաննէս աղայի, ՚ի սոցանէ ընտրեցան խօսել ընդ Հայս, Հ. Մեսրովպ Աղաչըրաղեան, Հ. Թովմայ Մագսէթեան, և Հ. Սերոբովբէ Ճէվահիրճեան, զի որովհետեւ երեք էին ՚ի կողմանց Հայոց յառաջացեալք ՚ի խօսել, ՚ի սոցունց եւս այս երեք միայն ընտրեցան, բայց յամենայն ժողովի նախագահ նստէր Հ. Ստեփաննոս եպիսկոպոսն Ադէրեան, և ունկնդիր լինէր երկոցունց կողմանց, և ունկնդրութիւն սորին օգուտ մեծ առաբար Աբբայեան հարց յետ ժամանակաց, իբր զի լինէր երբ-

Digitized by Google

բեմն, զի երկու կողմանք հակառակէին ի վերայ միոյ բառի, միոյն պնդէր, թէ զայս բառ պարտ է բառնալ և փոփոխել, և միւսն հաստատէր ուղիղ և իրաւացի գոլ, և ոչ փոխոխել, և երկաքանչիւր կողմանք մնային ի վերայ մի և նոյն բառի վիճեալք, և ոչ միմն կամէր միւսոյն զիջանիլ։

Յայսպիսի բանս տեսեալ Ստեփանոսի եպիսկոպոսին զերկաքանչիւր կողմանն դյամառեալ կարծէս, հրամայէր լռել, և ինքն գրիչ ի ձեռին առեալ, տնօրինէր ըստ պիտելոյ խընդրողին այնպիսի բառս, որ ընդունելի լինէր երկաքանչիւր կողմանն, բայց առաւել Հայոյ, զի Աբբայեան հարք ոչ կարէին հակառակիլ ենթադրութեան Ստեփանոսի եպիսկոպոսին, ո՛չ թուիհետև ի դիմաց հռովմէական եկեղեցւոյ գլխաւոր էր նոցա կարդեալ, և եթէ ամենեն հռովմայ խոժոռէր և գժտիլ ընդ սահմանադրութիւնս Աբբայեան հարց, թէ վասն էր զայնպիսի բառ եդեալ են, կամ ոչ եդեալ, առաձեռն պատրաստ ունէին Աբբայեան հարք զայս բան, թէ մեք զի՞նչ ապրատուք, զի Ստեփանոս եպիսկոպոսն ի միջի մերում էր, և նա այսպէս տնօրինէր, և թէպէտ մեք բազմօք պնդէաք ընդդէմ Հայոց, բայց նա այնպէս կամեցաւ և լռեցոյց զմեզ, և իւրով իսկ դրութեամբ խափանեաց զվէճ մեր։

Եւ զայս այսպէս ասացին յետոյ Աբբայեան հարք առ ապատոնն հռովմայ, որպէս ունիս տեսանել ի կարդի պատմութեանս։

Ա՛րդ վէճք սոքին էին ի վերայ հնգեցունց խընդրոցս այսոցիկ, նախ թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս և զերկուս կամս, և զերկուս ներգործութիւնս։

Երկրորդ՝ թէ Հոգին սուրբ բղխի ի Հօրէ և յՈրդւոյ։

Երրորդ՝ թէ հոգիք զղջացեալ և խոստովանեալ մեղաւորաց գնան ի կայանս քաւարանին, և անդ դատանեն զներումն չնորհօք սուրբ պատարագին և գնան յարքայութիւն։

Չորրորդ՝ թէ պետրոս է գլուխ առաքելոց, և ընդ նմա գլխաւորութիւն ունին յաջորդք նորա ի յաջորդս առաքելոց։

Հինգերորդ՝ թէ վերջին օծումն է խորհուրդ սուրբ եկեղեցւոյ, և պարտ է առնել զայն ի ծանր մահամերձ հիւանդս։

Ի վերայ հնգից խընդրոցս այսոցիկ եղեն բազմաքննին վէճք

իբրեւ զաժիտս երիս, զի յոթօրէից սրբոց ծննդեանն ակսեալ տեւեաց վէճն մինչեւ ցաւադ չորեքշաբաթի օր սուրբ Զատկին։

Եւ թէպէտ երկաքանչիւր կողմանք ուղղափառապէս լինդունէին զայս ամենայն մասունս հաւատոյ, բայց ոչ դիտելով զմիտս և զնանաչումն իրերաց, զմիմեանս հերետիկոս և հերձուածող դատէին անգիտութեամբ, զոր օրինակ Հայն մի բնութիւն ասէր, և Հռովմէական Հայն երկու բնութիւն, երկոքին եւս ուղղափառութիւն են, եթէ ուղղափառ միօք ասիցին, և երկոքին եւս չարափառութիւն են, եթէ մոլորական միօք ասիցին։

Զի Հայն ասէ մի բնութիւն փոխանակ մի անձնաւորութեան, որ է ուղղափառութիւն, և Հռովմէական Հայն ասէ երկու բնութիւն, փոխանակ Աստուածութեան և մարդկութեան Քրիստոսի, որ է ուղղափառութիւն։

Այնպէս է տեսանել և՛ի միւս խնդիրս, յորոց վերայ լինէին մինչեւ ցարդ տարապարտ վէճք և հակառակութիւնք, զի զիւրն ամբողջապէս երկոքին կողմանք եւս աղճատութեամբ լինդունէին, բայց՝ի վերայ բառի և ձայնի հակառակ ոգւով վիճէին և կռուէին ոչ դիտելով զմիտս իրերաց։

Ահա այս եղեւ պատճառ բազմաց հակառակութեան և հերձուածողաց կորստեան՝ի սկզբանէ մինչեւ ցայժմ, որով միոյ սուրբ աւազանի ծնունդք, միոյ հօր սուրբ Լուսաւորչի հարազատ զաւակունք, աղդակիցք և արիւնակիցք անգամանէին և արհամարհէին զիրերաս, զմիմեանս հերձուածող կոչելն իբրեւ զարդարութիւն գիտէին, և արքայութեան ժառանգութեան պատճառս համարէին, որով գժտութիւն եղբարց, անհաւանութիւն ծնողաց և զաւակաց, բաժանումն և աւերումն տանց, և այլ անթիւ չարիք։

Ա՛ռ որս ճարտար բժիշկք նախնի պատրիարքունք բազմապիսի հնարս հոգային՝ի դարման վիրացս, և մինչեւ ցայժմ չեղեւ բոլորովին բժշկութիւն, այլ օր ըստ օրէ ճարակեալ՝ մահառիթ խոցուածովք կսկծեցուցանէին զհոգիս ազգասիրաց։

Բայց յայսմ ժամանակի իղձ սիրոյ և փափաքանաց ազգասէր անձանց՝ որ մինչեւ ցայս վայր աղեկիզեալ բորբոքեր տե-

Digitized by Google

ասնել զկատարումն պատուիրանին Քրիստոսի, միշնդեռ յա-
ղորեցաւ արքունի հրամմեծաւ դեղերիլ ՚ի գործ սիրոյ և մի-
աբանութեան, վառեցան և պատրաստեցան ՚ի գլուխ ասնել
զայս հոգեւոր պաշտօն աստուածային սիրոյ, ուստի և զա-
միսս երիս ուքնեցան և վաստակեցան յամենայն երեկոյս ժո-
ղովիլ ՚ի յեկեղիսաբու, և զդիշերն ողջոյն ունկնդիր լինել վի-
ճաբանութեանց և խնդրոց երկոցունց կողմանց, և յորդորիչն
զերկոսին կողմանս չխօսել կրիւք և ոգւով հակառակութեան,
այլ աստուածային սիրով և քաղցր կենակցութեամբ լրումն
տալ բանից և գործոյ իւրեանց։

Եւ այսպէս յետ եռամսեայ բանախօսութեանց և ժողո-
վոյ հաճութեամբ և հաւանութեամբ երկոցունց կողմանց՝
գրեցին զսահմանադրութիւն ժողովոյն իւրեանց, և միաբան
խոստովանութեամբ ստորագրեցին ամենեքին, և ընդ առա-
ւօտն իշխանապետքն աստուածասէրք տային զսահմանադրու-
թիւնն առ պատրիարքն, և նա մի առ մի քննեալ զամենայն,
հաւանեցաւ, և ինքն եւս ժողով արարեալ եպիսկոպոսաց,
յորս էր և աստուածընտիր կաթողիկոսն Սսոյ տէր Նիկոլոս,
և վարդապետաց, և քահանայից, և ամենայն երեւելի անձանց
արուեստաւորաց, և ՚ի ժողովին յայնմիկ արարեալ աստեղա-
բանութիւն լիմն սքանչելի, ընտիրեցաւ ՚ի լուր ամենեցունն ըղ
սահմանադրութիւնն զայն, և մի առ մի բացայայտեալ՝ կնիքս
պահանջեաց ՚ի նոցանէ յամենեցունց։

Այնդ էր տեսանել զայն անպատմելի ուրախութիւն սրտի
ժողովելոցն ամենեցուն, և զբոլոր արուարձս վախճելի
սիրոյ և խաղաղութեան, որ վառեալք աստուածային սիրով
յօժարեցան և տոռոգրեցին ամենեքին կնքելով զսահմանա-
դրութիւնն, և խնդրեցին, զի ուղեցի այն ՚ի յիշատակ յաւեր-
ժական սիրոյ, և մնասցէ հաստատուն ՚ի մէջ աղգիս, որ և
յետոյ միաբան խորհրդով իշխանապետացդ աղգիս տպեցաւ և
կոչեցաւ ՀՐԱՒԷՔ ՍԻՐՈՑ, և յառաջն և ՚ի վերջն կնքեցաւ կնքով
Պօղոսի պատրիարքին, և այնպէս տարածեցաւ ընդ ամենայն
աշխարհ։

Այդ ջերմեռանդ սահմանադրութեան այնորիկ բարիքդ վերջ
կայ դնել աստանօր, զի որոց ոչն էջեն տեսանելք զտետրակն

Digitized by Google

Հրաւէր սիրոյ, ընթերցողին աստանօր, և ծանիցեն թէ ոչ նո֊ րոգ եմուտ ի մեզ ուղղափառութիւնն, այլ զոր ի սկզբանէ ունէաք և անխափան պաշտեաք յեկեղեցիս մեր, նոյն իսկ է այն, զոր և անփոփոխ ունիմք և պահեմք խոստո֊։

ԳԼՈՒԽ ԻԵ·

Սուրբ եւ ուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն։

“ Տէրն մեր Քրիստոս է Աստուած ճշմարիտ և
» մարդ ճշմարիտ, նոյն ինքն որդի մարդոյ և որդի Աստուծոյ,
» համապետ հօր ըստ Աստուածութեան, և համագոյ մեզ ըստ
» մարդկութեան։ (Ընդհանրական 118)։

“ Ուստի ասեմք ընդդէմ Նեստորի՝ մի բնութիւն փոխա֊
»նակ մի անճնաւորութեան։ Ասեմք ընդդէմ Եւտիքեայ՝ եր֊
» կու բնութիւն անբաժանելի ի մի Քրիստոս, ըստ մեռաց սուրբ
» հարցն և ժողովոյ։

“ Քանզի՝ ոչ ըստ Նեստորի ի յերկուս բնութիւնս և յեր֊
» կուս դէմս բաժանեմք զմին Քրիստոս, և ոչ ըստ Եւտիքեայ
» և համախոհից նորին ի մի բնութիւն ժողովեմք շփոթմամբ
» և այլայլութեամբ։

“ Այլ ունիմք ասել զերկու բնութիւնն ըստ մեծին Գրի֊
» գորի Աստուածաբանի՝ առ Կղոդիոս թղթին դրեալ ընդ֊
» դէմ Ապողինարի՝ և որոց ըստ նմա, եթէ՝ բնութիւնք եր֊
» կուք։ Քաւելոյ ասել և զպատճառն՝ քանզի Աստուած և
» մարդ . . . և այլուր ասէ, եթէ կրկին էր, յայտ է թէ՝ բը֊
»նութեամբ և ոչ անճնաւորութեամբ։

“ Իսկ զմի բնութեանն եղանակ՝ զոր ասեմք մեք, մի ոք
» յայլ դէմս կարծիցէ, քայց . . . զոր ուսաք ի յուղղափառ
» վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ ի սրբոյն Կիւրղէ Ա֊

Digitized by Google

„ղէքսանդրացւոյ, որ ընդդէմ Նեստորի, որպէս և գրէ յա-
„ռաջին թղթին՝ որ առ Ընկունդոս, եթէ խոստովանիմք մի
„բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին,
„փոխանակ մի անձնաւորութեան։

„Այնպէս և կրկին լինել կամաց և ներգործութեանց՝ ի
„միաւորութեան անդ՝ անհակառակ միմեանց, երբեմն Աստ-
„ուածայինն՝ յորժամ զԱստուածութեանն կամէր յուցանել զգո-
„րութիւն, և երբեմն մարդկայինն՝ յորժամ զմարդկութեանն
„կամէր յայտնել զխոնարհութիւն„։ (Ընդ. Հանրական 119)։

„Հաւատամք և ներգործութեանցն նոյնպէս լինել Աստ-
„ուածայնոցն և մարդկայնոցն՝ ի միաւորութեան անդ.... միոյ
„անձնաւորութեան զերկուսին զայսոսիկ խոստովանիմք, եր-
„բեմն որպէս զԱստուած՝ զԱստուածայինս ներգործելով, և
„երբեմն որպէս զմարդ՝ զմարդկայինս։

„Իսկ զՀոգին սուրբ խոստովանիմք հօր և Որդւոյ, քանզի
„ըստ սրբոյ Լուսաւորչին Հայր յանձնէ, Որդի՝ ի հօրէ, Հոգին
„սուրբ՝ ի նոցունց և ի նոսին„։ (Ադաթանգեղոս 397)։

Վանորոյ ասեմք ըստ Շնորհալւոյն այսպէս, „Թէ Հոգին
„սուրբ բղխի՝ ի հօրէ և առնու յՈրդւոյ, բղխումն հօր ան-
„քննաբար, առումն յՈրդւոյ անճառաբար„։ (Շարական կէ.)։

„Եւ թէ՝ ի հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցան, և հոս-
„ման յՈրդւոյ առումն ոչ պատմեցան։

„Եւ ըստ Շարականին, Աղբիւր կենայ և փրկութեան
„մերոյ՝ Հոգի հօր և Որդւոյ„։ (Շարական Բ.)։

Իսկ հատուցումն անջատեալ Հոգւոյ՝ ի հրաժարիլ նո-
ցա յաչխարհէ, ըստ ուսուցանելոյ սրբոյն Գրիգորի Լուսա-
ւորչին այսպէս. „Որք սուրբքն են, ի Քրիստոս մերձ լինին,
„զի ուր եան եմ (ասէ) անդ և պաշտօնեայն իմ եղիցի„։
(Յովհ. ԺԲ. 26)։

„Դարձեալ, իբրեւ երկրաւոր կեանքս ի ձեռն մահուան
„ի դլուխ ելանեն, Հոգին յուղարկի առ Աստուած, որ եռն
„ինա, և մարմինն դառնայ ի հող, յորմէ ստեղծաւ յարարչէն։

„Եւ սուրբ և արդար Հոգւոյն ընդ յառաջ գան հրեշ-
„տակք և սրբոցն Հոգիք, և տանին առաջի Աստուծոյ՝ աղ-
„մոսիք և օրհնութեամբ և երգօք Հոգեւորօք, գովեն զա-

Digitized by Google

„ մինաղօր փառն Տէրութեան, ամենատուրը ներողութեանն,
„ և գոհանան ճշմարտապատուր բարութենէն, որ փափաք յերկրա-
„ ւորացս յերկնաւորսն, յանարգութենէս ՚ի պատիւ, ՚ի տկա-
„ ւիրեալն և ՚ի կոչնեցեալն յիւր արքայութիւն և ՚ի փառն „ :
(Յաճախապատում 152) :

„ Եւ յայնմ ասէ, իսկ որ ՚ի սուրբ սէրն Քրիստոս հաս-
„ տատեալ են, որք զանձինս իւրեանց ետուն ՚ի մահ . . . ապ-
„ րեալք լինին . . . :

„ Եւ բացցին դրունք կենաց բարերարութեանն Հորհօք
„ հոգւոյն սրբոյ վերին կայանէն, ուր ժողովք սրբոցն են
„ հանգուցեալք „ . (Յաճախ. 171) :

Իսկ յաղագս ներելի մեղաց ննջեցելոց՝ և թողեալ մահու չափ մեղաց զապաշխարանն ոչ վճարողաց ասա՝ աղօթս առ-
նեմք ասելով. „ Արա արժանի ողորմութեան և քաւութեան
„ և թողութեան մեղաց „ :

Եւ վերադարձեմք յեկեղեցիս, „ Ոչ թողութենէ ես տուող
„ Աստուած, թող զմեղս մեր ննջեցելոց „ : (Շարական ձծէ.)

„ Եւ հանգիւ ՚ի խորանի քումմէ յաղքատական ՚ի հանգստեան „ :

Եւ դարձեալ Շարական „ Ահեղ խորհուրդ քահանային „ :

Վանորոյ և մագիստ քահանայն ՚ի սուրբ պատարագին ասելով. „ Ցիշեա տէր և ողորմեա, և զմա ՚ի հոգիս հանգու-
„ ցելոց, հանգիւ զնոսա և լուսաւորեա ընդ սուրբս քո յարքա-
„ յութեանդ երկնից „ :

Զանգի այսպէս ուսոյց սուրբ Լուսաւորիչն մեր յասելն, „ Իսկ զհաւատացեալոց մեղուցելոց և խոստովանողաց և ապաշ-
„ խարողաց և հաղորդելոց վրկական խորհրդոյն՝ և հրաժարե-
„ լոց յաշխարհէ, և նոցա կատարեսցին յիշատակք Քրիստոսի
„ պատարագաւն՝ և աղօթիւք և գթովք տնանկաց՝ այլ և բա-
„ րի գործովք, զի վերջնոցն բարեգործութեամբք հանգուց-
„ եալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անվախճանից „ :
(Յաճախ. 160) :

Վանորոյ և տեղին՝ յորում կան այսպիսի ննջեցեալ հո-
գիք, որ կարօտ են օժանդակութեան եկեղեցւոյ, կոչի ՚ի մեզ կայան, զոր այլք կոչեն քաւարան կամ մաքրարան :

Իսկ զանգեղջ մեղաւորս և զամբարիշտսն և զանհաւատսն՝

Digitized by Google

գիտեմք լինել արդէն իսկ անարդելաբս և դատապարտեալս ՚ի գեհենի, ուստի ասեմք քանիւ սուրբ Լուսաւորչին. « Ա՚լ
» կայանք են նոցա, որք արհամարհեցին զօրէնս նորա, և ծա-
» ռայեցին դժնդակ ցանկութեանց անտի՚ն և պէս պէս չար-
» եաց, որ ժառանգելոց են զարտաքին խաւարն, խաւար է
» աստ արտաքին չար, որոց խաւարեալ են միտք և զգայու-
» թիւնք, և օտարացեալ են ՚ի կենաց անտի՚ն... և են անդ
» ՚ի հուր գեհենի, ուր լալ է աչաց, և կրճել ատամանց »։
(Յաճախ 253)։

Իսկ սուրբ առաքեալն Պետրոս է գլուխ առաքելոց սրբոց, և վեմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց, որպէս երդեմք. « Որ դերապետն ընտրելոյ առաքելոցն դաստուց անուանեցեալ
» լինել զերանելին պետրոս, գլուխ սուրբ հաւատոյ, հիմն ե-
» կեղեցւոյ »։ (Շարական ծթ.)։

Եւ սուրբ Լուսաւորիչն մեր ասէ. « Քրիստոսագունդ և խան-
» չակիր առաքելոցն, որոց գլխաւորն պետրոս »։ (Ագաթ. 30)։

« Եւ թէ՝ արար զնա վէմ հաստատութեան ամենայն եկե-
ղեցեաց »։ (Ագաթ. 198)։

Եւ որպէս իւրաքանչիւր առաքեալք ունին ՚ի քրիստոսէ զիշխանութիւն առաքելական, նոյնպէս և ամենայն աթոռք՝ որք ունին զօրինաւոր յաջորդութիւն առաքելոց, Աստուածային իրաւամբք ունին զամենայն իշխանութիւն և զիւրաւսիրութիւնս առաքելոց ըստ իւրեանց կարգի և սահմանի, որպէս ուսուցանեն սուրբ դիրք, և սահմանդրութիւնք սրբոց հարց և ժողովոց, ըստ այնմ. « Լուսցէք նոցա պահել զամե-
» նայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ
» եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի »։
(Մատթ. ԻՀ. 20)։

Եւ խորհուրդք սուրբ եկեղեցւոյ եօթն են, յորոց մինն է վերջին օծումն, զոր պարտ է մատակարարել ծանր հիւանդաց՝ օծմամբ իւղոյ ձիթոյ օրհնելոյ ՚ի քահանայէ, ըստ պատուիրելոյ մեծին Յովհաննու իմաստասիրի ՚ի ծԱ. կանոնի ժողովի անդ՝ ուր ասէ, “Արժան է զհիւանդացեալն ձէթ՝ քահանային
» օրհնել ըստ իւրումաղօթիցն որպէս և առաքեալն Յակովբոս
» պատուիրէ ասելով, եթէ հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ, կոչեսցէ

» զերիցունս եկեղեցւոյն, և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս,
» օծցեն իւղով յանուն Տեառն, և աղօթիւքն հաւատովք փրկե-
» կեսցեն զաչխատեալն, և յարուսցէ զնա տէր, և եթէ մեղս
» ինչ իցէ գործեալ, թողցի նմա » : (Յակոբու Ե. 14):

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս խնդրոց Աբբայեան Հարց, եւ ընդունելութեան նոցին:

(1820) ԱՅՍ՝ այս սահմանադրութիւն և խոստովանողական դաւանութիւն հաւատոյ մասանց յերկուց կողմանց միաբան հաւանութեամբ ստորագրեալ, բացայայտ ծանուցաւ ՚ի լսել իս ամենայն ժողովրդեան, որով և ոչ սակաւ եղեւ առիթ ցնծութեան և ուրախութեան ամենեցուն՝ տեսանելով զկատարումն վիճաբանութեանց ՚ի վերայ առաջարկեալ խնդրոցն, որում փափաքէին ամենեքեան:

Բայց յետ այսր յաւելին հարք Աբբայեանք զերիս այլ եւս զինդիրս յարարողութեանց սակի, և ասէին. Թէ պարտ է զսոսա եւս ուղղել, ղի բոլորովին չահեցին միտք ժողովրդոց իւրեանց, և մի՛ նեղեսցէ զնոսա խիղճ մտաց իւրեանց ՚ի գալ յեկեղեցիս Հայոց, որովհետեւ այնպէս էին նոքա ուսեալք և դիտացեալք, թէ այն երեքին արարողութիւնք՝ զորս առնեն Հայք, հերետիկոսական ինչ իցեն, և էին այսոքիկ. Նախ՝ ոչ երգել զնզովն Լեւոնի և ժողովոյն Քաղկեդոնի յեկեղեցական պաշտամունս մեր ՚ի շարականէ և ՚ի ձեռնադրութեան գրոց բառնալով:

Երկրորդ՝ ոչ յիշել ՚ի Պատարագի զանուանս Ծովհաննու Որոտնեցւոյն՝ և Գրիգորի և Մովսիսի Տաթեւացեաց:

Երրորդ՝ ընդունիլ զամենայն ուղղափառական և սուրբ ժողովս սրբազան Հարց, զորս արարեալ են ՚ի պէտս դարս ՚ի Ջաղխումն աղանդոց բազմադիմի հերետիկոսաց:

Digitized by Google

Այս երեքքին խնդիրք՝ թէպէտ օրինաւոր և օգտակար էին յոյժ բացայայտութեան և ուղղափառութեան եկեղեցւոյն Հայոց, այլ Պօղոս Պատրիարք ոչ իշխեաց զայս փոխոխութիւնս առնել ինքնիշխան հրամանաւ իւրով պատճառելով, թէ սոքա հնացեալք և արմատացեալք են ի յազգիս, և եթէ փոփոխեացուք զսոսա, դուցէ գայթակղութիւն և խռովութիւն ծագիցի ի մէջ հասարակութեան ազգիս, զի հասարակութիւնն տգէտ է և անծանօթ եկեղեցական սահմանադրութեանց և պատմական դրոց, և մինչեւ ցայս վայր այսպէս է ուսեալ և լուեալ, արդ ոչ կարեմ՝ ասէ վոփոխութիւնս ինչ առնել ի պաշտամունս մեր ես ինքնին միայն հրամանաւ իմով և կամեցողութեամբ։

Այսմ թէպէտ բազմօք չանացին իշխանք մեր լինել ընդունելի և ի գործ դնել, այլ ոչ կարացին հաճեցուցանել զՊօղոս պատրիարք, զի ասէր. եթէ ընկեցէք զիս ի պատրիարքական աթոռոյս, և զայլ ոք կարգեցէք, և նա կատարեսցէ զինդրուածս սրտի ձերոյ։

Իլսեն զայս իշխանապետաց մերոց՝ սկսան վերստին սուգ զգենուլ և տրտմիլ, զի ոչ յաջողեցաւ նոցա տեսանել զկատարումն Աստուածային պատուիրանին՝ այսինքն հոգեւոր սիրոյ և միաբանութեան ազգիս, և զօր ամենայն չանային և խնդրէին յԱստուծոյ ցուցանել և առաջնորդել նոցա զօգուտն և զպիտանին, որ հաճոյ իցէ բարերար կամաց իւրոց։

Էր ի սմին ժամանակի ի Կոստանդնուպօլիս ի մէջ աւագորերոյն արքունի՝ նախարար ոմն Հալէբ էֆէնտի կոչեցեալ, այր նեղնդամիտ և խռովայոյզ և չարագրգիռ, բայց ըստ դաւանութեան և չար դիպուածոյ ժամանակին՝ այնքան սիրելի էր յաչս արքայի, մինչեւ կոչիլ երկրորդ արքայի, և ամենայն ինչ խորհրդով և դիտութեամբ և հրամանաւ նորին պարտ էին հասանել ի լսելիս արքայի, և ի գործ դնել ըստ կամաց նորին։ Եւ սա էր սկզբնահիմն և նախնական պատճառ կործանման երեւելի տանն Տիւզեանց, և ամենայն չարեաց՝ որք եղեն ի ժամանակին յայնմիկ։

Արդ սա վեց ամօք յառաջ դնացեալ դեսպանութեանն պատուով ի Գաղղիա ի փարիզ, նստի անդ զամս երկուս, և

Digitized by Google

ոչ դիտելով զԴաղղիերէն լեզուն, ստիպի գտանել ինքեան զԹարգմանն ղոմն և ղուստուիչ, զի ՚ի նմանէ ստասցի փոքր ՚ի շատէ զհմտութիւն Դաղղիական լեզուին։

Անդ գտանի ՚ի ժամանակին յայնմիկ Հ. Մեսրովպ վարդապետն Ազաչըրաղեան, որ այժմ գլխաւորն էր Ազբայեան Հարց եկելոց առ մեզ, և խնդրանօք նորին դնայ առ նա, և լինի նմա Թարգման և ուստուցիչ, ցորչափ եատի նա ՚ի փարիզ։

Պու մատտէյի տէ պիզիմ միլլէթին սուրը վարդատպէտլէ-
րին քիթապլարընա պագադադ, չօգ չահատէֆնամէ վար, է-
կէր ժամագիրքտէ, էկէր Շարականտա, վէ էկէր Մաշտոցտա
տօլու։

Պու մատտէյի տէ ընդհանուր քիլիսէ պու թարզ հինանըր,
վէ Հռոմմայ սուրը քիլիսէյի տաբի։

Պէչինճի մատտէ, վերջին օճումմտուր, ճայիզ տեր հաս-
տալարա վերմէք, նասըլ քի սուրը առաքեալլար վէրիրլեր ի-
տի Քրիստոս էֆէնտիմիզ պու ճիհանտէ իքէն, վէ Յակոբոս
առաքեալ տա թէնպիհ իտեր, վէ ճիւմլէ խրիստիյան միլլէթ-
լեր տէ իտէրլեր, վէ պիզիմ միլլէթի տաբի իտեր իտի իլերի,
պիր պաշլըճա ադամէ իչին օճումու գալտըրտըլար, լաքին

Digitized by Google

գիշեր ժամ գալտը օծումնուզ, վէ խոխէյենե վերիրէր, գի-
րա Գաթոլիկէրտե տախի զուրուբ իտեր գի, եա հասթա խա-
տեմեզ ալնայա, վէ եափօտ հասթանէն էթրաֆը գոյվէրմեզ
գի, հասթա էօլէճէյինի տուլմասըն տէյի։

Պունղար ճէմիսի տե պէր այնի իտի պէզիմ միլլէթին սուրբ
վարդապետէրինն քիթապլարընտա։ Պունտան սօնկրա պէյէն-
մէտիկինիզ ազիզ աստուածպաան Աբգալը վարդապետէր նէ-
եափտըլար, պագըն կէօրիւն, վէ էօյրէնինի, միլլէթիմիզին ա-
զիզ վարդապետէրինէ վէ ազգասէր ամիրալարա այնամէտը-
լար գի, միլլէթիմիզին խրիստիյանլըղընա խալել վէրինէլերին
իսմի գալգսըն գիլիսէտե օգունան քիթապլարըն իչինտէն,
գի պունղար տրր. Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի,
և Մովսէս Տաթեւացի, վէ Շարակնոցան Դէօսկորոս Ասպէ,
վէ ձեռնադրութիւն քիթապընտան Լեւոն բաբըն վէ Գաղկե-
դոն ժողովքունուն նղովքու, պունղար իչին եասաք իմմիչ-
լեր իտի Հռոմէյ քիլիսէնին միսիօնարլարը, վէ պու մատե-
լեր իչին տէղլեր իտի էրմէնի քիլիսէսինէ կիմմէյին։

Իչտե պունղար տրր Աբգալըլարին կէօրտիւքլերի իշ, աղ-
նայըն վէ պիլին։

Վէ գուեաը արտրոլութիւնղար, վէ ծէղլեր էակի Թագ-
վիմ ուիր, պին սէնէտէն էվվէլի նասըլ-բաա իւմիւմէն խրիս-
տիյանլերին, օնուն այնիսի տիր էրմէնի քիլիսէնին գայտէլերի։

Մէքրուհ վարդապետ էակի քիթապլարտան Թասիհ ԹԹանին-
լեր պագդնղար, աղնասընղար։ Նաֆիլէ եէրտե էրմէնիլերէ
պուխտան իմմէսինլեր, վէ էրմէնի քիլիսէսինէ հերետիկոս
տէմէսինլեր, իչտե պու եօգդրքի եապըլմն մատտեէլերին խու-
լասէսինի վէրելիմ, Հռոմէյ քիլիսէսի իչէն էրմէնի քիլիսէ-
սինի պիրպիրինէ րուպար իտերէք, նասըլ գի հեր մատտէնին
նիհայէթինատե օլմուշ սուր։

1. էրմէնի միլլէթինէն քիլիսէսի նէ Թարզ ինանըյօրսա
Հոգին սուրբուն բղխումունու, ելումունու, պէր այնը ինանըր
Հռոմէյ քիլիսէսի։

2. էրմէնիլեր նասըլ ինանըրլարսա իգի բնութիւնու Քրիս-
տոսուն, օնուն կիսի ինանըրլար Հռոմէյալրլար։

3. Գեստոսուն գվխաւորութիւնա վէ բաբըն պէօյիւքլիւ-

Digitized by Google

ղևոնդ կելիսէ՝ ինքսիրն սօղ թարգմանիս առիմաղար, լա ինձէ ազի Ս.լսահ կիսպի խոհերէր։

4. Բուսարանը պիր այնի էրմէնիլէրին տէտիղի կայանք կիլսպի տէրլէր։

5. Ա.իրվին օձուսու թարգմանէչին գանդուլ խոհերէր, օլտուքի իքի թարաֆ տա պիր այնի հիչ պիր ֆէրք եօգ տուր։

Վ աքին Բօռնէօ լսմէչուիհ եալնիզուս, վէ մէքրուհ միսիօնասլար, քի Լրմէնի քիլիսէսինէ հերեմկիս հերձուածող տէրլէր, էկէր Հռոմայ քիլիսէսի տէ պունլարա ույուպ, օ տա տէրլսէ, իւմիւժէն հերեմկիս վէ հերձուածող քէնսիլէրի օլուրլար, ղիրա խրիստոս տուէմէր տէրլէր քի, (Հաւանաբար նոյն է հեռեւուխիւն) օլ քի իքի մատաէ պիր այնի տիր, պիրինէ էյի տէնիրսէ, հէյ հէլալէմէ օ պիրինէ տէ էյի տէնիլիր, վէ էկէր պիրինէ ֆէնա տէնիրսէ օ պիրինէ տէ ֆէնա տէնիր, զիրա իքսի տէ պիր տիր։

Վ է լաքին պիդ Հռոմայ քիլիսէսինէ հերեմկիս տէմէյիւ, վէ հերձուածող հիչ, պիրա տուրբ եկեղեցի պիդիրիզ, բարը տա օնդա օֆուրմայը իչիւն բաթ տէրիզ, աստուածաբանճա իսլիխտաքի մատաւոր եկեղեցի։

Վ է տին թարգմանճան ալէօիւնքի կիւնտէ կէրչի եաղնըը եօգ տուր, լաքին էյի բարք ամէլ թարգմանճան, վէ իւլա չերաֆի թարգմանճան իֆրտամ եաղնըը վար։

Զիրա չար, մոլորեցուցիչ, խաբեբայ, վէ մէքրուհ միսիօնասլարդն, վէ պադի մօնթանեօուլարդն ճէհաննամըդն սահդ տիր տէյի տիյնէմէ իլէն, չօդ եաղնըդ չէրտամի կէօրնիյօր, պէօյլէճէ ճողուիհերի օլսուն ապրսլը Գաթոլիկներին։

1820· Մարտ 7

Հ· Վերոնէ Վ· Ճէվահիրճեան
Ի միաբանութենէ Մխիթարեանաց

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս օրհնութեան քաղցր վերջին օծման, եւ աղօթիւ ժողովրդեանն Հայոց.

ԱՐԴ՝ ի սկզբան օգոստոսի, օրհնեաց պատրիարքն զխունկ վերջին օծման՝ ի մայր եկեղեցին սուրբ Աստուածածնի.

Եւ յեկեղեցիս լինէ առաքեաց, զի ոք՝ ի հիւանդաց յօժարին առնուլ զայն խորհուրդ, երիցունք օծցեն զնա անխափան։

Բայց հակառակասէր գոլէճեանք ոչ սակաւ դրգռէին զմանս ոմանս՝ ի մերայնոց, եթէ զպապն եւս յիշէք՝ ի պատարագի, կատարեալ ուղղափառ լինիք, և այլ եւս անտեղի և անյարմար բանս ասէք, ասէին։

Եւ յօրինեցուրդ աւուր օգոստոսի, որ էր շաբաթ, գալոյ ոմն՝ ի հակառակասէր գոլէճեանց՝ խորհրդով գուցէ անթիւ կոչեցեալ խռովայոյզ կարգաւորին՝ որ ոխերիմ թշնամին էր եկեղեցւոյս Հայոց, ունելով՝ ի ձեռին իւր զչրաւէր սիրոյ գիրքն, և վոխանակ պատկերի Լուսաւորչին՝ մածուցեալ ըզպատկեր պապին Հռոմայ, սկսաւ չրջիլ՝ ի սենեակս կօչկակարաց կեսարացւոց, և ցուցեալ ամենեցուն զպատկեր պապին, ասէ ցնոսա, առ իմ՝ նատեալ է քեզբարք սատ անհոգս և միամիտ, ոչ գիտէք, զի պատրիարքն մեր փոանկացեալ՝ ուրացաւ զլուսաւորիչ հայրն մեր, և զպապն փոանկաց ընկալաւ. անարգեաց զչխմածինն սուրբ, և Հռոմայ աթոռոյն հնազանդեցաւ, այսուհետեւ ոչ գոյ սրբալոյս միւռոն, որով որդիք մեր դրօշմեսցին՝ ի հոգի սուրբ, այլ լքբեւ աղցան խառոյ՝ իւղով ձիթոյ ունիք օծանիլ. տեսէք եղբարք, տեսէք ըզպատկերս զայս, միթէ նմանիսի՝ սա սուրբ Լուսաւորչին մերոյմ, երանի թէ եղբարք՝ մեռեալ էաք, և ոչ տեսեալ զայս օր, արիք եղբարք արիք, լռելոյ ժամանակ չէ, ահա եւ ըստ հարիւր ոգիք սուրբ Լուսաւորչի զաւակունք՝ ի վաղիւն ունին գնալ առ պատրիարքն, բողոք բառնալ, գոչել և աղաղակել, և սասանեցուցանել զնա, զի թերեւս զղջասցի, և մի՛ վոխեսցէ զհայրենի աւանդութիւնս նախնեաց մերոց, եւայլն։

Digitized by Google

Զայսոսիկ լուեալ անմիտ ժողովրդեան, և տեսեալք զպատկեր պատկերն՝ հաւատացին դժոխալուր բանից նորա, և խոստացան նմա ինքեանք եւս կանխել ընդ առաւօտն յեկեղեցին ի խումխաքուս, և գլխաւորք կօշկակարացն խոռվեալք յոյժ ի բանից յայսցանէ, առաքեցին զարս ի կրսլակս արհեստակցաց իւրեանց պատուիրել և ասել, զի թէ յառաւօտուն յեկեղեցին խումխաքուի ոչ գտանիցին, յարհեստէ անտի տապրադիր լինիցին։

Ա՛յս ձայն եհաս յականջս պատրիարքին ընդերթեկս աւուրն, և իսկոյն վութաչաւ զդիոնէսիոս եպիսկոպոս վէքիլ իւր առաքել յիւսկիւտար առ Գրիգոր ճարտարապետ՝ և առ Յարութիւն աղա պէշճեան ծանուցանել նոցա զայս՝ զոր լսեաւն։

Բայց որովհետեւ երրորդ ժամ էր գիշերոյն, ոչինչ կարացին առնել նոքա, և ասէ Յարութիւն աղա պէշճեան, եթէ լուեալ էր իմ զայս յերեկոյին, դիւրին էր ցրուել զխորհուրդս նոցա, բայց զի գիշեր է, զի՞նչ կարացից առնել։

Եւ ի վաղիւ անդր ի կիւրակէի յառաւօտուն գաղատացին այն՝ որ յառաջնում աւուր վրդովեալ էր զհասարակութիւնն, չըջագայեալ յիչեւանս ամենայն ապստամբաճառ օտարականաց ի կերպարանս կեսարացւոյ՝ հրաւէր կարդաց ի չորրորդ ժամուն իջանել յեկեղեցին ուսուել զմատաղ։

Եւ Տէլի Պալտասար՝ որ էր ի մակոյկն ծովակալ բդեչխին, թելադրեալ ի բանից երկուց ապստամբաճառ կեսարացւոց՝ ունոյց անուանք էին Յակոբ և կարապետ, առաքեաց և նա ի պատրիարքարանն յայն օր զըրիկայս Յասմաթիոյ։

Եւ ամբոխ մեծ գումարեալ ժողովեցան ի պաղչէ ժամին եկեղեցւոյն, և միաբան աղաղակէին, թէ պատրիարքն փոանկացաւ, և զմեզ ի փոանկութիւն վոխեցոյց է, մեք հայ եմք, փոանկ ոչ լինիմք, ի սուրբ Լուսաւորչէ մերմէ ոչ բաժանիմք, եկեսցէ պատրիարքն և ծանուսցէ մեզ։

Ա՛ռաքեաց պօղոս պատրիարք զմարկոս և զՅակոբ եպիսկոպոսն երուսաղէմի, եկին նոքա, և յորդորէին զնոսա բանիւք բազմօք, թէ սուտ են այն ամենայն, զորս լուեաքն են, բայց նոքա հարին նոցա բռունս, և վանեցին զնոսա։

Digitized by Google

Ապա գրոհ տուեալ գնացին ՚ի պատրիարքարանն, և տես-
եալ զի փակ էր դուռն, հարին և խորտակեցին, և հեզան ՚ի
ներքս, յուզէին զամենայն սենեակս, և ոչ կարէին գտանել
զպատրիարքն, զի նա ուսուցեալ անդէն ընդ պատուհանն
անցեալ էր ՚ի փախուստ ՚ի մերձակայ տուն Տաճկին, և թա-
գուցեալ անդ։

Եւ այսու պաշտպանեաց ոչ միայն զանձն, այլ և որ մեծ
է՝ զազգն՝ զի թէ ինքն լինէր անձին նորա, տուժէր ազգն
զանհնարին տուգանս։

Յայնժամ Դիոնէսիոս եպիսկոպոս փոխանորդ պատրիար-
քին՝ ազդ արար ՚ի դուռն եչխիչէրի աղաւթին, որ իսկ և իսկ
ՀՀաս անդ 5–600 զօրականօք, և զոմանս կալեալ՝ առաքեաց
՚ի բանտ առ Մխիսխիր աղա, և զայլսն ցրուեաց, և եթող
անդ զՊաշ աղա հանդերձ զօրականօք, որ պահէին զդուռն
պատրիարքարանին զաւուրս հնգետասան, և զպատրիարքն
հանեալ ՚ի տանէ Տաճկին հրամանաւ Տէրութեանն, նստուցին
՚ի տեղի իւր։

Եւ ՚ի միւսում աւուր, որ էր 9 օգոստոսի, ոմանք ՚ի կօշ-
կակարաց յետ զայն ոճիրս գործելոյ յանդգնեցան ելանել
նաեւ աներկիւղ յառեան եպարքոսին, և թուղթ բողոքանաց
մատուցանել նմա։

Եւ եպարքոսն սպառնայ նոցա, թէ որով իշխանութեամբ
արարիք զայդ ՚ի վերայ պատրիարքին ձերոյ յարքունուած
կարգելոյ՝ կուտիլ ապստամբութեամբ. եթէ դատ ինչ ունիք
ընդ նմա, և բողոք զնմանէ, ահա առեան, այժմ ծանեայք,
թէ գոյ իշխան ՚ի վերայ ձեր, զի յետ ձեռներէց լինելոյ յայդ
չարիս անհնարին՝ եկիք այսր ամբաստան լինել։

Եւ հրամայէ ձերբակալ առնել զամենեսին, և արկանել
՚ի բանտ։

Ինձին աւուր կոչեցան ՚ի դուռն և իշխանք մեր, ուր
Էֆէնտի ՀՀարց նոցա՝ թէ գո՞ն էք զպատրիարքէն ձերմէ,
զորմէ չարախօսեն ապստամբեալք, և թէ զի՞նչ լոցէ այս իւղ
օրհնեալ, նոյն է ընդ պալատան իւղոյն եկեալ յէջմիածնէ,
թէ այլ։

Պատասխանի արարին իշխանք մեր, թէ սա այն է, որ յա-

Digitized by Google

ւորդ անուն առաքելոյդ և Քրիստոսի կալը ՚ի մեզ, քայց ՚ի սա-
կաւ ժամանակս խափանեալ, և զի վասն սորա անկեալ էր
բաժանումն ՚ի մէջ մեր, նորոգեցաք անդրէն, զի խոչընդոտն
բարձցի։

Եւ այս խոստովանութիւն բանից իշխանաց մերոց գրե-
ցաւ յարքունի դիւանագիրս, և այս իրրեւ նախագաւառու-
թիւն նախրացուցանէ՝ զոր յայսմ հետէ ամբաստանութիւն
զայսմ գլխոյ լինիցի, նոյնպէս և վասն նորատիպ գրքոյ Հրա-
ւէր սիրոյ անուանելոյն, վկայեցին լինել վարդապետութիւն
հին և ոչ նորամուտ, զոր Տաճիկք էնկի իրմիհիւ կոչեն։

Ա՛մ քանզի ՚ի բանս դատախազիչ կալր հնազանդութիւն
պապի, և ֆրանկութիւն, թէ և դժուարահաւատ եղեւ ասաց-
ուածք իշխանաց մերոց առաջի արքային, այլ մերժեցաւ տա-
րակոյս, յորժամ զՀրաւէր սիրոյն թարգմանեալ ՚ի լեզու Ա-
րաբացւոց ընթերցան, հուսկ յետոյ ասէ Րէիզ էֆէնտի, եթէ
այդպէս է, ո՞ զայդչափ բազմութիւն յոտին կացցէ։

Պատասխանեն իշխանք մեր, թէ սոքա արք յոգեւոք և
առանց դպրութեան են, իրաց չեն հասու լեալ խրթնութեան,
և այլ ընդ այլոյ կարծեօք յայս ՚ի սոյն են ձեռնարկեալ։

Եւ քանզի ՚ի քրեական մեղս համարի ոճիր ապստամբու-
թեանս, և դէմ ընդդէմ ներհակ իշխանութեան, վասնորոյ
անհնարինս զայրացոյց զարքունի որթարան և զթագաւորն,
զի մինչ նոքա հնարին զատահական ազգին իւրեանց ածել ՚ի
հպատակութիւն, քանի՞ մեծ զայրայումն ոչ լինի նոցա տեսա-
նել զստրուկան եւս ՚ի նոյն չարիս մուտքերեալ։

Ուստի յայնոսիկ աւուրս պատգամ սաստիկ եկն ՚ի դրանէ
առ պատրիարքարանն մեր յայտնել զհեղինակն, որ զքաղ-
մուքեանն ամբոխ գումարեաց, և զի՞նչ է պատճառ այդմ,
յայտ առնել։

Եւ նա պատասխանեաց, թէ չիք այդմ պատճառ բանա-
ւոր, բայց միայն բազմադիմի կոհակք ծովացեալ մեղաց իմոց,
որ զիսուժան պարզամիտ ժողովրդոց կատեաց ՚ի վերայ իմ,
բայց առ ՚ի գտանել զհեղինակն՝ առանձինն զամենայն գլխա-
ւորս արհեստաւորաց կոչեաց, յերդումն հրաւիրեր և նզովս
կարդայր ՚ի վերայ նորա, որ իրագէտ գոլով՝ ոչ վկայէ և ծա-

Digitized by Google

նուցանել, զի վնասակարագոյն [illegible] էր, և չարիքն [illegible] յապրիլս։

Ի 22 օգոստոսի առաքեաց յամենայն եկեղեցիս վարդապետս, հրաժարակոչաց զհրաւէր սիրոյն՝ վարդապետութիւն ուղղափառական, քանզի ողջամիտ դատաստանութեան սրբազան հարց, և ոչ նորահնար դպրաբակղեցուցիչ և ծոլորամիտ։

Եաեւ կոնդակաւ բանագրանս ընծեռոյր վասն նոցա, որք գիտեն, թէ ճր եղեւ ակատած այսր չարախորհուրդ ապստամբութեան, և ոչ ինքն էին՝ որ զայդ հնարեցին, և ոչ յայտ արարեալ ծանուցանեն։

Եկեղեցին առաքէ հրեշտակապետի՝ յորժամ էպիրեմ վարդապետին փակեալ զվարագոյր խորանին ընծեռնոյր, ժողովուրդք դիմադարձ գոան և չետուն թոյլ կարդալ։

Այլ՝ ի հանդիպակաց կիւրակէին գնացեալ վէքիլ Դիոնէսիոս եպիսկոպոս ընծեռնոյաւ։

Բայց այս սակաւոյն վճռեաց ոչինչ, և ոչ յերեւան կացոյց զոք, և բազումք՝ ի բանտարգելոցն հանեցան՝ ի տանջանս բանս պօսթան պաշիին, ուր ոմն խոստովանեցաւ, թէ ցելի պազտասարն յորդորեալ զմեզ առաքեաց անդ, և առաքեալ արա՝ ընկեռնեցին զնա, և արկաւ՝ ի բանտ։

Եւ այլ ոմն ասաց, թէ սարկաւագ ոմն կարապետ անուն նեսարացի յորդորեաց զմեզ յայս գործ։

Եւ զայն գտին՝ ի տուն Սահակեան Գրիգոր աղայի, և բերեալ հդին՝ ի բանտն։

Այլ ապա յայտնեցաւ թէ գաղտուցի ոմն գնացեալ՝ ի սեներական նոցա յորդորեալ է զնոսա և համոզեալ սմբոխ մեծ յարուցանել։

Ուստի հրամայեաց առէլութիւնն, և զոմանս՝ ի նոցանէ ծպտեալ կերպարանօք չրջեցուցին աւուրս բազումս՝ ի փողոցս կոստանդնուպօլսոյ գնանել զգաղտուցին զայն, այլ չգտաւ այրն, զի վախուցեալ էին գնա գոլ ճեանք յԵրուպա։

Եւ վասն այսր չրջելոյն Գիոնէսիոս եպիսկոպոս յեկեղեցիս կոստանդնուպօլսի և գիւղօրէից նորին, և բանագրանս կարդայր, թէ որ ոք պահեալ ինչ զայրն զայն՝ ի տան իւրում կամ զայնպիսի ոմանս, յայտնի արասցէ, այլ ոչինչ օգտեցաւ։

Digitized by Google

Իսկ սարկաւագն ՚ի տանջանս անդ մեռանելոց նախ զԱստուածածուր և զերեմիա եպիսկոպոսունս, զորս իջուցեալ առ Պաղեան պաշէին, և բերեալ առաջի պատրիարքին, ասէ ցնա Պօսիանճի պաշէին, սոքա՛ են սեւագլուխքն, զորս մատնեցեր, և զի՞նչ առացին քեզ, ծանո՛ւ։ Ասէ սարկաւագն, սոքա են, բայց ինձ ոչինչ առացեալ են ոչքա, այլ առ ահի և սաստից Թեան տանջանացս մատնեցի զսոսա։

Յայնժամ՝ ետուն զնա վերստին ՚ի տանջանս, և նա մատնեաց յայն օր զտէր Կիրակոս կաթողիկոսն Պոյոյ, որ յաւուրն յայնոսիկ եղեալ գնայր յաթոռ իւր։

Առաքեցին իսկոյն առ րհանդակս զկնի նորա, և գտեալ զնա ՚ի ճանապարհին ՚ի Նալլը խան, ածին ՚ի դատաստանուզօլիս, և տարեալ ՚ի բարձրագոյն դուռն, հանին առաջի մեծի վոխարքային։

Հարցանէ եպարգոսն և ասէ, զի՞նչ է այն նորաստեղծ գիրքն, զորս հնարեալ է պատրիարքն հակառակ աւանդութեանց ձերոց, և պատճառ եղեալ է աղվկայոյզ լինելոյ ժողովրդեան ձերում։

Պատասխանի առնէ կաթողիկոսն ճշմարտախօս բանիւք և ասէ, գիրքն այն ոչ է բնաւ հակառակ հայրենի աւանդութեանց մերոց, այլ է բուն իսկ հարազատ՝ համաձայնութիւն հաւատոց մերոց, և այն գիրք իմով հրամանաւ տպեցաւ և ոչ պատրիարքին։

Իսկ երբէք պատրիարքն վասն կնքելոյ զսկիղբն և զվերջ գրքոյն այնորիկ յանդգնաւոր գտանի, նախ իմ գլուխս պարտ է հատանիլ, զի ես կնքեցի զառաջինն կարմիր կնքով իմով՝ պարագլուխ եղեալ այլոցն ամենեցուն։

Ասէ ցնա վոխարքային, և դու մեծ ինչ ո՞ք էցես քան զպատրիարքն։

Ասէ կաթողիկոսն, ըստ օրինի վերհաստատ թագաւորութեան ձերում զոր ՅԷր հաստատուն պահեցեք մինչեւ ՚ի կատարած աշխարհի, պատրիարքն մեծ է քան զիս, և հրամայէ ինձ ՚ի մարմնաւորական գործս։ Այլ ըստ հարկաւորութեան քրիստոնէական կրօնի մերում մեծ եմ ես քան զնա, և հրամայեմ նմա ՚ի հոգեւորական մասին։

Digitized by Google

Եւ այսպիսի բանիւք յանկուցեալ զմիտս փոխարքային՝ մերժէ ի մտաց նորին զամենայն կասկած և զերկբայութիւն։

Յայնժամ փոխարքայն հրամայէ նմա անհոգս լինել, և երթալ ուր և կամիցի և հանդչել աւուրս ինչ, որ եկեալ եկաց ի պատրիարքարանն, և ի 18 սեպտեմբերի առեալ վերստին հրովարտակ յԱրքայէ՝ յուղի անկեալ չոգաւ յաթոռ իւր։

Յայսոսիկ աւուրս զՏէլի Պաղտասարն եւս ետուն ի տան՝ չանս, և նա խաստովանեցաւ, թէ երկու կեսարացիք բակոր և կօշկակար կարապետ թելադիր եղեն ինձ և համոզեցին յայս չարիս ընդդէմ պատրիարքին։

Գնացին զօրականք կալնուլ զնոսա՝ այլ նոքա փախուցեալ էին, յետ աւուրց ինչ բակորն գտաւ յԵէտիխուլէն ծըպտեալ կերպարանօք մնալաճառի, և բանտարգեալ եղեւ ընդայլսն։

Այլ յետ աւուրց ինչ տարկաւագն ի տանջանան անդ մատնեաց զԱխայեան Գրիգոր աղայն, և զազգական նորին ըզխեղճ պատանին Ազարիա, որ առ ահի տանջանացն ի բանտի անդ յեղաշրջեցաւ ի Մահմետական օրէնս, նոյնպէս և Տէլի Պաղտասար, և անիծեալն այն սարգսաւագ՝ որ ժամանակաւ յառաջ ուրացեալ ի հաւատոյ իւրոց ի պաֆիրա քաղաք Պունտոսի՝ և ապա որպէս լեալ ստրջացեալ և փախուցեալ, այժմ ի բանտին վերստին ուրացաւ, զի զերծանիցի ի տանջանացն, այլ առ ոչինչ դրեցաւ դաւանութիւն Մահմետական կրօնին, միայն կերպարանափոխ և անուանափոխ արարեալ զնա, վերըստին արկին ի տանջանս յայտնել զհամախոհս ապստամբութեանս։

Եւ նա եղոյց յայն օր գՊէկկաօղլի սիրացու ծովհաննէսն իւսկիւտարու՝ ասելով, թէեւ գիրս անգամ գրեաց առ կաթողիկոսն էջմիածնի՝ գանգատ զպատրիարքէն, զհետ եղեն զօրականք ունել զնա, այլ նա փախուցեալ էր ի Ղրիմ։

Եւ մինչ գԹուղլճի գրեալ առ կաթողիկոսն՝ խնդրեցին յարքունուստ, պէզճեան Յարութիւն ասլա՝ որ հնարիւք իմն ի ձեռս իւր ածեալ և առ իւր պահելով էր, տարաւ ած գնա տանճի պաշին, զոր Աստուածատուր եպիսկոպոսին Թարգմանեալ ետ ի տաճկական բարբառ, և առաքեաց առ Արքայ։

Digitized by Google

Յետ երկուց աւուրց դ՚Ժոխատանէ՚ ուրացողն մատնեաց և ղՅովհաննէս Մկրտիչ սպան, ղԳարագքէհեա մահտեսի Աբրահամ՚ սպան, ղԻսկիկեան մահտեսի Պօղոս սպան, և ղՄարգարեան սպան Պօղոս։

Այլ Գարագքէհեա մահտեսի Աբրահամ՚ սպան յետ երկուց աւուրց ղերծաւ՚ ի բանտէն միջնորդութեամբ Նէճիպ էֆէնտիին՝ որ Գափու քեահեանի էր կուսակալին Եգիպտոսի, և այլքն մնացին՚ ի բանտին։

Անդ՚ ի 26 օգոստոսի յերեկոյս հինգշաբթի աւուր յերկրորդ ժամու գիշերոյն կոչեաց փոխարքայն զՊօղոս պատրիարք, և առանձինն եհարց ցնա և ասէ, չեղեր դու նախածանօթ ապստամբութեանս, և ընդէր ոչ յայտ արարեր՚ ի դուռն արքունի զեզս իրացն գոտանել։

Ասէ պատրիարքն, տէրութիւնն հրամայեաց ինձ բառնալ զքաժանումն՚ ի յազգէս, և եթէ այս գործ խոհականութեան մերում միայն մնայր, բարւոք յայտնէր՚ ի գլուխ ելանել, և այս ոճիր ապստամբութեան չլինէր՚ ի ուսումիկ ժողովրդեան, բայց վասն զի քանի մի անձինք՚ ի մեծամեծաց ազգիս ոչ թոյլ ետուն ինձ ըստ խելացյ իմոց անօրինել, այլ ինքեանք ձեռներէց եղեն զպաշտօն պատրիարքի կատարել, զանվայելը և զանդէպս հրամայել և՚ ի գործ դնել, և ահա այս վախճան է նոցա խոհականութեան։

Հարցանէ փոխարքայն և ասէ. և դու՞ք են նոքա։

Ասէ պատրիարքն, Գրիգոր ճարտարապետ, Յարութիւն Պէշճեան, Ճանիկ փաստաբեան, Հաճի Յովհաննէս Երկանեան, և կարապետ Այճաւուրեան։

Ասէ փոխարքայն, կարճեա՛ զլեզու քո, և մի՛ եւս յաւելցես առնուլ՚ ի բերան քո զձանիկ, (զի իւր սեղանաւոր էր նա), և առաքեաց զնա՚ ի պատրիարքարանն, և գրեաց առ Արքայ՝ զոր լուաւն ինչ՚ ի պատրիարքէն։

Յոկ Պօստանճի պաշին յաւել և զՄահայեան Գրիգոր մեծատնել՚ ի տանջանս, որ յետ եօթն աւուրց այլ ոչ կարացեալ ըզդէմ ունել տանջանացն յայտնորեալ հասակի ուխտանականց ծերոտութեան իւրոյ, զամենայն՝ մեղս յանձին իւր կալաւ, ասելով, ես միայնակ արարի զամենայն, և պատճառ գոյց ամենայն

չարեացդ, չունի ոք ընդ իս մասն և բաժին, թողէք երթալ զայսչափ բաղմութիւն անպարտ անձանց, և մահ իմ աւարտ լիցի ամենայնի։ Սոյնպէս և ապխտավաճառ բակոքն՝ի տանջանան անդ ասէ, ես և Տէրն պաղտասարն եղաք դրդռիչ աղմկայոյզ խռովութեանս։

Նոյնպէս և Ազարիա պատանին խոստովանեցաւ, թէ ընդ ուրացող սարկաւագին չրջեցայ աստ անդ, և զոր ինչ քարոզէր սա՝ի դրդիռ ազգատարբութեան, և ես վկայէի իրաւացի լինել։ Եւ զամենեցուն սոցա զխոստովանութիւնս բանից՝ որ գոչի թագրիր, առաքեաց Պօսթան պաշին առ արքայ։

Եւ՝ի 18 սեպտեմբերի յաւուր շաբաթու յերեկոյեան ժամերգութեան մինչ երգէին զլոյս զուարճն, ածին՝ի դուռն մայր եկեղեցւոյն խումխաթուի զծերունազարդ Գրիգոր աղան Պախայեան, և հատին անդ զանպարտ և զպատուական գլուխ նորա, նոյնպէս և զապխտավաճառ բակոքն՝ի Զէմպէրլի Տիքիլի թաղն գլխատեցին, զուրացեալ սարկաւագն և զպատանին Ազարիա տաճկական զդեստուք կախեցին՝ի բարմագ գափուն։ Եւ զՏէրն պաղտասարն՝ի Սամաթիա առաքի սրճանոցին իւրոյ կախեցին։

Ի յաջորդ աւուր զԱստուածատուր և զերեմիա եպիսկոպոսունս հանեալ՝ի բանտէ՝ արձակեցին գնալ՝ի տեղիս իւրեանց, ընդ նոսին և զտաճան և լինն անձինս, որք չէին իրագէտ կամ յանցաւոր։

Ա.յլ զԷչխանան՝ որք էին՝ի բանտին, առաքեցին յաքսորս, զՄկրտիչ Ալրիխարեան՝ի Ստանքէօյ, զմահտեսի Պօղոս եղկիէլեան յիւլիմեա, և զաղա Պօղոս Մարդարեան՝ի Հռոդոս։

Իսկ զորս յառանձնախօսութեան անդ մատնեաց պատրիարքն զհնգեսին իշխանան առաքի փոխարքային, նոքա եւս արժանաւոր դատեցան ազքօրանաց, միայն ձանիկ աղա՝ որ սեղանաւորն էր փոխարքային, ազատեցաւ՝ի չնորհս նորա, և Դրիգոր ճարտարապետ՝ որ կայր մնայր՝ի տան իւրում պակուցեալ, յերրորդ աւուր հոկտեմբերի եղեւ աստիկ մըրիկ, և ջնասեաց զքազում չինուածս արքունի պալատին, հրամանաւ արքային կոչեցաւ՝ի նորոգումն նոցին, և՝ի չնորհս այնր զերծաւ՝ի փորձութենէն՝ որում ակն ունէր հասանել։

Digitized by Google

Եվկանեան հաճի Յովհաննէս՝ որ ի Ծովու այսմիկ փոր֊ձու֊թեան ալեկոծեալ լինէր, յեղաչրջեցաւ ի Մահմետական օ֊րէնս։ Եւ Աղնաւուրեան կարապետ աքսորեցաւ ի Սալքղ կղզի։

Պէշճեան Յարութիւն աղա խնդրեցաւ ի վերատեսչէն փո֊ղերանոցին տալ զհաշիւ իւր զամենայն, և տուեալ զամենայնն յաւելուածովք պարզերես համարձակութեամբ, ոչինչ պակա֊սութիւն ցուցանելով յանձն իւր ի պաշտամանէն, հրամայեաց նմա վերատեսուչն երթալ մնալ ի տան իւրում։

Եւ յետ վեց աւուր ի հոկտեմբերի 10, առաքեցաւ և նա յաքսորս Լիլիմաս, որ չերմեռանդ գոլով յաստուածապաշտու֊թեան իւրում՝ էառ ընդ իւր զաղա Պօղոս վարդապետ գքա֊հոյչն Խարդալի, և դնաց, և դիր յանցանաց նորա էր այս, թէ «Յարութիւն Պէշճեան ամենայն հաւատարմութեամբ եկաց ի պաշտօն արքունի վողերանոցին, և անպակաս զհաշիւ իւր ետ. բայց յապտային դործս լինելով ձեռնամուխ, ի խրատ դդուշութեան այս օրինակ պատժապարտութեան արժանի դատեցաւ»։

Ինկ ի տեղի Յարութիւն աղային Պէշճեան նոտաւ Պօղոս Պիլէզիկճեան Հռովմէական ազդային զամ մի և երթ, զի իբ֊րեւ վերադարձաւ Պէշճեան յաքսորանացն, կալաւ նախ զդ պաշտօն սեղանաւորութեան ՚ի՛ն՚ն՚ կոչեցեալ, և ապա զտեսչութիւն փողերանոցին և օր ըստ օրէ յաչս լինէր արքա֊յին և յոյժ սիրելի նմա։

Այս ամենայն խռովութիւնք՝ որք եղեն յազդի մերում, առաւելապէս ցրտացուցին զեռանդն սիրոյ և չանից հոգեսէր իշխանաւորաց մերոց և ամենայն ազդասիրաց, և Պօղոս պատ֊րիարք առաքեաց հրաման առ Աբգարեան վարդապետան, զի առեալ զվերայր և զփիլոն իւրեանց՝ եկեսցեն առ ինքն ՚ի պատրիարքարանն, զի հանդերձեալ եմ ասել առաքել զերկուսն ՚ի Մուշ, և զերկուսն ՚ի տուրք երթասցէմ։

Զայս լուեալ Աբգարեան վարդապետաց՝ յոգւի խոցեցան, և փախուստ տուեալ ՚ի Պէյօղլու՝ թագեան յեկեղեցիս Լատի֊նացոց, և ապաշխարեցին անդ։

Յայնժամ եղեւ խնդութիւն մեծ Գոլչճեանց, որք զչար կամն իւրեանց տեսին կատարեալ, ՚ի քակել զմիաբանութիւնն

ազգին, զի և ժողովուրդ Աբբայեան վարդապետաց՝ որ եկեալ էին յեկեղեցիս մեր, գնացին և նոքա յեկեղեցիս Լատինացւոց, և եղեւ յետոյին չար քան զառաջինն։

Բայց զայդ ամենայնի տուգանաց և ընտուց՝ զորս կրեցին Հայք յծառայ Դալէճեանց, ոչ անանապրեցին՝ ի սիրտս իւրեանց տագնապել զարժանի վրէժս՝ ի դէպ ժամանակի, որ եղեւ յաւուրս նորատակտ պատրիարքի։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Ցաղագս պատասխանելոյ Ցունաց՝ ի հպատակութենէ Օսմանեան տէրութեան, եւ գլխատման Լիւորիոսի պատրիարքի՝ եւ մետրապօլտաց՝ եւ մեծամեծաց Ցունաց, եւ բազմաց հասարակութեան։

Ա ինձ յայս ազգիս չփոթի վարանեալ էին Հայք անհնարին ստեղութեամբ ընդդէմ Հռովմէական Հայ ժողովրդեան, բացաւ և այլ ինն դուռն խուովութեան և մեծամեծ չարեաց՝ ի ծոռտանդնութիւնս քաղաքի, քանզի Իւսիլանթեան Աղէքսանդր կոչեցեալ բդեշխն Մոլտաւիոյ, որ հնգետասան ամաւք յառաջ խոյս տուեալ էր յերկիր տէրութեան Ռուսաց, և մեծամեծ ընտրհս գտեալ՝ ի կայսերէն՝ երեւելի ոմն էր՝ ի Ռուսաստան աշխարհին։

Այս այժմ թեհին ածեալ կանգնել զկործանեալ թագաւորութիւնն ազգի իւրոյ՝ երեք հարիւր տարամբք ապառաղինօք եկեալ մտանէ յերկիր Մոլտաւիոյ, և զբդեշխն երկրին՝ որ էր Մխիթար սէյ կոչեցեալ, կոչէ առ ինքն, և յանկուցանէ զմիտս նորա, զբաւ առնալ ապստամբութեան՝ ի հպատակութենէ Օսմանեան թագաւորութենէն։

Իսկ նա թէպէտ զառաջինն երկուցեալ՝ ի մեծագործ տէրութենէնէն ար քային, ոչ հաստարձակի միանգամայն ընդ նմա, այլ նա ալէսպէս խորհուրդս բանից պերճութեամբ քաջալերէ զնա և յորդորէ միակամ լինել ընդ ինքեան ցուցանելով, եթէ

Digitized by Google

թագաւորք եւրոպական ազգաց հաստատիտ և հաւմակամ են ընդ լինքեան յայս հոգեւոր գործ ազգասիրութեան։

Եւ խոստացեալ են պաշտպան լինել ինքեանց ըստ սմանայնի՝ ձեռնտուութեամբ զինուց և գրաճից և որ այլ եւս են պիտանացու կահք և կարասիք պատերազմին գործոց։

Յորդորեալ՝ ի բանից տասն և Միխայլ պէյ, միաբանի ընդ նմա, և գաղտնի գիրս գրէ և հասուցանէ առ մեծամեծս և առ երեւելի իշխանաւորս Ցունաց, որք գտանէին յայնժամ՝ ի Կոստանդնուպոլիս, որք էին արք սրամիտք և մտաւարժք, տեղեակք գրոց գիտութեան և հնարագէտք ճարտարք։

Որոց ընթերցեալ զգիրն, և վերահասու լեալ մեծամեծ չարեացն՝ որք լինելոցն էին, զանխուլ՝ ի տէրութենէն գիշեր ցայն մնանեն՝ ի նաւս եւրոպացի վաճառականաց, և խոյս տան՝ ի հոստանդնուպօլսոյ որդւովք և ընտանեօք և մեծագին ընչիւք և ապրանօք իւրեանց, և դէպ ուղիղ գնան՝ ի Պեղոպոնիդա և՝ ի կղզիս միջերկրական ծովուն։

Եւ՝ ի վեցտասներորդ 2, յամի տեառն 1821, Միխայլ պէյ և Ալեքսանդր հրամայեն Ցունական ղօրուն ընդվզել զամենայն տաճիկս, որք գտանէին՝ ի գաւառին յայնմիկ, և գքաղաքն Քալաս այրել, և զնաւս Օսմանեան վաճառականաց գտնուրեալ. այս եղեւ սկիզբն պատերազմի նոցա ընդ Օսմանեան տէրութեան։

Բայց վասն զի միտ նոցա և դիտաւորութիւն էր զազգն ողջոյն յարուցանել յոտս, և առաւել եւս զՊեղոպոնիդացիս, ուստի զտիւ և զգիշեր խորհէին խորհուրդ, թէ որովք եզանակաւ ապստամբեցուսցեն զազգ իւրեանց՝ ի հպատակութենէ տէրութեանն, զի գիտէին, թէ առանց համակամ միաբանութեան ազգին ոչինչ վճարի։

Եւ յետ ընդ երկար յուզողութեանց և խորհրդածութեանց՝ գտին զեղանակ իմն ցրուացուցանել զազգ իւրեանց՝ ի փրկութիւն հպատակութեան, և առնել զՕսմանեան տէրութիւնն առաջի ազգին իւրեանց, և այս էր անպարտ մահ և չարաչար սպանութիւնք պատուիրաբեաց և մետրապօլտաց և եպիսկոպոսաց և քահանայական դասուց, որոց մահ արդարեւ վշտացոյց զամենայն ազգս քրիստոնէից, թողլ թէ՝ զՑոյնս։

Digitized by Google

Ա. տարի Աղեքսանդր հետ անցաւ ի Փռիգիա հասեալ զայս դիւտ հնարիչ, խորհեցան, թէ պարիսպ եղեալ լաւ տապին սպանանել Ջուանին զպատերազմունս և զհնարս պատերազմի խրհրդոյ, դի կարճ նոցին գրաւ եղեալ ընդ ամենայն խրհրդոյն, և ապա վերանայեալ զամենայն բորբոքեցին ի թագաւորութիւն և ի պատերազմ ընդդէմ Օսմանեանն տեղեակ։

Ա. տարի գնաց բազում սպառազինութեամբ հետ սուրհանդակաւ, և ասէ ի թագաւորն Փռիգիոյ, խորհեցան յանկարծ յանդիման, և ասէ նմա իմացաւ ի մեզ լաւ առաքինի խորհրդեան մերոյս մեր Աղեքսանդր պերճ զօրութեամբ ընդ երեսաց երկրի Պարսից տիրեալ, և հանդերձեալ եմք յաղտակ առնել զնա զաղ պատերազմս։ Ի վերայ նմանոյ ասէ թագաւորն, և ասէ նմա, և զինչ ասէ զօրքդ ի վերայ մեր, փութացէք ի ներքոյ տալ ինձ, հրամայեմ զբազումսն և խոստովի, եւայլն։

Եւ զայս ամենայն հաւանեալ զբազմութեանց երեսաց ի միում ծրարի, և կնքեալ կնքեալ իւրով տեսլ ի ձեռն տանիսկան առնելոյ, և հրամայեալ նմա տանիլ ի կոստանդնուպոլիս ի պատերազմ Ջուանին։

Զի գիտէր, եթէ այն գրաւելութիւնք անկատար ունելին մնացեալ ի ձեռս Օսմանեանն տեղեակ, զի ընդ ամենայն ճանապարհս լուծեալ երթեւեկելին։

Իսկ իրրեւ հասեալ այսր ամենայնի հասանէր ի կոստանդնուպոլիս յաճախեցան մեծարել, և առնելոյ ուրախութիւն մեծ ի ներքոյ ընդ ինչ առնել վնաս ինչ ազգացն եկելոց, և ահա այժմ ի կոստանդնուպոլիս ի մարտի ԺԲ չիտնելեցդ ուրախութիւն զայնսիկ և զայն ի միասին եղեալ։ զոր կայսեր էր զոմանսն խոստանալ, և բացեալ զերկրին ընծայեցան, խնկեալ իւրեանց ժանեակ ինչ առնելոյ, և խոստացեալ զայսպիսին առ հասարակ, և հրամանն եղեալ ի թագաւորն պերճ, դի ամենայն որ որ ազգաւ Մահմետական է, զնէն բարեկեցէ չանչինն, և զգոյշ լինելոյն զամս և զգեցեալ, և լերանց տեսանելոյն զերազանցն ազգացն, ինձնէ ազգացն ինձնէ զամենայն ինչ որ կարեւորն է առնել։

Ա. տարի յերկիրն և տանիսկան առաւ մարտի ամենայն սիրելեաց արարին սպանանել զերեսունիս թագաւոր պերճին, և ի նոցանէն առ

ուար գլխատեցին զինուորքն ապստի՛ն, զքաղաքացին օգնուն, և զնահատուցին նորին, և զերծուս ետուն նմա։

Եւ ՚ի 24 աւուր ամսոյն գլխատեցին զՁատպատի տղայ Կոստանդեայ հանդերձ երկու որդւովքն ազատիկ ազնուականիւք իւրովք, և յաղագս նոցա 4 գլխատեցին զԲիւրհան Բագրատունի ազգէն Հռոմոց երեք ազգականաւք նորին։

Ցետոյ զդատաստան նենգութեան վարձեցեալ սրիկայից սպանան նորա առաւոտուն հրամանաւն ազգային զանել և զնա փախստական, և զնոսա, և նոյնժամայն ելանեն զինուորքն Հայաստանեայց յօգնականութիւն ՚ի Ցոհաննէ Սպարապետէն, որ ետ ազդ ինչ և զայլ եւս Հայոցդ իւր ամրանոցն հաստատել ՚ի հոռոմոց ձեռնասուէրս և ՚ի գիւղօրէից, և երթալ զաղաքն իւրեանց ըզԾամ ազերիածեալ, և ամենայն քրիստոնեայ ՚ի վտանգ մահու հասեալ՝ զԱստուած կատարածն յօգնականութիւն։

Իսկ ՚ի տասներորդ աւուր ապրիլի՝ որ օր էր աւուրք Զատկին, Ցիղօրիոս սպատրիկոսքն կոստանդնուպօլսոյ, որ էր այր առաքինի և ճգնապղծութեան վարագ, մնասուցեալ զպատուհասն յեկեղեցւոյն, իբրեւ եբաններ ՚ի սենեակ իւր ՚ի հանդչել, և կեսաւր զօրականաք յարքունի դրանէ՝ տուրան գնաս և կացուցին առաջի մեծի եզազդպուհին, որ կոչէր գԱնաէրլի Ալի փաշա, որ ցուցեալ նմա զբերն հարցանէ զպատրիարքն և ասէ, ընթերցիր զդէրս զայս և թարգմանեա՛ մեզ, թէ զինչ գրեալ իցէ ՚ի ներս։

Եւ առեալ պատրիարքին՝ ընթերցանու, և ՚ի տարակուսի լեալ՝ պատասխանի տայ և ասէ. ասէր իմ, զայս գԻր գրեալ է առ իս Մեհմետ սէիդ գեղերէն Մոլտուիոյ, որպէս թէ ես խոշոր հրոյ ահիկ իցեմ՝ ընդ ձեզ նման, զայդ ես անպատուս եմ ՚ի չարէն առանձ

Ցայնժամ հայհոյեալ զնա եղբարդ ոմն, վանէ պատուհասս, և հրամայէ առնել զնա և կախել ՚ի գրանէ պատարիարքարանին, և բերեալ կախեցին զնա ակռայ, և ՚ի նոյն աւուր հրամանատար եղեալ գաղին, կոչեցին և զեռասուսպետին Եփեսոսի ՚ի գուռն Գալլոյ պատգար, և զեռասուօրեան Թեսաղոնիկեայ ՚ի Բարձրս խաչին։

Եւ յետ երից աւուրց զնարին պատարիարքն հրամանաք ՚ի Ձեռս հրոյից շրջեցուցանել ՚ի վտանգս ՚ի եղեալ խոյսուսանակս Թիւրաց, և տապա տալին ՚ի ծով։

Բայց նաւապետ ոմն Թուսաց՝ դիշերային փոքրիկ մակոյկաւ շրջահայեցաց լինի ՚ի ծովին, ուր ընկեցուն, և գտեալ զնա, տանի և հանէ ՚ի նաւ իւր, և պիտոտիս նորին հանեալ զնա ի գեղովք, և յետ աւուրց մնչ եբանէ և երթայ յՕդեսա ՚ի քաղաքն Ռուսաց, և ազդ արարեալ ճէնէրալի քաղաքին և եպիսկոպոսին բազմութեամբ և մեծաւ փառօք եկեալ հանեն ՚ի նաւէն, և առանին Թագէն անդ ՚ի վառատար չիրմի, ուր կայ մինչեւ ցայսօր։

Յետ աւուրց մնչ կոչեաց եզարդոսն զտեղապահ պատրիարքին Ծունաց, և նա առ ահի սրտին ոչ գիտեալ զպատճառ կոչելոյ նորա զինքն, երկուցեալ յոյժ, անգէն ՚ի դուռն արքունի անկաւ յերկիր, և մեռաւ յանկարծակի մահուամբ։

Իսկ յապրիլի 19 զտան անձինս կաթոլիկին ՚ի կոստանդնուպոլիս, ընդ որս էին և եպիսկոպոսն Աղնաւուտ գիւղին, և խանչէրլի պէյն և եղբարք նորին, և ՚ի 29 ապրիլի կախեցան և Զաքարեան Գասպար ամիրայ ՚ի դրանէ վեզիրատ խանին ՚ի պատճառս լինելոյ հատուածոյ Տէփէտէրէնի Աւի փաշային, որ ապստամբեալն էր յայնժամ ՚ի տէրութենէն։

Յայսոսիկ աւուրս ՚ի յունիս 4, հրկէզ արարին Տաճիկք զԱյվալըխ կոչեցեալ գիւղաքաղաքն, կոստրեցին զծերս և զզպատառունս, և ՚ի գերութիւն վարեցին զտղայս և զաղկունս։

Եւ ՚ի յունիսի 27 զնորոգ կարգեալ Դալխանքի գդեշխին Մոլտաւիոյ հանդերձ ընտանեօք իւրովք ածորեցին ՚ի Պոլիս, և անդ սպանին։

Եւ յետ էնն ամաց յաւուր սուրբ Զատկին ՚ի մարտի 31 յամի տեառն 1822 այրեցին զկղզին Պախըզ, և զբնակիչսն նորին ՚ի գերութիւն վարեցին, ընդ որ առաւել զպղատցեալ Մոռացիք, որք հրայրեաց նաւուք շրջէին ՚ի կողմանս յայնոսիկ. յետ երից աւուրց գիշերային եկեալ Գերմանացի դրօշակաւ, հրդեհեցին զմեծ նաւն եռապարկ առաջի Ռիւյ կղզւոյն, և այրեցաւ նաւն՝ և որ ՚ի նաւին էին, ծովակալ գդեշխին Գարաս Մէհմէտ փաշա և զօրք նորին՝ և սակնայն էնչք նոցին, զոր տեսեալ այլոց նաւապետաց աղքատնկի նաւահանդիստին՝ էապս եռաւն երկիւղիւ մեծաւ ՚ի կոստանդնուպոլիս։

Այս անպարտ մահ պատրիարքին և եպիսկոպոսաց կա-

Digitized by Google

բնակիր խոցեալ զսիրտս բոլոր ազգին, մինչ զի՛ի լսելն անդամ ընդ ամենայն տեղիս, վասն եղեան բոլորգրեցան անհնարին բարկութեամբ, և ոգւով վրէժխնդրութեան գլուխ ամբարձին ապստամբելք՝ ի զօրութիւնն Աստուծոյ և յօգնականութիւն թագաւորաց քրիստոնէից։

Եւ այսպէս ապստամբեցան ամենայն Բունաստան, ողջոյն Նահանգն Պելոպանիդա և ամենայն վիճակ նորին, և գաւառն Մակեդոնիոյ և Եղլադա և կրետէ, և բազում կղզիք Միջերկրականին ծովուն, և ախան պատերազմիլ ընդ արքային, որ տեսեալ չարութեանք զամս եօթին, և ուր և գտանէին զայլազգիս և ղհրէայս, սպանանէին չարաչար տանջանօք։ Եւ ահա այս էր, զոր խնդրէր Իբսիլանդեանն Ալէքսանդր և Միխալ պէյ, որք այսու խորամանկ հնարիւք մինչեւ ցայս վայր հասուցին զայս մոռածութիւն և զիւրհուրդ իւրեանց, թէպէտ և բազմաց վերնատուց երկին պատճառք և անհամար անձանց չարաչար սպանումն, եթէ ազգի իւրեանց և եթէ տաճկաց, եթէ հայոց և եթէ հրէից։

Բայց անդրդուելի ուխտադրութեամբ իւրեանց ոչ երբէք յետս կասեցան՝ի քաջութեամբ պատերազմելոյ, և զաղտնի ձեռնտուութեամբ գաղղիացւոց և Անգղիացւոց եւս և Ռուսաց՝ տարան ամենայն նեղութեանց՝ի մարտս պատերազմայ, և յետ ութ ամաց կանգնեցին զթագաւորութիւնն Հելլենացան, զոր և ընկալան թագաւորք Եւրոպիոյ, և եղեսն ընդունել Օսմանեան տէրութեան զթագաւորութիւնն զայն՝ իբրեւ օրինօք և իրաւամբք տահմանեալ և կարգեալ, և այրեցին զնաւատորմիղն արքայի վաճառն և հինգ նաւուց առաջի Նաւարին բերդին Մօռայի, որով և վերջացուցին զպատերազմն՝ որ՝ի մէջ Բունաց և Տաճկին։

Ի սմին ամի 1822 յօգոստոսի 3, եղեւ երկրաշարժութիւն ահագին՝ի Բերիա և՝ի Դամասկոս և՝ի շրջակայս նոցա, և կործանեցան մեծամեծ ապարանք և տկիրք և պանդոկք և բազանիք, և քաղաք անձինք ընդ փլատակօքն անկեալք մեռան, և էր տարաբաղդութիւն մեծ տեսանել՝ի վերայ Օսմանեան տէրութեան, չարիք մեծամեծք և վնասք բազումք, խրատութիւնք և երկպառակութիւնք բղխէին, և մարդք զա-

Digitized by Google

տերազնոց քաղհատեսակք, որոց ամենեցուն կարծեմ լինել պատճառ և սկիզբն՝ անաստուած նախարարն Հալէթ էֆէնտի կոչեցեալն, զոր յիշատակեցաք ՚ի վեր անդր, և հատուածոց նորին խէսկել հրէային ամենաչարն, որք զօրհանապազ չարուցանէին խռովութիւն ՚ի մէջ տերութեան, և բազմադիմի չարչիս հասուցանէին ՚ի վերայ Հայոց և ծունաց, զոր տեսեալ ամենատես Աչն ՚ի բարձանց, գթացաւ ՚ի վերայ փոքու հօտին իւրոյ, և աղետալի մահուամբ երկարձ զչարսն յաչխարհէ, քանզի երկոքին նոքա հրամանաւ արքային վտարեցան ՚յաքսոս, Հալէթ էֆէնտի յիկոնիոն քաղաք, և հրէային ՚ի Թէքէ Աստալոյ, և անդ չարաչար գլխահատեալք սատակեցան ՚ի Նոյեմբերի 1, որով եղեւ ոչ փոքր լինչ ազատութիւն և խաղաղութիւն քրիստոնէից ՚ի կոստանդնուպոլիս և ընդ ամենայն տեղիս Տէրութեանն։

(1822) Ի սմին ամի վախճանեցաւ և Կիրակոս կաթողիկոս Սոյ, զեղ մահու արբուցեալ յոյլազդի իշխանէ տեղւոյն, կացեալ ՚ի կաթողիկոսութեանն զամս քսան, և յաջորդեաց նմա Եփրեմ եղբօրորդի նորա ՚ի յուլիւն և տասն ամաց հասակի։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս պատերազմին Պարսից ընդ Մոսկովացս, եւ քաջութեան ազգին Հայոց, եւ յաղագս գրաւելոյ Մոսկովաց զԱրարատեան գաւառն ընդ իշխանութեամբ իւրեանց։

Ի սմին ամի 1823 յանկարծօրէն շահն Պարսից յորձանեցաւ ուխտումն հազար զօրօք ՚ի սահմանս վրաց՝ որք կային ընդ իշխանութեամբ Ռուսաց, և եկեալ յաչխարհն Սիւնեաց՝ էառ զՇամախի, զՇուշի, զԴանձակ, և եկեալ պաշարեաց զՑխիթխս մայրաքաղաքն վրաց։

Եւ որովհետեւ զօրք Մոսկովաց, սակաւք յոյժ և նուազունք էին ՚ի կողմանս յայնոսիկ, և տէրութիւնն Մոսկովաց

Digitized by Google

չէր վաղագոյն ծանօթ և իրազէկ դաւաճանութեանցն պարսից, որք ընդդէմ կանոնի դաշնադրութեանն զոր արարեալ էին, մինչեւ զամն քսան և եօթն չպատերազմիլ ընդ երեսս. յանկարծուստ եկեալ կոխան արարին զսահմանակից բերդաքաղաքս Մոսկովայ, և յաւարի առեալ կողոպտեցին զինչս և զստացուածս ամենայն, և ի գերութիւն վարեցին զբազումս ի բնակչաց։

Հայք տեսեալ զհագին յարձակումն սոցին ի վերայ իւրեանց, և ժողով արարեալ գունդ կազմեցին, և բազմօք աշխատ արարին զպարսիկս, և ի նեղ արկին այնչափ, մինչ զի՝ ուր եկեալն էր, ձեացին անդ, և չերթեն կարող խաղալ յառաջ, մինչեւ և զօրքն Ռուսաց մեծամուր պատրաստութեամբ հասին ի վերայ նոցա, և սկսան կոտորել անխնայ, և ի փախուստ դարձուցանել, և յառաջ խաղացեալք պատերազմեաւ մտին ի սահմանս պարսից; և եկեալ առին զյոյս, զԱլմաստ, զԴանձակ, զերեւան, և զԴաւրէժ, և զՆորպատական։

Մինչեւ յուսահատուր լեալ Շահին պարսից՝ յետ զամս երկու պատերազմելոյ բազում ողբանօք և միչնորդութեամբ դեսպանաց ամոքեցին ի հաշտութիւն զՏէրութիւնն Ռուսաց, և զամենայն պայմանս դաշնադրութեան նոցին ընկալեալք խաղաղեցուցին զպատերազմն ահագին։

Ասէ՝ ի յայսմ միջոցի երեւելի էր յոյժ Ներսէս արքեպիսկոպոսն ի Ռուսաստան աշխարհին, և հաճոյ և սիրելի յայսմ տէրութեանն, և պատուեալ բազում և մեծամեծ նշանօք և արտօնութեամբք կայսերն, սա իբրեւ եւտես, զի քաղաքք պարսից՝ որք առան ի Մոսկովայ, ունին անդրէն դառնալ ի պարս, փութացաւ եւ ի ճանապարհ, և ընդ իւր առեալ զերիս գլխաւոր եպիսկոպոսունս Սիւնեաց աշխարհին, եհաս ի պետրբուրգ, և օգնականութեամբ աղա Մինասին լաղարեանց յանկոյց յինքն զմեծամեծս տէրութեանն, և բազք առ ղերսանաց մատուցեալ առ կայսրն՝ խնդրէր ի դիմաց համօրէն ազգիս՝ զգաւառն կոտայից յԱրարատեան աշխարհին զերծուցանել ի բռնակալութենէ անօրէնն խանիցն պարսից, և լինել ընդ հովանաւորութեամբ ամենաբարձր տէրութեանն Ռուսաց։

Digitized by Google

Ա. յս խնդիր Հայոց յոյժ ընդունելի գտեալ յաչս Տէրութեանն Ռուսաց, իսկ և իսկ զբանաւոր ատիթ ինչ ՚ի ձեռս բերեալ, մուծին ՚ի կարգս դաշնադրութեանն իւրեանց՝ զպատուական կոտայից մինչեւ զվերջին սահման Օտրպատականին պարսից՝ լինել ընդ տէրութեամբ իւրեանց, որով գաւառն Վաղարշապատու, ատրբ Էջմիածին, երեւան քաղաք, Գեղարքունի, Բղնի, կարբի, Գառնի, և Ակոռի անկան ընդ իշխանութեամբ Ռուսաց, և զերծան յայնչափ բանտղէտ հարստահարութեանց բռնաւորացն պարսից, որ զրեթէ անպակաս յիւրաքանչիւր ամի չնչին ատիթ ինչ գտեալ, նեղէին և չարչարէին զբնակիչ Հայ ազգիս գիւղօրէից և վանօրէից՝ ծանր և ծանր հարկապահանջութեամբ և տուգանօք, և ընդատուք, կեղեքէին, կողոպտէին և մերկացուցանէին զբնակիչս, և բազում անգամ հրձիգ առնէին և աւերէին զտունս և զստացուածս նոցին զամենայն։

Ա. յլ այս ամենայն ողորմութեամբն Աստուծոյ բարձաւ գաղարեցաւ յայնց քաղաքաց ՚ի ձեռն քաջախորհուրդ առն Աստուծոյ սրբազան Ներսէսի արհի եպիսկոպոսին, զրոմէ ունիմք խօսել և այլուր։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս բարձման ապստամբ Օճագին Եէնիչէրի զօրաց։

(1824) Ի սին ժամանակի ծագեցաւ ՚ի կոստանդնուպօլիս աղմուկ չփոթի և խռովութիւն մեծ ՚ի մէջ Եէնիչէրի զօրականաց Տէրութեանն, քանզի այս Օճագ Եէնիչէրի զօրաց գոլով բնաւին անկիրթ ՚ի պատերազմական մրցմունս, յեօթանասուն ամաց հետէ և աւելի եւս յաղթեալք յամենայն պատերազմունս, կոր ՚ի գլուխ վախուստ տային յեւս ընդ կըռունկն, ուստի եկեալն էին, որով և տէրութիւնն Տաճկաց օր

քան զօր սկսաւ նուաճիլ և փոքրկանալ. և որ երբեմն յաղթող և անպարտելի հանդիսանայր յաչս ամենայն թագաւորութեանց, ՚ի վերջին ժամանակս յայսոսիկ և ոչ միում յապստամբաց իւրոց փաշայից ձեռնհաս գտաւ զդիմի հարկանիլ և սանձահարել զբռնութիւն նոցին։

Եւ թէպէտ ՅԷրութիւնն՝ մանաւանդ իսկ քաջախորհուրդ արքայն Սուլթան Մահմուտ գուն գործէր զտէրութիւն իւր զօրացուցանել, զզօրսն զամենայն հրահանգել ՚ի մարզս պատերազմաց ըստ այժմեան կանոնի եւրոպական թագաւորութեանց։

Ալլ այս փոյթ և կամք ՅԷրութեանն չէր բնաւ երբէք հաճելի եչնիչէրի զօրաց իւրոց, մինչ գի վասն այնր բազում անգամ յարուցեալք յոտս, ընկեցիկ արարեալ են յաթոռոյ զութեսին թագաւորս այսր Օսմանեան ՅԷրութեանն, և ՚ի մահ հրաւիրեալ։

Վասն որոյ և խորախորհուրդ արքայն Սուլթան Մահմուտ թէպէտ յօրէ անտի նստելոյ իւրոյ յաթոռ թագաւորութեան՝ եղեալ էր ՚ի մտի բառնալ զայն ապստամբ ոճագ եչնիչէրի զօրաց իւրոց, այլ սպասէր բարեպատեհ առթի և բարեդէպ ժամանակի ՚ի կոր կոթծանել զամբարտաւան ապստամբութիւն նոցին, և հնազանդեցուցանել զնոսա ընդ լծով ծառայութեան տէրութեանն իւրոյ։

Եւ վասն գի ՚ի տասն ամաց հետէ յաճախեցին չարիք ամենայն ՚ի մէջ նոցա, գողութիւնք, աւազակութիւնք, մարդասպանութիւնք և չնութիւնք, ահ և երկիւղ թագաւորի՝ և ամէն երեսաց բնաւին բարձաւ ՚ի միջոյ սոցա, և ամենայն չարագործ յանձն իւր պանծայր լինել եչնիչէրի, և խրոխտայր ընդդէմ մեծամեծացն արքայի։

Արդ՝ քանի հինգ ամաք յառաջ Սուլթան Մահմուտ արքայ գաղտնի խորհրդով ցարութիւն աղայի պէշճեան՝ որ հաւատարիմ սիրելին էր արքայի և մտերիմ խորհրդակից նմին, յենքն յանկուցեալ զումն ՚ի գլխաւոր Ուստայից եչնիչէրի զօրաց, որ կոչէր Տօղուղունճու Հիւսէին ուստա, և մեծամեծ պարգեւս և արտօնութիւնս և հարստութիւնս խոստացեալ նմա, հնարս խնդրէ ՚ի նմանէ կործանելոյ զայս չարագործ ոճագ

Digitized by Google

ապուտամբ եկենիչերի զօրաց, և նա խոստա՛ւ ննա երդմամբ զայս գործ ՚ի գլուխ տանիլ խորագիտութեամբ իւրով. ուս֊տի խնդրէ յարքայէ դասել զինքն ՚ի կարգս պէօյիւկ ադույից, և հետզհետէ յառաջ խաղացուցանել զկարգ նոցին, մի՛ չեւ ՚ի սուղ ինչ միջոցի ժամանակի լինել ինքեան բաւ կարգին Գուլ քէթխիւտասի և եկենիչեր ադասի, որպէս և եղեւ իսկ։

Իբրեւ եղեւ սա Գուլ քէթխիւտասի բաւ յառաջանալոյ կարգի իւրոյ, յանկոյդ լինքն զՀէյալէտտին եկենիչեր ադասին, որ էր առաջին իւր, և համոզեաց զնա, զի գյորեսին գլխա֊ւոր Ուստայս եկենիչերի չարագործաց հանցէ ՚ի հոստանդնու֊պօլսոյ, և առաքեսցէ պայտօնիւ ՚ի վան և այլուր ՚ի սահմա֊նակից բերդաքաղաքս Պնատօլուի։

Եւ նորա կոչեալ զնոսա առաջի իւր, յորդորանօք և բա֊պառնալեօք հրամայեաց նոցա ելանել և գնալ ՚ի հոստան֊դնուպօլսոյ, ուր հրամայէրն երթալ։

Եւ նոքա հնազանդութեամբ բնական զհրաման նորա ա֊ռանց դիմախօսելոյ, և խոստացան երթալ, բայց անցեալք յ՚ասկիւտար և ՚ի Պուլկուրլու, աշխատ լինէին աւերել զու֊մարել չարագործաց, և խռովութիւն յարուցանել ՚ի հոստան֊դնուպօլիս, և ՚ի սուր մատչել զեկենիչեր ադասին և զմեծա֊մեծս ջէրութեանն որպէս և արարեալ էին բազումանգամ։

Զայսմ միջոցի միաբամ հաւանութեամբ առագորերոյն և նախարարացն, և վճռով գենպետին և բարձրաստիճան օրի֊նականացն սահմանեաց արքայ՝ զկարգ իմն ղօրաց էշքինճի անուամբ, և այլ իմն ձեւով զգեստու զգեցուցեալ զնոսա, կարգադրեաց նոցա օր և ժամանակ հրահանգելոյ ՚ի մարզս պատերազմաց։

Զայս իբրեւ տեսին եկենիչերիք, աղմուկ և չփոթութիւն մեծ ծագեցաւ ՚ի մէջ նոցա, և սկսան չարագործք ժողով գումարել ՚ի տեղիս տեղիս, օր և ժամ որոշել, զի գլուխ ամ֊բարձցեն, և վասն այսր բազում երթեւեկութիւն թղթոց լի֊նէր ՚ի յՊնատօլու և ՚ի Րումէլի ՚ի քաղաքս քաղաքս, ուր կա֊յին եկենիչերիք, որպէս յԵդռիա, ՚ի Կեսարիա, ՚ի Տիգ֊րանակերտ, ՚ի վան, և այլուր։

Այլ խորամանկ Հիւսէին Գուլ քէթխիւտասին՝ որ բազում

Digitized by Google

լրտեսս ունէր ի միջի նոցա, խմացեալ զդաւաճանութիւն նոցին, գնաց առ արքայ գիշերային, և խօսեցաւ ընդ նմա, զոր պարտն էր առնել։

Եւ ի վաղիւն եղեւ ինքն եէնիչէր աղասի, և սկսաւ հաստատիմ զօրականս որոշել և ժողովել առ իւր։

Եւ առեալ ընդ իւր երկերիւրս ի նոցանէ՝ էանց յիւսկիւտար, և յանկարծուստ կոխեալ զտունն մի Տաճկի՝ զոր ուսեալն էր ի լրտեսաց իւրոց, եգիտ անդ զՄուսա ուստա զոմն ի գլխաւորաց չարագործաց, և բերեալ ի շէմսի փաշայ յապարանսն արքայի՝ խեղդամահ սրար զչարագործն, և ընկէց ի ծով։

Ցետ քանի մի աւուրց կոխեաց յանկարծակի զթահաստակալէ կոչեցեալ Թաղն, յորում էին պանդոկք, սենեակք, և մեծամեծք սրճանոցք չարագործաց, և զբազումս ի նոցանէ ձերբակալ արարեալ առաքեաց յԱզգա գափուսի ի դուռն իւր, և գիշերային խեղդամահ սրար, և զտեդիս նոցա քակեաց և աւերեաց, և ոչ եթող տեղի մի խորհուրդ խորհելոյ չարագործաց։

Ցետ աւուրց մի իրրեւ լուաւ, եթէ Տէլի Մէհմէտ գլխաւորն և առաջինն չարագործաց՝ գնացեալ Թագուցեալ է զանձն իւր յեէտի գուլէ ի ձմերանոցն արքունի մնագործաց՝ Սայա օճագլի կոչեցեալ, խօսեցաւ արքայի, և եհան հրովարտակ, զի տացեն ի ձեռս իւր զՏէլի Մէհմէտ, ապա թէ ոչ՝ զձմերանոցն հիմնայատակ ունի առնել գլխովին։

Զայս հրովարտակ ընթերցեալ նոցա, երկեան յարքայէ, և մինչդեռ խեղդամահ արարեալ զՏէլի Մէհմէտ, եւտուն զմարմինն ի ձեռս եէնիչէր աղասիին, և նա ընկէց ի ծով։

Իրրեւ այս այսպէս լինէր, և անուն եէնիչէրութեան սկըսաւ օր ըստ օրէ յանարգութիւն և ի նախատինս բերել, փոխեաց արքայ զանուն եէնիչէր աղասիութեան, և պատիւ և անուն եռթուղեան փաշայութեան տուեալ նմա, կոչեաց զինա Ազա փաշա, այսինքն՝ եէնիչէր աղասի՝ միանգամայն և փաշա, ուստի հանեալ զվէրտէն կէչտի եէնիչէրութեան գլխանոցն ի գլխոյ իւրմէ, զկերպարանս փաշայութեան զգեցաւ, և յայնմ օրէ եւս սկսաւ անգադար զտիւ և զգիշեր շրջիլ ի շուկայս

Digitized by Google

և ի թաղս Կոստանդնուպօլսի, և զոր միանգամ պատմեր ի չարագործից, ըմբռներ, դաներ, առաքեր և խեղդամահ առներ, և ի գիշերի ընդ ի սայլս և առաքեր ի ծով։

(1826) Եւ զայս օրինակ գործ գործեալ առ նոսա Հիւսէին Աղա փաշային մինչեւ զամն երկուս, թէպէտ կամեր բոլորովին վախճան հասուցանել եչենիչեր օճախին, այլ ակնածեալ ի բերդապահ զօրաց նեղուցին Պոնտոսի որք էին եչենիչերիք և բազմաթիւք յոյժ, զայս ինչ խորհուրդ խորհեցաւ ընդ արքային, և երեալ ի պաշտօնէ իւրմէ Աղա փաշայութեան՝ կարգեաց ի տեղի իւր զումն ի խորհրդակցաց իւրոց՝ եչենիչեր աղասի, որ եղեւ վերջինն ի նոսա, և ինքն ընկալաւ զպատիւ միայն փաշայութեան և զպաշտօն պահպանելոյ զնեղուցն Կոստանդնուպօլսի, (այն է՝ պօղազ մուհաֆըզը)։

Իբրեւ էառ զայս պաշտօն, յետ աւուրց ինչ գնաց և շրջեցաւ ի բերդս յայլմէ և յայլմէ նեղուցին մինչեւ ի Գարապուրուն, և զգլխաւորս նոցին՝ որք կոչէին Գալէ աղասի, հրաւիրեաց առ ինքն զալ ի յէմիրկիւն ի ծովեզերեայ յարկ իւր, և զկարմիր կապայ խիլայութեան զգեցուցեալ նոցա, և պարգեւս ոսկւոյ և արծաթոյ պարգեւեալ նոցա առատաբար, շահեցաւ զկամս նոցա, և բազմիցս երդեւեկութեամբ էառ ի նոցանէ խոստումն և երդումն մեծամեծս, զի հպատակ կացցեն յամենայնի ամենայն հրամանաց արքային, զի մինչեւ և ի մահ հրաւիրեսցէ զինքեանս, յօժարութեամբ ընդունին։ և եթէ զեչենիչէրիութիւնն եւս քարձցէ, և զոր տարազ զգեստու զգեցուսցէ նոցա, և զոր ինչ պաշտօն ցուցցէ նոցա պաշտել, կամակար յօժարութեամբ և ամենայն հնազանդութեամբ ընդունիցին յանձինս իւրեանց զկամս և զհրամանս արքային։

Զայս այսպէս ի դլուխ հանեալ Հիւսէին փաշա, ազդ առ լար խորհրդակցաց իւրոց որք էին ի Կոստանդնուպօլիս ի մէջ եչենիչէրի օճագին, և կառավարք էին նոցա պէօլիւկ աղասի անուամբ։

Եւ նոքա կոչեալք առ ինքեանս զգլխաւորս սրիկայից և չարագործաց, հրամայեցին յայտնապէս, զի ամենայն եչենիչէրիք գնասցեն հանապազօր յորոշեալ ժամանակի ի կրթու-

Digitized by Google

թիւն պատերազմի, և որ ոչ հնազանդեսցի, ՚ի մահ վարեցին։

Զայս իբրեւ լուան եէնիչէրիք, թէպէտ և յուսակտուր էին զդիմի հարկանելոյ հրամանացն արքայի, զի գլխաւոր չարագործքն ՚ի մահ վարեցան, և չէին նոքա ՚ի միջի, բայց այսու ամենայնիւ ՚ի յունիսի 2, յաւուր հինգշաբթի երկնային վիճակին, յառաջին գիշերոյն սկսեալք ամբոխ մեծ գումարեցին եէնիչէրի սրիկայից, և ՚ի մէջ գիշերին կոխեցին յանկարծակի ղուռնն մեծի եպարգոսին, որ էր Մելիմ փաշա, և յայնմ՝ գիշերի գտան ՚ի պէյլէր պէյի հրաւիրեալ, ածքա տուր ՚ի ձեռին մտեալք ՚ի մէջ կանանց, ոչ թողին չարիս, զոր ոչ ապարին ՚ի նմին գիշերի, և զամենայն ինչս զտակեղէնս և զարծաթեղէնս և զականակուռ զարդս զամենեսին կողոպտեցին, և անտի եւեալք արշաւեցին ՚ի գուռն Ադեա գաթուսին, և անդ եւս զնոյն օրինակ գործ գործեցին կատարի գաղանութեամբ։

Բայց եէնիչէրք աղաչին հնարիւք հաւատարիմ սպասաւորաց իւրոց զերծոյց զանձն ՚ի տուն միոյ բարեկամի իւրոյ ՚ի Շահղատէ պաշին։

Իսկ ընդ առաւօտն գումարեալք ՚ի գուռն Ադեա գափուսին, գտանեն զԳուլ քէթխուտասին, և հրամայեն նմա, զի ընդ առաջ իւրեանց անվեհար գնասցէ ընդ նոսա ՚ի պալատն արքայի, զի զկամս և զհաճոյս իւրեանց արասցեն առ արքայ։

Եւ նա գոլով խորհրդակից ընդ Հիւսէին փաշային, համոզէ զնոսա և յորդորէ, զի ամենեքին գնացեալք ժողովեսցին ՚ի ձմերանոցն յլէմ մէյտանին, և մի ոք այսր անդր չերթոտեսցի, այլ ամենեքին անդ գտանիցին, և հրամայէ նոցա քաջրոզս կարդալ ՚ի փողոցս ճանապարհաց, զի ամենայն եէնիչէրի գտանիցի յլէմ մէյտանին, և ասէ ցնոսա, եթէ դուք գնացէք, և բազմութիւն մեծ գումարեցէք, և ես եկեալ ապա, կարգադրեմ զձեզ, և առեալ զձեզ զամենեսին, երթամք ՚ի պալատն արքայի, և առնեմք զամենայն, զոր հաճոյ է մեզ։

Եւ այսպէս խրատեալ զնոսա, առաքեաց զնոսա ՚ի ձմերանոցն, և ինքն ազդ արար իսկ և իսկ գրով իւրով Հիւսէին փաշային զամենայն, զոր ինչ եղեւն։

Իսկ Հիւսէին փաշայն՝ որ ապահով էր ՚ի վերուն բերդապահ

Digitized by Google

զօրացոյ նեղուցին, իսկոյն մտանել ի նաւ իւր՝ զնացեալ առ քաղաքայ. և սրտաւանդեաց զնա գալ իսկոյն ի մեծ սրտմտութեան կոնդանդնուպօլսի, և չերմնչիլ բնաւ երբէք։

Աղդ պարսից և իզդէրդ Ա՛հմէտ փաշային, որ նստէր յայնժամ յիւսկիւտար, զի փախճանակի հասցէ ի կոստանդնուպօլիս ի պալատն արքայի։

Եւ ինքն գնացեալ եդիտ անդ զվէզիրն Ա՛ղիմ փաշան, և առաքեցին ի դիմաց արքայի հրաւիրակս առ դենդեռան մեծ, որ կոչի Շէյխ իւլ իսլամ էֆէնտի, և առ Գադիասկէր եվրէնոսիս, և առ Նադիխալ իւլ էչրէֆն, և առ ամենայն մեծամեծ մօլլայս տէրսիմեան թուրց։

Իբրեւ եկին արքայ, և եդիտ զնոսա անգր ժողովեալս, հրամայեաց քարող կապոտալ ընդ ամենայն փողոցս քաղաքին, զի ամենայն հաւատացեալ ի Մահմէտ՝ որ սիրէ զբարութիւն հաւատոյ և վարուց, եկեսցէ ի Սուլթան Ահմետ յէմ մէյտանին՝ ի ներքոյ Սանճաղդը չէրիֆին։

Եւ ահա հեռագիտեալ զամարեցան անդր թօզճիք և զամպարաճիք և պօղճանճիք և չաւուշք, և ասֆալայք, և պրուտաւորք, և ամենայն մեծամեծք և իշխանաւորք Ցեղրումեանն։

Եւ հանեալ արքայ զվանճաղդը չէրիֆին՝ եղ ի պալատսն իւրմէ, և մեծամեծ պատուով և երդիքով զնոքա առաքեաց, գնացին ի մկիկիմն Սուլթան Ահմետ, և անդ աւարտեալ ըզնամանն, եղ յամպիոն ի չիլ իւլ իսլէմս Ա՛ղիփ ակէյ էֆէնտին, և զամենայն եղեռն և զչարագործութիւն էչենիչէրի սրիկայիցն պատմեալ յանդիման բազմութեանն, ինքեանց ի վերջոյ զբան իւր առ ապա, թէ ստբա չեն Մահմէտականք, այլ անհաւատք և չարք քան զանհաւատս, և անհնազանդք արքային՝ և օրինացն Մահմէտի՝ և հրամանաց Աստուծոյ. այլ՝ պատրաստ է ըստ ասելոյ իքաւանցն Աստուծոյ և ըստ սուրբ օրինացն Մահմէտի սպանանել ի սուր և ի հուր. ուստի հրամայեմք այսօր ի դիմաց Աստուծոյ և ի դիմաց Մահմէտի մարտնչիլ ձեզ ընդ նոսին, և ապատել զքաղաքն և զամենայն բարեպաշտս ի ձեռաց չարագործացս այսոցիկ։

Իբրեւ առաքեաց նա զնոսա իւր, եղ Հիւսէին փաշա,

Digitized by Google

առեալ ընդ իւր և զՄՀՀմէտ իզգէթ փաշա, և զեօթն թնդա-
նօթս թօփճի զօրականաց, որոց հարուրապետ էր յայնժամ
իպրահիմ աղա Գարա ճՀՀենէմ կոչեցեալ քաջասիրտ ոմն հա-
ւատարիմ սրբոյն, և գնացեալք յիլթ մէյտանն, խրտու ձայն
եւտուն պատռեալսմէ, արձակեցաւ Գարա ճՀՀենէմ զհինգ թըն-
դանօթս, վախոյց զամենեսեան ՚ի մէջ ձմերանոցին, և ապա
հաւր վառեալ վառօդոյ՝ ՀՀոպ և հրդեհեաց զչինուածն ՚ի
սոսրէ ՚ի վեր։

Եւ ահա հուր ՚ի ներքուստ, և սուր արտաքուստ, զի որ
արտաքս քան զղուռն յարձակէր խոյս տալ, զօրք վաշչոյից
՚ի սուր անցուցանէին, և որ ՚ի ներքս ձեայր, ՚ի հուր ապրէր,
և այսպէս ՚ի մէջոցէ մերոց ժամու հրկէզ եղեւ ողջոյն ձմերա-
նոցն, և ամենայն չարագործք ՚ի հուր վառեցան և ՚ի սուր
մաշեցան, և որք փախստեամբ ապրեցուցին զանձինս իւր-
եանց յայն օր, յետ աւուրց ինչ կալանաւորեալք գլխահատ
եղեն, և բազումք եւս յաքսորս վարեցան մերկամարմին ՚ի
քաղաքս խրիմանց. և մինչեւ զաւուրս քառասունն տեւեաց
այս սաստիկ գաղտապատրաստութեան մահու չարագործաց ՚ի մէջ
քաղաքին և ՚ի յիւսկիւտար։

Եւ զայս օրինակ բարձաւ Օճաք եչնիչէրի չարագործաց,
որ զբռնի ընդդատաստանէութեան իւրեանց ընկերեցեալ յաթո-
ռոյ բարձեալ էին ՚ի կենաց, որպէս գրէ հռչակաւոր բանաս-
տեղծ նաջին գՀՀչճի զաստէ իզգէթ մօլլայն։

Թախտի չէֆքէթտէն սէքիզ շահի ճիհանի խալլի խուսափ,
Գըլուխ մէվլա սայիրէնէ պաղի խտէն զալիմէրի։

Կիթտի ճՀՀերի զաստրի իլէ իւչ ընանէ Սուլթան Մուստաֆա,
Շէրպէթիի ճասմի չահասէթ իլէ գանատ լէպլէրի։

Ահմէտ, իպրահիմ, Մուհամմէտ, հէմտէ Օսման, ու Սէլիմ,
Թալ օլունուսուլէր ճիհանտէ օլմուշ իքէն ֆէրման պէրի։

Շահի տէվրանէ տումՀՀ մի բուհի Օսմանի չէհիտ,
Պիր կազա նիթտին քի խօշնուտ էյլէտին փէյդամպէրի։

Խանի Մուրատ օլ գահրամանն պէօյլէ նիթմՀՀ մի խոթաղ,
Ասիլէին էյ ղուլի կեարըն չէհսուվարն սաֆլէթէրի...

Digitized by Google

Չասպետասպա չահին առվրանկ միւսկիֆիկ խլքէյ,
Ֆարզ խոն լանկիր օճաղէ խքի եվուզ երլսան ակրի։

Զօրսպա գալդա զօրսպա գալդա գալդտըլար ախր ալեմիւն,
Համոհուլլահ սէյֆի լէֆիտէն իյլէտի չուրու չէրի։

Իակ յերկրորդ-ում աւուր Հիւսէին փաշայի ընկալաւ զգաստութ և պիշխանութիւն ապստամբութեան ամենայն զօրացն, և կոչեցաւ Սերասկէր փաշա, և նստաւ ՚ի հին պալատն ապքսայի՝ առընթեր իւրոյ Պեյազիտին, որ կոչէր Էսկի սարայ և այժմ կոչի Սերասկէր գափուսի։

Իակ Ազա գափուսին երեւ Շէյխիսլամ գափուսի, յոր նստի դիւանապետն մեծ, և երեքին գատաւորք ընդ նմա, որք են Րումելի գազիասկէրն, Անատոլ գազիասկէրի, և Ցառանգիոլ գատաւրսի էֆէնտի։

Ցետ քառասուն աւուրց կարգեցան նոր զօրք Մահմուտի անուամբ, նոր կանոնագրութեամբ և եւրոպական զգեստուք, և ամենական իւրաքանչիւր նոցա տասնապետաց՝ և հարիւրապետաց՝ և հազարապետաց՝ և այլոցն ամենեցուն կարգեցաւ յարքունուստ ամսոյ յամիս տալ անխափան հանդերձ հանապազօրեայ կերակրովն և հացիւն և զգեստուքն։

Ուստի և վասն այսր՝ ամենայն արուեստաւորաց կարգեցաւ առօրեայ և ամսօրեայ տուրս տալ Ազքսայի՝ իւրաքանչիւրն ըստ իւրում կարի և արուեստի։ Եւ զդիւն արքունի հարկին՝ որ էր քսան և չորս գահեկան ըստ մարդահարկի, արարին եռասուն և վեց գահեկան։

(1826) Եւ վասն նորոգ զօրացս չինեցան Ճամերանոցք ՚ի Տավուտ փաշայ, ՚ի Խամիդ չիֆթլիկին, ՚ի Յուսկիւտար, և յայսոսիկ աւուրս գլխատեցին զՕճաղ պաղիրկեաճի կոչեցեալ Հրեայն, որ նախէր յԱզգս գաղուսին ՚ի ժամանակս եչենիչէրիութեան։

Եւ յետ ամսոց ինչ խեղդամահ արարին և զշապճի Գօխոբաշի կոչեցեալ Հրեայն, և զստացուածս նորին և զինչս գրաւեցին յարքունուստ։

Ցետ երկուց ամսոց յաւուր երկուշաբթի՝ յօգոստոսի 18, միաչգեռ Ազքսայն և բազմութիւնք բդեշխաց և ամենայն մե-

Digitized by Google

Ծամբծաց ժողովրդեանք էին ՚ի Յուլիան Ահեկա, զի զգուշն նուիրագործեան հանձեալ ՚ի Մզկիթէն՝ պատուով մեծաւ տարցեն վերստին ՚ի պալատն Ալբքայի և դիցեն ՚ի տեղի իւր, յանկարծ երեւ հրդեհ ՚ի չօճա փայտից գաղչէ գալուն, և որովհետեւ ոչ ոք ՚ի բդեշխից կարողացաւ կանխել անդ ՚ի չիջուցանել զնգդգհն, զի էին ՚ի պալատն ազքային, հրդեհն պատեալ գրեաւ զինչս ցչորս ժամս, սկսաւ ճարակիլ ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն քաղաքին, ՚ի չօճա փայտից վինչեւ ցկոն կէնի գալուն, յորում այրեցան քարուկիր չինուածք, մզկիթք, պանդոկք, բաղանիք, և ամենայն չուկայք, և փայտ գասխանն, և տունք բազմութիւք, ընդ որս և Մայր եկեղեցին Խուհաբուն, և գաւորիարքարանն Հայոց։

Զհետ երկուց ամաց այրեցաւ և աշտարակն կոչեցեալ Եանկըն քէօշկիւ ՚ի Սէրասկէր գաբուսին, որ էր փայտակերտ, և յետ այնր չինեցաւ քարուկիր։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Ցաղագս գործի յաքսորանաց տանն Տիւղեանց եւ Գաւրիարքութեան տեառն Կաբրաեէլի, եւ աքսորանաց Թունկըրեան երկուց եղբարց։

(1823) Իրբեւ ողորմութեամբն Աստուծոյ բարձան յայնժամուրհեկ երկոքին որդիքն ազատանային՝ Հալեպ էջնելոյ և հաստատուածոյ նոցին խէսկել հրեայն, պէզճեան Բարութիւն ամիրայ ժամ քաղեղացեաւ գտեալ, յանկոյց յինքն զախտաս մեծամեծաց ազգութիւնն ՚ի ձեռն մեծագին ընծայից վասն երից եղբարցն աղնուականաց Տիւղեանց, որք էին կարապետ և Յակոբ և Պօղոս չելէպիք, որք յերից ամաց հետէ մնասնեալ էին յաքսորս ՚ի վանս կնազուիոյ, և մնասուցեալ զդիր ալեր-սանաց առ Ալբքայ, հրաման եղեւ յԱլբքայէ, և վերստին արձան յաքսորանացն ՚ի կոստանդնուպօլիս յամի Տեառն 1823 յապրիլի 16, զոր նախ քան զաքսիննն մնացին ՚ի տան Բարութիւնն ա-

Digitized by Google

միջոցին Պէշճեան ՚ի յիշեալի գաւառս, և տպա ՚ի վաղնջական տուն հայրենեաց իւրեանց ՚ի Խուրթս չէշմէ։

Պօղոս պատրիարք կացուցեալ զամս ութ ՚ի պատուհարքութեան իւրում, հրաժարեցաւ յաթոռոյն, և միաբան հաւատնաւթեամբ իշխանաւորաց ազգին՝ ընտրեցին զեպարտպետ վարդապետս կաստանդնուպօլսեցի ՚ի հոկտեմբեր 27, որ չքեղ էր առաքինաբանութեամբ և խրատախորհուրդ մտօք։ Յաւուրս սորա ՚ի նոյեմբեր 18, վախճանեցաւ երանելի Հ. Միքայէլ վարդապետն Ջամչեան, որ ՚ի փառս և ՚ի յօգուտ ազգիս վաստակեալ էր մինչեւ յալիս ծերութեան իւրոյ։

(1824) Ընդ այս ժամանակ եղեւ և նորոգութիւն սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն Օրթագիւղի, զորոյ զհանդէս փառաւոր օծման կատարեցին ՚ի դեկտեմբեր 15։

(1827) Ի ժամանակս յայսմիսիկ Պէշճեան Յարութիւն ամիրայ որ երեւելին էր ՚ի ամէն ժամանակի յիշխանաւորս ազգի մերում, և դերադոյն նախագահ յազգային ժողովի պատրիարքականին, խորհրդով և հաճութեամբ կարեպետ պատրիարքին կամեցաւ կացուցանել ղմի ոք ՚ի վարդապետաց կաթողիկաց՝ երեսփոխան կամ վոխանորդ պատրիարքին, որ նստիցի հանապազօր ՚ի Ղալաթիա կամ ՚ի Բերա, և զարքունի հրամանս և զկամս տէրութեանն՝ որ գոյ հրովարտակաւ ՚ի պատրիարքարանն, պատրիարքն ծանուսցէ նմա, և նա ազդարասցէ ժողովրդեան Հռոմէական հայոց։

Ուստի յաւուր միում գնաց Պէշճեան Յարութիւն ամիրայ ՚ի Բերա ՚ի տուն Պիլէզիկճեան Պարոն Պօղոսին, և անդ կոչեաց հաւաքեաց զամենայն գլխաւոր անձինս Հռոմէական հայոց, որոց բաղումք էին երեւելի հասարակաց ՚ի գաղտաժողով։

Ընդ էր և Տիւզեան Յակոբ էլչի, և Եղիքենճեան Պարոն Մկրտովպ եւալն։

Եւ ՚ի ժողովի անդ խօսեցաւ Պէշճեան Յարութիւն ամիրայ, և պատմեաց ամենեցուն նոցա զկամս և զհաճութիւն պատրիարքին, և ամենեքին նոքա՝ որք էին ՚ի ժողովին, ընկալան և հաւանեցան, և չնորհակալ եւս եղեն վասն այսր ըղ պատրիարքէն։

Digitized by Google

Եհարց ցնոսա պէզճեան Բարութիւն, թէ զի՞ ոք ՚ի վար-
դապետաց կամիք ընտրել։

Եւ ժողովեալքն պատասխանի ետուն. թէ հաճելի և ըն-
դունելի է մեզ այն՝ զոր դու ընտրես մեզ։ եւ յետ բազում
խօսս լինելոյ ՚ի ժողովի անդ՝ առաջարկեաց նոցա պէզճեան
Բարութիւն, եթէ կամի՞ք զՆուրիճան Ամենոն վարդապետն։

Եւ նոքա միաբան հաւանեցան և կին քեցին զխօսս իւրեանց,
զի Նուրիճան Ամենոն վարդապետ լիցի գլխաւոր ՚ի մէջ վար-
դապետաց իւրեանց հրամանաւ պատրիարքին և ընտրու-
թեամբ ազգին, և արձակեցաւ ժողովն։

Իսկ ՚ի միւսում աւուր Գաղատացի հատուածոյն՝ Թըն-
կըրեան Յակոբ, և Յովհաւփ, և Գրիգոր, Տաւուտեան Ամենոն
և Յովհաւփ, Գրիգեան Գրիգոր և Վիչէն, Էմէյի Ուզունեան
Պօղոս, Կիւ զէլեան Գրիգոր, և այլք համախոհք ընդ նոսին,
ժողովեալք ՚ի տան Յակոբայ Թընկըրեան, ընտրեն զՄարուշ
կոչեցեալ Գաղատացի Պօղոս վարդապետն՝ լինել ինքեանց
տեսուչ և կառավար, և ասեն, ոչ կամիմք զՆուրիճանն, զոր
ընտրեցին հերետիկոս Հայք։

Այս ժողով նոցա և վէճ՝ հասեալ յականջս պէզճեան Բա-
րութիւն ամիրային՝ ոչ սակաւ դաւեցոյց զսիրտ նորա։

Եւ որովհետեւ սպարապետ էր յայնժամ՝ խոստով մէհէմ-
մէտ, և նմա հատուածոյն էր Թընկըրեան Յակոբ և որդի
նորա Բարութիւն, կամեցան սոքա ՚ի ձեռն այնր փաշային՝ զա-
տուցանել զՀռովմէական Հայս ՚ի Հայոց, և կացուցանել Հռով-
մէական Հայոց որոշ պատրիարք՝ անկախ ՚ի պատրիարքէն Հայոց։

Ուստի գաղտնի ժողովեալ սոցա՝ բան եդին ՚ի միջի իւր-
եանց՝ գիր աղերսանաց մատուցանել առ Թագաւորն, և ի-
մաստ գրոյն էր այս։

«Ցայտ է մեծապոր Տէրութեան ձերում՝ որ Թագաւոր, զի
յանցեալ ամին արեւելեան Հայք՝ որք ՚ի պարսից բաժնին էին,
միացեալք ընդ Մոսկովաց՝ ապստամբեցան ՚ի տէրութենէն
պարսից, և ոչ սակաւ ջնասս հասուցին պարսից տէրութեան։

Արդ՝ խորհուրդ խորհեալ՝ն արեւելեան Հայք յարձա-
կիլ և ՚ի սահմանս Օսմանեան տէրութեան, և կռիւն առնել

Digitized by Google

զքաղաքս և զգիւղօրէս, առնուլ և զթառել, և կանգնել ինք-
եանց զմանուաւոր թագաւորութիւն իմն ի Հայաստան աշ-
խարհին՝ ընդ հովանաւորութեամբ Ռուսաց Տէրութեան։

Արդ զայս խորհուրդ խորհեալ են Հայք, և ունին Թշնա-
մութիւն զտէրութենէ Ձերմէ, և մեք այսինքն Հռովմէական
հայքս, մի ազգ լինելով ընդ Հայոց, և ի միոյ պատրիարքէ և
գլխոյ կառավարեալ գոլով, յայնժամ ընդ նոսին միաբան և
միախորհուրդ երեւելոց եմք առաջի Ձերում մեծափառ
թագաւորութեան. և մերս հարազատութիւն և հաւատար-
մութիւն ոչինչ երեւելոց և չէ յայտնելոց Ձեզ։

Ուստի խնդրեմք այժմ յամենագութ և ի բարերար տեառ-
նէդ զատուցանել զմեզ ի Հայոց, և տալ մեզ յատուկ պատ-
րիարք և եկեղեցի, զի մի միաբան երեւիցիմք նոցա և հա-
ղորդ չարախորհուրդ անհաւատարմութեան նոցա, և մեք ըզ
պարտուպատշաճ ծառայութիւն մեր և ազօթս անվսեփան կա-
տարեսցուք ի նմին եկեղեցւոջ, և ազատ եւս լիցուք յերկա-
ղոյ յեկեղեցիս Լատինացւոց, յոր երկայնաք մինչեւ ցարդ՝ վասն
չունելոյ մեր յատուկ եկեղեցի»։

Զայս գիր ընթերցեալ Ներքայի՝ խոռվի յանձն իւր, և կոչ-
եալ նոյն ժամայն զՊէզճեան Ցարութիւն առաջի իւր, հար-
ցանէ նմա զիմաստ գրոյն։

Եւ նա ըստ իւրումն խորախորհուրդ ուշի և բազմահան-
ճար զգօնութեան՝ յայտ առնէ արքային զչարախնդիր ատե-
լութիւն և զմահայոյզ թշնամութիւն Գաղատացի Հռովմէական
հայոցն՝ զոր ունին առ Հայս, և ի վերջոյ յարէ, ոմն թագաւոր
մեր և տէր, պատրիարք մեր հաւատարիմ ծառայ տէրու-
թեանդ է, հարց ցնա, թէ կարող է երաշխաւոր լինիլ վասն
ազգի իւրոյ առաջի Ձեր, զի ազգ Հայոց յամենայնի հաւա-
տարիմ է ընդ ամենայն տէրութիւնս, ուր և գտանիցի։

— Գրեաց արքայն ի դուռն առ եպարգոս իւր, զի կոչեալ
զպատրիարքն Հայոց ի դուռն՝ հարցցեն և տեղեկացեն ըզ
նմանէ, թէ երաշխաւոր իցէ վասն իւրոյ ազգին լինել յամե-
նայնի հաւատարիմ տէրութեան։

Կոչեցին զպատրիարքն ի դուռն, և զՊօղոս պատրիարքն,
որ նստէր յԻւսկիւտար ի վանս առաքելաշէնից, և նա

Digitized by Google

պատուախանի եւս մեծի եղարդոսին, և ասէ. Երաշխաւոր եմք մեք բոլոր ազգիս ընդ ամենայն պատուս տէրութեան ձերոյ, ուր և գտանիցի: Եհարց եպարդոսն ի նէ զիմարդ կարէք երաշխաւորել վասն Հայ բնակչաց հեռաւոր քաղաքաց. ընդ այս ետ պատուախանի պօղոս եպիսկոպոսն և ասէ. Ի Քրիստոնէական կրօնի մերում է խորհուրդ մի, որով իւրաքանչիւր ոք պարտի յորոշեալ ժամանակս խոստովան լինել զդաղտնիս սրտից իւրոց քահանայից. և եթէ քահանայք այդպիսի ինչ նշմարիցեն, պարտաւոր գտանին անյապաղ հաղորդել եպիսկոպոսաց. վասն այսորիկ համարձակութեամբ երաշխաւոր եմք մերոց ազգայնոց, այլ վասն Հռոմէական հայ ժողովրդեան ոչ եմք և չեմք կարող լինել երաշխաւոր, զի նոքա յեկեղեցի մեր ոչ գան, և բանից մերոց ոչ անսան, և քահանայից մերոց ոչ խոստովանին. այլ հանապազաղօր երթեւեկեն յեկեղեցիս լատինացւոց և կենակցին ընդ քահանայս նոցա:

Այս պատուախանի պօղոսի պատրիարքին հասեալ ի լսելիս արքային՝ զայրացաւ յոյժ ընդ վերջին աստիճան յանդգնութիւն նոցա, զոր յանդգնեցան նենդել և խաբել զարքային խորամանկութեամբ իւրեանց:

Ուստի առ ժամայն հրամայեաց զԹընկլըրեան Ցակոբ և զեղբայր նորա զՅովսեփ հանդերձ ընտանեօք իւրեանց առաքել յաքսորս. և անդէն ապստրեցին զՅակոբ ի կեռատիա, և զՅովսեփ ի Սեբաստիա քաղաք փոքուն Հայոց, 1827 հոկ. 3:

ԳԼՈՒԽ ԼԶ.

Ցաղագս այլնելոյ եւրոպացւոց զարքունի նաւատորմիղն Օսմանեան Տէրութեան:

(1827) Ցայս վայր տեւէր պատերազմն Տաճկաց ի վերայ Հելլենացւոց յեօթն ամաց հետէ, յորէ անտի ապստամբեալց նոցա ի Մոլտաւիա, ի կղզիս Միջերկրական ծովուն, և առաւել ևս ի Փերոպոնիդոս:

Digitized by Google

Ա.րդ ՚ի սմին ամի ՌՐԵ.ք թագաւորութիւնք, այսինքն Ռուսաց, Դաղղիացւոց և Անգլիացւոց, առաջարկեցին և պահանջեցին յՕսմանեան տէրութենէ՝ ազատութիւն ընորհել ծուննաց պեղոպոնիդացւոց, և առնել զպեղոպոնիդս մնանաւոր դքսութիւն իմն անկախ և ազատ, միայն ամ ըստ ամէ տացեն ծոյնք զտարեկան տուրս ինչ Օսմանեան տէրութեան։

Ոչ հաճեցեալ ընդ այս արքայն՝ առաւել եւս թափեաց ըզ ցասումն և ղէօրութիւն իւր ՚ի վերայ պեղոպոնիդացւոց, ՚ի ցամաքէ երկոտասան փաշայս հանելով հարիւր երեսուն հազար զօրօք, և ՚ի ծովէ վաթսուն և հինգ պատերազմական նաւս մեծամեծս ամենայն պատրաստութեամբ, որոյ ամենեցուն կարգեցաւ սպարապետ՝ Իպրահիմ փաշա որդի Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի։

Հանին և Եւրոպացի տէրութիւնք ընաւատորմիղս իւրեանց ՚ի ծովն Մօրայի, զի մի՛ թոյլ տացեն երկուց կողմանց այսինքն Տաճկաց և ծուննաց պատերազմիլ ընդ իրեարս։

Որոց եկեալ բացէ ՚ի բաց ծանուցին Իպրահիմ փաշայի՝ զի մի՛ իշխեսցէ պատերազմիլ ընդ ծոյնս. ապա թէ ոչ՝ և ինքեանք ձեռնտու և զօրավիգ լինելով ծուննաց՝ թափեն զամենայն ցասումն և ղոյժ իւրեանց ՚ի վերայ Օսմանեան տէրութեան։

Իսկ Իպրահիմ փաշա պատասխանի ետ, թէ դրեմ առաքայ և առ Հայր իմ Եգիպտոս, և սպասեմ հրամանաց նոցա։

Որոց հաւատացեալ՝ մնին ՚ի նաւահանգիստն, վեց նաւք Դաղղիացւոց և վեց նաւք Անգլիացւոց, և իննն նաւք Ռուսաց, և կացին հանդէպ նաւարին բերդին Մօրայի։

Յետ չորից աւուրց մնանելոյ նոցա ՚ի նաւահանգիստն՝ ՚ի հինգերորդումն աւուր հրաւիրեաց Թահիր փաշա զծովակալս եւրոպացւոց՝ գալ առ ինքն և խօսել ընդեան հաշտութեան։

Մտանեն ՚ի մակոյկս երկուս՝ ծովակալն Դաղղիացւոց և քարտուղար նորա՝ և երիս խորհրդակից ընդ նմա, սոյնպէս և Գոտրինկթօն ծովակալն Անգլիացւոց և քարտուղար նորա, ընդ ամենայն վեց երեսելի անձինք բաց ՚ի նաւավարաց երկուց մակուկաց։

Եւ իբրեւ գան մակոյկք դէպ ՚ի կղզին, որ է ՚ի մէջ նաւա-

Digitized by Google

ահաճոգոստին, ասեն թէ յանկարծակի արձակեալ իցեն ի նա-
ւուց Տաճկաց երկուս թնդանօթս ռմբաձիգս առ ի ընկղմել
զնաւակոյկն, բայց զդացեալ նոցին ի նշանաց պատրաստու-
թեանցն, դարձ փոնեն անվնաս ի նաւս իւրեանց. և ապա
սկսեալ են թնդանօթիք ձգիլ յամենայն նաւուց Տաճկաց՝ և
ի պատնշաց կղզոյն ի նաւս Գաղղիացւոց և Անգլիացւոց։

Որոց ոչ դիտելով յառաջնմէ զայս խարդախութիւն թահիր
փաշային, սկսանին և ինքեանք արձակել ռումբս և թնդա-
նօթս ի վերայ նոցա, և զի մերձ էին Գաղղիացւոց նաւք
հրայրեաց նաւուց տաճկաց, հրդեհեն զնոսա իսկոյն։

Որոց վառեալ իսկ և իսկ անկանին ի վերայ պատերազմա-
կան նաւուց տաճկաց օգնականութեամբ հոգմոյն՝ որ վաթէր
զնոսա դէպ յայն կողմն, և զնոսա եւս հրդեհեն և բոցն տա-
րածեալ շուրջանակի, մինն զմիւսն վառէ. և այնպէս ի միջոյ
երկուց ժամուց վաթսուն և հինգ պատերազմական նաւք
արքային ի հուր վառեցան հանդերձ ամենայն պատրաստու-
թեամբ կահուց և կարասեաց և գանձուց իւրեանց։

Եւ զօրքն որք ի նաւսն էին, և նաւավարք և պաշտօն-
եայք նոցին, ծովակուր եղեն. սակաւք միայն ապրեցան, որ
լողալով ելին ի ցամաք։

Յայնմ մեծի տագնապին և հնդետասան նաւք Ռուսաց՝
որք էին ի բերան նաւահանգստին, սկսան մարտնչիլ և հար-
կանել զբերդսն յերկուց կողմանց նաւահանգստին, և զինն
ժամ անդադար թնդանօթս արձակելով կործանեցին և հիմ-
նայատակ արարին զբերդն նաւարին և Ս. Տուխտուն. և այնպէս
դադարեցուցին զնարտ պատարազին։

Յայնմ ահագին պատերազմի՝ երկու նաւք Գաղղիացւոց,
և նաւ մի Անգլիացւոց վնասեցան չարաչար, բայց զերծեալ
արտաքս ի նաւահանգստէն, և եկեալ ի Սիւրա՝ նորոգեցան
դարձեալ։

Ա. յս դառն աղէտ և բօթալից լուր հրդեհակէզ կորըս-
եան այնչափ անհամար գանձուց, տէրութեանն հասեալ ի կոս-
տանդնուպօլիս ի լսելիս արքայի. վառեցաւ, բորբոքեցաւ ի
սրտմտութիւն բարկութեան. և զդեսպանս Ռուսաց և Գաղ-
ղիացւոց և Անգլիացւոց վանեաց ի դաստանդնուպօլսոյ. ընդ

Digitized by Google

որս գնացին և վաճառականք և երեւելի անձինք եւրոպացւոց՝ ահաբեկեալք ի ցասմանէ արքայի։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Ցաղագս վերջին հալածանաց եւ աքսորանաց Հռոմէական Հայոց։

(1827) ՍՈՒԼԹԱՆ Մահմուտ արքայ, որ ցասուցեալ էր ի վերայ Գաղատացի Հռոմէական հայոց, որպէս խօսեցաք ի վեր անդր, մանաւանդ ղի՝ առեալ էր ինքեան այս երկապառակութիւն ազգին, և կամէր, ղի ողջոյն ազգն ընդ միով գլխով հպատակեալ կառավարեսցի, և վասն այսր բազում անգամ արքունի հրովարտակս առաքեալ էր ի պատրիարքարանն Հայոց, յորէ անտի նստեալոյ իւրոյ յանծռ թագաւորութեան. և կամէր զայս պատակատուն Հռոմէական հայոց բառնալ ի միջոյ, եմէ ոչ քաղցրութեամբ, դունէ խստութեամբ, որպէս փորձիւ տեսաք անդ ի մահու Ցիւզեան եղբարց ազնուականաց, որոց դատակնիք մահու դրեալ էր ղլինելն յանցաւոր կրօնի՝ պատճառաւ կաթոլիկութեան։

Այդ թէպէտ յայս միտս էր արքայ, բայց ակնածեալ յնեւրոպացւոց թագաւորութենանց, որոց հաղորդս գիտէր ըզՀռոմէական հայս ի բան հաւատոյ և կրօնի, լռեր ոչ կամեաւ, այլեւս ժամանակի թողլով, զոր կամէրն առնել։

(1827) Այդ յետ վանելոյ զդեսպանս եւրոպացւոց ի կոստանդնուպօլսոյ, աւ ի լուծել զվրէժ կորստեան նաւատորմղին ի Նաւարին, յանցանել միոյ ամենայն առաքեաց հրամանագիր արքունի ի պատրիարքարանն հայոց՝ յորում դրեալ էր զվնդ յօդուածս հրամանաց իւրոց ծանր և ծանր սպառնալեօք սուգանաց և վնասուց, այն է.

Ա. Զի գաղատացիք ամենայն աքսորեսցին ի գաղատիա զրկեալք և ընտանեօք։

Digitized by Google

Բ. Քահանայք Հռովմէական հայոց՝ աքսորեցոյին յԵրուպա յամենայն սահմանաց տէրութեանն։

Գ. Կոստանդնուպօլսեցի Հռովմէական հայք և որք յայլ և այլ քաղաքաց իցեն եկեալք, եթէ իբրեւ զԳաղատացիս յամառեալ իցեն առ ի ոչ հնազանդիլ պատրիարքին հայոց, աքսորեսցին և նոքա որդւովք և ընտանեօք ի քաղաքս Անատօլուի։

Դ. Մայրապետք նոցին՝ որք պաշտօնիւ ուսուցանելոյ խրատուն զկանայս լինել հակառակասէրս, աքսորեսցին և նոքա։

Ե. Կաթոլիկք մի՛ նատիցին ի Բերա, ի Գալաթիա, և ի գիւղօրէս նեղուցին կոստանդնուպօլսոյ, ուր գտանին եկեղեցիք լատինացւոց, այլ նստցին ի կոստանդնուպօլիս, յիւսկիւտար, և ի հայաբնակ գիւղօրէս, և տունք Հռովմէական հայոց՝ որք իցեն յարգելեալ տեղիս յայնոսիկ, վաճառեսցին այլազգեաց։

Այս հրովարտակ եկեալ ի Պատրիարքարանն՝ որ էր յայնժամ ի Յամաթիա, զի այրեալ էր Պատրիարքարանն խումբ խաբուի ի մեծի հրդեհին, որ եղեւ ամաւ միով յառաջ, կոչեաց պատրիարքն, և եղեւ ժողով մեծ Հռովմէական հայոց յեկեղեցւոջ սրբոյն Գէորգայ, ուր ընթերցեալ զհրովարտակն, բացայայտեաց պատրիարքն ամենեցուն նոցա զհրամանն արքայի։

Եւ ահա սկիզբն եղեւ աքսորանաց Տաւուտեանց՝ և Դըլճեանց՝ և Թընկըրեանց երեւելի հատուածոցն Հռովմէական հայոց 1827 ի սեպտեմբերի 27։

Եւ յետ մեռանելոյ աւուրց Գաղատացի Հռովմէական հայք աքսորեցան հանդերձ ընտանեօք իւրեանց ի Գաղատիա մեծաւ խղճմտութեամբ. զի աւուրք ձմերան էին, և հողմունք խիստ չնչէին։

Մանաւանդ զի՝ կանայք և մանկունք չէին սովորեալք ձիընթաց ճանապարհորդութիւնս առնել, թող թէ հիւանդք և յղիք և նորածինք՝ որք էին ի նոսին։ Եւ զի՝ հազարաւոր անձինք էին սոքա, և ոչ բաւէր ամենեցուն սոցա զատ զատ ձի, և այլ պիտոյք ճանապարհի։

Որ դիցուք, զի և ամենայն լինչ թանկագին եղեւ, և

Digitized by Google

չունէին բաւական դրամ՝ ի ձեռին հոգալ դինքեանս և զկառ-
ըեւորացն սակի։

(1828) Եւ՝ ի յունվարի 27 եղեւ տեղափոխութիւն դաթո-
լիկաց՝ ի Բերայէ և՝ ի Գալաթիոյ՝ ի Կոստանդնուպոլիս և՝ ի
հայաբնակ գիւղօրէս, և տունք նոցին վաճառեցան դիւրա-
գինս այլազգեաց։

Եւ յամենայն փետրվարի քահանայք Հռոմէական ն հա-
յոց աքսորեցան յԵւրոպա յամենայն ասկմանաց տէրութեանն,
թէպէտ ոմանք՝ ի նոցանէ ծպտեալ՝ ի կերպարանս ֆրանկաց
մնացին յեկեղեցիս Լատինացւոց և՝ ի պալատս դեսպանաց,
որպիսիք էին Գուցիանիի Վենետկն, Թասուրճին, Ծովսեփ վար-
դապետն, եւայլք։

Եւ յետ աւուրց ինչ երեսուն՝ ի հայրապետաց աքսորե-
ցան՝ ի Պանտըրմա, և մեռաւսան հայրապետ՝ ի Մահարճ,
ամենեցուն սոցա տայր պատրիարքն զգիր հրամանի ճանա-
պարհորդութեան նոցա։

Յայսոսիկ աւուրս և բազում անձինք՝ ի կոստանդնուպոլ-
սեցի Հռոմէական հայոց և յայլոց քաղաքացւոց՝ որք ոչ հա-
ղորդեցան ընդ Հայս՝ ի հոգեւորս, և ոչ եկին յեկեղեցիս Հա-
յոց, այնուքիկ և սոքա իբրեւ զանհնազանդս հրամանաց արքայի
աքսորեցան՝ ի քաղաքս Վնատօլուի։

Եւ ոմանք խոյս եւտուն՝ ի Ռուսաստան, ՝ի Սիրա, և՝ ի
Թրեստ, և անդ մնացին առ ահի աքսորանաց, բայց ամենե-
քեան սոքա որք գնացին յաքսորս և՝ ի վախուստ, ՝ի վերջ ին
աղքատութիւն հասին, զի ոչ ունելով բաւական դրամ՝ ի
ձեռին՝ սկսան վաճառել զկահս և զկարասիս տանց իւրեանց,
և այսպէս զրկեցան ամենեքեան սոքա՝ ի տանց և՝ ի ստացու-
ածոց իւրեանց, և ոմանք՝ ի կենաց ցաւալի հիւանդութեամբ.
և այսմ ամենայնի անտանելի աղետից և չարաչար ձնասուց և
հարուածոց պատճառ եղեն անմիտ գաղատացիք, որպէս և
՝ի վեր անդր յիշեցաք։

Երկու ամք յառաջ երեք հրեայք ընկալան զհաւատս
քրիստոնէութեան՝ ի նորաղանդից Ամերիկացւոց, զոր իմաց-
եալ հրէիցն՝ եւտուն ըմբռնել զնոսա, և արքունի հրամանաւ
արկին՝ ի թիկ նաւատեղեաց։

Digitized by Google

Մինն ի նոցանէ կրկին անգամ դարձաւ ի հրէութիւն, և զերծաւ ի բանտէն ի ձեռս աղգին Հրէից։ իսկ երկոքեքն մնացին անդ ղամս երկուս։

Ապա՝ յայսոսիկ աւուրս և նոքա գիր աղերսանաց մատուցեալ առ արքայ՝ խնդրեցին աղատել զինքեանս ի բանտէ անտի, և ազգին Հայոց չնորհել։ Ընդ որս գթացեալ արքայ՝ հրամայեաց, և ազատեալ զնոսա ի բանտէն՝ չնորհեաց ազգին Հայոց։

Ուրոյ եկեալ ի Պատրիարքարանն, յետ աւուրց ինչ ընկալան զօծումն սուրբ դրօշմին խորհրդոյ յեկեղեցւոջ տրգոյն Գէորգայ ի կարապետ պատրիարքէն։

Եւ ապա սկան սոքա համոզել և ղայլս ի Հրէից, և գաղտնի մկրտել ի տունս Հայոց ի ձեռս Հայոց քահանայից։

Զոր իմացեալ ապա պէզճեան Ցարութիւն ամիրայ, զյօրբերքաասանն զնոսին՝ որք ի հրէութենէ դարձեալքն էին, աքսորեաց ի Կեսարիա քաղաք կապադովկացւոց, և անդ մնային զամս երիս, և ապա ցրուեցան անտի այսր անդր ի Կոստանդնուպոլիս, յԱդրիանուպոլիս, ի Թրակիա, և այլուր։ Աքսորեցան և մկրտող քահանայք նոցին, Անդրէաս վարդապետ Կոստանդնուպոլսեցի, Ստեփաննոս վարդապետ Զմիւռնացի, Տէր Պաղտասար Պալատցի, Տէր Զաքարիա Բերացի։

Եւ կնքահարք նոցին՝ Յովհէփ վարժապետ Տէր Սահակեան, Ոսկերիչ Մարտիրոս, եւայլք։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս պատերազմին Մոսկովաց ընդ Տաճկաց։

(1828) Ամենայն երեք ամքն յառաջ Ալէքսանդր կայսր Մոսկովայ, և յաջորդեալ յամին նորա եղբայր նորին Նիկողայոս Բաւլովիչ։

Իսկ Սուլթան Մահմուտ որ ցասուցեալ էր ի վերայ եւրոպացւոց թագաւորութեանց վասն հրկէզ առնելոյ նոցին զգ

նաւատորմիղն արքունի ի Նաւահանգիստն Փօրայու, ձայն ետ պատերազմի ընդդէմ Ռուսաց ի 18 աւուր դեկտեմբերի, և ի ամին ամի յամենեսեան ապրիլի կոխեցին Մոսկովք զվալաքիա և զՄոլտաւիա, և սկսան մարանչիլ ընդ իպրայիլ մեծամուր բերդին, և առին զնա յամենեսեան յունիսի զկնի առնօրեայ պաշարման, ընդ նմին և զիասքճա, և զՆաֆիա, և զայլ տեղիս։ Ընդդէմ սոցա եհան արքայ բանակ մեծ հարիւր յիսուն հազար զօրաց, որոց սպարապետ եղեւ Սէլիմ Մէհմէտ փաշային, և երկրորդ նորա կարգեցաւ Հիւսէին Ալդա փաշային, որ գնաց դէպ ուղիղ ի Շումնու, և զդուշացաւ պահպանութեան նորա զբազում ժամանակս. իսկ Ռուսք առեալ զիպրայիլ և զԵերկէօ, անցին ընդ գետն Դանուբ, և եկեալ պաշարեցին զՍիլիստրէ։ Գնաց ընդդէմ սոցա Սէլիմ Մէհմէտ փաշային, բայց ոչ կարացեալ առնել ինչ, յետ քան և հինգ աւուրց պաշարման քանդեցաւ բերդն ի բազում հարուածոց լինդանօիժաց, և մատնեցաւ քաղաքն ի ձեռս Ռուսաց։

Յայսոսիկ աւուրս պաշարեցին Ռուսք և զքաղաքն Վառնա ի ծովէ և ի ցամաքէ, և սկսան պատերազմիլ ընդ բերդին զաւուրս երեսուն. իսկ Սէլիմ փաշային՝ որ նստեալ էր բանակաւ ի Բրաիլատա ընդդէմ մեծի բանակին Ռուսաց, յանկարծ յաւուր միում վաղքաջ ընդ առաւօտն առանց ազդ առնելոյ արձակեաց զերեսուն հազար այրուձիս ի վերայ բանակին Ռուսաց, և կոտորեցին ի նմին աւուր ի Ռուսաց զհազար ոգիս։

Իսկ մեծ սպարապետն Ռուսաց որ կոչէր Տիւկիչ Ցեկլա Մաբէշալ, զայրացեալ ի բարկութիւն մեծ՝ յետ երից աւուրց ձայն ետ պատերազմի, և սկսաւ ռումբս արձակել իբրեւ զանձրեւ ի վերոյ բանակին Տաճկաց, և կոտորեաց զհօմն հազարս ի զօրաց նորին, և զինացեալսն զարար փախստական. և զամենայն աւար՝ և զկապուտ կողոպուտ անկեալոյն բաշխեաց զօրականին իւրում։ Ի պաշարման անդ վարնայի վիրաւորեցաւ զօրապետն Ռուսաց Մէնիչիքօվ. բայց վօրօնցօվ անցեալ ի տեղի նորա աստուկացոյց զպաշարումն, խրամատեաց զպարիսպան, և անդադար ռումբս արձակէր ընդ մէջ քաղաքին զտիւ և զգիշեր հրկէզ առնել և աւերել, և ի միոյ

կողմանէ որ էր ի ցամաքակողմն բերդին՝ սկսաւ ական հա-
տանել ի ներքոյ պարսպային, և հուր արկանել և կործանել,
մինչեւ ուժասպառ լեալ զօրայ Տաճկայ, և տեսանելով զմո-
տալուտ մահ և զկորուստ քաղաքին, բազումք ի մեծամեծ
ծայ՝ ընդ որս և քաղաքապետն Սէրէզլի Լուսուֆ փաշայն և
որդի նորա անցին ի կողմն Ռուսաց և անձնատուր եղեն։

Յայսմանէ ահ և դողումն պաշարեաց զբնակիչս քաղա-
քին, և աղաղակ ձայնի նոցա հասանէր յերկինս, յորմէ և ծո-
վակալ Լզզէթ Մէհմէտ փաշայն անճարացեալ և յուսահատ-
եալ՝ մատնեաց զքաղաքն ի ձեռս Ռուսաց, հանելով զբնա-
կիչ Տաճիկս և զզօրս իւր ի միջոյ քաղաքին։

Եւ այսպէս ի մէջ յիսուն աւուրց առաւ վարնա ի Մոս-
կովաց ի 30 սեպտեմբերի, և բացաւ ճանապարհ անյանձնելոյ
Ռուսաց ընդ ահագին Ճիւնապատ լերինս՝ որք կոչին Պալգան
և արշաւել ի Բուլղարս, և ի Մակեդոնիա, և ի Թրակիա,
և ևս դէպ ի Կոստանդնուպոլիս, որպէս և եղեւ իսկ։

(1828) Յաւուրս յայսոսիկ եղեւ չինութիւն Մայր եկեղե-
ցւոյն Ս. Աստուածածնի ի խումխափու, և պատրիարքարա-
նին Հայոց, որ այրեալ էր յերկուց ամաց հետէ, բայց մեծ և
ընդարձակ չինեցաւ եկեղեցին, բաժանեալ յերիս մեծամեծ
եկեղեցիս, և յերկուս փոքրագիրս առընթեր նոցին, որովք
եղեն հինգ եկեղեցիք հաստակառոյց և մեծայարկք։ Եւ
յանպէսման եկեղեցւոյն չինեցաւ պատրիարքարանն առընթեր
երուսաղէմայ տանն, և յայմէ եկեղեցւոյն աւազան մեծ ջրա-
լից և պատրաստ վանն հրաւիրի։

Եւ այս չինութիւն տեւեաց ղամ մի ողջոյն, և հանդէս
օծութեան եկեղեցւոյն կատարեցաւ ի 14 հոկտեմբեր, 1828։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԼԹ.

Ցաղագս մեծի սովուն որ եղեւ ի Կոստանդնուպոլիս։

(1829) Յետ առնուն վառնա քաղաքին հրաւիրակս առաքեցաւ Լուլիան Մահմուտ արքայ, և ետ բերել զդեսպանս Պաղլիացւոց և Անգլիացւոց, որք եկին ի Կոստանդնուպոլիս, և նստան ի պալատս իւրեանց յապրիլի 7։

Բայց յաւուրս յայսոսիկ սով մեծ եղեւ ի Կոստանդնուպոլիս հացի՝ և ձիթոյ՝ և իւղոյ՝ և որք ի կարեւորացն սակի խնդն. զի խափանեցաւ երթեւեկութիւն նաւուց բեռնաւորեցոց ցորենով և ալերք։

Վասնորոյ և օր ըստ օրէ պակասեցաւ և սպառեցաւ հանապազօրեայ ցորեան՝ և գարի՝ և ալիւր, որք տուեալք լինէին յարքունուստ ի փուռունս հացագործաց։

Եւ քանամեայ փտեալ կորեակ եղեւ նիւթ հացի, և այն մոխրախառն՝ հողանման՝ և սեաւ, զոր աղքատք՝ որ լոկ առեւ էին, զմահ տարաժամ համբուրէին։

Եւ այն եւս դառն էր և թանկագին և դժուարագիւտ, մինչ զի հարիւրաւոր անձինք կանգնէին յարաժամ առաջի փուռանց յամենայն աղգաց խառն ի միասին, մինչեւ չտալ անցս անցորդաց, թէպէտ և բիր ի ձեռին գալասք փաշայից ծեծէին և վանէին զնոսին։

Եւ որպէս հացն, նոյնպէս և ամենայն պիտոյք, իւղ և միս, ձէթ և պանիր, ունդ և օճառ, եղեն ծանրագին, և սով և թանկութիւն պաշարեաց զբնակիչս Կոստանդնուպոլսոյ։

Յայս հայեցեալ մեծամեծ նախարարաց տէրութեանն, և բազմիցս ժողով արարեալք՝ չգտին այլ ինչ ճար վասն սովուս, բայց միայն սյս, զի ամենայն օտարականք՝ որք ի տան ամայ հետէ եկեալ էին ի Կոստանդնուպոլիս, գնասցեն ի քաղաքս և ի հայրենիս իւրեանց, ուստի եկեալքն են, և Կոստանդնուպոլսեցիք՝ որք ունին բաւական դրամ ի ձեռին, եւ

Digitized by Google

եալք մեկնեացին որդւովք և ընտանեօք իւրեանց ՚ի Նիկոմիդա, ՚ի Պրուսա, ՚ի Թրակիա, և յայլ մօտաւոր տեղիս։

Ուստի և վճռահատեալ այս որոշումն նոցա, և հաւանեցուցեալ զարքայ առ ՚ի պակասեցուցանել զբնակիչս կոստանդնուպօլսոյ այսու եղանակաւ, զի բաւեսցէ մնացելոցն ցորեան և այլ պիտոյք, որ ինչ դատանին ՚ի չտեմարանս արքունիս, և զեւ հրամանն յարքայէ, և եկն հրովարտակ ՚ի պատրիարքս թռնս Հայոց և Յունաց, և առ Հրեայս, զի մեկնեսցին ՚ի կոստանդնուպօլսոյ կոստանդնուպօլսեցիք, և օտարականք ՚ի հայրենիս իւրեանց։

Իսկ խորախորհուրդ և բազմահանճար պէջճեան ամիրայ զմտաւ ածեալ զայլ ինչ եղանակ գտանելոյ զապրուստ հացի և կերակրոյ, գնաց առ արքայ, և ասէ ցնա. ո՛վ Տ՛եր թագաւոր. յայտ իսկ է տէրութեան ձերում, զի այսչափ բազմութիւն քրիստոնէից դոլով ՚ի քաղաքի յայսմիկ, ոչ իշխեն թըշնամիք թշնամութիւն առնել քաղաքիս, և ոչ եւս ղօրին ՚ի վերայ յարձակիլ, զի մի՛ զնաս ինչ հասուսցեն քրիստոնէից ազգաց, որք բնակեալքն են ՚ի քաղաքի յայսմիկ։

Ա՛րդ եթէ դու զսոսա բարձցես աստի, և ցրուեսցես յայլ ինչ օտար երկիր, բառնաս և զահ և զերկիւղ թշնամեաց և որպէս թէ՝ հրաւէրս կարդաս առ նոսա գալ պատերազմաւ ՚ի վերայ քաղաքիս։

Ա՛հաբեկեալ արքայի ՚ի բանիցս այսոցիկ՝ ասէ ցնա, զի՞րդ և ո՞ստի դատիցի այսչափ բազմութեան հանապազորեայ հաց հաց և պաշէն, և որ այլ ինչ են ՚ի կարեւորացն սակի։

Պատասխանի տայ նմա պէջճան ըստ ութիւն, և ասէ ցնա, արքայ՝ յաւիտեան կաց, հրամանն տուր ամենայնի, զի ով ոք կամիցի, երթիցէ ՚ի մօտակայ քաղաքս և ՚ի գիւղօրէս, և գնեալ զցորեան և զալիւր, բերցէ ՚ի կոստանդնուպօլիս, և վաճառեսցէ այնչափ գնոյ՝ որպէս ինքն կամիցի, և մի՛ տացէ զնաս կամ զայլ ինչ տուրս արքայի, զի չնորհեալ է նոցա այն ամենայն։

Ա՛րդ ընդհերցոյն այս հրամանն ՚ի լուր ամենայն ժողովրդեան, և տեսցես զյաճախութիւն հացի և ամենայն պիտոյից ՚ի քաղաքի յայսմիկ։

Digitized by Google

Համոզեալ արքայի ՚ի բանիցս յայսոցիկ, յետոյ կոչեաց զառաջինն հրամանի իւր, և չնորհեաց ամենեցուն կալ ՚ինալ ՚ի քաղաքի յայսմիկ, և անդէն ընթերցաւ հրովարտակ հրամանաց արքայի, զի ով ոք և կամիցէ, երթիցէ ՚ի մօտակայ քաղաքս և ՚ի գիւղօրէս, որք չուրջ զքաղաքաւս իցեն, և գնեսցեն ալիւր և ցորեան, և այլ ամենայն պիտանիք, զոր ինչ և գտանիցեն, և բերցեն ՚ի կոստանդնուպոլիս, և վաճառեսցեն ըստ կամաց իւրեանց, և մի՛ տացեն զմաքս, կամ զայլ ինչ սահմանեալ տուրս արքայի, զի ՚ի չնորհեալ է յարքայէ։

Իբրեւ տարածեցաւ այս հրամանն ՚ի լսելիս ամենայն ժողովրդեան, բազումք ՚ի բնակչաց քաղաքիս, ՚ի Տաճկաց՝ ՚ի Հայոց՝ և ՚ի Յունաց, նաւեցին ՚ի Ծովեզերս Պոնտոսի մինչեւ ՚ի Սամսոն և ՚ի Տրապիզոն, և ոմանք ՚ի Պրուսա, և ՚ի գիւղըէս Նիկոմիդեայ, և այլք ՚ի Թրակիա, և ՚ի Կոնդրիանուպոլիս, և ՚ի մէջ քսան աւուրց սկսաւ վաճառիլ ալիւր և ցորեան ՚ի փոզոյս քաղաքին, և եղեւ առատութիւն հացի և ամենայն պիտոյից, և բարձաւ սով և թանկութիւն ՚ի քաղաքէս։

Եւ գովեաց արքայ զխելս և զուշիմութիւն պէզճեան Յոհաննու ամիրային առաջի ամենայն մեծամեծաց իւրոց և ետ նմա նշան ականակալ կախել ՚ի կուրծս իւր, և զգենուլ զկերպարանս զգեստուց ըստ Տաճկաց։

Յաւուրս յայսոսիկ և արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրային աւարտեաց զշինութիւն մեծի պալատի արքային ՚ի գիւղն Ութաւրզ, և ետ նմա արքայ նշան ականակալ, և փոխեաց եւս զկերպարանս զգեստուց նորա։

Շնորհեաց և արքունի վառօդապետ Սիմէօն ամիրային զնշան ականակալ, և զգենուլ զկերպարանս զօրէն այլազգեաց։

Եւ երեքին այսոքիկ զօրհնաւորազ երթեւեկէին ՚ի պալատն և յանդիման լինէին արքայի, և խօսակցէին ընդ նմա սիրելաբար։

(1829) Ի սմին ժամանակի կառուցին ՚ի Գարակէօմրիւկ կոչեցեալ թաղն զեկեղեցի իմն փոքրիկ և վայելուչ՝ բազմաշխատ վաստակօք Տէր Պաղտասար քահանային Պալատու, ՚ի կատարեցին զօծումն նորա յանուն սրբոյն Յոհաննու Ոսկեբերան հայրապետին ՚ի մայիսի 7։

Digitized by Google

Ցաւուրս յայսոսիկ և գին արքունի հարկին՝ որ էր երե-
սուն և վեց դահեկան ըստ մարդահարթուի, յաւելաւ և եղեւ
քառասուն և ութ դահեկան։

ԳԼՈՒԽ Խ.

Ցազագս քաջութեան Հայոց Բաբերդու, եւ կոտորածի նոցա 'ի Մոս-
կավաց, եւ յաղագս գործոց Տիպիչ սպարապետին 'ի կողմն Ռուսիոյ։

Ինչ բանակն Ռուսաց էանց ընդ գետն Դանուբ 'ի կողմն
Եւրոպիոյ, և եկեալ պաշարեաց զբերդն Իպրայիլ, յաւելաւ և
այլ իմն բանակ եօթանասուն հազար զօրաց 'ի կողմն Ասիոյ,
որոց սպարապետ կարգեցաւ Բասքէվիչ ժէնէրալ այր ոմն
քաջ և մեծախորհուրդ յազգէ Ռուսաց, որք անցեալ ընդ վը-
րաստան, եկին և պաշարեցին զքաղաքն Ախլցխա, և սկսան
պատերազմիլ ընդ նմա։

Իսկ բնակիչքն հաւատարիմ լինելով Օսմանեան Տէրու-
թեան, յոմն կացին ամենեքին մեծ և փոքր, և սկսան 'ի նե-
քաստ քաղաքին անդադար պատերազմիլ ընդ Մոսկովս զա-
ւուրս երեսուն։ Բայց որովհետեւ չեղեւ սոցա օգնականու-
թիւն ինչ արտաքուստ 'ի Դրանէ Օսմանեան տէրութեան, յետ
երեսուն աւուրց առաւ քաղաքն 'ի Մոսկովացւոց, և կոտորեցան
'ի պատերազմին քան և հինգ հազարք 'ի քրիստոնէից, որոց
բազումք էին 'ի կաթոլիկ ժողովրդենէն։

Յետ աւուրց ինչ եկեալ Մոսկովացւոց, առին զկարս, զփօթի,
և զՊայազիտ, և անցեալ ընդ Օղանլը կոչեցեալ լեառն, գնա-
ցին և առին զԹօփրագ Գալէ, զՏիւատին, զՀասան Գալէ, և
զՄուշ, և անտի եկին յԷրզրում, և զնա առին ևս։

Եւ զայս ամենայն քաղաք առանց պատերազմի և առանց
կռուոյ ինչ առնուին, զի բնակիչք քաղաքացւոյ 'ի գալն Մոս-
կովաց անձնատուր լինէին, բանալին զդրունս քաղաքացւոյ, և

Digitized by Google

հրաւիրէին զնոսա, երկուցեալք յահէ կոտորածի նոյա և լը սելով զչարաչար հարուած Ալխդիա քաղաքին։ Յառաջ խաղացեալ Ռուսաց ՚ի կարնոյ՝ եկին ՚ի Բաբերդ, բայց բնակիչք Բաբերդու Տաճիկք, Քուրդք և Հայք, միաբանեալ ընդ միմ եանս՝ ետուն նոցա պատերազմ՝ և ոչ թողին Ռուսաց մնալ նել ՚ի քաղաքս իւրեանց։

Եւ որովհետեւ կորովիք էին սոքա, և վարժք ՚ի ձգել զսուր և զնիզակ, բազում ինասս հասուցին Ռուսաց, և զեօթն անգամ ՚ի պատերազմին յաղթեցին Ռուսաց, և զբազումս ՚ի նոցանէ կոտորեցին, որոց կոտորած անկելոցն ՚ի պատերազմին՝ իբրեւ զլերուր իմն կանգնեցաւ ՚ի դաշտն Բաբերդու։

Տեսեալ Բասքէվիչ սպարապետ, զի չիք այլ ինչ հնար յաղթելոյ սոցա, դարձոյց զկուրն՝ որ անդրանէր յետ կոյս քաղաքին, և արար զդաշտն չրալից իբրեւ զաւազան տանն մատին բարձրութեամբ, և մխեաց յերեսս երկրի բեւեռս սրածայրս հազարաւորս և բազմաթիւս։ Եւ ՚ի վերջին անգամ պատերազմիլ սոցա, կեղծեցին Ռուսք զիսխուստ ինչ դնդ կրունկն, զորոց զկնի և Բաբերդիք անկեալ հալածեցին և վանեցին իբրեւ ժամս երկուս։

Բայց ապա ընդ կրունկն դարձեալ Ռուսք, մինչ սկսան արձակել թնդանօթս ռմբաձիգս ՚ի վերայ Բաբերդցւոց, յայնժամ նոյա փախուստ տուեալք դարձան յետս, այլ տեսին, զի ճանապարհն՝ ընդ որ եկեալն էին յի էր զօրք Ռուսաց, ուստի չեղեցին երթալ ընդ ճանապարհ դաշտին, և եկին ՚ի դաշտն չրալից, հարին զինքեանս ՚ի դաշտն, և որք կոխէինն, մնային անդր, ոչ յառաջ և ոչ զկնի կարէին երթալ։

Զի յառաջ կոյս նոցա էին բեւեռք մխեալք, և ՚ի թիկանց կուսէ այրուձիք Ռուսաց, և այնպէս ՚ի դաշտի անդ կոտորեցան չորք հարիւրք ՚ի փրկաց և հարիւր յիսուն և վեցք ՚ի Հայոց։

Յետ այսր ամենայնի մինչ աճապարեցին անցանել ընդ դաշտն և անկանիլ ՚ի Բաբերդ, զօրքն Ռուսաց որ յետ կոյս քաղաքին էին, եկին առաջի նոցա, և արձակեալ թնդանօթս երկերիւրս ՚ի մէուժ բոպէի՝ կոտորեցին զբազումս, և ապա եկեալ ՚ի Բաբերդ, մինչ անդ եւս սկսան ռումբս արձակել,

Digitized by Google

բնակիչք ամենեքին ծերք և տղայք սկան միաբան գոչել և աղաղակել, և այնպէս մնալ Բասքեվիչ ի Բաբերդ, յաւել եւս կոտորել զկորսվի բնակիչս քաղաքին ի Հայոց և ի Տաճկաց, առնուլ կամեցեալ զվրէժ կոտորածի զօրաց իւրոց, զոր նոքա կոտորեցին։

Իսկ ի Հայոց բնակելոց ի Բաբերդ՝ մեռան ի մրցմունս անդ պատերազմաց հազար մեռոսան անձինք, և ի ֆրդաց և ի Տաճկաց հազար հինգ հարիւր, իսկ ի Ռուսաց աւելի քան զչորս հազար հոգիս։

(1829) Իսկ Տիպիչ Ֆելտ Մարէշալ՝ որ էր ի կողմն Երզրումայ ի քաղաքն վարնա, յառաջ խաղացուցեալ զզօրս իւր ի վեր կոյս, գնաց և էառ զբերդաքաղաքն Սիլիստրէ, Ռուսճուք, և Թուլչա, և Մաչին, և Նիկեբօլի, և Բինեվրէ։ Եւ աներկիւղ համարձակութեամբ անցեալ ընդ կիրճս Պալդան լերանց, էառ զՄիւսեվրէ, զԱհեօլու, զՊուրկազ, զԱյտօս, զԽարնապատ, և զԷլինն, և եկն յԻսլիմեայ, ուր բանակեալ էին Տաճիկք։ Եւ յետ երկուց աւուրց առաքեաց Տիպիչ տեսան ի բանակն Տաճկաց, թէ զինչ կամիք, պատերազմի՞ տայք կնձ զքաղաքդ, թէ առանց պատերազմի։

Անդ էր խալիլ փաշա, որ ապա փեսայացաւ արքային, նա պատասխանի եռս և ասէ, առանց պատերազմի չէ հնար կնձ մատնել ձեզ զքաղաքս զայս, եթէ Սուլթան Մահմուտ կամէր առանց պատերազմի տալ ձեզ զայս ամենայն երկիր, ապա ընդէր առաքեաց զմեզ այսր և զզօրս զայս ամենայն։

Յայնժամ ասէ ցնա գեսպանն, ի վաղիւն պատրաստ լերուք, և տեսանիցէք զնարտ պատերազմին Մոսկովաց. և զայս ասացեալ՝ դարձաւ և գնաց։

Իսկ ի վաղիւն ընդ այգանալ առաւօտուն՝ ի յուլիսի 22, սկսան Ռուսք արձակել ռումբս յայգուէ մինչեւ ցօր հասարակ, և ցրուեցին զբանակն։ Էին ի քաղաքին չորք հարիւր տունք Տաճկաց, և ահա յետ տունջեան՝ արձակեցին Ռուսք զլինն և տան ռումբս ի թաղն Տաճկաց, և հրկէզ արարին ոչնչայն զչորս հարիւր տունս։

Յայնժամ՝ գոռումն և գոչումն սկսաւ լսելի լինել, և աղաղակ ձայնի նոցա հասանէր յերկինս, յորմէ անկաւ ահ և

Digitized by Google

դողուաձ ՚ի բանակ Տաճկաց, և թողեալ զբանակն՝ սկսան փախչել։

Եւ այսպէս առաւ Իսլիմեա ՚ի Ռուսաց, և ՚ի պատերազմի անդ ՚ի նմին աւուր անկան ՚ի Տաճկաց հինգ հազարք ՚ի կըրթեալ զօրաց, և հազարք յԱսիացւոց, (այն է կէօնիւլլիւ)։

Յետ վեց աւուրց յառաջ խաղացեալ Տիպիչ սպարապետ յօգոստոսի 7 յաւուր չորեքշաբաթի եմուտ յԱնդ բիանուպօլիս առանց պատերազմի և նստաւ ՚ի պալատն արքայի, և հրամայեաց զօրաց իւրոց խաղալ յառաջ, որոց գնացեալ՝ առին զՏիմէթօքա, Ֆէրէ, Իբսալա, կիւմիւրճինա և Լինէզ։

Այս ամենայն քաղաքք և գիւղաքաղաքք՝ որք մատնեցան ՚ի ձեռս Ռուսաց, բազումք առանց պատերազմի անձնատուրք եղեն, մի՝ զի դղուեալք էին ՚ի գործոց Տաճկաց, և երկրորդ՝ զի յուսային ընդ հովանեաւ նոցա լաւ եւս ապրիլ՝ ապահովութեամբ կենաց և ընչից, վասնորոյ ընդ առաջ ելեալք Ռուսաց ուրախութեամբ մուծանէին զզօրս նորա ՚ի մէջ քաղաքաց, և անձնամատոյցք լինէին նմա յամենայն ծառայութիւնս, որպէս ականատես եղէ այսմ ամենայնի, զոր պատմեցի այսր սակաւուք։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս գալոյ Ռուսաց ՚ի վերայ Կոստանդնուպօլսոյ քաղաքին, և հաշտութեան նոցա ընդ Օսմանցիս ը դ երկոտասան դաշնադրութեամբք։

Տիպիչ Ֆէլտ Մարէշալ՝ կարգադրեալ զամենայն պատրաստութիւն մեծի բանակի, եհան բանակ ումեսուն հազար զօրաց, յորում էին ութ ժէնէրալք, քսան գնդապետք, չորեքհարիւր լինդանօթք, և ութ հարիւր կիսուն սայլք եղանց և ձիոց, և սպարապետն նոյա կարգեալ զԴրանտին ժէնէրալ յաղթէ Ռուսաց զայր քաջ և հզօր, հրամայեաց նմա յառաջ խաղալ և երթալ մինչեւ ՚ի դուռն կոստանդնուպօլսոյ։

Digitized by Google

Ա. յս բանակ զօրաց եւ յաւուր կիւրակէի յօգոստոսի 20, զոր և ես ինքն իսկ տեսի աչօք իմովք, որ պատմեմս զայս, և հարցի ցհարիւրապետ ցոմն նշանացի, թէ յո՞ երթաք։ Պատասխանի ետ ինձ և ասէ, Բայրեօմ ցոլնոպ։

Իսկ ես ոչ գիտեալով Ռուսերէն, հարցի ցոմն՝ որ տեղեակն էր Ռուսաց լեզուին, և ասեմ, զի՞նչ նշանակէ ասել, Բայրեօմ ցոլնոպ, և նա ասէ ցիս, նշանակէ թէ՝ երթամք ՚ի մայրաքաղաքն։

Յաւաջ խաղացեալ Ռուսաց, հասին ՚ի Զօրլու, և անտի ղունդ մի յառաջընթացս զօրաց՝ որք կոչին Փաղադ, եկին ՚ի Սիլիվրի, յորմէ երկուտասան ժամք ՚ի Կոստանդնուպօլիս։

Համբաւ գալստեան սոցա հասեալ ՚ի Կոստանդնուպօլիս, և սարածեալ ՚ի լսելիս բնակչաց, ահ և դողումն պաշարէ զամենեսին, կրպակք փակին, շուկայք դատարկանան, և ամենայն մարդ փախչի ՚ի տուն իւր, երկեցուցանելով զիմեանս թէ ահա Ռուսք եկեալ են, որպէս թէ մտեալ են ՚ի մէջ քաղաքիս։

Յայնժամ մեծամեծք և նախարարք տէրութեանն և ընթերցողք նոցին ժողովին ՚ի պալատն արքայի, և աղաչեն զնա հաշտութիւն առնել փութանակի ընդ Ռուսաց, ապա թէ ոչ՝ ասեն, կորնչիմք ահաւասիկ, և կործանի թագաւորութիւնս Յունաստան։

Ականջ կամօք յանձն առեալ Յուլիան Մահմուտ արքայ, հաւանի խորհրդոց նոցա, և իսկ և իսկ խորհրդով և նամակագրութեամբ դեսպանաց Դաղղիացւոց և Անգլիացւոց՝ կարգեն զդեսպանն Բրուսիոյ տէրութեան՝ որ նստէրն ՚ի Կոստանդնուպօլիս, երեսփոխան արքայի, և խորհրդականքն մին՝ զոէֆֆտէրտար Սատըդ էֆէնտին, զքէհեա պէյ թահիր էֆէնտին, զԳատրի պէյ Ստանպոլ գատըսին, և զՅմէտճի Նուրի էֆէնտին. որք ՚ի մինչոյն երեսուն և չորից ժամուց հասին յԱնդրիանուպօլիս։

Եւ յանդիման լեալ Տիպիչ Ֆեէլտ Մարէշալ մեծի սպարապետին, ասէ դեսպանն Բրուսիոյ, ես աւասիկ՝ երեսփոխան եմ Յունաստան արքայի, և հրամանաւ և յատուկ գրով նորա՝ և խորհրդով դեսպանաց եւրոպական թագաւորութեանց՝

Digitized by Google

եկի առ մեծանձնութիւն քո խօսել զբան հաշտութեան։

Արդ և տէրութիւն քո փութանակի այժմ հրամայեսցէ՝ ի բանակ զօրացդ, որք գնան՝ ի վերայ կոստանդնուպօլսոյ, զի ուր և իցեն, յամեսցեն անդր. եթէ լսատ կամացդ ձերոյ չլինիցի կատարումն խօսիցս, ազդ արա յայնժամ բանակիդ, և երթեալ պաշարեսցեն զկոստանդնուպօլիս։

Ի լսել զայս Տիպիչ, զառաջինն ոչ կամեցաւ յամեցուցանել զընթացս բանակին, բայց դեսպանն Բրուտիոյ ողջանօք և ախորժալուր խօսակցութեամբ իւրով հանդերձ գՏիպիչ. որ տեսեալ զյատուկ կնքեալ գրութիւն Սուլթան Մահմուտ արքային, որ՝ ի դիմաց իւրոց երեսփոխան կարգէր զդեսպանն Բրուսիոյ, ցուցանելով, եթէ հաճոյ և ընդունելի է ինձ այն ամենայն, զոր կնքէ արժանապատիւ դեսպանս Բրուսիոյ։

Ուստի առաքեաց հրաման առ Գրանդ-վէն սպարապետս բանակին, զի ուր և իցեն, մնասցեն անդր, ոչ յառաջ գարձցին, և ոչ քայլ մի ոտին յառաջ դնասցեն։

Եւ ինքն յետ երից աւուրց սկսաւ խօսել ընդ նմա զպայմանս հաշտութեան, և՝ ի մէջ քան աւուրց վճռահատեալ վերջացուցին զբանն հաշտութեան՝ ի 14 աւուր սեպտեմբերի յերկուտասան դաշնադրութիւնս։

Ա. Վալաքիա և Մօլտավիա ազատ լինին, քաղաքական կառավարք նստցին երկուք, ՝ի կողմանէ Օսմանեան տէրութեան՝ Մօլտօվան պէյք, և՝ ի կողմանէ Ռուսաց՝ դաստուորք Ռուսք, և Մօլտովան պէյք տացեն ամ ըստ ամէ Օսմանեան տէրութեան զքսան հազար քսակ ոսկւոյ։

Բ. Ի կողմն Ասիատիկ Ախալցխա քաղաք և գաւառ նորա մինչեւ՝ ի կարս, և՝ ի Սեաւ Ծով գաւառն կէօնեկի՝ և Ծովքղերեայ բերդաքաղաքք նորա Ասիափա, և Օֆ, և փօթի, և Սպղոր, և Ախալքեղեք, որք վրաստանու աշխարհին են Ծովվերջերք, այսոքիկ լինին ընդ իշխանութեամբ Ռուսաց։

Գ. Օսմանեան տէրութիւնն տացէ Ռուսաց զմետասան հազար մ/լիոն վենետկեան ոսկիս, որոյ չորս հարիւր հազար քրսանն է հին պարտքն հաշուեալ՝ ի Յունգքիրման, և մնացեալն այժմեան պատերազմի ծախքն։

Դ. Նաւք եւրոպական վաճառականաց՝ ի ներսուցէ Մի-

Digitized by Google

չերկրական ծովուն անցեալ՝ երթեւեկեցին ի Փռանսա, և ի կողմանէ Օսմանեան տէրութեան մի զննեցի ի վէզ նոցին։

Ե. Ի պատերազմական նաւուց Եւրոպական տէրութեանց ըստ պահանջելոյ հարկին մի նաւ միայարկ կամ կրկնայարկ, ազատ լիցի մնանել ընդ ներքուստ Դարդանելայ և դալ ի կոստանդնուպոլիս, և յետ ամենօրեայ աւուրց վերադառնալ։

Զ. Նաւատորմիղն Օսմանեան տէրութեան՝ արտաքս քան զներքուստ Փռանսոյ բնաւին մի երթայ, բայց վաճառականաց իւրոց նաւք երթեւեկեցին ուր և կամիցին։

Է. Ուխտ և տան ամիս միջոց տացի հարկատու ազգաց Օսմանեան տէրութեան, որ ոք կամի մնալ ընդ իշխանութեանն նորա ի յերկիր նորա, մնասցէ, և որ կամի երանել յերկիրն նորին, և երթալ ի սահմանս այլոց տէրութեանց, գնասցէ հանդարտապէս. յետ լրանալոյ այսր տասն և ուխտ ամենայն միջոցի՝ ամենայն ոք մնասցէ ի տեղի իւր։

Ը. Ի ժամանակի ապստամբութեան ցունաց՝ Օսմանեան տէրութիւնն զորքսն տունս կամ զատացուածս ցունաց յափշտակեալ գրաւեալ է, զայն ամենայն ըստ ուղիղ հաշուին վճարեսցէ ցունաց։

Թ. Ազատութիւն տացի Հելլենացւոց, որք են ի կղզիս Միջերկրական ծովուն, իբրեւ մասնաւոր տէրութիւն իմն անկախ յումեքէ, և զթագաւոր նոցին ընտրեսցեն և կացուսցեն Եւրոպական թագաւորութիւնք. այլ յայտագս սահմանաց նոցին ոչինչ հաւասարեաւ սահմանեցին անդ։

Ժ. Կղզիք՝ որք ի կողմն Եւրոպիոյ անկանին, տացին Հելլենացւոց տէրութեան, որ նստելոց է ի Մօրա։ Եւ Տաճիկք՝ որք բնակին ի կղզիս յոյնոսիկ, եթէ կամին, երթցեն և գնասցեն յայլ երկիր ընդ իշխանութեամբ Օսմանեանց, իսկ եթէ կամին մնալ անդր, լիցին հարկատու Հելլենական տէրութեան, որպէս ցոյնք հարկատու են Տաճկաց ի կոստանդնուպոլիս։

ԺԱ. Նաւք Հելլենացւոց վաճառականաց տացին միայն զնաւքսն՝ երիք առ հարիւր, և գայց ի մաքսէն զայլ ինչ տուրս մի պահանջեսցին, և դրօշակք նոցին իցեն ի կապուտ պատառ քարշեալք։

Digitized by Google

ԺԲ. Հարկատուք Տաճկաց, որք են Յոյնք, Հայք, Հռոմ-
մէական Հայք, և Հրեայք, ազատ լինին ի պաշտել զի և ինչ
հաւատան, և բռնութիւն հաւատոյ և կրօնի մի լինի ի կողմա-
նէ Օսմանեան տէրութեան, ուստի բռնութեամբ յեղաշրջել
զՔրիստոնեայս ի Մահմետական օրէնս մի երբէք լինի, և Հռոմ-
մէական Հայք ազատ լինին ի պաշտել զհաւատս իւրեանց։

Դեսպանն Ռուսաց ամենայն պատուով և յարգութեամբ
եկեալ նստոյն ի Կոստանդնուպոլիս ի պալատ իւր և զերկո-
տասան գաշնադրութիւնս զոյսոսիկ հոգ տարեալ ի գործ դը-
նել, և ընդ հակառակն՝ եթէ ներհակ գաշնադրութեանցս
այսոցիկ գործողութիւն ինչ արասցէ Օսմանեան տէրութիւնն,
ի նմին աւուր բոլոյն վերստին մարտ պատերազմ։

Յաւուրս յայսոսիկ Իշխան Մէհմէտ վեզիր՝ որ ամբարձ-
եալ էր ի պատիւ վէզիրի ազամութեան, հրամանաւ արքայի
եկն յԱնդրիանուպոլիս, ուրում՝ ընդ առաջ երեալ Տիպիչ՝ մեծա-
պատուով ընկալաւ զինս, և զաւուրս երիս արար խրախու-
թիւնս և հանդէս խնճոյից՝ և զամիս մի մարզասկայարար ըն-
կալաւ զամենայն ազգս բնակեալս ի քաղաքին, ամենեցուն
ըստ իւրեանց աստիճանի և արուեստի պատիւ ցուցեալ և խրն-
ճոյս պատրաստեալ։

Իսկ յետ երեսուն աւուրց հաշտութեանն ի նոյեմբեր 7,
դեսպանք Դաղղիացւոց և Անգլիացւոց զմեծամեծս և զբազ-
մաղան ընծիրս պատրաստեցին արքայի ի կոստանդնուպոլիս
ի պէշիւք տէրէ, և չնորհակալ եղեն զնմանէ, որ հոգացեալ
զօգուտ և զբարին հասարակաց՝ զիջաւ ի հաշտութիւն ընդ
Ռուսս, և վերջացոյց զպատերազմն, և անհնար արար զամե-
նայն չարիսն, որք ունէին ի վերայ հասանել կոստանդնու-
պոլսոյ։

(1830) Եւ յետ երկուց ամսոց յաւելնէրոյդ օր յուն-
վարի եկն դեսպանն Ռուսաց ի կոստանդնուպոլիս։

Իսկ զօրքն Ռուսաց՝ որք եկեալ էին ի Սիլիվրի, յետ քա-
ռասուն աւուրց դարձան յետս, բայց ի Սիլիստրէ՝ որ ի կողմն
Բումելիոյ, և ի կարին՝ ի կողմն Աճառօլուկի, մնացին զօրք
Ռուսաց զամ մի, և յետ այնր թողուն զնոսա եւս, և դնացին։

Իսկ ի չուելն Ռուսաց՝ բազումք եւս ի Հայոց և ի Յունաց՝

Digitized by Google

հանդերձ ընտանեօք իւրեանց գնացին ընդ նոսա, թողեալ զտուն և զայգիս և զանդս իւրեանց, որպէս ՚ի կարնոյ քաղաք յառաջ քան զպատերազմին էին տան հազար տունք Հայոց, իսկ յետ պատերազմին և չուելոյ Ռուսաց մնացին հարիւր տունք, զի հարապետ եպիսկոպոս առաջնորդ նոցա՝ զղուեալ գոլով յանարժան գործոց Տաճկայ և ՚ի բռնութենէ փախչելոյ, յորդորեալ զքաղաքացիսն՝ էառ ընդ իւր, և գնացին ՚ի Ռուսաստան ՚ի Տփխիս, յԱխալցխա, և յայլ քաղաքս Ռուսաց։ Ընդ իւրեանս տարան և զամենայն զարդս եկեղեցեայն Կարնոյ՝ զոսկեղէնս և զարծաթեղէնս, և զպատկերսն եւս, այնպէս արարին և ՚ի քաղաքս Ջնաստոլսի։

Իսկ ՚ի նոյնք ՚ի կողմն Բումելիի առաւել քան զՀայս գնացին և ՚ի Ռուսաստան չուեցին, նոյնպէս և Բաւղարք, թէպէտ յանցանել ժամանակաց բաղումք եւս վերագարձան դարձեալ յերկիր իւրեանց, զոր թողեալք էին, վասն չգտանելոյ ՚ի Ռուսաստան բաւական ապրուստ հացի և զգեստու, և վասն անգործ մնալոյ նոցա անդր։

Ի սմին ամի եղեւ հրդեհ ՚ի Դուլէ գաւառն Բերայի, այրեցաւ և աշտարակն մեծ՝ որ անդ է, և կոչի Ղալաթիա գուլէսի, և յետ ամաց ինչ վերստին չհնեցաւ չքնաղ քան զառաջինն։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Ցաղագս սրոշելոյ Հռովմէական Հայոց ՚ի Հայոց եւ Մեսրապլտի նոցա եւ առաջնորդի։

Իբրեւ սկզբնաւորութիւն եղեւ ՚ի գործ դնելոյ զպայմանս դաշնադրութեան ՚ի կողմանէ Օսմանեան տէրութեան, որպէս յիշատակեցաք ՚ի վեր անդր. դեսպանք Գաղղիայոց և Անգլիացւոց առաջարկեցին արքայի՝ խնդրելով զազատութիւն և զգարձ Հռովմէական Հայոց յաքսորանայ իւրեանց, և տալ նոցա որոշ պատրիարք և եկեղեցի՝ անկախ զպատրիարքէն Հայոց։

Digitized by Google

Ընկալեալ արքայի զինդիր նոցուն՝ հրամայեաց ՚ի դուռն մեծի եպարքոսին, յորմէ առաքեցան հրովարտակք յԱնատոլու և ՚ի Րումելի, ուր աքսորեալք էին Հռովմէական հայք, որպէս զի վերադարձցին ՚ի կոստանդնուպոլիս ՚ի տունս իւրեանց, և աղօթող լիցին վասն կենաց արքային։

Բայց այսու պայմանաւ, զի մի՛ իշխեսցեն յայսմ հետէ երթալ յեկեղեցիս Լատինացւոց, այլ աղօթել յեկեղեցիս իւրեանց, որոց չինուէնան հրամանն եղեւ յարքայէ, զի ուր և իցեն բնակեալք, անդր չինեսցեն եկեղեցի իւրեանց։

Աստանօր արժան համարեցայ դնել ՚ի կարգի պատմութեանս զպատճէն հրովարտակի վերադարձման Հռովմէական հայոց, որպէս զի թերութիւնքն՝ որք ՚ի նմա, բարիոք ծանիցին ՚ի մտաւու ընթերցողաց։

« Գրտվէթ իւ նէվապ իւ միթէչէրին, քիրմաս նայիպի մէվ
» լանա զիյտէ իւմէհու, թէվզըի ըէֆըի հիւմայուն վասըլ օ
» լաճագ մալիւմ օլա քի, Լրմէնի միլէթինուէն պէյօղլուն
» տա տէօրթ եօլ աղզընտա քեայնի պալրգհրյար տէրունին
» տէ թէրզի Ուինաս, վէ Որթաքէօյտէ միւթէմէքին թէրզի
» ցուսէփ նամ զիմմիլեր, միւնաֆի թավրի րայէթ հարաքէ
» թէ ճիւրաաթ իյլէտիքլերի ինհա օլտուղունա մէպնի, պուն
» տան ադտէմ սատը օլան էմրի չէրիֆիմիզ ֆիրմասա նէֆի վէ
» իճլա օլունմուշլար իսէ տէ, մէսֆուրլեր ահվալէ մադուլէսին
» տէն օլարագ, չայէտէ յի մէրհամէթ օլտուղարընա պինա
» էն, վէ ֆիմապատ թավրի րայէթէ միւնաֆի հարաքէթտէ
» պուլունմամագ իւզրէ, մէրհամէթէն աֆ վէ իթլագլերի
» խուսուսունա միւսպատէի սէնիյէյի միւլուքեանէմ երզանի
» դըլընըզ, օլ սլապտէ խաթիթը հիւմայուն մէքեարըմ նու
» մուն փատիշահանէմ մէրհամէթրիդ օլմաղլա, մանթուդ
» միւնիֆի իւզրէ մէրսումլեր աֆ վէ իթլագ օլունմալէրի
» ֆէրմանըմ օլմաղին, իմտի ֆիմապատ տայրէյի րայէթ վէ
» խաթիդամէթտէ սէպաթ էյլէմէլէրի չարիթը իլէ, մէրսումլե
» րին աֆ վէ իթլագլէրին խուսուսինէ միւսապատէյի սէնիյէյի
» չահանէմ զըլընտըլը։

« Ասէն քի նայիպ միւմայիլէյհ սին, մալիւմին օլտուգտա,

Digitized by Google

» չարթի իթլապլերինի կիւշի հիւշլերինե թէֆհիմ վէ թէրքին
» պնրլէ , գայտի նէֆիտէն թախլիյէ սեպիլլերինե միւսաատե-
» րէյի էյլէմէք պապինտե ֆէրմանի ալիշանըմ՝ սատրը օլուն-
» մուշ տուր . պույուրտում վուսուլ պուլտուգտա , պու պապ-
» տե վէչհի մէշրուհ իւղրե չերէֆեաֆթէյի սատրը օլան վա-
» ճիպ իլ իթթիպա վէ լազիմ իլ իմթիսալիմին մէղմունի ի-
» թաաթ մաքրունի իլէ ամիլ օլասըն , չէոյլէ պիլէսին , ալա-
» մէթի չէրիֆիմէ իթիմատ գրլասըն ։

« Թահրիրէն ֆի էվայիլ չէհեր ճամադիլ էվել , աէնե խամ-
» սա , վէ արպային , վէ միէթին , վէ էլֆ » ։

Զայս օրինակ գրեալ էին և ամենայն հրովարտակք , զո-
րոց գրազումս ընթերցայ ես ինքն ։

Իսկ զմայրապետաց աքսորելոց զհրովարտակն վերադարձ-
ման գրեալ էր վէզիրն ՚ի դիմաց իւրոց , որոյ գրութիւն կոչի
Մէքթուպի սամի , զի մայրապետք ոչ թագաւորական հրո-
վարտակաւ աքսորեցան , այլ պատրիարքական թէզքերէյիւ ,
վասն որոյ և նոցա վերադարձման գրութեան՝ բաւական եղեւ
հրամանագիր մեծի եպարգոսին կոչել զնոսա յաքսորանաց ,
որ գրեաց օրինակ զայս ։

« Շէրիաթ մաապ Մահալըճ նայիպլի էֆէնտի զիյտե իլմէ-
» հու , պատ էս սելամ ինձա օլունուր քի , էրմէնի միլլէթին
» տէն մայրապետ թասիր օլունան գարըլարընտան՝ պունտան
» ադտէմ Յէրսաատէթտե մուքիմ էրմէնի պատրիկի մարիֆէ-
» թի իլէ՝ ան պիր նէֆէրի Մահալըճ , վէ օֆթուզ նէֆէրի Պան-
» տրըմայէ՝ պատրիք մէրսում եէտլերինե միւրուր թէզքիրելէ-
» րի իթմասի իլէ տէֆ օլունմուշ խսելեր տէ , էլհալէթիւ
» հազա՝ մէրսումլերին լսլախի նէֆս էյլէտիքլերի պէյանի իլէ՝
» ճեզայի կիւզէշտէլերինի ացի խուսուսի իստիտա օլունմուշ ,
» վէ մէրհամէթէն օլ վէչհ իլէ միւսաատե գրլընմըշ օլմաղըն ,
» սալիֆ իւլ զիքր Մահալըճե տէֆ օլունան ան պիր նէֆէր
» գարըլերին միւրուր թէսկիրելերի իթմասի իլէ՝ Յէրսաատե-
» թէ ավտէթլերի խուսուսունա իրայէթի լուխսէթ ։

« Վ՚է պու վէսիլէ իլէ զինհար սայիր մէմնու օլան քէ-

Digitized by Google

» սանտէն ֆէրտին սալը վէրիմէմէի խուսուսունա տրգդէթ
» էյլէմէք իչիւն մէքթուպ թահրիր վէ իրսայլ օլունմուշ տուր,
» ինչալլահու թաալա վուսուլինտէ պէր վէչհի մուհարրէր
» հարաքէթ վէ տիգգաթ միւպատէրէթ էյլէյհին վէսսելամ»:

Ա յսու հրամանագրով եպարգոսին, դարձան մայրապետք յաքսորանաց իւրեանց:

Իբրեւ այս այսպէս եղեւ, և հետզհետէ սկսան հռովմէական Հայք վերադառնալ ի կոստանդնուպոլիս, եղեւ նոցա ժողով մեծ ի ղալաթիա ի տան Գրիգեան Կրիգորի վան ընտրութեան պատրիարքի իւրեանց:

Բայց էր ի նոսա երկպառակութիւն, զի ոմանք՝ մանաւանդ Աբբայեանք ընտրիճան Ընտօն վարդապետն արժանաւոր դատէին լինել պատրիարք, (որ յառաջ քան զամս չորս ընտրեալ իսկ էր ի Պէզճեան Յարութիւն ամիրայէ լինել փոխանորդ Հայոց, զոր պատմեցաք ի վեր անդր):

Իսկ Դաղատացիք ամենեքին զառաջին կամակոր յամառութեան իւրեանց ի գլուխ հանել կամեցեալք, զմարուշ կոչեցեալ Դաղատացի Պօղոս վարդապետն կամէին. և վասն այսր զմօնսինեօր եպիսկոպոսն լատինացւոց և զմեծաւորս եկեղեցեացց նոցա ի կողմն իւրեանց չահեցեալք, դրեցին գիր աղերսանաց առ պապն Հռովմայ, զի զմարուշ ընտրեսցէ և ձեռնադրեսցէ պատրիարք, և մի ընտրիճան, և թէ՝ ժողովուրդք ամենեքին զմարուշ խնդրէին, և թէ՝ ընտրիճանն կուսակից է Հայոց և չատագով նոցին, և թշնամի եւս Հռովմէական աթոռոյն:

Ա յս ամենայն դրութիւնք հասին ի ձեռս պապին, զոր ընթերցեալ, և վաղուց եւս գիտելով զչարայոյզ մխանս կաղատացւոց, որք վասն ընտրութեան Ընտրիճանին՝ եղեն պատճառք այն ամենայն չարեաց, որք հասին ի վերայ հռովմէական Հայ ժողովրդեան:

Ուստի անարժան դատելով զմարուշ՝ ետ բերել զընտրիճան, և լծեալ յակեղեցի՝ արար հանդէս Մետրապօլտաց և եպիսկոպոսաց, և մատուցեալ պատարագ, ձեռնադրեաց զնոսին պատարագին զընտրիճան Ընտօն վարդապետն՝ Աբրահե-

Digitized by Google

պիսկոպոս և Մեծրոպոլիտ Հռովմէական Հայոց Կոստանդնուպոլսի, և առաքեալ ի Կոստանդնուպոլիս։

Յետ քան՝ ինչ աւուրց գալստեան սորա՝ ազդ արարին դեսպանք ի դուռն արքունի, զի եպիսկոպոսն Հռովմէական Հայոց եկեալ է, և խնդրեմք, զի կոչեալ զնա ի դուռն արքունի՝ կացուսցես զնա պատրիարք Հռովմէական Հայոց։

Եհարց արքայ, Ժէ այդ Նուրիճան հալկատու և ծառայ է ինձ, եթէ ոչ։

Պատասխանի ետուն, եթէ հպատակ է Գերմանական տէրութեան։

Ասէ ցնոսա արքայ, նա՝ որ չէ ինձ հպատակ, զիարդ կարէ լինել գլուխ հպատակաց իմոց, եթէ այդպէս է, ասացէք ինձ. Ժէ միոյ տէրութեան դեսպան է, և ես ըստ արժանեաց պատուեցից զնա և ընկալեայց, որպէս պահանջէ պատիւն դեսպանութեան։

Իսկ եթէ դեսպան չէ, և իմումն տէրութեան հպատակ չէ, և զիարդ մարթի լինել դմա գլուխ և կառավար հպատակաց իմոց։

Եւ ասեն զի օրինօք խօսեցաւ արքայ, ոչ կարացին դեսպանք դիմահօսել նմա։ Ուստի հրամայեաց արքայ Հռովմէական Հայոց, զի ընտրեսցեն ինքեանք զմի ոք ի վարդապետաց իւրեանց՝ որ իցէ հպատակ Օսմանեան տէրութեանն, և աղդ արասցեն ի դուռն արքունի։

Եւ ժողովեալ նոցա՝ ընտրեցին զՅակոբ վարդապետ Մանուէլեան ի միաբանութենէ վենետկի վանիցն, և ծանուցեալ ի դուռն արքունի՝ կոչեցին զՅակոբ վարդապետ, և զգեցոյց եպարքոսն զխիլայ պատրիարքական իշխանութեան, և ետ նմա հրովարտակ, կոչելով զնա, «Յակոբ փիլոքսինոս Դամիոլիկեան»։ Բայց ղպատուէրսն արքայի՝ և զարտօնութիւնս փիլոքսինոսին Հռովմէական Հայոց՝ և զտարեկան տուրս նորա՝ և զիշխանութիւն նորա՝ անպակաս բացայայտել կամեցեալ, լաւ համարեցայ զնոյն պէրաթն Յակոբայ դնել աստ ի կարգի պատմութեանս, զոր ետ արքայ առաջնորդին Հռովմէական Հայոց օրինակ զայս։

Digitized by Google

Տէվլէթի Ալիէֆի տայիմ իւլ գարար, վէ տալթանաթի սէ-
նիէյի սէրմէտիյիւլ իսթիսլարըմըն ճէզիյէ կիւզար լույասըն-
տան օլան Գաթօլիքլէրին պաշկանճա փիսգուպոսլէրի օզնայարագ,
գաստիմոէն քէնտուլէրի Թում վէ էրմէնի բանթրիկէրի՝ թէվա-
պիի թահթի նազարէթլէրինտէն պուլունմուշլար իսէ տէ, Գա-
թօլիքլէրին ուսուլի այինլէրի Թում վէ էրմէնի այինլէրինէ ու-
մումագ ճիհէթի իլէ թէմամճէ իճրայի ային խուսուսիյէթէք պի-
զարուր էֆրէնճ քիլիսալէրինէ ամէտ շուտ իլէ, այինլէրինէ
թէէազուտի Նիքահէ տայիր ումուրու խուսուսպարընը տայիր-
լէրինէ բուէթի իթոիրէթէք, տուշարի սէֆալէթի ու մէշագգէթի
օլտուգլարը պի թահդիյագ մալիումի աչիքտար, վէ մէքտուպլէր
էօթէտէն պէրու գիյրի ուսեէյի փսիսոլոգհանէհոէ պղընմիշ
լույայի տէվլէթի ալէմտէն օլմագ միւլահէսէսի իլէ՝ ֆիմապատ
էֆրէնճ քիլիսալէրինէ կիթմէյուգ, քէնտիլէրինէ թախսիս գը-
լընան քիլիսալէրտէ իճրայի ային էթմէք իւզրէ, օ միսիլլու
սէֆալէթի ու միւշագգէթլէրինաէն թէէլիսլէրիյլէ, պիր գաթ
տախի իսթիհալի րիֆահ ու սոյիշլէրի լագըմէյի զիմմէթի
միլգտարի վիւրիրիյէթի բէրվէրտուտէն խոուսի պէտիյհի վէ պէ-
տիյտար օլմագտէն նաշի, կէրէք Ադիթանէթ սաատէթ սալի-
յէմտէ՝ վէ կէրէք քեաֆֆէի մէմալիքի մահրուսէմտէ քեային
պիլ ճիւմլէ Գաթօլիք մէզհէպինտէն օլանղարընը փիսգուպոսլուգի
չէրէֆֆեաֆֆէի սուսուր օլան խաթթի հիմայիսէն չէվքէթ մագ-
րունի բատիշահանէմ միճէպինճէ, իշպու պին իքի եիւզ դըրգ
ալթը սէնէտ մահի ըճճէպի չէրիֆին իկիրմի պիրինճի կիւնիւնտէ՝ էպէնան ճէսուտէն տէվլէթի Ալիյէմ բույասընտան օրհագ
իւզրէ, քէնտուլէրինին իճթիհատագ ու իհտիեար իյլէսիքլէրի
բաֆֆի թէվգիի րէֆի իւշշանի խոգանի գըսմէլթի միւխթար
իւլ միլլէթ էլ մէսհիյէ ցակոբ վէլէտի Ցանաէլ բահիպ խու-
թումէթ ավագուպէհիւ պիլ խայրէ եիւզ էլլէ պին ագճէ փէշ-
քեշի բէշինէն խաշնէյի ամիրէմ թէսլիմ էյլէմէք, վէ օճուգ
եիւք օճուգ սէքիզ պին ագճէ մալի մուգաթթայի տախի պէ-
հեր սէնէ ճանիպի միղիյէ էտա էյլէմէք չարթի իլէ, իհտաճի
թէվճիհ խոիւզ, պու պէտոթի հիւմայիսէն սաատէթ մագրունի

Digitized by Google

վերտիմ, վե պուլուտում քե, պատել եվմ մերսում ճակոզ բահիպի մերսումներին պեօյիւք վե քիւչիւկի իւզերներինե փխագոփոս պիկիւպ՝ այինղերինե միւխատլիք ումուղներինեն մերսումնե աեօղիւնտեն խեճամուզ վե ախերտեն միւսախել օլունմայա։ Վե ազլիւ նատպե ինւստատոդ օլան բահիպների մերսում այինղերի իւզրե ազլիտիպ եերներին զայրի բահիպե վերտիքսե, ախերի միւսախել Եղեմեյե։

Վե փխագոփոսի մերսումնեն ալդի օլմա ողճա, ազլիւ նատպների խեվեհե օլունմայա։

Վե փխագոփոսի մերսումնեն մարիֆեի իւ իչնի եօղ իքեն՝ սայիր բահիպեր այինղերինե միւխատլիֆ նիքեահ ճայիդ օլմայան քեֆեներե նիքեահ Եղեմեյեներ։

Վե պիր զիմինին ավրեմ եերինատեն գունսա վե եախսո պիր զիմի ավրեմ պուշմալը վե եախսո ալմալը օլսա, ապտալերինե փխագոփոս մերսումնեն վե քիղներինատեն զայրի քիմենե կիրմեյե վե գարըշմայա։

Վե ազտի նիքեահ վե ֆըսխի նիքեահ խուսուսլարընը, վե իքի զիմիի պեչինղերինատ վուգու պուլան տավայի ընպա՝ յի թաաֆեչն իլե մերսում տուչեմ խաեներ, սավա խաենղերին պեչինղերինի իսլահ Եղեմեխանե, վե քիղիատատ այինղերի իւզրե եեմին վերմեյինե, Եղլի եօրդի թայֆեսի թաաֆեչնատն սոսիկ ու թաղլուզ ու խեճերիմ օլունմայա։

Վե մինղեմի մերսումատեն պիլա վարիդ միւսլա օլան բահիպեր վե քեչիչե ավրեմներին խերճքեղերինի փխագոփոս մերսում պիչրի իչինե ախզ ու գոդպ Եղեմեի բատ, պեչիմիւղմայ վե գառատամ ատեմներն վե սայիր Եղլի եօրդի թայֆեսի թաաֆեչնատն միւմանիչեմ օլունմայուպ, վե պունլարընե վե կերեք ավրեմներին վե Գահիդիք օլան սայիր զիմմիղերինն այինղերի իւզրե քիղիատղերի ֆուգարատրնա վե փխագոփոս մերսումե հեր նե վասիչեմ խոեներատ, մադպուղ օլուպ, չեր իլե խոխխա օլունա։

Վե փխագոփոսի մերսում թաաֆեչնատն մայի մուգաֆաղ վե թաաստատիք եեմի իչինե խայիս օլունան բահիպերե միւսաիր վե ուդուր Եղեմեիքերի մահալերատ քիմենե թաաֆեչնատն միւմանիչեմ վե միւսախել իհտիչմեյե։

Digitized by Google

Վ է փիլոսոփոս օրանքն առաջինա՝ վէ սիւվար օղուղին հայվանէ՝ վէ առէմլերէ՝ վէ ճամի՝ վէ քիմիէլերինէ՝ վէ մեր-
սուլուն քէնտի մնայի հատիլ օլան պաղլարի ճահատլինտէն, վէ թասասափ նասիհ վերկիէլտիքլերի շիրա՝ վէ պոզ, վէ
եաղ, վէ սայիր էշիաղերի, խոռհափնէ նազլ էյլէմէլերինէ միւ-
սահսլէ օլունմայա։

Վ է փիլոսոփոսի մերասիմնէն կէնտիսինտէն լիճեմի ճաս-
լահաթէ կէլիւզ կիտէն վէ սայիր խրզմէթինտէ պուլունան
ան նէֆէր առէմլերինտէն ճէղիյէ վէ ավարըզ վէ թէքաւիֆ
միւթալէպէ պուլունմայա։

Վ է պաղի էշիրանըն զուհուր իտէն տավարլերի ախէր ճա-
հալլերուն իսթիհսա օլունմիյուպ, ատղ տասասընտա կէօրիւլէ։

Վ է քիմիասա ֆունտասընտա վապֆ օլան ատղ ու պահճէ
վէ սայիր էմնաքլեր իլէ՝ քիմիասայէ միւթասալլիք էշիա էհ-
միյէլլու, փիլոսոփոս զաաթ վէ թասասրուֆ լիմտիրիլիւպ,
ախէրսէն միւտահսլէ օլունմայա։

Վ է պուննարըն բահիլլերինտէն փիլոսոփոսի մէխսուսնէն
իքնի օլմապ սըզըն մահալլէ վէ մահալլէ կէզիւպ ֆէնաստէ պա-
հիս օլանլեր օլսա իսէ, փիլոսոփոսի մէխսուս մարիֆէթի ի-
լէ մէն օլունա։

Վ է այինլերին ունու բա խասուսլերինէ Բուռ վէ Լրմէնի
պաթրիկլերի վէ թէվասիլէրի խաթոլիքնասան վէ ճանիսարի-
խէզասէն մին էլ վիճուհ քիմէանէ տահիլ վէ թասարրուզ դըլ-
մայա։

Շէյլէ պիլէրէր, ատամէթի չէրիֆէ խթիմաս դըլալէր։
Հարէրէ հին ֆիկր էվմ իլ հասի վէ աշրին միճ չէհրի ըն-
ձեզ իս ֆէրսս։ Սէնէ պիմիթ վէ ատպային վէ միէթիյն վէ էլֆի։

Ցահոզ Զելէլի Տիւզան թասրդմանուց գայա պէրսաթ Ի
Լեզուս Հայերէն աշխարհաբար, ատ՝ Ի դիւրութիւն վերծանո-
ղաց, զոր արժան համարիմ դնել առաջաբան։

« Տէրութեան հարկատու Հռոմէական Հայ եղջիւրուն
» փիլոսոփոսները՝ Բնութեան և Հայոց պատմութեանցն հրա-
» մանին առակը դառնութեամբ առաջօք, Հռոմէական Հայոց

Digitized by Google

» ծէսք՝ ըստնպ և Հայոց ծէսին չի յարմարելոն հանար, ի-
» րենց ծէսերնին չէին կրնար կատարել։

« Անոր համար ականայ Ֆրէնկի եկեղեցի կերթային, ի-
» րենց ծէսը և պատկնին ուրիշներուն կատարել կուտային, և
» ասով շատ խեղճութիւն և նեղութիւն կը քաշէին, ինչպէս
» որ ամենուն յայտնի է։

« Ասոր որովհետև այս Հռովմէական Հայք առաջուցմէ
» սկերի իմ տէրութեանս հովանաւորութեան տակը գտնուե-
» լով և հարկատու ըլլալով, Ֆրէնկի եկեղեցի չերթային հա-
» մար, և իրենց յատկացեալ եկեղեցիին մէջը ծէսերնին կա-
» տարելու համար, և առջի քաշած նեղութենէն և խեղճու-
» թենէն ազատելու համար, և իմ տէրութեանս արդարու-
» թեանը կէօրէ ասոնց հանգստութիւն տալու համար, հա-
» զար երկու հարիւր քառասունը վեց աշնէին՝ ըէճեպի
» քսանը հինգին՝ իրենց հաւնած և ընտրած Պանուէլեան
» ցակոբ վարդապետը փիսկոպոս դրինք բոլոր Հռովմէական
» Հայ ըսուածներուն վրայ, թէ իմ թագաւորանիստ քաղա-
» քիս մէջ գտնուածներն ըլլան, և թէ ուրիշ իմ իշխած տե-
» ղերս գտնուածներն ըլլան հարիւր յիսուն հազար ստակ ա-
» ռաջուց ընծայ տան իմ գանձիս, և երեք միլիոն երեսունը
» ութը հազար ստակ տարեկան տուրք տան։ Եւ այս պայման-
» նաւը այս պէրաթը տուի և հրամայեցի, որ ատկէց ետեւ
» ցակոբ վարդապետը Հռովմէական Հայոց վրայ փիսկոպոս
» ըսուի, և ծէսերուն մէջը անոր իսօքէն դուրս չելլեն Հռով-
Յաղագս մահամերձ բանտարգելութեան Ձանիկ եւ Մագուստ եւ Խնդիր ամիրային, եւ ազատութեան նոցին։ Եւ յաղագս կաթողիկոսութեան տեառն Ցովհաննու։

(1832) Երեւելի էր՛ի սմին ժամանակի ներքին քարտուղար և խորհրդակիցն արքայի՝ Մուստաֆա աղա, այր ազահ և շահասէր, որ եւս չինել նաւս մեծամեծս վաճառականութեան, և տայր բերել յՕտեսայէ ղցորեան, և՛ի վալաքիոյ՝ զոչխար և զկով, և յինքն գրաւեալ՛ի ուերութենէն զբուրդ, զմետաքս, զափիոն, և զիւղ, ժողովէր բռնութեամբ դիւրագնոյ, և վաճառէր եւրոպացի վաճառականաց բազմագնոյ, որովք հարստացաւ յոյժ, և լինելով սիրելի յոյժ յայս ար-

Digitized by Google

քայի՝ լինէր նախագահ և հրամայող ամենայն մեծամեծաց տէրութեանն։

Զսա ոչ կարելով տանել նոցա, զտին ժամ բարեպատեհ, և պատուական արքայի զդործն նորա, և պէսպէս բանաւոր պատճառս՝ ի մէջ բերեալ, կնքեցին զբան իւրեանց առ այս, եթէ այլս այս յաւեր և յաղքատութիւն և՝ ի վերջին անանկուածիւն հասցես զքաղաքիս Ջնատոլուի և Րումելիայի ագահութեամբ իւրով։ Զոր լուեալ արքայ, դժուարեցաւ յոյժ ընդդործն նորա և հրամայեաց հանել զնա՝ ի պալատէ իւրմէ, և ընկենուլ՝ ի պատուհան, և խրատուք խոսրով Մէհմէտ փաշայիւն եռդուղեան փաշայութիւն տուալ նմա, առաքեաց զնա՝ ի Թըրհալա։

Սմա հատուածաւ էր Մագտուտ Յարիմեան՝ և սիրելի յոյժ յաչս նորա, ոյով և արքայի իսկ եղեւ ծանօթ, բայց՝ ի պատճառս նորա ստացաւ զբաղում թշնամիս՝ ի մեծամեծ նախարարաց տէրութեանն, նաեւ յազգէ մերմէ։

Եւ յայսմ ի ժամ բարեպատեհ վարկուցեալ պէզճեանի, որ յոյժ սրտմտեալ էր ընդդէմ Մագտուտայ յաղագս զանց առնելոյ նորա զպատուիրանաւ իւրով չմտանել՝ ի դասս քահանայից՝ ի ժամերգութեան, այնպէս հակացոյց արքայի, որպէս թէ՝ զայն ամենայն չարիս՝ զոր արար Մուստաֆա, ուստացանէր նմա հատուածաւ իւր Մագտուտ հայազգին։

Ուստի և հրամանաւ արքայի կոչեցին զՄագտուտ և զՀօրբերգբարս նորին՝ զձանիկ և զինդիլ, ընդ որոց ունէր ընկերութիւն, և եդին՝ ի բանտի փողերանոցին, և պատուար սոցին կարգեցաւ հրամանաւ արքայի՝ տեսուչ փողերանոցին Նաֆիզ էֆէնտին, այր անգութ և անողորմ, չարասէր և ագահ, որոյ նմանն չէր երբէք երեւեալ՝ ի բազում ժամանակաց հետէ։

Եւ կնքեալ զսենեակ նոցա, տարան՝ ի փողերանոցն զայրկեղս նոցին և զՀաշուեգիրս, և գրեցին զամենայն։

Եւ բազմացաւ չարախօսութիւն թշնամեաց զնոցանէ առ արքայ, և մերձ էր նոցա վտանգ մահու։ Այլ ողորմութեամբն Աստուծոյ և փութմանն վաստակօք Պէզճեան Յարութիւն ամիրայի սիրելւոյ արքային՝ յետ երկոտասան աւուրց բանտարգելութեան իւրեանց աղատեցան և գնացին՝ ի տունս իւրեանց։

Digitized by Google

(1833) Յաւուրս յայսոսիկ եղեւ հրդեհ մեծ ի Կոստանդնուպոլիս, եւ էր՝ ի փիֆէն-քխանայէ առ ընթեր ձիապարիսն, եւ յերկուս բաժանեալ, մի ծայրն գնաց մինչեւ ի Սիւլէյմանիյէ, եւ միւս՝ մինչեւ ի Յուլեան Մէհէմմէտ, եւ ինսաս բազում հասոյց այլազգեաց։

(1833) Ի սին սէր եփրեմ կաթողիկոս՝ կացեալ յաթոռ իւրում զամս քսան երկու, եհաս ի խորին ծերութիւն, եւ անկեալ յուժոյ եւ ի տեսութենէ, եւ կամելին հրաժարեալ յաթոռոյն, հաւանութեամբ բոլոր միաբանութեան Սուրբ Էջմիածնի՝ եւ հաճութեամբ կայսերն Նիկողայոսի՝ ընտրեցին զառաջնորդն Կոստանդնու՝ զՏէր Յովհաննէս եպիսկոպոս Կարնեցի՝ եւ օծին զնա կաթողիկոս ի մարտի 2, 1833։

Իսկ եփրեմ կաթողիկոս առանձնացաւ ի վանսն Հաղբատու, ուր կացեալ զամս հինգ՝ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս։

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս գործոց Պէշճեան Յարութիւն ամիրային, եւ մահուանն նորին։

(1834) Յանսոսիկ աւուրս հիւանդացաւ Պէշճեան Յարութիւն ամիրայ, զորոյ զվեծամեծ գործս եթէ հարկ լինիցէ գովել, կամ ներբողս ինչ յօրինել, լինիցէ մատեան իմն մեծ արտաքոյ կարգի պատմութեանս։

Այլ թողեալ զսա ճարտասանիցս վերոյ, ես ի համառօտն փոխմացեալ՝ որպէս պահանջէ կարգ պատմութեանս, ասասցուք սակաւուք։

Իբր զի էր սա այր քաջուշիմ և մեծախորհուրդ, որ թէպէտ չէր յաւելուածոն զարմէ յառաջ եկեալ, այլ նախապատուիս հանդիսացաւ քան զամենայն ազնուականս, և որք յազ-

Digitized by Google

նուաճման զարմէ էին սերեալք, ՚ի սպաս սորա կարդեցան ծա-
ռայաբար։

Զէր ՚ի հարուստ և ՚ի փարթամ հօրէ ծնեալ, այլ փարթամք
և հարուստք առաջի սորա ՚ի կարգս ալքատուց էին համար-
եալք։

Զէր ճարտար հնարագէտ բնական և ուսումնական ար-
ուեստից, այլ հասեալ և մեծութիւն սորա դերագոյն հան-
դիսացաւ քան զճարտարապետս փիլիպական և քիմիական
արուեստից, և քան զհմտասարժս աշխարհագրութեան և վա-
ճառականութեան սօմարայ։

Իակ որով արդեօք եղեւ սա, ոչ այլով իւիք, բայց երէկ
իւրով մտաւարժ դատողութեամբ, և քաջախորհուրդ խոհե-
մութեամբ, որով զամենայն իրաց զապագայս նկատելով զգու-
շացուցանէր զանձն ՚ի ձախողակի պատահարաց, և յառա-
ջադէմ գտանէր ՚ի յաջող բարեբաղդութիւնս։

Զի սա յառաջին ժամանակս կենաց իւրոց աղքատօրէն
ապրեալ, յետ այնր մտանէ ՚ի պաշտօն ծխւղեան ըովհաննէս
չէլէպիի, և առ կենդանութեամբ նորին սիրելի և հաւատա-
րիմ ցուցեալ նմա զինքն, մտանէ ՚ի պաշտօն գործակալութեան
վաղերանոցին արտաքոյ ՚ի դասէ տոկական պաշտօնէից։

Եւ յետ մահուան նորա նոյնպէս սիրելի և հաւատարիմ
դտաւ Գրիգոր և Յարդիս պայազատացն, որք յաջորդեցին
՚ի տէրի հօր իւրեանց, և սիրէին զՊէչճեան ըարութիւն իբրեւ
իւրեանց եղբայր և ազդակից։

Բայց յետ ամայ լինչ իբրեւ ետես, զի ազդականք նոցին՝
Մկրտիչ չէլէպի, և ըովհաննէս Ալէքսանեան, և Ղևնաւուրեան
Ըոմանի, եւայլն, սկսան վատնել զդանձս արքայի ՚ի փառս
իւրեանց՝ և ՚ի շինութիւն ապարանից՝ և ծուխ զերեալ յարկաց
մեծամեծաց, զդացեալ զապագայ չարին որ ունէր հասանել
՚ի վերայ նոցա յարքունուստ, զդուշացոյց միանգամ և երկիցս
զԳրիգոր չէլէպի, զի մի՛ թոյլ տացէ սոցա առնել ըստ կամաց
իւրեանց չուայլութիւնս ՚ի դանձուց արքայի։

Եւ իբրեւ ետես, զի ոչ ազդեցին բանք իւր ՚ի լսելիս նորա,
լաւ համարեցաւ ելանել ՚ի միջոյ նոցա, և մնալ առանձինն, զի
մի՛ ապա և ինքն զապատիժ պատուհասի կրեացէ ընդ նոսին։

Digitized by Google

Ուստի և տուեալ նմա զհայիւ իւր զամենայն, էառ՝ ի գրիգոր չէլեպիէ զապահովագիր կնքեալ կնքովն վերատեսչի փողերանոցի Ադարահման պէյին, յորում գրեալ էր, «Ելեկ ըստ բուրթիւն մերս գործակալ զայսչափ ամս աշխատեցար՝ ի պաշտաման փողերանոցիս, և յամենայնի հաւատարիմ գտաւ, և այժմ ըստ կամաց իւրոց հրաժարեցար, և չէ խոկ պարտապան և ոչ մի ինչ փոդոյ եթէ մեզ՝ և եթէ դանձուց արքային, յորոյ՝ ի հաստատութիւն զայս մուրհակ կնքեալ տուաք նմա»։

Ուռեալ զայս թուղթ ցարութիւն պէզճեան, գնաց՝ ի տուն իւր յիւսկիւտար, և մնաց անդ։

Եւ յետ միոյ ամի իբրեւ այն սոսկալի և մահաբեր վտանգ կործանման տանն Տիւզճանց՝ պատահեցաւ նոցա՝ ի դիմաց արքային, և ամենայն գործակալք և սպասաւորք Տիւզճանց եդան՝ ի բանտի, և աքսորեցան, պէզճեան ցարութիւն աղաչատ գտաւ յայսմ աղետալի դիպուածոյ՝ իւրով իսկ կանխագուշակ խոհեմութեամբն։

Եւ փոխանակ ընդ նոսին զպատիժ պատուհասի կրելոյ՝ առաջնորդութեամբ Գրիգոր ամիրայի կոչեցաւ՝ ի տեղի նոցին նստիլ հրամանաւ արքային գլուխ և ճարտարապետ մեծի փողերանոցի արքային՝ իբրեւ յամենայնի հաւատարիմ աւանդապահ ամենայն գանձուց տէրութեանն։

Եւ յայնմ օրէ սկսաւ պէզճեան ցարութիւն՝ ի կարգի դնել զպէսպէս պաշտամունս գործակալութեան փողերանոցին, և զամենեցուն նոցա զգործս և զհայիւս ինքն իսկ տեսանել աչօք իւրովք, և ոչ հաւատալ այլոց, զանհաւատարիմս հանել արտաքսել, և կարգել զհաւատարիմս, և ամենեցուն նոցա ըստ արժանւոյն տալ զապրուստ հացի և զդեստու։

Եւ որովհետեւ երեւելի էր յայնժամ Հալէթ էֆէնտի աւագ նախարարն արքայի, և հատաւճառ նորին խէակել Հրեայն, երկոքին եւս արիւնարբու գազանք անողորմք, սա իւրով իսկ ընտանեկան քաղցր կենակցութեամբն և զգօնաժիտ ուշիմութեամբն շահեցաւ զկամս նոցա, և եղեւ նոցա սիրելի մինչեւ յչարաչար սատակումն նոցին գլխատմամբ։ Եւ յետ այնր՝ ի ժամանակի խռովութեան և ապստամբութեան ցունաց՝ մինչ եէնիչէրիք սկսան զՀայս և զՁոյնս սպանանել

կողոպտել՝ աներկիւղ դոլով ՚ի թագաւորէն, և յայնժամ եւս իւրով առաստաձեռն տուչութեամբ չահեցաւ զգլխաւորս նոցին զամենայն, և ոչ եթեր անձին և տան իւրոյ ինչս՝ մինչեւ ցքարձումն նոցին յաշխարհէ։

Եւ յետ սոցա իբրեւ մի զկնի միոյ երեւելիք հանդիսացան սիրելիք արքայի, նախ Հիւսէին Աղա փաշային, և յետ նորա եպարգոսն մեծ Րէշիտ փաշային, և սպարապետն մեծ Խոսրով Մէհմէտ փաշային, և քարտուղարն արքայի Մուստաֆա, զոսա զամենեսին չահեցաւ պէղճեան ճարութիւն որով և իսկ եղանակաւ, և եղեւ սիրելի յոյժ յաչս նոցա, և ոչ եթող նոցա առնել քսութիւն ինչ զինքենէ առ թագաւորն, և անկանիլ ՚ի փորձութիւն։

Այս ամենայն զոր ասացաք համառօտաբար, մեծի խոհեմութեան են գործք արժանիք, զի զժամանակն նկատեր եթէ չար և եթէ բարի, և ըստ այնմ վարէր զընթացս իւր անփորձ դոլով յամենայն պատահարաց և արկածից կենցաղոյս։

Սիրելի եղեւ յոյժ յաչս արքայի, և ընկալաւ ՚ի նմանէ զգ ալեպպէս նշանս ականակապս և մեծագինս, յորոց միկի գերագոյն հանդիսացաւ Սիւրէթի Հիւմայուն կոչեցեալ նշանն, զոր ընկալաւ յետ պատերազմին Ռուսաց, մինչդեռ եգիտ հրնարս վճարելոյ զմեռեսան միլիոն վեհետկեան ռակւոյն զգ պարտսն արքային՝ ՚ի շահուց պղնձախառն արծաթի դրամին։

Եւ յայնմ օրէ հրամայեաց նմա արքայ գտանիլ ՚ի ժողովս արքունի խորհրդականաց տէրութեանն, և նախարարական պատուով հեծանել ՚ի ձի և ՚ի նաւ։

Հրամայեաց նմա և հանապազօր գալ առ ինքն ՚ի գբօսել զարքայ, և տնտեսել զկերակուրս իւր։

Եւ ՚ի միում աւուր ՚ի մէջ րամազանի ամսոյն առեալ չրջեցաւ արքայ ընդ նմա ՚ի շուկայս կոստանդնուպօլսի ՚ի տես այլոց։

Եւ այսպէս գերդաստանն հանդիսացաւ քան զամենայն մեծամեծս տէրութեանն, և սկսան ամենեքին երկիւղիւ խօսիլ ընդ նմա, և մեծ յարդութիւն և պատիւ ցուցանել նմա իբրեւ արքայի։

Իսկ ըստ հոգեւորին ընթացք սորա՝ թէպէտ Աստուծոյ են գիտելի, և խոստովանահօր քահանային, բայց զոր աչօք իսկ

Digitized by Google

տեսանէաք և լսէաք, այս էին, զի առաւտաձեռն էր առաւ-
մնեսին, մանաւանդ առ աղքատս ո և իցէ ազգի։

Սիրէր յոյժ կերակրել զսովեալս, զգեցուցանել զմերկս, ժողովել զօտարս, հանել ՚ի բանտէ զարդիլեալս, աղատել ՚ի մահուանէ զպատժապարտս։

Որովք առաջի դրան տան իւրոյ և ՚ի ճանապարհին բազում՝ նեղեալք և փորձանաւորք անպակաս գտանէին հանապազօր, և զկարօտութիւն իւրեանց ընուին։

Առաւտաձեռն էր և ՚ի չինուխիւն եկեղեցեաց, ամոռոց, վանօրէից, և դպրատանց, զորս մի առ մի թուել երկարին բանքս, և ամենեցուն յայտնի իմն են. բայց ՚ի մէջ ամենեցուն նոցա մեծապանծ հանդիսանայ չինուխիւն Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի ՚ի խումխաւիս, յորոյ չինուխեան ժամանակի ընկալաւ յիշ.քայէ զհրովարտակ իմն, «Ջի գերեզման պէղճեան ցարուխիւն ծառայի խմոյ եղիցի ՚ի մէջ եկեղեցւոյն ՚ի խումխաւիս»։

Եւ այսու հրովարտակաւ ինքնին ետ չինել զդերեզման իւր ՚ի կենդանուխեան իւրում, և պատրաստել զինքն ՚ի թաղումն նորին, որպէս և եղեւ ՚ի մահուան իւրում։

Առաւտաձեռնեաց և ՚ի չինուխիւն սուրբ փրկիչ եկեղեցւոյն հռովմէական Հայոց ՚ի Գալաթիա, բայց ոչ ետես զծնունդն նորին, զի օրհաս մահուն յառաջեաց քան զայն։

Եւ ո՞ թուեսցէ զայնչափ անհամար ծախս քահանայական զգեստուց, և չապկաց դպրութեան, և արծաթի կանթեղաց, և ոսկեզօծ խաչից և աւետարանաց, և ամենայն սպասուց եկեղեցւոյ, զորս յօժարամիտ ոգւով տայր չինել անպակաս, և առաքեր յեկեղեցիս և ՚ի վանորայս։

Առաքեաց և ՚ի սուրբ էջմիածին և ՚ի Սիս՝ զանձն միւռոնոյ արծաթի և ոսկեզօծ, և ընկալաւ ՚ի նոցանէ զաղօթս և զօրհնութիւնս։

Արդ՝ յետ այսր ամենայնի մինչ կամք եղեն Ամենահաստիչ բարձրելոյն զերծուցանել զնա ՚ի բազմավտանգ հոգւոց և արկածից կենցաղոյս, և տալ սմա վայելել զյաւիտենական կեանսն, հիւանդացաւ ջրգողութեան ախտիւ, և չեղեւ ճար և օգուտ ՚ի բժշկաց և ՚ի դեղօրեից։

Digitized by Google

Գնաց ՚ի հիւանդութեան իւրում և ՚ի Պրուսա ՚ի ջերմ բաղանիս, այլ ոչինչ օգտեցին նմա։

Եւ յետ ամենայնի զվախճան կենաց իւրոց ետես ՚ի յօրթաթաղիւղ ՚ի տան Բիշմիշեան պարոն Յովհաննու, ուր գնաց, եւ էր վասն առողջարար գոլոյ օդոյն։

Եւ ծանուցեալ արքայի զմահ սորին՝ ցաւեցաւ յոյժ, և աւաղ կարդաց նմա, և հրամայեաց, զի մեծահանդէս եղիցի թաղումն նորա, և բերեալ զմարմինն առընթեր պալատին արքայի ՚ի նաւահանգիստն, դիցեն անտի ՚ի նաւ, զի զվերջին տեսութիւնն կատարեսցէ արքայ։

Ուստի և ճակոբ չէլէպի Տիւզեան եկեալ, ազդ արար ի խնխանաւորաց ազգիս, և կատարեալ զկարգ թաղմանն, եդին ՚ի դագաղն, յորոյ առաջի գնային Ստեփանոս պատրիարք, և կարապետ և Աստուածատուր եպիսկոպոսունք, և ՚ի վերջոյ քահանիք ոմանք յիշխանաւորաց ազգիս, և տարեալ ՚ի նաւահանգիստն անդ, եդին ՚ի նաւ։ Զոր տեսեալ արքայի ՚ի պատուհանաց պալատին, ողբաց զմահ նորա։

Եւ ո՞ կարիցէ պատմել զանհամար բազմութիւն մարդկան, որք գոտան յայնմ աւուր ՚ի թաղումն նորա, սկսեալ յԵնիգափուէ ՚ի դրանէ տան իւրոյ մինչեւ ցմայր եկեղեցին ՚ի Գումգափու, Հայք, Յոյնք, Ֆրանկք, և Տաճիկք, արք և կանայք, յամենայն ազգաց խուռն բազմութիւն ժողովրդեան, մինչեւ չտալ անցս անցորդաց, և այր զարամբք ելանել։

Եւ մինչ մերձենան յեկեղեցին ՚ի Գումգափու, եկեղեցականք ընտաց զգեստաւորեալք մոմեղինօք՝ ելին ընդ առաջ երգովք աղօթից, և մտին յեկեղեցին։

Եւ անդ որպէս սովորութիւն է ասել, երբայց կարապետ եպիսկոպոս զբերան իւր ասել ճառ ինչ դամբանական ՚ի թաղումն նորա, բայց ոչ կարելով լսելի առնել զձայն իւր բազմամբոխ աղաղակի ժողովրդեան, լուեաց, և սկսան կատարել զկարգ թաղման նորա, և եդին ՚ի դերեզմանի իւրում առընթեր որմոյ Սուրբ Աստուածածնին եկեղեցւոյն ՚ի մատուռն Սուրբ Յարութեան Տեառն մերոյ, զոր նա ինքն ետ շինել ՚ի կենդանութեան իւրում, և ապա արձակեցաւ ամբոխ ժողովրդեան ՚ի տեղիս իւրեանց։

Digitized by Google

Զայս օրինակ մեծահանդէս թաղումն ոչ ոք ՚ի ծերունեաց լուեալ և տեսեալ էր երբէք, և ոչ միւսմն յաղգէ մերմէ պատահեալ ՚ի վաղ ժամանակաց հետէ անտի, մինչեւ արքայի իսկ ՚ի տես բերել մարմնոյ մեռելոյն, և հրամանաւ նորին թաղիլ ՚ի մէջ եկեղեցւոյ, և եկեղեցւոյն ծունանց ընդ առաջ ելանել ՚ի թաղումն նորա երգոց պաշտամանց։

Մինչեւ համառօտիւ կամեցեալ ասել, որպէս միակ և անհամեմատ էր սա ՚ի կենդանութեան իւրում, նոյնպէս և թաղումն նորա եղեւ միակ և աննման այլոց՝ յաղգի մերում։

Իսկ վախճան կենաց սորա կարծեն լինել ումանք ՚ի հակէ եօթանասունն աւուց, բայց յայտ իսկ է, զի անցեալ էր նա զվաթսնամեայ։ և թաղումն նորա եղեւ յամի Տեառն 1834, յերրորդ աւուր յունվարի ՚ի պահս Ծննդեան փրկչին։

ԳԼՈՒԽ Ծ.

Ցաղագս օծման եկեղեցւոյն հռովմէական Հայոց եւ նորոգութեան եկեղեցեաց Հայոց, եւ յաղագս երեւելի դիպուածոց ինչ։

(1834) Յակոբ վարդապետ առաջնորդն հռովմէական Հայոց կացեալ զամս երկու և զամիսս ութ յառաջնորդութեան իւրում, վախճանի, և յաջորդէ նմա ծարութիւն վարդապետ ՚ի միաբանութենէ վենետկի վանիցն ՚ի փետրուարի 3։

Յաւուրս սորա կատարեցաւ շինութիւն սուրբ փրկիչ եկեղեցւոյն հռովմէական Հայոց, զորոյ զհանդէս օծութեանն կատարեցին յամենայնն յուլիսի 14, յորում՝ հրաւիրեցան և իշխանաւորք ազգիս Հայոց, և նուիրճան Աստուած գերապայծառ կոչեցեալ մետրապօլիտ նոցա արար հանդէս մեծ ՚ի նորաշէն եկեղեցւոյն, և մատոյց Պատարագ։

Ի սմին ամի եղեւ նորոգութիւն և բազում եկեղեցեաց Հայոց և ծունանց՝ եթէ ՚ի յԱնատոլու և ՚ի Լուժէլի, և եթէ ՚ի

կոստանդնուպոլիս, և զոմանս եւս նորոգ հիմնադրեալ կա-
ռուցին, յորս ոչ դոյր եկեղեցի։

Իսկ ՚ի կոստանդնուպոլիս եղեւ օծումն նորոգեալ եկե-
ղեցեաց Հայոց ՚ի ձեռն Ստեփանոսի պատրիարքին, որք են
այսքիկ։ Օծումն սուրբ Աստուածածնին եկեղեցւոյն ԵՀնի-
գիւղի ՚ի յունիսի 24։ Օծումն սուրբ Նշան եկեղեցւոյն յԱլէմ-
տաղի ՚ի յուլիսի 29։ Օծումն սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն
Պէյլհօզի ՚ի սեպտեմբերի 16։ Օծումն սուրբ Խաչ եկեղեցւոյն
Խուրուչէշմէյի ՚ի նոյեմբերի 16։ Օծումն սուրբ Լուսաւորիչ
եկեղեցւոյն Ղալաթիու ՚ի դեկտեմբերի 11։

Եւ յայսմ ամենայն ՚ի դեկտեմբերի 21 կոչեցան պատրիար-
քունք Հայոց և ծունաց, և առաջնորդն հոռովմէական Հայոց
՚ի պալատն արքայի, յորում ներկայացեալ էին եպարքոսն մեծ
Բաղուպ փաշային, և մեծ սպարապետն Խոսրով Մէհէմմէտ փա-
շային, և փեսայ արքային Խալիլ փաշա, և այլ եւս վիւղերայք
և մեծամեծք տէրութեանն։

Եւ առաջի աչաց նոցա պարգեւեաց արքայ այսց չորից
ազգապետաց զնշան ականակուռ լինել նշան ազգապետու-
թեան, և զգեցոյց զվերարկու ՚ի պատուական չուխայէ հար-
վանի կոչեցեալ, և առաքեաց չքով ՚ի տեղիս իւրեանց։

Յետ երկուց ամսոց ընկալաւ և բարեւնապետն Հրէից (այն
է խախամպաշին) նշան ականակուռ ազգապետութեան յար-
քունուստ, և դարձաւ ՚ի տեղի իւր։

(1835) Իսկ յետ չորից ամսոյ վախճանեցաւ առաջնորդն
հոռովմէական Հայոց Յարութիւն վարդապետ, կացեալ յա-
ռաջնորդութեան իւրում զամիսս երիք-քառասան, և այն նշանն
ազգապետութեան վերադարձաւ ՚ի դուռն եպարքոսին, և
յետ հնգետասան աւուրց յաջորդեաց Սերովբէ վարդապետ
՚ի միաբանութենէ վենետկի վանիցն, և գնացեալ ՚ի դուռն ե-
պարքոսին՝ ընկալաւ զնշանն, և դարձաւ չքով յառաջնորդա-
րան իւր։

(1835) Յաւուրս յայսոսիկ արքունի ճարտարապետ Յովհան-
նէս աղային ընկալեալ զկրաման յարքայէ, կառոյց զեկեղեցի
իմն փոքրիկ և վայելուչ ՚ի Գուղկունճուք կոչեցեալ գիւղն՝
յանուն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ ՚ի յիշատակ

Digitized by Google

հոգւոյ հանգուցեալ աներոյ իւրում՝ արքունի ճարտարապետ Դրիդոր ամիրային, և փառաւոր օծումն նորա կատարեցաւ ՚ի մայիսի 11, 1835, և եղաւ օր տօնախմբութեան եկեղեցւոյն կատարել ամ յամէ յաւուր տօնի ելիցն ՚ի վիրապէն Սուրբ Լուսաւորչին։

Որովհետեւ գոյ և այլ իմն եկեղեցի Հայոց ՚ի Ղալաթիա յանուն Սուրբ Լուսաւորչին, և տօն նորա կատարի յաւուր տօնի գիւտի նշխարաց Սրբոյ Հօրն։

Յաւուրս յայսոսիկ եղեւ նորոգութիւն և Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն Պալատու, և օծումն նորա կատարեցաւ ՚ի սեպտեմբերի 7։

(1835) Ի սմին ամի եղեւ երկրաշարժութիւն ահագին ՚ի կեսարիա Կապադովկացւոց, որ սկսեալ յառաջնեւրորդ օրէ օգոստոսի՝ տեւեաց զամ մի ողջոյն, և արար վնաս բազումս ՚ի քաղաքին, և առաւել եւս ՚ի գիւղօրէս, յորոց և զերկուան կայոյց իբրեւ անապատ ամայի և անմարդաբնակ, կործանեաց զտունս բազումս, զքարուկիր չինուածս, զմկիթս և զբաղանիս, փլոյց և զորմունս պարտիզի սուրբ կարապետի վանիցն, և զքանի մինչ սենեակս միաբանից։

Եւ յայսմ երկրաշարժութեան մեռան անձինք ՚ի կեսարիա և ՚ի գիւղօրէս նորին ըստ ոմանց ութ հարիւր, և ըստ այլոց հինգ հարիւր, և ըստ պատմելոյ առաջնորդի նորուն տեառն Յակոբայ վարդապետին՝ երեք հարիւր երեսուն ոգիք։

Ի վախճան տարւոյս յամսեանն դեկտեմբերի 20, յաւուր ուրբաթու յանկարծ հնչեաց փոթորիկ իմն բքաբեր՝ ձիւնալից՝ և սաստկաշունչ, և արար զտիւն իբրեւ զդիշեր անտեսանելի, և ալեկոծութիւն մեծ ՚ի ծովու, և վարեաց զնաւս բազումս ՚ի նեղուցէն կոստանդնուպօլսոյ ՚ի ծովն Պրոպոնտոսի, ընդ որս և երկու քորք երկանեան Յարութիւն ամիրայի, և դուստր մի Պետրոս աղայի, և կին ոմն ընկերակից նորուն, և աղջիկ մի յոյն, և այր ոմն սպասաւոր, և երկու նաւավարք ութեքին սոքա նաւակոծեալք անյայտ եղեն մինչ զի և բեկորք նաւուց նոցին չերեւեցան ուրեք երբեք։

(1836) Ի սմին ամի պատահեաց և այսպիսի ինչ դիպուած, որ չէր երբեք լեալ մինչեւ ցարդ, որոյ և սահմանիչ հե-

Digitized by Google

ղինակն վայելէ անդադար զանէծս ի բիւրաւոր մարդկանէ։

Իբր զի արքունի հրամանաւ բերին զմանկունսն յաղգէ մերմէ ի կողմանց կարնոյ՝ և Սեբաստիոյ՝ և այլոց քաղաքաց Անատոլուի, ծառայեցուցանել զնոսա ի Կոստանդնուպոլիս ի յիրլիքխանէն և ի նաւարանն արքայի, ի գործ մանուածոյ կտաւուց առագաստից, և ի ծեծել զհրամայեալ զերկաթ։

Եւ միայն հանդերձ և հաց հրամայեցաւ տալ նոցա առանց թոշակի և ամսականի։

Եւ այս հրաման ամ յամէ նորոգի մինչեւ ցայսօր, և յամենայն քաղաքաց ժողովեն հարիւրաւոր մանկունս հայազգիս զրկելով ի Ծնողաց և ի հայրենեաց նոցա, և երեսնօրեայ ճանապարհ հետեւակ ոտիւք ընթացուցեալք մերկ և պատառատուն զգեստուք՝ բերեն ի Կոստանդնուպոլիս, յորոց բազումք մեռանին խղճութեամբ ի բռնութենէ դործակալաց նոցա, և ոմանք յեղաշրջին ի Մահմետական օրէնս յուսով ազատութեան։

Եւ զայս չար ազէտ բալմատագնապ վտանգիս ոչ ոք յիշխանաւորաց մերոց կարաց ի բաց վտարել յաղգէ իւրմէ, ասէր այլ արասցէ նոցա և մեզ։

Ի սմին ամի եղեւ հրդեհ և ի Ֆիշէնքխանէն խասդուղի, և ի վայրատակմանէ վառօդոյն հրկեզ եղեն հարիւրաւոր անձինք, որք ծառայէին անդր ի պաշտօն արքայի։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Յաղագս հարստանեաց դատերց արքայի, եւ թլփատութեան որդւոց նորին, եւ յաղագս ճանապարհորդութեան արքունի վառօդապետ Յովհաննէս ամիրայի յԵրզրում, եւ վերադարձման նորին։

Յառաջ քան զամս երկուս յամին 1834՝ արար արքայ հարանիս ի Տօլմապաղչէ սարային, և զմայրիհէ կոչեցեալ դուստր իւր ետ ի հնութիւն խալիլ փաշային, որ էր որդի դեր մեծի սպարապետի Խոսրով Մէհէմմէտ փաշային։

Digitized by Google

Եւ զաւուրս հնգետասան տեւեցոյց այս հանդէս հարսանեացն երգոց նուագարանաց՝ և պէս պէս խաղուց, վառելով կանթեղս զդիշերն ողջոյն ի դրունս տանց և առաջի կրպակաց եթէ ի կոստանդնուպոլիս և եթէ ի գիւղօրէս, և արձակէին ի պալատէ արքային և մեծամեծաց՝ և պատերազմական նաւուց զփամփուշտս բազմատեսակս և օդաթռիչս. իսկ ի ցերեկի բազմութիւնք յամենայն աղգաց ժողովէին ի Տօնմապաղչէն, յորում խաղային լարախաղացք Տաճիկք և Եւրոպացիք զանազան զարմանասքանչ խաղուց տեսակօք:

Ընդ այս ոչ չատացեալ արքայի, ի սմին ամի արար հարսանիս ի նմին պալատի Տօնմապաղչէին, և զմիհրիմահ կոչեցեալ դուստր իւր եւս ի կնութիւն Սայիտ փաշային, որ էր իւր վաղեմի սպասաւոր ի պալատն արքայի, և զաւուրս երկոտասան նոյն օրինակ և աւելի եւս հանդէս հարսանեաց կատարեաց ի տես և ի զուարճութիւն սրտի ամենեցուն:

Հրաւիրեաց արքայ ի հարսանիս իւր զդեսպանս ամենայն եւրոպական թագաւորութեանց, և զերեւելի վաճառականս նոցին, և զպատրիարքունս Ցունաց, Հայոց, Հռովմէական Հայոց և զրաբունապետն Հրէից, և զերեւելի հատուածս ի Հայոց և ի հռովմէական Հայոց, և սոցա ամենեցուն յորոշեալ աւուրս պատրաստեաց արքայ սեղան բազմախորտիկ և համադամ, իսկ Հրէից եդ առաջի զսեր և զչաքար և զհաց միայն ըստ խստութեան օրինացն Թալմուտին:

Յետ երկոտասան աւուրց հարսանեաց՝ արար արքայ հանդէս հարսանեաց և ի բեաղատխանէ, և զերկոսին որդիս իւր զԱլպտ իւլ Մէճիտ և զԱլտտ իւլ Ազիզ եւս թլփատել ի հանդիսին ըստ օրինաց իւրոց, ընդ նոսին և զթաղմութիւն որդւոց այլազգ եաց չեւ եւս թլփատելոց՝ եւս բերել անդր ի բեաղատխանէն, և պատրաստեալ նոցա տեղի վրանաձեւ՝ եդ թլփատել զամենայն:

Տեսեալ արքայի զխրախութիւն մանկանց այլազգեաց՝ որք ոչն ցնծութեան կատարէին անհամեմատ բերկրութեամբ, և զզուարճութիւն ծնողաց նոցին և ընտանեաց, ոչ կամեցաւ բարեվարս արքայն, զի մանկունք քրիստոնէից աղգաց հպատակաց իւրոց գտանիցին անմասն և զուրկ ի խրախութենէ յայսմանէ:

Digitized by Google

Ուստի հրամայեաց, զի և մանկունք ծունաց, Հայոց, հրոմվէական Հայոց և Հրէից, որք տակաւին յընթերցանութեան պարապին ի դպրատունս, եկեսցեն հանդերձ վարժապետօք իւրեանց ի հարսանիս արքային։

Եւ առին վարժապետք զմանկունսն և գնացին ի փեսացուատխանէն, և սիրեցան ի ներքոյ վրանաց ի ծաղկալից մարգագետնին, և պատրաստեցաւ նոցա բիլաւ շաքարախառն զրգմով և մեխակաւ, իսկ Հրէից միայն սեր և շաքար։

Եւ իրրեւ օրն ընդմիջէր, հրամայեաց արքայ, և սկսան ելանել ի թափօր եկեղեցական զգեստուք յատուկօղ՝ ծոյնք, և ապա Հայք, և յետ նոցա Հռոմվէականք, և մի ոմն մոյ դասաւորեալք յերկուս դասս, երկու վարդապետք եղեն յառաջընթացք կարգին, և ապա մանկունք, և առաքի նոյնին վարժապետք և խալֆայք, և ելին ի թափօր շուրջ զպալատսն ի տես արքային և ամենայն մեծամեծաց։

Հայք և Հռոմվէականք ունէին յօրինեալ երգս ի բարեմաղթութիւն արքայի, զոր գեղեցկաձայնքն երգէին, և այլք զամէնն կարդային։

Իսկ ծոյնք միահամուռ ամենեքին աղաղակէին առանց երգոց ինչ միայն «ամին», և ունէին ի ձեռին տերեւս դաբնեաց, որ մեռելոցն են զարդարանք, նոյնպէս և Հրէայք միայն զամէն աղաղակէին խառնիխուռն ձայնիւ։

Լուաք ապա ի մերձաւորաց արքային, զի արքայ զուարճայեալ էր ընդ բարեկարգ օրհներգութիւնս Հայոց և Հռոմվէականաց, և խոժոռեալ է ընդ խառն աղաղակ ծունաց և Հրէից։

Եւ յետ աւուրց ինչ ել պարգեւ յարքայէ, և մի ոմն յաւագորեցոյ՝ արքունի դրանն շրջեցաւ ընդ ամենայն դպրատունս ծունաց, և Հայոց և Հռոմվէականաց և Հրէից ի կոստանդնուպօլիս և յիւսկիւտար և յամենայն գիւղօրէս նեղուցին, և ետ ամենեցուն ձեռամբ իւրով զպարգեւսն արքային, մէն մի մանկանց՝ երեք դահեկան, և խալֆայից՝ քսան և հինգ դահեկան, և վարժապետաց յիսուն դահեկան, և գրեալ ղհաշիւ ամենեցուն սոցա՝ տարաւ առ արքայ։

Ընկալաւ և ես պատմագիրս զյիսուն դահեկան ըստ պաշ-

Digitized by Google

տօնի իմաւտ, որ պարապէի ՚ի դասատուութիւն հայկաբանու-
թեան յԱղաքելոյ Վրէժեցւոյ ուսումնարանին ՚ի Ֆէնէր թա-
ղին Կոստանդնուպօլսոյ։

Եւ օրհնեցաք զարգայ և զորդիս նորա և զմեծամեծս տե-
րութեանն, և յօրինեցաք բազմատեսակ երգս բարեմաղթու-
թեանց վասն կենաց արքային։

(1836) Ի սմին ամի արար արքայ և այլ ինն գործ արժա-
նի յիշատակաց, և ընկալաւ յամենեցուն զաղօթս և զօրհնու-
թիւնս։

Իբր զի՝ ետ չինել և կանգնել կամուրջ մեծ ՚ի վերայ ծո-
վու, անցանել ՚ի Կոստանդնուպօլսոյ յՈւնկիաբանի դրանէն ՚ի
Գալաթիոյ Ազապ դափուսի կոչեցեալ դուռն, որ մեծ դիւ-
րութիւն և օգուտ եղեւ հասարակութեան՝ ոչ միայն հետե-
ւակ մարդկան, այլ և հեծելոց՝ և մեծամեծ սայլից եզանց, և
ծնդանօթից կառաց, անցանել դիւրաւ առանց ծախուց ինչ
՚ի Կոստանդնուպօլսոյ ՚ի Գալաթիա, մանաւանդ զի՝ բարձան
այնու հետեւ սոսկալի դիպուածք նաւակոծութեան յայնոսիկ
կողմանս, ուր ՚ի չնչելոյ կատաղի հողմոյ լինէին երբեմն այն-
պիսի աղետալի պատահարք։

Յաւուրս յայսոսիկ պատահեալ հրդեհ մեծ ՚ի Սուլթան
Պայազիտ, որ ոչ սակաւ վնասս հասոյց Հայազգի թիւլլէնա-
ճի կոչեցեալ վաճառականաց, այրելով զկրպակս և զինչս նո-
ցին զամենայն։

(1836) Ի սմին ամի արքունի վառօդապետն Բոմհաննէս՝
որ սիրելին էր արքայի վասն զգօնամիտ և հանճարարուեստ
գիւտից իւրոց, և ունէր զտեղեկութիւն Հայկական և Գաղ-
ղիական լեզուին, և հմուտ և վարժ էր բնական արուեստից
և գիտութեանց, որով՛ք ետ չինել զզանազան գործիս և զմե-
քենայս զարմանալուս ՚ի վառօդարանն արքունի, և հաճոյ և
սիրելի եղեւ յոյժ արքային և մեծամեծաց տէրութեանն, մա-
նաւանդ զի և ինքն գոլով այր հեզ և բարեպաշտ և երկիւ-
ղած Աստուծոյ՝ ընդ ամենեցուն սիրով և քաղցրութեամբ կե-
նակցէր և ընտանենայր, և հաճոյ էր յաչս ամենեցուն։

Սա խնդրեաց յարքայէ, զի յաւուկ հրամանաւ և յանձ-
նարարական թղթով նորին ՀրՀոսցի յԵւրոպիա ՚ի գործարանս

Digitized by Google

բնական արուեստից եւրոպական թագաւորութեանց, պի տե-
ղեկութիւն ստացայ բազմաց հարկաւոր գիտելեաց չուրջ ըղ
նոքօք, և կամ պիերին իւր լցուսցէ ակն յանդիմանն տեսու-
թեամբ և փորձառութեամբ, պի այլ է ընթեռնուլն և տեսա-
կանին միայն հմտանալն, և այլ է վորձով իսկ և զգալի աչօք
ճանաչելն և գիտելն. և զայսոսիկ ուսեալ ապա վերադարձցի
'ի կոստանդնուպօլիս և 'ի կիր արկցէ զնոսին ըստ օրինակի
եւրոպացւոց յօգուտ և 'ի փառս Օսմանեան թագաւորու-
թեան։

Ուրախացեալ արքայ ընդ այս բարեմիտ յօժարութիւն նո-
րին, որ յօգուտ տէրութեանն յանձն առնու ճանապարհ առ-
նել ընդ այսչափ հեռաւոր աշխարհս, զովհաց զբարեխոհ
յառաջադիմութիւն նորին, և եւս նմա նշան ակնակալ ու-
նել յարաժամ 'ի կուրծս իւր, և զիր յանձնարարութեան առ
թագաւորութիւնս Դաղղիացւոց և Անգլիացւոց և առ կայսրն
Աւսթրիոյ, խնդրելով 'ի նոցունց, պի մի ղլասցին 'ի ցուցանե-
լոյ Յովհաննու հաւատարիմ ծառայի իւրում հայկազնոյ զամե-
նայն՝ զոր միանգամ անձկայ տեսանել և հարցանել և զխորհ
առնուլ։

Գնացեալ Յովհաննու վառօդապետի այսպիսի շքով, շըր-
ջեցաւ յիտալիա, 'ի Գաղղիա, և յԱնգլիա, և եւս 'ի նոցա-
նէ պատիւս և ընդունելութիւնս, և ստացեալ բազմատեսակ
ծանօթութիւնս հարկաւոր գիտելեաց բնական սկզբանց և
նիւթոց՝ և որ այլ եւս կարեւորքն էին իւրում իսկ արուեստի
վառօդաշինութեանն, և մեծաւ պատուով վերադարձաւ 'ի
կոստանդնուպօլիս։

Եբեր ընդ իւր և զղանաղան պօմբիս հրաշատուրս 'ի տես
արքայի, ընդ որ ուրախ լեալ արքայ, յաւել զպատիւ և զար-
ժանութիւն նորա։

(1837) Յայսմ յամի Աստուածմխաստ և բազմերախտ Հայր
մեր Գրիգոր վարժապետ փէշտըմալճեան հինգետաց գյուղի
կեանս իւր 'ի հասակի վաթսուն և չորից ամաց. և ձեռագիր
մատեանք նորա՝ որք թանկագին էին վասն հնութեանն, յա-
փըշտակեալ 'ի փափազեան ձանիկ ամիրայէ բռնութեամբ,
ստուեալ մինչև 500 դահեկան։

Digitized by Google

(1838) ի բազում ամաց հետէ ոչ պակասէր ՚ի կոստանդնու-
պօլսոյ և ՚ի շրջակայ գիւղօրէից նորին ժանտամահ հիւանդու-
թիւնն, որ զամս քսան և վեց անընդհատ առնոյր իւր զոհս
հարիւրաւոր և հազարաւոր մանկամարդաց և երիտասարդու-
եաց յամենայն ազգաց, և երբեմն եւս չափահասից և ծե-
րունեաց, և չէր սմա հնար բարձման կամ խափանման, և կամ
դեղ ապաքինութեան. ՚ի ձմերան փոքր ինչ մեղմանայր, և
յամարան սաստկանալով սաստկանայր և յաճախէր: Ուստի նա-
խարարք տէրութեանն խրատեալք յԵւրոպացւոց ազգաց,
համոզեցին զարքայ, և հրամանաւ արքայի ձմերանոցն Ջէն-
կէլ գիւղի եղեւ քառասնապահ զգուշութեան նաւուց եկե-
ղոց ՚ի Պոնտոսէ, և ծոցն Քիւչիւք չէքմէճէի՝ եկեղցն ՚ի մար-
մարայէ. չինեցան և այլ եւս քառասնապահք վասն եկեղոց
յԱխակողմանց և յԵւրոպակողմանց, և ել հրաման ամենայն
ազգաց չթաղել զմեռեալս իւրեանց ՚ի զգուշութիւն ՚ի ժան-
տամահէ, մինչեւ ոչ քննեսցեն կարգեալ բժիշկք զախտ և ըզ
հիւանդութիւն մեռելոյն. և այսու օրինակաւ մեռեալքն ՚ի
նոյն ախտէ առանց յուղարկաւորութեան հանդիսի միով յա-
ռաջընթաց քահանայիւ և չորիւք մեռելաթաղիւք ոմանք
տարեալ թաղէին, և ընտանիք նոցին մնային ՚ի քառասնօրեայ
զգուշութեան անմերձենալի յումեքէ. և սկսաւ մեղմանալ և
պակասիլ ախտն չար և տարափոխիկ ՚ի մայրաքաղաքէս և ան-
հետ լինել յօրէ յայնմանէ մինչեւ ցայսօր:

(1838) ի սմին ամի նորոգեցաւ ՚ի հիմանց սուրբ երրոր-
դութեան եկեղեցին Հայոց ՚ի Պէյօղլու չքնաղ և վայելուչ քա-
րուկիր շինուածով, զորոյ զհանդէս օծութեանն կատարեաց
Յոհաննես պատրիարք ՚ի յունիսի 18 հանդերձ երկու եպիս-
կոպոսօք և եօթն վարդապետօք:

Յայսմ ամի և չորեքտասաներորդ կոյս աղջիկ մի հայազգի
վառվառ անուն Աշխարօփացի յափշտակեալ ՚ի Մահմետակա-
նաց տեղւոյն վասն դեղեցկութեանն, և զրպարտեալ առաջի
դատաւորին Ցաճկաց, եթէ խոստացաւ աղջիկս այս ընդունել
զՄահմետական կրօնս մեր, և յոչ առնուլ նորա յանձն՝ մատ-
նեալ անառանելի չարչարանաց և բանտարգելութեանց վասն
՚ի Քրիստոս հաւատոյն, և հուսկ յետոյ աղերսանօք պատրի-

Digitized by Google

արքին բերեալ ՚ի Կոստանդնուպօլիս, ածաւ յատեան մեծի վէզիրին, և անդ եւս խոստովանեալ զՔրիստոս, աքսորեցաւ ՚ի Պրուսա, բայց յետ վեցից ամաց միջնորդութեամբ Մագսուտ ամիրային ղերծեալ յաքսորականացն ամուսնացաւ ընդ Հայոց ուքեամն ՚ի Խասգիւղ։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Յաղագս չինութեան ձեմարանին Իւսքիւտարու, եւ պատրիարքութեան Յակովբոսի։

(1838) Երեխելի էին ՚ի սմին ժամանակի արքունի ճարտարապետք կարապետ ամիրայ Պալեան և Յովհաննէս քեռայր նորին, երկոքին եւս ազգասէրք և ուսումնասէրք յոյժ, որք ցանկային բարեկարգ յառաջադիմութեան և զարգացման դպրոցաց յուսմունս կարեւորս և պիտանիս և ՚ի գիտութիւնս հաւատոյ և բարւոյ։ Տեսեալ սոցա, զի չունէր ազգս մեր զգիշերօթիկ դպրոց իմն որպէս ունէին Յոյնք և Լատինք, և վասն այն յամէն ընթանայր ուսումն դպրոցաց, և չէր մարթ ՚ի ձեռս բերել զբաղձայուելն յառաջադիմութեան յո՛ և իցէ դպրոցի, թէպէտ գանձք բազումք վատնէին յիւրաքանչիւրս ՚ինոսա և առաւելապէս ՚ի Խասգիւղ և յՕրթագիւղ։

Ուստի խորհուրդ արարեալ ընդ իշխանաւորսն Հայոց և ընդ պատրիարքին, գրեցին և հաճեցուցին զԴաբրիէլ պատրիարք սրբոյն Յակիմայ՝ և զՊօղոս սրբազան վոխանորդ նորին, չնորհել ազգին զվանան երուսաղէմայ՝ որ էր յիւսքիւտար, և նորոգեալ զնա ՚ի հիմանց՝ կանգնեցին դպրոց մի մեծ եռայարկ և բազմասենեակ, և պատրաստեալ զամենայն կարեւոր հանդերձանս և զպիտոյս խոհանոցին և անկողնոցն և որ ՚ի տոցուն սակի, ընտրեցին և զդաստուրս հայկաբանութեան, գաղղիական լեզուի, թուաբանութեան և քանակաբանութեան, և եգեալ զանուն նորին՝ «ձեմարան սուրբ երուսաղէմայ», ո-

Digitized by Google

րոչեցին՝ ի դպրոցայ իւրաքանչիւր թաղից զվարժեալն՝ ի նա-
խակրթական ուսմունս՝ զղայս ուշիմս և մուսվարժս յիմնիւ
չափ, և կարդադրեալ զնոսա զամենեսին յիւրաքանչիւր սեն-
եակս վ զվերակայուս նոցին և զսպասաւորս և զպահապանս,
և զտնօրէն նոցա ամենեցուն, սկիզբն արարին դասատուու-
թեան մանկանց յիննիսլորդ աւուր դեկտեմբերի 1838։

Իսկ վասն եկամտից ճեմարանին՝ որ բաղում ծախուց պէտս
ունէր յիւրաքանչիւր ամենեան, որոշեցին վասն աղքատ ման-
կանց առնուլ՝ ի տարւոջ հարիւր քսան հազար դահեկան՝ ի
սրդոյ աթոռոյն երուսաղէմայ, որ բարեհաճեցաւ վճարել. և
՝ի փարթամ տղայոց երիք հազար դահեկան առ մին մի տը-
ղայ հանդերձ ամարան և ձմերան զդեստուք նոցին։ Այս ե-
կամուտ չէր ինչ հաստատուն և մշտնջենաւոր, զի՝ ի կամս ա-
պաստանեալ էր տուողին. որ եթէ այսօր կամի, տայ, և՝ ի
վաղիւն եթէ չկամի, ոչ տայ, և յայնժամ եկամուտն պակա-
սէ. վասն որ և կեանք ճեմարանին յոյժ կարճ եղեն, որպէս
տեսցի՝ ի ստորեւ։

(1839) *Զայսու ժամանակաւ նորադանդ քարոզիչք Ամե-*
րիկացւոց՝ որք՝ ի վեց ամաց հետէ եկեալ էին՝ ի կոստանդ-
նուպօլիս քարոզել և տարածել զաղանդ իւրեանց՝ պատճա-
ռաւ ուսուցանելոյ մանկանց ձրիաբար զլեզուն Անգլիերէն,
շնչհարհադրութիւն և զթուաբանութիւն, և զայլ ուսմունս
կարեւորս և զպիտանիս, բացին զդիշերօթիկ դպրոցս՝ ի Բե-
րա և՝ ի Պեզիկ դիւղ, և հաւաքեցին՝ ի նոսա աշակերտս բա-
զումս ըստ մեծի մասին՝ ի Հայոց. որոց առ սակաւ սակաւ
գաղտնի հնարիւք խորամանկութեան իւրեանց չամբէնին ըղ-
ձոյն մոլար վարդապետութեան կաթիլ առ կաթիլ, ՝ի փո-
քունց սկսեալ ծխոյ պահոյ և տօնից, հետզհետէ ձեռնար-
կէին և զմասունս ուղղափառ հաւատոյ ատել և տալ յուրա-
ցութիւն. յանդգնեցան և՝ ի գոյափոխութիւն սուրբ Հաղոր-
դութեանն, ՝ի միշտ կուսութիւն Աստուածածնոյն, և՝ ի բա-
րեխօսութիւն սրբոց ամբաւշտել, չնչելով և զպատկերաց նո-
ցին և զնշխարաց մասանցն յարգութիւն։

Լուեալ զայսոսիկ ճարտարապետքն երկոքին կարապետ
և Յովհաննէս, տրտմեցան և զայրացան՝ ի սիրտս իւրեանց, և

Digitized by Google

որովհետեւ այս պաշտօն հոգեւորականաց միայն էր անկ, և ինքեանք աշխարհականք դժուով չէին ձեռնհաս՝ի խափանումն ամբարշտութեան ազանդ ոյս. զի մի՛ ճարակ գոյէ՝ի յաղգին. և տեսանելով զմեզ և զանհոգ բնաւորութիւն մեր՝ փոխանակ պատրիարքին, խորհեցան փոխել զնա. և եւսուն ընթալ գՅակովբոս ապրեպիսկոպոս զառաջնորդն Մարգաւանու և Ղամասիոյ՝ի կոստանդնուպօլիս, և առ ժամն կարգեցին զնա խորհրդական պատրիարքին, և եւսուն՝ի ձեռս նորա գՁեկ ազգային կառավարութեան անօրինել զամենայն ըստ իւրումն խոհականութեան:

(1839) Եւ նա կամելով ահ արկանել և դողացուցանել զամենեսեան, զի մի՛ ոք համարձակեսցի՝ի գոյթոյս նորազանդ իցեն երթալ և յայց ելանել, առանց ինչ քննութեան և հարցման աքսորեաց յանկրաւէ զՅովհայ վարդապետ՝ի վանս Ալմաշու, և զՓիլիպպոս Գօղոս և զՅովհաննէս վարժապետս՝ի կեսարիա, որք անմեղք էին յայսմ մասին ըստ վկայութեան բազմաց. աքսորեաց և զտէր Գէորգ քահանայ Խասգիւղի և զհիւրայուծ Յովհաննէս՝ի Թէքիրտաղ բանտարկութեամբ քսան ամանց. և յաւել նզովել յաստենի եկեղեցւոյ զազանդն իսկ Լուտերի: Բայց յետ չորից աւուրց լուաւ յանդիմանութիւն՝ի Բ. Դրանէն վասն նզովելոյն զազանդն Լուտերականաց, զի դատաստան եկայ այսմ դեսպանն Ընդհանուց Փանչիկ, յորոյ՝ի հնարս և խղօխիւս պատրիարք Յունայ՝ որ նզովեալ էր կնդակաւ իւրով զազանդն Լուտերականաց, ընկերացաւ՝ի պատրիարքութենէն կայսերական հրամանաւ, և նստաւ Ընթիմոս Մեսրոպոլիտն Կիզիկոնի:

Բայց Յակովբոս եպիսկոպոս սկսաւ վաստահաբար զՊատրիարքէն, թէ առ պարզմունութեան իւրոյ խարեալ՝ի Լուտերականաց՝ի կողմն նոցա իցէ մխտեալ. և՝ի ձեռն արքունի ճարտարապետական ընկերոյ զՅովհաննու՝ի պատրիարքութենէն և նստաւ ինքն, իսկ Յովհաննու դնաց յառաջին վիճակ իւր յԱլմաշու վանս:

Հռովմէականք պաղեստինոյ բռնութեամբ գրաւեալ էին զեկեղեցիս Աստուծ՝ի Դամասկոս և՝ի Բերիա, տուեալ կաշառս դատաւորաց և քաղաքապետացն, յոյր՝ վասն և եպիս-

Digitized by Google

կոպոս ումն Ղասրուղ եկն ՚ի Կոստանդնուպօլիս առ Յակովբոս պատրիարք խնդրել ՚ի նմանէ զպայտպանութիւն առ ՚ի դատ ելանել ընդ Հռոմէականաց։ Եւ Յակովբոս պատրիարք առեալ ընդ իւր զԳրոմհանննէս եպիսկոպոս փոխանորդն սուրբ Երուսաղէմի և զՊնթիմոս պատրիարքն Յունաց, գնայր ՚ի դատ ընդ առաջնորդին Հռոմէական Հայոց առաջի Գատարի պէյ դատաւորին Կոստանդնուպօլսոյ։ Եւ անդ յետ բազում վիճաբանութեանց վճռեցաւ յետս դարձուցանել զեկեղեցիս Ղասրուղ առ ինքեանս։

Ցահմանեալ Յակովբոս պատրիարք և վասն ծախուց ճեմարանին զհինգ դահեկան տուրս պահանջել ՚ի միոյ միոյ ՚ի ճանապարհորդաց, որք ունին առնուլ զանցագիր. և գանձարան արկեղ ՚ի պատրիարքարան, հաւաքել անդ զտուրս ՚ի ժողովրդենէն, և անտի հոգալ զպէտս հիւանդանոցին, տնանկ աղքատաց և դպրատանդ, և վասն այլ ինչ դիպուածոց, և կարգեաց հոգաբարձու արկեղն զքսան և չորս անձինս ՚ի զըլխաւոր արուեստաւորաց, յորոց և երկուքն էին ՚ի սեղանաւորաց։

Փոխեցաւ և զառաջնորդն Մշոյ, Կարնոյ, Եբեսատիոյ, Եւդոկիոյ, Պրուսայու, և այլոց վիճակաց առ ՚ի ժողովել զըզտուրս և զրնծայս ՚ի նորոգ վիճակաւորացն։

(1839) Բայց իբրեւ մեռաւ Սուլթան Մահմուտ, և յաջորդեաց որդի նորին Սուլթան Մէճիտ ՚ի գահն արքայական և բարձաւ բռնութիւն և անպարտ մահ և աքսոր ըստ նորոգ սահմանադրութեան և օրինաց արքային, որ ընթերցաւ յապարանն ՚ի Գիւլխանէն ՚ի լուր անհամար բազմութեան ամենայն ազգաց, յայնժամ ժամ բարեպատեհ համարեալ ամիրայիցառնուլ զվրէժխնդրութիւն իւրեանց, գուն գործեցին ՚ի ձեռս Յովհաննու արքեպիսկոպոսի փոխանորդին սուրբ Երուսաղէմ՝ յերկարաձգել զհարիւր հազար դահեկան տարեկան տուրս ճեմարանին, հանին և զթոշակաւոր տղայս բարեկամաց և ծանօթից իւրեանց ՚ի ճեմարանէն, որ չունելով զայլ ինչ եկամուտս, և վասն հանապազօրեայ անհրաժեշտ ծախուցն սկսաւ հեծել ընդ պարտեօք, որ օր քան զօր յաւելոյր և ըստնայր վախման տալ կատարածի դպրոցիս։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԾԳ·

Յաղագս ազգային խռովութեանց, եւ պատրիարքութեան Ստեփաննոսի եւ Աստուածատրոյ, եւ նահատակութեան Յովակիմայ։

(1840) Տեսեալ զայս ամենայն Յակոբոս պատրիարք, եւ լուեալ հանապազօր զհակառակամարտ ընթացս ամիրայից, խորհեցաւ զառաջինն քաղցրութեամբ եւ սիրով շահել զսիրտ նոցին. եւ երիցս հրաւիրանաց նամակս գրեաց առ նոսա գալ Ժողովիլ 'ի պատրիարքարանն, եւ կարգադրել զգործս աղգային, բայց ոչ ընկալան զհրաւէրն, եւ ոչ ոք գնաց առ նա, միայն Աշնանեան Պօղոս երէցկեր 'ի պատրիարքարանն։

Անճարացեալ պատրիարքին, եւ խռովեալ 'ի յոգի իւր ասէ զայրացմամբ «Ընտերունչ անօգնականաց վայելէ հիւանդանոցն, զի՞ կայ իմ եւ զարտաքինան խորհելոյ» եւ փակեալ ըզդուռն սենեկին յորում նստէրն, էջ եւ նստաւ յերիվար իւր, եւ գնաց ուղղակի 'ի հիւանդանոց սուրբ փրկչին, եւ առանձնացաւ անդ։

Խնայեալ զայս ժողովուրդք 'ի վաճառանոցան սկսան իջանել 'ի պատրիարքարանն, եւ հարցուփորձ առնել 'ի սպասաւորացն եւ 'ի քահանայից. եւ բազում զրոյցք լինէին 'ի սրճանոցս եւ 'ի տունս՝ ումն այսպէս եւ ումն այնպէս, եւ օր քան զօր շշուկ եւ աղմուկ ժողովրդեանն սաստկացաւ, մինչեւ եհաս 'ի լսելիս նախարարաց տէրութեանն։

Յետ չորից աւուրց կոչեաց եպարգոսն զերեւելիս 'ի սեզանաւորաց՝ զՃանիկ փափազեան, զՑարուխիւն երկանեան, եւ զՄագսուտ Սարիմեան 'ի բ. դուռն. եհարց զնոսա եւ ասէ. ստոյգ է զոր լսեմք, թէ պատրիարք ձեր կամովին հրաժարեալ 'ի պաշտօնէ իւրմէ առանց հրամանի տէրութեանն, գնացեալ նստի 'ի հիւանդանոցն ձեր։

Ասեն և նոքա, թէ յայսոսիկ աւուրս խեղագարութեան ախտիւ ըմբռնեալ ոչ գիտէ, զոր առնէ։ Եւ ասէ եպարգոսն,

Digitized by Google

չգտանիցի ոք յազգի ձերում այր խոհական և չահեցող, որ տեղակալեսցէ զաթոռ նորա։ Պատասխանեն և նոքա, ի պատրաստի է նախորդ պատրիարքն մեր այր գովելի ըստ ամենայն մասին, զորոյ և զփորձն իսկ առեալ է տէրութիւնն ձեր, և խնդրեմք զնոյն չնորհել մեզ ի բարւոք կարգադրութիւն աղգիս և ի փառս տէրութեանդ։

Յայնժամ արձակեալ զնոսա եպարքոսն յառաջոյ իւրմէ խօսի ընդ աւագանւոյն, և խորհրդով նոցին դրէ առ արքայ և խնդրէ հրամանն վռխել զպատրիարքն Հայոց. և հրամանաւ արքային ընկճեալ զՅակովբոս ի պատրիարքութենէն, դարձեալ ետուն վերստին 1840 զՅետեմնոս ի Նիկոմիդիայ, որում և խորհրդակից կարգեցաւ Պօղոս եպիսկոպոս առաջնորդն Զմիւռնոյ. իսկ Յակովբոս դնաց յառաջին իւր վիճակ առաջնորդութեան Մարզուան և Ամասիա քաղաքաց ՝ի յունուարի 15, 1840։

Զայս տեսեալ հոգաբարձուաց ճեմարանին, հրաւիրեցին զբաղմութիւն ժողովրդեան Հայոց ՝ի ճեմարանն յաւուր Նոր կիւրակէի, և ՝ի ժողովի անդ արար առենաբանութիւն անօրէն ճեմարանին Յակորիկ Մանուէլեան վեհապետ Ճարտարապետին Յովհաննու, յայտ արարեալ զողորմելի վիճակ ճեմարանին, և յորդորեալ զունկնդիրսն ՝ի պաշտպանութիւն նորին. որք միահամուռ ստորագրութեամբ ուխտեցին յառաջացուցանել զճեմարանն անկախ ՝ի կարգադրութենէ ամիրայից։

(1841) Ապատ և յառաջիկայ ուրբաթու ՝ի 13 ապրիլի թօհաֆճէ եղիազար անուն ումն առեալ ընդ իւր զվեշտասան տղայս ճեմարանին՝ մատոյց առ արքայ զդիր ապերանաց, խնդրելով, զի Բ. Դուռն վաւերացուսցէ զպաշտօն քան և չորս հոգաբարձուաց արուեստաւորաց՝ հոգ տանել ծախուց ճեմարանին, և լինել տեսուչ ազգային եկամտից և ծախուցն։ Հրամայեաց արքայ ՝ի Բ. Դուռն տեսանել զդատ սոցին, և դնաց Յովհաննէս եպիսկոպոս վռխանորդն տուրբ երուսաղէմ ՝ի կողմանէ պատրիարքին ՝ի Բ. Դուռն խօսիլ ընդ գլխաւորաց ժողովրդեանն յատենի Արդարութեան ժողովոյն. և Բ. Դուռն խաղաղեցուցանել կամելով գխռովութիւն և զերկպառակութիւն ազգիս, ընդհեաց հրամանագիր (պույրուլդու)

Digitized by Google

քսան և չորս հոգեաբարձուացն լինել տեսուչ ազգային երու-
մտից և արկեղն պատրիարքարանին ։

Բայց որովհետեւ արքունի հրովարտակաւ ոչ էին կար-
գեալք յայս պաշտօն, ոչինչ կարացին առնել, և ոչ զօրեցին
զգեմ ունել ամիրային, որք ծիծաղէին հանապազօր ՚ի վերայ
սոցա ունելով ինքեանց պաշտպան զԲ. Դուռն և զաւագորեարն
արքունի. վասն որոյ և ժողովուրդք յուսահատեալք զայ-
րացեալք յոյժ, ետուն դարձեալ զգիր աղերսանաց առ ար-
քայ մեծաւ բազմութեամբ, աղաղակաւ և պաղատանօք ։

Հրամայեաց արքայ տեսանել զգատ սոցին և Բ. Դուռն
կոչեաց զքսան և չորս հոգեաբարձուն, և խնդրեաց ՚ի նոցա-
նէ զայնոսիկ, որք համարձակեցան բողոքել առ արքայ ա-
ղերսագրով. և ՚ի չքմեղս լինել նոցա ասելով, թէ ոչ գիտեմք,
Էարկ գնոսա ՚ի բանտ ։

Կոչեցան ՚ի Դուռն և եպիսկոպոսունք և ամիրայք, և գը-
նացին Աստուածատուր և Յովհաննէս և Պետրոս եպիսկոպո-
սունք, ընդ որս և ամիրայք, և մտին առ վերատեսուչ արտա-
քին գործոց Իբիֆաթ փաշա ։

Լուր բանտարգելութեան սոցա հասեալ ՚ի վաճառանոցս
քաղաքին, և ահա խաժամուժ ամբոխ իբրու երից հազարաց
լցան խռնեցան ՚ի սրահ արտաքին գործոց վերատեսչին ու-
նելով յատաջոյ իւրեանց զգինեպան Իսկէնտէր զայրն ճար-
տարախօս, և միաբերան աղաղակէին, թէ ոչ կամիմք զպատ-
րիարք մեր, և ոչ ճանաչեմք զսեղանաւորս զայսոսիկ ։

Տեսեալ Իբիֆաթ փաշային զայս մեծ ամբոխ, զահի հարաւ,
և քաղցրութեամբ համոզեալ արձակեաց զժողովն և զբան-
տարկեալ հոգեաբարձուն ։

Իսկ յետ քսան աւուրց կոչեցան յԱրդարութեան տեսչանն
գլխաւորք արհեստաւորաց, և հարցան նոցա խնդիրք, թէ
ո՞վ ետ ձեզ խրատ, կամ որո՞յ խորհրդով յանդգնեցայք կոխել
զԲ. Դուռն երեք հազար սրիկայիւք ։ Իսկ նոքա այլ ընդ այ-
լոյ պատասխանելով ՚ի վերջոյ խոստովանեցան, թէ արդարեւ
մեծ յանդգնութիւն էր առնել, զոր արարաք, բայց յանցեաք
անդրեւութեամբ ։

Ցայնժամ Բ. Դուռն սկսաւ խուզարկել և քննել զգլխա-

Digitized by Google

ւորս նոցին, և աքսորեցան Պօղոս և Յովհաննէս վարդապետք, Յակոբիկ Մանուէլեան, Ոսկերիչ Ընդրեաս, Տիվիթեան Գէորգ, պատմաճի մահտեսի Պետրոս, Յարթաքի Յովհաննէսեան, իսկ գինեպան Իսկէնտէր փախեաւ յՕտեսա, և այլ եւս ոմանք 'ի գլխաւորաց ամբոխին փախուցեալք թագեան յահէ աքսորանացն։

(1841) Եւ 'ի յաջորդ աւուրն հրամանաւ Բ. Դրան ընկեցաւ Ստեփանոս 'ի պատրիարքութենէն, և դնաց 'ի նախկին վիճակ իւր 'ի վանս Աղթամրու, և նստաւ պատրիարք Աստուածատուր եպիսկոպոս կոստանդնուպօլսեցի ընտրութեամբ ամիրայից։

Փակեցաւ և ճեմարանն իբրեւ պատճառ խռովութեան ազգիս, և ցրուեցան տղայք 'ի տունս իւրեանց, և ահա այս էր զոր խնդրէին ամիրայք առնուլ զվրէժ իւրեանց յարքունի ճարտարապետացն։

Բայց յետ երկուց ամաց բողոքեցին արհեստաւորք 'ի դուռն արքունի զամիրայից, եթէ մեք չեմք անհնազանդ տեղութեան հրամանաց և կանոնադրութեանց, բայց և ոչ ըստ րուկք և գերիք սեղանաւորաց. և մինչ Բ. Դուռն օր 'ի յօր յերկարատեւեաց զբողոք և զխնդիր առին 'ի ընորհս ամիրայից, աղաղակ ժողովրդեան ասատկացաւ, և միաբան ընտրեցին մեռանել, քան դառնալ հրամանաց ամիրայից, ընդ որ զահի հարան ամիրայք և Աստուածատուր պատրիարք, և առաքեցին 'ի կոչմանէ իւրեանց զՅովհաննէս վարդապետ Ջաւեան, և զԱրզրումեան սեղանաւորն Արզրումեան, որք գնացեալ 'ի վէզիր խանն, և կոչեցեալ անդ զգլխաւորս արհեստաւորաց, պէս պէս համոզողական խրատուք և աղերսանօք հազիւ հազ կարացին խափանել զչարն և ցածուցանել զբարմունքն մինչ բոխելոցն, խոստացեալ նոցա կատարել զհաճոյս ժողովրդեան և զխնդիր նոցին միաբանութեամբ ազգիս։

Եւ ծանուցեալ 'ի դուռն արքունի զպատճառ աղմկելոյ ժողովրդեանն և զպաղատանս նոցին, արքունի հրովարտակաւ ընտրեցան քսան և եօթն անձինք յարհեստաւորաց լինել տեսուչ և հոգաբարձու ազգային եկամտից և արկեղն պատրիարքարանին և ծախուց նոցին. և առին ստորագրութիւն 'ի

պատրիարքէն և յամիրայից չխառնիլ ընդ կարգադրութիւնս նոյին որով և իսկ եղանակաւ. և այս եղեւ ՚ի 12 դեկտեմբ. թուի 1841 ամին։

Բայց որովհետեւ բազում ծախուց պէտս ունէին ազգային հաստատութիւնք, այսինքն պատրիարքարանն, վարժարանք և դպրոցք, և առաւելապէս հիւանդանոցն, տնանկք, որբ աղջկունք, և պատահական ծախք, և արհեստաւորքն չէին բաւական հայթհայթել զպէտս զայսոսիկ, և ըստ ամենայն բաղձից և տրտունջ ձանձրացուցանէր ղլսելիս նոցին յասելն, եթէ չէիք կարող բառնալ զծանրութիւն ազգիս, ընդէ՞ր առիք յամիրայից, որք դիւրաւ կատարէին զամենայն, գոլով յաջողակք յամենայնի բանիւք և արդեամբք։

Վասն որոյ ձանձրացեալ և նոցա յոյժ յայսպիսի տրտնջանաց, և ոչ գտանելով զայլ ինչ հնար ՚ի դարման աղէտիս, միաբան խորհրդովք գնացեալք առ ձանիկ ամիրայ գլխաւորն սեղանաւորաց, եւսուն զմիւրհակ ստորագրութեանն՝ զոր առեալ էին յամիրայից, և խնդրեցին, զի ինքեանք դարձեալ ՚ի ձեռս առնուցուն զլէկ կառավարութեան ազգիս, և հայթհայթեսցեն զամենայն, որպէս առնէին յառաջն, և ինքեանք հրաժարեսցին յոյս ծանր պաշտօնէն, զոր ոչ կարէին տանել։

Իսկ ձանիկ ամիրայ ոչ ընկալաւ զխնդիր նոցին, և ետ պատասխանի, թէ դուք աղերսանօք և պաղատանօք թախանձեցիք զի. Դուռն, և մեք հրամանաւ Բ. Դրան թողաք ձեզ զայս պաշտօն. ուստի պարտ է ձեզ յայտ առնել զխնդիր ձեր ՚ի Բ. Դուռն, և նա որպէս դիտէ և կամի, տնօրինեսցէ զարժանն։

Ելեալք ասպա հոդաբարձուաց՝ գնացին ՚ի Բ. Դուռն, և մնեալք յատեանն արդարութեան խոստովան եղեն զանբաւականութիւն իւրեանց, և թողեալք զհրովարտակն, խնդրեցին հրաժարիլ ՚ի պաշտամանէն. և հրամանաւ Բ. Դրան եղեւ ժողով ՚ի պատրիարքարանին ամիրայից և գլխաւոր արուեստաւորաց, և պատառեցաւ առաջին կնքեալ թուղթն, յորում էր ստորագրութիւն պատրիարքին և ամիրայից. և վերատեսչութիւն ազգային հոգաբարձութեան և կառավարութեան աւանդեցաւ դարձեալ ՚ի ձեռս ամիրայից։

Digitized by Google

Յաւուրս յայսոսիկ այրեցաւ սպատրիարքարան սրբոյն Գէ-
որգայ եկեղեցւոյն Սամաթիոյ։ Յաւալի եղեւ յոյժ և հրդեհն
Զմիւռնոյ, որ այրեաց գրեթէ ղերբորդ մասն քաղաքին, այ-
րեցան և թաղք Հայոց, և աւերք Սուրբ Ստեփանոս եկեղեցին, և
վարժարանն, և ինչս հրդեհին հաշուեցին 250 հազար քը-
սակք արծաթոյ։

(1842) Ի սմին ամի և երկուս սենեակս ընկերութեան հաս-
տատեաց տէրութիւնն Ի՛գլխաւորս սեղանաւորաց, մին՝ յա-
նուն Ասիական ընկերութեան, և միւսն Եւրոպական։

Ասիակողմանն կարգեցան անդամք Յարութիւն Երկան-
եան, Փիւրքճի խանցի Պետրոս, Միսաք, Ճէզայիրցի Մկրտիչ·
Պաղտասար Զարաֆեան, և Պօղոս Ոշնանեան։

Իսկ Եւրոպակողմանն Ճանիկ, Մադասար, Մահտեսի Յա-
րութիւն Կէլկէլեան, Ա.բրահամ Ալլահվէրտեան, Յովհաննէս
Թընկըրեան, և Յովսեփ Տաւուտեան։

Եւ սոցա պաշտօն յանձնեցաւ զպայմանեալ հարկս և ըզ
տուրս յամենայն գաւառաց տէրութեան վերածել Ի կոս-
տանդնուպոլիս, և աւանդել արքունի գանձուն ըստ ժամա-
նակին, և ամենեցուն սոցա գլուխ կարգեցաւ Յարութիւն Եր-
կանեան, որում և նշան ականակապ չնորհեաց արքայ։

(1843) Ընդ այս ժամանակ Սամաթիայի երիտասարդ ոմն
հայազգի Յովակիմ անուն՝ որ չորս ամօք յառաջ ընկալեալ էր
զՄահմէտական օրէնս, և ապա զղջացեալ և կերպարանափոխ
եղեալ ըստ տարազու Եւրոպացւոց, և գաղտնի խոստովանեալ
քահանայի իւրում չրջէր յանծանօթս, մատնութեամբ ոմանց
կալանաւորեալ մատնեցաւ Ի տանջանս։ Պատրիարքն և ամի-
րայք չհամարձակեցան աղաչաւոր լինել առ Բ. Դուռն, զի
անարգութիւն էր Մահմէտական դենին, և իրատ տային ո-
զորմելի Ցնոզաց բանտարգելոյն երթալ Ի՛աղաչել զդեսպանն
Ռուսիոյ։

Եւ նոցա գնացեալ եւտուն աղերսագիր դեսպանին, որոյ
ընթերցեալ զթուղթն՝ իսկ և իսկ հրամայեաց երթալ առ Լօրդ
Քանինկ դեսպանն Անգլիոյ, և մատուցանել նմա զայն թուղթ։

Ընթերցեալ դեսպանին Անգլիոյ զաղերսագիրն, և տեսեալ
զարտասուաթոր աղաչանս նոցին, առաքեաց զՔիհյան զառա-

Digitized by Google

ջին Թադեոսեան իւր ՚ի Բ. Դուռն առ վեցերորն մեծ Բէուֆ վա-
չա և առ վերատեսուչն արուարձին գործոց, զի ՚ի չնորհս ե-
բեսաց իւրոց ազատութիւն տայի բանտարգեալ երիտասար-
դին այնմիկ։ Գնացեալ Թադեոսեան խօսեցաւ առ վեցերն զը-
խնդիր դեսպանին, և ընկալաւ պատասխանի, թէ յետ եր-
կուց աւուրց ժողով ունի լինել նախարարաց և օրէնագիտաց,
և ՚ի ժողովին յայնմիկ յայտ առնեմ զխնդիր դեսպանի ձե-
ռամ, և հանդերձ ՚ի բանսէ զկալանաւորն առաքեմ առ նա։
Եկեալ Թադեոսեան պատմեաց դեսպանին որպէս լուաւն, և
դեսպանն միսիթարեաց զղորմելի ծնողս բանտարգելոյն համ-
բերել աւուրս երկուս, և տեսանել զորդի իւրեանց առ ինք-
եանս։

Եղեւ ժողովին ՚ի Բ. Դրան, և պատմեաց վեցերն զբարե-
խօսութիւն դեսպանին վասն ուրացեալ կալանաւորին. բայց
դէնպեհան և Րիզա Ալի փաշա և այլ եւս երկուք ՚ի մոլեռանդ-
նախարարաց՝ արհամարհեալք զխնդիր նորա՝ վճռեցին դլխա-
տել զնա ըստ օրինացն Մահմետի. և գլխատեցաւ ողորմելի
երիտասարդն ՚ի Պալըդ բազար դուռն Կոստանդնուպօլսի յետ
բազում յորդորանաց և խոստմանց մեծամեծ պարգեւաց, զի
դարձեալ յանձն առցէ ընդունիլ զմահմետականութիւն. բայց
նա ուրախութեամբ և փառաւորելով զՅիսուս Քրիստոս խո-
նարհեցոյց զգլուխն առաջի դահճին, որ ձգեաց և ընկէց զը-
գլուխն միով հարմամբ, որոյ և ես եղէ իսկ ականատես, և
եղաւ բեղոյրն (չափաղ) ընդ երեսաստանաւ գլխատելոյն ՚ի նա-
խատինս քրիստոնէութեան։

Ընդ այս զայրացեալ դեսպանն Անգլիացւոց՝ ընդ որում
և դեսպանք այլոց տէրութեանց՝ բողոք կալան զայսմ բարբա-
րոսական գործոյ Բ. Դրան, և գրեցին առ կառավարութիւնս
իւրեանց, և թագաւորք եւրոպացւոց համաձայնութեամբ և
խորհրդով միմեանց յետ հնգից ամսոց գրեցին առ Օսմանեան
կառավարութիւնն խստիւ պահանջելով զազատութիւն և զը-
համարձակութիւն կրօնի ամենայն ազգաց. այնպէս զի թէ
ուրացեալ ոք վերստին ստրջացեալ դարձչի յառաջին կրօնս
իւր, մի՛ լիցի նմա բռնութիւն. և եթէ ոք կրօնափոխ լինել
կամիցի, զոր օրինակ քրիստոնեայն կամիցի լինել Մահմետա-

Digitized by Google

կան, և կամ Մահմէտականքն՝ Քրիստոնեայ, մի՛ արգելցի բը-
նաւ, այլ թոյլ տացի ամենայն ումեք պաշտել ըստ կրօն և
ինքն կամիցի։

Առաջարկեցին դեսպանք զայս պահանջումն կառավա-
րութենէն իւրեանց Բ. Դրան, և հրամանաւ արքային եղեւ
ժողով մեծ ի պալատին, ուր կոչեցաւ և դենպետն, և յետ
բազում բանախօսութենէն և խորհրդածութենէն զայս պա-
տասխանի որոշեցին տալ Իւրօպացւոց. Թէ կառավարութիւնս
յօժարութեամբ սրտի ընկալաւ զայդ առաջարկութիւն, բայց
ի գործադրութեան մասին ոչ կարեմք այժմ հրատարակել ի
լուր կրօնամոլ ժողովրդեան մերոյ, այլ խնդրեմք եօթնամեայ
ժամանակ ի հրահանգել և ի համոզել զբիրտ հասարակու-
թիւն մեր առ սակաւ սակաւ. ապա թէ ոչ՝ ազմուկ մեծ ծա-
գի աղէտալի ի վնաս Քրիստոնեայ ազգաց։

Այս մեհ և նահատակութիւն ծուխկիմայ եղեւ սկզբնա-
պատճառ ազատութեան կրօնի. զի որք յառաջն բռնու-
թեամբ ուրացուցանէին և յեղաչրչէին զբազումս ի Մահմէ-
տական կրօնս, զմանս յորդորանօք և խոստմամբ պարգեւաց,
և զմանս ահիւ և սպառնալեօք, տանջանօք և մահացու-
մամբ, այս ամենայն բարձաւ ի միջոյ և խափանեցաւ, և հա-
մարձակ թոյլտուութիւն եղեւ կրօնի ամենայն ազգաց պաշ-
տել զկրօնս իւրեանց, չինել և նորոգել զեկեղեցիս առաւել
վայելուչ և պայծառ քան զառաջինն։ եղաւ զանգակատուն
յեկեղեցիս Հայոց և ծունկս փոխանակ անախորժ ձայնիչ ժա-
մակոչաց. և ազատութիւն տուաւ կրօնափոխութեան ա-
մենայն ազգաց եւս և Մահմէտականաց առանց անարգե-
լոյ և հայհոյելոյ զկրօնս և զհաւատս այլոց, որպէս տեսա-
նեմք այժմ։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԾԴ.

Ցաղագս կաթողիկոսութեան Ներսիսի հինգերորդի, եւ պատրիարքութեան Մատթէոսի.

(1842) Ի սմին ամի վախճանեցաւ կարբեցի ՅՕհաննէս կաթողիկոս սուրբ Էջմիածնի, և ընտրութեան միջոց տուաւ սմին, լինել ժողով ազգային երեսփոխանաց յամենայն կողմանց՝ յաթոռն սուրբ, և բացարձակ առաւելութեամբ քուէից ընտրել կաթողիկոս. և առաքեցան ազդարար նամակք յամենայն կողմանս առաքել զերեսփոխանս իւրեանց յաթոռն սուրբ։

Ընտրեցաւ Պետրոս վարդապետ Կեսարացի առաջնորդն Նիկոպօլսոյ՝ երեսփոխան կոստանդնուպօլսոյ բաժնին ընդ իւրեւ հաշուեալ զամենայն հայաբնակ գաւառս Օսմանեան տէրութեան, ՚ի յաջորդ ամին երթալ գահակիր յաթոռն սուրբ, և տալ զքուէն ՚ի ժողովի անդ։

(1843) Եւ եղեւ ՚ի մայիսի 18, 1843 ժողով ՚ի սուրբ Էջմիածին քառասուն անձանց հոգեւորականաց և աշխարհականաց երեսփոխանաց վասն ընտրութեան կաթողիկոսի. և յետ աղօթից և պաշտամանց եղեւ քուէարկութիւն ՚ի տասարի անդ, և գկնի բացաւ քուէհամարն, և բացարձակ առաւելութեամբ քսան և եօթն ձայնից ընտրեցաւ Տէր Ներսես հինգերորդ Աշտարակեցի առաջնորդն Պէսարապիոյ, Ղրիմու, և նոր Նախիջեւանու՝ այր մեծահամբաւ և խոստախոհ, ուսումնասէր և ազգասէր, և յաջողակ յամենայնի գրով և արդեամբք։

Զայս ընտրութիւն ժողովոյն ընկալեալ փոխարքայն վրաստանու, ծանոյց ՚ի Պետրբուրգ առ վեհափառ կայսրն Ռուսաց Նիկողայոս հաստատել և վաւերացուցանել ըստ բարեհաճութեան կամաց իւրոց։

Եւ նորա հաստատեալ բարձրագոյն հրովարտակաւ զընտ-

Digitized by Google

թութիւն ժողովոյն, հրաւիրեաց զներսէս կաթողիկոս ՚ի պե-
տրբուրգ տալով յարքունուստ զամենայն ծախս ճանապար-
հին. բայց Ներսէս կաթողիկոս յապաղեաց ղերթալ իւր վասն
ձմերան սաստկութեանն պատճառելով զծերութիւն իւր, և
դրեաց առ կայսրն չնորհակալութիւն վասն հրաւիրանացն,
յորում խոստանայր ՚ի յունիսի յաջորդ ամին ելանել ՚ի ճանա-
պարհ և գնալ ՚ի պետրբուրգ, իսկ զձմեռն զայն անցուցանել
՚ի փիշնեւ։

Յաւուրս յայսոսիկ եղեւ ժողով ամիրայից ՚ի կոստանդնու-
պոլիս ՚ի պատրիարքարանին նախագահութեամբ երկանեան
Յարութիւն ամիրայի, որ զամենայն անկարգութիւնս ազգա-
յին գործոց թէ ըստ հոգեւորին և թէ ըստ մարմնաւորին
շարակարգեալ և պատմեալ, եցոյց ամենեցուն բարեպաշտ
պատճառ զնստուածատուր պատրիարք, և զանխոհեմութիւն
նորա և զղայրացկատ բնաւորութիւն նորա և զանվայել խօսս
՚ի քարոզի և ՚ի խօսակցութեան։

Եւ նոքա համոզեալք ՚ի չնորհս երեսաց նորին, երկու-
քեան ՚ի նոյանէ մտին ՚ի սենեակ պատրիարքին. և յետ քանի մի
քաղաքավարական բանից խնդրեցին ՚ի դիմաց ժողովոյն զներ-
սաժարական նորին ՚ի պատրիարքութենէն. և նա յառաչանաւ
իսկ գիտակ գոլով խորհրդոյ նոցա. և զղուեալ ՚ի ցաւալի
երկպառակութենէ ազգիս, եւս կոչել իսկ և իսկ զգրագիրն.
և տուեալ նմա դրել զհրաժարական իւր պատճառելով զան-
ձինն տկարութիւն և ղորդին անհամբերութիւն, ստորագրե-
եաց և կնքեաց։ Ապա առեալք զհրաժարականն, տարան առ
ժողովն, և նոքա առաքեցին ՚ի Բ. Դուռն ՚ի ձեռն գործա-
կատարի պատրիարքին. և ինքեանք գնայեալք առ արտա-
քին գործոց նախարարն խնդրեցին զգործադրութիւն հրա-
ժարականին։

Յետ երից աւուրց եկն հրաման ՚ի Բ. Դրանէն. յորում
գրեալն էր հրաժարել պատրիարքին յապագս անբաւական լի-
նելոյ իւրոյ այնմ՝ պաշտաման. և հրամայեր ընտրութեամբ
վեցեակ ժողովոյ Հայոց (այիքը ճէմաաէթ ինմիխապի իլէ) որո-
շել զումն յեպիսկոպոսաց արժանաւոր պատրիարքական պաշ-
տաման, և ՚ի նմին աւուր ժողով արարեալ ամիրայից ՚ի պատ-

Digitized by Google

ըհար քարանն, ընտրեցին զՄատթէոս եպիսկոպոս կոստան-
դնուպօլսեցի առաջնորդն Զմիւռնոյ՝ այր ազգասէր և ուսում-
նասէր, բայց միանգամայն փառասէր և նախանձոտ ընդ փառս
այլոց, և հաստատ յառաջադրութիւն մնաց իւրոց, զոր ոչ
կամէր փոխել, թէեւ լինէր ինքեան այն ինչ մեծ ։

(1844) Զայս ընտրութիւն ծանուցեալ 'ի Բ. Դուռն, առա-
քեցին և ածին 'ի Զմիւռնոյ զՄատթէոս եպիսկոպոս 'ի պատ-
րիարքարանն, որ դնացեալ 'ի Բ. Դուռն ընկերակցութեամբ
վեց վարդապետաց և վեց պատուաւոր անձանց, յառաջոյ նո-
րա քան քահանայք, և յետոստ նորա բազմութիւն ժողո-
վրդեան, ներկայացաւ արտաքին գործոց նախարարին, ար-
դարութեան Բ. առեներն, և մեծի եպարգոսին. և ընկալեալ
զնշան պատրիարքական իշխանութեան, դարձ արար մեծա-
հանդէս չքով 'ի Մայր եկեղեցին, ուր համառօտ և գեղեցիկ
առենաբանութեամբ արար բարեմաղթութիւնն արքային, և
աղօթս վասն միաբանութեան ազգիս, և օրհնեալ ժողո-
վուրդն գնաց 'ի պատրիարքարանն ։

Յետ աւուրց ինչ ՏԷր եղիա կաթողիկոսն Աղուոյ՝ որ յա-
ղագս կարեւոր գործոց ազգին իւրոյ դեգերէր յայնժամ 'ի
կոստանդնուպօլիս, եկն յայցելութիւն և 'ի շնորհաւորութիւն
առ Մատթէոս պատրիարք, որ յետ կարեւոր բանակցու-
թեանց և հարցաքննութեանց հրամայեաց նմա Մատթէոս
պատրիարք մատուցանել պատարագ 'ի սուրբ երրորդութեան
եկեղեցւոջն Հայոց որ 'ի Բերա, ըստ արարողութեան Հայաս-
տանեայց եկեղեցւոյ, յոյր վասն յատկացոյց նմա անդ և մա-
տուռ մի վասն պատարագելոյ երբ և կամեցի, և նորա մե-
ծաւ շնորհակալութեամբ ընկալեալ զբրիատոնավայել եղբայր-
սիրութիւն նորա և զարտօնութիւն, զի չէր յայնժամ եկեղե-
ցի Աղուոյ 'ի կոստանդնուպօլիս և 'ի Բերա ։

Յառաջիկայ կիւրակէին մատոյց անդ պատարագ և յի-
շատակաց ղՏէր Ներսէս ընդհանրական կաթողիկոսն ամե-
նայն Հայոց և զծայրագոյն պատրիարքն Աղուանեան Մայր
Աթոռոյն, որոյ յիշատակութիւնն չէր տակաւին սկսեալ յե-
կեղեցիս Հայոց. զի յաւուրց անտի պատերազմին՝ որ եղեն
'ի 1828 ամին ընդդէմ Ռուսաց, բարձեալ էր յիշատակութիւն

Digitized by Google

կաթողիկոսին Էջմիածնի յեկեղեցեաց Հայոց հրամանաւ Բ. Դրան, և երթեւեկութիւն նուիրակաց դադարեալ։

Հասեալ այս ամենայն յականջս սրբազան կաթողիկոսին Ներսիսի, դովեաց յոյժ ղխոհականութիւն Մատթէոս պատրիարքին, և առաքեաց կոնդակ օրհնութեան 'ի Քիշնովայ, որ ընթերցաւ 'ի Մայր եկեղեցւոջ պատրիարքարանին փառաւոր հանդիսիւ։ Գրեալ էր 'ի կոնդակին, եթէ հանդերձեալ է եղանել 'ի Պեսարապիոյ 'ի յունիսի 9, և երթալ 'ի Պետրբուրգ ըստ հրաւիրելոյ կայսերն Ռուսաց, և անտի երթալ Էջմիածին, և օծանիլ անդ կաթողիկոս։

(1844) Զայս կոնդակ օրհնութեան առեալ կալեալ 'ի ձեռին Մատթէոս պատրիարք, արար ժողով մեծ 'ի Մայր եկեղեցւոյն հոգեւորականաց և աշխարհականաց, և ստորագրութեամբ ամենեցուն և բարեհաճութեամբ սկսաւ դարձեալ յիշատակութիւն կաթողիկոսին Էջմիածնի 'ի պատարագին յեկեղեցիս Հայոց յՕսմանեան տէրութեան. բայց երթեւեկութիւն նուիրակաց վճռեցաւ դադարիլ բոլորովին. այնպէս զի՝ պատրիարքն Կոստանդնուպօլսի լինիցի միսիանորդ կաթողիկոսին, զեկամուտս սրբոյ աթոռոյն նա հաւաքեացէ, և հասուսցէ. մինչեւ ունի սուրբ առնա առաքեացի, և նա բաշխեսցէ իւրաքանչիւր վիճակի ըստ պիտոյից ժամանակին։

Զայս ամենայն գրեաց Մատթէոս պատրիարք առ Ներսէս կաթողիկոս, որ ոչ սակաւ ցաւեցաւ վասն նուիրակութեանն դադարման. բայց գիտելով զատելութիւնն Օսմանեանց՝ զոր ունին բնաւորաբար ընդդէմ Ռուսաց, իրաւունս ետ ժողովոյն կարգադրութեանն։

Իսկ ինքն կաթողիկոսն յուղի անկաւ 'ի Քիշնովայ, և գընաց 'ի Պետրբուրգ, ուր մեծահանդէս շքով ընկալաւ զինա կայսրն, և հանդոյց 'ի ճանապարհի նեղութեանցն 'ի պալատան միւմ, զոր պատրաստեալ էր նմա յառաջագոյն։

Յայսմ միջոցի դէպ եղեւ երբեմն Նիկողայոս կայսեր երթալ յայցելութիւն սրբազան կաթողիկոսին Ներսիսի, և 'ի լինել անդ բանախօսութեանց և յիշատակութեանց անցելոց իրաց, յառաջ բերեալ Ներսէս զգովելի և զհաւատարիմ ծառայութիւնս ազգիս Հայոց, ասէ, «Ո՞չ արգեօք այս Ներսէսն

էր՝ որ ի խնդրոյ և յաղաչանաց Բասքեւիչ զօրապետիդ յորդորեալ և համոզեալ, և ընկալեալ ՚ի նմանէ զյետակաց դաշնադրութեանն, յորում և ձերդ ստորագրութիւն ցոլանայ ՚ի նմին վասն ազատութեան աղգի և հայրենեաց վերոյ, իբրեւ մեռանաւոր լինի զքաւթիւն ընդ հոգևնաւորութեամբ և պաշտպանութեամբ Աստուածածնոյ կայսերութեանդ, լինել ձեզ միշտ ապակից և օգնական յամենայն մրցմունս պատերազմաց, այս Ներսէս՝ այո՛ այս Ներսէս էր՝ որ յարոյց ընդ իւրեւ զամենայն քաջս Հայոց ՚ի Հայաստան աշխարհէ և ՚ի կովկասեան գաւառաց վրաստանու և իմերէթի, և առաջնորդութեամբ իւրով իբրեւ քաջ զօրապետ ոչ խնայեաց անձին, և կորըստեամբ քանի և հնգից հազարաց ՚ի գլուխ տարեալ զյաղթութիւնն, զերծոյց ՚ի հպատակութենէն Պարսից զերեւան, զնախիջուան, և զայլսն ամենայն մինչեւ ցՄտրպատական, որոց այժմ տէր էք դուք և հրամայող։

Ա՛յս յետակաց և ստորագրութիւն ձեր պահեալ կայ առ իս, ո՛վ ժեհափառ տէր, իբրեւ մնան սրբազան, և ոչ գիտեմ, թէ երբ լինելոց է։

Պատասխանէ կայսրն, ես հաստատ եմ ՚ի խոստմանս, և յուսամ կատարել, զոր ստորագրեցի յանուն Աստուածոյ, և չը մնալ զարտասան աղգի ձերում, և այնչափ անպարտ արեանցն հեղման, որք հեղան ՚ի փառս կայսրութեանս։ Բայց այժմ՝ եան քաղաքականութիւնն եւրոպացւոց ընդդէմ ելանէ այսմ կարգադրութեանս, և ոչ յաջողի բնաւ, և աղգ ձեր տեսանէ զնաս յամենայն կողմանս, ուր և ցրուեալքն իսկ են։ Եթէ ողորմութեամբն Աստուծոյ ՚ի գլուխ տարայց զՄրեւեւելեան խընդիրն յազատութիւն քրիստոնէից, յայնժամ դիւրաւ յաջողի և այդ խնդիր ձեր. ուստի պարտ է ձեզ համբերել, մինչեւ Աստուած ինքն իսկ անօրինեացէ, և ժամանակն յաջողեացէ։

Եւ ՚ի յաջորդ աւուրն երթայ կաթողիկոսն ՚ի վոխադարձ այցելութիւն առ կայսրն Նիկողայոս, որ ընդ առաջ ելանէ նմա բացաւ գլխով և ընդունի յառանձին սենեկի իւրում մեծարանօք և պատուով։ Եւ ՚ի լինել միրաւիր խօսակցութեանց՝ յոգւոց հանէ կայսրն հառաչելով, և ասէ, ո՛վ հայր սրբազան, ցաւ մեծ ունիմ ՚ի սրտիս ՚ի վաղ ժամանակաց հետէ անտի, ո-

Digitized by Google

լոեալ ոչ ոք կարէ գաւթանն տանել և հնարս հայթհայթել՝ քան զի միայն գու՝ հայր սրբազան, դու երթէ կամիցիս, կարես լինել ինձ գեղ բժշկութեան վարաւիչ ցաւոց անձին իմոյ։

Ասէ կաթողիկոսն, դիւրին է ցաւդ ով վեհափառ. ես, պատուեալ ինձ, և երթէ կարեմ լինել նմա գաւթանն, ոչ զլանամ։ Ասէ կայսրն, ահա է տէր մեր, ահա հաւատ, ահա մկրտութիւն, և ահա եկեղեցի, և զինչ ինչ ես այս բաժանութեան ի մէջ Յունական և Հայկականն եկեղեցւոյ, և մինչ չիք հնար ի մէջ երկուց եկեղեցեաց աւղղափառացս լինել միութիւն, որպէս հաւատովք, նոյնպէս և ամենայն կրօնական պաշտամունքք և ծիսիւք և սաբարողութեամբք։ Պատասխանի տայ կաթողիկոսն և ասէ, կամիք դու զերկու եկեղեցիս ձուլել ի մի զանգուած, բայց որով եղանակաւ, հինն նորոյն պարտ իցէ ծառայել, երթէ նորն հնոյն. որն է իրաւացին և աստուածահաճոյն։ Լռեաց կայսրն և ինչ ոչ խօսեցաւ։

Եւ յայնմ ատենի նուագի ի լինել բանախօսութեանց կայսերն ընդ կաթողիկոսին, ասէ կայսրն. խնդրեմ ի քէն սրբազան հայր, զի փոխեսցես զձեւ վեղարիդ, և արասցես, որպիսի է վեզար հոգեւոր մինիսթրին մերոյ։ Ասէ ցնա կաթողիկոսն. յաւուր յորում եդի զվեղարս զայս ի գլուխ իմ ի ձեռնադրութեան իմում քահանայ յեկեղեցւոյ սրբոյն Ստեփանոսի ի Զմիւռնիա քաղաքի, ուխտեցի յայն օր երկնաւոր փառահանդէսին Յիսուսի Քրիստոսի այսու վեղարով իջանել ի գերեզման, արդ զայս ուխտ իմ զոր ուխտեցի Աստուծոյ, ոչ կարեմ փոխել ի չնորհս մարդկան։ Յայնժամ հիացեալ կայսրն ընդ խորագիտութիւն և ընդ բազմահանճար խոհականութիւն կաթողիկոսին, ասէ ցմերձակայս իւր, առաւել յոյժ տեսի քան զոր լուեալ էի վասն առնս մեծի. և հրամայեաց նմա զամանդեայ դնել ի վերայ վեղարին յորոշումն յայլոց արք եպիսկոպոսաց։

Այս ամենայն բանախօսութիւնք նշանակեալք են յուսում նասէր և չնորհափայլ թադէոս վարդապետի յօրադրութիւնն, որ էր ձեռնասուն և հաւատարիմ աշակերտ սրբազան կաթողիկոսին, և ընդ նմա եկաց զամս բազումս ի Փիչնով, ի Պէսպըրդ, և ի Տփխիս, մինչեւ գնաց ընդ նմա ի սուրբ Էջ-

Digitized by Google

միաձին, ուր և ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս մեծի վիճակին Ջուղայու և Հնդկաստանու։

Իսկ ներսէս կաթողիկոս յետ աւուրց ինչ հիւանդացեալ անդ՝ ի Պետրբուրգ, և ախտ ցաւոյն օր քան զօր զայրացեալ և սաստկացեալ, յուսահատ արար զամենեսին ընդ առողջութիւն նորա. բայց հրաշիւք Ամենակալին և բազմաջան վաստակօք կայսեր՝ մինչ ի ձեռն ճարտար բժշկաց ի լաւ անգ փոխեալ օր ըստ օրէ սկսաւ տկանալ զառողջութիւն մարմնոյ, հրամանն արար կայսերն հնալ անդ զձմեռն զայն ի Պետրբուրգ, և յառաջակայ ամին ի մայիսի ելանել ի ճանապարհ, և դնալ յէջմիածին։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Ցաղագս օծման ներսիսի կաթողիկոսի, եւ գործոց նորա, եւ շահնազարեան կարապետ վարդապետի։

(1846) Ի հետեւեալ ամին ի մայիսի եղ ներսէս կաթողիկոս ի Պետրբուրգայ հրամանաւ կայսեր ընկերակցութեամբ երեւելի պաշտօնատեարց կայսրութեանն, և եհաս ի Տփխիս, ուր ընդ առաջ գնացին նմա միով աւուրբ ճանապարհաւ պայծառաւայել փոխարքայն վօրոնցօֆ, որ էր վաղճանօթ սիրելի կաթողիկոսին, և ժէնէրալք, և զօրականք, ասպետք, և վաճառականք, և բազմութիւն բնակչաց քաղաքին յամենայն ազգաց, և մեծահանդէս շքով ածին զնա մեծ եկեղեցին էջմիածնի ուր ի Տփխիս։ Ուր համառօտիւ օրհնեալ զկայսրն և զորդիս նորա և զազգատոհմ նորա և զփոխարքայն և զամենայն ժողովեալսն, եւ ի վերայարան իւր և հանգստացաւ, և զաւուրս հնգետասան ընդունէր զեկեալսն առ ինքն յայցելութիւն և յաշխարհայր, և ինքն փոխադարձ գնաց յայցելութիւն փոխարքային և արքեպիսկոպոսին վրաց։

Կացեալ ամիսս ինչ ի Տփխիս և մխիթարեալ զամենեսին՝

Digitized by Google

եւ ՚ի Տփխինէ ընկերակցութեամբ Եպիսկոպոսաց եւ միաբանից սրբոյ Էջմիածնի՝ որք ընդ առաջ եկեալք էին մինչեւ ՚ի Տըփխիս, և հասեալ Էջմիածին և հանգստացեալ, յետ աւուրց ինչ ընծայեաց զօծումն սուրբ ՚ի գազաթի իւր փառաւոր հանդիսիւ, և նստաւ յաթոռ Հայրապետութեան Հոյոց ՚ի յունիսի 9, 1846։ ի հանդիսի օծմանն գտաւ ներկայ կուսակալն Երեւանու հարիւր զօրականօք, և ՚ի գիշերի եղեն հրաձգութիւնք և լուսաւորութիւն յամենայն կողմանս վանօրէիցն, և կերակուր պատուական և առատ, և ուրախութիւն մեծ։

Յետ երից աւուրց մեկնեցաւ կուսակալն և զօրականք իւր, որոց բաշխեաց պարգեւս սրբազան Հայրապետն ըստ արժանաւորութեան իւրաքանչիւրոցն, և ընկալաւ զմիաբանութիւն սուրբ աթոռոյն, զիւրաքանչիւրոցն հարցուփորձ արարեալ զանուանն և զհայրենիս և զպաշտամունսն, զանպիտանն և զանկարգն առաքեաց ՚ի Սեւան կղզի, և զբարեկիրթն կարգաւորեաց առ մէնմի պաշտօն. ՚ի կարգի եդ զխոհանոցն և զդոմն խաշանց և կովուց, և զհեղանատունն և զկերակուրս միաբանիցն, բարեկարգեաց զդպրոցն աթոռոյն և զվարժարանն և զեկեղեցին վաղարշապատու, եդեալ ՚ի նոսին վարժապետս բարեկրօնս ՚ի միաբանից աթոռոյն։ Ջհետ եղեւ պայծառութեան և բարեկարգութեան, և ետ չինել զլիճ մի մեծ ՚ի հանդիպոյ վանուցն յերկայնութիւն հարիւր կանգուն և ՚ի լայնութիւն յիսուն, և զյատակ նորա և զշրջապատն ՚ի սրբատաշ քարանց. և զկուրն՝ որ հոսէր յաւազանէն Ղազարապատու, հոսեցոյց ՚ի լիճն ընդ երկրեայ ճանապարհաւ, և բազմացոյց անդ ձկունս բազմատեսակս և ախորժահամս։

Կանգնեաց մօտ լճին և անտառ մի գեղեցիկ, տնկեալ ՚ի նմա վաթսուն հազար թթենիս և քառասուն հազար ծիրանս, և շուրջ զնոքօք հաստարմատ ծառս կաղամախս և բարտի, զորս ոռոգանէր լիճն երկուստեք ճանապարհաւ։ Ցօրինեաց և զդործարանս մետաքսի իբրեւ եկամուտ ինչ աթոռոյն, և զօր ամենայն մտածէր պէս պէս բարեկարգութեամբ չքեղացուցանել և վայելչացուցանել զաթոռն սուրբ, և անհետ առնել զամենայն խանգարմունսն և զաղտեղութիւնսն։ Սիրէր և

Digitized by Google

պատուէր անապատութեամբ, ղորս հանդիպեալ էին ճանեից եւ որոց եւ տրամադրութեանց, եւ առեր աքսորեր ՚ի վանորայս զիւառնագնացս եւ զբամբասեալս, եւ այսպէս օր յօրէ ճանաչնար լինէր զաթոռն սուրբ պայծառացուցանել, եւ զարդարել ամենայն բարեկարգութեամբ։

Բայց եւ խոչնդոտք չէին նմա պակաս. յորոց մին եւ մեծագոյնն էր կանոնադրութիւն Ռուսաց տէրութեան որոշեալ ՚ի հարիւրաւոր յօգուտածս եւ աւելի եւս, պալաժէնիա անուն, ղոր միամտութեամբ արտի (չատացից թէ անխոհեմութեամբ եւ վտառասիրութեամբ) ընկալեալ էր նախորդ կաթողիկոսն Յովհաննէս կարբեցի, իբրեւ անվնաս ինչ անկախութեան եւ հնաւանդ բարեկարգութեան Հայաստանեաց եկեղեցւոյ, թերեւս օգտակար նմին եւ պիտանի։

Իսկ Ներսէս՝ որ ՚ի վաղ ժամանակաց հետէ լուեալ էր զընդունելն կաթողիկոսին զկանոնադրութիւնն զայնոսիկ, եւ ՚ի ձեռն մտերիմ բարեկամաց իւրոց զգուշացուցեալ էր զնա յետս կոչել զատորոգութիւն իւր՝ համոզելով, թէ այն կանոնադրութիւնք միանգամայն են անկախութեան եկեղեցւոյ մերոյ, ընդ որ բոլորովին զհնաւանդ առանձնաշնորհութիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ՝ տուեալս ՚ի սուրբ Հոգւոյն յաւուրց անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի եւ Ներսիսի մեծի. բայց նա ոչ անասց նմա, եւ ամօթ համարեցաւ ինքեան զյետս կոչումն ստորագրութեան իւրոյ։

Ուստի այժմ ՚ի նատիլ իւր յաթոռ Հայրապետութեան Հայոց՝ մերժեաց եւ հերքեաց զամենայն իբրեւ միանգամայն եւ անընդունելի Հայաստանեայց եկեղեցւոյ, եւ հրատարակեաց ՚ի լուր ՚Հայսրութեանն Ռուսաց։ Վասնորոյ եւ ոչ իսկ արժանի վարկաք մեք տալ ՚ի կարգի պատմութեանս ծանօթութիւն ինչ զյօգուտածոց միանգամայն կանոնադրութեանն, ղոր մերժեաց Ներսէս այրն Աստուծոյ, և նոյնպէս յաջորդ նորա Մատթէոս կաթողիկոս մերժեաց, իսկ ազգն համօրէն ոչ երբէք ծանեաւ զայն. ուստի լաւ է թաղել և զայն և չյանձնել ապագայ զաւակաց մերոց։ Խարհեցաւ և զբաքսամ ժամանակս տարւոյն կամ զամիսս լինն անցուցանել ՚ի Ցփխս, դի դիւրագիւտ նմա անդ զամենայն օր տեսանել զփոխադարձն և խորհրդակցել ընդ նմա.

Digitized by Google

վանն որոյ ղերիս ամիսս միայն յայց եւանէր սրբոյ աթոռոյն, ընդունէր զեկեալսն յոխտ և յերկրպադութիւն, օրհնէր զմիւռոնն սուրբ, և ձեռնադրէր եպիսկոպոսունս. յետ կարդադրութեանցս այսոցիկ ետ պատրաստել ղկառս իւր, և կեցեալ օր մի յՆերսեան քաղաք, եկ անտի բազմութեամբ ժողովրդոց, և եկեալ 'ի Տփխիս մեծաւ հանդիսիւ, հանդեաւ 'ի վիհարանի իւրում։

Յետ աւուրց ինչ գնաց յայցելութիւն վարժարանին իւրոյ՝ զոր ինքն հիմնադրեալն էր և եկամուտս պատրաստեալ, և հոչեալ Ներսիսեան վարժարան, բայց ապա յաւուրս հարապետ արքեպիսկոպոսի վիճակաւորի տեղոյն խոպանացեալ և 'ի վարձու տուեալ այլոց, վասն որոյ ցաւ մեծ զգայ կաթողիկոսն Ներսէս, և իսկ և իսկ վտարեալ անտի, զորս ետտէին անդ իբրեւ 'ի տան, և սպահանջեալ 'ի կարապետ եպիսկոպոսէն զհսկիս վարժարանին իւրոյ և վիճակին՝ կարգելով յանձնաժողովս քանի ինչ անդամ, որոյ անդամք էին Շահնազարեան կարապետ վարդապետ և Յովհաննէս վարդապետ Ոսկեբունեան, և յետ նոցա Գէորգ վարդապետ Կոստանդնուպոլսեցի առաջնորդն Պրուսայու, և Դաւիթ վարդապետ սուրբ Երուսաղէմի, որք գնացեալք էին ձեռնադրել եպիսկոպոս, և զամ մի և աւելի տրհնեցան յայս պաշտօն հաշուընկալութեան, և այս վէճ և խնդիր հնարէին տեւեալ շամս բազումս, որ բազմիք տառապեցոյց զկարապետ եպիսկոպոսն և ընդպատրեօք էարկ, և մերկացուցեալ յամենայն հարստութեանցն առաքեաց զնա յԱխալցխա իբրեւ առաջնորդական փոխանորդ, ուր և մեռաւ նա անդ։

Պատմի թէ կարապետ եպիսկոպոս տայ կաշառս երից հազար մանեթաց Շահնազարեան կարապետ վարդապետին՝ որ նախագահն էր յանձնաժողովին իւրոյ, զի զհսկիսն տեսցէ յօգուտ անձին իւրոյ. և նա այլընդ այլոց տեսանէ հաշիւս։ Ի մտալեալ զայս կաթողիկոսին Ներսիսի խնդրէ զՇահնազարեանն պատուհասել զնա ըստ արժանւոյն. բայց նորա զգայեալ զի չերսայն խոյս տայ 'ի Տփխիսէ և անցանէ ընդ տահնան Օսմանեան տէրութեան, և գնայ 'ի կոստանդնուպոլիս յաւուրս Բակոբոս պատրիարքի։ Եւ ներսէս կաթողիկոս առաքէ զկոնդակս

առ Յակոբոս պատրիարք և առ իշխանաւորս աղգիս, առ կարապետ արքունի ճարտարապետ, և առ Յովհաննէս և Պօղոս արքունի վառօդապետս, զի չընդունիցին զՇահնազար եանն իբրեւ Հայոց վարդապետ, և Յակոբոս պատրիարք ակնածեալ ՚ի կոնդակէ կաթողիկոսին՝ ոչ ցուցանէ նմա երես զուարթ, և արգելաւ զնա ՚ի քարոզչութենէն Ղալաթիոյ եկեղեցւոյն, ուր յղեալն էր յառաջ։

Իսկ նորա տեսեալ, զի չիք տեղի ապաստանի յերեսաց կաթողիկոսին, անյանէ ՚ի փարիզ, ուր պարապեցաւ ժամանակս ինչ ՚ի թարգմանութիւնս նախնի պատմադրաց մերոյ ՚ի Հայէ ՚ի Գաղղիացի բարբառ, զորս և սկսաւ տպագրութեամբ ՚ի լոյս ածել. անտի էանց յԱնգլիա ՚ի Մանչէսթէր, ուր պատիւ մեծ գտեալ ՚ի Հայազդի վաճառականաց պանդխտելոց անդ՝ սկսաւ հրատարակել օրագիրս. բայց ախտ ինչ դժնդակ և անբուժելի ՚ի վերայ հասեալ՝ արգել զնա ՚ի վաստակոյն, յորմէ վասն վերադառնայ ՚ի փարիզ, և չդտեալ անդ դարման անձին՝ գայ յԵգիպտոս, ուր տեսեալ զնուպար փաշա խօսակցի ընդ նմա, և յայտնէ զիղձս իւր զամենայն ինչս և զդրեանս իւր յանձնել նմա առնելով կտակս վասն հաստատութեան ազգային դպրոցի միոյ ՚ի կողմանս Եղիկիոյ յիւրոց իսկ արդեանց, և զնուպար փաշա կարգել կտակակատար, և ապա եկեալ ՚ի Կոստանդնուպոլիս, յետ սակաւ ժամանակաց մեռանի անդ, և թաղի ի՝ Թոպհանէ։

Դեպ եղեւ յաւուրսն յայնոսիկ Ներսէս եպիսկոպոսի վարժապետեան երթալ յԵգիպտոս հրամանաւ Պօղոսի պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, գնացեալ սորա անդ, տեսանէ զնուպար փաշա, և միանգամ և երկիցս խօսակցի ընդ նմա վասն կտակին Շահնազարեան վարդապետին։

Բայց վասն զի այնչափ դոյք հանդուցելոյն չէին բաւական ՚ի հասոյթ դպրոցին, և բազմաց ծախուց պետք էին վասն շինուածոց դպրոցի և կարեւոր պիտոյից նորին, ինքն իսկ փաշային խոստացաւ հոգալ զամենայն յիւրոց իսկ արդեանց, յաւելլով ՚ի վերայ հազար Օսմանեան ոսկւոյ գոյից Շահնազարեանի՝ երիք հազար ոսկիս եւս. և առ դիւրելոյ առ ժամանակ ինչ զպիտոյս վարժարանիս, խորհրդով Նուպար փա-

Digitized by Google

չայի հաստատեցաւ վարժարանս ի խասգիւղ, ընդունելով ի նմա տան աշակերտս ձրիավարժս ի զանազան կողմանց Կիլիկիոյ, ըստ բաղձանաց Շահնազարեան վարդապետին. որպէս զի յետ ժամանակաց դիւրեսցի հաստատութիւն վարժարանին ի Կիլիկիա, ի ձեռն ընիկ աշակերտացն վարժելոց ի վարժարանին խասգիւղի։

Մեծապէս փայլի յազգօգուտ հաստատութեանս յայսմիկ աշխատութիւն և տքնութիւն Գերապատիւ Ներսէս սրբազան եպիսկոպոսի վարժապետեան, որ յաջողեցաւ ըստ ամենայնի շահիլ և զսիրտ Նուպար փաշայի, և եղեւ պատճառ հաստատութեան վարժարանիս, յորում բաց ի ձրիավարժ տան աշակերտաց՝ ամենականաւոր աշակերտք պարապին յուսումն՝ առաւել քան ղհարիւր։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Ճաղատս դժուարեան ի մէջ կաթողիկոսին, եւ Լազարեան խաչիկ աղային։

(1846) Ինչ բարեկարգեաց զդպրոց իւր Ներսէս կաթողիկոս, և օր քան զօր յայց եւլաւ նմին տեսանէր զբարեկարգութիւն նորա և զուարճանայր յանձն իւր, հիմնադրեաց և զվանս մի կուսանաց անդ ի Տփխիս, հաստոյթս և եկամուտս պատրաստեաւ նմա, և եդ ի նմա վարժուհիս և ժպրատեաս և քահանայս դասատուս բարեկիրթս և մաքրակրօնս, և կանոնօք ամրափակեաց զնա չմտանել անդ այր մարդ, և եթէ հիւր ինչ օտարական եկեալ՝ յայց եւլանել կամիցի, գնասցէ նախ յառաջնորդարանն, և ծանուսցէ զինքն, և ընկալեալ ի նմանէ զբարեհաճութիւն և զհրամանագիր տոհմակ առ մայրապետն գրեալ, գնասցէ անդ, և զայցելութիւնն կատարեալ դարձցի վերստին։

Digitized by Google

Այս վանք կուսանաց օր քան զօր վայելչացեալ համբաւ մեծ ստացաւ յայնոսիկ կողմանս։

Երեւելի էր ի սմին ժամանակի աղա Թաչիկ Լազարեան՝ այր ազնուական ի տոհմէ եղիազարեանց՝ ատպետ զանազան նշանաց՝ սենեկապետ և խորհրդական կայսերն Ռուսաց՝ հիմ նադիր և տէր ճեմարանին Լազարեանց՝ որ ի Մոսկուայ։ Սա կամեցաւ զգուստր իւր հարսնացուցանել ընդ որդւոյ Մուրատ պէյի Մանուկ պէյեան, որ էր որդի աներորդւոյն իւրոյ և մերձաւոր ազգական. և վասն այսր խնդրեաց հրաման պատկի ի սրբազան կաթողիկոսէն, մինչ էր յայնժամ ի Պետրբուրգ։ Բայց սրբազանն յիշեցուցանելով նմա զմերձաւոր աղգակցութիւնն՝ որ ի մէջ երկուց աղնիւ գերդաստանացն, և զկանոնս սուրբ եկեղեցւոյ, որ չտայ թոյլ ազաչափ մերձաւոր ազգականութեանց լծակցիլ ընդ միմեանս ամուսնութեամբ, խըրատեաց զնա և յորդորեաց բազմօք չաւստամբիլ ընդդէմ եկեղեցւոյ, և ժառանգել զօրհնութիւնն Աստուծոյ և սրբոց հարց, որք կանոնօք ամրափակեալ են զսրբազան խորհուրդն, և ոչ թոյլ տան խառնագնաց վարուք լծակցիլ զօրէն հրեից և Մահմետականաց։

Տեսեալ Թաչիկ Լազարեան, թէ չէ հնար ամոքել զսրբազանն ներսէս վասն հրամանին, ոչ խոստմամբ պարգեւաց, ոչ աղաչանօք, և ոչ ակնածութեամբ երեւելի միջնորդաց, ակամայ լռեաց, թողեալ այլում ժամանակի զոր փափաքէրն առնել։

Եւ մինչ մեկնեցաւ սրբազան կաթողիկոսն ի Պետրբուրգայ, և եկն ի Տփղիս, առաքեաց առաջնորդ Պետարապիոյ Մատթէոս արքեպիսկոպոս, որ գնացեալ ի վիճակ իւր կնդակաւ կաթողիկոսին, սկսաւ հովուել և բարեկարգել զմերս բանեցեայ բնակիչս Ղրիմու Նորոյն Նախջուանայ, և Պետարապիոյ; գնաց հովուական պաշտօնիւ և ի Պետրբուրգ, ուր և նա ի վիճակի իւրում էր, և մնաց անդ ի ձմերան ժամանակի։

Յայսմ միջոցի Թաչիկ Լազարեան պատրաստեալ յաւուր միում խնճոյս մի մեծ ի տան իւրում, և հրաւիրեալ անդ ըղ մերձաւոր ազգականս իւր, և զերեւելի պաշտօնակալս կայսրութեանն, և զԺէնէրալս, և զՄատթէոս արքեպիսկոպոսն,

Digitized by Google

և յետ նուագարանաց և պարուց յերեկոյեան պահու բաղմին ի ճաշ, և հանեալ զգինի կախէթու հին և պատուական արբեցան առաւել քան զչափն։

Զկնի ճաշուն առնու Խաչիկ լազարեան զՄատթէոս արքեպիսկոպոս, և տարեալ յառանձին սենեակ ինչ, յոգւոց հանէ առաջի նորա և ասէ, Հայր սրբազան, վերք մի ունիմ ի սրտիս, և ոչ ոք կարէ բժշկել, բայց միայն սրբազնութիւն ձեր։ Ասէ եպիսկոպոսն, Պայծառատիպ տէր, երգնում յԱստուած, զի եթէ կարող եմ, ոչ անխայեցից ի քէն և զկեանս իմ անգամ։

Ասէ Խաչիկ, սրբազան հայր, դու գիտես, զի միակ դուստր մի ունիմ, և չունիմ այլ, և նա է յոյս և ակնկալութիւն իմ, զի ժառանգեսցէ զանուն հայրենեաց մերոց, և անուն ազգատոհմի իմոյ մի՛ կորիցէ խափան։ Ումեք լուայ ի հաստատութիւն բարեկամաց, զի վճհափառ կայսրն պատրաստեալ է ղերիտասարդ մի ի գերդաստանէ իւրմէ, և կամի հարանացուցանել ինքեան զդուստրն իմ, յայնժամ ազգ եղիազարեան տոհմին խափան ունի չինչանիլ և կորնչիլ, ընդ նմին և պարծանք ազգիս. և Ռուսք փոխանակեսցեն զտեղի հարց մերոց։

Վասն որոյ խնդրեմ և աղաչեմ, զի՛ ի դիշերիս յայսմիկ դիցես պակ օրիորդիս իմում ընդ որդւոյ Մուրատ պէյի, որ է յազգականութենէ իմմէ, և է աստ։

Ասէ եպիսկոպոսն. բարի է ղոր ասէքդ. բայց վասն մերձաւոր ազգականութեան նորին՝ չգիտեմ, թէ զի՞նչ արարիցս։ Ասէ ցնա Խաչիկ, սրբազան հայր, միթէ Աստուածդիր և աւետարանական՞ իցեն օրէնքս այս խնամութեան. և ո՛չ ապաքէն նահապետք սուրբք աստուածային կարգադրութեամբ առին իւրեանց կանայս ի մերձաւոր ազգականաց իւրեանց, զի մի՛ այլակրօն ոք մտցէ յազգ իւրեանց և խանգարեսցէ զանուն նահապետութեանն. ահա նոյն բան է և այժմ յայսմիկ։ Իսկ եթէ մարդկային իցեն օրէնքս աւս, ապաքէն օրէնք ի ձեռս առաջնորդաց են, որք կարեն փոփոխել և տնօրինել ըստ ժամանակին, և ի պահանջել հարկին՝ բոլորովին եւս հերքել, զի հարկն զօրէնս լուծանէ։

Ի բանից աստի խրախուսեալ և յորդորեալ եպիսկոպոսին,

Digitized by Google

եւ յոտս, եւ ասէ, առաքեա՛ արս յեկեղեցին, եւ բերցին քահանայք ադիս՝ ղխաչ ղՄաշտոց եւ զգեստս եպիսկոպոսութեան իմոյ։ Յայնժամ առաքեաց խաչիկ արս յեկեղեցին, եւ բերին զամենայն զոր ասաց եպիսկոպոսն, եւ զգեստաւորեալ արքեպիսկոպոսն՝ եւ ի սրահն մեծ զարդարեալ ամենայն հանդերձանօք, եւ վառէին հազար կանդեղք. եւ ածեալ զՀարսն եւ զվեհապն յատենի բազմութեանն, պսակեաց եպիսկոպոսն ի հանդիսին յայնմիկ, եւ եղեւ ուրախութիւն մեծ զաւուրս երիս։

Այս լուր հարսանեաց այն լինչ եհաս յականջս սրբազան հայրապետին Ներսիսի, եւ քաջ տեղեկացեալ, թէ Մատթէոս եպիսկոպոսն արարեալ է զայն պսակ, յանհնարին բարկութիւն չարժեալ հանէ սուրհանդակս, եւ գրէ կոնդակ առ Մատթէոս եպիսկոպոս, զի փութանակի եւ անյապաղ գայցէ առ ինքն։

Ընդերցեալ եպիսկոպոսին զկոնդակն եւ ի վերայ հասեալ, թէ կաթողիկոսն ունի դատապարտել զինքն եւ չարաչար պատուհասել վասն ապօրինաւոր պսակին զոր արարն, գնայ առ խաչիկ լազարեան, եւ ցուցեալ նմա զկոնդակն, աղաչէ զնա եւ թախանձէ ազատել զինքն ի ձեռաց կաթողիկոսին։ Եւ նա քաջալերէ զնա չերկնչիլ բնաւ երբէք, եւ մնալ անդ ի Պետրբուրգ ընդ պաշտպանութեամբ իւրով, եւ ասէ, ցորչափ կենդանի եմ ես, ոչ կարէ կաթողիկոսն հանել զքեզ ի պաշտպանութենէ իմմէ։

Բայց այսու ամենայնիւ գրեաց Մատթէոս եպիսկոպոս գիր աղերսանաց առ կաթողիկոսն Ներսէս մեծաւ պաղատանօք, յորում երկարօրէն պատմէ զբանս խաչկայ լազարեան առ ինքն, եւ թէ ինքն խոհեմութեամբ գործ գործել կամեցեալ, զերկուց չարեաց փոքրագոյնն ընտրեալ է ի պսակելն. զի արդարեւ անցանելն զօրինաքն եկեղեցւոյ՝ չար է ասէ. բայց եւ հարսնացուցանելն կայսեր զօրիորդն Հայ ընդ Ռուսս՝ է չարագոյն եւս. զի նովաւ բնաջինջ ունի լինել անուն եւ հայրենիք պայծառափայլ ազգատոհմին եղիազարեանց յաջգէ Հայոց, վասն որոյ համարձակեցայ ասէ ընտրել զփոքրագոյնն երկուց չարեաց։

Digitized by Google

Բայց ոչ համոզեցաւ Ներսէս կաթողիկոս ՚ի քանիցս յայսոցիկ, այլ դարձեալ գրեաց առ նա գալ առ ինքն. յաւել եւ զգրել առ կայսրն, զի զՄատթէոս եպիսկոպոս ՚ի ձեռս ըզրականաց տուեալ առաքեսցէ առ ինքն. այլ ոչ լուաւ նմա կայսրն ՚ի չնորհս ՚Լազարեանց, և գրեաց պատասխանի, թէ Մատթէոս եպիսկոպոս անկեալ կայ ՚ի մահիճս կաթուածով ախտիւ. եթէ առողջասցի, յայնժամ եկեսցէ. և այսպէս մնաց Մատթէոս եպիսկոպոս ՚ի Պետրբուրգ մինչեւ ցմահ հայրապետին Ներսիսի, և ՚ի վախճանիլ նորա՝ եղեւ առաջնորդ Աժտերխանու կայսերական հրովարտակաւ։

Այս գժտութիւն և վոխադարձ սրտնեղութիւն ՚ի մէջ սրբազան կաթողիկոսին Ներսիսի և խաչիկ աղայի Լազարեանց տեւեաց զամն բազումս, և սա եղեւ պատճառ զի յետ տասն ամաց մինչ մեռաւ կայսրն Նիկողայոս, և յաջորդեաց զաթոռ նորա Ալէքսանդր Բ. որդի նորա, և հանդերձեալ էր օծանիլ կայսր ամենայն Ռուսաց, հրաւիրեցան յամենայն կողմանց տէրութեան նորա ըստ նախնի կայսերական օրինաց ամենայն աստիճանաւորք, որք պարտ էին ներկայ գտանիլ ՚ի հանդիսի օծմանն նորա, եկն հրաւէր և առ Ներսէս կաթողիկոս, քայց այսու օրինակաւ, զի վասն ծերութեանն մի՛ աչխատ լիցի ճանապարհորդել ՚ի Պետրբուրգ, զի մի՛ հիւանդութիւն ինչ պատահեսցէ կամ արկած չարադէպ. այլ փոխանակ իւր առաքեսցէ զոմն յարքեպիսկոպոսաց օծանել զկայսրն. և կայսրն ընկալցի զեպիսկոպոսն զայն՝ իբրեւ զնոյն ինքն զկաթողիկոսն Հայոց։

Ընթերցեալ զայս թուղթ Ներսէս կաթողիկոս, ծանեաւ իսկ և իսկ, զի խաչիկ Լազարեան ձեռնարկեաց զայս հնար, քաղաքավարութեամբ արդելուլ զնա յերթալոյ յօծումն կայսեր. և յանդէտս եղեալ խորամանկ հնարիցն՝ առաքեաց իւր փոխանորդ զհաւատարիմ իւր զՄարգիս արքեպիսկոպոս Հասանջալալեան զայրն խորախորհուրդ, տուեալ նմա զչնորհաձիր կոնդակ օրհնութեան և բարեմաղթութեան վասն Աստուածընտիր կայսերն և ամենայն տան նորա. և նորա գնաց, եալ և տուեալ զկոնդակն, պատուեցաւ ըստ իւրում բարուցն, և ընկալաւ զնչան ասպետութեան սրբոյն Աննայի, և յետ կա-

Digitized by Google

տնտրելոյ ըօծումն կայսերն՝ վերադարձաւ պատուով առ կաթողիկոսն հանդերձ ընծայաբերը թղթով հնորհակալութեան և առաջին կարգի զանազան նշանաց։

(Զայս պատմութիւն ինքն իսկ Մատթէոս եպիսկոպոս պատմեաց մեզ՝ ի սուրբ Էջմիածին յաւուրս Մատթէոսի կաթողիկոսի, որում ընդ առաջ եկն, մինչ գայրն՝ ի կոստանդնուպօլսոյ, և հանդիպեցաւ մեզ մերձ՝ ի Ծոփս Գեղամայ, և եկն ընդ մեզ՝ ի սուրբ Էջմիածին, և դասաւ ներկայ՝ ի ժամ օծմանն նորա՝ ի փառաւոր հանդիսին)։

Ի սմին ամի սաստիկ և անտանելի ցուրտ եղեւ յերեւան և՝ ի սուրբ Էջմիածին, բայց ոչ այնչափ նեղեցան միաբանք սուրբ Էջմիածնի, զի սրբազան հայրապետին իւրով բնածին նախատեսութեամբ հոգացեալ էր՝ ի ժամանակին ջամենայն կարեւոր պիտոյս միաբանութեանն։

ԳԼՈՒԽ ԾԷ.

Ցաղագս հերձուածոյ բողոքական Հայոց։

(1846) Ա ՌԱՋԻՆ գործ Մատթէոս պատրիարքին եղեւ համոզել և դարձուցանել զմոլորեալսն՝ ի ժողովրդենէ իւրմէ, որք որսացեալք էին՝ ի ծուղակ երիցական աղանդոյն Ամերիկացւոց թեղադրութեամբ և քարոզութեամբ Միսիոնարաց նոցին՝ այսինքն քարոզչաց, որք երեքտասան ամաք յառաջ եկեալք՝ ի կոստանդնուպօլիս յաւուրս Ստեփանոսի պատրիարքին, ցուցանէին զինքեանս և հաւատարմացուցանէին լինել քարոզիչ Հրէից և հեթանոսաց, և զՀայս չատագովէին լինել ուղղափառ և ճշմարիտ քրիստոնեայ։

Իսկ՝ ի վերջոյ ուր ուրեմն յերեւան եկ բանն և խարդախութիւնն նոցա, որ ոչ այնչափ զՀրեայս և զհեթանոսս կամին՝ ի հաւատս ածել քրիստոնէութեան, որչափ զՀայս գուն գործեն մոլորեցուցանել զհետ աղանդոյն իւրեանց. և զայս դի-

Digitized by Google

տաւորութիւն խրեանց երիւք եղանակօք խորհեցան յա-
ռաջ տանել։

Առաջինն, երթեւեկէին ՚ի տունս Հայոց բարեկամաբար,
և զպարզամիտս յանկուցանէին ՚ի հաղբս մոլորութեան խր-
եանց։ Երկրորդն, ազքատաց և պարտատուրց օգնէին, ո-
մանց ամենականօք, և ումանց պատրաստ դրամովք։ Երրորդն,
բացին գիշերօթիկ դպրոցս ՚ի Պերա և ՚ի Պէպէք գիւղ յու-
սումն Գաղղիերէն և Անգլիերէն լեզուաց, և թուաբանու-
թեան և աշխարհագրութեան, և բնական գիտութեանց,
յորս ձրիաբար սկսան ուսուցանել։ Եւ բազումք ՚ի Հայոց ե-
տուն զմանկունս իւրեանց միամտութեամբ, որք ընդ ուս-
մանցն գիեցին և թոյնս մոլար քարոզութեան նոցին, և եկ-
եալ ՚ի տունս իւրեանց՝ սկսան զծնողս և զազգականս մոլորե-
ցուցանել։

Եւ նախ ՚ի փոքունցն սկսեալ, հետզհետէ ՚ի մեծամեծս
ձեռն արկին յանդգնիլ և ջնջել. և ՚ի վերջոյ յայտ յանդիման
համարձակեցան քարոզել, նախ՝ թէ ամենայն գիրք և մատ-
եանք սրբոց հարց անընդունելիք են բաց յԱստուածաշունչն, ո-
րով և զինքեանս Աւետարանականս կոչէին։

Երկրորդ, եկեղեցին Քրիստոսի է անառեսանելի, և չիք
երեւելի եկեղեցի։

Երրորդ, ուրանային զսուրբ խորհուրդս եկեղեցւոյ. չոր-
րորդ՝ զդոյափոխութիւնն պատարագին ՚ի մարմին և յարիւն
Քրիստոսի. հինգերորդ՝ զբարեխօսութիւնն սրբոց, վեց-
րորդ՝ զմիջնորդութիւնն Աստուածամօրն մինչեւ ցվերա-
փոխումն. եօթներորդ՝ զխոստովանութիւն մեղաց առաջի
քահանային. ութերորդ՝ զերկկրպադութիւն խաչին. իններ-
րորդ՝ զյարգութիւն պատկերաց և սրբոց մասանց. և տաս-
ներորդ՝ զպահս և զայլ կանոնս սուրբ եկեղեցւոյ։ Համարձա-
կեցան և յաղագս այսոցիկ տեսուրակս յօրինել և չանալ հաս-
տատել զմոլորութիւնս զայսոսիկ, զբանս Սուրբ գրոց թիւր
մեկնելով և այլ ընդ այլոյ բացատրելով։

Իսկ Մատթէոս պատրիարք կամելով նախ և յառաջ իմա-
նալ զհաչիւ սոցա, թէ քանիք ումանք եղեալ են մինչեւ ցայն-
ժամ ՚ի մեր ազգիս մոլորեալք և զանդատելք զհետ ոտից ա-

Digitized by Google

ղանդոյն այսորիկ, ՚և զտան ուր հաղարիւ չափ հաշուեալք ՚ի տումարաց ծխատէր քահանայից կոստանդնուպօլսոյ և գիւ-ղօրէից նորին, յորմէ սկսեալ էր ճարակիլ և ՚ի կողմանս Ընա-տօլուի և Րումէլիի, ՚ի կեսարիա, ՚ի Նիկոմիդա և ՚ի գիւղս-րէս նորուն, ՚ի թէքիրտաղ, և այլուր։

Եւ սկսաւ ՚ի ձեռն իւրաքանչիւր քահանայից հրաւիրել զմոլորեալն զայնոսիկ առ ինքն, զորս պատուասիրութեամբ ընկալեալ, բանայր զխօսս և հարցանէր, թէ զիարդ մեկնեալ ՚ի մայրենի ծոցոյ եկեղեցւոյն իւրեանց՝ զկատեալ են զհետ մոլար ազանդոյն, և եդիտ զբազումս, որք արծաթով խաբ-եալք էին աղքատութեան աղագաւ և ամենակոյս առնուին. և ոմանք ՚ի պարտուց իւրեանց դրամով նոցին զերծեալք, պարտաւորեալ էին զհետ երթալ նոցին։

Զայսոսիկ ստուգեալ և տեղեկացեալ, և ՚ի տումարի արձանագրեալ, ինքն իսկ խոստացաւ տալ զամենայնն զայնո-սիկ, որք մեծաւ չնորհակալութեամբ և ուրախութեամբ գը-նացին առ քահանայս իւրեանց, և խոստովանեալք ապաշխա-րեցին. և այսու եղանակաւ թիւ մոլորելոցն յուր հաղարէն էջ յերկիս հազարս։

Իսկ նոքա՝ որք պարզմտութեամբ խաբեալք էին մոլորե-ցուցչաց, կռապաշտութիւն համարելով զյարգութիւնն պատ-կերաց և զարեխօսութիւնն սրբոց, համոզեալք ՚ի քարոզութե-նէ սրբազան պատրիարքին, որ յամենայն կիւրակէ ժամս եր-կուս և երիս խօսէր յատենի սուրբ եկեղեցւոյ, և հաւանեցու-ցանէր զնոսա ՚ի սուրբ գրոց, թողին զտարակոյս իւրեանց, և դարձան յեկեղեցի իւրեանց հոգեւոր միխիթարութեամբ։

Եւ վասն նոցա որք վիճաբանել կամէին ՚ի վերայ խնդրոց այսոցիկ, որոշեաց զսենեակ մի ՚ի Մայր եկեղեցւոջ, և եդ ՚ի նմա զպատուական Ծովհաննէս Տէրոյենց զայրն բազմահմուտ և լեզուագէտ, և հրամայեաց, զի որ ոք ունիցի տարակուսա-կան խնդիր ինչ և վիճել կամիցին, գնասցէ առ նա, գրեսցէ զխնդիրն, և գրով առցէ զպատասխանին. և այսու եղանակաւ հազարք եւս չահեցան, և մնաց թիւ մոլորելոցն հազար հինգ-հնարիւր։

Զայսմ միջոցի եկն դարձեալ ՚ի կոստանդնուպօլիս վրդ-

Digitized by Google

թանէս անուն քահանայն Նիկոմիդացի, որ ամօք յառաջ եւս եկեալ էր, և քարոզէր զմոլորութիւնս աղանդոյս այսորիկ ՚ի սրճանոցս և ՚ի շուկայս։ Լուեալ զայս Մատթէոս պատրիարք, եհաս բերել զնա առ ինքն, և նստուցեալ առաջի իւր քաղցրութեամբ և սիրալիր բանիւք, եհարց զորմէ լուեալն էր։ Եւ նա ոչ ամօթ համարեցաւ գրել զամբարշտութիւնս իւր, և յայտնի անպատրուակ բանիւք ուրացաւ զխորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զդոյակոխութիւն սուրբ Պատարագին, զմիշտ կուսութիւն Տիրածնին մինչեւ ցվերափոխումն, և զխոստովանութիւն մեղաց։ Ընարդեաց և զյարդութիւն պատկերաց և սրբոց մնասանց, և յաւել ասել, թէ յարդ և պատիւ խաչափայտին՝ որում դուքդ երկիրպագանէք, մի և նոյն է առաջի իմ ընդ այլ ամենայն փայտից՝ որք զետեղեալք կան ՚ի տաճարս աստղաճաճառաց։

Յայնժամ Մատթէոս պատրիարք քաղցրութեամբ խրատել կամելով զնա, խօսեցաւ նմա ժամս երկուս ՚ի սուրբ գրոց, և յորդորեաց հնազանդիլ սուրբ եկեղեցւոյ, պահել անխափոխ զհայրենաւանդ ուղղափառութիւն հաւատոյն Քրիստոսի, և միշնորդ և բարեխօս ունել զԱստուածամայրն հաւատալով ըզմիշտ կուսութիւն նորա անապական մինչեւ ցվերափոխումն։

Պատասխանի ետ ամբարիշտն և ասէ, առ իմ՝ այդչափ յարդ և պատիւ տայք լկտի կնոջ միոյ։

Ընդ հայհոյել նորա զայս, փոխանորդ պատրիարքին թադէոս վարդապետ այր ջերմեռանդ և խստակրօն՝ որ կանգնեալ կայր ընդ մեզ առաջի պատրիարքին և ունկն դնէր, ՚ի լսել նորա զայս ամբարշտութիւն վազեաց ՚ի դուրս, և խնդրէր փայտ խոշոր, բիր, կամ երկաթ ինչ հարկանել զդլուխ ամբարշտին և սատակել զնա ՚ի նոյն տեղւոջն։

Յարեաւ պատրիարքն և ասէ ցամբարիշտն, կորիր և վախիր ա՛նդադամ, և ինքն եղեալ արտաքս ՚ի սենեկէն, գրկեաց զթադէոս վարդապետ, և աղաչէր զնա համբերել։ Իսկ նա խռովեալ և ցասուցեալ անհնարին զայրացմամբ, գոչէր և աղաղակէր, սատակեցից զամբարիշտս զայս յերկրէ, և հեղցէ արիւն իմ առաջի դրան պատրիարքարանիս ՚ի փառս սուրբ Աստուածամօրն։

Digitized by Google

Եւ ՚ի միջոցի յայսմիկ խոյս ետ անդրադառն, բայց լսելի եղեւ արտաքս այս ձայն, և ՚ի յայնմոդ աւուրն եկեղեցւոյնդ և պատուական անձինք բազումք եկին առ պատրիարքն, բողոք բարձին զամբարշտեալսն զայնոցիկ, և ասեն։ Հայր սրբազան, ամբարիշտքս այսոքիկ հանապազորը քարոզեն ՚ի սրճանոցս և ՚ի շուկայս զանհաւատութիւն իւրեանց, և զՀայս կռապաշտս կոչեն և մոլորեալս, և յարուցանեն խռովութիւնս մեծամեծս, զի ոգեւոք մեր՝ որպիսիք են չըհանակիրք և նաւավարք։ գոլով չերմեռանդ ՚ի հաւատս իւրեանց պատասխանեն նոցա անլուր հայհոյութեամբ։ Եւ ո՞ գիտէ, գուցէ և յաւուր միում արբեալ ոմն ՚ի չըհանակիրաց ոչ կարելով համբերել, հարցէ զնոսա սրով կամ՝ քարամբք և սպանցէ, և յայնժամ զի՞նչ լիցի, ոչ ապաքէն դեսպանք Անգլիոյ և Ամերիկոյ յայնժամ ամբաստանեն զմեզ առաջի տէրութեան, թէ Հայք բարբարոսք են, և զբողոքականսն սպանանեն, եւայլն։

Արդ՝ քեզ մնայ սրբազան հայր՝ նախատես լինել չարա վախճան աղետիս, և հնարս գտանել, զի Հայք չխօսիցին երբեք ընդ նորաղանդից, և ՚ի տունս և ՚ի խանութս նոցա չմտա նիցեն առևտրութեան աղագաւ. ահա մեք պատմեցաք ձեզ զամենայն զոր տեսանեմք հանապազօր. քեզ մնայ հոգալ և տնօրինել զարժանն և զկարեւորն։

Ցետ մեկնելոյ նոցա զմտաւ ածեալ Մատթէոս պատրիարք, գրեաց և հրաւիրեալ զսրբազան կարապետ նախորդ պատրիարքն՝ որ նստէր յԻւսքիւտար, և զՅովհաննէս արք եպիսկոպոս փոխանորդն տուրբ Երուսաղէմի, և զՅերունիմ Յովհաննէս վարդապետ զքարոզիչն Խասգիւղի, և պատմեալ նոցա մի առ մի զեղեալսն ամենայն, և խորհուրդ արարեալ ընդ նոսա, միաբան վճռով և ստորագրութեամբ յառաջակայ կիւրակէին յայնմիկ ընթերցաւ կոնդակ բանադրանաց յամենայն եկեղեցիս Կոստանդնուպօլսոյ ՚ի յունվարի 12, 1846։

Առաքեալ և զօրինակ կոնդակին յԱնատօլու և ՚ի Րումելի ՚ի զգուշութիւն պարզամիտ ժողովրդեան Հայոց՝ ըստ յայսմ օրինակի։

«ի ՏԵՐ Մատթէոս արքեպիսկոպոսէ և պատրիարքէ մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, համօրէն եկեղե-

» ցական հոգեւոր պաշտօնէից ՚ի Քրիստոս, և համայն հայ-
» կազուն ժողովրդոց մերոց՝ ողջոյն ՚ի Քրիստոս Յիսուս։

« Հոգւոյն սրբոց չնորհաց անօթին ընտրեալ՝ սրբազան ա-
» ռաքեալն Պօղոս բարիւք խրատէ զպաշտաւորս եկեղեցւոյն
» Աստուծոյ ըստ ամենայն կարգի և աստիճանաց, թէ ո՞րպէս
» պարտ է կալ եկեղեցականաց ՚ի հաւատս և ՚ի վարս սրբու-
» թեամբ և անարատութեամբ. ո՞րպէս պարտ է երիցանց և
» քահանայից՝ որք պաշտօնեայք են աստուածային սուրբ
» խորհրդոյն՝ մանաւանդ բանիւք հաւատոյ, և լինել օրինակ հա-
» ւատացելոց բանիւք՝ գնացիւք՝ սիրովք՝ հաւատովք՝ և սրբ-
» ութեամբ. չառնել անփոյթ զչնորհացն Աստուծոյ, որ տը-
» ւաւ նոցա ՚ի ձեռնադրութենէն երիցութեան, և զգուշանալ
» անձանց և վարդապետութեան իւրեանց, որովք կարասցեն
» ապրեցուցանել զանձինս իւրեանց և զայնոցիկ՝ որք նոցա
» լսենն։

« Զայս ամենայն բարիւք աւանդէ սրբազան առաքեալն
» գրելով առ Տիմոթէոս, Ա. 6. « Զիշեցուցանեմ քեզ որդեակ
» իմ Տիմոթէ՛ւ՛ արծարծել զչնորհն Աստուծոյ՝ որ են ՚ի քեզ
» ՚ի ձեռնադրութենէն իմմէ. զբարւոք աւանդն պահեսջիր ՚ի
» ձեռն հոգւոյն սրբոյ ՚ի մեզ բնակելոյ, փութասջիր զանձն
» քոյ ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ա-
» մօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան, յայդ-
» խորհեաց և ՚ի դոյն կանխեսջիր առ Տիմոթէէ, և պահեա
» զաւանդն խոտորեալ ՚ի պղծոց և ՚ի նորաձայն բանից և հա-
» կառակութեանց »։

« Բայց այժմ ՚ի յետին ժամանակս ըստ հոգեշունչ մարգա-
» բէութեան առաքելոյն վրիպեցան ոմանք ՚ի սուրբ հաւա-
» տոյն՝ խոտորեալք յամբարշտութիւնս և ՚ի մոլորութիւնս դի-
» ւաց, կեղծաւորութեամբ ստաբանք, պատրեալք իւրեանց
» խղճիւն մտաց, և զհետ երթեալք չար բաղձանաց իւրեանց
» կործանին յառաւաքելս նորաձայն հակառակութեանց և մո-
» լորութեանց։

« Ցորոց մին է այժմ ՚ի մերումս ազգիս չիք և թշուառ Իզ-
» նիմիտցի վրդանէս անարժան քահանայն ձեռնադրեալ ՚ի
» վաղ ժամանակաց ՚ի վերայ եկեղեցւոյն Իշխիմիտու ՚ի հոգե-

Digitized by Google

» լոյս Պօղոս արքեպիսկոպոսէ յառաջնորդէ նորին իսկ քա-
» ղաքի : Սա՝ ընդ մարմնասէր և զեղծ բնաւորութեան բա-
» րուցն Թողու զեկեղեցի և զպաշտօն իւր սուրբ , աստ անդ-
» թափառեալ թէ ՚ի մայրաքաղաքին և թէ յիզնիմիտ , բար-
» բանչէ մոլորութիւնս անվայել իւրումն սուրբ կարգի և պատ-
» ուոյ , և լինի պատճառ դայթակղութեան բազմաց , և մերժ-
» եալ յանձնէ իւրմէ բոլորովին զհաւատոցն սրբութիւն՝ զոր
» ընկալեալն էր ՚ի սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստան-
» եայց , հետեւի մոլոր վարդապետութեան նորաշանդից , և
» ակամբ մոլորութիւնս քարոզել յիզնիմիտ , և ՚ի կեսարիա ,
» յԱրեւելս , և ՚ի կոստանդնուպոլիս , և յամենայն տեղիս ուր
» և կոխեալ են ամբարիշտ ոտք սորին , և ընկղմել զպարզա-
» միտ ժողովուրդս ՚ի կորուստ հոգւոյ : Քեռ այսր ամենայնի
» ՚ի գալ նորին դարձեալ ՚ի կոստանդնուպոլիս , կոչեցաք առ
» մեզ սիրով , և բազում անգամ խօսեցեալ ընդ նմա յորդո-
» րանօք և քաղցրութեամբ , առաջի արարաք նմա զհոգեշահ
» խրատս պիտանիս և օգտակարս՝ մերկանալ յինքենէ զամ-
» բարշտութիւնս մոլորական ընթացից իւրոց , և զգենուլ զը
» լուսափայլ զգեստ սուրբ և ուղղափառ վարդապետութեան
» եկեղեցւոյս Հայաստանեայց :

« Ա՛լ նա յամառեալ ՚ի չարիս իւր ըստ օրինակին Յուդայի՝
» որ ոչ անսաց Աստուածային վարդապետութեան կենարարին
» մերոյ Քրիստոսի , զոր ՚ի դէմս այլոց առաքելոց ասէր վասն Յու-
» դայի , « Բայց վայ մարդոյն այնմիկ յոյր ձեռն որդի մարդոյ
» մատնեսցի , լաւ էր նմա , թէ չէր ծնեալ մարդն այն » . զայս
» ոչ լուաւ Յուդա , և ոչ կամեցաւ խորհիլ ՚ի վերայ բանիս , զի
» ոչ կամէր թողուլ զչարութիւն իւր , զոր հանդերձեալն էր առ-
» նել : Նոյնպէս և սա ոչ կամելով մերժել յանձնէ իւրմէ զդի-
» ւական հոգին , առ հասանել չար բաղձանաց իւրոց՝ մերժ-
» եաց զսուրբ Հոգին Աստուծոյ , զոր ընկալեալն էր ՚ի ձեռ-
» նադրութենէ իւրմէ : Արհամարհեաց զուխտն սուրբ , զոր
» ուխտեաց Աստուծոյ ընդ առնուլն զսուրբ կարգն քահանա-
» յութեան . ուրացաւ զեկեղեցին Քրիստոսի՝ որ ծնաւն զնա ,
» և զաւազանն սուրբ՝ որ ընկալաւ զնա յորդեգրութիւն Հօրն
» երկնաւորի : Եւ զայս ամբարշտութիւն իւր ոչ ՚ի գործոց և

Digitized by Google

» ՚ի բանից իւրոց և եթէ եղծցէ յանձին, այլ և յիւրումն իսկ ձե-
» ռագրի՝ զոր ունիմք առ մեզ, ժայթքեալ է յայտնապէս
» զոր ունէր ՚ի սրտին, զմաղձն դառնութեան։

« Եւ որովհետեւ մոլորեցուցիչս այս գուն գործէ մնանել
» ՚ի տանէ ՚ի տուն, և ճանապարհորդել այսր անդր, և պատ-
» րել զպարզամիտ ժողովուրդս մեր ՚ի կորուստ հոգւոյ, վասն
» որոյ իւրթալով զգուշացուցանել զհաւատացեալ սիրելիսդ
» իմ, յիշեցուցանեմ ձեզ ահա զբան առաքելական խրատուն,
» զոր գրէ առ Տիտոս Գ. 10. « Թէ յառնէ հերձուածողէ յետ
» միանգամ և երկիցս խրատելոյ հրաժարեսջիր, գիտասջիր,
» զի թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ՝ անձամբ զանձն դա-
» տապարտեալ ». զի եթէ արհամարհեալ ուրուք զօրէնսն
» Մովսիսի մեռանէր առանց ողորմութեան, ապա որչափ
» սաստիկ պատժոց արժանի համարիչիք զայն, որ արհամար-
» հէ զանարատ հարսն Քրիստոսի զսուրբ եկեղեցին։ Ահա մո-
» լորեալ է այրս այս՝ որոշեալ կամաւ և յօժարութեամբ իւ-
» րով ՚ի միութենէ եկեղեցւոյն Քրիստոսի, թշնամի սուրբ ե-
» կեղեցւոյ և պատուակոտոր անդամոց նորին, գայթակղեցուցիչ
» և մոլորեցուցիչ ժողովրդեան, մատնիչ և սպանող Քրիստո-
» սի ; որդի սատանայի, և ծնունդ նեռին, վատթարագոյն
» քան զանհաւատս և զհերձանոսս, որ հաւատացեալ անուամբ
» կեղծաւորելով ուսուցանէ զամբարշտութիւնս և զմոլորու-
» թիւնս նորաշանդիւց։

« Վասն որոյ ըստ հրամանի Տեառն, թէ զդոյշ լերուք ՚ի
» սուտ մարգարէիցն, որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխա-
» րաց, և ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք, որք ոչ լինայեն
» հօտին »։ Մատթ. Է. 15։

« Ահա սա է գայլ յափշտակող և պատառող, որ հան-
» դերձիւք ոչխարաց՝ այսինքն քահանայական պարկեշտու-
» թեան կերպարանօք գայ առ ձեզ պատառել և յափշտակել,
» և զանմեղ գառինս զմանկունս սուրբ եկեղեցւոյ մերոյ ան-
» խնայ կեղեքել չար և դժոխային ատամամբք պիղծ բերանոյ
» իւրոյ։ վասն որոյ մերժեցաք զդա և արգելաք մնանել ՚ի
» խումբս հաւատացելոց մերոյ իբրեւ զսատանայ և որդի սա-
» տանայի, և կտրեցաք զքահանայութիւն սորա ընդ մէջ քա-

Digitized by Google

„Նիւն աստուածոյ, իբրեւ զհատեալ անդամ ՚ի խորհրդաւոր
„մարմնոյն Քրիստոսի, և իբրեւ ուռ հատեալ ՚ի հորթոյն՝ որ
„առ ոչինչ է պիտանացու՝ բայց միայն ՚ի հուր։

„Ուստի այսու ազդարարական կոնդակաւս պատուիրեմ և
„զգուշացուցանեմ զսիրելիսդ իմ հրատարակելով առ ամե-
„նայն քաղաքս հեռաւորաց և մերձաւորաց, չհայիլ յերեսս
„որա իբրեւ յերեսս Բելիարայ. չընդունիլ զսա ՚ի սուրբ
„տունս ձեր իբրեւ զտնաւեր գայլ յափշտակող, չառնուլ
„զողջոյն որա իբրեւ զհոգեկորոյս մահադեղ, և զգուշանալ
„հանդերձ ամենայն տամբք ձերովք ՚ի տոյնպիսի մոլորեցու-
„ցիչ ամբարիշտ հետեւողաց մոլար վարդապետութեան նոր-
„աղանդից, և աղօթս առնել վասն սոցա առ անչիշաչարն Աստ-
„ուած, զի թերեւս ՚զղջասցին և դարձցին ՚ի ճանապարհաց
„իւրեանց չարաց, և գտցեն փրկութիւն հոգւոց իւրեանց,
„ընդհօք Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է
„օրհնեալ անսպառ յաւիտենից, ամէն։

„Գրեցաւ յայտարարութեան կոնդակս ընդ հովանեաւ
„Մայր եկեղեցւոյ սուրբ Աստուածածնին ՚ի Պատրիարքարանի
„Հայոց, յամի Տեառն 1846 ՚ի յունվարի 12, ՚ի կոստանդ-
„նուպօլիս „։

Յետ բանադրելոյ Մատթէոս պատրիարք զերէցն Վրդա-
նէս, բանադրեաց և զյամառեալ գլխաւոր արբանեակս նո-
րին, որոց անուանքն են այսոքիկ. անհաւատ Ոսկան, գա-
մաղիէլեան երկու եղբարք Պօղոս և Յովսէփ, Աբիսողոմ երա-
ժիշտ, Միքիէլեամ կարապետ, փէրեստէճեան Սահակն. որք
յետ ամաց ինչ չարաչար վճարեցան ՚ի կենաց արտաքոյ կար-
գի հիւանդութեամբ ըստ վկայելոյ Լէոնի բժշկի նոցին՝ ի-
րով իսկ ձեռագրով, զոր գրեաց առ Մատթէոս պատրիարք,
յորում պատմէ, թէ անհաւատ Ոսկանին լեզուն կապեցաւ
զաւուրս երիս և ոչ կարէր խօսել, յետ երից աւուրց բացաւ
լեզուն, և սկսաւ հայհոյել զԱստուած թէ ընդէր ստեղծեր
զիս, և ՚ի հայհոյելն՝ փչեաց զոգին։

Գամաղիէլեան Պօղոսի որովայնն կապեցաւ անլուծանելի
հանգուցիւք, և կարիք որովայնին ընդ բերանն ՚ի վեր հորդ-
եալ խեղդեցին զնա։

Digitized by Google

Յովսեփ եղբայր նորին փախուցեալ ՚ի կղզի օգտափոխութեան աղագաւ փսխէ զարիւն յորդ, և խեղդամահ լինի։

Երաժիշտ Աբիսողոմ ընդոստուցեալ ՚ի վեր յանկողնոյն հարկարէ զգլուխ իւր չորիցս անգամ յերկաթի ծխնելոյզ վառարանին, և պատառոտեալ զգլուխն ցրուէ զուղեղն, և անկանի յերկիր մեռեալ։

Միրիքէլամ կարապետ յոտից մինչ ցգլուխ վիրօք լցեալ, ժահահոտեալ որդնեռաց եղեւ զաւուրս եօթն, և աստակեալ չեղեւ արժանի թաղման ՚ի գերեզմանատան Հայոց, և եղեւ պատճառ մեծի խռովութեան, զորմէ ունիմք խօսել այլուր։

Ստեփան քէրէստէճեան՝ որ գլուխ կարգեցաւ նորաղանդից արքունի հրամանաւ, զճաշակ դժոխոյն յաստիս էառ անձնասպանութեամբ ՚ի կախաղան ելեալ և հրակէզ լեալ ամենայն տամբ իւրով. զմանէ եւս ունիմք խօսիլ ՚ի տեղւոյ։

Բանադրեալքս այսոքիկ ՚ի մի վայր եկեալ և խորհուրդ խորհեալ, եւտուն աղերսագիր առ նախարարսն արուածքին դրծոց Րէշիտ փաշա և առ դենպետան մեծ՝ բողոքելով զպատրիարքէն Հայոց, թէ բանադրեաց զմեզ վանն չընդունելոյ մեր զպատկերապաշտութիւն, և զխոստովանութիւն մեղաց, բայց վանեաց զնոսա Րէշիտ փաշա անարգանօք մեծաւ։

Յայնժամ և նոքա անկան աղերսանօք առ դեռապանն Ամերիկացւոց առաջնորդութեամբ Միսիօնարաց նոցին, և աղաչէին լինել պաշտպան ինքեանց, և հանել զինքեանս ՚ի հպատակութենէ պատրիարքին Հայոց։

Եւ նորա գնացեալ առ փանինկ դեռապանն Անգլիացւոց բողոքէ զպատրիարքէն Հայոց՝ մեղս ծանուննա դնելով ՚ի վերայ նորա, և թէ նզովեալ է զկուտեր և զկրօն բողոքականաց և զեկեղեցի նոցա։

Լսելով բանադրելոցն, թէ դեռապանն Ամերիկացւոց գնացեալ է առ փանինկ վասն բողոքելոյ զպատրիարքէն Հայոց, և վասն համարձակ քարոզելոյ ինքեանց զպիղծ աղանդ իւրեանց ՚ի մէջ ազգիս, փութացան և ինքեանք ՚ի նմին աւուր գիր առ զերասանաց մատուցանել առ փանինկ չարախօսելով և զրպարտելով զՄատթէոս պատրիարքէն, թէ վասն պաշտելոյ մեր

Digitized by Google

զամբիծ հաւատոս լուսերականութեան բանադրեաց զմեզ և հրատարակեաց նզովս ՚ի վերայ լուսերականութեան առ ա֊մենայն քաղաքս յԱնատօլու և ՚ի Րումելի. տանուտեարք վա֊նեն զմեզ ՚ի տանց իւրեանց արտաքս՝ մեղս համարելով բնա֊կիլ ընդ մեզ վասն բանադրեալ լինելոյ մեր, և ծնամբ ար֊տաքս ՚ի փողոցի ընտանեօք մերովք. խանութպանք և ար֊հեստակիցք մեր ոչ ընդունին զմեզ ՚ի խանութս իւրեանց, և չառնեն զառ և զտուր, որով և ոչ կարեմք հայթհայթել զզ պարէն աւուրն, և կամք կարօտեալ և սովալուկ որդւովք և ընտանեօք: Նաեւ հրամայեալ է ՀրՀանակրաց և բեռնակրաց անդադաստից, զի եթէ պատահեացին մեզ ՚ի գաղտնի տեղւոջ աւրեք յատանձին փողոցի, գանեացեն զմեզ անխնայ. վասն ո֊րոյ փակեալ կամք ՚ի տան, և երկնչիմք երևանել արտաքս: Զայսպիսի և որ սոցին նման են սուտ և անիրաւ զրպարտու֊թիւնք, համաբարդեալ յաղերսագրին մատուցին խմբովին առ քանինկ անդ ՚ի ներկայութեան դեսպանին Ամերիկացւոց:

Հաւատացեալ այսոցիկ քանինկ, զայրանայ և բողոքէ առ Րէշիտ փաշա յասելն, թէ "Ուստի՞ իցէ համարձակութիւն պատրիարքին Հնոյց նզովել զՀաւատ և զկրօն մեր. միթէ այս֊քան անաւրէն եղեւ թագաւորութիւնն Անգլիացւոց, զի խայ֊տառակեացին հաւատք իւր ընդ ամենայն Տաճկաստան յա֊տենի եկեղեցւոյ:

Ապա քեաց առ Րէշիտ փաշա և զբանադրեալն զայնոսիկ հանդերձ աղերսագրովն՝ զոր եառն ինքեան, և հրամայեաց նոցա պատմել բանիւ բերանոյ զթշուառութիւն իւրեանց և զաղէտսն՝ զոր կրեն ՚ի պատրիարքէն, և խնդրել, զի թոյլ տացի ինքեանց համարձակ պաշտել զկրօն իւրեանց յՕսմանեան թագաւորութեան:

Գնացեալ նոցա ՚ի Բ. Դուռն, մտանեն ՚ի սենեակ Րէշիտ փաշային, և տեսանեն անդ զՄադսուտ ամիրայ բազմեալ յա֊թոռի: Ընթերցեալ փաշային զաղերսագիրն, հարցանէ զնոսա և ասէ, եթէ գանկատ և բողոք ունիք զպատրիարքէն ձեր֊մէ, ընդէր ոչ եկիք այսր ծանուցանել ցմեզ, և գնացիք առ դեռազանն գլխացաւ տալ նմա:

Եւ մի ոմն ՚ի նոցանէ Մկրտիչ անուն պատասխանեաց անդա֊

Digitized by Google

ղաքաւալը բանիւք և ասէ , մեք զառաջինն եկաք առ ձեզ և աղաչեցաք , և դուք անտես արարիք զհայցուածովք մերովք . վասն որոյ պարտաւորեցաք երթալ Թախանձել զդեսպանն , զի մինչդեռ եղիցի վասն աղատութեան մերոյ ։

Յայնժամ Րէշիտ փաշա առ երեսս կեղծաւորի կատարել զհայցուածս նոցա , և արձակէ զնոսա քաղցրութեամբ , և խոսեցեալ ընդ Մագսուտ ամիրային վասն իրացս այսոցիկ , ՚ի նմին դիշերի կոչէ զՄատթէոս պատրիարք ՚ի տուն իւր , և պատմէ նմա զխօսս դեսպանին , և յանդիմանէ զնա վասն բանադրանացն ։ Եւ Մատթէոս պատրիարք պատմէ նմա զհայհոյութիւնս վրիժանէս երիցուն ՚ի պատրիարքարանի , և զնոլար բարբանջմունս նորաղանդից , որք վեր ՚ի վայր տապալել չանան զազգ և զեկեղեցին հայոց ։

Զոր լուեալ Րէշիտ փաշա՝ հանդղեցաւ , և իրաւացի դատեալ զխոհեմութիւն և զգործս պատրիարքին , հրամայեաց նմա երթալ անձամբ առ Ֆանիւնկ դեսպան Անգլիացւոց , և պատմել նմա զամենայն որպէս պատմեաց լինքեան ։

Եւ եալ Մատթէոս պատրիարք անտի՝ գնաց ՚ի Բերա ՚ի տուն Մխաք ամիրային , և հրաւիրեալ անդ զեպիսկոպոսն Անգլիացւոց , ընդ որում բարեկամացեալն էր յառաջագոյն , և պատմեալ նմա զայս ամենայն , աղաչեաց զնա ՚ի միասին երթալ առ Ֆանիւնկ , և օգնել նմա ՚ի խօսս ։ Հաճեցեալ եպիսկոպոսին ընդ լանդիր պատրիարքին յանձն էառ . և առաքեաց զթարգման իւր առ Ֆանիւնկ ազդ առնել նմա , և խնդրել հրամանն գալ առ լինքն ընդ պատրիարքին հայոց , և խօսակից լինել զկաթեւոր գործոյ լինչ ։

Ընկալաւ դեսպանն զխնդիրն , և ժամադիր եղեւ յերկրորդ տասնեւերորդ ժամու գնալ առ լինքն . և գնացին պատրիարքն և եպիսկոպոսն (ընդ որս և ես պատմիչս) ՚ի պալատ դեսպանին , որ մեծաւ մարդասիրութեամբ ընկալաւ և պատուեաց յոյժ , և սկսան բանախօսիլ , և Մատթէոս պատրիարք պատմեաց նմա զամենայն որպէս պատմեալն էր Րէշիտ փաշային և զհայհոյութիւնս երիցուն զկուսութենէ Տէրամօրն ՚ի պատրիարքարանի , և զուրացութիւն երկուց սուրբ խորհրդոցն մկրտութեան և պատարագի , զորս ընդունին Անգլիացիք , և

Digitized by Google

մերժեն Ամերիկացիք, և եպիսկոպոսն Անգլիացւոց հաստատեաց զամենայն գրանս պատրիարքին, որպէս թէ խորհրդով իւրով արարեալ իցէ պատրիարքն՝ զոր ինչ ապաթեաքն է։

Ընդ որ հաճեալ դեսպանին և համոզեալ, հրամայեաց թէյ և պաքսիմատ և ֆէյ չաքարեղէն ածել՝ի մեծարանս պատրիարքին, և կոչեալ զԲիզանի զաւազ թարգման իւր առ ինքն, հրամայեաց նմա երթալ՝ի վաղիւն առ Րէշիտ փաշա, և հասկացուցանել նմա, թէ անմեղ է պատրիարքն Հայոց զոր ծօց իւրոց՝ զոր ս արարեալ է. ուստի երթէ չարախօսք նորին եկեալ առ ինքն ամբաստանեսցեն զնմանէ, մի՛ հաւատասցէ նոցա, այլ վանեսցէ զնոսա անարգանօք և յանդիմանութեամբ։

Գնացեալ Բիզանի՝ի վաղիւն առ Րէշիտ փաշա, պատմեաց նմա զամենայն. և Րէշիտ փաշա գովեաց զխոհականութիւն պատրիարքին Հայոց և զքաղաքավարութիւն նորա, և նորա ղանդ զամօթի հարեալք խայտառակեցան անարդանօք, և բազումք՝ի նոցանէ զղջացան և դարձան յեկեղեցի իւրեանց և ապաշխարեցին, և օր քան զօր պակասեցաւ թիւ նոցա, և հաշուեցաւ ընդ ամենայն ինն հարիւր երկոտասան ոգի։

Եւ յետ ասացեալ ինչ յաւուրս ցակոբայ պատրիարքին դեսպանք Ամերիկոյ և Բրուսիոյ հաճեցուցեալ զԲանկին ընդ իւրեանս, խնդրեցին՝ի Բ. Դրանէն ընծրհել բողոքական Հայոց զանկախութիւն զպատրիարքէն Հայոց. և Բ. Դուռն՝ի չնորհս նոցա անչատեաց զնոսա իբրեւ որոշ ժողովուրդ, առլով նոցա արքունի հրովարտակաւ զանկախութիւն զպատրիարքէն Հայոց, և եղեւ գլուխ նոցա Փէրէստէճեան Ստեփան եղբայր ցակոբայ պատրիարքին Հայոց՝ մին՝ի բանագրելոց անտի, զորմէ գրեցաք՝ի վեր անդր. և եղաւ պատուանուն նոցա էֆէնտի կամ Բրօթեստան էֆէնտիսի։

Յաւուրս յայսոսիկ նղովեաց և գերմանոս պատրիարք կոստանդնուպօլսոյ զաղանդն Լուտերի յատուկ կոնդակաւ յամենայն եկեղեցիս ցունաց եւս և՝ի հեռաւոր քաղաքս յԱնատոլու և՝ի Րումելի. բայց դատախազ եկայ դեսպանն Անգլիացւոց փանինկ՝ դնայեալ անձամբ առ արքայ և բողոք բարձեալ. և հրամանաւ արքային ընկերացաւ Գերմանոս՝ի պատ-

Digitized by Google

ընտրքութենէն. և յաջորդեաց նմա Մելիտոս մեռոպալիտն Նիկիոյ, որ նորոգեաց զնոյն նշխարն յաւուր մեծի Գենադիոս տէրն՝ի պատարագելն յեկեղեցւոջ պատրիարքարանին։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Ցաղագս ընդունելոյ պատրիարքաց զադամանդեայ պատուանշանս յարքայէ, եւ այցելութեան առ իրեարս, եւ վերստին բացման ձեւարանին Իւսքիւտարու, եւ փոխոխման գլխարկի եկեղեցականաց Հայոց, եւ առաքելոյ կաթողիկոսին զՊանակի առ Մատթէոս պատրիարք։

(1845) ՅԱՒՈՒՐՍ յայսոսիկ ատեան արքայ հարսանեաց քեռ իւրոյ Աւտիլէ Սուլթանի, որ տուաւ՝ի կնութիւն Մէհմէտ Ա-լի վաշային. հանդէս եղեւ յԻւսքիւտար՝ի չայտար վաշա ամարանոցն արքայի, որ տեւեաց զաւուրս եօթն։ Հրաւիրեցան՝ի հարսանիս և պատրիարքունս ծունաց, Հայոց և Հռոմէական Հայոց, և րաբբին Հրէից. և յետ փառաւոր հայկերութիւն ներկայացան արքայի՝ի ընորհաւորութիւն և՝ի շնորհակալութիւն, որ իւրով մարդասիրութեամբն ընկալաւ զնոսա, և հրամայեաց փոխել զչքանչանս նոցա, և տալ զադամանդեայ պատուանշանն բարձր աստիճանի խորհրդականութեան (միւսթէշար փայէսի)։

Զայս առիթ առեալ՝ի ձեռին Մատթէոս պատրիարք, գնաց՝ի Ղատիդիւղ առ բարձրապատիւ սպարապետ Բիզա վաշային՝ի շնորհակալութիւն վասն ընդունելոյն զպատուանշանն իւրոյ խորհրդականութեան, և աղաչեաց զնա շնորհել զձեմարանն Հայոց Իւսքիւտարու, զոր երկու ամաւք յառաջ արարեալ էր տէրութիւնն հիւանդանոց արքունի զօրաց։ Ի յաջորդաւորն գնաց և առ Շէքիպ էֆէնտի նախարարն արտաքին գործոց, և զնոյն աղերս մատոյց նմա։ Եւ յետ քանի աւուրց սպասաւոր մեծ հանեալ զզօրականան՝ի ձեմարանէն, զբանալիսն առաքեաց առ Մատթէոս պատրիարք, որ մեծաւ ու-

Digitized by Google

բախտութեամբ ընկալեալ առաքեաց հրամանն, և ետ տրթել և մաքրել զՃեմարանն, չինել և նորոգել զկերուակատն, և պատրաստել կահս և կարասիս, և յարդարել զամենայն ախտս նորին. և ժողով արարեալ ամենայից և դլխաւոր արհեստաւորաց, առնուլ 'ի Ճեմարանն զյիսուն տղայս յաշակերտութիւն. որոց քառասունքն պարտին տալ 'ի տարուոջն կանխիկ մէն մի երեք հազար դահեկան, և զհանդերձս ամանան և ձմերան, և զգործիս ուսանելեաց: Իսկ տասն տղայք յաղքատ գերդաստանաց լինիցին ձրի 'ի շնորհս ազդիս: Եւ ուսանելիք 'ի Ճեմարանին նախ և առաջ քրիստոնէական վարդապետութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, և գաղղիերէն և ցաճկերէն լեզուք, և ուսումնասիրեսցին կարգեցեալ ցերոյեանց ըստ ժամանակի պատուելին: Ըստ այսմ կարգադրութեան բացաւ Ճեմարանն 'ի 1 հոկտեմբերի 1846, 'ի ներկայութեան սրբազան պատրիարքին, որ օրհնեալ զամենեսեան, եղ վերատեսուչ վռխանորդ իւր զբարեպաշտ ազգասէր և ուսումնասէր Պօղոս աղա Պետրոսեան Օտեան, և նմա յանձն արարեալ զամենայն կարգադրութիւնս, դարձաւ ինքն 'ի պատրիարքարանն:

Ի տալն սրբոյն զպատուանշանս խորհրդականութեան պատրիարքացն, կոչեաց զնոսա առաջի իւր և ասէ, գոհ եմ զձէնջ, զի դուք ազգասիրտք գովելի քաղաքականութեամբ և հեզահամբոյր բարուք պատուասիրէք և յարգէք զվիմեանս երիցեւկութեամբ և ժեծարանօք, և ժողովուրդք ձեր օրինակ բարւոյ տեսեալ 'ի ձէնջ, նոքին եւս սէր և պատիւ ցուցանեն առ իրեարս, և ուրէք սէր և խաղաղութիւն 'ի հպատակք թագաւորութեանս իմոյ, և անհետ լինի կռիւ և կռիւ յամենայն կողմանց: Ցուսամ, զի յայսմ հետէ եւս զայն եղբայրասիրութիւն ունիջիք միշտ առ իրեարս, որով և օր քան զօր բազմապատիկ շնորհաց իմոց լինիջիք արժանի և ընդունող 'ի փառս Աստուածազօր թագաւորութեանս:

Պատրիարքն ծունկս ոչ գետեղով խօսիլ համարձակ զՑաճկերէն բարբառն, միայն խոնարհեցաւ առաջի արքային, և ինչ ոչ խօսեցաւ. իսկ Մատթէոս պատրիարք յերկիր խոնարհ-

Digitized by Google

եկաց գոհ եղեւ զխնամոցն մարդասիրութեան նորա, և օրհնեաց զարքայ և զարդիս նորա ամենայն բարեմաղթութեամբ, ընդ որ հանեցաւ յոյժ ազգայ ։

Ելեալ յերեսաց արքային ՚ի վայր, և բազմեալ յոսկեայ երիվար գարձան մեծաւ շքով ՚ի տեղիս իւրեանց ։

Զայս հրաման արքային առիթ համարեալ Մատթէոս պատրիարքաց, գնաց յԱլրնավուտ գիւղ առ Մելիտոս պատրիարքն Թռնաց ՚ի ընորհաւորութիւն պատուանշանին, և ընկալաւ ընդունելութիւն մեծ արժանաւոր յարգութեամբ և մեծարանօք ։

Յետ երկուց աւուրց և Մելիտոս պատրիարք փոխադարձ քաղաքավարութեամբ եկն յայցելութիւն Մատթէոս պատրիարքին երկու եպիսկոպոսօք և վեց վարդապետօք. և նախ ինձեալ ՚ի Մայր եկեղեցին եղ յատագ խորանն սուրբ և երկիր եպագ. և օրհնեալ զժողովուրդն եղ ապա ՚ի պատրիարքարանն, և մեծարեցաւ յոյժ արժանաւոր յարգութեամբ ։

Զայս լուեալ Ամենօն Հաստունեան պատրիարքն հռոմկեան Հայոց՝ փութացաւ և նա ՚ի յաջորդ աւուրն գալ ՚ի պատրիարքարանն Հայոց յայցելութիւն. և ետես ընդունելութիւն ՚ի Մատթէոս պատրիարքէ արժանավայել մեծարանօք ։ Ցիշատակութեան արժանի է այս, զի ոչ բարեհաճեցաւ արքային եպիսկոպոս մնանել յեկեղեցին մերում գոնէ տեսութեան եզնեական, որով գայթակղեցոյց զժողովուրդն Հայոց. և եղեւ պատճառ հայհոյութեան և տարապարտ բամբասանաց և ատելութեան ։ Իսկ Մատթէոս պատրիարք առ ոչինչ համարեալ զանվայել և դբասրելի քաղաքականութիւն նորին, ընկերութեամբ եկեղեցական և աշխարհական յարգի անձանց գընաց առ նա ՚ի փոխադարձ այցելութիւն, և մեծարեցաւ յոյժ ։

Եկն և մեծ բաբբին Հրէից ՚ի պատրիարքարանն Հայոց յայցելութիւն վեց րաբունեօք և երեք սեղանաւորօք, և ետես պատիւ մեծ. զնոյն արար և Մատթէոս պատրիարք փոխադարձ այցելութիւն առ րաբբին Հրէից, որ արժանավայել մեծարանօք ընկալաւ ընդ առաջ գնացեալ նմա մինչեւ ՚ի դուռն սանին ։

Ա.յս երթեւեկութիւն և այցելութիւն պատրիարքաց առ

իրեարս չէր երբէք եղեալ ի հին ժամանակս մինչեւ ցայն վայր, միայն փոխանորդք պատրիարքաց ի Զատկի և ի Ննդեան երթեւեկէին առ իթեարս ի շնորհաւորութիւն, քայց պատրիարքունք ոչ եւս. յաւուրց անտի Յահիւհ Մէհէմմէտայ՝ որ էառ զկոստանդնուպոլիս ի ձեռաց Յունաց, և հաստատեաց անդ զպատրիարքութիւն Հայոց, չէ ուրուք լուեալ կամ ընթերցեալ ի գիրս, թէ պատրիարք Յունաց անձամբ յայց եղեալ իցէ ի պատրիարքարանն Հայոց, որ այժմ իբրեւ պարտք քաղքենականութեան պաշտէ երթեւեկութիւն իրերաց բանաւոր պատճառանօք կամ շնորհաւորութեան աղագաւ: Եւ այսմ պատճառ եղեւ Մատթէոս պատրիարք, որ բարեմիտ քաղաքականութեամբ իւրով և խոհականութեամբ բարձրացոյց ըզ պատիւ պատրիարքարանին Հայոց, որ լսելի եղեւ առ արտաքս, և սկսաւ զովութեամբ հռչակիլ:

Յայն սակս և Ռուսաց կայսեր որդին բարձրապատիւ մեծ դուքսն կոստանդիանոս՝ որ յայն աւուրսն եկեալ էր ի կոստանդնուպոլիս, լսելով զհամբաւս և զգովեստ Մատթէոս պատրիարքին, բարեհաճեցաւ գալ յայցելութիւն նորին. և նախ իջեալ ի Մայր եկեղեցին, մեծաւ ջերմեռանդութեամբ երկիր եպազ սրբոց խորանացն և համբուրեաց. և ապա ել ի պատրիարքարանն և համբուրեաց զձեռ սրբազանին, որ արժանաւոր պատուով և մեծարանօք ընկալաւ զվեհափառ այցելուն:

Ընկերակից էին մեծ դքսին վեհմախտիպ Իւիֆաթ փաշային ի կողմանէ ազգային և չորեքին հազարապետք, վեհմանուշ դեսպանն Ռուսաց, առաջին թարգմանն Թանչէլի պէյն, և չորեքին ասպետք Ռուս պաշտօնատեարք, և Հայազգի պարոն Յովհաննէս Ա. յակոպովքի երեւելի և քաջ ծովանկարն:

Յետ աւուրց ինչ գնաց օգոստափառ դուքսն կոստանդիանոս ի Պրուսա, իջեւանեցաւ զաւուրս երիս յատաջնորդարանին Հայոց, և ետես պատիւ և ընդունելութիւն մեծ. և ի դարձին իւր պարգեւեաց Գէորգ վարդապետի առաջնորդի քաղաքին մատանի ադամանդեայ հինգ հազար դահեկանաց արժէիւք, և հազար դահեկան սպասաւորաց ազգայնոյն պատանին, և տակի տուի մի թագաթագեան Մատթէոս պատրիարք, որ թագադրեաց էր անդ զսոյնսոյն Ռուսաց:

Digitized by Google

Զեւ էր անցեալ ամիս մի, և ահա եկն ի կոստանդնուպօլիս որդի թագաւորին Դաղղիոյ դուքն Մօնթբանսիէ. և լսելով, զի Ռուսաց կայսերորդին գնացեալ է յայցելութիւն առ Մատթէոս պատրիարք Հայոց, ինքն եւս պարտ քաղաքականութեան համարեցաւ երթալ առնա. որ եկին ընդդեսպանին Գաղղիոյ, և ընդ չորից երեւելի պաշտօնատարաց ընկերակցաց իւրոց, և համբուրեալ զալ սրբազանին խօսակից եղեւ իբրեւ ժամ մի և կէս, և ետես պատիւ և մեծարանս արժանավայել յարգանաց, և դարձաւ ի տեղի իւր։ Այս լսելով ի Մատթէոս պատրիարքէն զսարսափելի հրդեհն Զմիւռնոյ՝ ի դարձին իւրում ի կոստանդնուպօլսոյ գնաց ի Զմիւռնիա, և չնորհեաց աղքատաց հրկիզելոց ողորմութիւն հինգ հազար ֆրանգ։ Առաքեաց և զդամանդեայ տուփ մի մեծագին ի ձեռն դեսպանին Գաղղիոյ առ վառօդապետ Յովհաննէս ամիրայ Տատեան՝ չնորհակալ լինելով զքաղաքավարական մարդասիրութեանց նորա, որ պատուասիրեալ է զարքայազուն իշխանն յաւուրս քառասնօրեայ զգուշութեանն ի հովանոցին Ա.յի Ստեփանայի ի գալ նորին յայնժամ ի Միջերկրական ծովէ։

Յաւուրս յայսոսիկ վախճանեցաւ Մելխոս պատրիարք Յունաց՝ կացեալ ի պատրիարքութեանն զամիս ութ. և յաջորդեաց նմա Անթիմոս մետրապօլիտն Կեսարիոյ, յորոյ ի շնորհաւորութիւն գնաց Մատթէոս պատրիարք բազմութեամբ եկեղեցականաց, և պատուեցաւ մեծաւ յարգանօք։

Տեսեալ անդ Մատթէոս պատրիարք զգլխարկս քահանայից Յունաց, որք կանգեալք էին ի դրան պատրիարքարանին ի պատիւ ընդունելութեան իւրոյ, հաւանեցաւ յայժ, և կամեցաւ փոխել և անհետ առնել զհինաւուրց այլանդակ փակեղս եկեղեցականաց իւրոց, և ըստ տարազու Յունաց չօրինել ի ձեւ վայելուչ. և կարգադրեաց եպիսկոպոսաց և վարդապետաց գլխարկ ի մանուշակագոյն թաւիշէ, և քահանայից՝ ի սեաւ չուխայէ։

Առեալ զայսոսիկ սրբազնափայլ ներսէս կաթողիկոս, առաքեաց զՊանակի աղամանդեայ և թագազարդ մինեակագործ պատկերաւ փրկչին առ Մատթէոս պատրիարք, զոր խորհր-

Digitized by Google

դով ամիրայից տարաւ առ նախարարն ապտաքին դործոց Բէշիտ փաշա առ՝ի ցուցանել, թէ տայցէ հրաման տէրութիւնն կախել զայն՝ի կուրծան ըստ օրինի արքեպիսկոպոսացն Էջմիածնի, թէ ոչ։ Առեալ զայն Բէշիտ փաշա տարաւ առ արքայ, և յետ երկուց ամսոց առաքեաց արքայ առ Մատթէոս պատրիարք կախել՝ի կուրծան թոյլտուութեամբ իւրով ըստ կարդադրութեան կաթողիկոսին։

Այս պատուասիրութիւն կաթողիկոսին զոր եցոյց առ Մատթէոս պատրիարք, զարթոյց զխորհրդածութիւն նախարարացն և արքային իսկ չնորհել աղամանդեայ նշանս երեւելի առաջնորդաց Հայոց և Յունաց, և առաքեցաւ՝ի պատրիարքարանն Հայոց վեց նշան ականակուռ, զորս առաքեաց Մատթէոս պատրիարք, զմին՝ առ Մելքայէլ սրբազան կաթողիկոսն Կիլիկիոյ, և զհինգեսին՝ առ առաջնորդսն երեւելի վիճակաց Սրմաշու կամ Նիկոմիդեայ, Պրուսայու, Զմիւռնիոյ, Մշոյ և Եւդոկիոյ, հայեցեալ յարժանաւորութիւն և՝ի պատիւ վիճակացն և առաջնորդաց, որոց յանձնեալք են՝ի հովուել և՝ի բարեկարգել ըստ կանոնաց եկեղեցւոյ և ըստ օրինաց քաղաքականութեան։

ԳԼՈՒԽ ԾՔ.

Յաղագս աղետալի դիպուածոց՝ի Կոստանդնուպոլիս եւ յարտաքին գաւառս, եւ քողոքելոյ Հայոց ընդդէմ Յունաց վասն զրան վանից սուրբ Փրկչին՝ի Բէթլէհէմ, եւ հաստատութեան հոգևոր եւ քաղաքական ժողովոց պատրիարքարանին Հայոց։

(1845) Ի սմին ամի պատահեցաւ հրդեհ սոսկալի՝ի Զմիւռնիա, յորում այրեցան 3500 տունք յորոց ութ հարիւր եօթանասունքն էին Հայոց. այրեցան և պանդոկք, քաղանիք, մզկիթք, և մատանք, և կահք և կարասիք միանգամայն, վասն հասարակօրէն հաշուեալ, հրատարակեցաւ յօրագիրս երկերիւր

Digitized by Google

միլիան դահեկան Օսմանեան. այրերաւ և սուրբ Յոհաննոս եկեղեցին Հայոց հանդերձ ամենայն անգիւտ զարդուքն և ըզգեստուք ոսկեղէնք և արծաթեղէնք, և եկամուտք իւր՝ որք ամի ամի բերէին հարիւր հազար դահեկանս, տպարանն սուրբ Մեսրոպեան վարժարանին, և տպագրատունն Ա.ըշալույս Ա.րաքատեան օրագրին ամենայն գործեօք և գրովք իւրովք, և Սարգիսեան դպրոցն օրիորդաց. քան ժամ տեւեաց հրդեհն, և՝ի մոխիր դարձոյց զամենայն։

Ա.յսմ աղետալի դիպուածոյս չնորհեցաւ տեղեկութիւն յարքայէ 500 քսակ ոսկւոյ,՝ի մերէ արքային 100, ՝ի թագուհեաց 200, և՝ի նախարարաց 500. ընդ ամենայն 1300 քսակ, բաշխել աղքատաց Հայոց, Յունաց, Հրէից, և Յաճկաց։

Լուեալ զայս սրբազան կաթողիկոսին Ներսէսի՝ առաքեաց հաղար բոլիմբէեւեալ ոսկի վասն նորոգութեան եկեղեցւոյն, և երեսուն ոսկի Սիւնեաց ընկերութեանն, որ էրն՝ի Զմիւռնիա։

Յայսոսիկ աւուրս պատահեցաւ նոյն օրինակ հրդեհ մեծ և՝ի Սամաթիա թաղն կոստանդնուպոլսի. յորում այրեցան չորս հարիւր տունք Հայոց, 150 տունք Յունաց, և 160 խանութք. խղճալիք Հայոց զերեզեցան՝ի հիւանդանոցն՝ի ներկայութեան Մատթէոս պատրիարքին, որ ըստ աղքատասէր բնաւորութեան իւրոյ եւս առ օրին՝ի քսակէ իւրմէ 25 հազար դահեկան՝ի պէտս հարկաւորութեան հրկիզեալ գերդաստանացն։ Օգնեցին բազմք և վաստակաւորք երկոքին բանկիշատակք Յովհաննէս և Պօղոս կերակրովք՝ զգեստուք՝ և արծաթով։

Յետ երկուց ամսոց լսելի եղեւ հրդեհն Տփխիսու, և վըճռեաս նորա եօթն միլիոն դահեկան։

Ի Ֆիլիպէ այրեցան 600 խանութք, և 140 մեծամեծ տունք. և ըստ նորա 10 միլիոն դահեկան։

Ի Զմիւռնիա դարձեալ բաց՝ի վերոյդրելոյն։ Ի պէրգամոն այրեցան վաճառանոցք ամենայն, և ըստ այնմ վեց միլիոն գահեկան։ ՅԱղիդրիանուպոլիս կրկին անգամ այրեցան 600 տունք, 1150 խանութք, տասն վարժարանք, վեց սինակոգայք, երկու մզկիթք և երկու պանգոկք, և ըստ նմին քառասուն միլիոն գահեկ-

Digitized by Google

կան։ Ի Թեսսալոնիկէ այրեցան 2000 տունք և կթղանք։ Ի Զա-
նագ դալէ այրեցան վաճառանոցք ամենայն և տունք։ Թող ղայլ
հրդեհն ՚ի Բերթա երիցս, յԱւսկիւտար երկիցս, յՕրթագիւղ
կրկին անգամ, յԵնիկիգիւղ և ՚ի Գանտիլլի, որք բաղդատու-
թեամբ ընդ վերոյդրելոց մանր հաշուին։

Յետ միոյ ամի եղեւ և երկրաշարժ ՚ի կղզին Միտիլլի, որ
կործանեաց բազում տունս և զեկեղեցիս. և ՚ի Զմիւռնիա կոր-
ծանեցան բազում պանդոկք, և ընդ վլատակօքն մեռան հրն-
դետասան անձինք։

Յայսոսիկ աւուրս աւարտեցաւ շինութիւն երկաթի գոր-
ծարանին ՚ի Ջէթին պուրնու մերձ յՕյի Սոէֆանայ, ուր ձու-
լեցաւ քսան և վեց կանգուն լայնութեամբ միականար երկաթի
կամուրջ իմն վասն կցելոյ զՋրաղանի պալատ արքային ընդ
մեծ պարտիզին, և ՚ի տես այսր գնաց արքայ ընդ երեւելի
նախարարաց, և հաճեցեալ յոյժ, շնորհեաց վերատեսչաց նո-
ցին վառօդապետացն Ըովհաննու և Պօղոսի, և ճարտարա-
պետին կարապետի, և որդւոց նոցին զմեծագին ադամանդ-
եայ տուփս։ Բայց յետ միոյ ամի լապտերալառ աշտարակ նո-
րին՝ որ էր շինեալ ՚ի բարձրութիւն 120 կանգնոյ, յանկարծ
կործանեցաւ. և ՚ի ներքոյ վլատակին մեռան հարիւր տասն
գործաւորք, յորոց եօթանասունքն Հայք էին, և վասն սոցին
դրեաց Ֆատթէոս պատրիարք ՚ի Բ. Դաւան զողոմելի խղճու-
թիւն ընտանեաց սոցին, և հրամայեցաւ տալ յարքունուստ
ամսական ըստ նոցին արժանաւորութեանց։

(1846) Ի սկիզբն գարնան այսր ամի կամեցաւ արքայ յայց
ելանել բերդաքաղաքացն ՚ի գետեղերս Դանուբայ. և յամենայն
ապրիլի եմուտ ՚ի նաւ եռայարկ, ընդ որում երիթային և ե-
րեք չոգենաւք. և չեւ էր ճանապարհ արարեալ մինչև յիսուն
և հինգ, պատահեալ մրրիկ մեծ ՚ի Հիւսիսային հողմոյ, գար-
ձաւ ընդ կրունկն ՚ի կոստանդնուպօլիս ՚ի պալատ իւր։ Յետ
հնգից աւուրց եկ ՚ի կոստանդնուպօլսոյ ցամաքային ճանապար-
հաւ երթալ յայնոսիկ կողմանս, և յայն օր եւս լինելով օդն
մառախլապատ և անձրեւային, զտեղի կալաւ զաւուրս չորս
՚ի գիւղն Ա. Սոէֆանայ ՚ի տան վառօդապետ Պօղոսի Տատ-
եան, որ պաշտեաց զնա մեծավայելուչ յարդանօք, և ետ բե-

Digitized by Google

րել ՚ի դպրոցէն Գումգափուի զքսան տղայս դեղեցկաձայնս տեղեակս երաժշտական երգոց, և նուագեցին առաջի արքայիս։ Ընդ որս հաճեցաւ յոյժ արքայ, և ետ պարգեւս իւրաքանչիւրոցն երկերիւր դահեկան, և դասատուի նոցին Աբիստակեայ Յովհաննէսեան հինգ հարիւր դահեկան։

Յետ չորից աւուրց ելեալ անտի գնաց յԱնդրիանուպոլիս, և զգեցոյց առաջնորդին Հայոց Սարգսի արքեպիսկոպոսի ըզ վերարկու պատուոյ, և ետ նմա նշան ադամանդեայ. և ապա աւուրս երկուս ՚ի տան Յովհաննու Պարտիզպանեանն, և ետ նմա եւս նշան ականակուռ և եղբարց և քեռարց նորա. եբարձ ՚ի քաղաքէն զցամաքային մնացն, և այլ եւս բարիս բազում ցուցեալ բնակչաց քաղաքին, եւ և չրջեցաւ ՚ի Ռուսճուք, ՚ի Շումնի, ՚ի Սիլիստրէ, ՚ի Թըրնովայ, ՚ի Նիկեբօլի, և ՚ի Վիտին. և յայս ամենայն տեղիս նուէրս և նշանս բաշխեաց։

Բդեշխին Մոլտաւիոյ ետ զպատկեր իւր գոհարազարդ. իսկ բդեշխին Վալաքիոյ՝ որք ընդ առաջ եկեալք էին, ետ զՄածագին սուր ոսկի և ականազարդ, և ատենակալ պաշտօնատարոյ նոցա մէն մի տուփ ոսկի։

Տըկրաֆ պաշտօնատէրն Ռուսաց՝ որ եկեալն էր ՚ի դիմաց կայսեր յողջոյն գալստեան նորա, ընկալաւ նշան ասպետութեան (միւշիր փայէսի), և Տէվքօֆին հիւպատոսին Ռուսաց՝ ադամանդեայ տուփ մեծագին։ իսկ Տըրէս պաշտօնատէրն Ղստրիոյ՝ ընկալաւ նշան խորհրդականութեան (միւսթէշար)։ Եւ այսպէս բազում բարիս ցուցեալ ամենեցուն, և իջեալ ՚ի վարնա, եմուտ ՚ի շոգենաւ իւր, և դարձաւ ՚ի Կոստանդնուպոլիս ՚ի պալատ իւր։

Եղեւ հանդէս լուսաւորութեան ղերիս գիշերս յուրախութիւն ամենեցուն, և երեսուն մանկունք ճեմարանին իւքիւտարու նոր երգս յօրինեալ ՚ի վերադարձ արքայի, և մրտեալ ՚ի նաւ եկին առաջի պալատի արքային, և երգելով հաճեցուցին զարքայ և զմայր նորա, որ ետ նոցա զերիս հազար դահեկանս ՚ի պարգեւ, և հրամայեաց այնպէս երգելով երթալ ՚ի տեղիս իւրեանց։

Մեծ էր նեղութիւն ուխտաւորաց Հայոց՝ որք երթային Յերուսաղէմ, գնալ յուխտ ՚ի վանս սուրբ Ծննդեան փրկչին՝

Digitized by Google

որ ՚ի Բէթլէհէմ. վասն զի ծոյնք զղուռն վանիցին միշտ փակ ունէին, և դռնապան մի ծոյն սպասէր ՚ի ներքս դրանն բա- նալ՝ որոց բաղխեն զղուռն: Զարմանք են, զի եթէ Հայ ոմն գնացեալ հարկանէր զղուռն, խլանային լսելիք պահապա- նին, և ոչ լսեր զբաղխիւն դրանն. և խեղճ Հայն սպասէր անդ, գոչէր և աղաղակէր առ պահապանն, կոստանդէ՛ն, կոստան- դի՛ն, բայց զղուռն. և կոստանդին ոչ լսէ. և այնպէս Հայն՝ եթէ տիւ է, արեւակէզ սպասէ անդ. և եթէ գիշեր է, անձ- րեւաթաց և պաղ առեալ ողջունէ անշուշտ զտենդն: Իակ ե- թէ ծոյն ոմն գնացեալ հարկանիցէ զղուռն, լսէ իսկոյն խուլն և բանայ: Եւ զայս գանգատ և տրտունջ բազմիցս արարեալ էին Հայք առ ծոյնս. բայց նոքա պէս պէս սնոտի պատճառա- նօք ներումն խնդրեալ են ասելով, թէ պահապանն ոչ գըտ- եալ է անդ ՚ի պահուն, կամ թէ ՚ի քուն եղեալ է և չէ լուեալ, եւայլն:

Բողոք կալաւ վասն այսր կիրակոս պատրիարքն Երու- սաղէմի առ Մատթէոս պատրիարք. և նա առեալ ընդ իւր ըղ Գէորգ վարդապետ փոխանորդն սուրբ Երուսաղէմի, և ղեր- կոսին ամիրայս գձանիկ և զմիսաք, դնացին ՚ի ՃՀՆէր ՚ի Ծո- վեզերեայ յարկ Ստեփանաքի պէյին, յորում էր և պատրի- արքն ծունաց ընդ երկուց եպիսկոպոսաց և լէօֆլէթ պէյն. և յետ բազում բանախօսութեանց որոշեցին և խոստացան ծոյնք առնել զմի ՚ի չորիցս յայսցանէ. Ա. Զուրիչ բանալի մի տալ Հայոց: Բ. Զսյլազդի դռնապան կացուցանել: Գ. Բաց մնալ այնմ դրան զտիւ և զգիշեր: Եւ Դ. Կից այնմ դրան բա- նալ և ղզուռն մի վասն Հայոց: Բայց և ոչ զմի ՚ի խոստմանցս յայսցանէ կատարեցին. և այնպէս գործն մնաց անարդիւն մինչեւ ցպատուերազին Ռուսաց ընդդէմ Օսմանեան տէրու- թեան, զորոյ զկնի համաձայնութեամբ դաշնադիր տէրու- թեանց եղեւ կարգադրութիւն բաց մնալոյ դրանն զտիւ և զգիշեր դռնապանս կացուցեալ ՚ի նմին:

Լուեալ զայս Ներսէս կաթողիկոս, առաքեաց զկոնդակ օրհնութեան ՚ի Կոստանդնուպօլիս, որ ընթերցաւ ՚ի Մայր եկեղեցւոյն Խումխափուի, յորոյ վերայ արար Մատթէոս պատրիարք սքանչելի ատենաբանութիւն իմն՝ դնելով

Digitized by Google

քնաբան ճառին, « Օրհնաբանին հարց՝ պատկ որդւոյ »։

Ի սմին ամի արար Մատթէոս պատրիարք հիմնադրութիւն եկեղեցւոյ ի յԵրնեփափու, ուր ոչ դոյր յառաջ եկեղեցի. և աւարտեալ գշինուածին նորա էօծ փառաւոր հանդիսիւ ի յունիսի 18 յանուն առաջին լուսաւորչաց մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի սրբազան առաքելոց։ Ցետ երից ամանց էօծ և զեկեղեցին ի Գանտիլլի յանուն երկոտասան Առաքելոց։ Էօծ և զեկեղեցին Գաբաակէօմրիւկի յանուն սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետին։

Հաստատեաց և օրագիր ազգային ի յայտարարութիւն ազգային գործոց և եղելութեանց վաւերացելոց ի պատրիարքարանէ, որ յառաջն կոչեցաւ Հայաստան, և այժմ կոչի Մասիս։

Տեսին ամիրայք, զի պատրիարքն ինքնին առնու և տայ և ինչ ոչ հարցանէ ցնոսա և ոչ խորհրդածէ, այլ ինքնին միայն կարգադրէ զամենայն, դժուարացան յոյժ և զղջացան, զի զսա պատրիարք ընտրեցին։ Ջեռս արկին ի փոխոխել զառաջնորդս, այլ ընդդէմ եկաց նոցա պատրիարքն, և յատեան բացարձակ խօսեցաւ, թէ աշխարհականք ոչ կարեն խառնիլ ի հոգեւոր գործառնութիւնս, զհոգեւորսն հոգալ, քննել, կարգադրել, պատժել, և պահել՝ մեզ է տուեալ և ոչ ձեզ. զառաջնորդն մեք կարեմք ընտրել ըստ խնդրոյ և համահաճութեան քաղաքացեացն, որք յականէ յանուանէ խնդրեն զայս ոք կամ զայն ոք, և մեք հայեցեալ ի խնդիրս և ի համակամութիւն նոցա և յարժանաւորութիւն ընտրեցելոցն ի նոցանէ՝ անօրինեմք զարժանն ըստ կանոնի եկեղեցւոյ։ Բայց եթէ քաղաքական ինչ վէճ և խնդիր պատահիցի, կամ տեղութեան հրաման, կամ ազգային կալուածոց յափշտակութիւն, կամ տնանկաց և հիւանդանոցաց և դպրոցաց այցելութիւն, յայնժամ ժողովեմ զձեզ առ իս, յայտ առնեմ զեղելութիւնն, և խորհրդակից լինիմ ձեզ և օգնական. խակ վասն հոգեւորացն՝ ձեզ չէ փոյթ երբէք։

Զայս լուեալ ի պատրիարքէն խաժռռեցան ամենեքին, և ի վերին երեսս առանց ցուցանելոյ զհաճութիւն ինչ մնկնեցան և գնացին. և խորհուրդ արարեալ ընդ միմեանս, կամեցան արքունի հրովարտակաւ իշխանակից լինել պատրիար-

Digitized by Google

քին, այնպէս դի պատրիարքն ինքնին միայնակ չդործեսցէ ինչ առանց ծանուցանելոյ ինքեանց, այլ ժողով իւրեանց ո-ըոշեսցէ և վճռեսցէ։

Ուստի ձեռն 'ի գործ արկեալ և գօտի ընդ միջ ածեալ՝ 'ի ձեռն ազգասէր ամենայնն Յակոբայ կրճիկեանց որսացոյն ըղ մեծ եպարգոսն Րէշիտ փաշա, և 'ի ձեռն նորա ծանուցեալ արքային, եկն հրաման 'ի Բ. Դուռն. և կոչեցան Մատթէոս պատրիարք և ամիրայք 'ի ծովեզերեայ յարկ արտաքին գործոց նախարարին 'ի յԼիմիրկիւն, և ընթերցաւ անդ հրովարտակն արքային, յորում հրամայէ հատատուիլ երկուց ժողովոց 'ի պատրիարքարանի, մին՝ վասն հոգեւորական գործոց, և միւսն՝ վասն քաղաքականաց։

(1847) Եւ Մատթէոս պատրիարք արար ժողով մեծ 'ի Մայր եկեղեցին, և հրաւիրեաց անդ զեկեղեցականն՝ և զա-միրայս՝ և զգլխաւոր անձինս արհեստաւորաց. և ընթերցեալ զհրովարտակն արքային՝ յանձնեաց ժողովոյն որոշել և ընտրել զանդամս ժողովոցն. և որոշեցան համահաճութեամբ ամենե-ցուն չորեքտասան անդամք հոգեւոր ժողովոյն այսոքիկ.

1. Յովհաննէս եպիսկոպոս քարոզիչ Օրթագիւղի, որ ե-ղեւ պատրիարք երուսաղէմի։
2. Գէորգ վարդապետ փոխանորդ երուսաղէմի։
3. Յովհաննէս վարդապետ քարոզիչ Խասգիւղի։
4. Յովհաննէս վարդապետ քարոզիչ Գուզկունճուգի։
5. Գրիգորիս վարդապետ քարոզիչ Գալատու։
6. Տէր Գաղուստ աւագ քահանայ Օրթագիւղի։
7. Տէր Գէորգ աւագ քահանայ Խասգիւղի։
8. Տէր Յովհաննէս աւագ քահանայ Ս. Խաչ եկեղեցւոյն Իս-քիւտարու։
9. Տէր Պաղտասար աւագ քահանայ Ս. Կարապետ եկեղե-ցւոյն Իսքիւտարու։
10. Տէր Զաքարիա աւագ քահանայ Պերայի։
11. Տէր Գրիգոր աւագ քահանայ Պէշիկթաշու։
12. Տէր Յարութիւն աւագ քահանայ Ղալաթիոյ։
13. Տէր Գրիգոր աւագ քահանայ Սամաթիոյ։
14. Տէր Պաղտասար աւագ քահանայ Գալատու։

Digitized by Google

Իսկ քաղաքական ժողովոյն ընտրեցան քան անդամք այսոքիկ.

1. Յովհաննէս Տատեան վառօդապետ։
2. Պօղոս Տատեան վառօդապետ։
3. Կարապետ Պալեան ճարտարապետ։
4. Յովհաննէս Պալեան ճարտարապետ։
5. Միքայէլ Փիլմիշեան սեղանաւոր։
6. Մագսուտ Սարիմեան սեղանաւոր։
7. Գէորգ Երամեան սեղանաւոր։
8. Մկրտիչ Ձէզայիրլեան սեղանաւոր։
9. Միսաք Միսաքեան սեղանաւոր։
10. Յովհաննէս Եղիա Չէլէպեան հայցագործ։
11. Յովհաննէս Զօպանեան ռակերիչ։
12. Յովհաննէս Սուրմեան ժամագործ։
13. Թովմաճան Մարտիրոսեան վաճառական։
14. Աստուածատուր Սարաֆեան չուխաճի։
15. Բերովբէ Պաշպաղիրկեանեան խաղաղ։
16. Սարգիս Գըլըճճի պաշի։
17. Գրիգոր Թիւյսիւզեան պէզաղ։
18. Կարապետ Տէր Գրիգորեան Թիւլպէնտճի։
19. Մահակ Փիւչիւկ Յակոբեան քերէստէճի։
20. Յակոբ Կրճիկեան ատենադպիր ժողովոյն Լւոֆէր կոչմամբ։

Երկուց ժողովոցս այսոցիկ նախագահ՝ նոյն ինքն պատրիարքն հրամանաւ արքայի որոշեալ և՛ ի հրովարտակին վաւերացեալ։

Յետ որոշման և ընտրութեան ժողովականացն՝ արար Մատթէոս պատրիարք ատենաբանութիւն իմն, յորում յորդորեաց ղժողովեալսն ամենայն՝ ի սէր և՛ ի միաբանութիւն անկեղծ և հաստատուն, և՛ ի խնամարկութիւն հիւանդանոցին, տնանկաց, և մանաւանդ դպրոցաց, և համահաճութեամբ ժողովոյն որոշեցաւ քաղաքական ժողովոյն լինել յամենայն երեքշաբթի աւուր՝ ի պատրիարքարանին՝ հոգալ զազգային գործոց, և տնօրինել զպատշաճեալսն։ Իսկ վասն հոգեւոր ժողովոյն որոշեցաւ՝ ի հինգշաբթի օր լինել՝ ի պատրիարքարանն, և խորհիլ զեկեղեցական դիպուածոց յազատագրին պաւառաց գրեցեր.

Digitized by Google

լոց ՚ի պատրիարքարանն, զխռովոխուրճենէ առաջնորդաց եւ զդատից նոցին, զհարստահարութենէ վաշխից, և զանիւրաւ պահանջմանց սյլոց ազգաց, և զվերաբերեալսն առ գաղաքական ժողովն յայսմ առնել նմին ստորագրութեամբ պատրիարքին ։

Եւ այսպէս անօրինեալ ղամենայն, զրեցան անուանք երկաքանչիւր ժողովականացն, և առաքեցաւ ՚ի Բ. Դուռն հաստատել զնոսա արքունի հրովարտակաւ, եդեալ պայման ժողովականացն, յերկու տարին միանգամ լինել փոխոխութիւն ժողովական անդամացն, և զայլս յարժանաւորաց ընտրել փոխանակ նոցին և հաստատել արքունի հրովարտակաւ . և այսպէս կարգադրեալ զամենայն, արարին սկզբնաւորութիւն ժողովելոյ ՚ի 20 մայիսի 1847 ։

ԳԼՈՒԽ Կ·

Ցաղագս ազատութեան Հայոց քանդելոց ՚ի Վասպուրական, ՚ի Տարօն, եւ ՚ի Բագրեւանդ գաւառս ՚ի հարստահարութենէ բարբարոս ազգին Մարաց՝ չնորհիւ Մատթէոս պատրիարքին ։

(1847) Քանի ամօք ինչ յառաջ անողորմ և ապստամբ ազգն Մարաց ունեցուվ ՚ի գլուխ իւրեանց զԼոան Մահմուտ և զՊէտէրխան պէյ, հարստահարէին զբնակիչս վիճակ և Տարօնոյ և շրջակայ գիւղօրէից, կողոպտէին զվանօրայս և զեկեղեցիս, կերէք էին և սպանանէին . և կուսականն կարնոյ և բազմաշխատ վանայ յոռնդէտս լինէին զչարագործութեանց նոցա . և ոչինչ փոյթ էր նոցա, ՚ի երեւս և ինքեանք առնուին զգաւազինն իւրեանց յաւարէ անտի՝ զոր կողոպտէին նոքա, և ոչ զդէմ ունէին նոցա կամ պատերազմաւ և կամ հանդուգնութեամբ .

Ուստի զղեկաւոր սոցին Մատթէոս պատրիարք, բողոք եւ բարձ երկիցս ՚ի Բ. Դուռն. և յերրորդումն նուագս գրեցոյց,

Digitized by Google

եթէ քննակիչք վանայ ոչ կարելով այլ եւս տոկալ անըմբեռ տառապանաց՝ զոր հասուցանեն Մարք ի վերայ նոցա, որոշեալ են ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ և գաղթել ի Ռուսաստան. և որովհետեւ ինձ յանձնեալ է ի բարձրագոյն տէրութենէ ձերմէ հսկել ի վերայ նոցա, և ըղդուշանալ եղից և մտից նոցին, պարտ անձին վարկայ կանխաւ ազդ առնել տէրութեան ձերում, զի մի առ յապայս յանցաւոր գտանիցիմ առաջի ձեր։

Առ այս խորհուրդ արարեալ ի Բ. Դուռն, պատրաստեցաւ կազմեցաւ բանակ պատերազմող զօրաց, և սպարապետ կարգեցաւ Օսման փաշա այրն քաջ և զօրաւոր. և դիմեաց ի վերայ ապստամբացն այնոցիկ ի Հիւսիսոյ և ի հարաւոյ նուաճել զնոսա անճողոպրելի փախստեամբ։

Յայնժամ գրեաց և Մատթէոս պատրիարք առ առաջնորդս Տիգրանակերտի, Բաղէշու, Բալուայ, Կարնոյ, և վանայ, զի ժողովուրդք իւրեանց եկեցեն ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչեւ ցարդ, յամենայնի օգնական լինիլն և ծառայեացեն արքունի բանակին, և զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իւրօք առաջի արքայի։

Ժողովեցան Հայք վասպուրական աշխարհին, և մարտ եղեւալ յարձակեցան ի վերայ ձէզիրէ նահանգին, ուր որչացեալ ամրացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, և այնչափ ի նեղ արկին զՊէտէրխան պէյ նոցա, մինչեւ չեւ յոգիս լինել նմա ապաստան, և յուսահատեալ յանձնեաց զինքն սպարապետ Օսման փաշայիւն հանգերձ իւրով գերդաստանաւն, որ իսկ և իսկ առաքեաց զամենեսեան զնոսա ի Կոստանդնուպոլիս, և տէրութեան ամրոցի նորուն, և Պէտէրխան պէյ աքսորեցաւ ի կրետէ կղզին ընտանեօք իւրովք։

Իսկ խան Մահմուտ գլխաւորն Մարաց ըմբռնեալ ի վանցի Հայոց և կապանաւորեալ յանձնեցաւ ի ձեռս Օսման փաշային, և ածեալ ի կոստանդնուպոլիս ընտանեօք իւրովք աքսորեցաւ ի Սիլիստրէ. և բազումք յապստամբացն մնացեալ ի սուր. և մնացեալքն ցրուեցան ի կողմանս Ռուսաց և Պարսից։

Digitized by Google

Ա. յս լուր յաղթանակութեան արքունի զօրաց հասեալ ի Կոստանդնուպոլիս, ցնծութիւն մեծ պատճառեաց ազգին Հռոմայոց, և հրամանաւ Մատթէոս պատրիարքին երգեցին յառաջնայն եկեղեցիս Հայոց «Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր» մինչեւ ցվերջն (Սաղմոս) յաղագս աղաւթութեան Հայոց քնակեալ չաց վասպուրական աշխարհի և չրջակայից նորա ի հարուստս հարութենէ անողորմ և բարբարոս ազգին Մարաց։ Եւ այս գոհանութեան համբաւ եհաս մինչեւ ի լսելիս արքային, որ ի ձեռն ներքինապետին իւրոյ թայֆուր աղային ձանոյց մանաւանդ գրով զչնորհակալութիւն իւր։

Ուստի և պարտաւորեցաւ Մատթէոս պատրիարք առաքել կոնդակս առ ամենայն գաւառս Օսմանեան տէրութեան չնորհակալ և բարեմաղթող լինել արքային և իւրոյ մեծազօր տէրութեան, և ասն ցնծութեան կատարել վանս աղաւթութեան ազգիս Հայոց ի բռնութենէ անողորմ բարբարոսաց, զոր եւս դիւրահասկանալի լինելոյ ամենեցուն բնակելոյ ի գաւառսն յայնոսիկ՝ գրեաց յաշխարհաբառ լեզու, որ ունի օրինակ զայս։

«Ի ՏԷՐ Մատթէոս արքեպիսկոպոսէ և պատրիարքէ մեծի
» արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ՝ գիտու-
» թիւն լիցի համօրէն լրութեան սուրբ եկեղեցւոյդ։

«Յայտնի է բարեպաշտութեան ձերում, որ մեր սիրելի
» հայրենիքը՝ Հայաստան աշխարհք՝ որ ամենայն աշխարհաց
» և ազգաց առջեւ Հայոց աղդիս պարծանք մըն էր իրեն ան-
» համեմատ և աննման ձիրքերովը, այսքան հարիւրաւոր
» տարիներէ ի վեր՝ ապստամբ և աշխարհասեր իշդաց անո-
» ղորմ և անգութ բռնակալներուն ձեռքը ընկած մատնուած,
» աւերակ և անապատ էր դարձեր, և անմխիթար բարբարոս
» կուլար կողբար իւր սիրելի զաւակունքը՝ ողորմելի ազգս
» Հայոց, որ այն մարդակերպ գազաններուն պատառոտ ժան-
» եացը որս ընկած էին տարաբաղդութեամբ։

«Եւ որովհետեւ ամենողորմն Աստուած իսպառ չի ձգեր
» իւր ժողովուրդը անասնելի դերութեան մէջ, ընչաքէս օրի-
» նակ է մեզի իսրայելացւոց ազատութիւնը եգիպտացւոց

Digitized by Google

» դերութեանէն, նախեցաւ երկինքէն Հայոց աշխարհին վրայ,
» որ ան վայրենի գրդաց անասուններուն պատճառ և ճարակ էր
» ազգիս, և իւր առաջնասեղծ մարդոյն ամենագեղեցիկ գնա-
» կութիւնը ան դանաններուն որջ էր դարձեր, յիշեց իւր
» թարերար կամքը Հայկ նահապետին պատուածապաշտու-
» թեան հեռանդը, որ աշխարհիս մէջ առաջին կռապաշտու-
» թեան հեղինակ՝ Բաբելոնեան աշտարակին վրայ զարձեն,
» ցոզ Բէլը՝ իւր Աստուածաղօր ազեղովը զարկաւ գետինը
» փուեց անոր վիմխարի մարմինը։

« Ան աննման և գեղեցիկ աշխարհը՝ հինա տասնկ անողորմ
» բռնակալներուն ձեռքը ողորմելի տեսնելով, զթացաւ ողոր-
» մեցաւ իւր Աստուածային անհուն բարերար կամքը, չար-
» ժեց 'ի գութ և 'ի կարեկցութիւն՝ բարեգութ և բարեխնամ
» Մուլթան Ապտիւլ Մէճիտ արքային մերոյ բարեսիրտ և ո-
» ղորմած բնաւորութիւնը, որ իւր օգոստափառ կայսերա-
» կան վեհափառութեամբը հրամայեց աս աշխարհին պաշ-
» տութիւնը այն անիրաւ բռնաւորներուն ձեռքէն։

« Եւ որովհետեւ աս բարերարութիւնը յատկապէս Հայոց
» ազգին վերաբերեալ է, մենք ալ պարտաւորեցանք երախ-
» տագիտութեան օրինօք գիշեր ցերեկ հսկում ազօթք և պա-
» տարագ բնել առ Աստուած, որ իւր ամենակարող աջը հո-
» վանի և օգնական ընէ Տէրութեան հնազանդ և բարեկարգ
» և արիաբար պատերազմող զօրաց բանակին։

« Օրհնեալ է Աստուած, և օրհեալ է աչ նորա ամենաղօր
» և ամենայաղթ, որ լսելով դպրատանց անմեղ տղայոց յո-
» թովմասոս բարեբանութիւնը, և քահանայից յատուկ և ջեր-
» մեռանդ և արտասուալից բազկատարած բարեմազթու-
» թիւնը, ձգեց վահ և երկիւղ մը թշնամեաց խաչիցերուն
» մէջ, կորագլուխ ըրաւ, այն բռնաւորներուն գլխաւորները
» խան Մահմուտը և պէտէրխան պէյը, որոնք ընդհանուր զօ-
» րապետին ձեռքը ինկած յուսահատ և ամօթահար, իրենց
» կենացը խնայել կը խնդրէին, և շնորհեց աս մեծապանծ և
» աքանչելի յաղթութիւնը նորին կայսերական վեհափառու-
» թեան բարձր անունին և հզօր հրամանին. որով և ազատե-
» ցաւ Հայաստան աշխարհը աս դառն վիճակէն աս անտա-

Digitized by Google

» նելի պերուզեհնեն . և կը յանպատրաստ կը նա-
» րոգի կը պայծառանայ , և իւր առաջին ազնուելի տեսիլը
» և պերճակուրխինը կ'առնայ շնորհին բարերգութեամբ և ազա-
» տած արքային մերոյ աշխարհաշէնն և մարդասեր բնաւորու-
» թեանը :

« Տեսէք հիմա և մտածեցէք այս առաջիկայ խօսքիս վրայ ,
» որ սիրոյ ծանուցանեմ ձեզ ամենեցուն , որ որքան մնասէք ,
» այնչափ աւելի պիտի զարմանաք և ապշիք վերհասած Լա-
» զարին մերոյ անհամեմատ սիրոյն և յաւուրն խնամոցը
» ազաւելութեանը , որ ունի Հայոց ազգին վրայ , վասն զի
» նորին կայսերական վեհափառութիւնը լսելով և իմանա-
» լով մեր բազկատարած աղաթքն և խնդրուածքը որ ը-
» րինք առ յաղթութեանս համար , և մեր ուրախութիւնը և
» անպատմելի խնդութիւնը առաւել եւս չպատշճնել ուզե-
» լով , և ինքն ալ ուրախակից ըլլալով մեզի , ամէնս նոյեմ-
» բերի 22ին շաբաթ օրը՝ իւր առաջակայ սիրելի պրօշոնա
» աէրներէն մէկ հաւատարիմ մտերմին ձեռօքը հրաման խրր-
» կեց նուաստութեանս ՚ի պատրիարքարանս , ըսելով :

« Ձեր աղօթքը և խնդրուածքը՝ որ ըրիք եմ առ բարե-
» յաղող յաղթութեանս վրայ , լսեց Աստուած և ընդունեց , և
» շնորհք ըլաւ իմ թագաւորութեանս ապ վառաւոր յաղթու-
» թիւնը , որուն կը բաղձայի իմ Աստուածատանգ հպատակ
» ներուս կատարեալ հանգստութեանը համար . Արդ՝ դուն
» պատրիարք , քու բոլոր ազգիդ խաղար տաս և խնայընես ,
» որ ես ալ ուրախ եմ ձեզի հետ , և ընդունելի եղաւ իմ
» թագաւորութեանս ձեր կատարեալ հաւատարմութեան սէրը
» և փափագը , և իմ փառահեղ թագաւորութեանս առջեւ
» ներկայացեալ տեսայի պէս եմ ձեր բարեմտղմութեան
» հանդէսը՝ որ ըրիք և կընէք . Աստուած ամենաբարին իւր
» շնորհօքը պահպանէ զձեզ զամենեսին » :

« Զարմացէք այժմ աս աքանչելի մարդասիրութեանը վը-
» րայ՝ որ ունի վեհափառ թագաւորը իւր հաւատարիմ հպա-
» տակ ազգաց վրայ , և աս ամենառատ բարերարութեանս
» համար տօն ազգութեան կատարեցէք միաբան խնդրուա-
» ծովք և շնորհակալութեամբ առ Աստուած , ըսելնք ամենքս

» միաբերան, կեցցէ բարեզուէթ և բարեյաղթ չեվքէթլու
» Սուլթան Ազտուլ Մէճիտ խան ինքնակալ կայսր և թագա-
» ւորն մեր. կեցցէ տէվլէթլու խամէթլու վալիտէ Սուլթան
» ալիյէթիւշշան մայր նորին վերհափառուէթեան. կեցցէ՛ն
» կայսերազարմ և ծիրանածնունդ տէվլէթլու նէճապէթլու
» Շահզատէք արքային մերոյ՝ի պարծանս Օսմանեան հզօր
» թագաւորութեան, աչն ընդդին հովանի և օգնական լինի
» ՝ի վերայ նորին վերհափառուէթեան, զօրացուսցէ և կարո-
» ղացուսցէ զբարձրապատիւ և զվեհմախռայլ նախարարս տէ-
» րութեանն՝ի պաշտօն փառաւորութեան իւրեանց, և զազգս
» Հայոց ընդ հովանեաւ քաղցր աչաց նորին պահեսցէ և պահ-
» պանեսցէ՝ի խնամս ողորմութեան իւրոյ, ընդհօք և մար-
» դասիրութեամբ ցեղոն մերոյ և փրկչին Քրիստո-
» սի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

« Գրեցաւ հանդիսաւոր բարեմաղթութեան կոնդակս
» ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի Մայր եկեղեցւոյ՝ի
» պատրիարքարանի ամենայն Հայոց, որ՝ի Կոստանդնու-
» պօլիս »։

1847 Դեկտեմբեր 9.

Յետ երկուց ամսոյ հիւանդացաւ մայր արքային, և խնդրեաց, զի Մատթէոս պատրիարք ընթերցցի՝ի վերայ իւր զաւետարան և արասցէ աղօթս, և զայս խնդիր նորա դրեաց ներքինապետն մեծ թայֆուր աղա առ պատրիարքն, որ իսկ և իսկ հրամանս առաքեաց յամենայն եկեղեցիս զաւուրս ութ «Տէր ողորմեա» ասել. և ինքն առեալ ընդ իւր զվրդանէս վարդապետ զաշակերտ իւր՝ և զշուրջառ՝ և զՈւտուարան՝ և զնարեկ, կոչեաց զվառօդապետ պօղոս Տատեան և զկրճիկեան Յակոբ, և նոքօք հանդերձ զնաց՝ի պալատն արքային, և ծանուցեալ մերն արքային զգալուստ պատրիարքին՝ և հրաւիրեալ՝ի սենեակ նորա առանձինն հանդերձ ներքինապետն, էառ չուրջառ, և Ուտուարան՝ի ձեռին եմուտ՝ի ներքս՝ի սենեակն. զոր տեսեալ հիւանդին՝ զգաց յինքեան սոսկումն և եկաց. յայնժամ ընթերցաւ Մատթէոս պատրիարք՝ի վերայ նորա զՈւտուարան քժշկութեան և զնարեկ, և զփառաւոր.

Digitized by Google

և քաջալերեաց զնա՝ յուսադրելով զառողջութիւն և զվերա-
կենդանութիւն ողորմութեամբն Աստուծոյ. զոր լուեալ նորա
հաճեցաւ յոյժ, և չնորհակալութեամբ մեծաւ չնորհեաց զա-
դամանդեայ տուփ մի մեծագին՝ պատրիարքին, և զտուփ մի
գոհարազարդ՝ Պօղոսի Տատեան, զժամացոյց մի ոսկի՝ քա-
հորայ կրճիկեան, և զգոհարազարդ գաւաթ մի արճայ՝ վրդա-
նէս վարդապետին. և մեծաւ պատուով դարձոյց յետս։

Եւ յիւնիերորդ աւուր առաքեաց ներքինապետն մեծ զա-
ւետիս առողջութեան մօրն արքային առ Մատմէոս պատ-
րիարք, որ ուրախացեալ յոյժ փառս ետ Աստուծոյ, և առաք-
եաց գիր ուրախակցութեան և բարեմաղթութեան առ ներ-
քինապետն մեծաւ գոհունակութեամբ։

Յետ երեսուն և հնգից աւուրց առաքեաց մայր արքային
զդիմի մեծագին և պատուական առ Մատմէոս պատրիարք՝
'ի ձեռն արքունի ճարտարապետ Նիկողայոսի Պալեան. և
Մատմէոս պատրիարք արար զնա շուրջառ ասկեթել վերջա-
ւորօք, և առաքեաց ընծայ առ Ներսէս կաթուղիկոս 'ի սուրբ
Էջմիածին։

ԳԼՈՒԽ ԿԱ.

*Յաղագս փոխադարձ այցելութեան Ֆերիէրի կարդինալին
Հռոմայ 'ի պատրիարքարանն Յունաց եւ Հայոց, ուր եւ
յաղագս բանախօսութեան 'ի վերայ հաւատոյ։*

(1848) Ի ՍՄԻՆ ամի առաքեցաւ Ֆերիէրի կարդինալն
Հռոմայ 'ի կոստանդնուպոլիս մեծագին ընծայիւք, և ընկա-
լաւ զնա արքայ արժանավայել յարդանօք, և վարձեալ գհիւ-
րանոցն Պլօնտել 'ի Բերա առնոյն կարեւոր հանդերձանօք,
հրաւիրեաց զնա նստիլ առաջ, ցորչափ և կամք իցեն նմա մը-
նալ 'ի կոստանդնուպոլիս։ կարգեաց 'ի նմա հիւրընկալ և
առնեաս զԱրտապիոն Թարգման Բ. Դրան, և առաքեաց հրա-

Digitized by Google

մեռ ՚ի պատրիարքարանս Յունաց և Հայոց երթալ առ նոյն՝ ցեղս[illegible] քաղաքավարական օրինօք։

Ընդ կամեցաւ պատրիարքն Յունաց երթալ յոտն նորա, վասն[illegible]ութիւն և անպատուութիւն լինն համարելով իւրումն բարձր աստիճանի, որ տիեզերական պատրիարք գոլով՝ հաւատարմապարտ ճանաչէր զինքն պապին Հռովմայ՝ որ առաքեալն էր ինա, բայց և ոչ կարելով անցանել ըստ հրամանն Բ. Դրան, պատճառաց տկարութիւն անձին մեծ, և առաքեաց յիւրմէ կողմանէ փոխանորդս արար զմեծարանալիսն Ս[illegible]րակիոս զՄիանասիոս ընդ երկուց եպիսկոպոսաց ողջունել զդալուստ նորա. և գնացեալ նոցա տեսին ընդունելութիւն մեծ, բայց քառորդ մի ժամու կեցեալ վերադարձան յետս։

Գնաց և Մատթէոս պատրիարք, առեալ ընդ իւր զվերջինսն վարդապետս, զՅէրոյէնդ Յովհաննէս պատուելին, և զքարտուղար իւր զԱւետիս Պէրպէրեան, և զԹարգմանն Մելկոնիկ Սղաթոն, և մտեալ առ նա՝ ողջունեցաց զդալուստ նորա, և քաղաքավարութեամբ խօսակցեալ ընդ նմա իրրեւ ժամ մի, ետես պատիւ մեծ և վերադարձաւ։

Յետ տասն աւուրց գնաց և Ֆէրիէրի ՚ի պատրիարքարանն Յունաց փոխադարձ այցելութեամբ, և ոչ՝ որպէս արժանն էր, պատուեցաւ. բայց իրրեւ եկն ՚ի պատրիարքարանն Հայոց, ընդ առաջ ելին նմա երկոտասան քահանայք փիլոնազգեցեալք, և յետ նոցա վեց վարդապետք և երկու եպիսկոպոսք վեղարաւորք, և յետուստ նոցա ինքն իսկ Մատթէոս պատրիարք խաչաձեւ դլխարկաւ. և բազմեցուցեալ զնա ՚ի վեր կոյս նըստարանին՝ որ վասն նորա պատրաստեալն էր ոսկեթել և ասղեղազարդ հանդերձանօք, նստաւ և ինքն առընթեր նորա, և երկու եպիսկոպոսքն յաջմէ և յահեկէ, և պատուեաց զնա թէյիւ և քաղցր օշարակաւ չիւմմաս կոչեցեալ, և քաղցրաւենեօք վարդի և պէրկամոթի, և թիրալիր յորդորմամբ գործոյ յետս։

Յետ մինչ ամենան առաքեաց Ֆէրիէրի առ Մատթէոս պատրիարք զկնդակ մի տպեալ Հռոմէն, յորում յետ գաւակ[illegible]ցաթար խօսելոյ ՚ի վերայ հերձուածոց և մոլորութեանց, զոր երեւեցան վարկեցուոլ ՚ի սկզբանէ ազգի՝ զրէ, թէ «Այժմ

եան եկեղեցին Հայոց է մոլորեալ և անջատեալ ՚ի յուղղափառ շաւղաց նախնի հարց իւրոց ». և հրաւիրէ զմոլորութիւնսն ՚ի բաց քեցել յանձնէ իւրեանց, և ողջամիտ վարդապետու- թեամբ ընդունել զնախնի ուղղափառութիւն իւրեանց, և մի- անալ ընդ գլխոյն եկեղեցւոյ։

Այսմ ոչ կարելով տանել Մատթէոս պատրիարք, կոչեաց առ ինքն զվառօդապետսն Տատեան զՊօղոս և զԲովհաննէս, և զճարտարապետն արքունի զկարապետ Պալեան, և խօսե- ցաւ ընդ նոսա առնել գանգատ ՚ի Բ. Դուռն զայսմ անվայել քաղաքավարութենէն՝ զոր արար Ֆէրիէրի. բայց նոքա լաւ չհամարեցան զխորհուրդ նորա առնել այսպիսի ինչ. և ինք- եանք յանձն առին երթալ առ նա այցելութեան աղագաւ, և ՚ի լինել խօսից՝ ծանուցանել նմա զայաւ սրտի պատրիարքին Հայոց վասն տեառնակին այնմիկ՝ զոր առաքեալն է առ նա։

Գնացին վառօդապետքն երկոքին, և յետ քաղաքավա- րական բանից ծանուցին նմա՝ որպէս խորհեալ էին. և խընդ- րեցին ՚ի նմանէ, զի ցուցցէ զմոլորութիւնսն զայնոսիկ, յորս անկեալ է այժմ եկեղեցին Հայոց ըստ բանի կոնդակին։

(1848) Յանձն էառ Ֆէրիէրի ուրախութեամբ զառաքար- կութիւն սոցա, և խոստացաւ գալ ՚ի տուն Բովհաննու Տատե- եան ՚ի պէշիկթաշ, յոր հրաւիրէին զնա վառօդապետքն, և խօսիլ ՚ի վերայ այնց՝ զորոց կարծիս ունէր Հռովմայ եկեղեցին ՚ի վերայ Հայոց։

Այդ արարին և Մատթէոս պատրիարքին զորոշումն իւր- եանց. և նա գնաց ՚ի տուն Բովհաննու Տատեան։

Եկին անդ և կարդինալն Թարգմանաւ իւրով. և յետ մե- ծաձախ ընկերացն մտին ՚ի քարուկիր սենեակն, և հանեալ զսպասաւորսն արտաքս բակեցին զդուռն, և սկսան խօսիլ։

Առաջարկեաց Մատթէոս պատրիարք առ կարդինալն, զի ցուցցէ զմոլորութիւնսն Հայոց. և նա սկսաւ զհին անուսի զրպարտութիւնսն յառաջ բերել. յորոց վերայ բազում անգամ եղեալ են վէճք, և ցուցեալ են Հայք զուղղափառութիւն իւրեանց համաձայն յամենայնի սուրբ գրոց և սրբոց հարց, որպիսի է խնդիրն ՚ի վերայ երկուց բնութեանց, ՚ի վերայ բըղխ- ման սուրբ հոգւոյն, ՚ի վերայ կայանին ննջեցելոց, ՚ի վերայ

Digitized by Google

վերջին օծման, և ի վերայ գլխաւորութեան Հռովմայ աթոռոյն։

Զպատասխանիս սոցին խօսեցաւ Մատթէոս պատրիարք ըստ դաւանութեան եկեղեցւոյն Հայոց, զոր դաւանի մինչեւ ցարդ. զի ոչ եթէ յառաջն այնպէս դաւանէր, և այժմ այլազգի. և մի առ մի բացատրեաց առաջի նորին զճշմարիտ դաւանութիւնս Հայոց, և զթշնամեաց նոցին զհռովմէական գօլէճեանց զանխիղճ և զաստուածընդդէմ զրպարտութիւնն, յոր ժպրհեցան յայսչափ ժամանակաց հետէ ծեփել տղմաւ բերանոյ իւրեանց զլոյս արեւու եկեղեցին Հայոց։

Զարմացաւ կարդինալն, զի ոչ՝ որպէս կարծէրն և լուեալ էր, եւտես այնպէս, և խոստացաւ միանգամ եւս տեսանել զմիաբանս և խօսել. և ըստ վերջին որոշման գրել ի Հռովմ առ Պապն զվկայական իւր յաղագս ուղղափառութեան Հայոցառաքելական եկեղեցւոյ. և որոշեցաւ յերկրորդում նուագին խօսիլ Աբբայ Ստեփանոս ի տան Պօղոսի Տատեան։

Յայսմ միջոցի առաջարկութեամբ կարդինալին եղեւ խօսակցութիւն ի մէջ իւր և Պրուսացի Տէրոյենց Բօվհաննէս պատուելոյն, որոյ իսկական ձեռագրովն գտեալ զբնագիր խօսակցութիւնն, կարեւոր դատիմք անտ դնել զիսկական օրինակն։

Պատմութիւն խօսակցութեան Մօնսինեօր Ֆերիէրի դեսպանի արքային Ֆռանսայ առաջի Հռովմայ ի Դուռն Օսմանեան մեծի տէրութեան, եւ Պրուսացի Բովհաննէս Տէր Կարապետեան Տէրոյենց · 6/18 Փետրվար 1848։

Յունվար 29 հինգշաբթի օրը Տ. Ֆերիէրի արքեպիսկոպոսը պատրիարքարան գալով, և արքային պատրիարքը և կրճիկեան Բակոբ աղային և վերոյիշեալ Պրուսացի Բովհաննէսը մէկ կողմէն, և Տ. Ֆերիէրին, և հետը իրրեւ թարգման գտնուող Հ. Ամբէն վարդապետը մէկ կողմէն, բաւական ժամանակ տեսութիւն ընելէն ետքը, փետրվար 3 երեքշաբթի օրը Լազարիսթ քահանայներէն միւսիւ Կամպա անուն քահանային գիր խրկեց Պրուսացիին, որ Տ. Ֆերիէրին առանձին տես-

Digitized by Google

սութիւն ընել կուզէ հետը. գրով պատասխանելով օր որոշ ուեցաւ փետրվար 6 ուրբաթ օրը, և այն օրը միւսիւ ղամպա և միւսիւ Ֆուժըրէ քահանայներուն ընկերակցութեամբ Տ. Ֆերիէրիին դեսպանատունը երթալով, այն տեղի խօսակցութիւնը այս տեղս գրեցանք։ Եւ որովհետեւ այս գիրս նոյն օրը չգրուեցաւ, ուստի չեմ կրնար ապահովցնել որ հոն եղած խօսակցութիւնը բառ առ բառ հոս գրուած է. այլ խօսակցութեան նիւթը և խօսուած խօսքերը մեկ մտքի վրայ են հոս գրուածներուն հետ։

Տ. Ֆերիէրին առաջին խօսքը բացաւ ըսելով. Ձեր պատրիարքին հետ տեսնուելով շատ ուրախացայ, որ սիրոյ և միաբանութեան փափաք մը ունի. այս փափաքը Հռովմէական Հայոց պատրիարքին քովն ալ կը տեսնեմ. և ինձի այս զբաղմանք կուգայ, որ երկու իրարմէ բաժանեալ կողման գլուխները նոյն ոգւով վառուած ըլլալով՝ ինչպէս եղեր է որ այսպէս մեկ բարի և օգտակար գործ մը մինչեւ հիմայ ետ մնացեր է, և խօսքը անդամ չէ եղեր։

Պ. Ասոր պատճառը այն է որ՝ թէպէտ երկուքին ալ մըտքին մէջ դրած նպատակը նոյն է, բայց այն նպատակին հասնելու համար ընտրած միջոցներնին տարբեր է։ Հասուներանը կուզէ որ՝ Հայերը խոստովանին թէ մեր Հայաստանեայց եկեղեցին մոլորած է. մենք քննեցինք, ստուգեցինք, և գտանք որ Հռովմայ եկեղեցին անմոլար է. անոր համար մեր եկեղեցին ձգեցինք հոն գացինք։ Այս պայմանաւ Հռովմէականաց հետ միութիւն ընելու մեզնէ մարդ չանձնառու չըլլար. որովհետեւ ամենն ալ գիտեն որ Հռովմէացւոց և Հայոց եկեղեցիներուն մէջ հաւատալեաց տարբերութիւն չկայ։

Ֆ. Լսած և կարդացած եմ գրոց մէջ, որ Հայք եւտիքական են։

Պ. Բոլորովին սուտ և անհիմն զրպարտութիւն է։

Ֆ. Ուրեմն Հայք կը խոստովանին, որ տէրն մեր Քրիստոս որ հօր Աստուծոյ համագոյ կատարեալ Աստուած էր, կատարեալ մարդ եղաւ սուրբ կուսէն ծնանելով, և աստուածային և մարդկային բնութիւնները բնաւ իրարու հետ չշըփոթեցան. աստուածային բնութեամբ աստուածային գործե-

Digitized by Google

ըը, և մարդկային բնութեամբ մարդկային գործերը կը կատարէը։

Գ. Ամեն կերպով այդպէս կը դաւանին հայք, և թէ որ մտքէդ անցնի որ ես ուրիշ լեզուներու տեղեակ ըլլալով ուղղափառ հայրապետներուն և աստուածաբաններուն գիրքերը կարդացեր և այս ուղղափառ դաւանութիւնս անոր համար կը խոստովանիմ, Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը ձեր ըսածին պէս եւտիքական է, կրնաք ասանկ բաներու բոլորովին հմտութիւն չունեցող տգէտ աշխարհականի մըն ալ հարցնել. այն ալ իմ ըսածիս պէս կըսէ. կրնայ ըլլալ որ մէկ ժամանակ մը տգէտ մարդ մը հոգեւորական իշխանութեան հասած ըլլալով ազգին մէջ, եւտիքականներուն յարած ըլլալով այս մոլորութիւնս քարոզած ըլլայ. որովհետեւ չեմք ըսեր և չեմք կրնար ըսել որ մեր հոգեւոր գլուխները անսխալութիւն ունին։ Այսպիսիներ թէ որ եղած ալ են նէ՝ բոլոր ընելիքնին այնքան կրնայ ըլլալ որ, ուղղափառութիւն քարոզողներուն ձայնը կտրելու բռնութեան ճամբայ մը բռնեն. և իրենց օրը ուղղափառութիւնը քարոզուած չըլլայ Հայոց եկեղեցւոյն մէջ, ինչպէս որ ատեն ատեն Յունաց մէջ եղած ըլլալը եկեղեցական պատմութեանց մէջ կը կարդամք. մեր եկեղեցւոյ մէջ այսպիսի բան մը եղած ըլլալուն յիշատակը չունիմք. բայց եղած ալ է նէ, որովհետեւ այնպիսի բռնութիւնը եկեղեցւոյն վրայ Աստուծոյ վիճակ մը չէ, բռնութիւնը վերցածին պէս ուղղափառ վարդապետութիւնը նորէն ուժ կը գտնէ, առաքեալներու նման, որ քաշած տեղը կերթայ. բայց քաշող ուժը դադարելուն պէս անիկայ ինքնին իր առաջին և բնական տեղը կը դառնայ։

Դ. Լավ օք չնորհակալ եմ որ այս նիւթոյս վրայ ունեցած տարակոյսս լուծեցիր, և միտքս բժշկեցիր։

Գ. Տարակոյս ըլլալու ալ տեղի չկար։ Ամեն ատեն մեր ազգին դաւանութեանը վրայ զրպարտութիւններ ըրած են ազգին թշնամիները, մանաւանդ խաչակիրներուն ատենը և ետքը ունիմ օրներուն ատենը։ Բենեդիկտոս երկոտասաներորդ պապին օրը Հայոց ընտանի թշնամիներէն երկու հոգի մինչեւ Ավինեօն երթալով՝ Հայոց ազգին վրայ 117 տեսակ

Digitized by Google

մոլորութեան մէկ ցանկ մը ներկայացուցին պապին։ Ընիկայ խոհեմութեամբ վարուելով ուզեց նոյն իսկ Հայերէն տեղեկանալ բանին էութիւնը. Հայոց Մխիթար կաթողիկոսին գրեց. այն ալ ազգային ժողով ըրաւ Սիս, այն գրպարտութիւնները մէկիկ մէկիկ քննելով պատասխանը գրեցին և պապին խրկեցին։ Թէ որ ամեն ատեն այս ճամբան բռնուէր նէ՝ երկու ազգի մէջ այս պաղութիւնը չէր ըլլար։ Ուստի կաղաչեմ. թէ որ սէրը մշանջենաւոր մնալ կուզէք նէ, գիտնալ պէտք է որ Հայերը թշնամի ունին. անոնց ըրած գրպարտութիւնը անոնց մէ ատուգել չըլլայ. որովհետեւ այս պարզապէս անոնց խօսքին առանց քննելու և առանց ատուգելու հաւատալ մը կըլլայ. այլ ազգը ամեն ատեն կոստանդնուպոլիս պատրիարք ունի. Լ՚Ջմիածին կաթողիկոս ունի. ասոնք ալ հոգեւորական ժողովք ունին. անոնցմէ հարցուի և ատուգուի։ Ջեմ յիշեր որ աստանկ բան մը մեր պատրիարքին մէկուն հարցուած ըլլայ. և այն ալ պատասխանուց արժան չսեպելով պատասխան չտայ։ Ես հոս եկեր եմ՝ նէ իբրեւ պատրիարք խրկուած կամ իբրեւ ազգային հոգեւոր ժողովոյ անդամ չեմ. ազգին լրութիւնը ներկայացնելու արտօնութիւն մը չունիմ հիմայ այս տեղս. այլ մանաւոր մարդ մը, մանաւանդ եթէ իմ գիտցածս խօսելու եկեր եմ. իմ ըսածս ազգին ըսածն է ըսելու մէկ իրաւունք մը չունիմ. և դուք աւելի ապահովութեան համար՝ այդ բանին վրայօք կրնաք պատրիարքէն և ազգային հոգեւոր ժողովքէն ատուգել։

Ֆ. Այդ խօսքերուդ իրաւունք ունիս. բայց կուզէի իմանալ թէ Հռոմայ աթոռոյն և քահանայապետին վրայ ինչ պէս կըսէք։

Պ. Ատոր վրայօք ալ կրնաք ազգիս մէջէն պինդ տգէտ մարդու մը հարցընել թէ, երբ որ ամեն քրիստոնեայ ազգաց առաջնորդները եկեղեցւոյ մէկ պիտոյքը համար ժողովք ընելու ըլլան և մէկ տեղ գան նէ՝ ժողովքին գլուխը նստելը որո՞ւ կիյնայ. ամենքը միաբան կը պատասխանեն թէ՝ Հռովմայ հայրապետին կիյնայ։ Ըսել է որ՝ Հռոմայ հայրապետին նախագահութիւնը ազգը բոլոր կը ճանչնայ։

Ֆ. Բայց նախագահութիւնը այլ է, իրաւաբանութիւնը

Digitized by Google

այլ է. Հայք չ՚են մի ճանչեր որ Պապը յաստուածային իրաւանց բոլոր քրիստոնէից և բոլոր եկեղեցւոյ վրայ իրաւաբանութիւն ունի, և ով որ զինքը անոր իրաւաբանութենէն զատ կը սեպէ նէ՝ հաւատքի յօդուածոց վրայօք մոլորութիւն մը չունենայ ալ նէ՝ եկեղեցիէն զատուած և հերձուածող (շիզմադիքօ) կը սեպուի։

Գ. Հայք այդ ընդհանուր իրաւաբանութիւնը չեն ճանչնար, ինչպէս որ կալլիքան եկեղեցին ալ որ չիզմադիք ըսուած չունի, չճանչնար։ կալլիքանները կ՚ըսեն որ Ժողովքը Պապէն վեր է իրաւաբանութեան կողմանէ. մենք ալ կ՚ըսեմք որ՝ եկեղեցւոյ մէջ ամէն առաջնորդներուն և եպիսկոպոսներուն միութիւնն է բուն իրաւաբանութեան տէրը. և այս իրաւաբանութիւնս առանձին մարդու չեմք տար, ինչպէս որ կալլիքաններն ալ չեն տար։

Ե. Այս վէճիս սկիզբը կոստանդեայ Ժողովքէն է. այն առենը մի եւ նոյն ժամանակի մէջ քանի մի Պապ կային, և ասոնց ճշմարիտ Պապ ո՛րը ըլլալը վէճի առարկայ եղած էր։ վէճը կտրելու համար կոստանդեայ Ժողովը ըսաւ որ, ո՛վ որ այս Ժողովոյս վճռոյն չհնազանդի նէ՝ Ժողովը անիկայ պապ չը ճանչնար. (Այս խօսքս փիչ մը ընդարձակ ընելով պատմութիւնը՝ երկար քշեց. բայց հոս գրածս այն երկար պատմութեանը ամփոփումն է)։

Զ. Սակայն կոստանդեայ Ժողովքէն երկու հարիւր տարի ետքը Ռիւֆ Տէմարք փարիզու արքեպիսկոպոսը, և անկէց քիչ մը ետքը Պօսիւէ, Մօ քաղաքին եպիսկոպոսը, և կալլիքան եկեղեցւոյ բոլոր եկեղեցականները փարիզ Ժողուելով 1682 ին վճիռ ըրին թէ Ժողովքը պապին վրայ իրաւաբանութիւն ունի, և Պօսիւէ՝ ինչպէս որ յայտնի է, մեծ դիրք մըն ալ դրեց կալլիքաններուն այս Ժողովքին վճիռը արդարացընելու համար։ Բայց թէ որ պապը հաւատոյ յօդուածներուն վրայօք մոլորի նէ՝ այն առենը անոր ընդհանուր եկեղեցւոյ վրայ ունեցած իրաւաբանութիւնը ի՛նչ ընելու է։

Է. Անհնար է որ Պապը հաւատալեաց վրայ սխալի, որ՝ վհետեւ Քրիստոս տէրն մեր յայտնի խօսքով ըսաւ Պետրոսի, և անով անոր ամէն յաջորդներուն որ, և դու երբեմն

Digitized by Google

դարձիս և հաստատեսցես զեղբարս քո։ Բոլոր քրիստոնեայ եղբարց հաւատքը պետրոսի առաքելոյն յայտնի հաստատէ. և թէ որ ասանկ հաւատքը հաստատող հեղինակութիւն մը չըլլայնէ՝ հաւատալեաց վրայ հերետիկոսութիւն մը եւած ատենը վէճը լուծելու և քրիստոնէից հաւատքը հաստատելու միջոց մը չմնար։

Գ. Եկը մնայ այն ատենը համօրէն քրիստոնեայ եկեղեցին ներուն միաձայն աւանդութիւնը, որովհետեւ հերետիկոսութիւնը նոր է, անհնար է որ ամեն քրիստոնեայք և անոնց առաջնորդները գիտնան, և գիտցողները հաճութիւն տան։ Այս կերպով այն բանը չը լսուած և նոր վարդապետութիւն ըլլալը ապացուցանելէն ետքը՝ հերետիկոսութիւն ըլլալը ինքնին կը հետեւի. և ասով քրիստոնեայք իրենց նախնի հաւատքին վրայ չհաստատուինէ՝ իրենց յարգած նախնեաց հաւատքը ըլլալը գիտնալով այն հաւատքը չը բռնեն նէ, իրենց ժամանակակից գտնուող Հռովմայ հայրապետին այն հաւատքը ունենալը իրենց վրայ ազդեցութիւն չըներ, իրենց նախնեացը համար և իրենցմէ զատ բոլոր քրիստոնէից համար սխալած են ըսողները ամենեւին խիղճ չեն ըներ ըսելու թէ Հռովմայու պապն ալ սխալած է։ Սակայն վերոյիշեալ Ցէմարք և Պօսիւէ եպիսկոպոսները, և ուրիշներն ալ անոնց մէ առաջ և ետքը՝ պապերուն մէջ հաւատոյ յօդուածներուն վրայօք ալ մոլորածներ գտան, և կը յիշեն Լիբերիոս պապը որ Արիոսականներուն հաւատոյ դաւանութիւնը ստորագրեց. և Ղնորիոս պապը, որ Եւտիքականաց մէկ ճիւղը եղող միաակամեան ըսուածներուն կուսակից եղաւ։

Դ. Հռովմայ ամէոռոյն թէշնամիները (այսինքն աղանդաւորները) ասոնց վրայ ասանկ ձայներ հանեցին, հին պատմութիւններուն գրածներէն իրենց կամացը ուզածին պէս ծուռ բաներ հանելով։ Այն ատենը քրիստոսի արուեստը շատ ընդարձակ նիւթ չունենալովը հիմակուան պէս ծաղկեալ չէր. հիմայ բանին ստոյգը երեւան ելլելուն միջոցները շատցած են, անոր համար պօսիւէ և անոր պէսերը պապերուն մէկ քանին հաւատոյ մէջ մոլորած կարծեցին նէ՝ մեղադրելի չեն. հիմայ բանին ճշմարտութիւնը ինչ ըլլալը երեւան ելլ-

Digitized by Google

լելէն եւոքը տակաւին այդ հին եւ սխալ կարծիքին վրայ պըն-դելով հերետիկոսութեան մէջ ինկած պապ ցըցընելուին մե-ծապէս մեղադրելի է։

Գ. Եթէ ալ դիտեմ որ Լիբերիոս Արիոսականներուն չինած դաւանութիւնը ստորագրած ատենը պապական պաշտօնի վը-րայ չէր. փելիքս նստած էր Հռովմայի աթոռը, և Լիբերիոս աքսոր խրկուած էր, և ստորագրած դաւանութիւնը թէպէտ Արիոսականներուն չինածն էր, բայց Արիոսական մոլորու-թեան նշան չկար մէջը, կասկածելի անոր համար էր որ՝ հա-մադոյակից բառը չէր դրուած։ Ասանկ յայտնապէս հերետի-կոսութիւն չպարունակող դաւանութիւն մը՝ աքսորի ժամա-նակ ինքնագլուխ ստորագրելը մարդկային տկարութիւն մը ցըցընել է, հերետիկոսութեան մէջ իյնալ չէ։ Նմանապէս Ո-նորիոս պապն ալ իրեն եղած խնդիրէն խաբուեցաւ։ Քրիստո-սի մարդկային կամք ունենալը ուրացող միակամեանները հար-ցուցին Ինորիոսի, թէ Քրիստոս մարդկային կամք ունէր արդ-եօք ուրիշ մարդոց պէս, որոց համար առաքեալը կըսէ. «Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ»։ Ինորիոս պատասխան տուաւ թէ չէ։ Այս չէ ը-սելովը ըսել կուզէր թէ Քրիստոսի մարդկային կամքը Աստ-ուածային կամացը հակառակ չէր, մէկ էր միաբանութեամբ, չէ թէ թուական՝ այլ բարոյական միութեամբ։ Պատասխան ու-զողները այս պատասխանը իրենց ըսածին հաստատութեանը գործածեցին. բայց այն ատենը հաւատացեալք՝ և այս ա-ղանդոցս դէմ եղած ժողովքը մտիկ չըրին Ինորիոսի անունով գրուցուած խօսքը. միակամեանները ալ կըլլան նէ ըլլան՝ նը-զովեցին։ Եօքը Լերգիոս և Պօղոս միակամեան աղանդաւոր պատրիարքներուն Ինորիոսի գրած նամակին օրինակը գտնը-ւած ատենը իմացուեցաւ որ այս երկու աղանդապետները խարդախութիւն բանեցնելով Ինորիոսը խաբեր և անոր անու-նովը ուրիշ պարզամիտներն ալ խաբելու համար անանկ գիր մը առեր են ձեռքէն։

Ֆ. Այո՛ այդպէս է, այդ պատմութիւնները աղէկ գիտես եղեր։

Գ. Բայց մեր բուն խնդիրը այս չէ։ Լիբերիոսի և Ինորիո-

սի վրայօք ճշմարիտ պատմութիւնը գիտցուելէն առաջ այս երկուքը հերետիկոսութեան մէջ ինկան ըսող ուղղափառ վարդապետները և աստուածաբանները հաւատոյ դէմ մեղրած չեղան, չիշմարիք չսեպուեցան։ Ինանկ է նէ՝ պապը հաւատալեաց մէջ կրնայ սխալիլ ըսելը Քրիստոսի յայտնի բանին դէմ ալիտի չըլլայ, և կրնայ սխալիլ տէյի ենթագրութենէ՝ ընդհանուր և անկոպար իրաւաբանութիւն մը տալ չի վայլեր, անոր համար կալլիքանները՝ որ պապին անսխալութիւնը չեն ընդունիր, ընդհանուր իրաւաբանութիւնն ալ չեն ընդունիր։ Ֆրանսըզները՝ որ Հռովմէական են, և Լուդովիկոս ԺԴ. թագաւորին օրը Հռովմէականութիւնը տէրութեան կրօնք բռնուած էր, և մինչեւ 1789 ին խառնութիւնը սասանկ սեւեռեց, պապին կողմէն եկած կոնդակ մը մինչեւ ու թաղլամէնթին մէջ քննութեան չառնուէր նէ չէին հրատարակեր։ ըսել է որ թաղլամէնթին վրայ պապէն աւելի իրաւաբանութիւն մը կը ճանչնային, և թաղլամէնթը պապին հանած կոնդակին քննութեանը իշխանութիւն ունեցած կըլլար, և յարմար չսեսած պապին կոնդակը չհրատարակուի ըսելը այս ըսել է։ Այս ալ դիտելու բան մըն է որ՝ ունեցած կասկածնին որով պապին կոնդակը քննութեան առնել կուզեն. քաղաքականութեան վերաբերեալ բան ալիտի չըլլայ, որովհետեւ Հռովմայ պապին հանած կոնդակը միշտ եկեղեցական նիւթոց վրայ կրնայ ըլլալ։ Ֆրանսըզներն աշխարհական մարդոցմէ բաղկացեալ բարձրագոյն թաղլամէնթը պապին կոնդակին քննիչ ընդունելութենին չիշմարիք չսեպուեցան։

Ե. Հռովմայ պապերուն համար համբաւ եղած էր, որպէս թէ եկեղեցական իրաւաբանութիւնին ամբողջ բռնելու պատճառաւ ժամանակաւոր իշխանութիւնին ալ ետեւնին միտք ունին, և որովհետեւ պապին ժամանակաւոր իշխանութեան ետեւնալը Իտալիոյ թագաւորները չեն քաշեր, այն կարծած միտքերնին առաջ երթալու միջոց չը ձգելու համար էր որ պապին կոնդակը թաղլամէնթին քննութեանը տակը ձգեցին։ Սակայն պէտք էր գիտնալին որ, պապերը ինչ ժամանակ որ քէք Իտալացի իշխաններուն, քէք Գերմանիոյն և քէք Դաղղիա-

Digitized by Google

յի դէմ կռիւ բացեր են նէ, կամ Հռովմայու պետութիւն ժա-
ռանգութիւն եղած երկիրները պաշտպանելու համար էր,
ինչպէս են Թուլիոս Ե. պատերազմները Հռոմ բա-
ցած կռիւը, կամ հասարակաց մէջ իրեն զեղմ վարքովը դա-
թակղութիւն ձգող իշխան մը ջախջախու համար, ինչպէս Դրի-
դոր Ը. պատերազմն Ենրիկէ Հենրիկոս Դ. կայսեր դէմ բացած կռ-
իւը, կամ պատուածային օրինաց վրէժխնդրութեան համար,
ինչպէս է Վոնիփակիոս Ը. պատերազմը բացած կռիւը Ֆրանսայի
Փիլիպ Լը Պել թագաւորին դէմ. ասոնց և ուրիշ կռիւներուն
հիչ մեկուն առնելը պատերազմը երկիրներուն
վրայ թիղ մը տեղ չաւելցուց. ինչ երկիր ուներ նէ՝ այն եր-
կիրներուն տիրոջը առատաձեռնութեամբը նուէրք տրուած
էին, և պատերազմը ազ երկիրներէս մեկ քանին կորնցուց,
նոր երկիր չստացաւ։ Բայց թագաւորները պատէն ասանկ
բաներու վրայ վաճառովի կոնգահները քննութեան տակ ձը-
գելնին քաղաքական նպատակ մը ունի. շիքնաթիք չեն ըսուիր
ասոր համար։

Գ. Ուրիշ բան մը ունիմ պատմելիք, որուն մէջ ոչ քաղա-
քական նպատակ կայ, և ոչ երկիր առնելու կամ բռնանալու
երկիւղ. լոկ աստուածաբանական խնդրոյ մը վրայ է. որ մեկ
կրօնապետական միաբանութիւն մը յայտնի հակառակած է
Հռովմայ պետութեան, և շիքնաթիք ըսուած չէ. ելեմէս կալա-
նոս մատենագրին օրէն՝ ի վեր անանկ կարծիք մնած էր Հա-
յոց պատմութեան աղեկ հմտութիւն չունեցող Հայազգի Հռ-
ովմէականներուն մէջ, թէ Յովհան Օձնեցի Հայոց հայրա-
պետը եւտիքական է. վէնէտիկու Միխիթարեաններէն Հ. Մի-
քայէլ Զամչեանը ատոր ուղղախառութիւնը աղեկ յայտնեց Հա-
յոց պատմութեան մէջ. բայց Բրոսպերեանոսի աշակերտ Հա-
յազգի վարդապետները ծանր վէճ հանեցին ատոր դէմ. Օձ-
նեցին երեւութական հերետիկոսաց դէմ դրած ճառին հին
օրինակը փարիզու դրատունը մէջ գտնուելով՝ նոյն վէնէտիկի
Միխիթարեաններէն Հ. Միքայէլ Ալիշանը ծանօթացուց
տպագ։ վէճը նորոգեցաւ. հարկ սեպեց Հ. Ալիշանը այս
ճառը լատիներէն թարգմանել և տպել, ի Հռովմայու երեւե-
լի պատուածաբանութեանը քննութեանը յանձնել։ 1816 թուին

ապուեցաւ. աստուածապաննորը տեսան և քննեցին, որով մէջէն հիմայ անուննին մինչև մեռոյծներն են հրոյկինալ Ծուլոյս բաղնիսհանուս աստուածապաննը, և կորդինալ Պատրիարքին, որ ետքը պատ ալ եղաւ. Գրկոզ ար ժն. անուսով. աստնք գրով և նամակաւ վկայութիւն կուտան որ Յովհան Օձնեցիին ընդդէմ երեւութակնաց ճառին մէջ ստղտածոս հաստոց դէմ բան չկայ. և ընդ այնմանկ նամակներով գովութիւն ներ ալ կուտան և կը պաշտպանեն. վիճենայի Պատրիարքին ները կերլեն նոյն Յովհան Օձնեցւոյն այն ճառին մէջ մղորութիւն գտած պէս, որպէս թէ երկնք հոսվճայու հարդինալ ներէն աւելի հմուտ են աստուածապաննութեան, գիրք կը գրեն, կաչխատին Յովհան Օձնեցին հերձակոս և եւտիքհան ցուցընելու. չէ թէ այն լատինակրէնի թարգմանուած գիրքը անորը չէ ըսելով, որ սանկ ըսելին նէ չիշեալ աստուածապաննութիւն վճռոյն գէմ բան մը ըսած չէին ըլլար. այլ ընդունելով թէ անորն է, և մէջէն մորոսութիւն գտնելով. Պահայն այսպէսով ալ՝ այն վիճենայի Պատրիարքին վարդապետները չիզմաթիք չըսուեցան. թէև ատոնք ալ հռոմիայու աթոռոյն աստուածապաննից վճիռը քննութեան տակ առին.

Ե. Ասիկա պարզին վճռոյն չհնազանդիլ և անիկայ քննութեան տակ առնել չէ, քանի մը աստուածապաննից վճիռը դիտադրել է, որ չիզմաթիք անուսան արժանի յանցանք մը չէ.

Զ. Գիրքերուն քննութիւնը հարդինալներէ բազկացեալ ժողովքի մը մէջ կըլլայ ինչո. և հերետիկոսական խօսք պարունակող գիրքերուն պահկն ալ հոն է, որ ինդէն կըսուի. անանկ որ՝ ինդէն մէջ անունը գրուած գիրք ըսելը՝ հերետիկոսական գիրք ըսել է. և սովին հռոմէականն կը պատրուսուրի այն գիրքը ձեռք չառնելու և չկարդալու, և հնազանդ չեզոզը հաւատոյ կողմէն կատարածելի և անհնազանդ կըլլայ. Ինանկ է նէ՝ նոյն ժողովոյն աստուածապաննելուն իրրեւ ուղղափառ հրատարակած գիրքերնին ալ հերետիկոսական է ըսողը՝ ամենուն վճռոյն անհնազանդ ստղուելու է.

Է. Այդպիսի խօսքերուն սովնուն ալ վերջը կուգայ, երբ որ հրատարակուի այն չիմպերատորականը որ պիտ Ե. սրբազան քահանայապետը գրեց բոլոր արեւելեան քրիստոնէից, որ

հռոմկլայէն բաժնուած են. և մօտ ատենս հրատարակելով մի՛ զլի ալ խրկեց, հրամայեց ալ ունիմք որ այս չրջաբերականը ա՛ բեւելեան քրիստոնէից մէջ պործածուած լեզուներու թարգմանուի և տպուի որ ամենքն ալ իմանան. թէ որ Լատիներէն գիտեա՛ նէ՝ բերեմ որ տե՛նես։

Պ. Գիտեմ. և տեսնելու ալ կը փափաքիմ։

Տ. Ֆերիկիզ դնաց մէկ հատ մը բերաւ. և ակիզբէն սկսաւ մեկ մեկ երկու թուղթ բան՝ ի միասին կարդացինք. ետքը ըսաւ Պրուսացին։

Ա. Այս բաներս աղէկ են. բայց աստուածաբանական փաստերով վիճաբանական ոճով բարակ տրամաբանութեամբ դըրուած բաներըը հասարակութեան մտքին չատ յարմար գալու բաներ չեն. այսպիսի բաներ առաջկուց՝ ի վեր մէկ կողմէն և մեկալ կողմէն գրուցուած, և յարմար կամ անյարմար պատասխան մը առած են։ Հասարակութեան դիւրաւ հասկնալու բաներն են, որ քանչ նախադասութիւն պիտի հաստատուի նէ պատմական ձեւով հաստատուի. քանչ բաներ վրայօք հաստատուց մտքին մէջ տպաւորուած թիւր կարծիքներ կան նէ պատմութեամբ հերքուին. և ասիկայ աստուածաբանական խընդրոց մէջ ամենէն դիւրին է. որովհետեւ ճշմարիտ հաւատքը և եկեղեցին և սուրբ աւանդութիւնը հինն է. և հին բաներըը պատմութեամբ գիտեմք, և պատմութեամբ կրնամք ոամիկներուն գիտցունել։ Ա. Այս չրջաբերականը պատմական քանի մի բաներ պարունակելուն համար աղէկ է. միայն սա կը փափաքի որ՝ հայերէնի թարգմանողը աստուածաբանական եզերքներըը ճիշդ թարգմանէը հայերէն լեզուին, որպէս զի կարդացողներըը իրենց ընտել և սովորական լեզուն հոն գտնելով հակառակութեան խմորը վերնար, գաղկեդոնի ժողովոյն և Լէոնի տոմարին ծուռ թարգմանութեանը պէս և մօտ ատենները քանի մի լատինական բառերու անտեղեակ թարգմանութեանց պէս նոր հակառակութեան առիթ չըլլար։

Տ. Այս չրջաբերականիս թարգմանութեանը մեր Հ. Աբրահամը պիտի աշխատի. բայց ըսած խօսքերէդ այն միտքս եկաւ որ դուք գաղկեդոնի ժողովը և սուրբն Լեւոն Հռոմայեցի հայրապետը կը նզովէք երբ։ Թէ որ եւտիքական չէք նէ՝

Digitized by Google

ասոնք ինչո՞ւ կը նեղվիք, որ Եւտիքէսի աղանդը դատապարտեցին։

Զ. Որովհետեւ ասոնն մը թէ Քունաց և թէ Հռովմայեցւոց և մեր մէջը մեծ եղած է ասոր համար. և ձեր յարդութիւնը յատուկ չխօսեցաք ասոր վրայ. դիպուկ առիթ գըտայ այս տեղս ձեզի յիշեցնել, որ ասոր վրայօք ալ եղած կասկածը վերնայ։ Քաղկեդոնի ժողովքը եղած տարին Հայերը Պարսից դէմ հաւատոյ վրայ կռիւ ունէին. քրիստոնէական եկեղեցին պաշտպանելու համար արիւն կը թափէին, Մարկիանոս կայսրէն ալ օգնութիւն ուզած էին և դատած չէին։ Ա.ին չվոխմներուն ատենը Քաղկեդոնի ժողովքը Հայոց վարդապետներէն մարդ չգտնուեցաւ. ժողովը լմնալէն ետքն ալ Հայաստան ժողովական թուղթ մը չխրկուեցաւ. ինչպէս որ 20 տարի առաջ Եփեսոսի առաջին ժողովքը լմնալէն ետքը ժողովական թուղթ գնաց մեր սուրբ Սահակ Հայրապետին։ Ասոր համար Հայերը չկրցան տեղեկութիւն ունենալ Քաղկեդոնի ժողովոյն վրայ։ Ատեն մը ետքը, երբ որ քիչ մը հանդարտեցաւ Հայաստան և ատենկ բանելու վրայ խօսելու պատեհութիւն եղաւ, Նեստորականները որ Եփեսոսի առաջին ժողովքէն ետքը Քունաց երկրին սահմաններէն դուրս ինկած էին, սկսան ըսել թէ Եփեսոսի ժողովոյն անիրաւութիւնը յայտնի եղաւ. ահա Քաղկեդոնի ժողովքը վեց հարիւր հայրապետէն աւելի ժողովուելով Նեստորի դատանութիւնը ընդունեցին. Քրիստոսի աստուածութիւնը և մարդկութիւնը իրարմէ զատ ըլլալը դատանեցին, և երկու բնութիւն ըսին։ Անդիէն Եւտիքականները՝ որ անոնք ալ Քաղկեդոնի ժողովքէն ետքը շատուր մէկէն Աստրեստան և Հայաստան եկած էին, ժողովքը մոլորեցաւ, Նեստորական եղաւ. և մենք Նեստորի դէմ ուղղափառութիւն քարոզելնուս համար ժողովքին բռնութեանը երեսէն կը հալածուիմք կոր կ'ըսէին։ Հայերը Նեստորի մոլորութիւնը գիտէին, բայց Նեստորինը ինչ ըլլալը չը գիտէին։ Եւտիքականներն ալ կեղծաւորելով և իբրեւ սուրբ և ուղղափառ ձեւանալով խօսքերնին լսողներուն միտքը իրենց որսացին, սիրտերնին՝ ի գուբ չարժեցին. բայց եկեղե-

Digitized by Google

ցին այն ատենը մեկ որոշիչ գաւառ մը և վճիռ մը չըրաւ. Թէպէտեւ երկու հակառակ կողման վկայութիւնը իրարու համաձայն գտաւ Քալկեդոնի ժողովքը նեստորական ըլլալուն վրայ։ Այսու ամենայնիւ դատումը կախ ձգեց մինչեւ այն ատենը որ խնդրաւ Թէ Յունաց Զէնոն կայսրը հրովարտակ հանելով Քալկեդոնի ժողովոյն խօսքը ըլլալն անգամ արգիլեց։ Այն ատեն Հայերը այս հրովարտակէս մակաբերեցին որ՝ Քալկեդոնի ժողովոյն հանար լսածնին ճշմարիտ պիտի ըլլայ, ուստի քաղցրութեան մերժեցին։ Ետքը Լեւոնի տումարն ալ՝ որ Եւտիքէսի դէմ գրած էր փլագիանոս պատրիարքին, դեղ Թարգմանութեան մը հրատարակեցաւ Հայոց մէջ. Թարգմանութեան մէջ յայտնի նեստորականութեան հոտ կար. և նամակը Եւտիքէսի դէմ էր, և Քալկեդոնի ժողովոյն մէջ կարդացուած և հաւնուած էր։ Քալկեդոնի ժողովքը նեստորական կարծողներուն ատկեց աւելի ապացոյց չուզեր կարծիք ընելու Թէ Լեւոն պապն ալ նեստորական է. անոր հանար Քալկեդոնի ժողովքն ալ նզովել սկսան, Լեւոնն ալ։ Յակայն Եւտիքես ալ կը նզովուի մեր ամեն դիրքերուն մէջ. բնաւ մէկը չկրնար ըլլալ Թէ մեր հայրապետաց և վարդապետաց մէկուն գրքին մէջ Եւտիքէսի անունը դովաբեմբ յիշուած ըլլայ։

Ֆ. Բայց պէտք էր, երբոր ընդհանուր եկեղեցին Քալկեդոնի ժողովքը կընդունի, և Լեւոն պապին տուրբ կըսէ, դուք ալ ընդունելիք, Թէ որ Եւտիքէսի յարեալ չեիք նէ։

Գ. Ձեր յարգութեանը կը հարցունեմ, եղած է անանկ մեկ ժամանակ մը որ Հռովմայ եկեղեցին պատկերաց և սրբոց մասանց յարգութիւն չտայ, և հակառակի։

Ֆ. Անանկ բան բնաւ եղած չէ։ Մանաւանդ Իտալիայի ազատութիւնը Յունաց կայսերաց ձեռքէն՝ այս պատճառաւս եղաւ, որ Յունաց կայսրերը պատկերամարտ եղան. Հռովմայ հայրապետը այս նոր հերետիկոսներուն դէմ եկեղեցւոյ հաւատքը կը պաշտպաններ. երբոր կայսրը հայրապետին վրայ բռնանալ ուզեց նէ, Իտալիա ալ Յունաց կայսերութեան երկիր ըլլալէն դադարեցաւ։ Այսքան անլուր էր պատկերամարտութիւնը Հռովմ։

Գ. Պատկերամարտից դէմ եղաւ նախնյց երկրորդ ժողովը,

Digitized by Google

որ տիեզերական ժողովներուն կարգը եօթներորդն է, և ա-
րեւելեան և արեւմտեան քրիստոնէից միապէս ընդունելի է.
երբոր այս ժողովոյս պատմութիւնը Եւրոպա հասաւ նէ՝ հռով-
մէական եպիսկոպոսներ և վարդապետներ շատ բազմութիւն
ժողովուեցան Ֆրանքփորթի քաղաքը, և ժողովոյն վճիռը քըն-
նեցին և հերքեցին, բայց ատոր համար Ֆրանքփորթի ժողո-
վոյն մէջ դտնուած հայրապետները ոչ հերետիկոս ըսուեցան,
և ոչ չիզմաթիք։

Ց. Որովհետեւ Նիկիոյ Ը. ժողովոյն դործը որ Բունարէն
էր, լատիներէնի սխալ թարգմանուած էր. և այն թարգմա-
նութեանը նայելով դատապարտեցին, եւ քը երբոր ժողովոյն
վճիռը Բունարէն բնագրէն ստուգեցաւ և ճիշդ թարգմանու-
թիւնը երեւան եկաւ, խմացուեցաւ ուղղափառ ըլլալը և ըն-
դունելի եղաւ.

(Կրնար ըսուիլ ատոր վրայ թէ Նիկիոյ ժողովոյն մէջ հռով-
մայու պապին կողմէն ալ մարդ կար, և եւ քը պապն ալ ժո-
ղովքը ընդունեց և հաստատեց, բայց Ֆրանքփորթի ժողովքը
ատոր չը նայելով դատապարտեց, և ասկէց կերեւի որ ժողովք
մը ընդունելու կամ չընդունելու համար այն ատենն ալ, այ-
սինքն ութերորդ դարուն մէջ, պապին ընդունելուն կամ չըն-
դունելուն չեն նայիր եղեր։ Բայց այս հետեւութիւնս հանե-
լուն կարգը անցած ըլլալով այն ատենը միտք չեկաւ)։

Զ. Գաղկեդոնի ժողովոյն վրայով ալ նոյնն է. դէչ թարգ-
մանութեան նայելով ժողովքը դատապարտել, և ասկէց աւե-
լի այն ալ որ նայն իսկ կը դատապարտէին։

Է. Գէչ թարգմանութեամբ դայթակղութեան պատճառ ե-
ղած բաներ կան ուրիշ։

Ը. Նոտոթա և Բուլլէթէ և Բոպլիտօլնոմ բառերը. այս ե-
րեքիս վրայ ալ մեր եկեղեցին զրպարտողները կըսեն. Հա-
յերը Քրիստոսի վրայ երկու Նոտոթա չեն ճանչնար, Հոգւոյն
սրբոյ հոսիար միայն 'ի Հօրէ Բուլլուէ կըսեն, 'ի յորդւոյ Բուլլուէ
ըսելը չեն ընդունիր, ներելու մեղաց կամ ապաշխարութիւնը
չվճարած մեռնողներուն հասնար չեն ըսեր թէ Բոպլիտօլնոմ
կը կենան Հերետիկոսութեան մէջ մինչեւ մահ քրտնին. այս երե-
քը ալ առաջ պրպտուիլ է. այս երեքիս վրայ ալ մեր եկեղեց-

Digitized by Google

ւոյ դաւանութիւնը հռովմայեցւոց պէս է. յիշեալ լատին ներէնները տեղը դրուած հայերէնները անանկ բառեր են որ այն նիւթերուն մէջ այն բառերէն ծուռ միտք կելլէ որ մենք չենք կրնար ընդունիլ։

Ֆ. Ի՞նչպէս։

Պ. Նոթոթա բառը որ նշխէ բառէն եղած է, պիտի նշանակէ ծնած առենէն և ծնելուն վերաբերեալ հանգամանքները և յատկութիւնները. և որովհետեւ քրիստոս երկու ծնունդ ունի, մէկը ժամանակաւոր և մէկը յաւիտենական, կըրնայ և հարկ ալ է ըսուիլ թէ երկու նոթոթա ունի. բնութիւն բառը, որ նոթոթա բառին տեղը կը դրուի թարգմանութեանց մէջ, բուն բառէն եղած ըլլալով կը նշանակէ էութիւն, իսկութիւն։ Այսանք մօտ կուգան անձն բառով նշանակուած մտքին. և ինչպէս որ երկու անձն չըսուիր, երկու բնութիւն ալ չըսուիր։ Քաղկեդոնի ժողովքին համար նեստորականներէն և Եւտիքականներէն միօրինակ լսուելով թէ ժողովքը նեստորական էր, և սահմանին մէջը երկու բնութիւն տեսնելով՝ կարծիք ըրին վերոյիշեալ ատուգաբանութեանը ուժով, թէ լսածնին իրաւ էր. բայց Հայոց եկեղեցւոյն այս նիւթոյս վրայօք ի՞նչ դաւանութիւն ունենալը Ներսէս Կլայեցիին դիրքերէն և Յովհան Օձնեցիին վերոյիշեալ ճառէն աղեկ կը հասկցուի, Ներսէս Կլայեցիին գիրքն ալ Քաբէլլէդդի քահանայն Լատին լեզուի թարգմանած և տպած է Վենետիկ, 1837։

Բրնչեւէէ բառը լատիներէնին մէջ երկու բառէ շինուած է. մէկն է բրո, և երկրորդը վոէէ։ Բրո՝ յառաջ ըսել կըլլայ հայերէնին մէջ. Բայց այս բառիս դէմ հայերէնին մէջ գործածուած բառն է բղխել, որուն ճիշդ լատիներէնը և յառաջերէնն է պրոռոսիս. և հայերէնը պարզ բառ մըն է և կը նշանակէ առաջին աղբերէն անմիջական ծագումը. առումն չենթադրեր. անոր համար յորդուոյ բղխումն ըսելը հայերէն լեզուին մէջ ծանր և անլուր կուգայ։ Բայց ուրիշ կերպ բացատրութեամբ, յառաջ բղխեալ ըսելով հայոց եկեղեցւոյն մէջ բարձրաձայն կը կարդացուի. 'ի հայրաշարժ 'ի յաղբերէն յառաջ բղխեալ։ Եւ քանաւ մեկ տեղ մը մեր դրոց

Digitized by Google

մէջ՝ թղթակ բառով Ոդուոյ վրայ գլուցուած չէ Հոգւոյն սրբոյ համար. թէպէտև այս կողմէն Հոգւոյն սրբոյ Ոդուոյ հետ ունեցած յարաբերութիւնը մեր նախնի հարք ալ կը խոստովանին, ինչպէս որ Հ. Գաբրիէլ Ալեսիքեան՝ Մխիթարեան վարդապետը՝ յայտնի ըրած է իր ճառին մէջ, որ Իտալերէն տպուած է վէնէտիկ 1824 թուին։

Բօլոնիոլեան բառը Բոլոնիէ բառէն ծնելէ, որ մանրիկ ըսել է։ Ասոր Հայերէն դնել տրուած են քառատան բառը, որ քառել բայէն եղած է. և այս բայը իրեն Լատիներէն հատապատասխան ունի, Excidere։ Հայք հանդերձեալ աշխարհքը Excidere չեն ճանչնար, որ մեղուցելոյն կողմէն ալ մէկ այս չնորհիս գործակցութիւն մը կենթադրէ, լոկ կը րոդ վիճակ մը չը ցուցներ։ Մաքրութիւն կը ճանչնանք. անոր համար ննջեցելոց վրայ ալ աղօթքներ կարդալով կըսեմք. Թող զմեղս ննջեցելոյս, եւայլն։

Ե. Երբեմն այդպէս բառերու նշանակութեան վրայ վճռեր կըլլան տէր կը լսէի, որպէս թէ Բրօթականտայի աշակերտները աղէկ տեղեկութիւն չունին կամ ունին Հայերէն բառերուն ճիշդ նշանակութեանը, եւայլն. ասիկայ այն լսած ներուս վերաբերեալ բան պիտի ըլլայ։

Զ. Այն վէճը ուրիշ բան է. վէնէտիկի Մխիթարեաններուն և Հռովմայու Բրօթականդիտղներուն կը վերաբերի։ Եւ յիրաւի Բրօթականդիտղները թէպէտ և Հայ են ազգաւ, բայց Հայերէն լեզուի աղէկ տեղեակ ըլլալնին մինչեւ հիմայ ցուցը նելու կարող չեն եղած ո՛չ իրենց դիրքերուէն և ո՛չ խօսքով նին։ Սեր նախնեաց դիրքերէն տեղեկութիւն չունին. Լատին հեղինակաց դիրքերուն մէջ աստուածաբանական ոսկ մունքը լմնցընելնուան պէս՝ որուվհետեւ Հայոց քարոզերը իրենց նպաստակ կը դնեն, վիճաբանական նիւթերու ետեւէ կերթան, և ասոր վերաբերեալ տեղեկութիւններն ալ կրնան դալանոց կրօնաւորին դիրքերէն կը ժողվեն ու իտալացի մը ըլլալով՝ Հայոց ո՛չ ազգին բնաւորութեանը և ո՛չ լեզուին յատկութեանը և ո՛չ ալ արտաքին ասանդութեանցը տեղեակ չըլլալով, ինչ որ Հայոց հինամի ծոյն մնատնադրութիւններուն դիրքերուն մէջ գտեր է, և ինչ որ քանի մը լատին հեղինակներ

Digitized by Google

լու մէջ կարդացեր ե՞ Հայոց Հանգը, յանուն ամենայն ազգ ստոգ կը կարծե և կը վիճի անոնց հետ։

Ճօլամնի տէ Սէրթօզ մարքէզը, որ բուն Հայազգի է և կը թնիւք Հռովմէական, մէկ Բրօթեսթանդիսպներուն և մէկ բուն Հռովմեցիներու առաւելածագանդներուն Հայոց եկեղեցւոյն վրայ ունեցած ծուռ կարծիքները չիտկելու համար երեք հատոր գիրք շինած և Բրօթեսթանտային նուիրած է. և վէնետիկի հոգեւորական պաշտօնի սրբազնութեան նախագահ Տ. Մատքէոնկին քննութեամբը և բաստուսի գրոց քննութեան պիւանկին հաւանութեամբը և հրամանաւը տպուած է վէնետիկ, 1786 թուին։

Ֆ. Շատ չնորհակալ եմ որ այս նիւթերուս վրայ ինձի այս տեղեկութիւնները տուիր։ Աստուծով կը տեսնեմք այն օրը որ տարապարտ գայթակղութեանց պատճառները վերնալով անկեղծ և հաստատուն սէր և միաբանութիւն մը կըլլայ։

Պ. Սկր ալ ամենայն ոգւով փափաքելիս այն է։

Ֆ. Կը ցաւիմ որ աւելի երկար ժամանակ չունեցանք քննդարձակ տեսութիւն ընելու։

Պ. Կը յուսամ որ ասկից մեր տեսութիւնները վերջին անգամը չըլլար. երբոր հրամայեն ընէք՝ դիս պատրաստական ծառայ կը գտնէք. և ինձի պատիւ ալ կը համարիմ ձեր մեծութեանը քովը գալը, բայց այս ալ կը կրկնեմ ինչ որ առաջ ըսի. իմ հոս գալս չէ մէկ իրրեւ ազգին կողմէն գալ մընէ, այլ իրրեւ առանձին մասնաւոր մարդ մը. ուստի այսպիսի բաներու վրայ եղած՝ խնդիրները աւելի ազէկ կրնայ որ գրով պատրիարքին ընէք անվիջապէս, և անկէց առած պատասխանին՝ ազգէն առած կը տեսուի. որովհետեւ այն ալ ազգային ժողովներուն չառաջարկած առտր պատասխան չտար։

Ֆ. Ինձի ըսուեցաւ որ ձեր պատրիարքը գաւանութեան գլխ մը պիտի խրկէ եղեր ինձի։

Պ. Զը լսեցի. և ճշմարիտ ալ է նէ, մէկ որ ինձի հարցուի նէ հաճութեամբ չեմ տար. որովհետեւ Հայոց եկեղեցւոյն գաւանութիւնը ասոր նէ՝ եկեղեցական ժողովք մը ըրած պիտի ենթադրուի։ Պօղոս պատրիարքին օրովը ժողովք մը եղաւ 1820 ին, բայց անկէց առաքը սասանկ բաներու համար ժողովք

Digitized by Google

եղած չէ։ Ձի ասածի ժողովքը կը բայցատրէ որ Հայոց եկե-
ղեցին Շնորհալւոյն ժամանակը ինչ դաւանութիւն ունէր եւ
հիմայ ալ նոյնը ունի։ Շնորհալւոյն գիրքերը լատիներէն թարգ-
մանուած ըլլալով, և յիշեալ ժողովքին ոչ առած և ոչ հատքը
Հայոց եկեղեցւոյն ոչ դաւանութեանը և ոչ արարողութեանցը
վրայօրէն մը չըլլալով, այդ պիսի դաւանութիւն մը առա-
ջը ապացոյց պատճառ ըլլալէն զատ, ժողովքով ալ ետ
կարճուելով, տուած եզրակացութեան պատճառ կրնար։

Այ խօսքիս հատը իրարմէ հրաժարեցանք. երթը ժո-
ղովս մտ առնէ քշեց խօսակցութիւնը. և այս խօսակցութիւնս
գրի առնուեցաւ։

1848 Մարտ 25.

Իսկ Պետրոս Հասունեան պատրիարքին Հռովմէական
լուսալ ջնջասակցութիւնս զայրոսիկ, խռովեցաւ յոյժ, և ինկ
և իսկ դրեթէ նամակս առ մեծամեծ անձինս Հռովմէական
հայոց գալ անպատճառ՝ ի տուն իւր. և ժողովեալ զնոսա ա-
լինքն, պատմեաց նոցա զամենայն։

Եւ՝ ինձին գիշերի ժողովին առնեն քէն՝ ի տուն ֆէս նա-
դերի Ծովհաննու, յոր հրաւիրեալն էր և կարդինալն. և՝ ի
սիտանիլ խօսիլ նոցա, հարցանեն ցկարդինալն զոտշումն ժո-
ղովին՝ ի տան վառօդասրճարին։ Եւ նա պատմեալ նոցա զըս-
ղալիսս դաւանութիւնն Հայոց՝ ասէ ցնոսա. Հասկըցեյէ, թէ
չի՛ք՝ ի Հայս կասկած հերձուածողութեան, և այսպէս ունիմ
վկայել և՝ ի Հռոմ։

Յայնժամ միաբան առնեն քեան եկեղեցականք և աշխատ-
հանիք սկսանին մերկտրել զնա և ասել, դուք մեծանեցէք,
միամիտ ոք է՛ք, և չէ՛ք տեղեակ չարամտութեան Հայոց, որք
ոչ որպէս հաւատանն, այնպէս դաւանին, ի յայտ հաւա-
տան և այլապէս դաւանին, և մերմտութեամբ քով իորձանեա
զտուն մեր, զոր՝ ի քանի տարոյ հետէ աշխատիք չինել՝ ի պար-
ծանս դահին Հռոմայ. բողոք դքէն բանտամբ առ տէրդ
դահն, զորոյ անսխալութիւնն դու սկսալական երկեցուցա-
նես յաչս հերձուածողին՝ ի նմանել, ըստ քէ։ Զայս և որ զա-
ցեն նման են բանք, լսեցին առաջի նորա, և պնչեցին պահանն,

Digitized by Google

մինչեւ խոստանայ նոցա յետս կոչել զխոպատումն իւր, զոր խոստացաւ պատրիարքին Հայոց։ Եւ յետ չորից աւուրց հրաւիրեցաւ կարգինալն Յակի ՈՒԼԵՓՄանայ, յոր գնացեալ էր երկու աւուրբք յառաջ և Մատմէոս պատրիարք, և կարապետ ճարտարապետ, և Յովհաննէս Տատեան. և ՚ի լինել ընդ երեսս խօսեցաւ Քարոլիւն Գաբեգին Տատեան զհատ ինչ գոլեալ թեան և եղբայրսիրութեան, ընդ որ յոյժ հաճեցաւ կարգինալն. և յետ ընդհատից ՚ի լինել կրկին բանախօսութեանց ՚ի վերայ հաւատոյ մանանց, ասէ կարգինալն. լաւ ՚ի բաղմանց, զի Հայք ոչ այնպէս հաւատան, որպէս քննեմուանն. աստի կասկածիմ, թէ մի գուցէ անխոհեմութեամբ սխալ ինչ դատեցայց երբէք զէնչ և երբէք զայլոց. վասն որոյ ոչ կարեմ վկայել զէնչ թէ բարի և թէ չար։

Եւ պատրիարքն ասէ ցնա, միթէ դու Աստուածն ես, զի զներքին խորհուրդ սրտից մերոց իմանայիս. ոչ ապաքէն ՚ի բանից իւրոց արդարանայ մարդ, և ՚ի բանից իւրոց պարսաւեսցի, և զինչ առնէին սուրբ հարք ՚ի հին ժամանակս, ոչ ապաքէն զհերետիկոսն կոչեալ յատեան, ասային նմա խօսել զոր ինչ հաւատայրն, և ըստ այնմ դատէին զնա. միթէ զծածկուկս սրտին դատէին, երբէք զխոստովանութիւնն. դու ուստի ծանեար, երբէք մեք այլազգ խօսիմք և այլազգ հաւատամք, կամ ոչ՝ որպէս ընդհեռնումքն, այնպէս հաւատամք։ Ասէ կարգինալն, այնպէս վկայեցին զէնչ, երբէ սուտ խօսեցան, ՏԷր դատեսցէ զնոսա։ Ասէ պատրիարքն, ահա չարաչար խօսքն այնոքիկ՝ որք դիւաշունչ բերանով որպէս խաբեցին զքեզ, և դու մարդ գոլով ճշմարիտ ծանեար զզրպարտութիւնն նոցա, և սխալեցար, խաբեալ են և զպատն ձեր. զլոյսն խաւար ցուցանելով և զքաղցրագոյնն դառն. և դու որպէս խաբեցար այժմիկ և սխալեցար, նոյնպէս խաբեալ է և պատն ձեր և սխալեալ է, և սխալեսցի մինչեւ ՚ի կատարած աշխարհիս։

Զայս ասացեալ՝ ել արտաքս և առանձնացաւ ՚ի սենեակի միւսմ և ննջեաց։ Տրամեցան յայնժամ և ժողովեալքն, և ելին արտաքս ՚ի սենեկէն, և գնաց կարգինալն ննջել ՚ի սենեակի միւսմ, որ պատրաստեալն էր վասն նորա։

Եւկ ՚ի վաղիւ անդր ընդ առաւօտն ելեալ պատրիարքն

Digitized by Google

արտաքս, նաեւս ի գառս իւր, և դեպ ուղիղ գնացեալ ի Ցաճաթիա, էջ անտի ի Ցէներ թաղն կոստանդնուպօլսոյ ի ծովեզերեայ տուն Գէորգ ազգայի եղիա Ջելէպեան. և կոչեալ անդ զՏէր պաղտասար աւագ քահանայն պարտուս, առաքեաց զնա ի պատրիարքարանն Բունոց ասդ առնել պատրիարքին, թէ պատրիարքն Հայոց եկեալ է և կամի տեսանել զեորին սրբազնութիւնն։

Ցետ երկուց ժամուց եկն փոխանորդ պատրիարքին Բունաց երկու քահանայիւք, և հրաւիրեաց զԱստուածո պատրիարք. և նա եկեալ անտի գնայ ընդ նմա, և մտեալ ի պատրիարքարանն, տեսեք ընդունելութիւն մեծ, և բազմեցաւ։

Ցետ տաղորեակաւ աղջնատուութեանց սկսաւ Աստուածո պատրիարք պատմել նմա մի առ մի զկնդակ կարդինալին, և զբողոք իւր զնմանէ, և զժողովն ի տունս վանաօդապետացն, և զյետս կոչումն խոստմանն, զոր խոստացեալն էր յաւուրսն ժողովին։ Ուիծաղեցաւ պատրիարքն Բունաց և ասէ, առ մեզ և առաքեաց զկնդակ մի տալեալ Բունարէն, ուր գրէր, թէ Բոյնք ի ժամանակաց անտի փոռայ հերձեալ ի միութենէ կաթողիկէ եկեղեցւոյ անկեալ կան ի պէսպէս հերձուածս և յաւելորդապաշտութիւնս, և յորդորէր զմեզ մաքրել զեկեղեցիս մեր։

Բայց մեք գրեցաք առ նա զպատասխանին լի արժանաւոր յանդիմանութեամբ, վասն հերձուածս կոչելոյ զարեւելեան եկեղեցիս, որ է խակ ուղղափառ եկեղեցի Քրիստոսի. և բացայայտ ծանուցաք նմա.

Ա. Թէ չէ ինքն և եկեղեցին իւր անսխալ, այլ սխալական ըստ մեզ. զի անսխալ մի միայն ընդ հանուր եկեղեցին Քրիստոսի է, զոր կոչեմք Տիեզերական սուրբ ժողով։

Բ. Թէ չէ լինքն դերագոյն գաւառս ի մէջ եկեղեցւոյ, կամ գլուխ պատրիարքաց, այլ հաւասար նոցա, միայն թէ առաջինն է ի հաւասարս։

Գ. Եօթն տիեզերական ժողովք հաշտեալք յառաջին ժողովոյն Նիկիոյ՝ ընդունելիք են մեզ, և բաց ի նոցանէ ամենայն ժողովք նոցին՝ որպիսիք են Լատերանու, Փլորենտիոյ, և Տրիտենգինոյ, եւայլն, անընդունելիք են մեզ։

Digitized by Google

Դ. Պապային պահպանել իւրեանց մաքրել յամենայն չեռա-
մուտ կապուցս, ՚ի նորաձայն վարդապետութեանց, յանտեսի
սահմանագրութեանց, ՚ի փառապիրութեանց, և ՚ի հերձուա-
ծոց, և պապ ՚ի միութիւն յարգոյ զպաս, եւայլն։

Ահա այս է խնամատարութեան մերոյ, զոր գրեցաք ՚ի
պատասխանի մեղրակին տեղւոյն հանճարին սուրբ գրու-
թեամբ սուրբ սիւնհոդոսիս մերոյ։

Եւ ՚ի յաջորդ աւուրն ՚ի շնորհս Մատաթէոս պատրիարքին,
գրեաց պատրիարքն Ցունաց գնդապատ ՚ի Բ. Դուռն, յասելն,
եթէ դեպ է սա, ընդ Բ. Դրան ունի յարաբերութիւն, մեղ
չէ փոյթ, իսկ եթէ չէ դեպ, ոչ է հապա, զի խառնու-
թիւն արկանէ ՚ի ժողովուրդս մեր, և յորդորէ հնազանդիլ
պապին Հռոմայ։

Եւ Բ. Դուռն ՚ի ձեռն գեղապանին Դաղկոյ ծանայց գրա-
ղաք և զգանգատ պատրիարքին Ցունաց՝ վասն կարդինալին
Հռոմայ, զոր լուեալ նորին՝ հրամայեաց պատրաստել զգե-
դեհան, և տուեալ նմա արարեալ զՏրաժարական աղջոյն իւր,
վերադարձաւ ՚ի Հռոմ։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Յաղագս Համազգեաց ընկերութեան։

(1848) ԻՍՄԻՆ ամի ազգասէր և ուսումնասէր անձինք ՚ի Հռոմէական հայոց՝ յորոց բազումք աշակերտեալք էին ՚ի Մուրատեան և ՚ի Ռափայէլեան վարժարանսն և ՚ի վանան վէ-
նետկոյ և վէնեցայոյ, համաժիտ և համակամ խորհրդով և հա-
մանութեամբ կամեցան հաստատել զընկերութիւն իմն ընդ
լուսաւորչեան Հայոց։

Պայմանակ ընկերութեանն էր ազգասիրութիւն և աւգում
նախիրութիւն և յառաջադիմութիւն ՚ի բարոյական մասին, և
բացե ՚ի բաց հերքումն տարապարտ վիճից և բանակռուս-

Digitized by Google

թեանց վասն հաւատոյ խնդրոյ, յորս որդիքն միաբանեն երկրին կազմանք յեկեղեցական մասունս հաւատոյ, և տարբերին միայն ի վարդապետական բացատրութիւնն դժուարին մասց բառից, որպիսիք են բառքս, բնութիւն, անձն, բըղխումն, և քաւարան հոմ հայեն։

Իւրաքանչիւր ընկերք պարտ էր տանն դահեկան ամեհական տրօք նպաստել ընկերութեանն առ ի հայթայթել զմեծ դումար դրամոց՝ բաւական լինել դպրոցական ծախուց։ Եւ մինչ յառաջասցին իղձք և աշխատութիւնք ընկերութեանն, տեսանելով օր քան զօր զանդամս յաւելեալ և բազմացեալ և հասեալ ի նպատակն, ուրախալով պատրաստ ի ձեռին զգուշմար դրամոց, զնեացեն նոքաւ եկամուտս, կամ շահեցուցեն տոկոսօք, և թացցեն ճոքօք դպրոցս ի հոյաբնակ քաղաքս Աւիսոյ, յորս ոչ դոյ դպրոց, ոչ ընթերցանութիւն և ոչ ուսումն զանազան արուեստից, վարժեացեն և հրահանգեացեն զնոսա ի կարեւոր ուսմունս հայկաբանութեան, թուաբանութեան, և աշխարհագրութեան, և երկրագործութեան, և զամենայն փոյթ ի վեր առեալ, դխաւար տգիտութեան հալածական ապարեալ, զլոյս գիտութեան առ համազգայինս տարածեացեն ի փառս Աստուծոյ և ի պարծանս հայկազեան ազգիս։

Զկանոնս ընկերութեանն խմբագրեաց Հ. Պետրոս վարդապետ միաբան վենետկեան վանից, և զանուն նորա կոչեաց համազգեաց ընկերութիւն. և սկսան ազգասէր երիտասարդք այսոքիկ իւրեանց եռանդուն և աշխոյժ բնաւորութեամբն քարոզել միմեանց ազգասիրութիւն, չանալ օր ի յօր աճեցուցանել զընկերութիւնն, և միաբանասէր ոգւով ընդգրկել զիրեարս։ Եւ այսպէս ի սակաւ ինչ միջոցի բացաւ ընդարձակեցաւ ընկերութիւնն։

Լուեալ զայս ամենայն հաստն վարդապետ, և իւրով բնական հեռատեսութեամբն նշմարեալ զապագայ նուաստութիւն միաբետական ինքնիշխանութեան իւրոյ, ի խորհուրդ կոչեաց զհամախոհս իւր և զարբանեակս, և յոտն եկաց քայքայել ըզնորոգ սկսեալ ընկերութիւնն։ ցրուել զանդամս նորա հալածելով և յոդոզելով, ի չէ այս չան և վաստակ ձեր ընդդէմ է հռոմէականաց տուրք եկեղեցւոյ, որ ամենեցուն հասանէ յարդիւ և

Digitized by Google

վիճաբանիլ ընդ հերետիկոսս, և հաղորդակցիլ ընդ նոսա հոգեւոր սիրով. ուստի ոչ կարեմք տալ ձեզ արձակումն և հաղորդութիւն, մինչեւ ոչ դուք ասիք և յետս կացջիք յայդոցիկ ընկերութենեն, որ ոչ միայն հոգւոց և մարմնոց ձերոց է վնաս մեծ, այլ նաեւ անարդութիւն և նախատինք է ձեզ առաջի գահին Հռոմայ։

Եւ այսպիսիք քարոզութեամբք սերմանեցին յամենայն տունս որսմն և ատելութիւն, կագ և կռիւ. հակառակութիւն ՚ի մէջ հօր և որդւոյ, եղբօր ընդ քեռ, և որ այլ եւս են չարիք։

Գրեաց Հայոսն վարդապետ գանգատ ընդ ղուցանէ ՚ի Հռոմ, որպէս լինքն կամեցաւ. գրեցին և առքա բազումք և գիր աղերսանաց յայտ առնելով զանմեղ նպաստակ և զկանոնական դրութիւնս ընկերութեան իւրեանց, և զհակառակութիւն Հայոսն վարդապետին՝ որ չանայ ՚ի կոր կործանել զնորահաստատ ընկերութիւնն իւրեանց։ Եւ Հռոմ զգաստ առցա յանձն արար ՚ի վ[ենչենտիոս] Ֆէրիէրի կարտինալ իւր, որ էր յանժամ ՚ի կոստանդնուպոլիս, յատուկ գրեալ, յորում էր առաքելութիւն Տարածման հաւատոյ կոչեցեալ ժողովոյն նախագահ Ց. փ. Ֆըրանսեզի կարգինալին, և Ց. Պառնապօ առեննապերին։

Տարածման հաւատոյ սուրբ ժողովքին գերապատճան ու գերապատիւ կարդինալ նախագահին 28 մայիս 1850 Կոստանդնուպոլսոյ Հայոց նախագահ եպիսկոպոսապետին Հասունեան գերապայծառ Աննտն վարդապետին խրկած թղթոյն թարգմանութիւնը։

Վերջի երեք տարուան ընթացքին մէջ թէ սրբազան պապը ու թէ սուրբ ժողովքը համագգեաց անուամբ Պոլիս կանգնուած, ու ուրիշ տեղեր ալ ուղղափառ Հայոց մէջ քանի մը փոփոխութիւններով վերնրեալ ընկերութեան վրայօք զանազան ծանօթութիւններ առին։ աս ծանօթութեանց վախճանը նոյն ընկերութեան վրայ հրահանգներ առնել էր։ Հրամանքնիզ արժուն հովուի մը պաշտօնը կատարելով՝ ձեզի յանձնուած հաւատացելոց առաջնոց ծանուցիք այդպիսի ընկերութեան մը մօտակայ վտանգները, ոչ ալ զանց ըրիք խնա-

Digitized by Google

ցընելու միանգամայն սուրբ ժողովքին ու սա գործքիս մէջ ձեր բռնած ճամբան ու ձեր յայտնած կարծիքը անոր առ ջեւը դնելով՝ անոր դատումը խնդրեցիք։ Միանգամայն ընկերութեան գլխաւոր պաշտօնատարներէն քանի մը անդամք անգամէն աւելի սրբազան հօրը դիմեցին ու իրենց կանոնաւոր օրինակը խոնարհութեամբ անոր ներկայացնելով վէճը եղած ընկերութեան վրայ օրհնութիւնը խնդրեցին։

Ա՛ս ջանազան առնուած տեղեկութեանց կատարածը կրնար ծանրապէս խուճապել սուրբ ժողովը Հայոց ազգին հոգեւոր աղէկութեանը նկատմամբ. բայց ՚ի սկզբան մինակ մանաւոր նախազգուշութիւններ գործքի դրուեցան՝ որոնց վախճանը աւելի բուն իրաց վրայօք լիով ու ճիշտ ծանօթութիւններ առնել էր։ Ա՛ս պաշտօնը մանաւորապէս յանձնուեցաւ Սիդենոյ արքեպիսկոպոսին գերապայծառ Վինչենցիոս Ֆերրիերիին՝ որն որ սրբազան պապէն խրկուած էր իբր դեսպան վեհանձն ինքնակալ Սուլթանին ու նոյն առթիւ ալ առաքելական այցելութի պատուաւոր պաշտօնը իրեն յանձնուած էր։ Ա՛ս քաներուս վրայ եկան ողբալի դիպուածները՝ որով կթօնքի թշնամիները սկսան յարձակիլ անոր վրայ բուն իր կեդրոնին մէջ, ուր գերագոյն գահն է. կարելի ալ չէր պատկ դժուար պարագաներու մէջ աս գործքիս պարապիլ այնու ծանրութեամբ՝ զոր նոյն ինքը գործքը կը պահանջէր։ Փոխարինը դադրելէն ետեւ՝ սուրբ ժողովքը իր ընդհանրական ժողովքները նորէն սկսելու կարող ըլլալուն պէս, իսկ դեռատհաճան պաշտօնակիցներս պէտք եղած մտադրութիւնը ըրին աս գործքիս վերաբերեալ ամեն տեղեկութեանց վրայ, ու սրբազան հայրերնիս ալ սուրբ ժողովքին դատմունքը հաստատած ըլլալով՝ կը փութամ ձեզի զանի հաղորդելու։

Սուրբ ժողովքը համազգեաց ընկերութեան վերաբերեալ բաները ու մանաւորապէս իրեն կանոնները, ու որչափ ալ անոր փոփոխութիւններ մտցընել ուզուելը է նէ ալ, այսու ամենայնիւ իրեն մէջ օրէ օր աւելի յայտնուած հոգին ճիշտ քննութեամբ մտածելով պարտք դատեցաւ իրեն՝ ձեր արգէն յայտնած դատումնքին յարմարիլը ու աս առաջիկայ զիշերուս վերոյիշեալ ընկերութեան վրայ իր տհաճութիւնը ցցընելը,

Digitized by Google

մանաւորապէս վտանգներուն պատճառաւը՝ ու ուղղափառ Հայոց հոգեւոր աղէկութիւնը կրնան հանկիլ առաջ գալ։ Ու յիրաւի աս ընկերութիւնը անանկ անորոշ անսահման նպատակ մը կը ցոյցընէ, որ անզգոյնները քիչ քիչ ու առանց իմանալու իրենց խղճմտանքին դատապարտած գործքերու ալ կրնան դիւրաւ ձգուիլ, աս բանս աւելի դիւրութեամբ կրնայ հանդիպիլ, որովհետեւ իր կառավարութեան մէջ աս բանս արգիլելու բաւական ապահովութիւններ չիկան։

Ուրիշ ծանր վտանգ մ՚ալ կերեւի որ չըլլայ թէ աս ընկերութիւնը մինչուկ հիմայ Աստուծոյ ողորմութեամբը Հայոց ազգին մէջ պահուած ան հաստատուն բարեպաշտութեան ու քրիստոնէական կրթութեան կորսուելուն ու զանի մոլորեցընող սկզբունքներ մտնելու միջոց ըլլայ։ Որովհետեւ հաւատքը Աստուծոյ ծանրագին պարգեւն է, պէտք է զանի նախանձով պահել ու հեռուանց ալ անոր մաքրութիւնը մթնցընող ու վնասող ամեն պատճառները մեկդի ընելու է։ Ու թէպէտեւ 1848 ին քանի մը թեթեւ փոփոխութեանց վրայ ճառուեր է, բայց նոյն բնաւորութիւնը՝ ու նոյն հոգին մնալուն համար ընկերութեան մէջ՝ նոյն հիմնական վտանգն ալ կը մնայ կոր, որ չըլլայ թէ անոր պատճառաւը ուղղափառ կրօնի եղած սերտ սէրը երթալով տկարանայ, մանաւանդ որ դէռ ամեն իշխանութենէ ազատ ըլլալու կը ջանացուի, ու սանկ ճամբայ կը բացուի վերջապէս բանաւորականաց աղանդին հասնելու՝ որ ազգային բարութեան ու յառաջադիմութեան պատրուակներովը՝ կրօնքը կը փճացընէ։ Ջ՛ թէ եկեղեցին դէմ կը կենայ ճշմարիտ բարութեան ու յառաջադիմութեան, որ ինչպէս յայտնի է՝ կրօնքի ուղիղ սկզբունքներուն հետ միշտ կից կերթայ, նա մանաւանդ որ՝ ինչպէս քաջայայտ է, եկեղեցին աս պայմանաւ միշտ ու ամեն տեղ անիկայ առաջ տարած է։ Բայց ուրիշ այսչափ ազգերուն ողբալի դիպուածները յայտնապէս կը ցոյցընեն թէ ինչպէս աս անուններս չարաչար կը գործածուին, ուսկից ալ շատ դէշ հետեւութիւններ առաջ կուգան։ Աս տաբիններուս փորձն ալ կը հաստատէ՝ թէ որչափ իրաւամբ կը վախցուի՝ որ ան վերոյիշեալ անկարգութիւնները, Հայոց ուղղափառ ազգին մէջն ալ

Digitized by Google

հանդիպելին, որոնք ալ աւելի ողբալի կրնան ըլլալ, թէ որ ժամանակին յառաջատեսութեամբը իրօք կատարուին նէ։ Ընկերութենէ ծագած բաները հրապարակապէս ծանօթ են ազգին, ու բոլոր բարի անձինք՝ որ բարեբախտութեամբ ազգին մեծագոյն մասն են, անոնց վրայ կաւլան, աս պատճառներուս համար ով որ սրտին մէջ կրօնի ուղիղ սկզբանց փոյթն ու հոգը ունի, ապագային վրայ աղետալի նախագուշակութիւններ ընելու կըստիպուի։

Ըստի սուրբ ժողովքը յիշուած ընկերութեան որ և իցէ եղանակաւ կողմ բռնելը ու անոր ուղղակի կամ անուղղակի օգնելը թէ աշխարհական թէ կրօնաւոր կղերին բացարձակ արգիլելէն 'ի զատ, ձեզ ալ կը փութացուցանէ որպէս զի ձեր խնամոցը յանձնուած հաւատացելոց այգպիսի ընկերութենէ ետ քաշուելնուն պարապիք, ու ատ ալ ամեն փութով գործ դնելնուն բնաւ չերկբայիր, որովհետեւ համոզուած է որ մեծ մասը միամտութեամբ գրուած է անոր, ու առանց կարդալ ընդլալու առաջուց աղէկ մը իմանալու թէ ինչ հետեւութիւններ ու պատուղներ կրնան անկից ծագիլ։ Կը վստահի մանաւանդ թէ Կոստանդնուպօլսոյ Հայոց ազգը ապագային համար իրեն կանոն ու օրինակ բռնելով քիչ տարիներէ առաջ իրեն գլուխը եկած դիպուածները չի մոռնար, իրենց մէջ աւելի տարւոք եղողները աղէկ կը յիշեն ան ամեն բաները, որով կը տորմին զգոյշ կենալ ուր և իցէ ծածկուած վտանգներէն՝ որ կրնան գիրենք մոլորեցընել ուղղափառութեան միութենէն՝ որուն մէջ մինչեւ հիմայ՝ հաստատուն մնալուն համար թէպէտ ոչ զրկանաց՝ ու ոչ այնչափ նեղութեանց խնայեցին, որն որ իրենց ազգին օգուտն ու փառքը եղաւ։ Ցիշելով ուրեմն որ թէպէտ և կրթութիւնը ըստ ինքեան մեզ Աստուծոյ կառաջնորդէ ու մեզ կրօնի մէջ կը հաստատէ, բայց շատ անգամ ալ դէշի գործածութեամբ դէպովին ուրիշ վախճան կունենայ, անշուշտ իրենց պարտք մը սիւտի սեպեն զանիկա ստանալու, ուր որ Աստուծմէ իրենց հոգեւոր բարութիւն կարգած անձինք՝ անոր ուղղափառ կրօնի սկզբանց համեմատ թէ հաւատոյ և թէ բարի վարուց կողմանէ ոգջամիտ ու մոլորութեան ամեն վտանգէն ազատ ըլլալը յայտնի ընեն։ Ըստի սուրբ ժողովքն ալ հրա-

Digitized by Google

ժանոցը ուղիղ ու ճշմարիտ կրթութիւնը Ժողովուրդիդ մէջ տեսնել յայտնած չանքը թէպէտեւ գովելու պարտական է, բայց միանգամայն պատշաճ ալ կը դատի ձեզ փութացուցանելու, որպէս զի յարատեւէք ոչ միայն հովուի մը պարտք եղած հսկողութիւնը ցահելու, այլ յաւէտ անհրաժեշտ տարաձելու յարմար միջոցները շատցընելու, և քնաւ տարակոյս չկայ՝ որ հրամանոցը հպատակ եղող երկաքանչիւր գործակիցք ալ եկեղեցականները ամեն չանքով ձեզի հետ աս նպատակին գործակից ըլլան։ Այս ճամբով անդգոյշները խաբելու համար ու անմաքուր աղբիւրներէ թունաւոր վարդապետութիւնները ծծելու զանոնք առաջնորդելու համար՝ Հայոց ազգին հոգեւոր աղէկութեանը դէմ գինողներուն ամենեւին պատճառանք չմնար։ վերջապէս ձեր հօտին իմացընելու չըլլայ թէ զանց ընէք, որ թէպէտ աւետարանական օրէնքը մեզ պիտի շարժէ ամենուն ոչ ցըցընելու, ու թէ առ Աստուած աղօթքով թէ առաքինի վարուց օրինակաւ ու թէ պատշաճ յորդորանքներով ճամբէ ելած եղբայրներնուս ուղղափառ կրօնի հետ միաբանութիւնը դիւրինցընելու. այսու ամենայնիւ զդոյշ կենալու է ան անձերէն, որ բոլորովին ուրիշ միտքի ծառայելով, ան մասերուն վրայօք պայմանադրութեանց գիջանել կը պահանջեն, որոնց վրայ եկեղեցին իրաւամբ միշտ անդրդուելի կեցաւ, որովհետեւ ճշմարտութեան ու ստութեան մէջ միաբանութիւն չկրնար ըլլալ։

Մինչեւ հիմայ յայտնուած միտքն են և սրբազան հօրերնուս միտքն, որովհետեւ ինչպէս ի սկզբան ալ ձեզի ծանուցի, սրբազան պապը սուրբ ժողովքին ան յայտնած դատումը լիով հաստատեց հաճեցաւ.

Կաղաչեմ զԱստուած որ, եւայլն։

Ց. Փ. Պապքինել Ֆրանսայի Նախարար

Ա. Պոռնոյ պրինտպոլէր

Digitized by Google

եանց զտուն մի մեծ ՚ի Բերա, զոր նորոգ չինեցին արդեամբք ընկերութեանն, և կոչեցին «Խորհրդարան Համազգեաց Ընկերութեան». և օր քան զօր յաւելցոյր թիւ անդամոց նորին. և բաղումք ՚ի լուսաւորչածին Հայոց յաւելան յարձանագրութիւնս ընկերութեանն։

Լուեալ զայսոսիկ Հասուն վարդապետ, խորհրդով համախոհից իւրոց ամբաստան եղեւ զսոցանէ առ Բ. Դուռն. զոր խմացեալ միաբանասէր կողման Եւտուն գիր աղերսանաց առ արքայ՝ յայտ արարեալ ՚ի նմին, եթէ ՏԷր արքայ՝ ըստ բարձր հրամանի և կամաց ձերոց՝ զոր եւոուք արքունի հրովարտակաւ առ ամենայն ազգս հպատակեալս մեծազօր տէրութեան ձերում, վոյթ յանձին առաք կազմել զընկերութիւն իմն մեք ազգակից եղբարքս, և դիտումն և չանք մեր են ծաղկեցուցանել զուսումն և զդիտութիւն ՚ի մերազնեայս ՚ի դաւառս ՊՆատօլուի շնորհիւ կայսերական ակնարկութեան ձերոյ. բայց այժմ ազգապետ մեր Հասուն վարդապետ հակառակ չանից և դիտաւորութեան մերոյ կամի ցրուել և կործանել զընկերութիւն մեր, և ոչ թոյլ տայ մեզ յառաջ վարել զիաւիաք ուսումնասիրութեան մերոյ։

ԸՆթերցեալ արքայի զաղերսագիրն, հրամայեաց, զի հաստատեսցի ազգային ժողովն ՚ի Պատրիարքարանի հռովմէական Հայոց, և մի ոք խափան և արգել լինի Համազգեաց ընկերութեան, և զկարեւոր հանգամանս հաստատութեան սոցին յանձն արար ՚ի Բ. Դուռն հոգալ և տնօրինել զամենայն, որ ինչ կարեւոր և արժանն էր։

Եւ Բ. Դուռն հրաւիրեաց զՀնգեսին երեւելի անդամս ընկերութեանն Համազգեաց, և զհինգ կուսակիցս Հասունեանց, ընդ որս և զնախագահ նոցին զՀասուն վարդապետ ՚ի Բ. Դուռն, և յետ բաղում բանակռուութեանց և խօսակցութեանց պատշաճ դատեցաւ առաքել զերեւելի պաշտօնատարսն ՚ի կողմանէ Բ. Դրան յեպիսկոպոսարանն նոցին, առնել անդ ժողով յերկուց կողմանց, և ՚ի ժողովին յայնմիկ քննել զկանոնս Համազգեաց ընկերութեան, և եթէ փոփոխութեան և սրբագրութեան կարեւորութիւն ինչ պատշաճ դատիցի, համաձայնութեամբ որոշեսցի։

Digitized by Google

Եւ հրամանաւ Բ. Դրան առաքեցան առաջին թարգման Էմին էֆէնտի, և Թահրիրաթ միւտիրի Սայիտ էֆէնտի յեպիսկոպոսարանն նոցին առնել ազգային ժողով և քննել զոմիսս և զբաղձանս երկուց կողմանցն, զվայելուչսն անօրինել և զանվայելսն բառնալ. և եթէ հնար իցէ, հաշտեցուցանել զնոսա ընդ եպիսկոպոսին իւրեանց։

Եղեւ ժողովն ի 28 յունիսի 1848, և հաստուն վարդապետ ընթերցաւ զպահանջմունս իւր, յորում փոփոխեալ էին կանոնադրութիւնք ընկերութեանն, որոց գլխաւորն էր այս, զի լուսաւորչածին հայք ելցեն յընկերութենէն, և մի՛ ընդունելի լիցին յայսմհետէ իբրեւ անդամ ընկերութեան։

Ա.յամ հակառակ կացին միաբանասէրքն և վիճեցան յոյժ. բայց վանն զի դատաւորն եկեալ ՚ի Բ. Դրանէ որոշեաց վճռաբար յասելն, թէ որովհետեւ սա գլուխ ձեր է հաստատեալ արքունի հրովարտակաւ, և սմա յանձնեալ է տէրութիւնն կառավարել զձեզ ըստ իւրումն խոհականութեան և ըստ քաղաքական օրինաց, պարտաւորութիւն ձեր է հնազանդիլ հրամանաց և կարգադրութեանց սորա, և որ սմա ոչ հնազանդի, այնպիսին և արքայի իակ է անհնազանդ։

Զայս լուեալ նոցա և ելեալ արտաքս, յոգի խօսեցան. և թէպէտ չեղեն հնազանդ հրամանաց նորա, բայց ցրուեցան ՚ի չերմեռանդ սիրոյ և վաստակոյ իւրեանց, և ցրուեցաւ ընկերութիւնն առաւելապէս, որ գերապանծ հանդիսանայր օր ըստ օրէ, և մեծամեծ օգուտս ունէր ցուցանել Ա.րամեանս ազին ընորհիւն Աստուծոյ։

Գլխաւոր միաբանասէրք ընկերութեանն էին իննեքին սքա, զորս ոչ կամելով անկիշատակ թողուլ յապայս ժամանակի, ՚ի ճահ դատեցայ նշանակել աստանօր յականէ յանուանէ, որք էին Մկրտիչ Սամանճեան, Յակոբ Տաւուքեան, Ա. Լուիգեան, Խաչատուր Գազազեան, Յովսէփ Վարդանեան, կաթողիկոս Թիւլկէնտճեան, Սարգիս Ասկէրեան, և Սերովբէ Ազնաւուրեան։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԿԳ.

Ցաղագս հրաժարելոյ Մատթէոսի 'ի պատրիարքութենէն, եւ կրկին անգամ պատրիարքութեան Ցակովբայ արքեպիսկոպոսի։

(1848) Այսպէս՝ որք առաջ էին 'ի վաղ ժամանակաց հետէ անտի փոխել զպատրիարքս և զառաջնորդս երեւելի գաւառաց, քանիցս անգամ կամեցան ընկենուլ զՄատթէոս պատրիարք, այլ ոչ յաջողեցան. զի ամենեքին չլինէին միաբան 'ի մի սիրտ և 'ի մի խորհուրդ. ումն կամէր և միւսն ոչ կամէր. և ոչ կարէին զկիրս իւրեանց յառաջ տանել, զի անհամաձայնք գտանէին իրերաց։

Եւ նախ ճանիկ ամիրայ Թշնամացաւ պատրիարքին. զի քոյր ճանիկ ամիրային մեռաւ, և պատրիարքն որ հրաւիրեցաւն 'ի հանդէս յուղարկաւորութեան ննջեցելոյն, ոչ գնաց պատճառելով զտկարութիւն անձինն։

Ի նոյն աւուրսն և Միսաք ամիրայ կամեցաւ զերկերիւր կանգուն գետին սուրբ երրորդութեան եկեղեցւոյն Բերայի որ հայէր 'ի մեծ պողոտայն, գնոց առնուլ փոխանակ պահանջանաց իւրոց, զոր արարեալ էր 'ի ծախս շինութեան գաւիթանեայ դպրոցին և արհեստարանին օրիորդաց և մշտահոս աղբերն 'ի նոյն թաղին։

Այսմ ղէմ կալաւ Մատթէոս պատրիարք, և ոչ թոյլ ետ նմա. և Միսաք 'ի ձեռն Պէրպէրեան Ցակոբ վարդապետին՝ որ քարոզիչն էր եկեղեցւոյն, առաքեաց ընծայ առ պատրիարքն զպատուական մուշտակ իմն յովազենի, որ արժէր աւելի քան զհինգ հազար դահեկանս, աղաչելով և խնդրելով, զի թոյլ տացէ նմա գրաւել զգետինն։ Բայց Մատթէոս պատրիարք ոչ զաղաչանն ընկալաւ և ոչ յերեսս ընծայիցն նայեցաւ. նաեւ կոչեալ զտէր Ջաքարիա աւագ քահանայ եկեղեցւոյն՝ պատուէաց նմա զկամս Միսաքայ և զընդդիմութիւն իւր առ նա. և նորա գնացեալ 'ի Բերա, ծանոյց ժողովրդ-

Digitized by Google

եանն, և ըստ խորհրդոյ պատրիարքին դրեալ զբողոք իմն ստորագրութեամբ բազմաց, խնդրեցին ՚ի պատրիարքէն փոխել զվերատեսուչ եկեղեցւոյն զՄիսաք, և զայլ ոք ՚ի բարեպաշտ ազգասիրաց կարդալ ՚ի տեղի նորա. և Մատթէոս պատրիարք կոչեալ զվառօդապետ Պօղոս ամիրային, աղաչեաց ըզնա և համոզեաց, և հաճեցոյց յանձն առնուլ զվերատեսչութիւն եկեղեցւոյն:

Զայս լուեալ Միսաք, զայրացաւ անհնարին բարկութեամբ, և չուեաց ՚ի Բերայէ յԵնիգիւղ. և գիտելով զիշնամութիւնն՝ զոր ունէր Ճանիկ առ պատրիարքն, եկեալ յաքեցաւ ՚ինա. և գտեալ իւր համախոհս յամիրայից և յարհեստաւորաց, արարին ժողով ՚ի Խումրի խան ՚ի սենեակն կէսկէսլեանց, և պէս պէս մնոտի բարուրանս և զրպարտութիւնս ստայօդեալ, որոշեցին զփոփոխութիւն պատրիարքին. և ընտրեցին ՚ի կողմանէ ժողովոյն պատգամաւոր զԴէորգ փաշազեան և զՅովհաննէս Լազրճեան ՚ի սեղանաւորաց՝ երթալ առ պատրիարքն, և խնդրել զհրաժարական նորին ՚ի դիմաց ազգին:

Եկին նոքա առ պատրիարքն, և խոնարհաբար յայտ արարին զկամս ժողովոյն, և խնդրեցին զհրաժարականն: Եւ պատրիարքն ընկալեալ զնոսա սիրով, մեծարեաց և օրհնեաց, և յետ բազում բանից կնքեաց զխօսս իւր առ այս, «Թէ ես ուխտիւք խնդրեի և խնդրեմ հրաժարիլ ՚ի պաշտօնէ աստի, բայց ոչ այսու անարգական եղանակաւ. զայս պատասխանի տալեք, առ որս առաքեցինն զձեզ»:

Եւ ՚ի հետեւեալ աւուրն ՚ի սկիզբն ապրիլի դարձեալ ժողովեցան ամիրայք, և առաքեցին պատգամաւոր զՅովհաննէս ամիրայ ճարտարապետ և զՊօղոս Աշնանեան, ընդ որս և յարհեստաւորաց զսահմեճի Յովհաննէս Սուրէնեան, և զսակրիչ Մ՚ելքիսեդ, զվիւլպենճեան մահտեսի Պօղոս և զՅովսէփ Ալեանաքեան, զմինթեանճի Աստուածատուր և զղըզճցի Սարգիս, որոց եկեալ միանգամայն խրթեւ պատգամաւորս ՚ի կողմանէ բոլոր ազգին և ոչ սոսկ ամիրայից, խնդրեցին զհրաժարական նորին:

Իսկ պատրիարքն զոր ինչ խօսեցաւ յառաջնում աւուր,

Digitized by Google

զնոյն առաց և առ նոսա և արձակեաց զնոսա, որք դնացեալք ՚ի ժողովն, առեն, թէ նա քնաւ երբէք չկամի տալ զհրաժարականն իւր։

Յայնժամ Հանիկ և Միսաք առաջարկեն ժողովոյն առնել մահատարական դրութիւն ՚ի դիմաց բոլոր ազգին և ստորագրել, թէ ոչ կամի համաձրէն ազգն զպատրիարքն, և խնդրէ ՚ի տէրութենէն, զի փոխեսցէ զնա։

Ցոան եկաց Պետրոս Քիւրքճիևանեան, պատասխանի ետ և ասէ ցնոսա, եթէ հարցանիցէ տէրութիւնն, թէ վասն որոյ յանդգնացաք փոխել կամիք, և զի՞նչ մեղս գործեալ իցէ առ տէրութիւնն և առ ազգն, զի՞նչ պատասխանի ունիմք տալ, և թէ քանի՞ խռովութիւն ծագի յայնժամ յազգի մերում. վասն որոյ ես ոչ կարեմ ստորագրել զայդ գիր։

Եթէ քաղցրութեամբ խնդրեցիք զհրաժարականն, և ոչ ետ, բռնութեամբ ոչ կարէք առնուլ. և յայսպիսի ժամանակաց հետէ այս օրէնք են, զի քաղցրութեամբ խնդրի հրաժարականն և ոչ բռնութեամբ։

Ա.յսմ համաձայնին և Մագսուտ Սարիմեան, Միքայէլ Բիշմիշեան, Մկրտիչ Ճէզայիրլեան, Յարութիւն Երկանեան, և այլք։ Ասեն եւս, թէ ո՞ւր են վառօդապետքն երկոքին. ո՞ւր է ճարտարապետ կարապետ ամիրայն. ո՞չ ապաքէն նոցա եւս անկ է գոյանիլ ՚ի ժողովիս, զի ըստ օրինի վճարեսցի ամենայն բան. և զայս ասացեալ ելանեն և երթան, և ցրուի ժողովն։

Ա.նցին ամիսք հինգ, և պատահեաց դէպք լինչ այսպիսի։

Ա.զգասէր և բարեպաշտ պօղոս աղա Պետրոսեան Օտեան՝ գրագիր չինուածոց արքունի պալատին՝ առեալ ընդ իւր զտէր Յովհաննէս աւագ քահանայ սուրբ Խաչ եկեղեցւոյն Իւսքիւտարու, որ էր իւր խոստովանահայր, գայ առ պատրիարքն, և յետ սովորական ողջունաւորութեանց խնդրէ վակէլ ըղդուռն սենեկին, և պատուիրէ, զի մի ոք մտցէ ՚ի ներքս։

Եւ հանեալ ՚ի ծոցոյ իւրմէ գյիսուն հազար դահեկան, դնէ առաջի պատրիարքին, և խնդրէ, զի կոչեալ զՄ.ղբուսնայն աղա զվերատեսուչ սուրբ Յակոբեան եկեղեցւոյն Գալաթիոյ քիւվկի՝ տացէ նմա և առասցէ, թէ բարեպաշտօն ամն զայս յի-

Digitized by Google

սուն հազար դահեկան եւս ողորմութիւն եկեղեցւոյն, ո՛ր
թում դու վերստաեւս չդ՛ ես, բայց այսու պայմանաւ, զի զտո-
կոսիս սորին հինգ դահեկան առ մէն մի քսակ հաշուով՝ որ
առնէ հինգ հարիւր դահեկան, տացես ամէոյ յամէն ՚ի պէտս
դպրոցի եկեղեցւոյն: Բայց աղաչեմ ասէ, զի այս իրրեւ խոս-
տովանութիւն եղիցի առաջի ձեր, և մի՛ ոք գիտասցէ, թէ
ես տուեալ եմ զայս ողորմութիւն. միայն դու գիտասջիր, և
այս խոստովանահայրդ իմ, և արձանագրեսցի ՚ի յիշատակարան
եկեղեցւոյն ընդ անուամբ բարեպաշտօն անձին միոյ և երէ:

Ընկալեալ պատրիարքին զյիշեալ դահեկանն գնէ յար-
կեղ իւր, և օրհնէ զնա ըստ բարեպաշտութեան նորին. և ՚ի
յաջորդ աւուր կոչէ զՔաղցուման առաջն առ ինքն, որ վասն
տկարութեան անձինն ոչ կարելով երթալ, առաքէ զՄ՚ի քայել
զորդի իւր. և Մատթէոս պատրիարք յանձն արարեալ նմա
զյիսուն հազար դահեկանն, տայ նմա գրել և նշանակել, թէ
բարեպաշտօն ումն եւս զայս ողորմութիւն առեալ. Ոսկեբերան
եկեղեցւոյն՝ այսու դաշամբ, զի զտոկոսիս սորին հինգ հարիւր
դահեկան ամենայն պարտիք տալ ՚ի պէտս դպրոցի եկեղեց-
ւոյն. և նորա առեալ երթայ, և նշանակէ այնպէս յարձանա-
գիրս եկեղեցւոյն: Զայս լուեալ ճէզայիրլեանն, հետաքրքիր
լինի հարցանել, թէ ո՞ է այրն այն, որ զյիսուն հազար դա-
հեկանս տայ ողորմութիւն միոյ եկեղեցւոյ:

Հարցանէ ճէզայիրլեանն զպատրիարքն. և նա ասէ, այդ
խոստովանութիւն է, և ես ոչ կարեմ յայտնել զանուն տուո-
ղին: Եւ նա ասէ, տէրութիւնն՝ արքունի հրովարտակաւ խոր-
հըրդակից արար զմեզ ՚ի պատրիարքարանիս, ընդէր դու մի-
այն առնուս և տաս, և մեք ոչ իմանայցեմք. միթէ այս ար-
համարհութիւն չէ՞ մեզ: Ասէ պատրիարքն, եթէ չլինէր խոս-
տովանութիւն, պարտաւոր էի յայտնել ձեզ. բայց զի տուողն
խոստովանաբար եւս, վասնորոյ եւս ոչ կարեմ յայտնել ձեզ. և
ձեզ մեզք են հարցուփորձ առնել:

Յայնժամ զայրանայ ճէզայիրլեանն, և ելեալ երթայ բար-
կութեամբ և հայհոյութեամբ. և դնացեալ առ մեծ վէզիրն
Բէչիտ փաշա, որում՝ սեղանաւորն էր և սիրելին յոյժ, աղաչէ
զնա և թախանձէ զիսնել զպատրիարքն, պատճառելով, թէ

Digitized by Google

զքաղաքական ժողով պատրիարքական՝ զոր հաստատեաց տէրութիւնն ար քունեի հրովարտակաւ. ոչ ուշ ոչինչ հասնիր, այլ ինքնին միայնակ առնու և տայ, հրամայէ և գործէ, և ե֊թէ մեք հարցանիցեմք ցնա, թէ զի՞ եղեւ այն գործ և ո՞րպիսի ինչ է, պատասխանէ մեզ, թէ չէ արժան գիտել ձեզ զայն, և հարցանելն անգամ մեզ քեն ձեզ։

Յայնժամ Թէշիտ փաշա կոչեաց զՄարգման իւր պետկոր Նրճիկեան, պատուիրէ նմա գնալ առ պատրիարքն և ասել, զի գրեսցէ զհրաժարական իւր ՚ի Բ. Դուռն. և գնացեալ ՚ի տուն իւր, հանգիցէ առ ժամանակ մի ՚ի սքտամաշ հոգոց կա֊ռավարութեան ազգին. իսկ երթէ յամառեսցէ ՚ի կամս իւր ոչ տացէ զհրաժարականն, անարգանօք հանեմ զնա և աքսորեմ։

Տօն էր վերացման սրբոյ խաչին, և պատրիարքն գնացեալ էր յիւսկիւտար ՚ի պատարագել յեկեղեցւոյն. երթայ պետկոր Նրճիկեան յիւսկիւտար, և գտանէ զպատրիարքն ՚ի տան Մի֊քայէլ ամիրայի Բիշմիշեան, և պատմէ նմա զհրամանն վէզիրին. և պատրիարքն ցուցանէ նմա զնեղազանդութիւն հրամանաց նորուն, և խոստանայ տալ զհրաժարականն, և դարձ արարեալ գայ ՚ի պատրիարքարանն, և գրէ հրաւիրանաց թուղթս առ ժողովական ամիրայս։

Յաւուր հինգշաբթի եղեւ ժողով մեծ, և սկսաւ խօսել պատրիարքն առ ժողովեալսն, և ասէ ցնոսա։

Եղեն ոմանք ՚ի ձէնջ, որք երկիցս անգամ հանել կամեցան զիս ՚ի պաշտօնէ աստի, և խնդրեցին յինէն քառնութեամբ զհրաժարական իմ. և ես պատասխանի ետու նոցա, «թէ զի՞նչ »իցէ պակասութիւն իմ, և զի՞նչ մեղս գործեալ իցեմ յեկեղե֊»ցական և ՚ի քաղաքական կարգադրութիւնս, մինչ չիցեմ »չանադիր պայծառութեան դպրոցաց և յառաջադիմու֊»թեանց նոցին, և պաշտպան յամենայնի ուղղափառ եկե֊»ղեցւոյս Հայաստանեայց չնորհիւն Քրիստոսի։

«Երթէ ՚ի սոսին պակաս ինչ գտեալ իցեմ, յայտնի արասցէ »հրապարակաւ ազգային ժողովն հոգևորականաց և աշխար֊»հականաց զյանցանս իմ. զի գիտացեալ ըստ այնմ հրաժա֊»րեցայց ՚ի պաշտօնէ աստի, և մի՛ յետ հրաժարմանս միւս֊»անգամ մեզանչեցից, ըստ որում պաշտօնեայ եմ Քրիստոսի,

Digitized by Google

» և հովիւ հոգեւոր բանաւոր հօտին իւրոյ , և մինչեւ ցվախ-
» ճան կենաց իմոց ունիմ ծառայել ազգիս և եկեղեցւոյս ։

« Բայց եթէ բռնութեամբ հանել կամիցին զիս ի պաշտօնէ
» աստի որպէս այժմ , յօժարութեամբ ընդունիմ և զսյն , զի
» և առաքեալք ի ժամանակի քարոզութեան իւրեանց անար-
» դանօք ելանէին յատենէ անտի ։ Ոչ կամիմ լինել պատճառ
» գայթակղութեան ազգիս , երկուցեալ յՔ(ր)ստուածային բա-
» նէն , թէ վայ որ գայթակղեցուցանէ , զի առանց հարցա-
» քննութեան յաղագային ժողովի եթէ յօժարիցիմ տալ զհրա-
» ժարականս , իւրաքանչիւր ոք յաղագս յայլեւայլ ունկն կար-
» ծիս լինել , և գուցէ ղանազան պակասութիւնս բարդիցեն
» ի վերայ իմ. վասնորոյ կամիմ հրապարակաւ յայտնի լինել
» թէ հոգեւոր և թէ մարմնաւոր պակասութեանցս ։

« Զի՛նչ առաչարկութիւնս արարին ի զայծառութիւն
» սուրբ եկեղեցւոյ և ի բարեկարգութիւն ազգիս , և ես դիմա-
» կաց եղէ և ոչ յօժարամտեցի յայնոսիկ , և եթէ հակառակ քա-
» ղաքականութեան Բ. Դրանն մեղանչեցի , կամիմ դիտել և զայն ։

« Զի՛նչ խնդիր մատուցին ինձ ի պէտս հրկիզելոց , աղքա-
» տաց , ի հաւատս փորձանաւորաց , և ես անփոյթ արարի ըզ
» նոցանէ ։ Ահա 37865 դահեկան տուեալ եմ մինչեւ ցարդ ի
» պէտս դարձի նորաղանդից ի ծոց սուրբ եկեղեցւոյս ։ Գնան
» և հինգ հազար դահեկան ետու Յամենեցիոյ հրկիզելոցն ի
» ձեռն եկեղեցապանաց եկեղեցւոյ նոցին ։ Վեց հազար դահե-
» կան ետու Գաղատիոյ աղքատաց հացագին ի ժամանակի
» սովուն ։ Եւ չորս հազար հինգ հարիւր դահեկան ետու ի
» պէտս փորձանաւորաց ի հաւատս ։ Ա՛յս ամենայն որոշակի
» քննեալ և ստորագրեալ է պարոն Յակոբ Կրճիկեան յաթա-
» նագրութիւնս պատրիարքարանիս , որ այժմ նստեալ կայ
» ընդ ձեզ . թող ինքն վկայեսցէ ։

« Ա՛րդ ահա տամ ձեզ ղհրաժարականս իմ որոց յանդ-
» եալքն իցեն առիս գիտութեամբ և անդիտութեամբ , թո-
» ղութիւն եղիցի նոցա . և ես եթէ ընդդէմ պատուոյ ձերոյ
» մեղանչեցի յանդէտս , խնդրեմ ներողամիտ լինել ինձ բա-
» րեսէր ոգւով . մնայք բարեաւ և ամենայն յաջողութեամբ ,
» և Տէր օրհնեսցէ զձեզ զամենեսեան » ։

Digitized by Google

Եւ հանեալ զհրաժարականն ի դրպանակէն՝ տայ Մագոսա-
ամիրային. և նա ընթերցեալ ի լուր ամենեցուն, եւս զակո-
բայ կրճիկեան տանիլ առ վէզիրն։

Յայնժամ ժողովեալքն եղեալ յոտս, արտասուալից աչօք
համբուրէին զձեռս նորա. և ոմանք ի նոցանէ ի ծունկս անկ-
եալք աղաչէին, զի ասասցէ ի վերայ իւրեանց զպահպանիչ և
զողորմեացի, և այնպէս տրտմադին եղանակաւ դարձան ի
տեղիս իւրեանց. և պատրիարքն եղեալ անտի գնաց մեկու-
սացաւ առընթեր պատրիարքարանին ի տան Ձանիկ ամիրա-
յին, զոր ի վարձու կալեալ էր մահտեսի Յովհաննէս Ալէան-
եան։

Եւ յաւուր շաբաթու ժողովեցան ամիրայք ի պատրիար-
քարանն. եկն և քարտուղար արտաքին գործոց նախարարին
հրամանագրով եպարգոսին յընտրութիւն պատրիարքի։

Լուր եհաս ի վաճառանոցն, և սկսան արհեստաւորք
խումբ խումբ իջանել ի պատրիարքարանն. և լցան զեղեն ի
Մայր եկեղեցւոյն և ի պատրիարքարանին. և գլխաւորքն ի
նոսին եղեին ի վեր, յառաջոյ իւրեանց ունելով զդինեպան ի-
կէնտէր զայրն ճարտարախօս, և սկսան աղաղակել։

Ասէ ցնոսա քարտուղարն, զինչ խնդրէք, եւ նոքա ասեն,
զՄատթէոս պատրիարք մեր։ Ասէ ցնոսա, նա կամովին հրա-
ժարեցաւ ի պաշտօնէ իւրմէ, և ՏԷրութիւնն ընկալաւ զհրա-
ժարական նորա, և հրամայեաց զայլ ոք արժանաւոր կարգել
ի տեղի նորա։ Ասեն և նոքա. մեք գնացեալ առ նա աղա-
չեմք և թախանձեմք և հաճեցուցանեմք յանձն առնուլ դարձ-
եալ զպատրիարքութիւն։ Ասէ ցնոսա քարտուղարն. անդարձ
է հրամանն տերութեանն. Մատթէոն ոչ կարէ դարձ առնել
վերստին յիւր պաշտօն։

Յայնժամ դինեպան իակէնտէր պատասխանի տայ քարտու-
ղարին և ասէ ցնա, ժողովուրդս այս խնդրէ, զի եթէ անհնար
է Մատթէոս պատրիարքին վերադառնալ, զակոբոս եպիսկո-
պոս առաջնորդն Եւդոկիոյ լիցի պատրիարք. կամ Մատթէոս
և կամ զակոբոս. զայլ ոք ոչ ճանաչեմք և ոչ ընդունիմք,
թէեւ յերկնից իջեալ իցէ։ Ընդ այս բան նորա աղաղակեցին
միահամուռ ժողովուրդքն, թէ զզակոբոսն խնդրեմք, զակո-

Digitized by Google

թա՛ն ցակոբա՛ն։ Եւ քահանայքն խոստացաւ նոցա կատարել զխնդիրն նոցա, եթէ ցրուեսցին և գնասցեն ՚ի տեղիս իւրեանց։

Եւ էլ ամբոխն արտաքոյ պատրիարքարանին, և կալին առդրան Մայր եկեղեցւոյն. և ամիրայք ակամայ կամօք զինչան յընտրութիւն ժողովրդոյն, և ստորագրութեամբ իւրեանց որոշեին զՅակոբոս. և հրամանաւ Բ. Դրան առաքեցին հրաւիրակս յԵդոկիա, և ածին զՅակոբոս ՚ի Կոստանդնուպօլիս, որ գնացեալ ՚ի Բ. Դուռն, ընկալաւ զնշան պատրիարքական իշխանութեան, և դարձաւ մեծաւ վառօք ՚ի պատրիարքարանն։

Իսկ Մատթէոս պատրիարք առանձնացաւ ՚ի տան իւրում յՕրթագիւղ, որում չնորհեաց արքայ ՚ի գանձուց իւրոց երկու հազար դահեկան ամենական. և ետ զանձն իւր յընթերցանութիւնս սուրբ գրոց, և արար ճառս հոգեշահս քազումս։ Շարադրեաց զմատեանն «Հանդիսարան հաւատոյ ուղղափառութեան Հայոց». յորում երկուասանք հերքէ զղրպարտութիւնս պապականաց և նորաղանդից։ Գրեաց յետ այնր և զմատեանն «Բարի մարդ և բարի Քրիստոնեայ» ընդդէմ զրպարտողաց զեկեղեցւոյն Հայոց։

Գրեալ էր և յեպիսկոպոսութեան իւրում՝ի Զմիւռնիա քաղաքի «Խորհրդածութիւնք նշանաց և խորհրդոց սուրբ եկեղեցւոյ», զոր կրկին տպագրութեամբ հրատարակեաց գրաքառ և աշխարհաբառ։

Ձետ երից ամաց հրաժարեցոյց եւր՝ի պատրիարքութենէն յամին 1851 ՚ի մայիսի 19 ընկալաւ դարձեալ յարքայէ զնշան ազամանդեայ և մեծագին ՚ի տան իւրում յՕրթագիւղ։

Եւ յետ երկուց ամաց ըստ բազում թախանձանաց և խնդրոյ ազգիս կարգեցաւ առաջնորդ մեծի վիճակին Նիկոմիդեայ և սուրբ ուխտին Ա. Ծմնաշու, յոր գնացեալ բարեկարգեաց և միսիթարեաց զժողովուրդն զամ մի և կէս. և հրաժարեալ անտի վերադարձաւ ՚ի տուն իւր յՕրթագիւղ, պատրաստեալ ՚ի գիրս հոգեշահս առանձինն։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԿԴ.

Ճաղատս ազգին եւ խռովութեան Հայոց եւ Հռովմէականաց, որ եղեւ ի պատճառս հրատարակման Խոսրերէն եւ Հայերէն պարսաւագրոցն։

(1848) ՅԱՒՈՒՑ յայտահիկ հրատարակեցաւ յանկարծ ի մայրաքաղաքիս պարսաւադիրք իմն Խոսրերէն, որ ամբաստանէր զմիաբանութիւն վենետկեան վանից իբրեւ ղհերձուածողս եւ ղհերետիկոսս, պատճառելով եւ հաստատելով, թէ սոքա չառագով եւ պաշտպան են Հայոց հերձուածողաց, արտաքուստ կեղծաւորաբար Հռովմէական ուղղափառ ցուցանեն դինքեանս, բայց գաղտնի հաղորդակից են ընդ հերձուածողաց ի հոգեւորս, եւ այլ այսպիսի ամօթալի եւ եսերելի դրպարտութեամբք եւ ստայօդ բանիւք զմիբայեան միաբանութիւնն դատապարտէր իբրեւ ղհերետիկոսս. հեղինակ գրոցս չէր նշանակեալ ի դուռն մատենիս, բայց խոհական անձինք վազ ընդ փոյթ գուշակեցին եւ հաստատեցին, թէ մատն Հասուն վարդապետին է ի սմա, եւ նորին խորհրդով շարադրեալ է սա յանխիղճ եւ յանամօթ գոլէճեանց։

Յետ ամաց հնդից հրատարակեցաւ եւ այլ իմն պարսաւադիրք Հայերէն ի կողմանէ վենետկեան միաբանից, որպէս թէ հերքել կամելով զցուցմունս եւ զիմաստս Խոսրեանն, ցուցանէ զինքեանս եւ զմիաբանութիւն իւրեանց ջերմեռանդ յոյժ եւ յամենայնի հպատակ հրամանաց պապին Հռովմայ, յայտ յանդիման խոստովանի, թէ մեք բնաւ հաղորդակից չեմք եղեալ ընդ Հայոց ի հոգեւորս, եւ թէ ազգ եւ եկեղեցին Հայոց է հերձուածող եւ հերետիկոս. եւ պարսաւադրոցս հեղինակ էր Հ. Ալթէն Կոմիտասեան երեւելին ի միաբանս վենետկեան վանից, որ էր յայնժամ ի Կոստանդնուպոլիս։

Իբրեւ հրատարակեցաւ այս մատեան ի մէջ ժողովրդեան, զարմանք կալաւ զամենեսին. զի ամենեքին մնայուն Հայք այնպէս գիտէին եւ այնպէս հաւատացեալ էին յայտագրէ ժա-

Digitized by Google

մանակաց՝ հետէ, թէ Աբբայեան հարք՝ ջատագով և պաշտպան են Հայաստանեայց եկեղեցւոյ, բարեկամ և սիրող հայրենի ազգին և հնաւանդ կարգաց և սովորութեանց. վասնորոյ և յամենայնի ձեռնտու և նպաստող էին առաստաձեռն արդեամբք և նուիրօք՝ ի տպագրութիւնս մատենից նոցին և բազմավէպ օրագրին, որպէս ցովհաննէս պէյ Տատեան աւելի քան զհազար քսակ ոսկւոյ ՚ի ներմեռանդ սիրոյ նուիրեաց՝ ի նըպաստ տպագրութեան նորոգ աշխարհագրական տախտակաց և ներածութեան նոցին, և բազմավէպ օրագրին. սոյնպէս և այլք բազումք, զորոց չէ տեղւոյս յերկարել մի ըստ միոջէ։

Բայց այժմ ծանեան ամենեքին, զի և նոքա ոչինչ ընդհատ՝ ի գոլեճեանց կամ ոչ պակաս քան զնոսին ոխերիմ թշնամիք են Հայաստանեայց եկեղեցւոյ. որպէս յետ ոչ բազում ամաց վորձիւ ծանուցին զինքեանս։ Իբր զի Աբբահայր նոցին Հ. Գէորգ եպիսկոպոս Հիւրմիւզեան գրեաց զգիր իմն, թէ ազգ և եկեղեցին Հայոց է հերձուածող և հերետիկոս, և ետ սատրագրել բոլոր միաբանութեան իւրոյ, և ներկայացոյց առաջի գահին Հռովմայ. որով որպէս թէ սուտս և զրպարտիչս կայուցանել կամեցաւ զՀասուն եպիսկոպոս, վասնորոյ և արար բողոք առ ժողովն տարածման հաւատոյ, և խնդրեաց՝ ի դատ ելանել ընդ նմին, և արդարացուցանել զմիաբանութիւնն իւր։

Բայց ժողովն տարածման հաւատոյ ոչ ետ հրաման ժողովով քննել և որոշել զդատ սոցա. միայն հրամայեաց, զի պարսաւագիրքն այնքիւկ թէ իտալական և թէ Հայկականն՝ երկոքին եւս խափանեալ մնասցեն և բարձցին՝ ի միջոյ։

Այս էր միտ և դիտաւորութիւն հիւրմիւզեանին, զի եթէ ոչ յաջողեսցի ինքեան յաղթող լինել՝ ի դատին, ՚ի չքմեղս եղիցի ինքն, և հաշտութիւն խօսեսցի ընդ Հասուն եպիսկոպոսին միջնորդ ունելով ինքեան զոմանս յեպիսկոպոսաց ժողովոյն։ Այլ եթէ յաղթող գտանիցի, յանկուսցէ ինքն զՀռովմէական ժողովուրդս մայրաքաղաքիս՝ ի ձեռն միաբանից իւրոց, և ընկեցիկ արարեալ զՀասուն, ինքն փոխանակեսցէ զտեղի նորին իբրեւ մետրապոլիտ կամ պատրիարք Հռովմէական Հայոց։

Զայսոսիկ գեղեցիկս նկարագրէ բազմավաստակ ծերունին

Հ· Սարգիս վարդապետ Թէոդորեան՝ ի քառահատոր օրագ-
րութիւնս իւր· տեսցէ անդ, որ կամիցի լիովին տեղեկանալ
այս ամենայն անցից ըստ հարկաւոր պարագայիցն· մեզ տաղտ-
կալի է դրել զայսոսիկ։

(1855) Յետ երկուց ամաց Հ· Գաբրիէլ վարդապետ Ա-
վազուածքի հրաժարեցաւ՝ ի կեղծաւոր միաբանութենէ վե-
նետկեան վարդապետաց վասն ստորագրելոյ նոցին զդէն
Հայոց հերձուածողք և հերետիկոս· և առանձնացեալ՝ ի փա-
րիզ դրեաց և հրատարակեաց յայտարարութիւնս վասն հրա-
ժարման իւրոյ, և սկսաւ հրատարակել նորոգ օրագիր ամսօր-
եայ Մասեաց Աղաւնի անուն։

Եթաց և զվարժարան իմն անդ՝ ի փարիզ Ղրեւելեան վար-
ժարան կոչեցեալ· և սկսաւ անդ ժողովել զմանկունս յուսումն
լեզուագիտութեան և բնական գիտութեանց։

Հ· Սարգիս վարդապետ Թէոդորեան՝ և Հ· Ամբրոսիոս վար-
դապետ Գալֆաեան՝ ոգւով աղգասիրութեան վառեալք եկին
և միաբանեցան ընդ Ա.յվազովսքի վարդապետին· ընդ որս
յետոյ միաբանեցաւ և Հ· Խորէն վարդապետ Գալֆաեան։ Զո-
րըեքին սոքա գրեալք զդիր հպատակութեան սիրոյ և մեծա-
րանաց առ Յակոբ պատրիարք և առ սրբազան Ներսէս կա-
թողիկոս, միանգամայն և զողջամիտ դաւանութիւն հաւատոյ
Հայաստանեայց եկեղեցւոյ, ընկալան զկոնդակ օրհնութեան և
եկեղեցական իշխանութեան իւրեանց՝ և զվեղար և զփիլոն
ըստ տարազու եկեղեցականաց Հայոց, և մտին ընդ հովանա-
ւորութեամբ և պաշտպանութեամբ պատրիարքին Հայոց՝ ան-
կախ և ազատ գոլով՝ ի պապական լծոյն։

Բացաւ և մաստուռն մի Հայոց անդ՝ ի փարիզ վասն պա-
տարագելոյ Հայ քահանայի ըստ արարողութեան Լուսաւորչ-
եան եկեղեցւոյ հրամանաւ Նաբոլէօն կայսեր՝ ըստ խնդրոյ Յա-
կոբ պատրիարքին· և սկսաւ պատարագել մնդ Շահնազար-
եան դարապետ վարդապետ։

Ի չորեսին կղզիս՝ որք կան յանդիման Կոստանդնուպօլ-
սոյ, մինչեւ ցայս վայր չէր եկեղեցի Հայոց· և Հայազգիք՝ որք
օգափոխութեան աղագաւ երթային՝ ի կղզիս յամարանոցս,
աւուրս կիւրակէից գնային ականջ յեկեղեցիս Յունաց պա-

Digitized by Google

'ի չլինելոյ եկեղեցի Հայոց · ուստի 'ի սմին ամի ժրաջան վաստակօք բարեպաշտ անձանց մերազնեայց և սիրայոյզ քաղուքեամբ ցակոբայ պատրիարքի՝ եղեւ հիմնարկութիւն եկեղեցւոյ 'ի Գրնալը կոչեցեալ կղզւոյն, ուր 'ի քանի ինչ ամաց հետէ սկսեալ էին Հայք չինել տունս անդ և բնակիլ · և կատարեալ գչինուքիւնն էօծ ցակոբ պատրիարք փառաւոր հանդիսիւ յանուն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին 'ի 15 յուլիսի 1855 ։

ԳԼՈՒԽ ԿԵ ·

Ցաղագս պատուելոյ սրբազան կաթողիկոսին Ներսիսի զցակոբ պատրիարք արժանաւոր մեծարանօք, եւ ահագին պատերազմին Ռուսաց, որ եղեւ վասն անօրինական տեղեաց սուրբ Երուսաղէմի, եւ վախճանի սրբազան կաթողիկոսին Ներսիսի, եւ կաթողիկոսութեան Մատթէոսի առաջնոյ ։

(1850) Զայս ամենայն դէպս՝ զոր 'ի վեր անդր յիշատակեցաք, պարտ և արժան համարեցաւ ցակոբ պատրիարք գրել և ծանուցանել սրբազան կաթողիկոսին Ներսիսի, որ հովուապետն էր Հայաստանեայց եկեղեցւոյ, և այս ամենայն դէպք վերաբերէին առ եկեղեցին Հայոց · ուստի գրեաց ընդ գիր հպատակութեան սիրոյ և մեծարանաց առ սրբազան կաթողիկոսն, և պատմեաց զամենայն · Ա.ռաքեաց ընդ գրոյն և զշուրջառ լիմն ոսկեթել և ծանրագին ընդ այլոց ընծայից, և սրբազան կաթողիկոսն ուրախացեալ յոյժ գովեաց զհաւատարմութիւն նորա և զհարազատութիւն առ ազգն և եկեղեցին Հայոց, և առաքեաց զմարգարտազարդ մեծագին գոնգքեռ հայրապետական զարդարեալ պատկերօք սուրբ փրկչին և Աւետարանչաց, և զկնդակ օրհնութեան առ ժողովուրդս մայրաքաղաքիս, որ ընդերցաւ յամենայն եկեղեցիս ։ Ա.ռաքեաց Ներսէս կաթողիկոս և հաղար ոսկի բօլիմբէռիալ 'ի Զմիւռնիա*

Digitized by Google

'ի նպաստ չինուհեան հրկիզեալ սուրբ Յակինթեաս եկեղեցւոյն Հայոց, որ սկսեալն էր նորոգ չինիլ քարուկիր յօրինուածով։

Ցաւուրան յայնոսիկ փոխարքային կովկասու վօրօնցով ընդ իշխանուհւոյն իւրոյ յայց եւ 'ի սուրբ Էջմիածին, ուր եղեւ ընդունելութիւն մեծ 'ի սրբազան կաթողիկոսէն Ներսիսէ, և եղեն ընասավառութիւնք և ուրախութիւնք։ Ցետ ամաց երկուց և թագաժառանգ մեծ որդի կայսերն Ռուսաց դուքսն Ալէքսանդր եկն յայցելութիւն 'ի սուրբ Էջմիածին, ընդ առաջ նմա գնաց սրբազան կաթողիկոսն ընդ երից եպիսկոպոսաց, և արժանաւոր մեծարանօք եղոյց նմա սքրալիր ընդունելութիւն, որ կացեալ անդ օր մի, մեծաւ չնորհակալութեամբ վերադարձաւ, տուեալ 'ի նպաստ սուրբ Ամենայն Էջմիածնի երկու հարիւր յիսուն ոսկիս Հոլանտիոյ (Մաճառ)։

(1852) Ի սմին ամի կայսերք Գաղղիոյ և Աւստրիոյ պահանջեցին զնոր կարգադրութիւն լինչ յարքայէ վասն մնօրինական տեղեաց սրբոյ Երուսաղէմի. յորում պահանջէին 'ի ծուննաց նախ՝ զբացարձակ իշխանութիւն մատուցանելոյ զԱստուածային պաշտօնն 'ի վերայ սրբոյ գերեզմանին, որպէս ունէին յամին 1808։

Երկրորդ՝ պահանջէին զթոյլտուութիւն նորոգելոյ զգըմբեթին սուրբ ծարուիեան տաճարին։

Երրորդ՝ պահանջէին զմկրտարանն, և զեօթին աղեղունսն Մարիամ կուսին, որք մնան հանարին սուրբ գերեզմանին։

Չորրորդ՝ զԱթղէհէմի մեծ եկեղեցին և զմերձակայ երկու պարտէզսն, զորս առին ծոյնք 'ի ձեռաց Լատինացւոց յամին 1757։

Հինգերորդ՝ զեկեղեցին, յորում են գերեզմանք ծովակիմայ և Ամենայն Ծնողաց սուրբ Աստուածածնին, սրբոյն ծովհաննէսի Աստուածահօրն, և սրբոյն Սիմէօնի Ծերունւոյն։

Վեցերորդ՝ զայրն Հովհաննաց, զոր առին ծոյնք 'ի ձեռաց Լատինացւոց յամին 1828։

Եօթներորդ՝ զաստղն, որ էր 'ի վերայ Ծննդեան խորանի Լատինացւոց, զոր յափշտակեցին ծոյնք 'ի նոցանէ յամին 1847 Հոկտեմբեր 30։

Ընդ այս խնդիր եւրոպական տէրութեանցն՝ եղեւ ժողով

Digitized by Google

նախարարաց և օրէնսգիտաց ՚ի Բ. Դրան, և արժանաւոր վար-
կուցեալ ղպահանջմունս նոցին, կամեցաւ արքայ նոր հրովար-
տակաւ տալ նոցա զոր պահանջէին, բայց դեսպանն Ռուսաց
ընդդէմ եկաց այսր կարգադրութեան, և օր քան զօր սաստ-
կացաւ վէճն, մինչեւ եղեւ պատճառ մեծի պատերազմին Ռու-
սաց ընդդէմ Օսմանեանց և Եւրոպական Թագաւորութեանց
Անգլիոյ, Գաղղիոյ, և Իտալիոյ. և տեւեաց զամս երկուս, և ՚ի
սուր մատնեցան աւելի քան զմի միլիոն անմեղ անձանց յերկուց
կողմանց, ընդ նմին և անբաւ հեղեղք ոսկւոյ ՚ի ծախս պատե-
րազմին, և աւերմունք քաղաքաց, դիւղից, և բնակութեանց,
մինչեւ վերջացաւ մեհեանամբ Նիկողայոսի Ռուսաց կայսեր։

(1857) Յետ մեռ ամի Ներսէս կաթողիկոս յանկարծ ՚ի
գիշերի մեռաւ ինքեաց զկեանս իւր ՚ի հասակի ինամուն և վեց
ամաց բազմեալ յաթոռ գրիչ ՚ի Ճեռին ՚ի վեհարանի իւրում
՚ի Տփխիս քաղաքի՝ կացեալ ՚ի հայրապետութեան զամս չորեք-
տասան, և ընդ առաւօտն ձայն եղեւն զանգակատունք զա-
նակնկալ մահ սրբազան հայրապետին, և լցան զեղան քաղա-
քացիք յեկեղեցւոջ, և մեծաւ հանդիսիւ կատարեաց զկարգ
թաղման Յարդիս արքեպիսկոպոսն Ջալալեան, և ամբաւիակ-
եալ յարկեղ միւռմ եհան սուրհանդակս յԷջմիածին և ազդ
արար զմահ սրբազանին։

Եւ իսկոյն եղին վեց արքեպիսկոպոսունք յԷջմիածնէ և ե-
կին ՚ի Տփխիս, և յետ աւուրց ինչ առեալ տարան զմարմին
հայրապետին ՚ի սուրբ Ամբոռն, և հանդուցին առ մեծի դը-
բանն կաթողիկէ եկեղեցւոյն սուրբ Էջմիածնի։ Գոհ մեծ ա-
րարին Հայք ընդ մահն առն Աստուծոյ, որ զտիւ և զդիչեր
պարապէր թերեւս գտանել հնարս ինչ կանգնել զկործանեալ
տունն Հայկայ ՚ի վաղեմի փառս իւր. առ այս տքնէր, և այս
տենչանք սրտին և ակնկալութիւնք ազգիս Թաղեցան ընդ
նմա, բայց յիշատակ իւր յազգիս մերում անմոռաց մնասցէ յա-
ւիտեան։ Եւ դրեալ ազդ արարին ՚ի Կոստանդնուպոլիս զկնի-
ճան սրբազան կաթողիկոսին ՚ի 13 փետրվարի 1857, ծանու-
ցանելով միանգամայն, եթէ ՚ի յաջորդ ամի յամենայն յունիսի
ունի լինել ժողով ազգային երեսփոխանաց յաթոռն սուրբ՝
վասն ընտրութեան նոր կաթողիկոսի։

Digitized by Google

ի պարտէզ ՅԱկալ ասիոդոյն՝ Յարդիս արքեպիսկոպոսն Ջալլաղեան կայսերական հրովարտակաւ կարգեցաւ առաջնորդ վրաստանու և իմէրէթի . և Մատթէոս արքեպիսկոպոսն առաջնորդ Ջժտարխանի , և Գաբրիէլ վարդապետ Ալվազովսքի՝ որ ընդ եղբօր իւրոյ պարոն Յովհաննու եկն ի փարիզէ ի կոստանդնուպոլիս , և պատիւ մեծ ընկալեալ յազգէս , յետ տասն ձերբեք աւուրց գնաց ի Ղրիմ ի հայրենիս իւր , կայսերական հրովարտակաւ կարգեցաւ առաջնորդ նոր Նախիջեւանու , Պեսարապիոյ , և Ղրիմու ։ Պաշտօնաբաշխութիւնքս այսոքիկ էին գլխովին հակառակ օրինաց և աւանդութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ , վասնորոյ ոչ սակաւ ցաւեցան սիրտք ազգասիրաց , առաւել ի վերայ նոցա որք դիտելով զկարգ և կանոն , զիշան յընդունելութիւն այսց պաշտամանց ։

Յաւուրս յայսոսիկ եղեւ և գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի ի Շուշի քաղաքի աշխարհին Սիւնեաց ի վանս Ամարասու , ղոր նորոգ սկսեալ էին շինել վասն հնութեանն , եւ ի գետնափորոյ արկղ մի մեծ երկաթի՝ կնքեալ կնքով վաչկան թագաւորին Աղուանից , յորում էր մարմին սրբոյն հանդերձ յիշատակարանաւ անապական մնացեալ յայնչափ դարուց հետէ ։

Յամսեանն ապրիլի եղեւ ժողով եկեղեցականաց և աշխարհականաց ի պատրիարքարանի վասն ընտրելոյ զերիս արժանաւոր անձինս յարքեպիսկոպոսաց ի կաթողիկոսութիւն ի բաժնի Օսմանեան տէրութեան , և հանահաճութեամբ ամենեցուն ընտրեցին նախ զՅակոբ պատրիարք . բայց նա հրաժարեցաւ պատճառելով զծերութիւն իւր և զտկարութիւն անձինն , և աղաչեաց արտաստուօք զժողովեալսն ընդունիլ ըզ հրաժարական իւր ։

Եւ նոքա զիջեալ յաղաչանս ծերունւոյն ընտրեցին ասպա նախ զՅովհաննէս պատրիարքն սրբոյ Երուսաղէմի , երկրորդն՝ զնախորդ պատրիարք Մատթէոս սրբազան արքեպիսկոպոսն , որ առանձնացեալն էր ի յՕրթագիւղ ։ Երրորդն՝ զվիճակաւոր սրբազան Գէորգ արքեպիսկոպոս զառաջնորդն Պրուսայու ։

Եւ դրեալ զանունս սոցա և ստորագրեալ ժողովեցոցն ամենեցուն՝ գրեցին և առաքեցին ի Ճեթխա , կարգելով և

Digitized by Google

ընտրելով երեսփոխան ի կոչմանէ իւրմանց զերկուս յերեւելի իշխանաց Տփխիսեցւոց, զի դնացեալք յԷջմիածին տացեն քուէս ի կողմանէ Հայոց յՕսմանեան բաժնին եղելոց։

Եւ ի 18 յունիսի 1858, եղեւ ժողովն ի սուրբ Ներսէն, և քան վաղեմի սովորութեան արկին վիճակս երեսփոխանաց ամենեքին, և ել վիճակն Մատթէոսի նախորդ պատրիարքին կոստանդնուպօլսոյ, և ըստ այնմ գրեցին և ծանուցին ի ձեռն փոխարքային կովկասու ի դուռն կայսերն Ռուսաց ի Պետերբուրգ։

Վաւերացոյց կայսրն զընտրութիւն կաթողիկոսին, և ծանուցաւ հրաման նորին դեսպանին Ռուսաց ի կոստանդնուպօլիս, որ պաշտօնական կերպիւ առաքեաց զառաջին թարգման իւր զՊրեիրօբուլի ի Բ. Դուռն՝ ծանուցանել, եթէ վեհափառ կայսրն Ռուսաց հաստատեալ զընտրութիւն Մատթէոսի կաթողիկոսին Հայոց, խնդրէ, զի հրաման տալիք նմա մեկնիլ ի կոստանդնուպօլսոյ ի սուրբ Էջմիածին։

Եւ Բ. Դուռն ըստ խնդրոյ կայսերն Ռուսաց մանաւանդ գրով բարեհաճեցաւ շնորհել հրաման նորընտիր կաթողիկոսին դնալ ի սուրբ Էջմիածին երբ և կամեցի։ Եւ Մատթէոս կաթողիկոս շնորհակալութեամբ մեծաւ ընկալեալ զհրամանն, կամեցաւ զձմեռն առաջակայ անցուցանել ի կոստանդնուպօլիս, և ի գարնան յաջորդ ամին ճանապարհորդել յԷջմիածին. և յայնմ օրէ սկսաւ յիշատակութիւն անուան իւրոյ յեկեղեցիս Հայոց ի սուրբ Պատարագի։

ԳԼՈՒԽ ԿԶ.

Ցաղագս պատրիարքութեան Գէորգեայ, եւ ճանապարհորդութեան Մատթէոսի ի սուրբ Էջմիածին։

(1858) Յակոբ պատրիարք պատճառելով զծերութիւն իւր և զտկարութիւն անձինն, կամովին հրաժարեցաւ ի պատրիարքութենէն, և ընտրեցաւ ի տեղի նորա Գէորգ արքեպիս-

Digitized by Google

կոչեաս առաքելոցդն Պրուսայու յազգային ժողովի ընդ նախագահութեամբ սրբազան կաթողիկոսին, զոր ծանուցեալ արքունի Դրան, ածին ՚ի Պրուսայէ և առաքեցին ՚ի Բ. Դուռն, որ ընկալեալ զնշան պատրիարքական իշխանութեան, մեծաձանդէս չքով վերադարձաւ ՚ի պատրիարքարանն։ Իսկ ըստկոր պատրիարք առանձնացաւ ՚ի տան սուրբ խաչ եկեղեցւոյն յիւսքիւտար, և արար ՚ի նմա նորոգութիւնս բազումս։

Ցետ քանի մի ինչ ամաց նորոգեաց և զդպրոց թաղին քաղուկիր յօրինուածով և հոյակապ շինուածով, որ հրկէզ եղեալն էր. և ՚ի պարտիզի նորին պատրաստեաց զդերեզմանն իւր, բայց թաղեցաւ ՚ի վանս սուրբ փրկչին յերուսաղէմ, յոր գնացեալն էր յուխտ և յերկրպագութիւն ՚ի կատարումն ուխտին, զոր ուխտեալն էր ՚ի մանկութենէ իւրմէ։

Ցետ երկուց ամաց եկին ՚ի կողմանէ սուրբ Էջմիածնի հրաւիրակք առ սրբազան կաթողիկոսն՝ Մակար արքեպիսկոպոսն և Մկրտիչ և Գալուստ վարդապետք և երկու սուրհանդակք. և նստեան ՚ի Բերա ՚ի տան միում, զոր պատրաստեաց նոցա Գօղոս պէյ Տատեան կահիւք և կարասեովք և ամենայն կարեւորօքն հանդերձ։

Ի նոյն աւուրսն հրաւիրեցաւ սրբազան կաթողիկոսն ՚ի պալատան արքայի, որ առեալ ընդ իւր զԳօղոս պէյ Տատեան, և զՄակար եպիսկոպոս, և զՄկրտիչ և զԳալուստ և զընդրէս վարդապետսն, գնաց առ արքայ. և ընկալեալ զառաջինն կարգի Մէճիտիյէ շքանշանն՝ վերադարձաւ մեծահանդէս չքով. իսկ Մակար եպիսկոպոսի և երից վարդապետաց չնորհեցան երրորդ կարգի Մէճիտիյէ նշանք, որք յետ աւուրց ինչ խընդրեցին հրամանի ՚ի սրբազան կաթողիկոսէն երթալ յուխտ յերուսաղէմ, և վերադառնալ զկնի Զատկին։

Եւ ՚ի քառասնորդ աւուր ապրիլի Լօրիս Մելիքով Հայազդի ժէնէռալն եկն ՚ի կոստանդնուպօլիս ուղեկցութեամբ իւր բանակի օդնական Հայազդի Մելքայէլ Միանսարով հարիւրապետին տանել զսրբազան կաթողիկոսն յիջմիածին. և իջեալ յատարանս դեսպանին Ռուսաց յերկուշաբթի աւուր, ծանոյց ՚ի պատրիարքարանն. և ՚ի յաջորդ աւուրն գնացեալ ընդ Տատեան Գօղոս պէյին ՚ի պատրիարքարանն, առեաւորեցան ընդ

Digitized by Google

Գէորգայ պատրիարքին, և որոշեցին ՚ի հինգշաբթի աւուր գնալ առ սրբազան կաթողիկոսն յՕրթադիւղ, և ղորձուածս ղայս ծանուցին սրբազան կաթողիկոսին։

Եւ ՚ի հինգշաբթի աւուր Գէորգ պատրիարք չորս վարդապետօք, և Պօղոս պէյ և Յովհաննէս պէյ Տատեան և Գէորգ պէյ Երամեան բազմութեամբ իշխանաւոր անձանց ել եալք ՚ի Բերայէ ընդ վսեմափայլ զօրապետին, եկին Յօրթագիւղ առ սրբազան կաթողիկոսն, որ սպասէր գալստեան նոցին ընդ ուխից վարդապետաց և Սարգսի եպիսկոպոսի և նախկին պատրիարք Յակոբ սրբազանին յընդարձակ և գեղեցիկ տան դերդաստանին Եուսուֆեանց։

Վսեմափայլ զօրապետն ներկայացեալ առաջի նորին վեհափառութեանն՝ համբուրեաց զալ նորա և ասէ. «Վեհափայլ Տէր, փոխարքայն կովկասու բարեհաճութեամբ թագաւոր կայսեր իմոյ եղ ՚ի վերայ իմ զքաղցր պատուաւորութիւնն գալ ՚ի կոստանդնուպօլիս, և ՚ի դիմաց ամենայն Հայոց Ռուսաստանի չնորհաւորել սրբազնութեան ձերում զհաստատութիւն ձեր յաթոռոստիսառ կոյսերէ ՚ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց, հրաւիրել զձեզ ՚ի սուրբ աթոռն Էջմիածնի, և ուղեկից լինել Սրբազնութեանդ յամենայն սահմանս Ռուսիոյ։ Երջանիկ համարիմ զանձն իմ, որ այսօր՝ առ ՚ի կատարել զեղեալն իմ պարտաւորութիւն, չնորհ ունիմ ներկայանալ վեհափայլութեան ձերում, և եռանդեամբ հոգւոյ համբուրել ըզ սուրբ աչն ձեր»։

Եւ սրբազան կաթողիկոսին համառօտ և գեղեցիկ ատենաբանութեամբ եւս նմա զհայրապետական օրհնութիւն իւր։ Յայնժամ Եուսուֆեանց Տիգրան աղա երիտասարդ աշնուականն ՚ի դիմաց ազգային երեսփոխանաց և ամիրայից արար համառօտ ատենաբանութիւն իմն առ վեհափայլ կաթողիկոսն և ասէ. «Վեհափառ Հայրապետ, աներկբայ լինելով, թէ հայրսիանամ սիրտ ձերդ վեհափայլութեան անպատում բերկրութեամբ լցեալ է այսօր, տեսանելով առաջի վեհափառութեան ձեր զյարգելի պատգամաւորս երեւելի իշխանաւորաց ազգիս և բոլոր հասարակութեան՝ որք գտանին ՚ի մայրաքաղաքիս, խնդրեմք հրաման ՚ի Սրբազնութեան ձերմէ

յայտնել վեհափայլ զօրապետին զհաւատսիս անպատում բերկրութեանց, զոր զգամք և վայելեմք ընդհիւ գալստեան նորին։

Եւ դարձուցեալ զերեսս իւր առ զօրապետն, ասէ, տէր զօրապետ, այո՛ ներկայութիւն ձեր զկրկնակի ուրախութեանց զառիթս մատակարարէ մեզ, տեսանելով նախ զձերդ մեծանձնութիւն արժանաւորապէս վարձատրեալ յօգոստափառ ինքնակալէն ամենայն Ռուսաց, և նոյնպիսի մեծարանօք պատուեալ յօգոստափառ սուլթանէ մերմէ, որ ամենամեծ պատիւ և միանգամայն պարծանք է ազգի մերում, որով կայրեմք պարծիլ այսօր և մեծարիլ յօտար ազգաց։ Եւ երկրորդ՝ մեծ է ուրախութիւն մեր տեսանելով զհաւատսիս բերկրութեանց Ռուսիաբնակ մերազնեայց, զոր զգան յանձինս՝ տեսանելով զընտրութիւն նորին վեհափառութեան Պատրիէոսի սրբազան կաթողիկոսիս, բարձրացեալ՛ի գահ հայրապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ յառաքելական աթոռ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի, և համաձայնութիւն նոցին յայս առաւածապարգեւ ընտրմ՝ հաւատիք իմն են արդի համաշխարհական քաղաքակրթութեան սիրաբորբոք միաբանութեան, որ անհրաժեշտ կերպիւ կարեւոր է ի և իցէ ընկերութեան, որ ցանկայ մնանել ընդ լուսաւոր նորին պատուոյ։

« Ուրեմն իրաւունս ունիմք յուսալ մխիթարութիւն և ըզգալ ուրախութիւն տէր զօրապետ, տեսանելով զօգոստափառ ինքնակալացն ամենայն Ռուսաց և Ցաճկաստանի զչնաշխարհիկ համարումն, զոր ունին առ ազգ մեր, և զոր յայսմ առթի փառաւորագոյն կերպիւ յայտնեցին մեզ. որոց և բարձր կամակեան յարաբերութիւնքն միջոց իմն են յառաջադիմութեան ազգի մերում։

« Ազգ մեր՝ի վաղ ժամանակաց հետէ առատապէս վայելեալ է զհայրագորով խնամս օգոստափառ ինքնակալացս այսոցիկ փոխարէն իւրոց հաւատարիմ ծառայութեանցն. և որովհետեւ վեհափառութիւնք նոցին պատուիրեն մեզ մնալ նե՛ր՝ի շարիղ լուսաւորութեան այժմեան դարուս, յոր զառաջին կարեւոր քայլափոխն արարեալ է ազգ մեր, և խոստացեալ կատարել զքաղցր պարտաւորութիւնսն զայնոսիկ, խընդ-

Digitized by Google

րեմք ՚ի ձէնջ ամէն զօրապետ, զի լինիջիք թագաւորին յուսալից զգայմանցս այսոցիկ առ օգուստափառ ինքնակալն, որոց կայսերական անգին կենաց և յարատեւ բարեկամութեանն եմք ցանկացողք և աղօթարարք»։

Պատասխանի եւս Մելիքով զօրապետն և ասէ «Ամէնքդ, յորմէ հետէ ազգս Հայոց վայելէ զպաշտպանութիւն Օսմանեան և Ռուսիոյ մեծազօր տէրութեանց, դովելի հաւատարմութեամբ իւրով արժանի եղեալ է վստահութեան և համակրութեան նոցա, չանասցուք ուրեմն պահել միշտ և առաւել զայս պարծանք ազգիս, հաւատարիմ կալով խոպառ՝ դուք ձերում թագաւորի և մեք մերում, և այսպէս կատարելով զպարտաւորութիւն մեր՝ յառաջադիմեսցուք ընդ շաւիղ քաղաքակրթութեան դարուս»։

Յետ ցնծալից այցելութեանս և բազմապատիկ մեծարանացն՝ զոր արար ազգասէր գերդաստանն Եուսուֆեանց ՚ի շնորհս սրբազան կաթողիկոսին և ՚ի պարծանս ազգիս, վերադարձաւ զօրապետն մեծաւ գոհանակութեամբ ՚ի բերթա ընդ որոց եկեալն էր։

Եւ ՚ի յաջորդ աւուրն հրաւիրանօք Բ. Դրան դնաց զօրապետն ընդ դեսպանին Ռուսաց ՚ի պալատն արքայի, և դտեալ սիրալիր ընդունելութիւն և մեծամեծ յարգանս, դնաց անտի ՚ի Բ. Դուռն, և արար այցելութիւն մեծի եպարգոսին՝ և արտաքին գործոց տեսուչ Ֆուատ փաշային՝ և այլոց երեւելի պաշտօնակալաց։

Բազմապատիկ եղեն կոչունք և խնճոյք և հրաւէրք վսեմակալ զօրապետին ՚ի Բերթա, յօրթագիւղ, և ՚ի պէշիկթաշ, բայց դերազանցեաց քան զամենեսին հրաւէրն ՚ի Բերթա յօթեւանին՝ որ կոչէր Օթել տը պիլանս, զոր արարին ուսումնականք ազգիս ՚ի պատիւ նորին վսեմութեանն, ուր բազում ճառք խօսեցան համառօտ ձեւովք, և եղեն փոխադարձ բարեմաղթութիւնք։

Մեծահանդէս էր և շուք փառաւորութեան Ազբաջան կաթողիկոսին ՚ի հրաւէրն յեկեղեցիս ՚ի մատուցումն սրբոյ Պատարագի և ՚ի լուր սքանչելի ատենաբանութեանցն։

Առաքեաց և պատրիարքն Բունաց զփոխանորդ իւր հան-

Digitized by Google

դերձ երկու եպիսկոպոսօք ի չնորհաւորութիւն առ Պրբազան կաթողիկոսն, բերեալ չնորհաւորութիւն ի պատրիարքէն, ոչ ըստ ընկալեալ սիրալիր ընդունելութիւն, վերադարձան ի տեղիս իւրեանց։

Իսկ դեսպանն Անգլիացւոց արար ի պալատի իւրում ըղ փառաւոր հացկերոյթ ի պատիւ սրբազան կաթողիկոսին և Մելիքով զօրապետին, ընդ որս սեղանակից էին և դեսպանքն Ռուսաց և Պէլճիքացի և Պօղոս պէյ Ցատեան։

Յաւուրսն յայնոսիկ բարձրապատիւ Դուքն կոստանդինանոս երթայր կայսերն Ռուսաց ընտանեօք իւրովք գնացեալ յուխտ ի սուրբ Երուսաղէմ, արար այցելութիւն սրբոց ցանկութեանց դերահռչակ ուխտին Հայոց. և սիրալիր ընդունելութիւն գտեալ ի Յովհաննէս պատրիարքէն հանդերձ ոսկէ խաչիւ ընծայիւք սուրբ կենաց փայտին և սրբոց մասանց, վերադարձաւ մեծաւ չնորհակալութեամբ ի նաւ իւր. և յետ հնգետասան աւուրց եկն ի կոստանդնուպօլիս, որում պատրաստեալ էր արքայ զապարանն Էմիրկիւնի։

Գնացին անդր յայցելութիւն նախարարք տէրութեան, դեսպանք Եւրոպացւոց, և պատրիարքունք ցունաց և Հայոց։ Իսկ սրբազան կաթողիկոսն պատրաստեալ զիւրն խաչ մի հանճարեղ ոսկի մարգարտազարդ, ազուցեալ ի նմա զմասն սրբոց կենաց փայտին և սրբոյն Ստեփանոսի նախավկային, գնաց առ բարձրապատիւ Դուքն ընկերութեամբ Գէորգայ պատրիարքին և Պօղոսի Ցատեան. զորս ներկայացոյց Մելիքով զօրապետն առաջի նորին վսեմութեան, որ բացաւ գլխով ընդառաջ եղեալ համբուրեաց զալ սրբազան կաթողիկոսին. և նա օրհնեաց զնա, համբուրեաց զճակատ նորա, և ետ նմա զբրբաջան նուէրն տանիլ և կախել զպարանոցէ որդեկին իւրոյ։ Եւ բարձրապատիւ Դուքն մեծարեալ յոյժ զսրբազան կաթողիկոսն, խօսեցաւ ընդ նմա ապատել աւուրս ինչ, և ընդ իւր մեկնիլ ի կոստանդնուպօլսոյ ի մեռում աւուր։

Եւ ի նմին աւուր հեռագրով հրամայեն առաքեաց ի Նիքօլայեվ նաւատեղին յերկիրն Ղրիմու, առաքել զչոգենաւ մի մեծ պատրաստեալ ամենայն զարդուք ի կոստանդնուպօլիս առ ի տանել զսրբազան կաթողիկոսն ի Բօլթի։

Digitized by Google

Եւ ըստ հրամանին յետ հրկիզ աւուրց եկին պատուական և գեղեցիկ չոգենաւ մի ՚ի կոստանդնուպօլիս, և ըստ պղտա-ըարուվթեան դեսպանատանն Ռուսաց եկն և խարսխեաց առաջի Օրթադիւղի։

Լուեալ արքայ, եթէ բարձրապատիւ Դուքան ունի մեկնել ՚ի կոստանդնուպօլսոյ յերկիր իւր, հրաւիրեաց զնա ՚ի նէօքսու յամարաեոցն ՚ի հացկերոյթ, յոր զվերջին հրաժա-րական ողջոյնն ետ արքայն Դուքան մեծ, ծանուցանելով մի-անգամայն, եթէ և կամիոզիկոսն Հայոց ունի ՚ի վաղիւն մուտ-նել ՚ի չոգենաւ երթալ ՚ի սուրբ Էջմիածին։

Եւ ՚ի յաջորդ աւուր առաւօտուն հրաւիրեաց արքայ զը-Սրբազան կամիոզիկոսն ՚ի պալատ իւր տալ զվերջին հրաժա-րական ողջոյնն, և սիրալիր ընդունելութիւն և բազում մե-ծարանս ցուցեալ նմա, դարձոյց զքեզ փառօք և պատուով յՕրթադիւղ. ուր եղեւ հանդէս մեծ ՚ի ծովեզերեայ յարկի ձանիկ ամիրայի, յորում ժողովեալք էին պատրիարքն, եպիս-կոպոսք, վարդապետք, և քահանայք, իշխանք մեծամեծք, և բազմութիւն հասարակութիւն Հայոց ընդ ծով և ընդ ցամաք. որոց ամենեցուն տուեալ սրբազան հայրապետն զսիրալիր ող-ջոյն իւր և զօրհնութիւն, եմուտ ՚ի չոգենաւ ընդ Մելիքով զօրապետին յիններորդ ժամու երկուշաբթի աւուր ՚ի յու-նիսի 2, 1859։

Ի նմին պահու և բարձրապատիւ դուքան եմուտ ՚ի չո-գենաւ իւր, և ՚ի միասին ելաք ՚ի ճանապարհ ընդ նեղուցն Վոսբորի։ Ուղեկից եղեն ընդ սրբազան հայրապետին և Սար-գիս եպիսկոպոս Ամենրիանուպօլսոյ, Սարգիս վարդապետ Թէոդորեան, Աբրահամ վարդապետ Պիւլպիւլեան, և այլք։ Ընդ նոսին էի և ես, որ դոլով ատենադպիր Նորուն վեհա-փառութեան և դասատու Նորին ՚ի քառասուն և հինգ ամաց հետէ, ականատես եմ այս ամենայն անցից, զորս հաւատար-մաբար ՚ի գիր անցուցի մեկին և պարզ ոճիւ առ դիւրմանց ինելոյ ամենեցուն։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԿԷ·

Ցաղագս հանդիսից, որք եղեն ի ճանապարհորդութեան սրբազան կաթողիկոսին մինչեւ յԷջմիածին, եւ փառաւոր օծման նորա, եւ դարձից նորա, եւ պատրիարքութեան Սարգսի։

(1859) Յետ երից աւուրց հասեալ ի Թօխի, ուր ընդ առաջ եկին Սարգիս արքեպիսկոպոսն Ջալալեան առաջնորդն վրաստանու եւ Իմերէթի, եւ Գաբրիէլ վարդապետ Ոսկեզուքի առաջնորդն Պեսարապիոյ եւ Ղրիմու. եւ ի յաջորդ աւուրն մրտեալ ի փոքր շոգենաւ, նաւարկեցաք ընդ գետն Ռիէոն ժամս երկոտասան, եւ եկաք ի Մառան. ուր նստեալ ի պատրաստեալ կառան, ուղեւորեցաք ի Գուիմայիս, ի Սուրամ, ի Կօրի, ի Մծխիթայ, եւ հասաք ի Տփղիս։

Յայս ամենայն տեղիս մեծահանդէս շքով ընդ առաջ եւ լին բնակիչք եւ զօրականք. բայց դերազանցեալ քան զամենեսին հանդէսն՝ որ եղեւ ի Տփղիս, մինչեւ ըստ պատմելոյ իսկ քաղաքացեացն աւելի քան զքառասուն հազար ոգիս յամենայն ազգաց հեծեալ եւ հետեւակ թեւակոխէին յընթացս ճանապարհին, եւ փոշին որ ելանէր յերկրէ, ծածկէր զերեսս երկնից. եւ արք եւ կանայք լցեալ էին զճանապարհն, ընդ որ ունէր անցանել հայրապետն մինչեւ յեկեղեցին մեծ անուանեալ սուրբ Էջմիածին. յոր իջեալ հայրապետն աղղու աստենաբանութեամբ իմն օրհնեաց զկայսերն եւ զկայսրուհին եւ զորդիս եւ զամենայն ազգատոհմ նորին, եւ զզօրապետս եւ զամենայն բնակիչս Ռուսիոյ։

Օրհնեաց եւ զազգ մեր զեկեղեցականս եւ զաշխարհականս մեծաւ բարեմաղթութեամբք, եւ եղեալ ասպա ի վերայանն հանգստացաւ։ Ի գիշերին եղեւ լուսաւորութիւն մեծ ընդ քաղաքն ողջոյն. եւ ի յաջորդ աւուրն գնացեալ յայցելութիւն ի դուռն փոխարքային՝ ընկալաւ զչքանչանն համակ ադամանդեայ եւ ականակուռ՝ քառասուն հազար ֆռանքաց արձ-

Digitized by Google

ժողովեամբ, զոր առաքեալ էր օգոստափառ կայսրն ընդ բարձր հրովարտակի կաթողիկոսական վերամբարձ իշխանութեանն. զոր ընթերցեալ ՚ի մեծի սրահին, յորում կանգնեալ էին դասք դասք ճէնէռալաց և պաշտօնէից, կախեաց զնչանն իւրով իսկ ձեռամբ տեղապահն փոխարքային, զոր ընկալեալ հայրապետն, յայտնեաց զգոհունակութիւն իւր մեծ առ կայսրն ամենայն բարեմաղթութեամբ և օրհնութեամբ, և վերադարձաւ ՚ի վեհարանն։

Եւ ՚ի յաջորդ աւուր եկն տեղապահ փոխարքային յայցելութիւն հայրապետին, և ապա զաւուրս տասն յայգուէ մինչեւ ցերեկոյ անպակաս էր այցելութիւնն կարգ կարգ ճէնէռալաց, պաշտօնակալաց, սպայից, աստիճանաւորաց, վաճառականաց և արհեստաւորաց։

Սոյն օրինակ եղեւ փառաւոր հանդէս մեծ ՚ի Տփխիս յետ չորեքտասան աւուրց յաւուր ելանելոյ հայրապետին ՚ի Տփխիսէ ճանապարհորդել յիջմիածին, և ուր և եհաս ընդ ամենայն դիւղս և իշխանս եդիտ ընդունելութիւն մեծ և պատիւ բազում մինչեւ յերեւան քաղաք, ուր կուսակալն զօրաքանօք և դենպետն պարսից իւրովք օրինականօք, և ծերունի տեղապահն Ղուկաս արքեպիսկոպոս վարդապետօք և քահանայիւք և բազմութեամբ բնակչաց Հայոց՝ եկին ընդ առաջ մինչեւ ՚ի փանաքեռ դիւղ, և անցեալք ընդ առաջ՝ մտին յեբեւան և տարան զհայրապետն ՚ի վեհարան եհեղեցւոյն, և մեկնեցան ՚ի տեղիս իւրեանց։

Ի դիշերին եղեւ լուսավառութիւն մեծ, և ՚ի յաջորդ աւուրն հացկերոյթ մեծածախ պատրաստեաց կուսակալն ՚ի պատիւ հայրապետին, և յերրորդում աւուր ելեալ յերեւանայ եկաք յիջմիածին. և ՚ի գիշերին եղեւ լուսավառութիւն ՚ի չորեսին վանորայն մինչեւ ցառաւօտ։ Ի յաջորդ աւուրն ընկալաւ զհամբոյր հնազանդութեան ութ եպիսկոպոսաց, քսան եւ չորս վարդապետաց և քսան սարկաւագաց. որոց ամենեցունն տուեալ զօրհնութիւն իւր սուրբ, արձակեաց ՚ի տեղիս իւրեանց։

Ցաւուր չորեքշաբթու նստակատեաց վարդավառին էջ հայրապետն յեկեղեցին. և յաւարտումն պատարագին եկն եկաց

Digitized by Google

Ի ձեռն Իչմեան տեղին, և ընթերցաւ ի լուր ամենեցուն զերդ-
ումաթուղթն հաւատարիմ ծառայութեան կայսեր. և երեսք
ի թափոր, արարին օրհնութիւնս և բարեմաղթութիւնս վասն
պահպանութեան կայսեր և ընտանեաց նորին, և ասացեալ
պահպանիչ, արձակեցաւ ժողովն։

Եւ յաւուր շաբաթու նաւակատեաց տուրբ Աստուածածնի
եղեւ օծումն վեհափայլ հայրապետին յընդհանրական կաթո-
ղիկոսութիւն ամենայն Հայոց՝ և ի ծայրագոյն պատուիրաբու-
թիւն Աբարատեան կաթողիկէ եկեղեցւոյ Առաքելական գա-
հին լուսոյ սրբոյ Էջմիածնի, հանդէս հրաշալի, զոր չէ մարթ
ընդ գրով արկանել։

Ի յաջորդ աւուր հրամայեաց բանալ զպատուհանն գըմ-
բեթի եկեղեցւոյն, որք փակեալք էին յերկիւղէ պատերազ-
մին՝ որ եղեւ ի 1853 ամի ընդդէմ դաշնակից տէրութեանց։

Եբաց զնա սուրմնարան վաղարշապատ գիւղին՝ որ կայր խա-
բանեալ։ Բարեկարգեաց զսուրմնարանն Էջմիածնի և զսե-
զանատունն միաբանից. խոզմալի էին ընթացք միաբանիցն.
կարգեաց նոցա տարեկանս զզգեստս, և փայտ և ածուխ վասն
ձմերան, և մոմ, և միւիթարեաց զնոսա յոյժ։

Առաքեաց զհայրապետական կոնդակ օրհնութեան իւրոյ
յԱնատոլու և ի Րումէլի. ի կոստանդնուպոլիս և ի վալաքիա,
ի պեսարաբիա, և ի պետրբուրգ, ի պարսս և ի Հնդիկս։

Շնորհեաց և արժանաւոր եպիսկոպոսաց պոնակիս, և
վարդապետաց և քահանայից զխաչս, և ընկալաւ յամենեցուն
զգոհութիւնս բարեմաղթութեամբ հանդերձ։

Գրեաց և առ վեհափառ կայսրն ամենայն Ռուսաց և
խնդրեաց վասն սրբազան Սարգսի եպիսկոպոսին՝ որ ուղեկիցն
եղեւ ի կոստանդնուպոլսոյ մինչեւ յէջմիածին, շնորհել զա-
ռաջին կարգի պատուանշանն ասպետութեան սրբոյն Աննայի։
Նոյնպէս և աշակերտի նաթուն Մեսրովբ վարդապետի՝ զերկ-
րորդ կարգի նշանն սրբոյն Աննայի։ Ընկալեալ կայսրն զվնդիր
սրբազան հայրապետին՝ առաքեաց յետ միոյ ամի զպատուա-
նշանսն ի կոստանդնուպոլիս առ դեսպան իւր, որ անձամբ
գնացեալ մատոյց նորին սրբազնութեանն ի ղիմաց կայսերին և
հայրապետին։

Digitized by Google

Յետ վերջից ամսոց հիւանդացաւ սրբազան կաթողիկոսն, և սկսաւ օր քան զօր տկարանալ. տենդ առօրեայ և բորբոք թանչից տառապեցուցանէր զնա յոյժ, և ոչ գտանէր դեղ և դարման ի բժշկացն Ռուսիոյ. խնդրեաց հրաման ի կայսերէն օդափոխութեան աղագաւ գնալ ի կոստանդնուպոլիս, և վերադառնալ յետ չորից ամսոց. բայց ոչ ետ հրաման կայսրն ցուցեալ նմա զԱղեքսանդրուբօլ, զՋվխխա, զՊեսարապիա, և զամենայն սահմանս Ռուսիոյ. զի յոր կոյս և կամիցի, գնասցէ օդափոխութեան աղագաւ, բայց արտաքոյ սահմանաց կայսերութեան քայլ մի ոտին մի անցանիցէ։

Ընդ այս վշտացաւ մեծապէս կաթողիկոսն, և սկսաւ ողբալ զծերութիւն իւր. հեռացոյց յիւրմէ զբարեկամս իւր, և ոչ կամէր լսել յումեքէ բանս միխիթարութեան, այլ առանձնացեալ ի սենեկի իւրում՝ զօր ամենայն սկսաւ պարապիլ յընթերցանութիւնս և ի մատենագրութիւնս, զորս և տոպազրեալ ետ ի Ջվխխա. և զայս վիճակ ցաւալի կեցութեան ունելով յանձին՝ տխրագին սրտիւ և ցաւալի հեծութեամբ ոչինչ իմիք այնպէս ցանկայ որպէս մահու. և այսպէս կայր անմխիթար ի կառավարութեան իւրում, զամենայն տնօրէնութիւն և զհոգ յանձն արարեալ սուրբ Սիւնհոդին։

(1860) Ի սմին ամի գէորգ պատրիարք տաղտկացեալ ի ցաւալի երկպառակութեանց ազգիս, հրաժարեցաւ ի պաշտօնէ պատրիարքութեանն յոչ կամաց. և յաջորդեաց ի տեղի նորին Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսեցի ազգային ընտրութեամբ. իսկ գէորգ պատրիարք ընկալեալ ի տէրութենէն զամսական երկու հազար և հինգհարիւր դահեկանաց, առանձնացաւ ժամանակս ինչ ի տան միւռմ ի Րումելի Հիսար, և ապա գնաց ի նախկին վիճակ առաջնորդութեան իւրոյ ի Պրուսա։

(1860) Մեռաւ ի սմին ժամանակի Հայ բողոքական ոմն Միրի քէլամ կարապետ անուն, զորոյ զմարմինն կամէին բողոքականք թաղել ի գերեզմանատանն Հայոց Յէտիկիւլէ, փուսի, բայց Հայ ժողովուրդք դիտելով յառաջնմէ զՀայհոյիչ բերան նորա՝ որ ի կենդանութեան իւրում հայհոյեր զօր ամենայն զեկեղեցին և զաղգն Հայոց կռատուն և կռապաշտս

Digitized by Google

կոչելով և ծաղր առնելով, և ասէր զանձնէ իւրմէ լինել փա-
ռաքեալ Քրիստոսի, և թէ տեսեալ իցէ զՔրիստոս և ձեռ-
նադրեալ ՚ի նմանէ ՚ի քարոզութիւն Աւետարանին Հանգոյն
Պօղոսի, և այլ եւս բանս դժոխալուրս, որոց ոչ կարելով տա-
նել ժողովրդականք Հայոց՝ ամբոխ մեծ յարուցին և ոչ թոյլ
ետուն թագաւել ՚ի գերեզմանատան իւրեանց, լաւ համարեալ ըզ
մեռանիլ ՚ի պարծանս ազգին, քան ընդունիլ զՀայհոյիչն Ցի-
լոմոր կուսին ՚ի սրբազայր իւրեանց։

Եւ ՚ի սաստկանալ խռովութեանն՝ գեսպանք Անգլիացւոց
և Ամերիկացւոց միջամուխ լեալք ՚ի պաշտպանութիւն բողո-
քականաց՝ առաքեցին զառաջին Թարգմանս իւրեանց ՚ի պատ-
րիարքարանն Հայոց, և մեծաւ գանգատանօք խնդրեցին ՚ի
պատրիարքէն թոյլ տալ թագաւել զմեռեալն ՚ի գերեզմանատանն
Հայոց։

Բայց Սարգիս պատրիարք պատճառելով զաղմուկ ժողո-
վրդեան իւրում՝ ոչ կարաց ընդունել զխնդիրս նոցա, և դու-
շակելով զստահականալ կռուոյն ՚ի վերջին աստիճան, ընտրեաց
զնահ քան զկեանս ՚ի փառս սուրբ եկեղեցւոյ և ՚ի պարծանս
ազգիս։

Բողոք կալան յայնժամ գեսպանք ՚ի Բ. Դուռն. և սպա-
րապետն մեծ Բիզա փաշա՝ և նախարարն ոստիկանաց Մ՚Հմէտ
փաշա բազմաթիւ զօրօք գնացին ՚ի գերեզմանատունն. գնաց
անդ և Սարգիս պատրիարք ՚ի պաշտպանութիւն ազգին, և
իւրով խոհական և քաղցր բնաւորութեամբն ցածոյց զսրբա-
մրտութիւն սպարապետին՝ որ սպառնայր հրացանիւ գնոտակաց
ցրուել զամբոխն Հայոց. և յետ բազում վիճաբանութեանց
կնքեաց զխօսս իւր Սարգիս պատրիարք առ այս բան. Թէ
լաւ է մեզ մեռանիլ վասն օրինաց մերոց, քան տեսանել
զսրբավայրս մեր պղծեալ և ապականեալ յայսպիսի հայհոյիչ
Թշնամեաց եկեղեցւոյ մերոյ։

Յայնժամ տեսեալ սպարապետն, թէ վասն միոյ մեռելոյ
հազարաւոր անձինք պատրաստեալ են զոհ լինել ՚ի պաշտպա-
նութիւն օրինաց իւրեանց, խորհեցաւ ընդ Մ՚Հմէտ փաշային,
և որոշեցին զանկիւն լինչ արտաքոյ սահմանի գերեզմանատանն
Հայոց ընդ մէջ ճանապարհին, և անդ ետուն թագել զմե-

Digitized by Google

հանուռակալ մեռանելն, որ ընդ թերանն և ընդ ունգունն որդ-նալից եղեալ էր յերից աւուրց հետէ. և այսպէս վերջացաւ կռիւն։

Լուեալ զայս ամենայն արքային՝ հրամայեաց որոշ տեղի ցուցանել բողոքականաց թաղել զմեռեալս իւրեանց եթէ ի կոստանդնուպոլիս և եթէ այլուր, և տուաւ նոցա տեղի յարքունատան ի Պէյօղլու։

(1860) Լուսնականք Լիբանանու լերանց՝ որք կոչին Տիւրզիք սերեալք ի նախկին բնակչացն Տիւրոսի և յեղաշրջեալք ի Մահմետական օրէնս, հանապազ գժտութիւն ունէին ընդ Մարոնի կոչեցեալ Քրիստոնէից՝ բացեաց իւրեանց, որք գուցէ Սիդոնացիքն էին հաստատածեալք ի նոցանէ յաղագս Քրիստոնէութեան։ Սոքա ի սմին ամի յարձակեցան ի քաղաքն Զահլէ, սպանին զվեց հարիւր ոգիս ի Քրիստոնեայ Մարոնեայց, և անտի սկսան յարձակիլ ի Տէյրէլգամեր. յարձակեցան և ի Հաչպէյա, ի Ռաշէլա, և ի յայնոսիկ կողմանս, ջնջեալ հարիւր յիսուն գիւղս յաւերի առեալ յաճիւն դարձուցին, և աւելի քան զտասն հազար անձինս սպանին չարաչար։

Ի տոսա հայեցեալ և Մահմետական բնակիչք Դամասկոսի սկսան և նոքա ի սուր անցուցանել զքրիստոնեայ բնակիչս քաղաքին հինգ հազարի չափ, յորս էին ումն Փռանչիսկեան կրօնաւորք, երեսուն քահանայք, երկու Հռովմէական եպիսկոպոսք, և մի ծայն եպիսկոպոս։ Այլեցին նաեւ զհիւպատոսարանս Ռուսիոյ, Բրուսիոյ, Հոլանտայի, Պէլճիքայի, և Հելլենացւոց, եւս և զբոլոր վանորայս և զեկեղեցիս և զառաջնորդարանս։ Եւ երկու հազար քրիստոնեայք փախուցեալք ապաստանեցան ի տուն Ճէզայիրլի Հաչկաւոր Ապտ իւլ Գատիր էմին իշխանին, զորս պաշտպանեաց մարդասիրական գործով և մխիթարութեամբ։

Լուեալ եղեւ այս ի կոստանդնուպոլիս յականջս տէրութեան, և իսկոյն հրամանաւ արքային առաքեցաւ ի վերայ նոցա արտաքին գործոց տեսուչ Ֆուատ փաշա քսան և հինգ հազար կայսերական զօրօք երթալ յաղթահարել զապստամբսն զայնոսիկ, վրէժխնդիր լինել չարագործաց, և հաստատել զքա-

Digitized by Google

թեկարդութիւն աշխատէին, որ ծփայր իբրեւ ծով ալեկոծեալ։

Եհաս ՚ի Դամասկոս Յուստ փաշա, և նախ զքաղաքապետն Ահմէտ փաշա և զզօրապետն Խուրշիտ փաշա, և զերկոսեան պաշտօնակալսն, և զհարիւր քսան և մի ՚ի պահապան զօրաց քաղաքին զդէմառաւոտն ածեալ հնազեալս ՚ի մեծ հրապարակի քաղաքին, եւտուն հրացանից հաղարապետ զընտակաց իբրեւ զանձրեւ տեղացեալք ՚ի վերայ նոցա ըստ օրինի պինուարական կարգաց։

Ցետ նոցա զերդեանապարծ ազատատոհմն ՚ի քաղաքացեաց ամբարձ ՚ի կախաղան մահու. և տուգանս մեծամեծս եւս ՚ի վերայ բնակչաց Դամասկոսի Մահմետականաց՝ վճարել զբաղդր ծախս չինութեան հրկիզեալ տանց Քրիստոնէից, և եկեղեցեաց, և վանորէից, և զգողացեալ աւարան զամենայն հատուցանել ըստ նոցուն հաշուի։

Ցայսմ միջոցի և ութ հազար զօրք Գաղղիացւոց և չորս հազարք Անգլիացւոց եկին ՚ի Բրուսան ՚ի պաշտպանութիւն Օսմանեան բանակին, և անտի յարձակեցան ՚ի վերայ լեռնականացն Լիբանանու, էր՝ զորս սպանին, և էր՝ զորս վախճացին ՚ի մեծ անապատն, և ոսոսանեցուցին զաշխարհն ամենայն վինչեւ նորոգ կարգադրութեամբ պահանջեցին Օսմանեան տէրութենէ օրինադրել և կարգել ՚ի վերայ նոցա կուսակալս Հայաստիս Հռոմէադաւանս ամենայն իշխանութեամբ, զոր ունէին Եռադաւանն փաշայք Օսմանեան. և ընկալաւ արքայ պահանջումն նոցա և հաստատեաց, և առաջին փաշա կամ կուսակալ ընտրեցաւ Ամտոն Դարապետ Տաւուտեան ՚ի Հռոմէադաւան Հայոց, և գրեցաւ ՚ի հրովարտակին Տաւուտ փաշա, և առաքեցաւ պատուով ՚ի պաշտօն իւր։

Աստանօր արժան համարիմ զեկուցանել, զի որպէս ՚ի Հռոմէական Հայս, նոյնպէս և ՚ի մերազնեայս էր տեսանել օր քան զօր բազմանալ պաշտօնատարաց աղգիս թէ ՚ի քարտուղարութեան արտաքին գործոց դիւանատան Բ. Դրան, և թէ յայլ և այլ վարչական մասունս տէրութեան, զորոց մի առ մի թուումն այլոց պատմագրանից որ զկնի եմ գալոց են, թողում առնել։

Իսկ արքունի վաստակաւորութիւնն՝ Տատեան երկոցունն

գերդաստանացն, Բոլհանենէս պէչի Յատեհան, և Պօղոս պէչի Տատեհան սեփականեալ գոլով որպէս նախնեաց սոցա, նոյնպէս և որդւոց սոցա, որք ամենայն յաջողութեամբ վարեն զայս պաշտօն ցարդ։

Նոյնպէս և ճարտարապետութիւնն Պալեան գերդաստանին սեփականեալ, Կարապետ պէչի Պալեան, և որդւոց սորա, յայտնաբարբառ քարոզեն զարքունի ճարտարապետ նորոգ չինութիւնք, պալատք, մզկիթք, և այլք գյաջողակութիւն սոցա յարուեստս և գհաւատարիմ ծառայութիւն առ վեհափառ Սուլթանս. մանաւանդ անուանի գտաւ 'ի ճարտարապետութեան որդի Կարապետ պէչի Նիկողոս աղա, որ վայել կենքեաց զընթացս կենաց իւրոց 'ի ցաւ գերդաստանին և աղգին, այլ յաջորդեցին նմա և միւս որդիք Կարապետ պէչի, Սարգիս պէչ և Յակոբիկ պէչ, որ գերազանցեալ յարուեստս, զնոյն իսկ Եւրոպացի ճարտարարուեստս, և զՕգոստափառ հիւրս, որք 'ի ժամանակս ժամանակս յայց եկանեն Սուլթանին, 'ի զարմացումն գրաւեալ են։ Այս յաջողակութիւնք սոցա ոչ սակաւ պատիւ և պարծանս յառաջին ազգիս. և մանաւանդ բազում Հայ արուեստաւորաց ասպարէզ կարգան յառաջադիմութեան և զարգացման, և բազմաթիւ գործաւորաց իսկ աւուր պարէնս հայթայթելոյ։

Ասյսպէս և յառաջադիմութեան անուանի եղեւ յոյժ քէմհաճեան գերդաստանն, գալուստ աղա տօղրամաճիպաշի, որ առաջինն եղեւ 'ի կայսերութեանն Օսմանեան հաստատել զործարան մի մեծ (ֆապրիքա) 'ի պէշիքթաշ, բազմադիմի տառապանաց և դժուարութեանց յաղթահարեալ, և բազմաթիւ Հայ արուեստաւորաց ծնող եղեալ. մանաւանդ որդի նորին Ոզդիք էֆէնտի յոյժ անուանի եղեւ, մինչեւ Հայթայթել զամենայն ինչ որ 'ի զարդ կայսերական պալատանց և 'ի գործածութիւն կայսեր և կայսերազանց, ազգի ազգի կերտուածովք և նորադիւտ յօրինուածովք, և ոչ այլ եւս պէտս ունել եւրոպական կահուց և կարասեաց։

Ասյս յառաջադիմութիւն Պալեան և քէմհաճեան գերդաստանաց որչափ պարծանք և պատիւ է ազգիս, նոյնչափ և բարեհնամ կառավարութեան մերում, զի աստի յայտ է թէ

Digitized by Google

արուեստք և ճարտարութիւնք օր աւուր զարգանան ՚ի չքնաղս նորս նորա, և զամ քան զգամ պակասին հարկաւորութիւնք դիմելոյ յեւրոպական ճարտարութիւնս և արուեստս։

ԳԼՈՒԽ ԿԸ.

Ցաղագս հաստատութեան Ազգային Սահմանադրութեան Հայոց։

(1860) ՅԱՒՈՒՐՍ պատրիարքութեան Մատթէոսի հաստատեցան ազգային կրկին ժողովք, Հոգեւոր և Գերագոյն, որպէս պատմեցաք անդր ՚ի վեր. այլ ընարութիւն սոցա ոչ օրինաւոր էր, որպէս արժան է լինել ժողովրդական կառավարութեանց. վասնորոյ խոհական անձինք կամելով բառնալ զանպատեհ ընթացս զայս և առ ՚ի բարեկարգել զազգային իշխանութիւնն, խորհեցան ՚ի գիր անցուցանել զվաղեմի արտօնութիւնս ազգայինս չնորհեալս յառաջագոյն կայսերաց Օսմանեան տէրութեան, և զձեւ ազգային իշխանութեանն, որ ՚ի սկզբանէ հետէ ժողովրդավարն է, սահմանադրել և կանոնաւորել։

Յայս մեծ գործ վաստակեցան ոչ սակաւ Օտեան Գրիգոր, Ռուսինեան, Սերվիչէն, Ալանեան Ստեփան, Բարունակ Ֆէրուհ խան, Աղաթօն Մկրտիչ, Իւթիւճեան Կարապետ, Ալթուն Տիւրրի, Մինասեան Մինաս, եւայլք։

Ասա գնեմք զօրինակ Սահմանադրութեանն որ ՚ի 24 մայիսի 1860 միաձայն հաւանութեամբ ընկալաւ ազգային ընդհանուր ժողովն և ստորագրութեամբք վաւերացոյց, և մեք կնքեմք զընթացս պատմութեանս, յանձնելով պատմասէր ընթերցարդաց յարատեւել կամ զվերջին մասանց պատմութեանս, զորովք մեք համառօտիւ անցեալ եմք, կամ զանց արարեալ, լիուլի տեղեկութիւնս տալ։

Digitized by Google

ԱՋԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ա.

Ազգին ամեն մէկ անհատը առ ազգը պարտաւորութիւններ ունի. ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն և ազգն անհատներէն։

Այս պարտիքներն որոշող և այս իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային վարչութիւն կը կոչվի, որում Օսմանեան տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը։

Բ.

Ազգային վարչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունք է։ Անմնայն տնօրէնութիւն ազգային որ չէ համաձայն սոյն սկզբանց, ո՛չ արդար է և ո՛չ օրինաւոր։

Գ.

Ազգն ու ազգային վարչութիւնը փոխադարձ պարտիքներով կապված է իրարու հետ։

Դ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կա-

Digitized by Google

ըողուքեան չափովը, ազգին խնդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ, և ազգային վարչութեան ըրած տնօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ։

ե.

Ազգային վարչութեան պարտականութիւնն է՝ ազգին բարոյական, մտաւորական և նիւթական սիւտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը ազգին ամեն աստիճանի թէ մանչ և թէ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, ազգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը խնայողութեամբ տնտեսել, ազգին ծառայութեանը միանջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և ապագան անդորրել, կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ խաղաղել, և վերջապէս ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել։

զ.

Ասոնց այս ամեն պարտիքները կատարելու և իրաւունքները ապահովելու դիտմամբ է որ ազգը հետեւեալ կերպով կը սահմանադրէ զազգային գործոց վարչութիւնը։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Ա.

ԱԶԱԳՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

1. Բարձրագոյն Դրան չնորհած արտօնութեանը համեմատ՝ Ազգային վարչութիւնը երեսփոխանական է։

Ազգը ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ և անոր միջնորդութեամբը կը վարէ ազգային իշխանութիւնը։

Ընդհանուր ժողովը՝ ազգին ընդհանրական գործոց տնօրէնութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ, կրօնական գործոց մասը՝ կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ քաղաքական ժողովի մը. իսկ խառն գործոց տնօրէնութիւնը՝ այս երկու ժողովոց առաժամանակեայ մէկ տեղ գալովը ձեւացած խառն ժողովին կը յանձնէ։

2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը զատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով։

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Ելմտական խորհուրդ, Դատաստանական խորհուրդ, և վաւերագործութիւնն իրեն պահելով՝ այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը։

Մատակարարութեան համար՝ պօլսի մէջ թաղական խորհուրդներ կը հաստատէ թաղին եկեղեցւոյն անուամբը, և ամեն մէկ թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհրդին կը յանձնէ, ազգային խորհրդոց տեսչութեանը տակ։

Digitized by Google

3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Փօլսի պատրիարքն է, և կեդրոն՝ Փօլսի պատրիարքարանը։

Ազգային ժողովներն ու խոհուրդները իրենց գլուխ ունենալով ազգին պատրիարքը՝ Փօլսի մէջ ազգային վարչութեան կեդրոնական մասը կը կազմեն, որոց իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածվի։

4. Ազգային կեդրոնական վարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կը ներկայանայ գաւառական ժողովներով, որոնք Փօլսէ դուրս ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն որոց պաշտօնական գլուխ վիճակին առաջնորդն է, և կեդրոն՝ տեղին առաջնորդարանը։

5. Գաւառական վարչութիւնը նոյն փոխադարձ պարտեօք կապված է գաւառաբնակ ազգայնոց հետ, ինչպէս կեդրոնական վարչութիւնը ընդհանուր ազգայնոց հետ. և իրեն յարացոյց պիտի բռնէ զկեդրոնական վարչութիւնը։

6. Գաւառական վարչութիւնը առաջնորդանիստ քաղաքներու մէջ կրօնական և քաղաքական ժողովներ կը հաստատէ և անոնց կը յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական գործոց տեսչութիւնը։

Այս ժողովները քաղաքին թաղերուն մէջ թաղական խորհուրդներ կը հաստատեն իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ և անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբերութիւններով որով կը վարվին կեդրոնական ժողովները Փօլսի թաղական խորհրդոց հետ։

Նմանապէս իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ թեմական խորհուրդներ կը հաստատեն, և ամեն մէկ թեմին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թեմական խորհրդին կը յանձնէ։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ

7. Իւրաքանչիւր ժողով և խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համարառութեան պայմանով։

Գաւառական վարչութեան մէջ՝ թաղական ու թեմական

Digitized by Google

խորհուրդները համաբաստու են գաւառական ժողովներուն. Գաւառական ժողովները համաբաստու են գաւառական ընդհանուր ժողովներուն. Գաւառական վարչութիւնը կեդրոնական վարչութեան համաբաստու է, և Ա.ուսչորդը պատրիարքին։

Կեդրոնական վարչութեան մէջ՝ Պօլսի թաղական խորհուրդները համաբաստու են ազգային Տեսուչ խորհուրդներուն ըստ իւրաքանչիւր մասին. Տեսուչ խորհուրդները համաբաստու են ազգային Քաղաքական ժողովին՝ բացի Դատաստանական խորհուրդէն որ համաբաստու է խաւն ժողովին։

Կրօնական ու Քաղաքական ժողովները և Պատրիարքը Ընդհանուր ժողովին համաբաստու են։

Ընդհանուր ժողովը բարոյապէս պատասխանատու է Ազգին առջեւ։

ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

8. Ազգային վարչութեան՝ ազգին հետ, Ս.րարատեան մայր Աթոռին հետ, Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան։

Ազգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրաբար վարվիլ։

Ս.րարատեան մայր Աթոռին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անտի կապված են իրարու հետ Ազգն ու Աթոռը։

Բ. Դրան հետ՝ թէ Ազգին և թէ ազգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքները պահպանելու համար տէրութեան պաշտպանութիւնը խնդրել, և Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ Տէրութիւնը։

Սոյն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է։

---

1. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԽՒՒՆ

Ա. ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

9 Ազգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ որոնցմէ 160ը Պօլսի թաղերուն եկե-

Digitized by Google

ղեցեաց կողմին ընտրեալ, և 60ը առաջնորդանիստ գաւառներուն կողմին ընտրեալ։

Ընդհանուր ժողովին մէջ ազգային երեսփոխանաց անդամակից են.

Նախ՝ ազգային կեդրոնական վարչութեան անդամներէն՝ կրօնական ու քաղաքական ժողովներուն և չորս ՏԵՍՈՒՉ խորհուրդներուն անդամներն ու թաղական խորհուրդներուն առենապետները։

Այս կարգի անդամոց թիւը իրը 100 է. բայց այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ ճշդիւ չը կրնար աւելցիլ, վասն զի ատոնց մէջ արդէն երեսփոխան ընտրվածներ ալ կրնան գտնվիլ։

Երկրորդ՝ Ազգին կամ ՏԵՐութեան ծառայութեանը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք որոնց արժանաւորութիւնը Ազգին կամ ՏԵՐութեան կողմէն վկայեալ կը համարվի, ինչպէս են Եկեղեցական դասէն՝ Պօլիս գտվող եպիսկոպոսները, Պօլսի Եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները. ուսումնական դասէն՝ ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասատուներ, լրագրապետներ. քաղաքական դասէն՝ վերին պաշտօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողովոց անդամներ, Բ. Դրան դիւաններուն մէջ անօրէններ և թարգմանապետներ, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ անօրէններ, ուսումնապետներ. ղինուորական դասէն՝ վերին ըսպայից աստիճանակիցներ։

Այս կարգի անդամոց թիւն ալ չը կրնար ճշդվիլ վերոյիշեալ պատճառով. բայց իրր ըսկզբունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբեք չը պիտի հաւասարի երեսփոխանաց թիւին (1)։

10. Ընդհանուր ժողովը է՛ն չատը 400էն աւելի անդամ չը պիտի ունենայ, և քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը

---

(1) Այս յօդուածը վերաքննելի է երբ թէ ազգային եւ թէ տէրութեան պաշտօնաւորաց թիւը այն աստիճան աւելնայ որ անկարելի ըլլայ սոյն համեմատութիւնը պահել։

Digitized by Google

պրեմքն 111ը դոնէ ներկայ չըլլայ, նիստ չը սկսիր կարճնայ ընել։

11. Ընդհանուր ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն եւ բեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնատարները ընտրել, Ազգային ժողովները կարգել, անոնց վարչութեանը հսկատեսու ըլլալ, և ազգային ծանր կամ ընդհանրական գործերը վճռաբար տնօրինել։

Իր պատասխանատուն է՝ ազգային Սահմանադրութեան ընկզբունքները անխախտ պահել և անոնց տրամադրութեանը համեմատ վարվիլ։

12. Ընդհանուր ժողով կը դումարվի.

Նախ՝ կանոնաւորապէս ամեն տարի մարտ ամսին վերջերը ազգային վարչութեան տարեկան ընդհանուր համարատուութիւնը մտիկ ընելու, ազգային ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու և ազգային տարեկան տուրքին անօրէնութիւնը հաստատելու համար։ Սոյն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ տուրքի խնդիրէն զատ՝ միւս խընդիրներուն մէջ խօսք միայն ունին և ոչ քուէ։

2. Կաթուղիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար։

3. Երուսաղէմայ և Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար։

4. Կրօնական ու քաղաքական ժողովոց մէջ կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութեանց համար։ Սոյն պարագային մէջ ալ վարչութեան անդամները խօսք միայն ունին և ոչ քուէ։

5. Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար.

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատահած այնպիսի ծանր խնդիրներու համար զորոնք Ազգային ժողովները ընդհանուր ժողովով որոշել հարկաւոր դատեն։

13. Ընդհանուր ժողով կը հրաւիրեն, նախ՝ Պատրիարքը՝ Ազգին կողմէն, երկրորդ՝ ընդհանուր ժողովին ատենապետը՝ սոյն ժողովին գլխաւորին կողմէն, երրորդ՝ կրօնական կամ քաղաքական ժողովին ատենապետները՝ սոյն ժողովոց կողմէն։

Digitized by Google

14· Պատրիարքը Ազգային ժողովոյ նախագահն է և տ֊ նոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ ։

15· Պատրիարքը իրեն եկած ամեն գործ՝ որ ժողովին ձեռնհասութեանը տակ է նէ՝ նոյն ժողովին քննութեան ու որոշմանը պիտի յանձնէ, և ազգային որոշմանց մէջ իր պաշ֊ տօնական գրութիւնքը անվաւեր պիտի համարվին եթէ ձեռն֊ հաս ժողովին կողմէն ալ ինքեաւ կամ ստորագրեալ չըլլան· իսկ երբ ըստիպողական գործ մը պատահի որոյ տնօրէնութիւնը չը ներէ սպասել մինչեւ ժողովոյ գումարման օրը և արտաքոյ կարգի ժողով գումարել կարելի չըլլայ, Պատրիարքը կրնայ ինքնին տնօրինել՝ պատասխանատուութիւնը իր վրայ առնե֊ լով, բայց եղելութիւնը կանոնաւոր կերպով միշտ արձանագ֊ րել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ իմացնէ առաջիկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար ։

16· Պատրիարքը իր բացակայութեանատեն Ազգային ժո֊ ղովներու մէջ տրված որոշում մը չըստորագրած՝ իրաւունք ունի դիտողութիւն ընելու և խնդիրը կրկին քննութեան առ֊ նել տալու· իսկ երկրորդ որոշումէն ետքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան տրա֊ մադրութեանցը անհամաձայն չը գտնէ ։

17· Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ չը վարվող ազգային գործա֊ կալ մը, այսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեց֊ ւոյ, վանքի, դպրատան կամ հիւանդանոցի մատակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արդիլելու առաջարկութիւն ը֊ նել որուամ որ անկ է ։

18· Պատրիարքը իրաւունք չունի ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու· բայց երբոր տեսնէ թէ սոյն ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջի անգամին՝ անոնց առենապետին հետ կը բա֊ նակցի բացատրութիւն ուզելու համար· երկրորդին՝ գրով ի֊ մաց կուտայ նոյն ժողովին իր ապօրինաւոր ընթացքը և ի

Digitized by Google

կարգ կը հրաւիրէ զանի. իսկ երրորդին՝ ընդհանուր ժողով կը կոչէ եթէ ամբաստանելին Ազգային ժողովականերէն մէկն է, կամ քաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է, և պատճառներն իմացնելով ամբաստանեալ ժողովին լուծումը կը պահանջէ։

19. Պատրիարքը ազգային անտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ, և պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վրայ ըլլայ։

Գ. ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

20. Կրօնական ժողովը 14 բանիբուն եկեղեցականներէ կը բաղկանայ։

21. Կրօնական ժողովին պաշտօնն է՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել, Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անխախտ և անարատ պահել, եկեղեցւոյ և եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, քահանայից կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու հոգ տանիլ, արժանաւոր ու բանիբուն եկեղեցականներ հասցնել, և ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննել ու լուծել։

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր ինդիր մը զոր կրօնական ժողովը չը կարենայ լուծել, ընդհանուր ժողովին բազմական գտնվող եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ. եթէ այն համագումար ժողովն ալ իր ձեռնհասութենէն վեր դատէ ըզինդիրը, Ամրարտեան մայր Աթոռին պէտք է դիմէ։

23. Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ վարդապետի և քահանայի ձեռնադրութեան հրամանը կրօնական ժողովէն կը տրվի։

24. Քանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը հարկաւորութիւնը չըզգայ և թաղական խորհրդին միշնորդութեամբը չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չը պիտի տրվի։

Digitized by Google

25. Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագ դերէցները կրօնական ժողովը կ'որոշէ, և պատրիարքը կ'անուանէ։

26. Կրօնական ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հսկել որ՝ հոգեւոր պաշտօնները ձրի կատարվին և հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին։

Դ. ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

27. Քաղաքական ժողովը 20 քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ։

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խարհուրդներուն կողմէն իրեն մատուցված ազգօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել և կարեւորութիւնը յայտնելէն ետքը հաստատել զանոնք և անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, և Ազդին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը ըստ ամենայնի փոյթ ունենալ։

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանը պէտք է յանձնէ, և անոր կարծիքը չառած չը տնօրինէ։

30. Քաղաքական ժողովը կրնայ՝ բանաւոր պատճառով մը՝ չը հաստատել կամ ետ ձգել խորհրդի մը ըրած որոշումը, բայց՝ անոր ձեռնհասութիւնը յարգելով՝ չը պիտի կարենայ նոյն որոշման ներհակ որոշում և գործադրութիւն ընել։

31. Քաղաքական ժողովը իրաւունք չունի զազգային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ Սահմանադրութեան ատեանդրութեանցը հակառակ ընթացքի մէջ չը տեսնէ զանի. իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ մը, առջի անգամին՝ անոր ատենապետէն բացատրութիւն կ'ուզէ, երկրորդին՝ գրով իմաց կուտայ խորհրդին և կարգի կը հրաւիրէ զանի, իսկ երրորդին կը լուծէ. բայց Ընդհանուր ժողովին տալելու տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառները պէտք է որ բացատրէ։

Digitized by Google

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր խնդիր մը զոր ֆաղաքական ժողովը իր ձեռնհասութենեն վեր դատէ, ընդհանուր ժողովին պէտք է որ դիմէ։

Ե. ԱԶԳԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

33. Ուսումնական խորհուրդը 10 ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ։

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնագիր մը և դպրոցական կանոններ հաստատել, և անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթացք մը որոշել թէ ուսման և թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգ տանիլ, սոյն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ և ձեռնտու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու խնամ՝ տանիլ, ազգին մէջ բանիբուն դասատուներ հայցնելու և դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ։

35. Ուսումնական խորհուրդը պէտք է իր կողմէն ամենայն ջան՝ի գործ դնէ որ՝ թէ Պօլսի, և թէ գաւառներու մէջ ամեն թաղ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան, նոյնպէս Պօլիս և առաջնորդանիստ քաղաքները մէյ մէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսմանց համար։ Այս ուսումնարանէն վկայականով կ՝ելլեն աշկերտները, և մանաւանդ ուսմունք ընծայերուն՝ դասատուութեան վկայագիր ալ կը տրվի։

36. Ուսումնական խորհուրդը կ՝որոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունվելու դասագիրքներն ու դասատուները. իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու դասատուն կրօնական ժողովէն պէտք է որ խնդրէ։

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ ազգային

Digitized by Google

վարժարանաց տարեկան քննութեանը. իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնը կրօնական ժողովին ձեռքը կ'ըլլայ։

Զ. ԱԶԳԱՑԻՆ ՑՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

38. Տնտեսական խորհուրդը 10 տնտեսագէտ աշխարհականներէ կը բաղկանայ։

39. Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հասոյտութեանց և կալուածոց մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ սոյն հաստատութեանց պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ։

40. Տնտեսական խորհուրդը վանօրէից և հիւանդանոցի համար մանաւոր հոգաբարձութիւններ կը հաստատէ և անոնց միջնորդութեամբը կը մատակարարէ զայս հաստատութիւնները։

41. Վանօրէից հոգաբարձութիւնը երթ հոգիէ կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական։

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ զայս հոգաբարձուները և փաղաքական ժողովին հաւանութեամբը պատրիարքը կ'անուանէ։

42. Վանօրէից հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութեանց եկամուտները ու հասոյթները ազդին օգտին ծառայեցնել. նախ՝ վանօրէից մէջ ուսումնարան հաստատելով՝ կրօնական ժողովին և ուսումնական խորհրդին տուած հիմնադրին համաձայն, և որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց, տպարան, թանգարան։

43. Վանօրէից հոգաբարձութիւնը իւրաքանչիւր վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունենայ տեղացի, որոնք վանահօր նախագահութեամբը կը մատակարարեն ըզ վանքը՝ գաւառական ժողովէն անկախ կերպով։

44. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը երթ հոգիէ կը բաղկանայ որոնց երկուքը բժիշկ։

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս հոգաբարձուները և փաղաքական ժողովին հաստատութեամբը պատրիարքը կ'անուանէ։

Digitized by Google

45. Հիւանդանոցի հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութիւնը իր նպատակին ծառայեցնել, հոն տնօրինելով նախ՝ կանոնաւոր հիւանդանոց մը աղքատ հիւանդաց համար. երկրորդ՝ պատսպարան մը ծեր ու անկար աղքատաց համար. երրորդ՝ զգաստարան մը անառակաց համար. չորրորդ՝ կրթարան մը որբ ու անտէրունչ տղայոց համար։

Այս օրէնդրութեանց իւրաքանչիւրը թէ՛ չէնքի և թէ՛ կարգի կողմէն բժշկական կանոնաց ու ողջախոհ օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ։

46. Կտակաց տնօրէնութիւնը Տնտեսական խորհրդին կը վերաբերի։ Այս խորհուրդը պէտք է հսկէ որ ամէն կտակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կտակօղին գիտաւորութիւնը անխախտ պահվի և գործադրութիւնը ապահով ըլլայ։

Սոյն տրամադրութեանց համեմատ՝ կտակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մանաւանդ հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը։

Երբ կտակին գործադրութիւնը կտակօղին դիտաւորութեանը համեմատ չըլլայ, ընտանիքը իրաւունք ունի բողոքելու։

47. Թէ՛ Պօլսի և թէ՛ գաւառներու մէջ գտնուած աղգային անշարժ ըստացուածոց կալուածագիրներուն (Սենետ, Հէօճէթ, Ճէրօղ) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողվը-վելով ազգային դիւանատան մէջ պիտի պահվին ամենայն ապահովութեամբ։

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հսկէ որ ամեն ազգային ըստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ։

49. Ազգային տր և է կալուածի գնումն ու վաճառումը չը կրնար գործադրվիլ առանց Տնտեսական խորհրդին գիտութեանը, քաղաքական ժողովին հաճութեանն ու պատրիարքին կնքադրութեանը։

Սոյն տրամադրութեանց ուժովը Դ-ՆԵՎԼԻ-ՆԻ-ն ըսված բանը վերցած է։

50. Պօլսի մէջ և շրջակաները ազգային տր և է չինութիւն կամ նորոգութիւն չը կրնար ըսկսիլ առանց Տնտեսական և

Digitized by Google

եկեղեցական խորհրդոց դիտուքեանն ու քաղաքական ժողովին հաճուքեանը։

Նմանապէս ազգային որ և է հաստատուքեան համար տակ չը կրնար ժողվրվիլ առանց վերոյիշեալ պայմանին։

Է. ԱԶԳԱՅԻՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

51. *Ելմտական խորհուրդը 10 հաշուագէտ աշխարհական ներկ կը բաղկանայ։*

52. *Ելմտական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հասուքեից և ծախուց ընդհանուր տեսչուքիւնը և ազգային անտուկին համարակալուքիւնը։*

Իր պարտաւորուքիւնն է՝ ազգային հաստատուքեանց մատակարարուքեան հաշիւները կանոնաւորապէս առնել, ծախուց օրինաւորուքիւնն ըստուգել, ազգային եկամուտներն աւելցնելու չանք ընել՝ այն աստիճան որ օր մը ազգային սընտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր տուրքը մեծապէս թեթեւնայ։

53. *Ազգային անտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր և այլն. ելքն են գլխաւորապէս՝ պատրիարքարանի և դիւանատան ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ թաղերու եկեղեցեացն ու վարժարանացը նպաստ և այլ պատահական ծախքեր։*

54. *Ազգային անտուկին հաշիւը տօմարակալուքեան կանոնով պիտի բռնըվի։*

55. *Ելմտական խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յետադայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքը կըշռելով՝ հաշուեցուցակը քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ։*

Ը. ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

56. *Դատաստանական խորհուրդը 10 իրաւասէր անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական և հինգը աշխարհական։*

Digitized by Google

57. Դատաստանական խորհրդին պաշտօնն է ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդները արդարութեամբ իրաւախոհ ընելու չանալ և իր վճիռներուն հիմ բռնել կրօնական մասին՝ նախնեացմէ աւանդեալ կանոնները, և քաղաքական մասին՝ Տէրութեան դատարանաց արդի կանոնները։

58. Երբ պատահի այնպիսի խնդիր մը զոր Դատաստանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որու որ անկ է անոր կը ղրկէ։

59. Դատաստանական խորհուրդին մէջ դատեալ անձ մը միշտ իրաւունք ունի կրօնական կամ քաղաքական ժողովին բողոքելու կամ խառն ժողով պահանջելու ըստ գործին։

Թ. ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

60. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն 5 էն մինչեւ 9 անդամներէ։

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ թաղին տեղական գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյն եկեղեցապանութիւնը, դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը, ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնը ու խաղաղարարութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ թաղին եկեղեցւոյն պայծառութեանը խնամ տանիլ, թաղին մէջ թէ աղջկանց և թէ տղայոց համար ըսկզբնական դաստիարակութեան բարեկարգ դպրատուններ ունենալու չանք ընել, և թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտու ըլլալ։

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ և թէ դպրատան որ և է կալուած թաղական խորհուրդին անմիջական տնօրէնութեանը տակ է. այսպիսի կալուածոց գնուումն ու վաճառումը ըստ 49. 60. կը գործադրվի։

63. Ամեն թաղ մէյմէկ տնտուկ պիտի ունենայ թաղական խորհրդին հսկողութեանը տակ։

Այս տնտուկին մուտքն են՝ թաղական տուրքը, եկեղեց-

Digitized by Google

ւոյ և դպրատան հաշուեծոց եկամուտները, եկեղեցւոյն հաստոյքները, աղքատաց համար եղած նուէրները ու կտակները և այլն. եւքն են՝ թաղին եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւնները։

64. Ամեն թաղական խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնը պէտք է որ ունենայ կանոնաւոր կերպով։

65. Թաղական խորհուրդները իրենց պաշտօններուն մէջ ցեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին. եկեղեցւոյ անութեան գործերու համար՝ ցնտեսական խորհրդին հետ, դպրատանց ուսումնական մասին համար՝ ուսումնական խորհրդին հետ, դրամական գործերու համար՝ եկմտական խորհրդին հետ, դատական գործերու համար՝ դատաստանական խորհրդին հետ։

Թաղական խորհուրդը երբ չը կրնայ հակառակորդները իրաւախոհ ընել, գործը Դատաստանական խորհրդին պէտք է ղրկէ իր քննութեան տեղեկագրովը։

Ժ. ԱԶԳԱՑԻՆ ԴԻՒԱՆԱՑՈՒՆ

66. Պատրիարքարանին մէջ դիւանատուն մը պիտի հաստատուի որոյ գործը պիտի ըլլայ աղգային պաշտօնական գրութեանց տնօրէնութիւնը։

67. Դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնուի։

Ա. Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն ղրկուելու գիրերուն և ի Պատրիարքարան հասած թուղթերուն կարգաւորութեանը կ'ղեկավարէ։

Բ. Արձանագրութիւն, որ ազգային ժողովոց և խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կարգաւորութեանը կ'ղեկավարէ։

Գ. Ազգահամար, որ ազգայնոց քաղաքային վիճակագրութեանը՝ այսինքն ծննդեանց, ամուսնութեան և վախճանմանց վերաբերեալ արձանագրութեանց կարգագրութեանը կը ղեկավարէ։ Սոյն գրասենեակէն կը տրուին ազգայնոց թէ ճամբորդութեան համար և թէ առեւտրական գործողութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաեւ ծննդոց

էան , ամուսնութեան և վախճանման վկայականները ։

68. *Թղթակցութեանց գրասենեակը՝ ներքին և արտաքին թղթակցութեանց և թուրքերէն գրութեանց համար պէտք եղածին չափ դիւանագիրներ պիտի ունենայ ։ Այս գրասենեակը Պատրիարքին հրամանին ներքեւ է և ինք կանուանէ ատոր անդամները քաղաքական Ժողովին հաւանութեամբը ։*

Արձանագրութեան գրասենեակը վեց դիւանագիր պիտի ունենայ . երկուքը կրօնական ու քաղաքական ժողովներուն գործօդը յատկացեալ , և չորսը՝ չորս Տեսուչ խորհուրդներուն գործօդը կարգեալ ։

Այս գրասենեակին անդամները ամեն մէկը իր վերբերական ժողովին կամ խորհուրդին հրամանին ներքեւ է , զորոնք նոյն ժողովները կամ խորհուրդները կընտրեն և Պատրիարքը կանուանէ քաղաքական ժողովին հաւանութեամբը ։

Աղգահամարի գրասենեակը պիտի ունենայ նօտար մը , զոր քաղաքական ժողովը կընտրէ և Պատրիարքը կանուանէ ։

Այս գրասենեակներուն անդամներուն թիւը ըստ հարկին կաւելցնայ կամ կը պակսի ։

69. *Դիւանաւտունը պիտի ունենայ դիւանապետ մը որ Դիւանաւտան բոլոր գործօդը տնօրէնն և պատասխանատու է , զոր քաղաքական ժողովը կընտրէ և Պատրիարքը կանուանէ ։*

Դիւանապետը կընէ ընդհանուր ժողովին դիւանագրութիւնը ։

70. *Դիւանապետը պարտաւորեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ թաղէն և հինգ տարին անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին , այսինքն՝ ծննդոց , ամուսնութեանց և վախճանմանց տօմարներուն օրինակները պահանջել և ազգային Դիւանաւտան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ ։*

71. *Դիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցող և ֆրանսերէնի ու իտալերէնի բաւական հմտութիւն ունեցող անձ մը պէտք է որ ըլլայ ։ Նմանապէս դիւանագիրները ազգային լեզուն քաջ գիտցող և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան ։*

72. *Դիւանագիրները մանաւորապէս պատասխանատու*

Digitized by Google

են իրենց վերբերական ժողովին կամ խորհուրդին առջեւ և ընդհանրապէս Դիւանապետին առջեւ։

73. Ազգահամարի գրասենեակէն տրված որ և է թուղթ և վկայական՝ պաշտօնագրական կնքով և դիւանապետին ըստորագրութեամբ վաւերացեալ պէտք է ըլլան։

74. Ազգային դիւանատունը ամեն օր ութ ժամ բաց և դիւանադպիրները ներկայ պիտի գտվին բաց ի տօնելի օրերէն։ Եթէ տօնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհրդին դիւանապետը նոյն օրը ներկայ պէտք է գտվի։

---

2. ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

75. Գաւառներու մէջ ընդհանուր ժողով կը կազմվի թաղական և թեմական երեսփոխաններէ, որոց անդամակից են նախ՝ գաւառին կրօնական և քաղաքական ժողովներուն անդամներն ու թաղական խորհուրդներուն առեներապետները, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք։ (տես 60ր. 9)։

76. Գաւառական ընդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրը իր գաւառին կողմէն երեսփոխանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել։ կրօնական ու քաղաքական ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և գաւառական ծանր կամ ընդհանրական գործերը տեսնել։

Բ. ԱՌԱՋՆՈՐԴ

77. Առաջնորդը գաւառական ժողովներուն նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ։

Digitized by Google

իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային ծառայութեան գործադրութեանը հսկել։

78. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ. այլ գաւառին գլխաւոր քաղքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի ուր կը գումարվին և գաւառական ժողովները։

79. Առաջնորդը գաւառական մնաւոր իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին ծառայութեան ծախքը իր վրայ ըլլայ։

Գ. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ

80. Գաւառաց կրօնական ու քաղաքական ժողովները՝ ըստ տեղւոյն 7էն մինչեւ 12 անդամներէ կը բաղկանան.

81. Գաւառաց թաղական և թեմական խորհուրդները ըստ տեղւոյն 5էն մինչեւ 9 անդամներէ կը բաղկանան։

82. Ամեն գաւառ իր քաղաքական ժողովին հսկողութեանը ներքեւ մէյմէկ գաւառական մնաւոկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց տնտեսութեանն ու համարակալութեանը համար. նմանապէս ամեն թաղ և թեմ իր մնաւուկը պիտի ունենայ։

Այս մնաւուկներուն համարակալութիւնը կանոնաւոր կերպով պիտի կատարվի։

83. Գաւառներու մէջ ամեն Առաջնորդարան իր գաւառական դիւանատունը պիտի ունենայ. նմանապէս ամեն թաղ և թեմ։

Գաւառական դիւանները պարտաւոր են գաւառին թաղական և թեմական ազգահամարները ժողվել և անոնցմով գաւառական ընդհանուր ազգահամար կազմել։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Բ.

ԱԶԳԱՑԻՆ ՏՈՒՐՔ

84. Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս է և վաստակի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ։ բայց անոնցմէ որոնց կարօղութիւն չունենալը իրենց թաղին կամ իրենց արհեստակցաց կողմէն վկայեալ է։

85. Ազգային տուրքը տարեկան է և բաշխման հիմ պիտի բռնըվի իւրաքանչիւրին կարօղութիւնը։

86. Երկու կերպ է ազգային տուրքը. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է և կը հաւաքըվի կեդրոնական վարչութեան կողմէն ազգային մնաւուկին համար. և միւսը մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է և կը հաւաքըվի թաղական խորհրդոց կողմէն թաղական մնաւուկին համար։

87. Պօլսի մէջ ընդհանուր տուրքին բաշխման ու հաւաքման եղանակը քաղաքական ժողովին մէջ կ'որոշվի և ընդհանուր ժողովով կը հաստատուի։ Իսկ թաղական տուրքը ամեն թաղ իր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կը հաստատէ։

Այնպէս կը տնօրինվին և գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու թաղական մասնաւոր տուրքը։

88. Գաւառները մասնակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուրքին։

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնական մնաւուկին տըրվելու մինչեւ ցարդ սովորութիւն եղած տարեկան տուրքին փոխարէն՝ գաւառական մնաւուկը իր հաւաքած գաւառական ընդհանուր տուրքին հարիւրէն այսքան պիտի տայ ազգային կեդրոնական մնաւուկին։

Հարիւրէն ո՛րքան տըրվիլը Պօլսի քաղաքական ժողովը պիտի որոշէ։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ա. ԸՆԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔ

1. ԸՆՏՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

89. Ընտրելու իրաւունքը լման 25 տարւոյ հասակէն կ'ըսկսի։

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ արգիլեալ են դատաստանապէս.

Նախ՝ քրէական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց տէրութեան։

2. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուելած և ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատող ատեանը ազգային գործոց մէջ չը գործածվիլը վճռած ըլլայ։

3. Տէրութեան կողմէն զղաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որոնց ազգային ատեան մը արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքը։ Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգիլող ատեանին կողմէն վկայվի։

4. Խնամատարութեան պատճառով անբաւական դատեալ անձինք, որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չըլլայ։

5. Հարկ եղած ազգային տուրքը կարօղութիւն ունենալով մերժօղ անձինք, որոնք ազգովին եսկերելի են իբր ազգային պարտեաց զանցառու։ Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչնալ ըսկսին։

2. ԸՆՏԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

91. Ազգային գործոց տնօրէնութեանը մէջ որոշօղական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարւոյ հասակէն կ'ըսկսի։

Digitized by Google

Ամենայն անհատ ազգային որ եռասուն տարին լրացուցած է և չէ դատաստանապէս զրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վայելումէն, ընտրելի է ազգային սր և է պաշտօնի համար։

Բ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

92. Ընտրութեան հիմ պիտի բռնվի բնակչաց թիւը։

Պօլսի ամեն մէկ թաղին և ամեն մէկ գաւառին ընկած երեսփոխաններուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակվի։

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն հինգ տարին անդամ մը կը նորոգվի, ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն։

Այս վերանորոգումը՝ վարչութեան գլխաւոր անդամոց, այսինքն կրօնական ու քաղաքական ժողովոց ատենապետներուն և ֆեսուչ ու մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գալովը ձեւացած համախորհուրդ ժողովին մէջ կըլլայ.

93. Թէ՛ Պօլսի թաղերէն և թէ՛ գաւառներէն ուզված երեսփոխանները հարկ չէ որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան, բաւական է որ Պօլսի մէջ բնակին, և ազգասիրութեան ու պատուաւորութեան մասին ընտրողաց համարումը ըստացած անձինք ըլլան։

Այս երեսփոխանները չէ թէ գիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպվին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են համաչափ իշխանութեամբ։

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

94. Ընդհանուր ժողովին լուծվելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ և մէկ ամիս առաջ Պօլսի թաղերուն կը ծանուցանէ Պատրիարքը ամեն մէկ թաղէն կամ գաւառէն ուզված երեսփոխանաց թիւը և կը հրաւիրէ ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտրելութեան պայմաններն ու ընտրութեան կանոնները։

Digitized by Google

Այն կոնգոական օրինակը թագավոր խորհրդարանին մէջ բացատրեալ կը մնայ մինչեւ ընտրութեանց աւարտումը։

95. Ամեն թագի մէջ ընտրողական ժողովները կը կազմուին թագին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից ըլլալու արժանաւորութիւննին արդէն վկայեալ (տե՛ս 60. 9) և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ։

Ընտրողական ժողովը 21 հոգիէ կը բազկանայ. եթէ թագի մը մէջ վերոյիշեալ անձինքը այս թիւը չը լցնեն, պակասը նոյն թագին մէջ է՛ն շատ տուրք տուող ընտրողացմէ պէտք է լցնել։

Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քարոզիչը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է. իր դիւանը կը բազկանայ մէկ աւետնապետէ, մէկ աւետնադպրէ և երեք քննիչներէ։

Ընտրողական ժողովը թագական խորհուրդին հետ միանալով կը նախագահէ ընտրական գործողութեանց։

96. Ընտրողական ժողովը ընթերցաց ցանկ մը կը պատրաստէ ուզված երեսփոխաններու թիւէն եռապատիկ աւելի՝ ընտրողաց որոշումը դիւրացնելու համար։

Այն ցանկին ալ բացատրեալ կը մնայ թագական խորհրդարանին մէջ, իսկ ընտրողք ոչ մէկ կերպով ըստիպեալ են այս ցանկին հետեւելու։

97. Ընտրողական ժողովները ամէն մէկը իր թագին մէջ՝ ընտրողութեան պայմանները ըստուգելով՝ ընթերցաց ցանկ մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով. այս ցանկը ութը օր բաց պիտի մնայ թագական խորհրդարանին մէջ, որպէս զի թագին ընտրողները կարենան իրենց անունը վրայ դիտողութիւն ունին նէ՝ ընել։

98. Ընտրողական ժողովը ամէն մէկ ընտրողի մէյմէկ ընթերցողէր պէտք է տայ այն օրինակ։

Ա. . . . ընթերց

Ա. . . . (անուն ըստ)

և ընտրողական ժողովին կողմէն ըստորագրեալ։

Ադանց այս ընտրողագիրը ներկայացնելու ոչ ոք պիտի կարենայ քուէտուփին մերձենալ։

99. Եթէ ընտրութեան հրաւէրը՝ օր և է պատճառով՝

Digitized by Google

Պատրիարքին կողմէն չըլլայ (տես յոդ. 94) ազգային վարչութեան կողմէն պէտք է որ ըլլայ գաղափական ժողովին ատենապետին ձեռօք։

Եթէ ազգային վարչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու, և ընտրութեան համար նահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ։ այն ատեն ընտրողները իրաւունքնին վարելով՝ լիակատար իշխանութեամբ կը ժողվըվին իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանը և ընտրողական ժողով կազմելով կընտրեն իրենց երեսփոխանները ըստ ընտրական կանոնաց։

Երբոր այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը լրիննայ, անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովը և ղուրկ ամենայն իշխանութենէ, ուստի և ինչ որ գործէ կամ գործած է նոյն կէտէն ասդին, ապօրինաւոր է և ապազօր իբրեւ չեղեալ։

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ

100. Ընտրողաց ցանկին բացվելէն չաբաթ մը ետքը՝ կիրակի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետեւ՝ թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կըսկըսվի սապէս։

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարգով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագիրնին կը դնեն սեղանին վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանը առջեւ ըստորագրելէն ետքը՝ հոն թուղթի մը վրայ քանի երեսփոխան ուզած է նէ՝ այնքան անձի անուն կը գրեն իրենց ձեռքովը վերէն ի վար կարգով և ամեն մէկ անուան առջեւ մականուն, բնակութիւն, արհեստ նշանակելով՝ թուղթը կը ծալեն քուէտուփին մէջ կը ձգեն։

101. Քուէարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ քուէարկուք առանձին կերպով մը գրեն իրենց քուէթուղթը, որպէս զի ուրիշ մը չը կարենայ տեսնել գրված անունները։

102. Քուէարկութիւնը ըսկսած օրը պէտք է լրիննայ։

Ընտրողացմէ ով որ այն օրը քուէարկութեան չը ներկայանայ՝ իրաւունք չունի ետքը բողոքելու։

Digitized by Google

103. Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի կամ դաւառի մէջ քուէ տալ։

104. Միացեալ թաղերն ու թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, մէկ տեղ դալով կընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կընեն ու ետքը քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն։

ԳՈՒՆԷԱՄԱՐ

105. Քուէարկութիւնը լսընալէն ետքը՝ նոյն օրը միեւ նոյն նիստի մէջ ընտրօղական ժողովին հսկողութեանը ներքեւ տուփը կը բացուի. քննիչները քուէները կը համրեն և քուէարկուաց թիւին հետ կը բաղդատեն. եթէ տարբերութիւն գտնի կամ եղած տարբերութիւնը անհնար ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու թիւի (վանդի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրօղաց ցանկին մէջ ըստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարուի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը և ընտրօղական ժողովը խարդախութեան կասկած ունենայ, դարձեալ քուէարկութիւն ընել կ'որոշէ միւս օր մը մինչեւ առաջիկայ կիւրակէն։

Նմանապէս եթէ ուզված երեսփոխանաց թիւը չը լրցվի առաջին անգամին՝ մնացածին համար երկրորդ անգամ ընտրութիւն կ'ըլլայ ուրիշ օր մը։

106. Եթէ պատահի որ մէկը պէտք եղածէն աւելի թըւով անուն դրած ըլլայ իր քուէթուղթին մէջ, նոյն թիւէն ետքը եկած անուններըը անընդունելի են։

Նմանապէս վերջէն ի վար կարգով չը դրված անուններուն քուէթուղթը անհամարելի է։

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի քուէ ըստացողներուն մէջ էն շատ ըստացող անձինքը երեսփոխան ընտրըված են։

108. Եթէ մէկ կամ երկու անգամով առաւելութիւն չ'ըստացվի, ընտրօղական ժողովը կը ծանուցանէ էն շատ առաւելութիւն ըստացող երկու անուններըը, և երկրորդ քուէար-

Digitized by Google

կութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կըլլայ։

109. Եթէ հաւասար քուէ պատահի երկու անձանց վրայ, երիցագոյնը ընտրեալ է։

ՎԱՒԵՐԱՑՈՒՄ ԸՆՑՐՈՒԹԵԱՆՑ

110. Ամէն ընտրօղական ժողով՝ իր թաղէն կամ գաւառէն ընտրված երեսփոխանաց անունները քաղաքական ժողովին կը ներկայացնէ պատրիարքին ուղղեալ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ճըշդիւ նշանակված ըլլայ քուէվուղթին օրինակը, այսինքն՝ ընտրեալին անունը, մականունը, բնակութիւնն ու արհեստը և քուէարկութեան բոլոր պարագաները։

Քաղաքական ժողովը՝ քուէարկութեանց տեղեկագիրները քննելով, կ'ըստուգէ երեսփոխանաց իշխանութիւնը։

Այս ըստուգութենէն ետքը պատրիարքը պաշտօնական կերպով իմաց կուտայ նորընտիր երեսփոխանաց և կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել որոշեալ օր մը։

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ քաղաքական ժողովին քննած տեղեկագիրները մտիկ ընելով՝ ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ և երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազմութիւնը կը լրացնէ։

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարվիլ երբ երեսփոխանաց մեծագոյն մասը՝ որ Պոլսի մէջ է՝ ընտրված ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը կամ գաւառական երեսփոխանաց որոնց ընտրութեան լուրը մէկ կողմէն Պոլիս հասնելու վրայ կ'ըլլայ։

113. Եթէ մէկը քանի մը թաղերու կամ քանի մը գաւառներու կողմէն ընտրված ըլլայ, ինքը կ'որոշէ ո՛ր թաղին կամ ո՛ր գաւառին երեսփոխանութիւնն ընդունելը։ Եթէ ինքը չ'ուզէ որոշել, ընդհանուր ժողովը վիճակով կ'որոշէ։

Այն պարագային մէջ ընտրօղ թաղին կամ գաւառին իմաց կը տրվի ուրիշ երեսփոխան մ'ընտրելու։

Այնպէս կ'ըլլայ երբ վախճանման կամ հրաժարման պատճառով երեսփոխանաց մէջէն պակասօղ ըլլայ։

Digitized by Google

114. Ժողովարանին մէջ բացագրեալ պէտք է ունայ երեսփոխանաց ցանկը այբուբենի կարգով շինված, որոյ մէջ թուականովը կը նշանակվի անուան առջեւ՝ հրաժարում, վախճանում, և այլն։ Նմանապէս երեսփոխանաց հետ առաջին և երկրորդ կարգէ անդամակից (§ող. 9) եղող անձանց ցանկը։ Այս ցանկերը հինգ տարին անգամ մը կը նորոգվին Ընդհանուր Ժողովին նորոգմանը հետ։

Ըստ հարկին գործածելու համար երեսփոխանաց մէյմէկ տպեալ օրինակէն երեսփոխանութեան պէտք է տրվի սոյն օրինակ։

Ա. . . . Ազգային երեսփոխան

(Ամ Քրիստոսի)

. . . . . .

(Պատրիարքական երեսփոխանին)

Ինչ ճակատը պատրիարքական կնքով կնքեալ

Գ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

115. Պատրիարքը պէտք է որ Էջմիածնայ կաթուղիկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իրը Էջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ՚ըլլայ և Օսմանեան Տէրութեան հպատակ։

116. Կրօնական ու քաղաքական ժողովները խառն ժողովով կազմելով ընտրելութեան պայմաններն ունեցող եպիսկոպոսաց և վարդապետաց արժանիքը կը քննեն թէ կրօնական և թէ քաղաքական մասին և կ՚որոշեն երեք ընտրելի որոնց անուններն Ընդհանուր ժողովին կը ներկայացնեն։

Ընդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրելի անձանց վրայ գաղտնի քուէարկութիւն ըլլալով՝ ո՛վ որ մեծագոյն մասին հաւանութիւնը ըստանայ, անի՛կ՚ըլլայ օրինաւոր պատրիարք Ազգին։

Եթէ առաջին անգամին մեծագոյն մաս չը վաստկվի, երկ-

Digitized by Google

լորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ. եթէ երկրորդին ալ չը յաջողի, երկու առաւելագոյն քուէ ըստացօղաց անունները կը ծանուցվի դիւանին կողմէն և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ'ըլլայ։

Եթէ պատահի որ քուէները երկու անձի վրայ հաւասար ապէս բաժնվին, այն ատեն երկուքին մէկը վիճակով կ'ընտրվի։

Եթէ ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս Էջմիածին կը ղրկվի եպիսկոպոս ձեռնադրվելու համար։

117. *Ընտրութիւնը լրինալէն ետքը տեղեկագիր մը կը չինվի զոր բոլոր բազմականք կ'ըստորագրեն, և որոյ օրինակը՝ Ընդհանուր ժողովին կնքովը կնքեալ՝ խառն ժողովին միջնորդութեամբը Բ. Դրան կը մատուցվի որ կ'անուանէ զՊատրիարքը։*

118. *Նորընտիր Պատրիարքը՝ դէռ Բ. Դրան չը ներկայացած՝ եկեղեցւոյ մէջ և Ընդհանուր ժողովին առջեւ հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ. "Աստուծոյ և առաքելոց Աթոռոյ և առաքելական Ազգիս Հայոց ներկայացեալ Ընդհանուր ժողով՝ ուխտեմ հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան և հրսկել բոլոր սրտով նորին անթերի գործադրութեան"։*

119. *Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան տակ կ'ընկնի։*

120. *Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը՝ կամ ազգային երեսփոխանաց կողմէն, կամ երօնական ժողովին և կամ քաղաքական ժողովին կողմէն կրնայ ըլլալ։*

Երբ այսպիսի ամբաստանութիւն մը պատահի, Ընդհանուր ժողովը կը գումարվի և իր մէջէն քննիչ յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ (7 եկեղեցական, 7 թաղական երեսփոխան, 7 գաւառական երեսփոխան) որոնք ամբաստանօղաց մէջէն պէտք չէ որ ըլլան։

Քննիչ յանձնաժողովը՝ ամբաստանութիւնը քննելով, տեղեկագիր կու տայ Ընդհանուր ժողովին որ գաղտնի քուէարկութեամբ կ'որոշէ խնդիրը։ Եթէ այս որոշումը՝ որ ատորագրեալ պէտք է ըլլայ որոշման կողմը քուէ տուօղ ժողովականներէն, Պատրիարքի հրաժարումը վճռած ըլլայ, երկու ժողովոց ատենապետները Պատրիարքին կը ներկայացնեն որ

Digitized by Google

յայնժամ Ազգին ողջ կամքը տեսնելով հրաժարականը տալու պարտաւորեալ է։

121. Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր եպիսկոպոսաց կարգը կ'անցնի և ըստ այն կը տնօրինվի խառն ժողովին կողմէն։

Դ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

122. Առաջնորդի ընտրութիւնը գաւառական ընդհանուր ժողովին մէջ կ'ըլլայ նոյն և նման պատրիարքի ընտրութեան։

Սոյն ընտրութիւնը գաւառական խառն ժողովին միջնորդութեամբ վաւերական տեղեկագրով կը ծանուցվի պատրիարքին որ կեդրոնական խառն ժողովին հաւանութեամբը կ'անուանէ զԱռաջնորդը։

123. Եթէ Առաջնորդը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ դտվի, ամբաստանութեան տակ կ'ընկնի Գաւառական ժողովոց կողմէն. և քննութիւնը ըստ 120 յօդուածին ըլլալով դատը կեդրոնական խառն ժողովին մէջ կը տեսվի որ ըստ պատշաճին կը տնօրինէ։

Ե. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎԱԿԱՆԱՑ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԱՑ

124. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ հրօնական ու քաղաքական ժողովոց անդամները։

Քաղաքական ժողովը կ'ընտրէ ՅԵսուչ խորհրդոց անդամները բաց՝ի Դատաստանական խորհրդէն որոց եկեղեցական անդամները հրօնական ժողովը կ'ընտրէ։

Դատաստանական խորհրդին անդամները 40 տարին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան։

Թաղին ընտրօղները կ'ընտրեն թաղական խորհրդին անդամները թաղին ընտրօղական ժողովին ներկայութեանը, ըստ ընտրական օրինաց։

Սոյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնը։

125. Ընդհանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվի և ապրիլի սկիզբը կը նորոգվի։

Digitized by Google

Կրօնական ու քաղաքական ժողովներուն ու ցեռուչ խորհուրդները ամեն տարի մարտի վերջը կ'ետալ չափ միայն կը լուծվին և ապրիլի ըսկիզբը կը նորոգվին (1)։

Թաղական ու թեմական խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվին և ապրիլի ըսկիզբը կը նորոգվին։

Այնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովոց և խորհրդոց նորոգումը։

126. Ազգային երեսփոխաններն ու թաղական և թեմական խորհրդականները անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար։ Իսկ կրօնական ու քաղաքական ժողովոց և ցեռուչ խորհրդոց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշ տր և է պաշտօնի համար վերընտրելի են։

Այնպէս է նաեւ գաւառներու մէջ գաւառական պաշտօնատարաց վերընտրութիւնը։

127. Ամեն անգամ որ Ազգային ժողովներն ու խորհուրդները նորոգվին, նորընտիր անդամոց ցանկը օրագրի միջոցով պէտք է հրատարակվի։

ԳԼՈՒԽ Դ.

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

1. ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

128. Ամեն ժողով և խորհուրդ պէտք է ունենայ ատենապետ մը, որ կը բաղկանայ ատենապետէ մը, ատենադպրէ մը և պէտք եղածին չափ փոխանորդներէ զորոնք ժողովը իր մէջէն կընտրէ։

(1) Առջի անդամին մեկայն՝ ժողովականաց եւ խորհրդականաց կէսին լուծումը վիճակով կ'որոշվի։

Digitized by Google

Ա. ռ ջին անգամին երիցադունին առենապետութեամբը և կրտսերագունին առենադպրութեամբը նիստ կընէ և իր դիւանը կը կազմէ։

129. Ա. տենապետին պաշտօնն է՝ առեանը բանալ և գոցել, առեանին ներքին վարչութիւնը տնօրինել, վիճաբանութիւններն ուղղել, կանոնադրութեանց պահպանութեանը հըսկել և առենաբաններուն կարգով խօսք տալ։

130. Ա. տենադպրին պաշտօնն է՝ առեանին մէջ խօսվածները գրի առնել, երդած որոշումներն ու տրված պատճառաբանութիւնները ճշդիւ նշանակել, և առենագրութիւնը հետեւեալ առեանին ներկայացնել, և ամեն առեանին խնդիրներու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով։

131. Ա. տենապետի ու առենադպրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չը գտված առեաններուն մէջ զանոնք փոխանակել։

132. Ա. տենական դիւանը տարին անգամ մը կը նորոգվի և անդամներն անմիջապէս վերընտրելի են։

Ընդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը ընդհանուր ժողովին հետ կը նորոգվի։

2. ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

133. Կրօնական ու քաղաքական ժողովներն ու ցեխուչ խորհուրդները շաբաթին անգամ մը կը գումարվին ի պատրիարքարան որոշեալ օր մը։

Ա. տենապետները կրնան ուրիշ օր մը կամ ուրիշ տեղ մը արտակարգ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել ըստիպօղական պարագայի մէջ։

Ընդհանուր ժողովին գումարվելու որը լրագրի մէջոցով պէտք է ծանուցվի գոնէ երեք օր առաջ։

134. Ա. ռանց մեծագոյն մասի ներկայութեան նիստը անբաւական կը համարվի և խնդրի մը վրայ վերջին որոշում չը կրնար տրվիլ։

135. Ա. ռանց առենապետի և առենադպրի առեան չը կրնար բացվիլ։

Digitized by Google

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով՝ ատենապետը կամ ատենապետները և անոնց փոխանորդները ներկայ չըլլան, երեք տագնապութեամբն ու կրտսերագունին ատենապետութեամբը կը բացվի ատեան։

136. Ատենապետին խօսք չը խնդրած և չառած ներթևի չէ խօսիլ ատեանի մէջ։

137. Խնդիր մը առաջարկել ուզողը՝ նախ խնդիրներուն ցանկին մէջ պէտք է դրել տայ խնդիրն ու իր անունը, և երբ կարգը գայ, այն ատեն իրաւունք ունի խօսելու նոյն խնդրին վրայ և ժողովը զանի մտիկ ընելու պարտաւոր է։ Այս կարգը այն ատեն միայն կրնայ փոխվիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի որոյ ըստիպողական ըլլալը ժողովն որոշէ։

138. Խնդիր մը լաւ մը քննվելէն, վիճաբանելէն և անոր վրայ ամենուն կարծիքը առնվելէն ետքը պէտք է որ քուէի դրվի, և որոշումը ներկայ գտնվող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբը կը տրվի։

139. Երբ ձայները հաւասար գան՝ եթէ նախագահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի որոշումը, եթէ ոչ՝ ատենապետին կողմը։

140. Յաւուն ժողովին մէջ խնդրի մը որոշում տալու համար պէտք է որ երկու ժողովները զատ զատ քուէարկութիւն ընեն. երբ երկուքին ալ մեծագոյն մասը մի եւ նոյն որոշումն ըրած ըլլայ՝ խնդիրը կը լուծվի. իսկ հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն կը սեպվի երկու ժողովոց մէջ, և տնօրէնութիւնը ընդհանուր ժողովին կը մնայ (Յօվ. 1, 12)։

141. Ժողովներուն մէջ որ և է ընտրութիւն, դատաստան, աղգային տուրքի հաստատութիւն, Սահմանադրութեան վերաքննութիւն, գաղտնի քուէարկութեամբ կ'որոշվի. նոյնպէս կ'ըլլայ նաեւ ուրիշ որ և է խնդրի մէջ երբ գաղտնի քուէարկութիւն պահանջող ըլլայ։

142. Խորհրդոց ատենապետները կրնան մինակ կամ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ առնելով՝ ուզած ատենին գաղաքական ժողովին մէջ ներկայանալ և իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վրայ խօսիլ, բայց քուէ չունին։

Digitized by Google

143. Ժողովներու և խորհուրդներու մէջ ամէն նախատ իր ատենապրութիւնը ակէտք է ունենայ, զոր ներկայ գտնուող անդամները կ'ընտրագրեն։

Ընդհանուր ժողովին ատենագրութիւնները գատրնաքն ու դիւանին անդամները միայն կ'ընտրագրեն։

Ընդհանուր ժողովին անդամները նկլայ-Ընկան խումբի մը վրայ կ'ընտրագրեն ժողովարանը մնուած ատենին։

144. Ամեն ժողով և խորհուրդ իր տեսչութեան կամ ճանապարհութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ տայ իր համարատու ժողովին կամ խորհրդին։

Այն տեղեկագիրը բոլոր անդամոց կողմէն ընտրագրել պէտք է ըլլայ։

145. Երբ անգամ իրարու վրայ առանց բանաւոր պատճառ մը գրով լսացնելու ներկայ չը գտնուող ժողովականին կամ խորհրդականին անունը ատենագրութեան մէջ կը յիշուի, և ժողովին կամ խորհրդին կողմէն ատենապետը անոր կը գրէ չը գալուն պատճառը հարցնելու համար. եթէ պատասխան չընդունի ժողովը, կամ ընդունած պատասխանը գինքը գոհ չընէ, երկրորդ գրութեամբ ժողովին դատումը կ'իմացնէ անոր և կը յորդորէ որ յաջորդ ատեանին ներկայ գտնուի. եթէ նորէն չը ներկայանայ, այնպիսին իր ազգասիրական պարտուցը մէջ զանցառութիւն ըրած ըլլալով՝ իր զանցառութիւնը հրաժարական կը սեպուի. եթէ այդպիսեաց թիւը մինչեւ 3 հասնի, ժողովին նախագահը կամ ատենապետը անոնց տեղ զանոնք ընարող ժողովէն ուրիշ անդամներ կը խնդրէ (1)։

Նոյնը պէտք է ընէ երբ նոյն թղթով ժողովականք կամ խորհրդականք պակսին թէ՛ վախճանման և թէ՛ հրաժարման պատճառով։

---

(1) Այս տրամադրութիւնը Ընդհանուր ժողովին վերաբերեալ չէ։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Ե.

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնը առաջին անգամ առժամանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունուի ու կ'ըստորագրուի, և յետոյ սահմանադրականապէս կազմեալ Ընդհանուր ժողովը դարձեալ ըստորագրելով՝ Ազգին կոմսէն կը վաւերայնէ զանի և վճռաբար կը հաստատէ։

Սահմանադրութեան ըստորագրեալ բնագիրը ազգային դիւանատան մէջ կը պահուի և օրինակը տպագրութեամբ կը հրատարակուի։

147. Ազգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունուելէն ետքը՝ Ազգին որոշ ու յայտնի կամքը կը սեպուի, և անոր պարունակած տրամադրութիւնքը անփոփոխելի են ազգային վարչութեան կոմսէն։

Իսկ՝ երբ ազգային վարչութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինք միշտ համեմատ վարուելով անոնց, իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերը միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Ընդհանուր ժողովին։

148. Երբ Ընդհանուր ժողովը վերաքննութեան առաջարկութիւնը ընդունի, վերաքննութեան ժողով մը կը կազմեսա՛ կերպով.

Կրօնական և քաղաքական ժողովներէն չորսական հոգի, Ցեսուչ խորհուրդներէն երեքական հոգի, և ասոնցմէ դուրս 10 հոգի ղոր Ընդհանուր ժողովը իր մէջէն կամ դուրսէն կ'ընտրէ, ընդ ամենը 30 հոգի։

149. Վերաքննութեան ժողովը ազգային վարչութեան կոմսէն եղած դիտողութիւնները միայն քննութեան տակ առնելով, ալետք եղած փոփոխութիւնները կ'որոշէ և պատրաստքին միջնորդութեամբը Ընդհանուր ժողովին կը ներկայացնէ։

Digitized by Google

150. Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական սկզբանց տրամադրութեանցը համաձայն չըլլայ, այն սկզբանց՝ որով ապահովեալ են Ազգին իրաւունքները, իրաւունք՝ որոնց վրայ Ազգն անգամ՝ չունի իշխանութիւն տնօրէնութեան մի միանգամայն պարտիք են։

ՎԵՐՋ

ՊՕԼԻՍ

	Թաղ	Եկեղեցի	Երեսփոխանացուիս
1	Գումքապու	Մայր եկեղեցի	24
2	»	Ս. Յարութիւն	2
3	Կէտիկփաշա	Ս. Յովհաննէս	6
4	Եէնիքաքու	Ս. Թադէոս և Բարթողոմէոս	4
5	Սամանթիա	Ս. Գէորգ	15
6	»	Ս. Յակոբ	1
7	Նարլըքափու Մաքրի գեղ Ա. Ստեփան Ա. Եօրկի	Ս. Յովհաննէս Ս. Ստեփան Ս. Աստուածածին Ս. Աստուածածին	2
8	Թօփքափու	Ս. Նիկողայոս	2
9	Քարակէօմրիւկ	Ս. Ց. Լուսաւորիչ	1
10	Պալատ	Ս. Հրեշտակապետ	15
11	Էյիւպ	Ս. Աստուածածին	1
12	»	Ս. Եղիա	1
13	Խասգիւղ	Ս. Ստեփան	15
14	Քասըմփաշա	Ս. Յակոբ	1
15	Բերա Ղալաթիա	Ս. Երրորդութիւն Ս. Լուսաւորիչ	17
16	Պէշիկթաշ	Ս. Աստուածածին	10
17	Օրթագիւղ	Ս. Աստուածածին	14
18	Քորուչէշմէ Հիասար Միրկիւն Նորգիւղ Պէօյիւքտէրէ	Ս. Խաչ Ս. Սանդուխտ Ս. Երեք մանկունք Ս. Աստուածածին Ս. Հռիփսիմէ	5
19	Գէյքգղ Քանտիլլի	Ս. Նիկողայոս Ս. Ս. Առաքեալոց	1
20	Քուղկունճուք և Ինճաուիէ	Ս. Լուսաւորիչ	2
21	Ոսկիտար	Ս. Կարապետ	8
22	» Ավէմտաղ	Ս. Խաչ Ս. Նշան	11
23	Քաղկեդոն	Ս. Թադէոս	1
24	Քարթալ	Ս. Նշան	1
		Ընդ ամէնը	160

Digitized by Google

ԳԱՒԱՌՆ

Առաջնորդական վճռ.		Եպիսկոպոսաց ընդ.
1	Երուսաղէմ	1
2	Եգիպտոս	1
3	Բերիա	1
4	Կիպրոս, Տարսոն, Սիս	1
5	Մարաշ	1
6	Հաճին	1
7	Զէյթուն	1
8	Ադանա	1
9	Եդեսիա	1
10	Տիգրանակերտ	1
11	Փիւրտիատան	1
12	Պաղտատ	1
13	Բաղէշ	1
14	Վան	3
15	Աղթամար	1
16	Կարս	1
17	Մուշ	2
18	Երզընկա	1
19	Բաբերդ	1
20	Կարին	2
21	Քարբերդ	3
22	Արապկիր	1
23	Բալու	1
24	Գեղի	1
25	Ակն	1
26	Տիվրիկ	1
27	Մալաթիա	1
28	Կիւրին	1
29	Անթէպ	1
30	Քիլիս	1
31	Շապին Քարահիսար	1
32	Սեբաստիա	2
33	Եւդոկիա	1
34	Մարզուան	1
35	Ամասիա	1
36	Տրապիզոն	1
37	Ճանիկ	1
38	Եօզղատ	1
39	Կեսարիա	2
40	Գաղատիա	1
41	Կուտինա	1
42	Զմիւռնիա	1
43	Պրուսա	1
44	Պանտըրմա	1
45	Նիկոմիդիա	3
46	Ռօտոսճօ	1
47	Ադրիանուպօլիս	1
48	Վալաքիա	1
49	Մոլտավիա	1
50	Վառնա	1
	Ընդ ամէնը	60

Digitized by Google

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՆԴԱՄՔ

ԿԱՐԱԳԼՑ ԵԳԻՍԿՈՊՈՍ
ՍԲՐԱՍՏԻՈՑ

Ց. ԵՐԵՄԻԱ ՓԱՀԱՆԱՑ
ԽԱՑԳԻՒԼԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱԳԼՑ
ՊԱԼԱԹԻՈՑ

Ց. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՀԱՆԱՑ
ՓԱՓԱԶԵԱՆ

Ց. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՀԱՆԱՑ
ՀԻՒՆՓԵԱՐՊԷՅԵՆՑԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՏԻՐԲԻ
ԱՇՆԱՆԵԱՆ Գ.
ԻՒԹԻՀԵԱՆ Կ. Ս.
ՄԻՍԱՓԵԱՆ Վ.
ՍԻՒՐԷՆԵԱՆ Ց.
ՓԷՇՏՄԱԼՃԵԱՆ Ս.
ՓՈՓԻԿԵԱՆ Բ.

ԱՂԱԹՕՆ Մ.
ԵԱՂՈՒԲԵԱՆ Ե.
ՄԻՆԱՒ Մ.
ՌՈՒՍԻՆԵԱՆ
ՏԷՄՈՐՃԻՊԱՇԵԱՆ Ե.
ՓԱՑՄԷՐԵԱՆ Թ.
ՕՏԵԱՆ Գ. Ս.

Պալաթիա. 20 մայիս 1860.

Ազգային Ընդհանուր ժողովին միաձայն հաւանութեամբն ընդունելած և վաւերագրեալ։
Կ. Պոլիս, ի Պատրիարքարան Հայոց.
24 Մայիս 1860.

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

Գլ. Ա. Յաղագս պատրիարքութեան Զաքարիայ, եւ Յովհաննու Հայմատաւոյ, եւ Հալածանացն Հռոմէական Հայոց . . 1

Գլ. Բ. Յաղագս վիճաբանութեան տօնացուցին Հայոց եւ կաթողիկոսութեան Սոյ Տ. Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Երուսաղէմի Տ. Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Կ. Պօլսոյ Տ. Դանիէլի 4

Գլ. Գ. Յաղագս վախճանի Ղուկասու կաթուղիկոսի, եւ ընտրութեան Յովսեփայ, եւ Բարթողոմէոսի եւ Դանիէլի . . 8

Գլ. Դ. Յաղագս գործոց Յովհաննու եպիսկոպոսի Կ. Պօլսոյ, եւ Գալուստ Նուիրակին Էջմիածնի, եւ ընտրութեան Դանիէլի ՚ի կաթողիկոսութիւն, եւ Դուրբի ՚ի պատրիարքութիւն . . . 10

Գլ. Ե. Յաղագս խռովութեան եւ երկպառակութեանն Ազգիս ՚ի Կ. Պօլիս, եւ պատրիարքութեան Յովհաննու 14

Գլ. Զ. Յաղագս աքսորանացն Դանիէլի եւ Գալուստ Նուիրակին, եւ ընտրութեան Յովսեփայ ՚ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, եւ վախճանի Նորա 18

Գլ. Է. Յաղագս երկիցս անգամ ընտրութեան Դանիէլի, եւ բռնանալոյն Դաւթի ՚ի կաթողիկոսութիւն, եւ գործոց Նորին. 20

Գլ. Ը. Յաղագս գրութեան Եփրեմայ Արհիեպիսկոպոսի առաջնորդի Ռուսաստանու, եւ աքսորանացն Յովհաննու պատրիարքի, եւ պատերազմութեանն Գրիգորի, եւ վախճանի Գրոտոսի կաթողիկոսին Սոյ, եւ յաջորդելոյ Կիւրակոս եպիսկոպոսի. 29

Գլ. Թ. Յաղագս օծման Դանիէլի ՚ի կաթողիկոսութիւն, եւ ժողովոյն Գայաղիւսու 38

Գլ. Ժ. Յաղագս գործոց Գրիգորի պատրիարքի, եւ աքսորանաց Նորին, եւ Դանիէլի, եւ վերադառնալոյ Յովհաննու կրկին անգամ յաթոռ պատրիարքութեան Կ. Պօլսոյ 48

Գլ. ԺԱ. Յաղագս պատերազմին Պարսից եւ Ռուսաց, եւ դարձին Դանիէլի յաքսորանացն, եւ նստելոյ յաթոռ կաթողիկոսութեան Էջմիածնին. 51

Գլ. ԺԲ. Յաղագս գալոյ Անգղիացւոց պատերազմական նաւուք ՚ի Կ. Պօլիս, եւ բազմադիմի խռովութեանց, որք եղեն ՚ի Կ. Պօլիս 55

Գլ. ԺԳ. Յաղագս Չանալոյ Յունաց գրաւել զվանս սրբոյն Յակոբայ ՚ի Երուսաղէմ, եւ յաղագս դասուն Նոցին ընդ Հայս. 59

Digitized by Google

Գլ. ԺԴ. Ցաղագս վախճանի Տ. Գանիէլէ Գաթողիկոսի, եւ յաջորդելոյ նորին եւ յաղագս բանիւ միաբանութեանն ընդ Հռոմէականսն Հայ կողեցելոց փողոքիչ եւ 64

Գլ. ԺԵ. Ցաղագս հրաժարելոյ Յովհաննու Ա պատրիարքութենէ, եւ յաջորդելոյ Աբրահամ պատրիարքի 71

Գլ. ԺԶ. Ցաղագս գործոց Աբրահամ պատրիարքի եւ աքսորանաց նորին եւ յաջորդելոյ Պօղոսի եպիսկոպոսի Ընդրիանուպօլսեցւոյ 73

Գլ. ԺԷ. Ցաղագս կոչելոյ Պօղոսի պատրիարքին ի Հռոմէականն Հայս՝ ի սէր միաբանութեան 81

Գլ. ԺՀ. Ցաղագս առնելոյ պատուհասս Պօղոսի պատրիարքին, եւ կանոնադրին Կոստանդի նորին 84

Գլ. ԺԹ. Ցաղագս գործոց Պօղոսի պատրիարքին 93

Գլ. Ի. Ցաղագս ապստամբութեան Ուշնեցւոց Հայաղգեայ, եւ մահառնոյ վտանգի Տ. Կիւրակոսի կաթողիկոսին Ցայոց . . 98

Գլ. ԻԱ. Ցաղագս կործանման տանն Տիւզմանց, եւ բանի միաբանութեան Հայոց ընդ Հռոմէական Հայս 102

Գլ. ԻԲ. Ցաղագս Ջաստափոլութեան Աբբայեանն Հարց զնկերեցեալն Հայոց 106

Գլ. ԻԳ. Ցաղագս աքսորանաց եւ փախստեան Գօլէճեան կարգաւորացն, եւ դիպուածեան առ մեզ Աբբայեան Հարց, եւ խօսելոյ նոցա ընդ վարդապետս մեր վասն խնդրոց հինչ . . . 112

Գլ. ԻԴ. Ցաղագս խօսելոյ Աբբայեան Հարց ընդ վրժանկեցւոց վասն ծնօղաց հաւատոյ, զորոց էին խնդիրք . . . 117

Գլ. ԻԵ. Սուրբ եւ ուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն 122

Գլ. ԻԶ. Ցաղագս խնդրոց Աբբայեան Հարց եւ ընդունելութեան նոցին 126

Գլ. ԻԷ. Ցաղագս գալոյ Աբբայեան վարդապետաց յեկեղեցիս մեր, եւ հաղորդելոյ ընդ մեզ՝ ի հոգեւոր պաշտամունս . . . 131

Գլ. ԻԸ. Թուղթ Հ. Թովմայ վարդապետին ընդդէմ Վիսկենտիոսի Գօռեսի եպիսկոպոսին Լատինացւոց 137

Գլ. ԻԹ. Յայտարարութիւն՝ ի Գրիդոր վարժապետէ Փէչտալճեան 143

Գլ. Լ. Թուղթ Հ. Սերովբէ վարդապետի Ձէվահիրճեան, ընդդէմ բանադրանաց Թղթոյ Գօռեսի եպիսկոպոսին Լատինացւոց 148

Գլ. ԼԱ. Ցաղագս օրհնութեան խնձոյ վերջին ծծման, եւ

Digitized by Google

աղմկի ժողովքեանն Հայոց 161

Գլ. ԼՐ. Յաղագս սպատամբելոյ Ցունաց ՚ի հպատակութենէ Օսմանեան տէրութեան, եւ զկապատանն Լիզոլիոսի պատրիարքին եւ մետրապօլատաց եւ մեծամեծաց Ցունաց եւ քաղաքաց հպատակութեան 171

Գլ. ԼԳ. Յաղագս պատերազմին Պարսից ընդդէմ Մոսկովաց եւ քաջութեան զգային Հայոց, եւ յաղագս գրաւելոյ Մոսկովաց զԱրարատեան գաւառն ընդ իշխանութեամբ իւրեանց . 177

Գլ. ԼԴ. Յաղագս քարձմանն պապասական Օճաքին Եչմիէձնի գծից 179

Գլ. ԼԵ. Յաղագս գործի յաքսորանաց տանն Տիւզեանց, եւ պատրիարքութեան Տ. Կարապետի, եւ աքսորանաց Քէնկրեանց երկուց եղբարց 188

Գլ. ԼԶ. Յաղագս այրելոյ Ներսիսեան զարքունի նաւատորմիղն Օսմանեան տէրութեան 192

Գլ. ԼԷ. Յաղագս վերջին հալածանաց եւ աքսորանաց Հռոմէականաց Հայոց 195

Գլ. ԼԸ. Յաղագս պատերազմին Մոսկովաց ընդդէմ Տաճկաց. 198

Գլ. ԼԹ. Յաղագս մեծի սովուն, որ եղեւ ՚ի Կոստանդնուպօլիս 201

Գլ. Խ. Յաղագս քաջութեան Հայոց Բաքեդու եւ կոտորածի նոցա ՚ի Մոսկովաց, եւ յաղագս գործոց Տիպիչ սպարապետին ՚ի կռիւն Ռումելիի 204

Գլ. ԽԱ. Յաղագս գալոյ Ռուսաց ՚ի վերայ քաղաքին Կոստանդնուպօլեայ, եւ հաշտութեան նոցա ընդ Օսմանցիս ընդ երկատասան դաշնադրութեամբք 207

Գլ. ԽԲ. Յաղագս որոշելոյ Հռոմէական Հայոց ՚ի Հայոց, եւ մետրապօլտի նոցա, եւ առաջնորդի 212

Գլ. ԽԳ. Յաղագս գործոց Յակոբայ առաջնորդին Հռոմէականաց Հայոց, եւ Նուբիհան Անտօնի մետրապօլտի նոցա . . . 234

Գլ. ԽԴ. Յաղագս խնամութիւն առնելոյ Գաղատացւոյ Հռոմէականաց ընդ Ֆրանկաց, եւ արգելանաց հրովարտակին ՚ի դրանէ տէրութեան 236

Գլ. ԽԵ. Յաղագս վտանգաւոր հարուածոց եւ անցից կոտորանդնուպօլեայ քաղաքին 241

Գլ. ԽԶ. Յաղագս պատերազմի Մէհմէտ Ալի փաշային ընդդէմ Ասիոլլահ փաշային Ակաղոն քաղաքի. 242

Գլ. ԽԷ. Յաղագս պատերազմի ծովքային ընդդէմ Մէհմէտ

Digitized by Google

Այլ փաշային Եգիպտոսի, եւ գալոյ Յուսայ՝ի կատարմունեան պատճառ՝ի պաշտպանութիւնն արքային 245

Գլ. ԽԸ. Յաղագս մնահամարձ բանսարկելութեան Ջանիկ եւ Մագուստ եւ Խոյիր սմբրայից եւ ազատութեան նոցին, եւ յաղագս կաթողիկոսութեան Յովհաննու Կեսրացւոց 250

Գլ. Խթ. Յաղագս պղծոց Պէղեւանն Յարութիւն Ամիրային, եւ մահու նորին 252

Գլ. Ծ. Յաղագս օձման եկեղեցւոյն Հռոմէական Հայոց. եւ նորոգութեան եկեղեցեաց Հայոց, եւ յաղագս երեւելի գիպուածոց ինչ 258

Գլ. ԾԱ. Յաղագս հարստահատից պատերց արքային, եւ քրիստոսութեան որդւոց նորին, եւ յաղագս ճանապարհորդութեան արքունի վատոդապետ Յովհաննէս ամիրային յԵրզրում, եւ վերադարձի նորին 261

Գլ. ԾԲ. Յաղագս չինութեան ճեմարանին Իւսկիւտարայ, եւ պատրիարքութեան Յակովբոսի 267

Գլ. ԾԳ. Յաղագս ազգային խռովութեանց, եւ պատրիարքութեան Ստեփանոսի, եւ Աստուածատրոյ, եւ նահատակութեան Յովակիմայ 271

Գլ. ԾԴ. Յաղագս կաթողիկոսութեան Եղիազարոյ հինգերորդի եւ պատրիարքութեան Մատթէոսի 279

Գլ. ԾԵ. Յաղագս օձման Եղբօրորդւոյ կաթողիկոսի, եւ գործոց նորա, եւ Շահնազարեան կարապետ վերդապետին 285

Գլ. ԾԶ. Յաղագս դժուարութեան՝ի մէջ կաթողիկոսին եւ Լազարեան Խաչիկ աղային 290

Գլ. ԾԷ. Յաղագս հերձուածոյ Բողոքական Հայոց 295

Գլ. ԾԸ. Յաղագս ընդունելոյ պատրիարքաց զադամանդեայ պատուանշանս յարքայէ եւ այցելութեան առ իրեարս, եւ վերատին բացման ճեմարանին Իւսկիւտարու, եւ փոփոխման դպրաւրի եկեղեցականաց Հայոց, եւ առաքելոյ կաթողիկոսին զՅովհաննէս առ Մատթէոս պատրիարք 308

Գլ. ԾԹ. Յաղագս աղետալի դիպուածոց՝ի Կ. Պօլիս եւ յարուարձին գաւառս, եւ բողոքելոյ Հայոց ընդդէմ Յունաց վասն դրան վանից Ս. Ծննդեան փրկչին՝ի Բեթղեհէմ, եւ հաստատութեան Հոգեւոր եւ Քաղաքական ժողովոց պատրիարքարանին Հայոց 313

Գլ. Ի. Յաղագս ազատութեան Հայոց քննակելոց՝ի վասպուրական, ՝ի Տարօն, եւ՝ի Բագրեւանդ գաւառս, ՝ի հարստա-

Digitized by Google

հարուածեալ զաղտնարար սպրդիմ Պարսից չնորհիւ Քաղքէդոն պատ-
րաստելոյն 324

Գլ. ԿԱ. Ցաղագս փոխատարած այցելութեան Եէրիէլի կար-
դինալին Հռոմայ՝ ի պատրիարքարանն Ցունաց եւ Հայոց, ու-
ր եւ յազագս բանակոտութեան՝ ի վերայ հաստատոյ 327

Գլ. ԿԲ. Ցաղագս Հանգուցեալաց լինկերութեան 350

Գլ. ԿԳ. Ցաղագս հրաժարելոյ Մատթէոսի՝ ի պատրիարքու-
թենէ եւ կրկին պատրիարքութեան Յակովբոսի արքեպիսկո-
պոսի 359

Գլ. ԿԴ. Ցաղագս ազգին եւ խոհութեան Հայոց եւ Հռոմ-
էականաց վասն հրատարակման Խոսքերին եւ Հայերէն պար-
սատագրոցն 366

Գլ. ԿԵ. Ցաղագս պատուհասոյ արքազան կաթողիկոսին Ներ-
սիսի զՅակոբ պատրիարք արժանաւոր մեծարանօք, եւ Արքե-
պետեան պատերազմին Ցուսաց որ եղեւ վասն տի օրինական տե-
ղեակաց Ս. Երուսաղէմի եւ վախճանի արքազան կաթողիկոսին Ներ-
սիսի, եւ կաթողիկոսութեան Մատթէոսի առաջնոյ 370

Գլ. ԿԶ. Ցաղագս պատրիարքութեան Գէորգայ, եւ ուղե-
ւորութեան Մատթէոսի՝ ի Ս. Էջմիածին 374

Գլ. ԿԷ. Ցաղագս հանդիպից, որք եղեն՝ ի ճանապարհոր-
դութեան արքազան կաթողիկոսին մինչեւ Էջմիածին, եւ վա-
ռաւոր օծման նորա, եւ գործոց նորա եւ պատրիարքութեան
Յարգսի 381

Գլ. ԿԸ. Ցաղագս հաստատութեան Ազգային Սահմանադ-
րութեան Հայոց 389

Digitized by Google

ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՂԻՒՍԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՅԵՏ ՔՐԻՍՏՈՍԻ

ԴԱՐ ԺԸ.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՒԵՏԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Digitized by Google

Digitized by Google

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԻՒԼԻ ԻՐԱՑ	ԱԿՈՒ	ՕՐ	ԱԿ ԹՎԱԿԱՆ	ԹՎԱԿԱՆ ՀԱՏՈՐ	ԹՎԱԿԱՆ ՏԱՐԻ	ԿՈՂՄՆԱՅԻՆ ԷՋԵՐՈՒՆ	ԳՈՂԱՑԱԾ Կ. ՊՕԼՍԻՆ	ԹՎԱԿԱՆ ՕՐՀՆԱՑԱՆ
						ՍԻՄՈՆ	ԳՐԻԳՈՐ	ՄԿՐՏՈՒՄ
Զատերազմ Տաճկաց ընդ Ռուսաց՝ Սուլթան Մուստաֆա արար հանդէս պատերազմի (էնտաֆ ալայի)՝ Ապա եւ եւ դրօշակն Մահմէտի, եւ վասն տեսանելոյ զնա՝ ասպանան ՚ի քրիստոնէից 127 անձինք՝ Մազապուր զերծաւ դեսպանն Գերմանացւոց Պրուհաա . .	Մարտ	3	1769	ՌՄԺԹ	ՌՃՀԲ	7	7	13
Տեղաց մարախ յոյժ ՚ի կոստանդնուպօլիս .	Յունիս	15	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Ի ներքոյ Բէսթրօ խափուի ՚ի Ցէնէր՝ ՚ի գիշերի կայծակնահար եղեալ տուն մի, այրեցաւ բոլորովին	. . .	24	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Աղա խափուսին այրեցաւ	Հոկտ.	20	1770	ՌՄԻ	ՌՃՀԷ	8	8	14
Բասենցի Յարութիւն նուիրակն Էջմիածնի փախեաւ ՚ի Թրխատ	Օգոստ.	14	1771	ՌՄԻԱ	ՌՃՀՕ	9	9	15
Լաչք կռուեցան ՚ի Ղալաթիա ընդ Նաւաւարս. այրեցին զնէ՛ի գիւղ. եւ յետ աւուրց ինչ այրեցին եւ զպալատ դեսպանին Բրուսիոյ ՚ի Բերա	Փետր.	12	1772	ՌՄԻԲ	ՌՃՀՂ	10	10	16
Հրդեհ ՚ի պալատն արքային ՚ի կողմն կանանոցին	Յունիս	3	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .

Digitized by Google

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԱՓՈՒ	Օր	Ա. Փրկչոսէ	Թուական Հայոց	Թուական Տ.-ից	Կաթողիկոսութեան Էջմիածնայ	Պատրիարքութեան Կ. Պոլսոյ	Թուական Օսմանեան
						ՍԻՄՈՆ	ԳՐԻԳՈՐ	ՄՐՄՏԱՅԱՆ
Հանդէս ՚ի սիւրբէ սէյիրին, յորոյ ՚ի բազմութենէն կախ ինչ պատահեալ, մեռան 28 անձինք	Սեպտ.	16	1772	ՌՄԻՐ	ՈՒՀՀ	10	10	16
Դրիգոր պատրիարք հրաժարի, եւ յաջորդէ Զաքարիա	. . .	29	. . .	. . .	. . .	. . .	ԶԱԳԱՐԻԱ	. . .
Մեռանի սուլթան Մուստաֆա Գ. եւ յաջորդէ եղբայր նորա սուլթան Համիտ Ա. ՚ի 10 զիլգաատէ	Գեկտ.	24	1773	ՌՄԻԳ	ՈՒՀԷ	11	1	ՀԱՄԻՏ 1
Թլփատեցաւ Սէլիմ արքայորդին Մուստաֆայի, գոլով տասներկու ամաց	Մայիս	1	1774	ՌՄԻԴ	ՈՒՀՁ	12	2	. . .
Հաշտութիւն Ռուսաց ընդ Տաճկաց	Սեպտ.	2	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Հրդեհ յՆիգապիւսի դուրսը	. . .	6	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Տեղաց կարկուտ մինչեւ 40 տրամ կշռեալ	Մայիս	20	1775	ՌՄԻԵ	ՈՒՀՂ	13	3	2
Սքանաս եպիսկոպոս խոյս եառ ՚ի Վէննա	Յունիս	5	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Սկիզբն եղեւ տպել զՕրացոյց ՚ի Կոստանդնուպոլիս	Մարտ	10	1776	. . .	ՈՒՀՠ	14	4	3
Փոփոխութիւն հին տօնացուցին ՚ի Սիմէոն կաթողիկոսէ	Յունվ.	2	1777	ՌՄԻԶ	ՈՒՀԱ	15	5	4
Ժանտախտ սաստիկ ՚ի Կոստանդնուպոլիս	Մայիս	15	1778	ՌՄԻԷ	ՈՒՀԲ	16	6	5

Digitized by Google

ՑՇՏԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵԼԵԱՆ ԻՐԱՑ	ԱՓՍ	Օր	Ա.Ի ԿԻՒՐՈՓԻ	ԹՈՒՄԱՆ ՀԱՅՈՑ	ԹՈՒՄԱՆ ՏԻՐՈՑ	ԿՐՕՆԱԿԱՆ ԷԼԵՓՏԱՑԻ	ԳՈՒՆԷՐՈՒ Կ. ԳՕՐՑԻ	ԹՈՒՄԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ
						ՍԻՄՈՆ	ՋԱԿԱՐԻԱ	ՀԱՄԻՏ
Հրդեհ ՚ի Քիրէմլիս թաղն Ֆէնէրի	Մարտ	23	1778	ՌՄԻԷ	ՌՃՂԳ	16	6	5
Մահ Քէրիմ խանին Ղրիմու, Ղրիմցիք ազատին	Փետր.	3	1779	ՌՄԻԸ	ՌՃՂԳ	17	7	6
Մնանի որդի սուլթան Համիտի սուլթան Մուստաֆա ՚ի չապան 26	Յուլիս	17	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Սիմէոն կաթողիկոս վախճանի, եւ յաջորդէ նմա Ղուկաս	Յունվ.	4	1780	ՌՄԻԹ	ՌՃՂԴ	18	8	7
Գիւտ օդապարիկ գնտոյ ՚ի Փարիզ եւ Ըօպէրթ Գաղղիացւոց	Ապրիլ	6	. . .	. . .	. . .	ՂՈՒԿԱՍ 1	. . .	. . .
Հալածումն կաթողիկոց ՚ի Զաքարիա պատրիարքէ	Յուլիս	14	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Զաքարիա պատրիարք ազատի ՚ի Պրուսա, եւ նստի Համաստացի Յովհաննէս վարդապետ ամիսս տասն	Մայիս	29	1781	ՌՄԼ	ՌՃՂՕ	2	9	8
Վերադառնայ Զաքարիա ՚ի պատրիարքութիւն	Մարտ	31	1782	ՌՄԼԱ	ՌՃՂՉ	3	ՅՕՀԱՆՆԷՍ —4— 10	9
Հրդեհ մեծ ձիապահի	Օգոստ.	10	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Երեք պատերազմական նաւք տէրութեանն Սպանիոյ եկին մեծագին ընծայիւք ՚ի կոս-								

Digitized by Google

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ա֊ԳՈՒ֊	Օր	Ի֊ ԹՎԻ֊ՈՎՆ	ԹՎԱԿԱՆ ՀԱՅԿ֊	ԹՎԱԿԱՆ ՏԱՐԻՆ֊	ԿՈՒԼՈՎԻՆԻ ԷՊԱԿՏԻՆ֊	ՓՈՍՔԱՐԱԳՈՒՅՆ ԿԱ֊ ՓՈՒՆՔ	ԹՎԱԿԱՆ ՕՐՎԱՆԻՑ
						ՂՈՒԿԱՍ	ՋԱՔԱՐԻԱ	ՀԱՄԻՏ
տանդնուպօլիս. եւ եօթն անձինք ի նաւուց անտի յեղաչրջեցան ի Մահմէտական օրէնսառ ի մնալ այսր։ Բայց խնդրեալ նաւապետին՝ էառ զնոսա, եւ կախեաց ի նաւուցն տաճկական զգեստուք նոցին՝ ի յելանելն աստի ի գնալ	Օգոստ.	30	1783	ՌՄԼԲ	ՈՂՀՀ	4	11	10
Եւ կրաչարժ մնծ ի յերիւղս եւ ի մուչ, եւ զնաս բազում	Յուլիս	7	1784	ՌՄԼԳ	ՈՂՀԸ	5	12	11
Հրդեհ ի Պալատ ի Զօրպաճի չէշմէին . .	. . .	25	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
Վախճանի Եփրեմ կաթողիկոս Սսոյ, եւ օծանի Թէոդորոս ի կոստանդնուպօլիս ի Զաքարիա պատրիարքէ	Սեպտ.	6	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .
